









ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

ԱՐԴԱՊԵՏՔ ՀԱՅՈՑ ՀԻՄՍԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՑ» ԵՎ ՆՐԱՆՑ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ



ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
2016

9(47.925)
ղ-51
հ2
գր-ա 4

ლეონ მელიქსეთ-ბეგი

“ჩრდილო მხარეთა სომეხთა მოძღვარნი”
და
მათი ვინაობა”

სომეხ-ქართველთა ურთერთობის საკითხებთან
დაკავშირებით
(ცდა ისტორიულ-ლიტერატურული გამოკვლევისა)

ტფილისის უნივერსიტეტის გამოცემა
ტფილისი – 1928

ПЕРВОПРЕСТОЛЬНЫЙ СВЯТОЙ ЭЧМИАДЗИН
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИНСТИТУТ АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

ЛЕОН МЕЛИКСЕТ-БЕК

АРМЯНСКИЕ УЧЕНЫЕ СЕВЕРНЫХ СТРАН
(опыт историко-литературного исследования)

Издательство Первопрестольного Св. Эчмиадзина
Св. Эчмиадзин - 2016

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN
YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

MELIQSETH-BEK L.

ARMENIAN SCHOLARS OF THE NORTHERN REGIONS
AND
THEIR IDENTITY

HISTORICAL-PHILOLOGICAL RESEARCHES

Publication of Mother See of Holy Etchmiadzin
Holy Etchmiadzin - 2016

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ - ԲԵԿ

«ՎԱՐԴԱՊԵՏՔ ՀԱՅՈՑ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՑ» ԵՎ ՆՐԱՆՑ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(պատմագրական հետազոտության փորձ)

56354

Վրացերենից թարգմանեց
ՀՐԱՉ ԲԱՅՐԱՄՅԱՆԸ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2016

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Մ 511

Տպագրվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի

ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ ԼԵՎՈՆ

Մ 511 «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» և նրանց ինքնությունը / Լևոն Մելիքսեթ-Բեկ: Վրացերենից թարգմանեց Հրաչ Բայրամյանը; Խմբագրութեամբ՝ Գէորգ Տէր-Վարդանեանի - Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, Ս. Էջմիածին, 2016.- 288 էջ+5 ներդիր:

Անվանի կովկասագետ Լևոն Մելիքսեթ-Բեկի «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» և նրանց ինքնությունը» աշխատությունը լույս է տեսել Թիֆլիսում 1928 թվականին, վրացերեն: Հեղինակը հետազոտել է ԺԱ-ԺԳ. դդ. հայ-վրացական գիտական, գրական և պատմամշակութային հարաբերությունները:

Հետազոտությունն անհասանելի էր վրաց լեզուն չիմացող հայագետներին, մինչդեռ նրա թարգմանությունն ու հրատարակությունը թույլ կտա արժևորելու հայ-վրացական պատմագրական նվաճումներից մեկը, իսկ միջնադարյան հայկական համալսարանների գիտակրթական պատմությունն ուսումնասիրողները կունենան բավականին ընդգրկուն և փաստառատ սեղանի գիրք:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

Տպագրվում է մեկենասությամբ
***«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ»** հիմնադրամի*

ISBN 978-9939-59-168-1

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2016



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հր. Ս. Բայրամյան, Կովկասագիտության երախտավորը
(Կենսագործունեության համառոտ ակնարկ) 7

Առաջաբան 19
Համառոտագրություններ 26

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ. Ընդհանուր տեղեկություններ

ԳԼՈՒԽ Ա. Նախնական ծանոթություն.....33
ԳԼՈՒԽ Բ.«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետներ»
հասկացության մեկնությունը 40
ԳԼՈՒԽ Գ. «Հյուսիսային կողմանց» քաղաքական իրադրությունը
հնագույն ժամանակներից մինչև ԺԳ. դարը. ա) հնագույն
ժամանակներից մինչև ԺԱ. դարը 46
ԳԼՈՒԽ Դ. «Հյուսիսային կողմանց» քաղաքական իրադրությունը
ա) հնագույն ժամանակներից մինչև ԺԳ. դարը. բ) ԺԱ-ԺԳ. դարեր 57
ԳԼՈՒԽ Ե. «Հյուսիսային կողմանց» գլխավոր գիտագրական
օջախները ԺԱ-ԺԳ. դարերում 67
ԳԼՈՒԽ Զ. «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» ինքնության
սկզբնաղբյուրները և նրանց գիտագրական գործունեությունը 81
ԳԼՈՒԽ Է. «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների»
գաղափարախոսական հիմքը 89
ԳԼՈՒԽ Ը. «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների»
գործունեությունը և նրանց դիրքորոշումը վրացիների հանդեպ 98

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ. Հաղբատ-Սանահնի դպրոցը ԺԱ-ԺԲ. դարերում

ԳԼՈՒԽ Ա. Հաղբատ-Սանահնի դպրոցի հիմնադրումը.
Դիոսկորոսի և Գրիգոր Մագիստրոսի գործունեությունը 105
ԳԼՈՒԽ Բ. Մատթեոս Հաղբատեցի և Վարդան Սանահնեցի.
Հակոբ Քարաբնեցի-Սանահնեցի 112
ԳԼՈՒԽ Գ. Անանիա Սանահնեցի. տեղեկություններ նրա կյանքի
և գործունեության մասին 115
ԳԼՈՒԽ Դ. Անանիա Սանահնեցին և նրա թղթերը հայ-վրացական
պառակտման շուրջ 123
ԳԼՈՒԽ Ե. Հովհաննես Սարկավագը և նրա կենսագրությունը 132
ԳԼՈՒԽ Զ. Հովհաննես Սարկավագը և վրացական միջավայրը 142
ԳԼՈՒԽ Է. Հովհաննես Սարկավագի գիտագրական գործունեության
ընդհանուր վերլուծությունը 148

ԳԼՈՒԽ Ը. Հովհաննես Սարկավագի ջատագովությունը. «Հյուսիսային կողմանց»-ից դուրս այլ խմբի ներկայացուցիչների (մասնավորապես՝ Պողոս Տարոնացու) ջատագովության մասին 160
ԳԼՈՒԽ Թ. Հովհաննես Սարկավագի մտերիմները և աշակերտները, մասնավորապես՝ Ալավկա որդի Դավիթը, Սամուէլ Անեցին և Սարգիս «Կունտը» 170

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ. Հաղբատ-Սանահնի դպրոցը և հարևան [կրթ]օջախների խմբակները ԺԲ-ԺԳ. դարերում

ԳԼՈՒԽ Ա. ԺԲ. դարի վերջի և ԺԳ. դարի սկզբի վարդապետների ցուցակը. գիտագրական ասպարեզում անհայտ գործիչները 181
ԳԼՈՒԽ Բ. Գրիգոր Տուտեորդի կամ Տուտայի (Տուտեի) որդի 187
ԳԼՈՒԽ Գ. Վարդան Հաղբատեցի և Դավիթ Քոբայրեցի 193
ԳԼՈՒԽ Դ. Գրիգոր Աբասաորդի 200
ԳԼՈՒԽ Ե. Խաչատուր Տարոնացի 211
ԳԼՈՒԽ Զ. Մխիթար Գոշը և նրա կենսագրությունը 216
ԳԼՈՒԽ Է. Ընդհանուր ակնարկ Մխիթար Գոշի գիտագրական գործունեության մասին 224
ԳԼՈՒԽ Ը. Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»-ը և վրացիների մասին տեղեկությունները նրանում 229
ԳԼՈՒԽ Թ. Մխիթար Գոշը և նրա «Գծագրութիւն... յաղագս Վրաց...»-ը 237
ԳԼՈՒԽ Ժ. Մխիթար Գոշի մտերիմները և աշակերտները. Հովհաննես Վանականը և նրա դպրոցը 247
Ամփոփում 252

ՀԱՎԵԼՎԱԾ

Ա. Այսպես կոչված «Հյուսիսային կողմանց» պատմական քարտեզը 257
Բ. «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» գաղափարական-ժամանակագրական ճյուղավորումը 258
Գ. Հայ-վրացական բաժանման հարցը հայ հին մատենագրության մեջ 259
Ցանկ հատուկ անունների 271

Ն Կ Ա Ր Ն Ե Ր

Նկ. 1. Սանահնի գրապահոցը ..... (30-31)
Նկ. 2. Հաղբատի գերեզմանատունը (պանթեոն) ..... (32-33)
Նկ. 3. Սանահնի վանքի պլանը 102
Նկ. 4. Այսպես կոչված Մագիստրոսի ակադեմիան Սանահնում (ներսից) ..... (104-105)
Նկ. 5. Գրիգոր Տուտեորդու գերեզմանին կանգնեցրած հուշարձան-խաչքարը Սանահնում ..... (188-189)

Հրաչ Բայրամյան

ԿՈՎԿԱՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

(Կենսագործունեության համառոտ ակնարկ)

Հայագիտության XX դարի երևելի ներկայացուցիչներից Լևոն Մելիքսեթ-Բեկի հարուստ, բազմազան ու բազմաժանր գիտաստեղծագործական ժառանգությունն այսօր՝ նույնիսկ նրա մահից ավելի քան կես դար անց, մեծ արժեք է ներկայացնում ոչ միայն հայագիտության, այլև վրացագիտության և, առհասարակ, կովկասագիտության համար:

Ջնայած Լևոն Մելիքսեթ-Բեկը հայկաբանական հետազոտություններն սկսեց իրականացնել այն ժամանակ, երբ ականավոր գիտնականներ Նիկողայոս Մառը (1865-1934), Նիկողայոս Ադոնցը (1871-1942), Ներսես Ակինյանը (1883-1963), Հովսեփ Օրբելին (1887-1961) և անվանի չատ այլ դեմքեր հասել էին գիտական գործունեության գագաթնակետին, այդուհանդերձ նա՝ պատմաբանասիրական գիտությունների և մի քանի լեզվի խոր, համակողմանի ու արմատական իմացությամբ, անաչառ խոսք ասաց այդ ոլորտում. արժանացավ համընդհանուր գովեստի ու հարգանքի և իր պատվավոր տեղն զբաղեցրեց տվյալ գիտաճյուղերի պատմության անդաստանում:

Լևոն Մելիքսեդեկի Մելիքսեթ-Բեկը ծնվել է 1890 թ. սեպտեմբերի 26-ին, Թիֆլիսում, ծառայողի ընտանիքում: 1897-1899 թթ. մասնավոր պանսիոններից մեկում կրթություն ստանալուց հետո, 1899-1909 թթ. նա սովորել է տեղի ռեալական ուսումնարանում: 1906 թ. ընդգրկվել է էսպերանտիստների համաշխարհային լիգայի կազմում: Բարձրագույն կրթությունն ստացել է 1909-1913 թթ. Օդեսայի (Նովոռոսիյսկ) համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, միաժամանակ հաճախել նույն բուհի պատմաբանասիրական ֆակուլտետի դասընթացներին՝ ունկնդրելով ճանաչված գիտնականներ Ա. Ալմազովին, Ա. Շպակովին, Ա. Թոմսոնին, Է. Ֆոն-Շտերնին և այլոց: Նա իր ավարտական աշխատանքը՝ «Հայոց Ծայրագույն պատրիարքի իրավաբանական կացությունը» թեմայով, գրել է ժամանակից երկու տարի շուտ՝ արժանանալով ականավոր հայագետ Գարեգին Հովսեփյանի և վրացի գրականագետ Ա. Խախանովի (Խախանաշվիլի) գովասանքին:

Ուսումնառության տարիներին Լ. Մելիքսեթ-Բեկը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել հնագիտության նկատմամբ, շրջագայել է Հայաստանում, այցելել Ռուսաստանի և Ուկրաինայի հայաբնակ վայրերը: 1914 թ. ընտրվել է պատմության և հնությունների Ոդեսայի ընկերության թղթակից անդամ: Վերադառնալով Թիֆլիս՝ նա վարել է մի շարք պաշտոններ, այդ թվում՝ Հայոց ազգագրական ընկերության խմբագրական մասնաժողովի անդամ-քարտուղարի, Մոսկովյան հնագիտական ընկերության կովկասյան բաժանմունքի գիտական քարտուղարի, որի իսկական անդամներից էր: 1913-1918 թթ. զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ:

1918 թ. հունվարին սկսում է գործել Թիֆլիսի վրացական համալսարանը, որտեղ հայագիտական դասընթացներ վարելու նպատակով բուհի հիմնադիր-ռեկտոր Իվանե Ջավախիշվիլին 1918 թ. սեպտեմբերին նորաբաց բուհ աշխատանքի է հրավիրում տակավին երիտասարդ, բայց արդեն գիտնականի համբավ վաստակած Լևոն Մելիքսեթ-Բեկին[1]:

1922 թ. նույն համալսարանում հանձնելով դոկտորական քննություն՝ հայ-վրացական, վրաց-հունական բանասիրություն և այլ առարկաներից, նա ընտրվում է նորաստեղծ հայագիտության ամբիոնի դոցենտ, ապա և վարիչ, միևնույն ժամանակ նշանակվում է հնդեվրոպական լեզվաբանության հանձնաժողովի նախագահ: Ավելի քան քառասուն տարի՝ մինչև իր մահը, նա ղեկավարել է այդ ամբիոնը, վրաց իրականության մեջ ընդլայնել է հայ-վրացական բանասիրության շրջանակները՝ խորացնելով պատմական թեմատիկան, ինչպես նաև զգալի ջանքեր է գործադրել հայ և վրացի գիտնականների միջև համագործակցության կապեր հաստատելու և ամրապնդելու համար:

1945 թ. Լ. Մելիքսեթ-Բեկի նախաձեռնությամբ Թբիլիսիի պետական համալսարանում հիմնադրվում է հայոց լեզվի և գրականության բաժին՝ ուսանողների ամենամյա ընդունելություն կատարելու իրավունքով: Հայագիտական առարկաներից այստեղ դասավանդվում էին գրաբար, ժամանակակից հայոց լեզու, հայ գրականության պատմություն (հին, նոր և նորագույն շրջաններ), Հայաստանի պատմություն, հայ ժողովրդական բանահյուսություն, հայ բարբառագիտություն: Դրանցից բացի նաև՝ համեմատական

[1] Ըստ գործող կարգի՝ մինչ դասախոս ընտրվելը, համալսարանի գիտական խորհրդի ամբողջ կազմը՝ ռեկտորի ղեկավարությամբ, ունկնդրել է նրա առաջին դասախոսությունը, գնահատել գերազանց, որից հետո միայն նա իբրև դասախոս մտել է լսարան (18.09.1918):

քերականություն, կառուցվածքային լեզվաբանության հիմունքներ, եվրոպական լեզուներ և, իհարկե, վրացագիտական առարկաներ:

Լայն են եղել Լ. Մելիքսեթ-Բեկի գիտական հետաքրքրությունների շրջանակները՝ աղբյուրագիտություն, ազգագրություն, բանահյուսություն, հնագիտություն, կրոնագիտություն, վիմագրագիտություն, բարբառագիտություն, պատմագիտություն, իրավագիտություն, բնագրագիտություն, անձավագիտություն և այլն: Բացի հայագիտության գրեթե բոլոր բնագավառներից և հայ-վրացական հարաբերություններից, նա զբաղվել է նաև հայ-ռուսական, հայ-բյուզանդական, հայ-ադրբեջանական, վրաց-ռուսական, վրաց-բյուզանդական առնչությունների պատմությամբ: Այս ամենի վերաբերյալ հայերեն, ռուսերեն և վրացերեն լեզուներով հեղինակել է ավելի քան 600 աշխատություն (մենագրություններ, հոդվածներ, հրապարակումներ և այլն), որոնց տպագիր ծավալը կազմում է շուրջ 9000 էջ: Այսպիսին է գիտնականի ստեղծագործական ժառանգության ոչ ամբողջական ծավալը:

Լ. Մելիքսեթ-Բեկն աշխատակցել է հայկական բազմաթիվ պարբերականների («Արարատ», «Հովիվ», «Էջմիածին», «Ազգագրական հանդես», «Գեղարվեստ», Էջմիածնի Գիտական ինստիտուտի «Բանբեր») և ռուսական ու վրացական մի շարք հանդեսների: Երիտասարդական տարիների նրա ուսումնասիրություններից որոշակի արժեք են ներկայացնում «Վրացիների ազգակցությունը իսպանացիների հետ ըստ հին աղբյուրների»[2] , «Հայկական հնություններ Ակերմանում (Բեսարաբիա)»[3], «Հայկական հնագույն արձանագրությունները Ոդեսայի պատմության և հնությունների ընկերության թանգարանում»[4], «XV դարի Շարականի ձեռագիրը՝ հայտնաբերված Ոդեսայում»[5] և բազում այլ աշխատություններ:

Լինելով լայն մտահորիզոնի տեր՝ Լ. Մելիքսեթ-Բեկը գիտական լայնածավալ գործունեությունից բացի, դասավանդել է Թբիլիսիի, Երևանի և Բաքվի պետական համալսարաններում, Քութայիսի, Գորիի, Ցխինվալիի մանկավարժական ինստիտուտներում: Դեռևս 1920 թ. նա վրացական բուհերի հումանիտար ֆակուլտետների համար հեղինակել է գրաբարի քերականության տարրական դասընթաց և քրեստոմատիական ժողովածու՝ «Ծաղկաքաղ բանից նախնի

[2] Родство Грузии с испанцами по древним источникам, Тифлис, 1911.

[3] Армянские древности в Аккермане (в Бессарабии), Тифлис, 1911.

[4] Старинные армянские надписи в Музее Общества Истории и Древностей. Издание книжного магазина “Гуттенберг”, N 73, Тифлис, 1912.

[5] Рукопис Шаракана XV века, открытая в Одессе, Тифлис, 1913.

հայերէն հանդերձ հայ-վրացերէն բառգրքովք»[6], «Հայ հին գրականության պատմության ձեռնարկ»[7], որտեղ գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություններից բացի, ընդգրկել է հայ պատմական մատենագրության գրեթե բոլոր նշանավոր երկերը: Նա վրացերեն է թարգմանել Սայաթ-Նովայի հայերեն խաղերը[8], կազմել և հրատարակել է Շամչի Մելքոյի երգերը[9], կատարել է գեղարվեստական արձակ և չափածո երկերի երկկողմանի թարգմանություններ, զբաղվել թարգմանագիտությամբ:

Լ. Մելիքսեթ-Բեկը գիտական ասպարեզ է մտել հայ-վրացական պատմամշակութային հարաբերությունների հիմնախնդիրներին նվիրված աշխատություններով: Շուրջ քսան տարի նա հատկապես ուշադրություն է դարձրել ԺԱ-ԺԳ. դարերի Հյուսիսային Հայաստանի գիտամշակութային, աստվածաբանական, կրոնադավանաբանական կյանքին, Հայաստանյայց Առաքելական և վրացական եկեղեցիների մինչև Զ. դարում սկիզբ առած և հետագայում թեժացած դավանաբանական և նվիրապետական անցիլում բանավեճերին, երբ իր իսկ խոսքերով՝ «Հայ-վրացական հարաբերությունների խաչաձևման այդ տարածքը դարձավ հայերի մշակութային ամենաակնառու անկյուններից մեկը», և երբ Հյուսիսային Հայաստանը «հայտնվեց Վիրքի պետականության ոլորտում»[10]:

Ձեռագրերից բացի, նա տվյալ թեմայի լիարժեք մշակման համար մասնակցել է Հայաստանյան գիտական արշավախմբերին, չրջագայել Հայոց պատմամշակութային ու ճարտարապետական հուշարձաններով հարուստ վայրերում՝ այցելել է Երևան, Էջմիածին, Պետերբուրգ, Վիեննա, Վենետիկ, ուսումնասիրել հարյուրավոր բնագրեր, հրատարակել մեծածավալ ու փոքրածավալ հետազոտություններ, որտեղ փորձել է հնարավորինս սպառիչ վերլուծել Հյուսիսային Հայաստանին (Գուգարաց աշխարհ) վերաբերող մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպես նաև հայ վարդապետների խմբակների շուրջ երկուհարյուրամյա պատմությունը՝ կապված հայ-վրացական պատմագրական իրողությունների:

Աշխատության հրապարակումից հետո միևնույն խնդիրների վե-

6 ძველი სომხური ქრესტომათია ლექსიკონითურთ, ნაკვეთი პირველი, ქრესტომათია. ტფილისი, 1920.

7 ძველი სომხური ლიტერატურის ისტორია (სახელმძღვანელო უმაღლესი სკოლებისათვის, თბილისი, 1941.

8 საიათნოვას სომხურ ლექსთა კრებული, თარგმანი ვარიანტებით, ტფილისი, 1935.

9 Շամչի-Սելքոն և նրա հայերեն խաղերը, Երևան, 1958:

10 შელიქვეთ-ბეგი ლ., ჩრდილო მხარეთა სომეხთა მოძღვარნი და მათი ვინაობა, ტფილისი, 1928, გვ. VIII.

րաբերյալ գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, բնականաբար, Լ. Մելիքսեթ-Բեկից անկախ, տարբեր հետազոտողներ չատ հարցերում կրկնել կամ սրբագրել են նրա եզրակացությունները, երբեմն՝ լուծումներ առաջադրել:

Հեղինակը իր աշխատությունը համեստորեն դիտարկում է որպես պատմագիտական հետազոտությունների փորձ և նկատի ունենալով աղբյուրագիտական համապատասխան նյութերի սակավությունը՝ հույս է հայտնում, որ հատկապես էջմիածնի և Երուսաղեմի պահոցների ձեռագիր մատյանների հրատարակումներից հետո կրկին կանդրադառնա իր առաջադրած խնդիրներին, որպեսզի դրանք վերանայի, խորացնի ու դարձնի առավել ամբողջական: Այսուհանդերձ այսօր էլ հայագիտության համար այն հույժ կարևոր աշխատություն է:

Նշված տարածքում և ուսումնասիրվող դարերում հայ վարդապետների, մասնավորապես՝ Մխիթար Գոշի, Անանիա Սանահնեցու, Գրիգոր Տուտեորդու, Գրիգոր Մագիստրոսի, Վանական Վարդապետի, Սամուել Անեցու, նրանց մտերիմների ու աշակերտների կենսագործունեության և հիմնադրված խմբակների, բարձրագույն դպրոցների ու կազմակերպությունների հանգամանալից ուսումնասիրությունը, հայ գրականության պատմության որոշ հարցերի լուսաբանմանը զուգընթաց, նպաստել է հայ-վրացական գրական-մշակութային, քաղաքական, պատմական հարաբերությունների որոշ կնճռոտ հարցերի լուսաբանմանը ևս: Լ. Մելիքսեթ-Բեկը փաստական հարուստ նյութերի քննական վերլուծության հիման վրա ապացուցում է, որ տվյալ ժամանակաշրջանում հայ գրականության գրեթե բոլոր ճյուղերի առաջընթացն անժխտելի է, քանի որ ստեղծվել են համաշխարհային նշանակության գլուխգործոցներ: Այսպես՝ «էգզեգետիկական» (մեկնաբանական) գրականությունը ձեռք է բերել այնպիսի ինքնատիպ երկեր, ինչպիսիք են՝ Հովհաննես Սարկավագի «Յուցակ Սուրբ գրոց»-ը, Գրիգոր Աբասաորդու «Գիրք պատճառաց»-ը, եկեղեցական հիմնոլոգիան՝ Հովհաննես Սարկավագի և Խաչատուր Տարոնացու չարականների չարքը, ջատագովական-դավանաբանական գրականությունը՝ Անանիա Սանահնեցու «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց»-ը, Հովհաննես Սարկավագի «Յաղագս քաղկեդոնացն»-ը և Մխիթար Գոշի «Գծագրութիւն... յաղագս վրաց»-ը, տոմարական-տիեզերաբանական գրականությունը՝ Հովհաննես Սարկավագի բազմաթիվ աշխատությունները, իրավագիտությունը՝ Դավիթ Ալավկա որդու «Կանոնագիրք»-ը և հատկապես Մխիթար Գոշի «Դատաստանա-

գիրք Հայոց»-ը, որը հիմք է ծառայել ԺԳ-ԺԸ դարերում հայերեն և օտար լեզուներով ստեղծված կանոնական գրքերի համար (օրինակ՝ Կիլիկիայում, Մոլդովայում, Լեհաստանում, Ղրիմում, Հարավային Ռուսաստանում, Վրաստանում և այլն):

Հեղինակն անհրաժեշտաբար նշել է, որ հայ-վրացական եկեղեցական հակամարտությանը վերաբերող բնագրային նյութերը մենագրությունում մեջբերում է հայերեն, մանավանդ եթե դրանք տպագրված չեն, իսկ եթե վերաբերում են հիմնական հարցին, այսինքն՝ վարդապետներին և նրանց գործունեությանը, ապա դրանց կցում է վրացերեն թարգմանությունները: Մյուս դեպքերում բոլոր տեղեկությունները նա վկայել է վրացերեն թարգմանությամբ, իսկ թարգմանությունները, առանց բացառության, կատարել է բնագրին համարժեք: Գիրքը հագեցրել է նաև լուսանկարներով, քարտեզով և հավելվածներով:

Լ. Մելիքսեթ-Բեկի հայագիտական ժառանգության մեջ մեծ ծառայություն է Հայաստանի և հայերի մասին վրացական աղբյուրների եռահատոր ժողովածուն[11]: Այն ամփոփում է վրաց վկայաբանական-վարքագրական, պատմական, գեղարվեստական տպագիր երկեր, ձեռագրեր, հարանց վարքեր, ժամանակագրություններ, որոնց հեղինակները, որոնց թվում նաև վրացալեզու հայեր, պատմական, հնագիտական, ազգագրական, աշխարհագրական, արվեստագիտական, լեզվաբանական ու այլևայլ բնույթի կարևոր, եզակի տեղեկություններ են հաղորդում Հայաստանի, հայի և հայկականի մասին: Լ. Մելիքսեթ-Բեկը դրանցից կատարած թարգմանությունները հագեցրել է անհրաժեշտ ներածականներով, համեմատական, բանասիրական, աղբյուրագիտական մեկնաբանություններով, ընդգրկուն ծանոթագրություններով, հավելվածներով և ցանկերով[12]:

Այս ժողովածուի չորրորդ գիրքը, որտեղ, ըստ հեղինակի, ամփոփված են վիմական տարեգիրը, հայերենից վրացերեն թարգմանված երկասիրությունները, ժողովրդական բանահյուսությունը, հավելվածներն ու կարևորագույն ցանկերը, չնայած աշխատության կարևորությանը, դեռևս անտիպ է:

Դրվատանքի արժանի է «Հայ գրողները և Վրաստանը»[13] աշխա-

[11] Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, գիրք Ա., Ե-ԺԲ. դարեր, Երևան, 1934, Գիրք Բ., ԺԳ-ԺԸ. դարեր, Երևան, 1936, Գիրք Գ., ԺԸ-ԺՌ. դարեր, Երևան, 1955:

[12] Այդ երեք հատորը մեկ գրքով վերջերս լույս ընծայեց ԵՊՀ հրատարակչությունը: Տե՛ս **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հայ-վրացական մատենաշար, գիրք Ա, Երևան, 2013:

[13] **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Հայ գրողները և Վրաստանը, Երևան, 1964:

տությունը, որտեղ նա, ըստ ամենայնի, ներկայացրել է շուրջ երեսուն հայ այն գրողներին ու մշակութային գործիչներին՝ արձակագիրներ, բանաստեղծներ, դրամատուրգներ, աչուղներ, պատմության, բանասիրության, արվեստի և այլ բնագավառների ներկայացուցիչներ, որոնց կյանքն ամբողջովին կամ մեծավ մասամբ անցել է Վրաստանում, և ովքեր իրենց բազմաբնույթ ստեղծագործություններում պատկերել են այդ երկրի անցքերը, նիստ ու կացը, վարք ու բարքը, սովորույթները, ինչ խոսք, նաև հայ և վրաց ժողովուրդների ռազմական, քաղաքական, գրական, պատմական ու մշակութային առնչությունները: Հետաքրքիր տեղեկություններ կան գրողների անձնական և ստեղծագործական հարաբերությունների, հայ և վրաց լեզուների փոխներթափանցման մասին: Գրեթե անթերի բերված են նաև հայ հեղինակների մասին եղած վրացերեն տեղեկությունների և նրանցից կատարված թարգմանությունների ցանկերը: Հեղինակը, նկատի ունենալով երկերի ժանրային յուրահատկությունները, աշխատանքը շարադրել և բնութագրել է յուրովի, ինչպես ինքն է վկայում՝ դրանք երբեմն նկարագրողական են, երբեմն՝ համեմատական, երբեմն՝ ժամանակագրական: Նախատեսված է եղել աշխատությունը լույս ընծայել երկու գրքով, սակայն երկրորդը չի հրատարակվել:

Լ. Մելիքսեթ-Բեկը հատուկ ուսումնասիրության նյութ է դարձրել «Վրաստանի պատմության գրավոր սկզբնաղբյուրների հրատարակությունները»[14], որը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում ներառված են Ե-ԺԸ դարերի հուշարձանները, իսկ երկրորդում՝ «Մեգալիթյան մշակույթը Վրաստանում»[15] և այլ նյութեր: Միայն համեմատաբար վերջերս իրականացվեց նրա կազմած «Հայերեն-վրացերեն բառարանի» հրատարակությունը[16], որը պարունակում է ժամանակակից հայերենի շուրջ 22 000 բառ և դրանց վրացերեն համարժեքները: Բնականաբար, վերանայվել և մասնակի փոփոխությունների են ենթարկվել բառացանկերը, քանզի հայոց լեզուն տասնամյակների ընթացքում հարստացել է հազարավոր բառերով ու դարձվածքներով, բազմաթիվ բառեր հնացել, դուրս են մնացել գործածությունից, իսկ շատերը իմաստափոխվել են: Այն լույս է տեսել բառարանագրության պահանջմունքներին համապատասխան և, անշուշտ, կարող է օգտակար լինել ուսանողների,

[14] საქართველოს ისტორიის წერილობითი წყაროების ბუბლიკაციები. საქართველოს საარქივო სამმართველოს გამოცემა, თბილისი, 1949.

[15] მეგალითური კულტურა საქართველოში, ფედერაციის გამოცემა, თბილისი, 1938.

[16] Հայերեն-վրացերեն բառարան. Թբիլիսի, 1996:

թարգմանիչների, գիտաշխատողների, առհասարակ հայոց և վրաց լեզուներով հետաքրքրվող անձանց համար:

Լ. Մելիքսեթ-Բեկը ուսումնասիրել և գիտական անհրաժեշտ ճշտումներով հրատարակել է հայերենից վրացերեն թարգմանված երկերի քննական բնագրերը՝ համապատասխան բացատրություններով, մասնավորապես «Վարք Ս. Գրիգոր Պարթևի»[17], Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» այն հոդվածները, որոնք ներառված են վրաց Վախտանգ Զ-ի «Օրենսգրքում», Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքի[18] և Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ Թամուրայ եւ յաջորդաց իւրոց» վրաստանին առնչվող համապատասխան հատվածները[19]:

Բազմաբեղուն գիտնականի ուշադրության կենտրոնում է եղել արձագրությունների ուսումնասիրությունը և. դեռևս 1950-ական թվականների սկզբին նա հրատարակության է պատրաստել երկու ժողովածու՝ «Վրացերեն արձանագրությունները Հայաստանում», «Հայերեն արձանագրությունները Վրաստանում»[20], որոնք, սակայն, ինչ-ինչ պատճառներով լույս չեն տեսել: Վրացագիտության մեջ բարձր են գնահատվում այդ բնագավառում նրա հրատարակած աշխատանքները, մասնավորապես՝ Գարեջրի քառալեզու (վրացերեն-հայերեն-պարսկերեն-ույղուրերեն) արձանագրությունը[21]:

Լ. Մելիքսեթ-Բեկը կազմել և հրատարակել է «Ռուսթավելին և նրա «Ընճեռնավորը» հայ գրականության մեջ»[22], «Նյութեր Ն. Մառի ամբողջական մատենագիտության համար»[23], «Նյութեր հայկական ձեռագրերի քարտարանի մատենագիտության համար»[24], «Նյութեր

---

17 ცხოვრებაჲ წმ. გრიგოლ პართელისაჲ, გამოცემული ლეონ მელიქსეთ-ბეგის მიერ. Monumenta Georgica, I, ტფილისი, 1920.

18 სტეფანე სიუნიელის "ორბელთა ისტორიის" ქართული ვერსია", "საისტორიო მოამბე", ტ. VI, თბილისი, 1952.

19 თომა მეწოფელი, სომხური ტექსტი ქართული თარგმანითურთ, თბილისის უნივერსიტეტის გამოცემა, თბილისი, 1937, 39 გვ.

20 Տե՛ս «1917-1957»: «Սաոუնթալեո կրեթուլի»), Թբիլիսի, 1957, էջ 193:

21 Гаресджийская тетралингва эпохи монголов 1352 г., "Эпиграфика Востока", изд. АН СССР, т. VIII, Ленинград, 1953.

22 შ. რუსთაველი და მისი "ვეფხისტყაოსანი" სომხურ ლიტერატურაში, "საქართველოს საჯარო ბიბლიოთეკის შრომები", თბილისი, 1938, IV, გვ. 152-164.

23 Материалы для польной библиографии работ Н. Я. Мара, "მასალები ამიერკავკასიის ბიბლიოგრაფიის ბიბლიოგრაფიისათვის", თბილისი, 1938, II-III, გვ. 17 (19)-27.

24 Материалы для библиографии каталогов армянских рукописей, "მასალები ამიერკავკასიის ბიბლიოგრაფიის ბიბლიოგრაფიისათვის", თბილისი, 1939, IV, გვ. 3 (5)-25.

Ավ. Իսահակյանի երկերի լիակատար հրատարակության համար»[25] և մատենագիտական այլ ցանկեր:

Նրա բանահյուսական, պատմագիտական ու գրականագիտական հոդվածներից ուշագրավ են՝ «Արտավազդ և Մհերի հետքերը Վրաստանում», «Դավիթ Անհաղթի» Վրաստանում լինելու շուրջ», «Զորրորդ Հայքի 774-775 թթ. գյուղացիական ապստամբության պատմության շուրջ», «Հայաստանում կարմիր որդան ներկի արտադրության պատմությունից», «Հայերը Վրաստանում», «Հայերը վրաց հին գրականության մեջ» և հայերեն, վրացերեն ու ռուսերեն բազմաթիվ այլ աշխատանքներ:

Առհասարակ հարկ է նշել, որ այս կամ այն խնդրին անդրադառնալիս վաստակաշատ գիտնականն ուսումնասիրել է բոլոր սկզբնաղբյուրները, նախորդների աշխատությունները և հետո միայն հայտնել իր կշռադատված ու տրամաբանորեն հիմնավորված կարծիքը:

Լ. Մելիքսեթ-Բեկը միաժամանակ հնարավորինս պայքարում էր այն մասնագետների տեսակետների դեմ, ովքեր խեղաթյուրում կամ կասկածի տակ էին առնում հայ պատմագիրների աշխատությունները, ժխտում կամ արժեզրկում հայերի կամ հայագգի գործիչների վրաստանին մատուցած ծառայությունները, պատմական, բանասիրական ակնհայտ, օբյեկտիվ սկզբունքները փոխարինում սուբյեկտիվ հայեցակետերով, ցանկալին ներկայացնում որպես իրականություն և այլն:

Անվանի գիտնական մանկավարժը մասնավորապես Թբիլիսիի պետական համալսարանի համար աճեցրել է վրացի հայագետների մի ամբողջ փաղանգ:

Անգնահատելի է նաև Լ. Մելիքսեթ-Բեկի վաստակը հայագիտության, վրացագիտության, կովկասագիտության, հայ-վրացական գիտագործնական հարաբերությունների, երկու ժողովուրդների միջև կրթական ու մշակութային կապերի զարգացման և ամրապնդման գործում: Հաշվի առնելով նրա անուրանալի վաստակը այդ ասպարեզում Վրաստանի կառավարությունը 1941 թ. նրան չնորհել է գիտության վաստակավոր գործչի կոչում, իսկ 1945 թ. նա ընտրվել է Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ:

Կովկասագիտության մաս կազմող անձնական գրապահոցի հարյուրավոր գրքեր գիտնականի 80-ամյակի օրերին հանգրվանել են Թբիլիսիի պետական համալսարանի հայագիտության ամբիոնին

---

25 Ալմանախ, հրատ. Վրաստանի սովետական գրողների հայկական սեկցիայի, Թբիլիսի, 1960, էջ 360-364:

առընթեր՝ իր իսկ անունը կրող աշխատասենյակում, իսկ արխիվն ու գրադարանը, որ մի ամբողջ հարստուԹյուն են, և որտեղ, անշուշտ, կան հրատարակուԹյան պատրաստ մեծ ու փոքր աշխատուԹյուններ, կոնսպեկտներ, սևագիր կամ անավարտ էջեր, ինչպես նաև նամակները, ժառանգները նվիրել են նույն բուհի գիտական գրադարանին և Վրացական ԽՍՀ ԳԱ Ձեռագրերի ինստիտուտին (այժմ՝ Վրաստանի ՀանրապետուԹյան ԳԱԱ Կոռնելի Կեկելիձեի անվան Ձեռագրերի ազգային կենտրոն): Դրանց հետազոտուԹյունն ու հրատարակուԹյունը նախ և առաջ հայ մասնագետների կարևոր խնդիրներից պետք է լինի մոտ ապագայում:

Լ. Մելիքսեթ-Բեկի անտիպ թողոնի հրատարակուԹյունը և ռուսերեն ու վրացերեն աշխատուԹյունների թարգմանուԹյունը հայերենի հանրուԹյան, գիտաշխատողների, կովկասագիտուԹյունն ընտրած ուսանողների, այդ երկրների պատմուԹյամբ և բանասիրուԹյամբ հետաքրքրվող անձանց համար փնտրված ձեռնարկներ են:

Ներկա թարգմանության հանգամանքները.- *Լևոն Մելիքսեթ-Բեկի «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» և նրանց ինքնուԹյունը» աշխատուԹյունը լույս է տեսել 1928 թ., վրացերեն, որի հիման վրա, նույն թվականին, հեղինակը Թբիլիսիի պետական համալսարանի գիտական կոչումներ շնորհող խորհրդում վրացերեն պաշտպանել է դոկտորական ատենախոսուԹյուն (4 նոյեմբերի 1928 թ.): Այս մենագրուԹյունը լույս տեսնելուց ի վեր, որպես տվյալ բնագավառի ծանրակչիռ ավանդ, լայնորեն շրջանառվում և օգտագործվում է վրաց մասնագետների կողմից, մինչդեռ վրաց լեզվի չիմացուԹյան պատճառով ցայժմ հասու չէ հայագետներին. թերևս մի քանիսն են ի վիճակի կարդալու այն:*

ԱշխատուԹյան հրապարակումից հետո նույն խնդիրների վերաբերյալ հայ իրականուԹյան մեջ գրվել են հետազոտական բազմաթիվ ուսումնասիրուԹյուններ, բնականաբար Մելիքսեթ-Բեկից անկախ, տարբեր մասնագետներ շատ հարցերում ինչ-որ ձևով կամ այլասացուԹյամբ կրկնել, հաճախ էլ սրբագրել են նրա եզրակացուԹյունները, երբեմն խնդիրներն ավելի զարգացրել և նոր լուծումներ են առաջադրել: Եթե այդ ամենը ծանոթագրուԹյունների ձևով ներկայացնեինք, կստացվեր թարգմանուԹյունից՝ մեր բուն նպատակից հեռուն տանող մեկ այլ գործ: Մյուս կողմից, նկատի ունենալով, որ հայալեզու հայագիտուԹյան համար խնդրո առարկա հետազոտուԹյունը շարունակում է մնալ գիտական տևական արժեք, մենք հանձն առանք հայագետներին և ընթերցող լայն շրջաններին

այն մատչելի դարձնելու պարտականուԹյունը: Թեև ձգտել ենք պահպանել վրացերեն բնագրի ձևը և բովանդակուԹյունը, այդուհանդերձ, կատարված աշխատանքի մասին մի քանի խոսք:

Նախ՝ հեղինակային է գրքի վերնագրի սկզբի չակերտված՝ գրաբար աղբյուրներում վկայված բանաձևումը՝ «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց», այսինքն՝ իր գիրքն ինքը միշտ այդպես է հիշատակել[26]:*

Երկրորդ՝ այսպիսի բազմալեզու (հին ու նոր հայերեն, հին ու նոր վրացերեն, հունարեն, լատիներեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն) գրականուԹյան հղումներ ունեցող երկի տպագրուԹյունը, հասկանալի է, չէր կարող զերծ լինել սրբագրական թեկուզ և մասնակի վրիպումներից: Հեղինակի նկատած երկչջ (էջ Դ-Ե.) «Վրիպումներ և ուղղելիքներ»-ը հաշվի առնելով հանդերձ՝ այլալեզու քաղվածքները, ձեռագրական հավաքածուների հայերեն գրչագրերից արված բոլոր պարբերուԹյուններն ու էջերը համեմատվել են բնագրերի հետ և անհրաժեշտ շտկումներ կատարվել բուն շարադրանքի մեջ: Ուղղել ենք վրիպակները, ինչպես՝ Ղզլար (Ղզղալ), Ղրտիլա (Ղրտիլի), Հ. Մանանդյան (Ի. Մանանդյան), Բաստամյանց (Բոստամյանց), Տաչյան (Դաչյան), սելջուկներ (սկյուԹներ) և այլն: Ջուգահեռ որոշ ձևեր, օրինակ՝ Հաղբատ (Հաղպատ, Ախպատ, Հախբատ), Համազասպ (Ամազասպ), Հրաչյա (Հռաչյա), Տարոնացի (Տարոնեցի), Քերովբէ Զրաքյան (Քերոբէ Ճրագյան, Ճրաքյան), Աղստև, (Աղստափա, Աղստաֆա), ՍՊբ., (Ս.Պ.Բ., ՍՊԲ) և այլն, բերվել են միօրինակուԹյան՝ հոգուտ առաջինների, շտկումներ են արվել նաև տարեթվերի գրուԹյան մեջ՝ 1139-1119, որ պետք է լիներ՝ 1119-1139, կամ 18/°/, որ պետք է լիներ՝ 1853, և այլն:

Հղված վրացերեն որևէ գործի (գիրք կամ հոդված) առաջին հիշատակուԹյունն արել ենք բնագրի գրերով՝ վրացատառ-վրացերեն, այնուհետև փակագծերի մեջ գրել ենք նույնի հայերեն թարգմանուԹյունը և ավելացրել՝ «այսուհետև՝ հայերեն», և այս վերջինը գրվել է հետագա բոլոր դեպքերում (առ այս տե՛ս Մասն առաջին, Գլ. Գ., ծնթ. 1, 2, 12, 15, 16): Գրքի աղբյուրագիտական հիմքն ավելի հստակ պատկերելու և նրա առավել լավ գործածուԹյուննապահովելու նպատակով հայերեն թարգմանուԹյունն օժտել ենք «Օգտագործված գրականուԹյուն»-ով և «անվանացանկերով», որոնք վրացերեն բնագրում չկան:

[26*] Տե՛ս, օրինակ, **Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ**, «Յովհաննես Վանական Տաւուշեցու անտիպ երկերից («Պատճառք Առաջաւորաց պահոցն»).- Էջմիածին, 1959/Զ., էջ 35 (35-44):

Բնագրի հռոմեական թվերը փոխարինվել են հայերեն թվատառերով: Մասնակի դժվարություն էր նաև եզրաբանությունը ճշգրիտ ներկայացնելու խնդիրը: Հեղինակը տրամաբանական միտքը խտացնող տասնյակ լատինահունչ եզրեր ու հասկացություններ է գործածել, որոնց հայերենը միշտ չէ, որ կարող էր ճիշտ ընկալվել ընթերցողի կողմից, ուրեմն՝ կա՛մ նույն եզրի համար պետք է տրվեր հայերեն առնվազն երկու համանիշ, կա՛մ միայն լատիներենը, կա՛մ էլ՝ հայերենը և լատիներենը միաժամանակ, ինչպես և վարվել ենք: Այսպես՝ հեղինակ(ություն)//ավիպենցիա, մատուռ// էգուպտուր, շրջաբերական//էնցիկլիկա, կրոնադավանական//կոնֆեսիոնալ, փոնագիպտություն//էորտոլոգիա, ձեռագիր// մանուսկրիպտում, սպորակարգություն// հիերարխիա, մասնավոր// պարտիկուլյար, ճյուղավորում// ֆիլիացիա, մամուլահամար// սիգնատուրա, *և այլն:*

Հին վրացերեն վկայակոչումների թարգմանությունները կատարելիս մեզ սիրահոժար օգնել է հայագետ, պ. գ. թ., դոց. Նինո Ափցիաուրին, ում և հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Իսկ գրաբար աղբյուրներից արված բոլոր քաղվածքները ստուգել և անհրաժեշտ շտկումներն արել է գրքի խմբագիրը՝ վաստակաշատ ձեռագրագետ Գևորգ Տեր-Վարդանյանը. նա է պարզել նաև Լ. Մելիքսեթ-Բեկի հիշատակած՝ Մաշտոցյան Մատենադարանի և Ռուսաստանի ԳԱ Արևելյան ձեռագրերի ինստիտուտում (Ս. Պետերբուրգ) պահպանվող ձեռագրերի ներկայիս համարները (տե՛ս Գրականության ցանկի սկզբում): Նրան մեր երախտագիտությունը հայտնում ենք նաև խիստ անհրաժեշտ որոշ ծանոթագրություններ և խորհուրդներ տալու համար (ստորագրված են՝ «Գ. Տ-Վ.»):

Երկի հրատարակությունը նվիրվում է Լևոն Մելիքսեթ-Բեկի ծննդյան 125-ամյակին: Վաստակաշատ կովկասագետի հարուստ և բազմաժանր գիտաստեղծագործական ժառանգության մեջ «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» և նրանց ինքնությունը գիրքը, անշուշտ, մնայուն արժեք է, բայց, ինչպես նշվեց վերը, շուրջ ինը տասնամյակ գրեթե անծանոթ է հանրությանը, և այժմ մայրենիով հասանելի է դառնում և՛ միջնադարագետներին, և՛ ընթերցողներին:

«ՎԱՐԴԱՊԵՏՔ ՀԱՅՈՑ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՑ» ԵՎ ՆՐԱՆՑ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ-վրացական մշակութային հարաբերությունների հիմնախնդիրների մասին 1911 թվականից սկսած մեր աշխատությունը հետզհետե առաջ բերեց պատմական-գրական բազում առանձնահատուկ հարցեր: Դրանց մեջ հատկապես ուշադրություն գրավեց այսպես կոչված, «Հարավային Վրաստանի» կամ «Հյուսիսային Հայաստանի» մշակութային կյանքը ԺԶ-ԺԹ. դարերում, երբ հայ-վրացական հարաբերությունների խաչաձևման այդ տարածքը դարձավ հայերի մշակութային ստեղծագործական ամենաակնառու անկյուններից մեկը, և հայ ժողովրդի ստեղծագործությունները, որոնք պատկերված են ճարտարապետական բազմաթիվ վեհաշուք հուշարձաններում և նրանց դեկորատիվ ու պլաստիկ հետաքրքրաշարժ բազում մատյաններում՝ մի կողմից, և մեզ հասած անթիվ սքանչելի ու թանկարժեք ձեռագրերի տեսքով հոյակապ գրական հարստության՝ մյուս կողմից, իսկապես այնպիսի հետք է թողել այդ երկրամասի վրա, որ այսօր էլ զմայլվում է ամեն մի հետազոտող և անգամ հասարակ դիտող: Սակայն սա դեռ բոլորը չէ: Հայ ժողովրդի մշակութային ստեղծագործական հետքն այդ երկրամասում այնքան հզոր ու անջնջելի է, որ ամբողջովին ստվերում են նախորդ և հաջորդ ժամանակների դուգարական-վրացական աշխատանքները, որոնց մնացուկները՝ հին տեղանվանական և վրացական արձանագրություններով զարդարուն, «քաղկեդոնական» մի քանի օջախներում պիտի փնտրենք:

«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» մասին մեր արծարծած հարցը մեկն է բազմաթիվ այն հարցերից, որոնք առնչվում են, այսպես կոչված, «Հարավային Վրաստանի» = «Հյուսիսային Հայաստանի» և նրա անցյալի ուսումնասիրությանը և վերաբերում են այդ մարզում ԺԱ-ԺԳ. դդ. գիտագրական ասպարեզ իջած Հայոց վարդապետների գործունեությանը, ինչին մեծապես նպաստեց հենց տվյալ դարաշրջանում Վրաստանի քաղաքական-տնտեսական հզորացումը: Դրա հետ մեկտեղ Հին Հայաստանում և Հայերի մեջ գոյություն ունեցող գիտագրական խմբակները, ուղ-

ղուէյունները և դպրոցները պատմութեան մաս կարելի է համարել որոշակի վերապահումով, ինչպիսին, օրինակ՝ հայ գրականութեան պատմութիւնն է, մասնակի բացառութեամբ, որ դեռևս հետազոտված չէ, քանզի հայ գրականութեան պատմութեան հարցերի լուսաբանումը նպաստում է հայ-վրացական մշակութային հարաբերութիւնների հարցերի առաջադրմանն ու դրանց պատասխանին:

Հարկ ենք համարում նշել, որ այս աշխատութիւնը գրելուն մենք ձեռնամուխ ենք եղել դեռևս 1922 թվականին. սակայն անհրաժեշտ գրականութեան և հատկապես ձեռագրերի անհասանելիութեան պատճառով չկարողացանք ավելի շուտ ավարտել: Էական խոչընդոտն այն էր, որ Էջմիածնի գրապահոցի ձեռագիր մատեանների հիմնական հավաքածուն, որը 1914 թվականին Մոսկվա էր տեղափոխվել և միայն 1922 թվականին վերադարձվեց Խորհրդային Հայաստան, մինչև 1925 թ. փակ էր: Այդ իսկ պատճառով մեր մտահղացված աշխատանքը հաջողվեց իրականացնել միայն 1925-1927 թթ. (համալսարանի գործուղումների շնորհիվ): Իսկ Համամիութենական Գիտութիւնների Ակադեմիայի Ասիայի թանգարանում պահպանված հայկական ձեռագրերին ծանոթանալը մեզ հաջողվեց Լենինգրադում եղած ժամանակ՝ 1925 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Ձեռագրերի օգտագործումից բացի, ծրագրված հետազոտութիւնների վերջնական մշակման համար մենք նպատակ դրեցինք նաև շրջագայել, այսպես կոչված, «Հարավային Վրաստան» = «Հյուսիսային Հայաստան»-ով՝ անհրաժեշտ արձանագրութիւնները տեղերում ստուգելու և հնագիտական որոշ պեղումներ կատարելու համար, իսկ նման աշխատանքի իրականացումը հնարավոր եղավ մեր համալսարանի կազմակերպած մի քանի գործուղումների շնորհիվ: Օրինակ՝ 1924 թ. մայիսի 17-18-ին, Արագածի շրջանից վերադառնալիս մենք դիտարկեցինք Օձուն = Ուզունլարը (պրոֆ. Գ. Չուբինաշվիլու և ճարտարապետ Ն. Սերովի հետ միասին) և Քոբեր=Քոբայրը (միայնակ): 1925 թ. դեկտեմբերի 25-31-ին՝ Ախթալան, Կայանը, Հաղբատը, կրկին Օձուն=Ուզունլարը, Հոռ(ր)ոմայրը, «Հովհան Օձնեցու մենաստանը» և դարձյալ ու կրկին՝ Քոբեր=Քոբայրը: 1926 թ. օգոստոսի 15-29-ը՝ Դսեղ գյուղի մոտ գտնվող, այսպես կոչված՝ «Բարձրաքաշի Սուրբ Գրիգորը» և «Քառասնից» Հնեվանքը՝ Լոռի-Տաշիրի դաշտավայրով հանդերձ, նաև Աբո Շահնազարը և Ջուլֆաքենդը, ինչպես նաև Դմանիսի = Դումանիսին և Քվեչը:

1927 թ. հունիսի 11-14-ին (պրոֆ. Գ. Չուբինաշվիլու, ճարտարապետ Մ. Մաճավարիանիի և Ն. Սերովի հետ մեկտեղ՝ կրկին Ախթալան, Սանահինը և դարձյալ Հաղբատը, իսկ նախորդ տարիներին (1923 թ.) դիտել էինք Սամշվիլդեն, Բոլնիսը և, ընդհանրապես, Բոլնիսի (Փոլադաուրիի) կիրճի բոլոր հնութիւնները:

Մեր մենագրութեան վերջնական մշակմանը բավականին նպաստեցին հայագիտութեան այժմյան կարևորագույն կենտրոններից մեկի՝ Վիեննայի Մխիթարյան միաբանութեան հայագետներից ոմանց վերջին աշխատութիւնները, որոնցում խոսվում է նաև մեր կողմից առաջադրված մի քանի հարցերի մասին: Այսպես, Ներսես Ակինյանը *1922-ին հրատարակել է իր «Հետազոտութիւնների» առաջին հատորը, որտեղ, ի միջի այլոց, քննարկված են «Գրիգոր Աբասատրդու և նրա «Գիրք Պատճառաց»-ի, Դավիթ Քոբայրեցու և Վարդան Հաղբատեցու խնդիրները: Համազասպ Ոսկյանը նույն 1922-ին հրատարակել է հատուկ մենագրութիւն՝ «Յովհաննէս Վանական և իւր դպրոցը», իսկ 1926-ին՝ «Մատենագրական քննութիւններ»-ը, որտեղ հատուկ անդրադարձել է Հովհաննես Սարկավագին և Մխիթար Գոշին, իսկ Ղևոնդ Մովսեսյանը 1923-ին լույս է ընծայել «Լոռիի Կիւրիկեանց թագաւորներու պատմութիւն»-ը:*

Այդ հրատարակութիւնները, ինչ խոսք, զգալիորեն դյուրացրին մեր աշխատանքը:

Մեր աշխատութիւնը անձամբ մենք դիտարկում ենք որպես յուրահատուկ պատմագրական հետազոտությունների փորձ, *որի ամբողջ դժվարությունը «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» ինքնության խնդիրն է՝ հատուկ թեքումով, իսկ այդ վարդապետների գրական գործունեությունը ներկայացված է ընդհանուր առմամբ, հույսով, որ երբ հայոց ձեռագիր մատյանների առկա հիմնական հավաքածուները հրատարակվեն (օրինակ՝ Վենետիկինը և Վիեննայինը մասամբ հրատարակվել են, իսկ Էջմիածնի և Երուսաղեմի ձեռագրերը պատրաստվում են տպագրության), մեր առաջադրած հարցերին նորից կանդրադառնանք, կամ էլ ուրիշները իրենց վրա կվերցնեն դրանց վերանայումն ու խորացումը:*

* * *

Այս մենագրութեան արտաքին և ներքին որոշ կողմերի մասին անհրաժեշտ ենք համարում ասել հետևյալը. բնագրային ամեն մի նյութ, որ վերաբերում է հայ-վրացական եկեղեցական երկպառակության խնդրին, մեջբերում ենք հայերեն, մանավանդ, եթե

տպագրված չեն, իսկ եթե այդ նյութերը վերաբերում են նաև հիմնական հարցին, այսինքն՝ «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետներին» և նրանց ինքնուրյանը, այդ ժամանակ en regard կցում ենք նաև նոր վրացերենով թարգմանությունը: Մնացած դեպքերում պատմական և գրական բոլոր տեղեկությունները, աննշան բացառությամբ, մեջբերում ենք միայն վրացերեն թարգմանությամբ, իսկ թարգմանությունները միշտ կատարել ենք բնագրին համաժեք:

Տեքստերում, մեջբերումներում և նրանց թարգմանություններում մեր կողմից վերականգնվածները դրված են ուղիղ փակագծերում, իսկ մեր նկատառումներն ու ծանոթագրությունները՝ անկյունավոր փակագծերում: Սովորական (կոր) փակագծերի գործածության կանոնն ինքնին հասկանալի է:

Մի երկու խոսք onomasticon-ի մասին. Հատուկ անունները (Perzonennamen) մենք, գրեթե միշտ, գրել ենք իրենց վրաց համարժեքներով, բացառությամբ մի քանի դեպքերի, երբ այդպիսի համարժեքների գործածությունը փոքր-ինչ անհարմար ենք համարել, եթե, իհարկե, նմանների գոյությունը կամ փնտրտուքը կասկածի տեղիք չի տվել (օր.՝ Գեորգ [և ոչ թե Գիորգի], Ղևոնդ [Լեոնիդ], Մարտիրոս [Մարտվիլի՞], Խաչատուր [Քրիստեփորե՞], Վարդան [Վարդեն] եւլն.), աշխարհագրական անունները (Ortsnamen) միշտ գրել ենք այն տեսքով, ինչ տեսքով որ նրանք հայտնի են եղել հնում՝ վրաց մատենագրության մեջ, օրինակ՝ Ախպատ [և ոչ թե Հաղբատ], Սանահին [Սանահին], ինչպես որ Վախուշտին է գործածել, այստեղ նույնպես ունենք մասնակի բացառություններ (օր.՝ գործածում ենք Խաչեն, թեև պետք է ասեինք՝ Խաչիանի և այլն):

Գրքում զետեղված բոլոր լուսանկարները (տե՛ս էջ 52, 53, 93 և 184) հատուկ մեզ համար տեղերում նկարահանել է պրոֆ. Գ. Չուբինաշվիլին, 1927 թվականի հունիսի 12-13-ին: Սանահնի պլանը վերցված է Լ. Եղիազարյանցի և Ռ. Մարտիրոսյանցի կազմած ալբոմից՝ «Памятники армянской архитектуры, под редакции проф. Г. Гримма» (Спб, 1912, табл. 31), իսկ վերջում տեղադրված «Հյուսիսային կողմանց» պատմական քարտեզը՝ գիտագրական օջախների ցուցադրմամբ, հատուկ պատրաստված է քարտեզագրության ինստիտուտում: Սրանից ավելի ցուցադրական նյութեր զետեղել, ցավոք, անհնարին եղավ զուտ տեխնիկական բարդությունների պատճառով, և սրանով պիտի բացատրել, որ պրոֆ. Գ. Չուբինաշվիլու՝ հատուկ մեր հրատարակության համար նկարահանած որոշ

լուսանկարներ (օր.՝ Հովհաննես Սարկավագի և Գրիգոր Տուտեորդու գերեզմանների վրա կառուցված հուշարձանների անչափ ուշագրավ արձանագրությունները և այլն), ինչպես նաև՝ ճարտարապետ Մ. Մաճավարիանիի կազմած՝ Հաղբատի պանթեոնի պլանի տեղադրումը այս հրատարակության մեջ:

Տփղիսի տպարանների անհարմարավետությամբ է բացատրվում այն փաստը, որ ծանոթագրություններում որոշ անհրաժեշտ մեջբերումներ, հին վրացերեն ուղղագրությամբ, հնարավոր չեղավ, ահա թե ինչու «Ω»-յոտա-ի փոխարեն տպագրեցինք «ი»-ի, «Ѳ»- հաէ-ի փոխարեն՝ «ი»-ի կամ «ე»-է: Որոշ տեղերում գործածված պարսկական բառերը լատինական տառադարձությամբ լիարժեք ճշգրտությամբ չեն տրված: Նմանապես, ռուսաց լեզվով բոլոր հին հրատարակություններն ստիպված ենք եղել ներկայացնել նոր ուղղագրությամբ:

Տեխնիկական բնույթի խոչընդոտներով է բացատրվում նաև այն, որ մեր մենագրության մեջ տեղադրված բնագրագիտական նյութերը բերված են հնարավորինս վերականգնված տեսքով. դրանով իսկ խուսափել ենք պահանջվող «ծանոթագրությունների» անհրաժեշտությունից:

* * *

Վերջում՝ հաճելի պարտականություն ենք համարում մեր սրտաբուխ երախտագիտությունը հայտնելու բոլոր այն հաստատություններին և անձանց, հատկապես՝ Վառլամ Թոփուրիային, ովքեր խոսքով և գործով աջակցեցին մեզ՝ այս գիրքը կազմելու և տպագրելու գործում:

Լ. Մ. Բ
Թիֆլիս
26. 01. 1928

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա = *Արարատ*

Ալիշան = Ղևոնդ վ. Ալիշան, *Շիրակ, Վնտ., 1881:*

Ակինեան, *Մատ. հետազ.* = Ներսէս վ. Ակինեան, *Մատենագրական հետազօտութիւններ, քննութիւն և բնագիր. հատոր Ա. [ԱՄ ՂԴ.] Վն., 1922 (*=նույնի՝ *Գրիգոր որդի Աբասայ և Պատճառաց գիրքը,- ՀԱ 1907, էջ 132-135, 228-235, 271-274; Դաւիթ վարդապետ Քոբայրեցի.- ՀԱ 1908, էջ 139-147: Վարդան վրդ. Հաղբատացի, ՀԱ 1908, էջ 232-235):*

ԱՀ = *Ազգագրական Հանդէս*

ԱՄ = *Ազգային Մատենադարան*

Բարխուդարեան = Մակար եպ. Բարխուդարեան, *Արցախ, Բագու, 1895:*

Եր. ս. = *[Տէր-Մինասեանց] Եր[ուանդ] ս., Հաղբատ և Սանահին վանքերը.- Ա. 1901, էջ 217-277, 338-344:*

Երզնկեան = Ռոստոմբեգ Երզնկեան, *Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից, Վաղ., 1886:*

Չ[արբհանալեան] Գ. = Գ. վ. Չ[արբհանալեան], *Հայկական հին դպրութեան պատմութիւն, Գ. տպ., Վնտ., 1897:*

Էջմ. = *Էջմիածին:*

Թիֆ. համ. բանբեր = *Թիֆլիսի համալսարանի բանբեր:*

Թուղթ ընդհ. = *Թուղթ ընդհանրական:*

Լալայեան = Երուանդ Լալայեան, *Բորչալուի գաւառ.- ՀԱ, գ. VII-VIII, Տփղ., 1901:*

Կարինեանց, Մայր ցուցակ = Յակոբ Կարինեանց, *Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, Տփղ., 1863:*

Կիրակոս ~ *Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, ի լոյս ընծայեաց* Ոսկան Տէր-Գրիգորեան Յովհաննիսեանց Երևանցի, *Մոսկվա, 1858: Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, Համառօտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցաւուրս իւր լուսաբանեալ, Վնտ., 1865: Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, [ՂՄ 3], Տփղ., 1910*

(վերահրատարակված է Մոսկվայի՝ 1858 թվականի հրատարակությունից): Մենք օգտվում ենք երրորդ հրատարակությունից (նշում ենք՝ Կիրակոս*):*

Կոստանեանց = Կ. Կոստանեանց, *Վիմական տարեգիր [BAG II],* Спб., *1913:*

ՀԱ = *Հանդէս Ամսօրեայ:*

Ղ. Մովսէսեան = Հ. Ղևոնդ Մովսէսեան, *Լօռիի Կիւրիկեանց թագաւորներու պատմութիւնը [ԱՄ ՂԵ.], Վն., 1923 (= նույն վերնագրով,- ՀԱ 1922, էջ 13-30,95-110, 244-245,369-382, 643-645, 1923,էջ19-22):*

ՂՄ = *Ղուկասեան Մատենադարան:*

Մատթէոս Ուռհայեցի - Մատթէոս Ուռհայեցի, Պատմութիւն 1869: *Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Բ. տպ. [Հրատ.* Մամբրէ Մելիք-Ադամեան և Ներսէս Տէր-Միքայէլեան*], Վաղ., 1898: Մենք օգտվում ենք երկրորդ հրատարակությունից (նշում ենք՝* Մատթէոս Ուռհայեցի*):*

Մխիթար ~ *Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց* Մ. Էմին, *Մոսկվա, 1860: Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծայեաց* Ք. Պատկանեան, *ՍՊբ., 1867: Երկրորդ հրատարակությունը ձեռքի տակ չունենալու պատճառով՝ օգտվել ենք առաջինից (նշում ենք՝* Մխիթար*), բացառությամբ մեկ դեպքի, երբ օգտվել ենք երկրորդ հրատարակությունից (տես այս գրքի Բ մասի Ը գլուխը):*

Յարութիւնեան = Իսահակ Յարութիւնեան, *Սանահին.- Ա՛Հ, գ. Գ., Տփղ., 1898:*

Յովհ. Ղրիմեցի (Крымский) = Описание монастырей Ахпатского и Санагинского, архим. Иоанна Крымского. *Description des monastéres arméniens d'Haghbat et de Sanahin, par archim. Jean de Grimée, avec notes et Appendice, par M. Brosset,- «Mémoires de l'Acad des Scienccs», VII sér., t. VI, N 6,* Спб., *1863*[1*]*:*

Նամականի = *Գրիգոր կաթողիկոսի Տղայ կոչեցեալոյ Նամականի, Վնտ. 1865:*

Շահխաթունեանց = Յովհաննէս եպ. Շահխաթունեանց, *Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Ա-Բ., Էջմ., 1842:*

Ոսկեան Հ., *Յովհաննէս Վանական և իւր դպրոցը* = Հ. Համազասպ Ոսկեան, *Յովհաննէս Վանական և իւր դպրոցը [ԱՄ ՂԳ.], Վն., 1922*

[1*] Հայերէն բնագիրը տե՛ս Յովհաննու Ղրիմեցւոյ Պատմութիւն Հաղբատու Ս. Նշանու վանաց, Վիեննա, 1965, 184 էջ - Գ. Տ-Վ.:

(=նույն վերնագրով,- ՀԱ. 1921, էջ 41-52, 163-172, 364-374, 458-471, 564-573, 1922, էջ 89-94, 214-226):

Ոսկեան, *Մատ. քննութ.* = Հ. Համազասպ Ոսկեան, *Մատենագրական քննութիւններ [ԱՄ ՃԺԲ.], Վն. 1926 (*=նույնի՝ *Յովհաննէս Սարկաւագի կեանքը.- ՀԱ. 1925, էջ 27-40, Յովհաննէս Սարկաւագի գրութիւնները,- ՀԱ. 1925, էջ 117-125, 233-248: Մխիթար Գոշ,- ՀԱ. 1925, էջ 348-361: 1925, էջ 25-35, 129-137:* Բաբգէն եպիսկոպոս [Կիւլեսէրեան], *Մխիթար Գոշի վերաբերյալ ձեռագիրք Երուսաղէմի սրբոյ Յակոբեանց ձեռագրաց մատենադարանին մէջ,- ՀԱ. 1926, էջ 137-147):*

ՊՀ = *Պատմագիրք Հայոց*

Ջալալեանց = Սարգիս վ. Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Տփղ., մս. Ա., 1842, մս. Բ., 1858:*

Սամուէլ - *Սամուէլ քահանայի Անեցւոյ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», հրատ.* Արշակ Տէր-Միքելեանի, *Վաղ., 1893 (նշում ենք՝* Սամուէլ):

Սարգիսեան = Ներսէս վ. Սարգիսեան, *Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վնտ., 1864:*

Վաղ. = *Վաղարշապատ*

Վարդան – *Մեծին Վարդանայ Բարձրբերդեցվոյ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեաց* Մկրտիչ Էմին, *Մոսկվա, 1861: Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վնտ., 1862: Մենք օգտվում ենք երկրորդ հրատարակությունից (նշում ենք՝* Վարդան):

Վն. = *Վիեննա*

Վնտ. = *Վենետիկ*

Տաշեան, *Յուցակ* = Յակովբոս վ. Տաշեան, *Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վն., 1895:*

Տփղ. = *Տփղիս, Թիֆլիս, Թբիլիսի*

Ք.Տ. = *Քարթլիս ցխովրեբա. Բրոսե, Մ. Բրոսեի հրատարակությունը, ՍՊբ., 1849: Թաղ. = Մարիամ Թագուհու տարբերակը, Է. Թաղաիշվիլու հրատ. Տփղ., 1906:*

Օրմանեան, *Ազգապատում* = *Մաղաքիա արքեպ. Օրմանեան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912-1913:*

BAG = *Bibliotheca Armeno-Georgica*

Ձ. = *ձեռագիր. Ձ. էջմ. թանգ. հին հավ.= ձեռագիր էջմիածնի թանգարանի հին (հիմնական) հավաքածուի մինչև 1914 թվականը հավաքածները. Ձ. էջմ. թանգ. նոր հավ.= ձեռագիր էջմիածնի նույն*

թանգարանի նոր հավաքածուի 1914 թվականից հետո հավաքածները:

Зап. АН = Записки Академии Наук

ЗВО = Записки Восточного Отделения И. Русского Археологического О-ва

Изв. АН = Известия Академии Наук *(VI* серия*)*

Изв. КИАИ=Известия Кавказского Историко-Археологического Института в Тифлисе


Лнгр.= Ленинград

М = Москва

СМК = Сборник материалов для описания местностей и племен Кавказа

ТР = Тексты и Разыскания по армяно-грузинской филологии


ХВ = Христианский Восток



Նկար 2. Հաղբատի գերեզմանատունը (պանթեոն)
(վրացերեն հրատարակությունից՝ էջ 53)



Հաղբատի գերեզմանատունը (պանթեոն) մեր օրերում (2006 թ.)




ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Նկար 1. Սանահնի գրապահոցը
(վրացերեն հրատարակությունից՝ էջ 52)



Սանահնի գրապահոցը մեր օրերում (2006 թ.)

ԳԼՈՒԽ Ա.

ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետներ» անվանումով հայագիտության և հայ գրականության մեջ հայտնի են այն անձինք, ովքեր, ըստ հայկական սկզբնաղբյուրների, գործունեություն են ծավալել «Հյուսիսային կողմերում», որոշակի ժամանակաշրջանում և որոշակի պայմաններում, և պատկանել են որոշակի դավանաբանական-ազգային ուղղության, այսինքն՝ տվյալ դեպքում՝ հայ հակաքաղկեդոնական ծայրահեղ, պահպանողական մտածողության՝ այլատեցության (քսենոֆոբ) թևին, իսկ այս թևը խստագույն ընդդիմություն էր ներկայացնում Կիլիկիայում գործող և եկեղեցական-քաղաքական կյանքում իշխող այլասեր (քսենոֆիլ) շրջանակների դեմ:

Այս անձանց ինքնության պարզումը՝ կապված նրանց գործունեության հետ, չափազանց հետաքրքիր է այն առումով, որ նրանց ստեղծած դպրոցը հայ մատենագրության պատմության մեջ համընկնում է Վրաստանի պետականության հզորացման հետ, այսինքն՝ ԺԱ-ԺԳ. դարերին, հետևաբար հատուկ հետաքրքրություն կարող է ներկայացնել հայ-վրացական հարաբերությունների տեսանկյունից:

Հանգուցյալ Կարապետ Տեր-Մկրտչյանը, հայ գրականության զարգացումը կապելով, այսպես կոչված՝ «Հյուսիսային կողմանց» հետ, իրավացիորեն նշում է. «Նախորդ ժամանակներում համեմատաբար այդքան զգալի չի եղել Հայաստանի հիւսիսային նահանգների կատարած դերը. Հայոց ինչպէս քաղաքական, այնպէս և հոգևոր՝ կեանքը մինչև Բագրատունեաց վերջին օրերը կենտրոնացած էր գլխաւորապէս Այրարատում և Վասպուրականում: Բայց երբ անվերջ թուրք-թաթարական արշաւանքներից Հայաստանի այդ միջնաշխարհը աւերուեց ու ամայացաւ, շատ մասերում էլ ընդ միշտ օտար մահմեդական ցեղեր հաստատուեցան, վերոյիշեալ քաղաքական ոյժերի հետ նաև Հայ ազգի հոգևոր-բարոյական զօրութեան որոշ տարրերը ապաստան գտան հիւսիսում, և հիւսիսային Հայաստանը դարձավ այդ կողմից էլ Կիլիկիայի նման ու

աւելի տեւական կերպով՝ հայ-քրիստոնէական քաղաքակրթութեան պատսպարանը: Արդէն Զաքարէ Սպասալարն ու Իվանէ Ամբաբէկը զինուորական մեծագործութեանց հետ զուգընթացաբար նշանաւոր էին հանդիսացել ընդարձակ շինարարութեամբ, և նոցա ու իրենց իշխանակիցների հովանաւորութեան ներքոյ բարգաւաճել էին Հաղբատն ու Սանահինը, Մխիթար Գոշ վարդապետի հիմնած վանքերն և դարձել վանական կրթութեան կարևոր կենտրոններ: Սոքա հայրենի աւանդութեանց համար ցուցց տուած նախանձախնդրութեամբ հակակշռում էին Կիլիկեցիների օտարամէտ շարժումներին և բազմակողմանի գրական ու վարդապետական գործունէութեամբ մի հաւատարիմ սերունդ պատրաստում յետագայ աւելի դժբախտ ժամանակների համար: Միւս իշխանները, հետեւելով նոցա օրինակին՝ աշխատում էին մեկը միւսին գերազանցել իրենց վանքերի բարեկարգութեամբ և շինուածների հոյակապութեամբ: Նոցանից գրեթէ իւրաքանչիւրը մի տոհմային վանք ունէր, որի բարեզարդութեան համար ոչինչ չէին խնայում. Խաչէնի իշխանները չէնացնում էին Գանձասարը, Հաթերքի իշխանները՝ Դադի վանքը, Դօփեանք՝ Խաթրավանքը, Օրբէլեանները՝ Նորավանքն ու Տաթևը, Պռոշեանք՝ Այրի վանքը, Վաչուտեանք՝ Յովհաննավանքն ու Սաղմոսավանքը և‌ն. և‌ն. այլ և ազգակցական, խնամէական ու այլ կապերով միմեանց հետ կապուած իշխանները բարեպաշտական պարտք էին համարում մեկը միւսի կալուածքում մի աչքի ընկնող յուշարձան թողնել»[1]:

Մեկ այլ հայ գիտնական՝ Մաղաքիա Օրմանյանը, *այդ նուէն «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետներին» այսպես է բնութագրում. «Արեւելեան վարդապետներուն խումբը* հիւսիսային կողմանց *(Ընդ. 309) վարդապետներ ալ կոչուած են, զի իրենց կեդրոններն էին Հաղբատ ու Սանահին զոյգ վանքերը, Գուգարաց Ծորոփոր գաւառի, Զորոգետի հովտին մէջ, ուսկից առնելով Զորոգետացի ալ կոչուած են յաճախ: Այս վանքերը Բագրատուններց օրերէն սկսած էին ծաղկիլ եւ արեւելեան երկիրներու կամ բուն Հայաստանի մէջ կրօնից և ուսմանց կեդրոն դարձած էին: Եկեղեցական իշխանութեան կամ նուիրապետութեան տեսակէտէն ալ իրենց գլուխ կը ճանչնային Անիի արքեպիսկոպոսները: Արեւելեան սահմաններուն մէջ փակուած, եւ արեւմտեան յարաբերութիւններէ անջատ, եւ նախնի*

[1] **Կարապետ եպիսկոպոս**, Դօփեանք և Մելիք-Շահնազարեանք. «Նիւթեր հայ մելիքութեան մասին», Բ. պրակ, հրատ. Հայոց Ազգագրական Ընկ., էջմ., 1914, էջ 40-42:

աւանդութեանց հաւատարիմ պահապան, ամէն միութեան գաղափարը կասկածաւոր էր Զորագետցիներուն աչքին, եւ օտարներու առաջարկներուն անվստահ, խաբուելու կամ ընկճուելու վտանգէն ազատ մնալու համար՝ կը սիրէին յարաբերութիւններէ ալ խուսափիլ»[2]:

Ն. Ադոնցը, հայ դպրության պատմությունը բաժանելով հինգ շրջանի, որպես երրորդ շրջան (ԺԲ-ԺԴ. դդ.) ընդունում է Զաքարյանների իշխանությունը Հայաստանում և Ռուբինյանների իշխանությունը՝ Կիլիկիայում, համապատասխան երկու գլխավոր կենտրոններով, մասնավորապես այս երրորդ շրջանի հոգևոր գրականության մասին ասում է. "Церковная литература богата содержанием; этим она обязана отчасти тем партийным трениям и столкновениям, которые происходили между обоими центрами армянской образованности. Вопрос об унии армянской церкви с греческой и с латинской имел сторонников и врагов среди духовенства в Армении и Киликии. В общем, киликийское духовенство обнаруживало больше склонности к унии, под влиянием, прежде всего, политических условий. Богословская мысль никогда не была так порабощена политикой, как в этом периоде. Византия и Рим оказывали давление на армянскую церковь через Рубенидов. Они рассчитывали укрепить союз с армянами, который был им дорог в виду крестовых походов, на почве вероисповедной солидарности. Рубенидские же князья, надеясь обеспечить посредством такого союза свое политическое существование среди мусульманских государств, шли навстречу течению, направленному против §церковной обособленности. Князь Леон готов был осуществить унию даже насильственными мерами, лишь бы получить царскую корону. Мысль об унии встречала сочуствие в тех представителях церкви, которые были воспитаны в новой киликийской сфере, проникнутой западным духом. Во главе их стоял Нерсес, епископ Ламбронский (ум. в 1198 г.)... Против него и его единомышленника, католикоса Григория Отрока (ум. в 1193 г.), вооружились Григорий, сын Тутея (Тутеорди), и Давид Кобайрский из ахба-санаинской школы. Они занимали крайнюю позицию в вопросе об учении, либерализму киликийцев противопоставляя преданность санаинской школы заветам старины"[3].

Լեոն (Առաքել Բաբախանյան) ևս, երբ դատողություններ է անում ԺԲ-ԺԳ. դդ. հայ արվեստի մեկենասների մասին, ասում է.

[2] **Մաղաքիա Օրմանեան**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկզբէն մինչև մեր օրերը, յարակից ազգային պարագաներով պատմուած, Կ. Պոլիս, 1912-1913, էջ 1461 (§ 1004):

[3] **Н. Адонц**, Армянская литература.- «Нов. Энцкл. Словарь Брокгауз-Ефрона», т. III, стлб. 652-653:

«Արուեստների հետ խրախուսւում էր և մտաւոր զարգացումը: Բազմաթիւ նորակառոյց և վերանորոգուած եկեղեցիների ու վանքերի համար հարկաւոր էին միաբանութիւններ, և այս անհրաժեշտութիւնը բնականաբար գալիս էր բազմացնելու դպրոցների թիւը: Զարգանում է առանձնապէս վանականութիւնը: Վանքերը նորից մեծամեծ կալուածների տէր են, Հաղբատն ու Սանահինը դառնում են խոշոր մտաւոր կենտրոններ, ազդու և ուժեղ ոչ միայն իրանց մտաւոր կարողութեամբ, այլ մանաւանդ իրենց հարստութիւններով»[4]*:*

Իսկ նշանաւոր Ալ. Մուրավյովը, խոսելով Հաղբատ-[Սանահին]-ի խմբակի ծայրահեղ պահպանողականության մասին, որը հետագայում՝ Ը-ԺԵ. դարերում, բացառապես Սյունիքի գլխավոր կենտրոն Տաթևի գլխին ջարդվեց, ասում է. «В Ахпате Православие встретило сильный отпор, равно как и в монастыре Татевском, что в Карабахе, ибо там соединялись частные соборы, под председательством своих Архиепископосов, чтобы обсудить действия благонамеренных Католикосов»[5].

Նույն կարծիքը կրկնում է Մկրտիչ Էմինը. «В конце XII ст. Хах'бат, как хранитель старого порядка, держал сильную оппозицию против всех благих начинаний, предпринятых армянскими иерархами в Киликии»[6].

Այսպես թե այնպես, նշված խմբի հայ գործիչները աչքի են ընկնում հայ հին գրականության մեջ հիանալիորեն ստեղծված termini technici-ով,- «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետները», որը հականե-հանվանե գործածված է Հաղբատ-Սանահնի միաբանության գրագրություններում, ուղղված «Տղայ» կոչված Գրիգոր Կաթողիկոսին (1173-1193) Կիլիկիայում:

Մի կողմից՝ հիւսիսային.

«Թուղթ վարդապետացն Հայոց հիւսիսային կողմանց, որ ի Հաղբատ և ի Սանահին, առ պատուական կաթողիկոսն տէր Գրիգորիոս»[7]*:*

---

[4] **Լէօ**, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի 1838-1913, Տփղ., 1915, էջ 47-48:

[5] [**А. Муравьев**], Грузия и Армения, ч. II, Спб., 1848, стр. 304.

[6] Всеобщая история Вардана Великого, пер. Н. Эмина, Москва, 1861, стр. 134, прим. 417.

[7] Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանեալ սուրբ հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ, էջմ., 1865, էջ 426 = Ընդհանրական թուղթ սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ, Երուսաղէմ, 1871, էջ 308 (հմմտ. **Յակովբոս Տաշեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վն., 1895, էջ 950):

Եվ մյուս կողմից՝

«Տեառն Գրիգորի՝ Պատասխանի վարդապետացն Հայոց հիւսիսային կողմանց»[8]*:*

Մ. Օրմանյանը, իհարկե, ճիշտ է, երբ նշում է, թե հիւսիսային վարդապետները «Զորոգետացի ալ կոչուած են յաճախ»:

Զորոգետը կամ Զորագետը հին անվանումն է (այժմ Խորհրդային Հայաստանի կողմից վերակագնված), ռուսների կողմից՝ Каменка, *կոչված գետի, որը արևելք-արևմուտք ուղղությամբ հոսում է երկաթուղային Քոլագիրան կայարանի մոտից և, որը այստեղ հարավից Բամբակ (այժմ, չգիտես ինչու, Փամբակ կոչված)-ին է միանում, այնուհետև նախ՝ հարավ-հյուսիս և հետո հարավ-արևմուտք-հյուսիս-արևելք ուղղությամբ ընթացող՝ Դեբեդ կամ Դեբեդչայ անունով է հայտնի*[9]*: Հաղբատը և Սանահինը ճիշտ այս գետի հովտում են գտնվում, Քոլագիրանից հյուսիս. ահա ինչու, միանգամայն բնական է, որ այս շրջակայքի միաբանության անդամներին «Զորոգետցիք» կոչեին, թեև որպես «Զորոգետցիներ» առանձնապես միայն սանահնեցիք են հայտնի եղել:*

Ամեն դեպքում, սկզբնաղբյուրներում «Զորոգետցիք», resp. «Զո-

---

[8] Թուղթ ընդհանրական կլն., 433 - Գրիգոր կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Նամականի, Վնտ., 1865, էջ 53 (հմմտ. **Տաշեան**, նույն տեղում):

[9] Զորոգետ կամ Կամենկա = Դեբեդաչայ գետ **Վախուշտին** (Description geographique de la Géorgie, publié par M. Brosset, SPb., 1842, p. 136 = ბატონიშვილი ვახუშტი, საქართველოს გეოგრაფიაგა, გამ. მ. ჯანაშვილისა, ტფ., 1904, გვ. 40 (Բատոնիշվիլի Վախուշտի, Վրաստանի աշխարհագրություն, հրատ. **Մ. Ջանաշվիլու**, Տփղ., 1904, էջ 40) սխալմամբ Բերդուջ-Սագիմ-Դեբեդ է անվանում, մինչդեռ Բերդուջ-Սագիմը և Դեբեդը բոլորովին տարբեր գետեր են: Արտաքուստ Զորոգետը (որ «Զորի գետ է» նշանակում) գրեթե նման է **Վախուշտիի** նշած գետ-ձորին (ինչը «Գետի ձոր է» նշանակում), բայց վերջինս ներկայացված է ներքևներում: (Description, 152 = Մ. Ջանաշվիլու հրատ., 50), և, ուրեմն, Զորոգետի և Գետի-ձորի նույնացումը բնավ հնարավոր չէ: **Միքայել Չամչյանի** «Պատմութիւն Հայոց»-ի, (Վենետիկի 1784-1786 թթ. հրատ.) վրացական տարբերակում, որը հատվածաբար է հասել մեզ, և որը վերջին ժամանակներս ձեռք է բերել Վրաստանի պատմաազգագրական թանգարանը, Զորոգետը բացատրվում է հետևյալ կերպ՝ «որն ասվում է ձորակի գետին՝ առվակին» (տե՛ս թանգարանի ձեռ. Ֆ^{որ} № 3107, տետր I, էջ 1r). **Ղևոնդ Մովսէսեան** (Լոռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը [ԱՄ ՂԵ.], Վն., 1923, էջ 86), չգիտես ինչու, Զորոգետը Կախեթն է համարում: Թե՝ Զորոյգետը Կախեթն է (sic). Զորոգետի վերաբերյալ սխալ տեղեկություններ է հաղորդում նաև **Ղուկաս Ինճիճյանը** (Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վնտ., 1822, էջ 416-417, և ծնթ. 1, էջ 417): Քանի որ խոսք եղավ, պետք է նշենք, որ ԺԳ. դարի հայ պատմաբան-աշխարհագրագետ **Վարդանը** տարբերակում է երկու «Զորոգետ», մեկը՝ Սևորդեաց, մյուսը՝ «Անիի»: (**M. Saint-Martin**, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. II, Paris, 1819, pp. 424, 418): Նշենք նաև, որ Ծործորը Զորոգետի հետ ոչ մի կապ չունի՝ գտնվում էր Հարավային Հայաստանում, որտեղից էր Հովհաննես Երզնկացին կամ Ծործորեցին՝ «Պլուզ» մականվամբ (ԺԳ-ԺԴ. դդ.):

բագեցիք» եզրը, մեր կարծիքով, գործածվում է երկու իմաստով:

Օրինակ, Գրիգոր Տղայի վերոհիշյալ պատասխանում «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» թղթում «Ձորագեցիք», «անեցիների» հետ միասին, հակադրված են «վաղարշապատցիներին» և «դվինցիներին»:

«Միթէ Անեցի՞ք էին սոքա և Ձորոյգետացի՞ք, կամ Վաղարշապատեցի՞ք և Դուինեցի՞ք...»[10]:

Մյուս կողմից՝ Ներսես Լամբրոնացու պատասխանում Սանահնի դպրոցի նշանավոր ներկայացուցչին՝ Գրիգոր Տուտեորդուն, «Ձորոգեցիներ» կամ, ավելի ճիշտ, «Ձորագեցիներ» եզրը գործածված է սանահինցիներին *համարժեք:*

«Տեառն Ներսիսի Լամբրոնացւոյ եւ արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկ[ի]ոյ՝ Պատասխանի թղթոյն վարդապետին Տուտէորդւոյ և նորին նմանեաց Ձորագետացւոցն *և* Հաղբատացւոցն*»[11]:*

Ձորագեցին օգտագործված է նաև սանահնեցու նշանակությամբ ԺԳ. դարի վերջին Հովհաննես Երզնկացու *կազմած «Գիրք հակաճառութեան և ընդդիմաբանութեան ընդդէմ երկաբնակաց» ժողովածուի տարբերակում[12], որտեղ առաջաբանում հիշատակված են «Անանիա վարդապետ Ձորագեցի» և «Յովհաննէս վարդապետ, Սարկաւագ կոչեցեալ, Հախպատացի»: Հետևաբար՝ այստեղ* Ձորագետցին *ոչ հաղբատացու նշանակությամբ է օգտագործված, ոչ հաղբատ-սանահնեցու, այլ հաղբատացու հակադրմամբ, որը, անշուշտ, համարժեք է* սանահնեցուն. *սա, ի միջի այլոց, հաստատվում է նաև նրանով, որ հիշատակված Անանիան, իրոք,* սանահնեցի *էր:*

«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետները» հին փաստաթղթերում օգտագործված է «Արևելից» տերմինը:

Օրինակ՝ Գրիգոր Տղայի եղբոր՝ Ներսեսի կողմից Հաղբատցի Գևորգին հղված մի թղթի վերնագրում ասված է.

«Թուղթ առ ի Ներսիսէ եպիսկոպոսէ՝ յեղբօրէ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց՝ Պատասխանի թղթոյն Գէորգեայ Արեւելեան եպիսկոպոսի, առաջնորդի սրբոյ ուխտին Հաղբատի*»[13]:*

Բայց, միևնույն ժամանակ, «Արևելցի» տերմինը իրականում ավելի լայն հասկացություն է, ինչը պարզ երևում է Ստեփանոս

[10] Թուղթ ընդհ., 447 = Նամականի, 75:

[11] **Տաշեան**, Ցուցակ, 333, հմմտ. 829:

[12] Տե՛ս էջմ. թանգ. նոր հավաք. ձեռ. Ղ՟ր 1110 [=6453], էջ 1բ:

[13] Սոփերք Հայկականք, ԺՋ., Վնտ., 1854, էջ 4:

Օրբելյանի (ԺԳ. դ.) Պատմության մեջ զետեղված մի փաստաթղթից՝ «Ձեռնարկ միաբանութեան եպիսկոպոսաց արևելից *և վարդապետաց և իշխանաց»[14], որտեղ բոլորովին էլ «Ձորագեցիներին» նկատի չունի, այլ հաղբատցիների հետ միասին նկատի ունի նաև սյունեցիներին, բջնեցիներին, գողթնեցիներին և հավուցթառեցիներին[15]:*

[14] Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց [ՂՄ-4], Տփղ., 1911, էջ 461-463, հմմտ. 449:

[15] Հարկ է նշել, որ **Ստեփանոս Օրբելյանը** (Օրբէլեան, 299) Ձորոգետցիներ ասելով հոգևոր անձանց նկատի չունի, այլ Կյուրիկյան հարստության աշխարհիկ ներկայացուցիչներին, ովքեր տերերն էին Ձորոգետի հովտի, «Ձորոյգետացիքն, որ Կիւրիկեանքն կոչին».- ասում է նա:

ԳԼՈՒԽ Բ.

«ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՑ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետներ» արտահայտությունը՝ որպես որոշակի հասկացություն, երկու էլեմենտ է պարունակում. դրանցից մեկը մատնանշում է հայ վարդապետներին, *իսկ մյուսը՝ այդ վարդապետների* գործելավայրը *կամ, ավելի ճիշտ՝* մարզը, շրջանը:

Ա. Հայոց վարդապետներ՝ *այսպես ենք թարգմանում հայերենից «վարդապետք Հայոց»*[1] *եզրը, որտեղ* վարդապետ-*ը ընկալվում է իր պատմական նշանակությամբ (և ոչ թե ժամանակակից՝* արխիմանդրիտ[2]*, որը վրաց հին մատենագրության մեջ համապատասխանում*

[1] Հիշյալ տերմիններն այս իմաստով են գործածված նաև Անտոն կաթողիկոսի «էրիստիկա»-ում ("ზნამეტყველება", տե՛ս **Պ. Կարբելովի** հրատարակությունը, Տփղ., 1892): **«Վարդապետք Հայոց ազգակիցք»** (էջ 107), **«Վարդապետք անհաւատք Հայոց»** (էջ 112), **«Վարդապետք Հայոց ազգի»** (էջ 119), **«Վարդապետք Հայոց»** (էջ 121) և այլն:

[2] Վարդապետ եզրի մասին բազմաթիվ տեղեկություններ ենք գտնում հայ եկեղեցու հայրերի և ժողովների որոշումներում, օրինակ, Սահակի կանոններում Գ., § 35, Շահապիվանի 447 թվականի ժողովի արձանագրությունների նախաբանում, § 19, Դվինի 4-րդ ժ/ողովի՝ 648 թ., § 9, Պարտավի՝ (Սիոն կաթողիկոսի) 768 թ., § 6, Երուսաղեմի՝ 1651 թ., § 9, **Մխիթար Գոշի** «Հայոց Դատաստանագրքի», 1, § 3, 3. **Գրիգոր Տաթևացու** «Քարոզներում» և այլն, և այլն: Ընդհանրապես հին մատենագրության մեջ այն կարծիքն է տարածված, որ եկեղեցու հիմքերը նախ առաքեալք են, հետո մարգարէք, երրորդը միայն՝ **վարդապետք**, որոնք ԺԴ. դարի գործիչ **Գրիգոր Տաթևացու** կարծիքով (Քարոզգիրք. Գիրք քարոզութեան, որ կոչի Ջմռան հատոր, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն. Կլն., Կ. Պոլիս, 1740, էջ 162), նկարագրում են. առաջինները՝ «Հօրը», երկրորդները՝ «Որդուն», իսկ երորդները՝ «Սուրբ Հոգուն» (**Գրիգոր Տաթևացու** Քարոզգիրքը մի ժամանակ թարգմանված է եղել նաև վրացերեն, այդ մասին տե՛ս **А. Цагарели**, Сведения о памятниках грузинской письменности, т. 1, в. 3, Спб., 1894, стр. 265):

Սկզբնաղբյուրների տեղեկություններ պարունակող գրականությունը տե՛ս հետևյալ ուսումնասիրություններում և հոդվածներում. Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, հրատ. **Վահան Բաստամեանց**, Վաղ., 1880, յառաջաբանութիւն, էջ 82, ծանօթ. 55, **Մաղաքիա Օրմանեան**, Աթոռ Հայաստանեայց, Վաղ., 1886, էջ 85-89, **Արշակ Տէր-Միքելեան,** Հայաստանեայց առաքելական ուղղափառ սուրբ եկեղեցին և իւր սուրբ կարգը, Վաղ., 1897, էջ 178-190, 212-224, **Н. Марр, М. Тер-Мовсесян,** История перевода Библии на армянский язык գրքի գրախոսականը.- ТР, V, 1903, стр. 34-36, նույնի գրախոսականը՝ Аннинский, История армянской церкви գրքի.- ЗВО, т. XV, в. 4, 1904, стр. 0143, հոդվածների մի ամբողջ շարք

է քահանային[3]*, իսկ Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»-ի*

Կոստանդնուպոլսի «Լոյս» ամսագրում, 1905 թ., ՀԱ, 1906, էջ 223, Ա, 1908, էջ 867-888, **Мариэтта Шагинян**, Что такое «вардапет».- газ. «Кавк. Слово», 1915 г., № 196 և այլն:

[3] Որ հայերեն «վարդապետ» բառը վրացերենում համապատասխանում է «մոծողվարի»-ին, ապացուցվում է նաև վրաց գրականության մի քանի հին հուշարձաններով: Օրինակ, այն հիշատակված է, նախ՝ **Արսեն կաթողիկոսի**, հայտնի երկի վերնագրում "ოქმული წმიდისა მამისა ჩუენისა არსენისი მოძღურისა, მცხეთელ კათოლიკოზისა,რომელი იყო სანაზებთაგან სამცხისათა საფარით,განყოფისა-თჳს ქართლისა და სომხითისა" «Ասված սուրբ հայր մերոյ Արսեն **վարդապետի**, Մցխեթցի կաթողիկոսի, որը եղել է պաշտպաններից բաժանումն Վրաց ի Հայոց». ლეონ მელიქსეთ – ბეგი, ქართული ვერსია სჰაკ პართელის წინასწარმეტყველებისა,ტფ. უნ. მოამბე,II,ტფ.,1922-1923,გვ. 205. **(Լևոն Մելիքսեթ-Բեկ**, Սահակ Պարթևի կանխագուշակության վրացական վարկածը, «Թիֆ. համալս. բանբեր», II, 1922-1923, էջ 205): Նույնի գրախոսությունը Կոռնելի Կեկելիձեի «Վրաց գրականության պատմություն» գրքի մասին, հ. I, «Սահիստորիո մոամբե», 1924 թ., գիրք II, էջ 261-262), իսկ որ այս վերնագրում «մոծողվարի» տերմինը գործածված է հայերեն վարդապետի նշանակությամբ, բավական է հիշատակենք հայ գրականության մի հուշարձան, հատկապես Սահակ Կաթողիկոսի երկը, որտեղ Սահակը վարդապետ է կոչված այնպես, ինչպես Արսենը՝ մոծողվարի. Ասացեալ սրբոյ **վարդապետին** Սահակայ Հայոց կաթողիկոսի և մեծի թարգմանչի ընդդէմ երկաբնակաց նեստորականացն, (Գիրք թղթոց, Տփղ., 1901, էջ 413): Նման տերմին է պահպանվել նաև Երուսաղեմի «Կանոններ» վրացական տարբերակի վերնագրում (**Корнели Кекелидзе**, Иерусалимский Канонарь. Грузинская версия, Тфл., 1912, стр. 41, նաև հենց բնագրում՝ 52, 54, 55, 62): «Մոծողվարի» տերմինը, ճիշտ է, տվյալ դեպքում Կոռն. Կեկելիձեի կողմից ռուսերեն թարգմանվել է святитель, բայց Ն. Մառը նպատակահարմար է գտել այն ուղղել և թարգմանել որպես учитель, հայերեն վարդապետ նշանակությամբ (տե՛ս Ն. Մառի գրախոսությունը Կոռն. Կեկելիձեի վերոհիշյալ գրքի մասին.- ХВ, т. I, 1912, стр. 117, հմմտ. իր իսկ՝ Яфетические элементы в языках Армении, Х.- Изв. АН, 1918, стр. 317-318): Ամենից հաջողվածը Ռուի-Ուրբնիսի 1103 թվականի ժողովի հուշարձանի գրածի IX պարագրաֆն է, որտեղ ուղղակի ցույց է տրված, որ «մոծողվարի»-ն բոլորովին էլ սվյատիտել չի նշանակում, այլ՝ որոշակի որակավորում ունեցող կուսակրոն, ճիշտ այնպես, ինչպես հայոց վարդապետը, այսպես կոչված, աբեղայ (աբեղա)-ների միջև: პ. საბინინ, "საქართველოს სამოთხე" (Մ. Սաբինին, Վրաստանի դրախտը, Պոլ., 1882, էջ 525 = **Թ. Ժորդանիա**, ქრონიკები (ժամանակագրություններ, II, տը), ՍՊբ, 1882, էջ 525 = Թ. Ժորդանիա

վրացական տարբերակում՝ քարոզչին[4]*:*

Բ. Հյուսիսային կողմեր՝ *այսպես ենք թարգմանում մենք հայերեն հյուսիսային կողմանք, որտեղ հյուսիսային նշանակում է հյուսիս, իսկ կողմն (այստեղից էլ plur. կողմանք) այն տերմիններից է, որոնք երկիր, աշխարհ*[5] *են նշանակում, միայն այն տարբերությամբ, որ այն մասնավորապես նաև կողմ, ծայրամաս է նկատի առնվում: Հետևաբար, հյուսիսային կողմանք-ը* հյուսիսային կողմերն են, *իհարկե, Հայաստանում ապրողների տեսանկյունից:*

Ինքնին պարզ է, որ «Հյուսիսային կողմանց» հասկացությունը ժամանակի ընթացքում փոփոխական է եղել, և այն տարբեր ժամանակներում տարբեր իմաստ է արտահայտել: Օրինակ՝ Մովսես Խորենացու *(է. դ.՞) մոտ բոլորովին այլ է «Հյուսիսային երկրներ» հասկացությունը, երբ նա իր «Ողբում» (Հայոց պատմություն, գիրք Գ., գլուխ կը.) աղաղակում է. «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց* հիւսիսականաց *վհհագոյն»*[6]*, որտեղ հյուսիսային երկրներ են համարվում Արշակունյաց Հայաստանն ու հարևան երկրները, ինչպես երևում է՝ ի հակադրություն Փոքր և Մերձավոր Ասիայի այլ պետությունների: Այլ է նույն* Խորենացու *և Ուխտանեսի (ժ. դ.) կողմից հիշատակված «կողմանք հիւսիսային»-ը՝ կապված Գուգարաց աշխարհի հետ.* Խորենացու *խոսքերով. (ընդդէմ լերինն Կաւկասայ* կողմնակալ հիւսիսոյ *կարգէ [Վաղարշակ] զմեծ և զհզօր ազգն... Գուգարացւոց)*[7]*, իսկ ըստ* Ուխտանեսի՝ *(«բդէշխի մեծի Գուգարացւոց՝* կողմնակալ հիւսիսոյ *կարգեալ ի Վաղարշակայ Արշակունւոյ... արքայէ»)*[8]*,- որտեղ որպես* հյուսիսային կողմ *ցույց*

հայոց» (Ք. Ց., Թաղ., 483: Բրոս., 313), պատմիչը հիշատակում է որպես այլևայլ հասկացություններ պարունակող տերմիններ: Վերածննդի ժամանակաշրջանի գրականության մեջ «մոծղվարի»-ի հետ միաժամանակ հայերեն վարդապետ-ը գործածվում է հայերեն գռեհիկ արտահայտության վրացերեն տառադարձությամբ՝ «վարթապետի». (Համառոտ տեղեկություններ վրացի գրողների մասին «Ձվելի Սաքարթվելո» («Հին Վրաստան»), գիրք I, Տփղ., 1907, էջ 45-46: **L. Մելիքսեթ-Բէկ**, Հայերը վրաց հին գրականության մէջ.- «Գեղարուեստ» VII, Տփղ., 1922, էջ 45):

4 Կանոնագիրք Հայոց. Վրացական տարբերակ, կատարված Վախթանգ Ե.-ի հրամանով, հրատարակեց **Լևոն Մելիքսեթ-Բեկը** [Monumenta, Georgica, IV. Leges, № 2], Տփղ., 1927, գլուխ, 154, էջ 50 և այլուր:

5 Հմմտ. **И. Джавахов**, Государственный строй древней Грузии и древней Армении, т. [ТР XI], Спб., 1905, стр. 33-40, 91:

6 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատ. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան [ՊՒ, հ. Ա., գիրք Ա.], էջմ.-Տփղ., 1913, էջ 358:

7 Նույն տեղում 114. – հմմտ. Մարաբասի նույն տեղեկությունը. **V. Langlois**, Collection des historiens anciens et modernes de l' Arménie, t. I, Paris, 1867, pp. 49-50:

8 **Ուխտանէս եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց. [Բ.] Պատմութիւն բաժանման

է տրված Հայաստանի և Իբերիա-Հերեթի[9] *միջև ընկած հին Գուգարքի տարածքը՝ հայերեն՝ Գուգարք, հունարեն՝* Γωγαρηνή*: Մոտավորապես նման հասկացության են հանգել Հաղբատ-Սանահնի միաբանության և Գրիգոր Տղայի միջև ծավալված գրագրությամբ (ԺԲ. դ.)*[10]*, որտեղ որպես «հյուսիսային կողմեր» է ցույց տրված Հաղբատի և Սանահնի միջև ընկած շրջանը կամ, այսպես կոչված, Զորոգետի, zesp. Զորագետի (այժմյան Կամենկայի = Դեբեդչայի) հովիտը*[11]*: Սակայն այս բոլորի համեմատությամբ «Հյուսիսային կողմերը» բոլորովին այլ է ԺԸ. դարի համար, երբ այսպիսի termini technici-ով քողարկել են Կովկասյան լեռնաշղթայից հյուսիս ընկած երկրները, հատկապես Ռուսաստանը, որի պատճառով ռուսական կայսրության սահմաններում ընկած հայ թեմի առաջնորդը կոչվում էր. ([ի]* հիւսիսային կողմանս *եղեալ ազգիս Հայոց... առաջնորդ)*[12]*:*

Պարզվում է՝ ԺԱ-ԺԳ. դարերում Հայաստանի աշխարհագրության տեսանկյունից որպես «Հյուսիսային կողմեր», եթե հիմք ընդունենք Հաղբատ-Սանահնի միաբանության և Գրիգոր Տղայի գրագրությունը, պետք է հասկանանք Զորոգետի, իմա՛ Զորագետի (Կամենկա= Դեբեդչայ) կիրճը, Հաղբատ-Սանահնով հանդերձ, թեև, եթե ճշմարիտն ասենք, հարցն այսպես վճռելը բնավ ճիշտ չէր լինի, քանզի «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետներին»՝ Գրիգոր Տղային ուղղված թղթի վերնագրին կցված է հիշատակարան՝ ի դեմս Հաղբատ-Սանահնի, իսկ Գրիգոր Տղայի՝ նրանց տրված պատասխանում Հաղբատ-Սանահինցիները անվանված են «ձորոգետցիներ», և այս «ձորոգետցիները», իմա՛ «ձորագետցիները» Ներսես Լամբրոնացու պատասխանում միայն և միայն «սանահինցիներն» են

Վրաց ի Հայոց, Վաղ., 1871, էջ 34:

9 *Հմմտ.* კორნ. კეკელიძე, ქართველთა მოქცევის მთავარი ისტორიულ-ქრონოლოგიური საკითხები,- „მიმომხილველი“. საქართველოს საისტორიო და საეთნოგრაფიო საზოგადოების ორგანო), წ. I,ტფ.,1926,გვ.13-18 (**Կոռն. Կեկելիձե,** *Վրաց ոգրաֆիօ սաზოգադოების ორგანო*), წ. I,ტფ.,1926,გვ.13-18 (**Կոռն. Կեկելիձե,** *Վրաց ոգրաֆիօ սաზოգադოების ორგანო*), წ. I,ტფ.,1926,გვ.13-18 (**Կոռն. Կեկելիձե,** *Վրաց ոգրաֆիօ սաზოგად

նկատի առնված[13]*, դրա համար էլ առաջին փաստաթղթի (այսինքն՝ «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» թղթի)* հյուսիսային կողմանց *հասկացությունը համեմատաբար լայն առումով պետք է հասկանալ:*

Բավական է նշել, որ այս վերջին փաստաթղթի (թղթի) սկզբում հիշատակված են բոլոր այն վանքերը, որոնց ներկայացուցիչները, այսպես կոչված՝ «եպիսկոպոս որ յարևելս Հիւսիսոյ» ղեկավարությամբ մասնակցել են փաստաթուղթը կազմելու գործին, այն է՝ «Սանահին»՝ «մայրաքաղաքն Հաղբատայ[14]*», Հաղարծին, Խոռակերտ և Գետիկ)*[15]*:*

Գրիգոր Տղայից Գրիգոր Տուտեորդուն ուղղված առաջին հարցման մեջ հիշատակված է՝ «յաշխարհդ արևելից, և ի գաւառն Ռանայ[16] *և ի Գանձակ»*[17]*:*

Այսպիսով, «Հյուսիսային կողմեր» հասկացությունը համեմատաբար շատ ավելի լայն է, քան Հաղբատ-Սանահնի շրջանինը կամ ամբողջ Զորագետի, իմա՛ Զորագետի կիրճինը, որովհետև այս «կողմերում» են ցույց տրված Զորագետի կիրճի կայաններից (Հաղբատ-Սանահնից և Խորակերտից) բացի, Հաղարծինը և Գետիկը, որոնք ընկած են և այժմ էլ գոյություն ունեն հիշյալ կիրճի արևելքում, այսպես կոչված, Կայան-Զորափոր-Հաթերքի շրջանում (հետագայում՝ Ղազախ-Շամշադին), եթե, իհարկե, այս «կողմերի» տակ նկատի չունենանք ամբողջ հյուսիս-արևելքը՝ հանդերձ Ռանը (Առան) և Գանձակը:

Դրանից բացի, չպետք է մոռանանք, որ Հաղբատ-Սանահինը Ասողիկի (Ստեփանոս Տարոնացու), Վարդանի *նաև* Սամուել Անեցու *մեկնաբանը ցույց է տվել Սեաւորդեաց = (Սաւորդեաց) = (Սևոր-*

[13] Տարօրինակ է **Ալ. Պալճյանի** կողմից Հիւսիսային կողմանց հայ վարդապետների բաժանումը՝ «Զորագետացիք, Սանահնեցիք, Հաղբատացիք, Անեցիք և այլն» (**Աղեքսանդր Պալճեան**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս և միութեան նոցա ընդ Հռոմէական եկեղեցւոյ. Կլն., Վն., 1878, էջ 76). կարծես Զորոգետցիները, իմա՛ Զորագետցիները նույն Սանահին-Հաղբատցիները կամ, մասնավորապես, Սանահինցիները չեն եղել:

[14] Հմմտ. «ի մայրաքաղաքիս Եղեգիս», որը **Գարեգին Հովսեփյանը** թարգմանում է «В монастыре (букв. метрополии) Ег'егисе» (**Гарегин Овсепян**, Потомство Тарсаич'а Орбеляна и Мина-хат'уны,- ХВ, II, 1913, стр. 229):

[15] Թուղթ ընդհ., 427 = **Տաշեան**, Ցուցակ, 950:

[16] Հրատարակության մեջ. ի գաւառ նռանայ (sic):

[17] **Արշակ Տէր-Միքելեան,** Միջին դարերի կաթուղիկոսների ձգտումներն եկեղեցական խաղաղութեան համար, Վաղ., 1893, էջ 44:

դեաց) կողմում. սա շատ հետաքրքիր տեղեկություն է, որ կարիք ունի հատուկ բացատրության[18]*:*

Այսպես թե այնպես, պարզ է, որ որպես «Հյուսիսային կողմեր» պետք է նկատի առնվի, այսպես կոչված, ամբողջ «Հյուսիսային Հայաստանը» կամ «Հարավային Վրաստանը», այսինքն՝ երբեմնի Գուգարք-Գոգարենեն կամ, այսպես կոչված, Ներքին Քարթլին Հերեթի հարավային մասով հանդերձ, որոնք ԺՀ. դարում Բորչալուի (Սոմխիթի = Լոռի-Տաշիրի) և Ղազախ-Շամշադին անունով են հայտնի եղել:

Այդուհանդերձ «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետներ» անվան տակ մենք պետք է նկատի ունենանք ԺԱ-ԺԳ. դարերում գիտագրական ասպարեզում հռչակված գործիչներին, որոնց ինքնությունը պարզելը արժանի է հատուկ ուսումնասիրության:

[18] Այս մասին տե՛ս ստորև, ծնթ. 43:

ԳԼՈՒԽ Գ.

«ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՑ» ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԺԱ. ԴԱՐԸ

«Հյուսիսային կողմերը» հայ գրականության անվանակարգության (նոմենկլատուրայի) համաձայն այն տարածքն է, որ դարեր շարունակ վեճի առարկա է եղել Հայաստանի և Վրաստանի միջև, և որը վրացիները սովորաբար կոչել են «Ներքին Քարթլի» (այսինքն՝ տարբերակելու համար «Միջին Քարթլիից», կենտրոնական Քարթլիից և «Վերին Քարթլիից» կամ Սամցխեից)[1]: Դա այն երկրամասն է, որտեղ վրացական և հայկական պետական-հասարակական, քաղաքական-տնտեսական, մշակութային-ազգային և եկեղեցական-դավանաբանական զարգացումները հյուսվել են միմյանց այնպես, ինչպես ուրիշ ոչ մի տեղ:

Այս երկրամասը հնագույն ժամանակներում, հատկապես Ք. ծ. ա. առաջին և հետագա դարերում, հույները և հայերը անվանել են Γωγαρηνή = *«Գուգարք», ինչն ինքնըստինքյան հասկանալի է, վրացերեն հնարավոր է՝ փոխարինվել է Գուգարեթ-ով (թեև այս ձևով՝ վրացերեն -եթ ածանցով, վրացական սկզբնաղբյուրներում չի պահպանվել)[2]: Իսկ որոշակի ժամանակաշրջանում՝ Ժ-ԺԱ. դարերում, նաև հետագայում, այս մարզը իր մի մասով, հայ պատմագրության մեջ, հատկապես* Ուխտանեսի[3], Ասողիկի[4] *և կեղծ* Շա-

[1] Պրոֆ. **Կոռն. Կեկելիձեն** (Վրաց դարձի հիմնական պատմա-ժամանակագրական հարցերը, էջ 13-15), սրան «էթնոգրաֆիական» *Քարթլի* է անվանում: Հմմտ. Հին *Քարթլիի* մասին հակառակ կարծիքը տե՛ս. **Սարգիս Կակաբաձե,** Վրաց պետականության սկզբնավորման հարցերը «Սաիստորիո մոամբե», 1924, № 1, էջ 26-27, 33, 34, 55 (სარგის კაკაბაძე, ქართული სახელმწიფოებრიობის გენეზისის საკითხები,- "საისტორიო მოამბე, 1924 წ., № 1, გვ. 26-27, 33, 34, 55):

[2] Այս ձևը սովորաբար օգտագործում է պրոֆ. **Իվ. Ջավախիշվիլին** (Վրաստանի սահմանները պատմականորեն և ժամանակակից տեսանկյունով քննարկված, Տփղ., 1919, էջ 16 և հջրդ. (ჯავახიშვილი ივ.,საქართველოს საზღვრები ისტორიულად და თანამედროვე თვალსაზრისით განხილული, ტფ., გვ. 16 et pass.).

[3] **Ուխտանես**, 34:

[4] **Ասողիկ**, 256, 279:

պուի Բագրատունու[5] *երկերում կա՛մ «Տաչիր և Վրացդաչտ», կա՛մ «Վրացդաչտ» անուններով է հայտնի: Իսկ մասնավորապես հիշատակված* Ասողիկի *Պատմությամբ*[6], Սամուէլ Անեցու *ժամանակագրությունների մեկնաբանական երկերով*[7] և Վարդանի *Պատմությամբ*[8] և *Աշխարհագրությամբ*[9], *Հաղբատ-Սանահինը պարունակող շրջանը «Սեաւորդաց» // «Սևորդեաց» // «Սաւորդաց» կողմ է հայտարարված*[10], *թեև նույն* Վարդանը *մեկ այլ տեղ ասում է, որ «Տաչրացւոց գաւառն Բամբակի ձորն է», նմանապես՝ «Տաչիր՝ Լոռի է»*[11]: *Այդ նույն շրջանը վրացիների կողմից «Սոմխեթի», «Սոմխիթի» է կոչվել, որը* Վարդանը *մատնացույց է անում հետևյալ բառերով. «գաւառն Տաչրաց... զոր Վիրք զՍոմխէթ կոչեն»*[12]:

Այն պարագան, որ նույն գավառը հայերը Վրացդաչտ են կոչում[13], *իսկ վրացիները՝ «Սոմխեթի» // «Սոմխիթի», որը մե՛րթ Տաչի-*

[5] Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, ի լոյս ածիւ † **Գ. Տէր-Մկրտչեան** և **Մեսրոպ եպիսկոպոս** [«Բնագիրներ և Հետազօտութիւններ», գ. Ա.], էջմ., 1921, էջ 65, հմմտ. **Ս. Կանայեան**, Պատմութիւն աստուածընկալ Ս. Նշանիւ Ս. Աղբերկու և Շապուհ Բագրատունի,- «Բանբեր էջմիածնի Գիտական Ինստիտուտի», գ. Ա-Բ., էջմ., 1921-1922, էջ 138:

[6] **Ասողիկ**, 281:

[7] **Սամուէլ Անեցի**, էջ 100, ծնթ. 9:

[8] **Վարդան**, 90:

[9] **M. Saint-Martin**, Mռmoires historigues et gռographigues de l'Armռnie, II, 424.

[10] Այս անվանումը հայ մատենագրությունից դուրս հայտնի է **Ալ-Մասուդի** և **Ալ-Սթահրի** աշխարհագրական գրքերում՝ **Siyavardiya** անվամբ, Բալածորով և Իբն-ալ Ֆաքիհ Շիրազացիով Savardiya, իսկ **Կոնստանդին Ծիրանածինի** մոտ Σεβορτιών (հունարեն կիհով Savardiya, իսկ **Կոնստանդին Ծիրանածինի** մոտ Σεβορτιών, sic): Առայժմ նրա իմաստն անորոշ է, ենթատեքստում աղավաղված է Σερβοτιών, sic): Առայժմ նրա իմաստն անորոշ է, ենթատեքստում աղավաղված է Σερβοτιών, sic), Հմմտ. **H. Hubschmann**, Die altarmenischen Ortsnamen, Strassburg 1904, S. 240], A. տե՛ս **H. Hubschmann**, Die altarmenischen Ortsnamen, Strassburg 1904, S. 240], A. տե՛ս **Н. Марр**, Термин «скиф».- «Яфетический Сборник» I, Пгр., 1922, стр. 94-97.
1. **Н. Марр**, Термин «скиф».- «Яфетический Сборник» I, Пгр., 1922, стр. 94-97.

[11] **Saint-Martin**, նշ. աշխ., նույն տեղում:

[12] **Վարդան**, նույն տեղում: Այս առումով բոլորովին անհասկանալի է պրոֆ. **Ակ. Շանիձեի** Հաէմետի բնագրերը և նրանց նշանակությունը վրաց լեզվի պատմության համար, «Տփղ. համալս. բանբեր» III, 1923, էջ 361, ծան. 2 (ჰაემეტი მუსიანის համար, «Տփղ. համալս. բանբեր» III, 1923, էջ 361, ծան. 2 (ჰაემეტი მუსიანის համար, «Տփղ. համալս. բանբեր» III, 1923, էջ 361, ծան. 2 (ჰაემეტი მუსიანის ტექსტები და მათი მნიშვნელობა ქართული ენის ისტორიისათვის,- "Ტფ. უნ. Ტექსტები და მათი მნიშვნელობა ქართული ენის ისტორიისათვის,- "Ტფ. უნ. Ტექსტები და მათი მნიშვნელობა ქართული ენის ისტორიისათვის,- "Ტფ. უნ. მოამბე", III, 1923, გვ. 361, შენ. 2) կարծիքը, իբր՝ «Սոմխիթի»-ն, որպես աշխարհագրական եզր, *մինչև տասնիններորդ դարը Քցիխշրջակայքի նշանակություն է ունեցել* (ընդգծումը մերն է՝ Լ. Մ.-Բ)», իսկ «Սոմեխի»-ն որպես տոհմական տերմին... միայն հետագայում կլինի... տարածված հարավում բնակվող հարևան օտար ժողովրդի վրա, որը ինքն իրեն «հայ» է կոչում, և որը այլոց կողմից արմեններ անվամբ է հայտնի»:

[13] Մենք մեկ անգամ արդեն առիթ ենք ունեցել առաջադրել Վրացդաչտ տեղանվան ստուգաբանությունը, որը, հնարավոր է ներկայացնում է nomen gentile-(«վրացի») բառի բառացի թարգմանությունը՝ քարթվելի–քարթ[թ]-վելի-քարթվելթա վելի, *իմա* վերթա վելի = վրացիների դաշտ→ Վրացդաշտ (տե՛ս մեր զեկուցման թեզիսները. «Ներքին Քարթլիի ընդհանուր նշանակություն ունեցող աշխարհագրական անվա-

րի, մե՛րթ Վրաց դաշտի հոմանիշ էր գործածվում, կամ էլ երկուսի համար միասին, գիտական գրականութեան մեջ առաջ են քաշվել սրամիտ հիպոթեզներ նախ ակադ. Մ. Բրոսեի (ինչը կրկնեց Լեոն), իսկ հետո նաև Իվ. Ջավախիշվիլու կողմից:

Մ. Բրոսեն *գրում էր. „Le nom de Somkheth a aussi en georgien une double signification: c'est d'abord la veritable Armenie, dont les quinze provinces sont decrites par Moise de Khorene, dans sa Geographie; c'est encore la partie meridionale de la Georgie, qui a frequemment passe de l'une a l'autre nation, et qui, compose des provinces de Taik et de Gougark, sappelait Georgie. Vrastan, quand elle appartenait aux rois ou princes d'Armenie: Somketh, quand les monarques georgiens y dominaient. Cette province, depuis David-de-Reparateur, na cesse de faire partie du royaume ge'orgien"*[14].

Նույն միտքը պրոֆ. Իվ. Ջավախիշվիլու աշխատութեան մեջ տրված է փոքր-ինչ այլ կերպ. «Պատմական աշխարհագրութեան մեջ այս անկյունը, իբրև հայոց քաղաքական գերիշխանութեան հիշատակ, «Սոմխիթի» տերմինը մնաց: Այս անունը հնում բոլորովին անծանոթ էր, և հանդիպում ենք սկսած Ժ. դարից միայն: «Սոմխիթի» կոչվում էին սոսկ Բոլնիս-Դմանիսի հովիտները և Լոռու դաշտը, և հատկանշական է այն, որ իբրև աշխարհագրական տերմին միայն վրացերեն և վրաց մատենագրութեան մեջ է գործածվել: Հայերը և հայ պատմագրութիւնը այս երկիրը «Սոմխիթ» չեն կոչել: Ընդհակառակը՝ նրանք Լոռի-Տաշիրի դաշտավայրը «Վրացդաշտ» են կոչել... Այս տերմինի մեջ ստույգ ապացուցող փաստաթուղթ է պահպանված, որ, չնայած իրենց քաղաքական գերիշխանութեանը, հայերն էլ ինքնըստինքյան երկիրը համարել են վրացիներին պատկան»[15]:

Կամ՝

«Վրացական և հայկական սկզբնաղբյուրներով հաստատվում է, որ «Սոմխիթին» որպես արևելյան Վրաստանի հարավային կողմանց թեմի անուն, հնագույն ժամանակ անծանոթ էր և չէր գործածվում: Այդ ժամանակ այս թեմը Գուգարեթի <պետք է լինի՝ Գուգարք. Լ. Մ.- Բ.> էր կոչվում և միայն հետագայում սրա փոխարեն վրաց պատմական գրականութեան իբրև տերմին մտնում է «Սոմխիթի»-ն՝ որպես ժամանակի եզրույթ, երբ հայոց թագավորության այս անկյունը բռնագրավվեց:

«Մինչդեռ հայերը այս թեմը՝ հնում <Գուգարք>, «Վրացդաշտ» են կոչել: Այսպիսով՝ պատմական իրականութիւնը պարզում է, որ «Հայ» և Հայաստան վրացերեն նախ իսկական արիականներ՝ «արմեններ» և նրանց տարածքն է նշանակել, իսկ հետագայում դա գործածվել է նաև այն թեմի անունով, որտեղ ժամանակի ընթացքում երևան է եկել վրացիների և հայերի խառն բնակչութիւն»[16]:

* * *

Մենք, իհարկե, այստեղ կանգ չենք առնի այս մարզի պատմության մանրամասն քննարկման վրա, որը շատ թե քիչ բավարար չափով ներկայացված է առկա գիտահանրամատչելի գրականութեան մեջ[17]*: Մեր նպատակի համար բավական է նշել միայն, որ այս անկյունը եթե ոչ նախապատմական ժամանակաշրջանում, ապա, ամեն դեպքում, Ք. ծ. ա. առաջին դարերում, ինչպես պարզվում է* Ստրա-

նացուցակի համար՝ հնում», «Վրաց լեզվաբանական ընկերության տարեգիրք», I-II, 1923-1924, էջ 357 (”ქვემო ქართლის ზოგადი მნიშვნელობის მქონე გეოგრაფიული ნომენკლატურისათვის ძველად” (“ქართული საენათმეცნიერო საზოგადოების წელიწადეული”, I-II, 1923-1924, გვ.357):

[14] **M. Brosset,** Histoire de la Georgie, Introduction, SPb., 1858, p. X, հմմտ. **Լէօ,** Սահմանավէճեր. Լոռի-Ախալքալաք-Ղարաբաղ, Տփղ., 1919, էջ 17:

[15] **Իվ. Ջավախիշվիլի**, Վրաստանի սահմանները, etc., 21 (საქართველოს საზღვრები, etc., 21:),

[16] **Իվ. Ջավախիշվիլի,** Նորահայտ հնագույն վրացական ձեռագրեր, («Տփղ. համալս. բանբեր»), II, 1922-1923, էջ 358-359.- (ახლად აღმოჩენილი უძველესი ქართული ხელთნაწერები.- “ტფ. უნ. მოამბე”, II, 1922-1923, გვ. 358-359.- «Սոմխեթ» // «Սոմխիթի» տերմինի մասին, բացի վերոհիշյալ՝ **Մ. Բրոսեի, Իվ. Ջավախիշվիլու** և **Ակ. Շանիձեի** աշխատություններից, տե՛ս H. Марр, История термина “абхаз”.- Изв. АН, 1912, стр. 705, Из поездок в Сванию.- ХВ, II, 1913, стр. 22, Грузинская поэма «Витязь в барсовой шкуре» Шоты из Рустава etc..- Изв. АН, 1917, стр. 439-440 և շատ ուրիշներ, Л. М. Б., Несколько слов о термине «сомех».-ХВ, VI 1917, стр. 93-94, Առնոլդ Չիքոբավա, Խանմետի և Հաեմետի բնագրերի հայտնաբերման առիթով «Չվենի մեցնիერებ»), № 15-16, Տփղ., 1925, էջ 74-84 (არნოლდ ჩიქობავა, ხანმეტი და ჰაემეტი ტექსტების აღმოჩენისათვის,“ჩვენი მეცნიერება“, № 15-16, ტფ., 1925, გვ. 74-84: Ըստ **Սարգիս Կակաբաձեի՝** «այս մարզը վրացիների կողմից հետագայում է կոչվել Սոմխիթի, հիմնականում այն պատճառով, որ տեղի վրաց բնակչության մեջ տարածված է եղել հակաքաղկեդոնական կամ հայկական եկեղեցու վարդապետությունը»: Վրաստանի համառոտ պատմություն: “საქართველოს მოკლე სტორია: ახალი საუკუნეების ეპოქა, ტფ., 1920, გვ. 222 (Նոր դարերի էպոխա, Տփղ., 1920, էջ 222, ծնթ.*):

[17] Ուշադրության արժանի են հատկապես երկու մենագրություն, որոնք հրատարակվեցին Տփղիսում՝ մեկը մյուսից բոլորովին անկախ և մեկը մյուսին հակառակ՝ **Իվ. Ջավախիշվիլի,** եզրակացություններով, 1919 թվականին, մեկը՝ վրացերեն. **Լէօ**, Սահմանավէճեր, Վրաստանի սահմանները եւ, 16-35, իսկ մյուսը՝ հայերեն. **Լէօ**, Սահմանավէճեր, 1-93, այս մարզի 20-96, հմմտ. նաև **Ե. Լալայեան**, 303-329, **Ղևոնդ Մովսէսեան**, 1-93, այս մարզի մասին է նաև **Զ. Ճիճինաձեի** դիլետանտական բրոշյուրը՝ Հարավային Վրաստան (Հայաստան), Տփղ., 1901, էջ 1-31: [სამხრეთ საქართველო (სომხეთი), ტფ., 1901, გვ. I-31].

բոնի *թուղթիկ տեղեկութիւններից*[18], և *ինչը հաստատում է նաև այս երկրամասի տեղանունը*[19], *իբերցիներին (*իվերցիներին*) ազգակից կամ «վրացական» ցեղերի (ակադ. Ն. Մառի տերմինաբանութեամբ եթե առաջնորդվենք, «հաբեթական») տոհմական կայանն է եղել, և ինչպես* Ստրաբոնն *է վկայում, Ք. ծ. ա. Բ., նաև՝ Ա. դարերում ժամանակ առ ժամանակ արմեններն (հայերը) են գրաղեցրել*[20]*: Այս անկյունը Արշակունիների դինաստիայի տիրապետության դարաշրջանում առանձին բդեշխություն էր ներկայացնում*[21]*, որը հայոց արքա Արշակի (346-349) ժամանակ, ըստ* Փավստոս Բուզանդի *հաղորդման՝ անցավ Հայաստանին*[22]*, իսկ հետագայում, ինչպես վկայում է* Մովսես Խորենացու *Պատմութիւնը, առնչվել է Իբերիային, որի պատճառով Իբերիայի առաջին քրիստոնյա թագավոր Միրիանը բառացիորեն կոչվել է «առաջնորդ Վրաց և բդեաշխ Գուգարացւոց»*[23]*: Այս երկրամասը Իբերիայի հետ է կապված նաև ըստ Է. դարին վերագրվող անանուն հեղինակի «Աշխարհագրութեան», որտեղ հիշատակված է «Գուգարք» ձևով՝ [բռնագրավված] իբերցիների կողմից՝ «Գուգարք՝ որ առ Վրաւք»*[24]*: Ինչպես տեսնում ենք, այդ նույն Է. դարի սկզբին այս երկրամասը,* Ուխտանեսի *տեղեկութեամբ ներկայացնում էր Հայաստանի և Քարթլիի բուֆերը՝ «Վրացդաշտ, որ է միջասահման երկուց աշխարհացն Հայոց և Վրաց»*[25]*, յուրահատուկ քաղաքական-վարչական, նաև եկեղեցական կազմակերպութեամբ, Յուրաւ կենտրոնով, որտեղ բդեշխի և*

[18] Geographica, lib. XI, cap. 14, § 5:

[19] Տե՛ս մեր զեկուցման թեզիսները. «Ներքին Քարթլիի ընդհանուր նշանակություն ունեցող աշխարհագրական անվանակարգի համար՝ հնում», էջ 356-357: Հմմտ. **Н. Марр**, Талыши [Труды КИПС 4], Пгр., 1922, стр. 4, **Կոռն. Կեկելիձե,** Վրաց դարձի հիմնական պատմաժամանակագրական հարցերը, 13-18:

[20] Տե՛ս ծնթ. 51:

[21] Marquart Josef, Ērānšahr, nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Berlin, 1901, S.S. 95, 165 եւն:

[22] **Փաւստոսի Բիւզանդացւոյ** Պատմութիւն Հայոց, ի լոյս ետած Ք. Պ[ատկանեան], ՍՊբ., 1893, էջ 135-136 = հրատ. **Գ. Գալստեանի**, Տփղ., 1913, էջ 242; հմմտ. Ս. Կակաբաձե, Վրաց պետականության սկզբնավորման հարցերը, 49: **Կոռն. Կեկելիձե.** Վրացիների դարձի հիմնական պատմաժամանակագրական հարցերը, 15:

[23] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, հրատ. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, 262:

[24] **A. Soukry,** Geographie de Moïse de Corène, Venise, 1880, p. 29 (ֆրանս. թարգմ., 40):

[25] **Ուխտանէս**, 34: Այսպիսի միտք Ուխտանեսից շատ ավելի առաջ բերված է «Գիրք թղթոց»-ում (Գիրք Թղթոց, Տփղ., 1901, էջ 164, 166, 172, 194 ևլն.), որտեղ Յուրտավը ներկայացված է որպես միջնորդ՝ «միջնորդութիւն ունէր երկուց աշխարհաց»:

քահանայապետի ռեզիդենցիան էր[26]*, և ինչպես «Գիրք թղթոցից» է երևում, եղել է ժամանակի գիտական-գրական պատշաճ կենտրոն:*

Մենք չենք կարող չանդրադառնալ հույժ կարևոր մի երևույթի ևս, որ «Հյուսիսային կողմերը» գործունեության ասպարեզ կամ հայրենիք է շատ հայ գիտնականների ու գրողների համար, որոնց անուննները հնուց ի վեր հռչակված են հայ գրականության պատմության մեջ: Այստեղ է հրավիրվել հայոց այբուբենի բարեփոխող Մաշթոցը[27]*, հետագայում հայտնի որպես Մեսրոպ կամ Մեսրոպ-Մաշթոց, ինչպես* Կորյունն *է ասում. «Իշխանին Տաշրացւոց՝ առն պատուականի և աստուածասիրի, որ անուանեալ կոչէր Աշուշայ»*[28]*: Այստեղ է ուսում առել նաև Ե. դարի հայտնի պատմագիր Ղազար Փարպեցին, որն իր «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» գրվածքում ուղղակի ասում է. «...առ բդեշխն, ...յորում դրան և զմեզ ուսուցանէին»*[29]*: Ծագումով այստեղից էր նաև Ը. դարի նշանավոր իմաստասեր, Մանազկերտի 726 թվականի ժողովի կազմակերպիչ և ղեկավար, հայ հակաքաղկեդոնականության ջատագով Յովհան Օձնեցին*[30]*, ում մասին նրա կենսագրականում ասված է. «Էր ի գաւառէն Տաշրաց, որ արդ կոչի Լաւհռի*[31]*:*

[26] Առաջին անգամ Յուրտավը հիշատակվում է «Շուշանիկի վկայաբանության» վրացերեն բնագրում (Իակոբ Խուցեսի, «Նահատակութիւն սրբոյն Շուշանկայ», **Ս. Գորգաձեի** հրատ., Քութայիս, 1917, էջ 2 = **Մ. Սաբինին**, Վրաստանի դրախտը, ՍՊբ., 1882, էջ 182): Նրա գտնվելու վայրի մասին տե՛ս **Л. Меликсет-Беков**, К вопросу о местоположении Цуртава.- «Изв. Кавк. Отд. Рус. Геогр. О-ва», т. XXIV, стр. 341-345. *Նույնի՝* Гадженк-Гачиан.- ХВ, VI, 1917, стр. 94-95, **Ս. Կակաբաձե**, Վրաց պետականության առաջացման հարցերը, 74-76:

[27] Որպես «Մաստոց» է հայտնի վրաց Արսեն կաթողիկոսի երկում (**Թ. Ժորդանիա**, Ժամանակագրություններ, I, 325 (որտեղ սխալ է գրված՝ «Մաստոխ», sic!):

[28] **Կորիւն**, Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի [ՂՄ, 13] Տփղ., 1913, էջ 30.- Իր՝ Կորյունի մասին մի ժամանակ մտածում էին, թե նա ինչ-որ ժամանակ եպիսկոպոս է եղել Քարթլիի և Աղվանքի սահմաններում (այս մասին առկա գրականությունը մանրամասն տե՛ս **Նորայր Բիւզանդացի,** Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տփղ., 1900, էջ 385-386), բայց այժմ այս կարծիքն անուշադրության է մատնված (տե՛ս **նույն տեղում**, նաև **Թադէոս Ալդալբէկեան**, Բանասէրի օրագրից.- ՀԱ, 1926, էջ 387-390):

[29] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատ. **Գ. Տէր-Մկրտչեան** և **Ստ. Մալխասեան** [ՊՀ, հտ Ա., գ. Դ.], Տփղ., 1904. էջ 188. Հմմտ. **Գ. Խալաթեան**, Ղազար Փարպեցի և գործք նորին. Պատմական և գրական քննութիւն, Մոսկվա, 1883, էջ 3-9:

[30] Օձունը նախկին հայոց Ուզունլար գյուղն է՝ Սանահին կայարանի մերձակայքում: Այլ Օձունների մասին տե՛ս **Л. Меликсет-Беков,** Из материалов поездки на Цалку в 1924 г..- Изв. КИАИ, т. IV, стр. 132-133.

[31] **Յ. Կարինեանց**, Մայր Յուցակ, էջ 69, հմմտ. 63.- այս Հովհանի գերեզմանը այժմ էլ Արդվի գյուղի մոտ գտնվող, այսպես կոչված, «Յովհան Օձնեցու վանքում» են ցույց տալիս:

* * *

Թ. դարի Բ. կեսը այն ժամանակն էր, երբ ըստ «Քարթլիի մատյանի» «Հայերը և աբխազները պայքարում էին Քարթլիի դեմ»[32]*: «Թե ինչով վերջացավ այդ պայքարը,- ինչպես իրավացիորեն նշում է* Իվ. Ջավախիշվիլին,*- տեղեկություններ չենք գտնում ո՛չ հայ և ո՛չ էլ վրաց աղբյուրներում, բայց, ինչպես երևում է, հաղթել է Հայոց իշխանաց իշխան Աշոտը»*[33]*: Եվ որպես այս կարծիքի արդարացում* Իվ. Ջավախիշվիլին *վկայակոչում է ԺԱ. դարի հայ պատմիչ* Ասողիկի *տեղեկությունը Շիրակի (Անիի) Հայոց թագավորության հիմնադիր՝ իշխանաց իշխան (887 թվականին թագավոր հռչակված) Աշոտ Բագրատունու մասին, որ նա՝ Աշոտը «երեսնամեայ ժամանակօք իշխան և իշխանաց իշխան եղեալ Հայոց և Վրաց»*[34]*: Եթե նկատի առնենք նաև այն հանգամանքը, որ Մրենի տաճարի 992 թվականի*[35] *և Ալամնի տաճարի 1001 թվականի*[36] *արձանագրություններում*[37] *հիշատակված է Աշոտ Ողորմած Շահնշահի, այսինքն՝ արքայից արքայի դուստր Սոֆիան՝ Հայոց և Վրաց թագուհի, իսկ 1010 թվականի Անիի Մայր տաճարի արձանագրություններում Գագիկ արքան՝ որպես «Հայոց և Վրաց Շահնշահ», մեզ լիովին պարզ կդառնա քաղաքական այն սրբագրությունը (կոնյեկտուրան), որը հիշյալ Աշոտի և նրա որդի Սմբատի ժամանակ ստեղծվել էր «Հյուսիսային կողմերում»*[38]*:*

Ճիշտ այդ ժամանակ, երբ Շիրակի (Անիի) Բագրատունիները կրում էին իշխանաց իշխան «Հայոց և Վրաց», արքայի կամ արքայից արքայի տիտղոսը, «Հյուսիսային կողմերում» գլուխ են բարձրացնում տեղական իշխանավորները՝ «Կիւրիկեանք, որք էին

[32] **Ք. Ց.**, Թաղ., 224 = **Բրոսէ**, 192, հմմտ. **Իվ. Ջավախիշվիլի,** Վրաց ժողովրդի պատմություն (ქართველ ერის ისტორია), գ. I-II Տփղ., 1913-1914, էջ 380:

[33] **Իվ. Ջավախիշվիլի, նույն տեղում**:

[34] **Ասողիկ**, 158, հմմտ. **Իվ. Ջավախիշվիլի**, Վրաց ժողովրդի պատմություն, 380, *նույնի*, Վրաստանի սահմանները, 19-20:

[35] **Н. Эмин,** Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, Москва, 1881, стр. 73, **Ղ. Ալիշան,** 138, հմմտ. **Կ. Կոստանեանց**, 10:

[36] **Н. Эмин**, ц. с. 72, **Ալիշան,** 125, հմմտ. **Կ. Կոստանեանց** 26:

[37] **Շահխաթունեանց**, Բ., 353-354 (§ 594 <«որտեղ թվագրությունը սխալ է ցույց տրված՝ 1010-ի փոխարեն գրված է 1001»>), **Н. Эмин,** նշ. աշխ., II, **Ղ. Ալիշան,** 67-68, հմմտ. **Կ. Կոստանեանց**, 13:

[38] Տվյալ դեպքում նկատի ունենք „მატიანე ქართლისა“-ի («Մատիանե Քարթլիսա») Սմբատ Տ[ի]եզերակալի (sic) 904 թվականին Ուփլիսցիխե կատարած արշավանքի մասին տեղեկությունը (Ք. Ց., Թաղ., 225-226 = Բրոսե, 195, հմմտ. **Իվ. Ջավախիշվիլի**, Վրաց ժողովրդի պատմություն, I–II, 383):

Բագրատունիք»[39]*: Այս ազգակցությունն ուղղակի ճյուղն է Շի-*

[39] Ըստ **Ստեփանոս Օրբելյանի (Օրբէլեան,** 379, հմմտ. նախկին եկեղեցական թանգարանի ձեռ. Ɜ՟ր 864, էջ 6ա): **Վարդանը** (**Վարդան**, 145) նրանց միայն «Կիւրիկեան» է կոչել: **Կիրակոս Գանձակեցին՝** (**Կիրակոս**, 86-87) - «յազգէ Բագրատունեաց»: Նոր գիտական և հանրամատչելի գրականության մեջ Լոռի-Տաշիրի Կյուրիկյանների հարստությունը որպես Շիրակի (Անիի) Բագրատունիների ճյուղ է ներկայացված, և նրա հիմնադիրը համարվում «Ողորմած» կոչված Աշոտի որդի Գուրգենը (980-989): Եվ Կիւրիկեանք, Կորիկեանք, անվանումը Գուրգենի հետ են կապում, որովհետև այս Գուրգենը կամ Գորգենը, ինչպես **Մ. Չամչյանն** է նշում (Պատմութիւն Հայոց, Բ., Վնտ., 1785, էջ 913)-, «Գորգէն այլ ի բերանս հասարակաց Կորիկէ [կամ Կիւրիկէ, կամ Կիւրակէ»: Գուցե սա այսպես էլ եղել է, բայց մի բան խորհելու տեղիք է տալիս. «Կիվրիկե» = «Կորիկե» = «Կվիրիկե»-ն հնարավոր չէ, որ «Գուրգեն»-ի աղավաղված ձևը ներկայացնի, որովհետև այն շատ էր տարածված Լոռի–Տաշիրի իշխանական տան շրջանակներից դուրս, հատկապես Հերեթ-Կախեթի Կյուրիկյանների դինաստիաներում, որտեղ մենք վերն այդ նույն անվանը հանդիպեցինք, ինչը Ժ-ԺԱ. դարերում տարածված էր Լոռի-Տաշիրի դինաստիայում, օրինակ՝ Գագիկ, Դավիթ, Կվիրիկե, այս պարագան ուղղակի մատնանշում է բոլոր վերոհիշյալ դինաստիաների միջև գոյություն ունեցող ազգակցական և խնամական կապերը (որոշակի ազգակցություններում որոշակի անվանումների օգտագործման մասին տե՛ս **Պ. Ինգորոզվա**, Rusthweliana, I, Տփղ., 1926, էջ 147, 196-197): Քանի որ «Կիւրիկէ» «Կորիկէ» անվանումները «շատ տարածված էին Հերեթ-Կախեթ-Տաշիրի իշխանական ազգատոհմերում, իսկ կախերի իշխանը դեռ մինչև «արքայի» կոչում ստանալը «Քորիկոզ» էր կոչվում (Ք.Ց., II, **Դ. Չուբինովի** հրատ. ՍՊբ., 1854, էջ 96-100), որը, ի միջի այլոց, հաստատում է նաև Ժ. դարի արաբ պատմաբան-աշխարհագետ **ալ-Մասուդին**, երբ հիշատակում է «Սանարի» թագավորության «Կուրիակուս» կոչված թագավորին (**Н. Караулов**, Сведения арабских географов IX-X веков по Р. Хр. о Кавказе. Арране и Адербейджане.- СМК XXXVIII, 1908, стр. 57), հնարավոր է, որ նշված «Կյուրիկե»//«Կորիկե» հատուկ անունը և «Քորիկոզ»//«Կուրիկուս» կոչումները ինչ-որ կապ ունենան իրար հետ: Ամեն դեպքում, հայտնի է, որ կախերի կառավարիչը դեռևս 787 թվականին «կոչվում էր կախերի կառավարիչ կամ քորիկոզ» Դրա համար «Քորիկոզ»-ի ընթերցումը որպես «Քորեպիսկոպոս», ինչպես բերված է «Մատիանե Քարթլիսայ»-ում (Մարիամ թագուհու տարբերակում [Ք.Ց., Թաղ., 220, 222, 224, 225, 228, 231, 242 և.ն.] աղավաղված է «քարափի կովզ»-ով, և որը, ի դեպ, հիմք է ընդունել **Իվ. Ջավախիշվիլին** (Վրաց ժողովրդի պատմություն, I–II, 385, 386, 420 և.ն.): Թյուրիմացության հետևանք պետք է լինի հին ձեռագրերում օգտագործված տրությունը: Այս երևույթին առաջինը ուշադրություն է դարձրել **Սուլխան-Սաբա Օրբելիանին,** ქართული ლექსიკონი (Վրացերեն բառարան, Տփղ., 1884, էջ 329) «**Քոր-եպիսկոպոսը** անգիտակ գրողը «Քարթլիս ցխովրեբա»-ում խեղաթյուրել է: «Քորիկոզ»-ը այլաբանորեն քոր-եպիսկոպոս է կարծել: Քոր-եպիսկոպոս ծուխ չունեցող եպիսկոպոսին են ասում հունարենում, իսկ քորիկոզ արքային փոխարինողն է կոչվում», նմանապես՝ *«քորիկոզ*-ը՝ արքային փոխարինողը, թույլ չի տա իրեն արքա անվանել, մինչդեռ թարգմանում են՝ հովիվ»: Այս տերմինը ճիշտ է հասկացել նաև **Վախուշտին** (Վրաստանի աշխարհագրություն, I, Տփղ., 1885, էջ 123 et. pass.): **Ս. Կակաբաձեն** («Վրաց պետականության սկզբնավորման հարցեր», էջ 106-107) «մամասախլիսի» տերմինի համապատասխանը ընդունում է քորիկոզ-ը: «Քորիկոզ»-ը... տոհմատիրական հասարակարգի տերմին է... ոչ միայն *մամփալի* կամ *մամասախլիսի* նշանակության, այլև սոցիալական ծագման լիարժեք համարժեքն է»: Այս տերմինի մասին վերոհիշյալ գրականությունից բացի, տե՛ս **Դ. Բաքրաձեի** ծանոթագրությունը Վախուշտիի Պատմության հրատա-

րակի (Անիի) Բագրատունիների և, սրա հետ միասին, խնամիական կապեր ունեին «խնամութեամբ խառնեալ» ինչպես Քարթլիի և Հերեթ-Կախեթիի Բագրատունիների, այնպես էլ Հայաստանի ու Քարթլիի որոշ իշխանական ազգատոհմերի հետ, օրինակ՝ Օրբելյանների հետ[40], իսկ Շիրակի (Անիի) թագավորության անկումից հետո «Կյուրիկյանները» յուրացնում են «արքայի» տիտղոսը, ինչպես նաև Բյուզանդական դռան «կյուրոպալատ» Κουροπαλάτης կոչումը, որով, օրինակ, Հայանի էր Կյուրիկյաններից մեկը, Է. Պախոմովի կարծիքով, Կորիկե Բ.[41], որ մի ժամանակ նույնիսկ սեփական դրամ է հատել[42]:

Կյուրիկյանները, իրոք, «արքայի» տիտղոս և դրամ հատելու իրավունք են ձեռք բերել և իրենց գործունեությամբ ցանկացել են եթե ոչ ամբողջ Հայաստանում, ապա գոնե Լոռի-Տաշիրում «անկախ» թագավորի դեր կատարել: Այս ամենը երևում է նաև նրանից, որ նրանք օժանդակել են Հյուսիսային Հայաստանի համար մասնավոր (պարտիկուլյար) կաթողիկոսության հիմնադրմանը և, իրոք, ինչպես Մատթեոս Ուռհայեցին[43], Կիրակոս Գանձակեցին[44] և Մխիթար Այրիվանեցին[45] են պատմում, նրանք 1081 (var. 1076) թվին Աղվանից կաթողիկոսի ներկայությամբ Հաղբատում Անիի կաթողիկոս են հայտարարում Բարսեղ (Բասիլ) Անեցուն:

րակությունում (նշ. աշխ., էջ 123-124, ծնթ. 2): Բոլոր այս տեղեկությունները, կարծում եմ, բավական են, որ առաջադրենք այն հիպոթեզը, ըստ որի՝ Լոռի-Տաշիրի դինաստիան, հնարավոր է՝ կոչվել է Կիւրիկեանք, resp. Կորիկեանք, բայց ոչ թե «Գուրգեն» անունից է ծագել, այլ «քորիկոզ»-ից, որը հայտնի է եղել Գուրգենից շատ ավելի վաղ և որից պետք է որ առաջացած լիներ նախ՝ դինաստիայի անունը Կորիկե իմա՝ Կիւրիկե, հետո նաև դինաստիաների անվանումը՝ Կորիկեանք, իմա՝ Կիւրիկեանք, ինչպես, օրինակ, Երկայնաբազուկների դինաստիայում հայտնի *շահնշահ* կոչումը, վրաց. *շանշե*-ն ծագում են պարսկական sahansah-ից, ինչը նշանակում է՝ **արքայից արքա**:

[40] **Օրբէլեան,** 379, հմմտ. **M. Brosset.**- «Me´langes Asiatgues», III, 1852, pp. 296-297, 339, **Ղ. Մովսէսեան**, 67-69, **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Քոբերը և նրա հայերեն ու վրացերեն արձանագրությունները.- «Տփղ. համալս. բանբեր», VII, 1927, էջ 67, 68, ծնթ.1:

[41] **Е. Пахомов,** О монете Корикэ Куропалата.- Изв. КИАИ. т. III, Тфл., 1925, стр. 43-45.

[42] Այս մասին տե՛ս **M. Brosset.** Monographie des monnaies arméniennes, SPB. 1839; **Ե. Լալայան**, 312-313, **Ղ. Մովսէսեան,** 88-93: **Е. Пахомов**, op. cit., 46-48, Л. М.-Б., По поводу статьи **Е. Пахомова** «О монете Корикэ Куропалата».- Исв. КИАИ, III, 46-48.

[43] **Մատթէոս Ուռհայեցի**, 221:

[44] **Կիրակոս,** 104-105:

[45] **Մխիթար**, 60:

Կյուրիկյանների դինաստիայի հիմնադիր համարվում է Աշոտ Ողորմածի որդի Գուրգենը[46], որն իր եղբայր Սմբատ Բ.-ի (977-989) Անիի գահին եղած ժամանակ «թագավորեց» Տաշիրում: Սմբատից հետո ժառանգեցին Անիում՝ Սմբատի եղբայր Գագիկ Ա. (989-1020), իսկ Տաշիրում՝ Գուրգենի որդի Դավիթ Ա. (989-1048), որն իր եղբոր՝ Սմբատի[47] հետ միասին Սամշվիլդեն աթոռանիստ քաղաք դարձրեց[48] և միաժամանակ կառուցում էր Լոռեն[49]: Այս Դավիթը ձեռնարկեց Անիից վերացնել Տաշիրի կախվածությունը, բայց պարտություն կրեց Գագիկից, և հետևանքը եղավ այն, որ Դավիթը վտարվեց իր «թագավորությունից» և այդ պատճառով նրան «Անհողին» կոչեցին: Բայց երբ Դավիթը հնազանդվեց Գագիկին, նրան վերադարձրին իր տիրույթը, որն այդուհետ կառավարում էր որպես Անիի թագավորի վասալ: Բոլորովին այլ կերպ դասավորվեց Տաշիրցի թագավորի ճակատագիրը, երբ Անին վտանգվում էր մե՛րթ վրացիների, մե՛րթ բյուզանդացիների կողմից, և որը, ի վերջո, կործանվեց 1046 թվին: Սկսած այդ ժամանակից՝ հիշյալ Դավիթն իրեն կատարելապես ազատ զգաց, և ինքը Կորիկեի որդիների հետ միասին ոչ միայն անկախ «թագավորում էր» իր տիրույթում, այլև ինքն իրեն միայնակ տեր ու տնօրեն էր համարում ամբողջ Հյուսիսային Հայաստանում: Թեև նման կացությունը երկար չի տևել և Կորիկեի ժառանգները, հալածվելով սելջուկների ու վրացիների կողմից, ստիպված եղան ապաստան գտնել Հերեթում (Ռանում)», ապա հաստատվել Մածնաբերդում[50]:

---

[46] Այս Գուրգենի գերեզմանը Սանահնում են ցույց տալիս (**Ե. Լալայան**, 387): Մյուս Կյուրիկյաններինը՝ Հաղբատում (**Յովհ. Ղրիմեցի**, 33-35, **Լալայան**, 400-401):

[47] Սա կարծես այն Սմբատն է, որ թաղված է հին Սամշվիլդեի հայկական եկեղեցում, որտեղ կանգնեցված է հսկայական խաչքար՝ հայկական արձանագրություններով (հմմտ. **M. Brosset**.- «Mélanges Asiatiques», t. II, 1856 p. 97-98, **Զալալեանց**, Բ., 79): Արձանագրությունը, որտեղ հիշատակված է **Սմբատ իշխանաց իշխան, Մ.** **Բրոսեն** թվագրում է Նճ. (=400+100=500) = 1051, իսկ **Ս. Զալալյանցը**՝ ՆՂԳ. (=493) = 1044 թվականով: Սակայն հարցը դեռևս պարզաբանման կարիք է զգում:

[48] **Ասողիկ,** 256. «Դաւիթ հանդերձ եղբարբն իւրով Սմբատաւ ունի զկողմանս Տաշրաց և զվրացդաշտի»:

[49] **Վարդան**, 106.

[50] Կյուրիկյանների մասին տեղեկությունները ցրված են **Ասողիկի, Մատթեոս Ուռհայեցու, Սամուել Անեցու, Վարդանի, Կիրակոս Գանձակեցու, Մխիթար Այրիվանեցու և Ստեփանոս Օրբելյանի** պատմություններում: Տե՛ս գրակ՝. **M. Brosset,** Monographie des monnaies arméniennes, նույնի՝ Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie, pp. 277-279; **Ղ. Ալիշան,** Շիրակ, 96-97, *նույնի՝* Հայապատում, Վնտ., 1901, Բ., 392, **Ե. Լալայան**, 312-318, **Ղ. Մովսեսյան**, նշ. աշխ., **Е. Пахомов,** նշ. աշխ., **Լ. Մելիքսեթ-Բեկ, Քոբեր.** նկ., 60-73, հմմտ. նաև՝ **Վախուշտի**, Վրաստանի աշխ., **Լ. Մելիքսեթ-Բեկ, Քոբեր.** նկ., 60-73, հմմտ. նաև՝ **Վախուշտի**, Վրաստանի

Ընդհանրապես Կյուրիկյանների տիրապետությունը Է. Պախոմովը *բնութագրում է հետևյալ կերպ.* «Получив престол вслед за падением Ани в 1046 г., а может быть и одновременно с этим событием, он (Корике II) волею судеб явился почти единственным самостятельным носителем царского титула среди армянских Багратидов, если не считать слабого, находившегося тогда под византийской опекой, последного карсского царька Гагика, правившего до 1064 г. Вполне естественно, что в армянских кругах того времени непременно должна была возникнуть партия, считавшая Корикэ II главою Армении и быть может надеявшаяся, что таширские Багратиды повторят в истории страны роль своих анийских родичей. Что такая точка зрения была не чужда самому Корикэ II, меня убеждают его решительные действия по отношению к престолу армянского или албанского католикоса[51], в избрание которого он вмешивается совершенно так же, как это делали до него анийские цари. Не вина Корикэ, что силы его крохотного царства не выдержали натиска турок, грузин и византийцев: важно лишь знать, что был момент, когда лорийский царь играл роль главы Армении и притом в то время, когда Ани и другие соседние с его владениями области находились в руках византийцев»[52].

Կյուրիկյանների, մասնավորապես, «Կորիկե Կյուրողապատ»-ի կողմից կտրված մեկ դրամի թվագրման հարցի շուրջ խոսելիս Է. Պախոմովը *ասում է.* «Монета Корикэ бита в царствование лорийского царя Корике II, в половине XI в., и представляет собою, вероятно, результат надежд на блестяшее будущее, явившихся благодаря неожиданному переходу незначительной удельной династии на временную роль главы осиротевшей Армении»[53].

պատմություն, I, էջ 324-325, **Պ. Ինգորոզվա,** Rusthveliana, I, 190-198 (Կախեթիի և Հերեթի Բագրատունիների ճյուղը):

[51] Ծանոթագրության մեջ. Киракос, Мхитар, под 530 арм. эры 1081 г., **Է. Պախոմովը** մոռացության է տվել **Մատթեոս Ուռհայեցուն և Վարդանին:**

[52] **Е. Пахомов**, նշ. աշխ., 44-45.

[53] Նույն տեղում, 45.

ԳԼՈՒԽ Դ.

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՑ» ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԺԳ. ԴԱՐԸ. բ) ԺԱ-ԺԳ. ԴԱՐԵՐՈՒՄ

Կյուրիկյանների գահանիստ քաղաքն սկզբում եղել է Սամշվիլդեն[1]*, որը հայ բագրատունիները գրավել են Թ. դարի երկրորդ կեսին, բայց դրանից հետո, երբ Բագրատ Դ. Աբխազաց և Վրաց արքան, մոտավորապես 1065 թ., «Մատեանե Քարթլիսա»-ի տեղեկությամբ (որը, ի դեպ, հայ պատմիչներ Սամուելի և Վարդանի կողմից նույնպես հաստատագրված է) «Հայոց արքա Կյուրիկեին և նրա եղբայր Սմբատին» Ք/վ/ուեչի հովտում բռնել տվեց, նա «գրավեց Սամշվիլդեն և իրեն ենթարկեց հայերին»*[2]*: «Այսպիսով,- եզրակացնում է Իվ. Ջավախիշվիլին,- «վերացավ նաև «Սոմխիթի»-ի անկախությունը, և նրա թագավորները հարկատու դարձան Վրաստանին»*[3]*:*

Սամշվիլդեից վտարվելուց հետո Կյուրիկեի որդիները՝ Աբաս և Դավիթ արքաները (1089-1145), բնակություն են հաստատում Ջոդոգեսի հովտում, այն է՝ Լոռում, որտեղից՝ «նեղեալ ի վրաց», ըստ Վարդանի՝ դիմում են Առան-Հերեթի տերերին, որոնցից ստանում են մի բերդ՝ Մածնաբերդը, և այնտեղ բնակվում են կարիքի մեջ[4]*:*

Եվ դրանից հետո եթե Կյուրիկյանները հիշվում են Լոռի-Տաշիրի սահմաններում, ապա միայն և միայն անվանապես՝ ԺԲ. դարի

[1] Սամշվիլդեի մասին տե՛ս **M. Brosset.**- «Melanges Asiatiques», t. II. pp. 92-103, **С. Мажников**, Памятники древности города Самшвильде.- СМК XIII, 1892 отд. I, стр. 3-13, **Е. Такайшвили**, Археологические экскурсии, разыскания и заметики, в, II, Тфл., 1904, стр. 40-46:

[2] **Ք. Ց., Թաղ.**, 270 = **Բրոսէ**, 229, հմմտ. **Իվ. Ջավախիշվիլի,** Վրաց ժողովրդի պատմություն, I-II, էջ 449, *նույնի՝* Վրաստանի սահմանները, 22 («საქართველოს საზღვრები, 22»), հմմտ. **Սամուէլ**, 112, **Վարդան**, 101, Համառոտ պատմութիւն վրաց, Վնտ., 1884, էջ 113:

[3] **Իվ. Ջավախիշվիլի**, Վրաստանի սահմանները, 22 (հմմտ. **Ղ. Մովսեսեան**, 50-52):

[4] **Վարդան**, 106:

երկրորդ կեսի Քոբերի[5], Այորլի[6] և Հաղբատ-Սանահնի[7] որոշ արձանագրություններում, այն էլ որպես Կյուրիկյանների այս կամ այն թագավորի կա՛մ դուստր, կա՛մ ամուսին, կա՛մ թոռ[8]:

Դեպքի մասին հիշատակում է նաև Կիրակոսը, այն տարբերությամբ միայն, որ Դավիթը և Աբասը Առանի տերերի մոտ չեն գնում, այլ՝ ուղղակի «Պարսկաստան». «Իսկ Կիւրիկէ Բագրատունին, որ ՚ի Լօռէ քաղաքի, զամենայն ժամանակս իւր կացեալ ընդդէմ վրաց, ի՚ հաստատութեան պահէր զՀայրենիս իւր. և յետ մահուան նորա, որդիք իւր դաւեալք ի վրաց, ելեալք ի՚ տանէ հայրենաց, գնացին ի պարսիկս, Դավիթ և Աբաս անուն, և առնուն ի նոցանէ ի ժառանգութիւն զՏաւուշ և զՄածնաբերդ և զայլ տեղիս»[9]:

Բայց որքան էլ տարբերություն լինի Վարդանի և Կիրակոսի տեղեկությունների միջև, մի բան լիովին պարզ է. Կյուրիկյաններըը Առան-Հերեթի սահմաններում իրենց գոյությունը վասալական իշխանության կարգով պահպանել են մինչև ԺԳ. դարը, և նրանց բնակավայրը եղել է Մածնաբերդը[10]:

Նշված իրադարձությունների մասին համառոտ պատմում է Մխիթարը և դրանք թվագրում 1111-1221 թվականներով. «Որդիք նորա ելեալք ՚ի տանէ հայրենաց»[11]:

Կյուրիկյանների պարտությունը հետևանք էր Վրաստանի հզորացման՝ սկսած Դավիթ Շինարարի ժամանակից[12]:

Ինչպես հայտնի է, այն տարիներին, երբ դեռևս Թիֆլիսը վերջ-

---

5 1153 թվականի (**Լ. Մելիքսեթ-Բեկ**, Քոբեր. և այլն, էջ 64):

6 1188 թվականի (**նույն տեղում**, էջ 67, ծնթ. 3):

7 Հաղբատի [1185 թ.] (**Երզնկեան**, 21 = **Կոստանեանց**, 36, **Ջալալեանց Ա.**, 75 = **Երզնկեան**, 26 = **Կոստանեանց**, 37), Սանահնի, մոտավորապես 1185 թ. (**Ջալալեանց, Ա.**, 17, 18 = **Կոստանեանց**, 40-41), Սանահնի կամրջի, անթվակիր [**И. Орбели**], Надпись Санаинского моста.- ХВ, т. IV, 191-192, հմմտ. **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Քոբեր, էջ 72-73):

8 Կիուրիկյաններից մեկը՝ Ռուսուդանը՝ Իվանե Օրբելու ամուսինը, հիշատակվում է նաև Բեթանիայի 1196 թվի գլխատառ արձանագրությունում (**M. Brosset.**- «Melanges Asiatiques», t. III. pp. 296-297, 339, **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Քոբեր, էջ 67-68 և ծնթ. I էջ 68):

9 **Կիրակոս**, 145:

10 Հմմտ. *նույն տեղում*, 299:

11 **Մխիթար**, 61:

12 Հայաստանի և հայերի կացության մասին՝ Վրաստանի հովանու ներքո, մասնակիորեն տե՛ս **Հակոբ Մանանդյան**, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքերի շրջանում, Երևան, 1922, էջ 48-83 (Սելջուկյան աշխարհակ[ալ]ության անկումը և Հայաստանի վերականգնման ջանքերը Վրաստանի գերիշխանության տակ):

նականապես միացած չէր Վրաստանին, Դավիթ Շինարարը նպատակադրվեց Թիֆլիսից հարավ ընկած երկիրը գրավել, որովհետև «վրացիները,- եթե կրկնենք պրոֆ. Իվ. Ջավախիշվիլուն,- Ներքին Քարթլիի հարավային մասի, այսպես կոչված, Սոմխիթիի բացառիկ նշանակությունը Վրաստանի պաշտպանության համար լավ էին հասկանում և դրան տալիս էին կարևոր նշանակություն»[13]: Բայց որպեսզի «Թիֆլիսը վերցնելուց հետո «Սոմխիթը» Վրաստանի զեկավարության աչքում իր բացառիկ նշանակությունը չկորցներ, սա,- նույն գիտնականի կարծիքով,- պարզաբանում է այն հանգամանքը, որ «Սոմխիթիի Լոռե բերդը» Վրաստանի զորքերի գլխավոր հրամանատարի և ռազմական նախարարի՝ ամիրսպասալարի աթոռանիստը կամ ռեզիդենցիան էր համարվում: Այս ամենը արժանահավատ էր այնքանով, որ այստեղից Վրաստանը լավագույնս կարելի էր պաշտպանել հարավից եկող թշնամուց, և այստեղ բնակվող ռազմական նախարարը ավելի աչալուրջ կարող էր լինել պետության այս բացառիկ կարևոր սահմանների նկատմամբ»[14]:

Դավիթ Շինարարի կողմից Լոռի-Տաշիրի կամ «Սոմխիթիի» գրավումը վավերագրված է ինչպես վրաց, այնպես էլ հայ մատենագրության մեջ, վերջինս՝ Վարդանի և Ստեփանոս Օրբելյանի պատմություններում:

Անիի գրավումից հետո, որտեղ թողնվել էր Աբուլեթ Օրբելին, իր Իվանե որդու հետ,- ասում է Վարդանը,- «ընդարձակեալ Դաւիթ զսահմանս Վրաց, զառեալ զՈւխթիս, (զՈւխթիս պետք է լինի՝ զՈւղթիս)[15] և զսահմանս իւր, և զԳագ, և զՏերունականն, և զՏաշյուշ և զԿայեան և զԿայծոն, և զԼօռէ և զՏաշիր և զՄահկանաբերդ և զբոլոր իշխանութիւնն Հայոց Կիւրիկէի և Աբասայ»[16]:

Բայց Ստեփանոս Օրբելյանը, պատմելով Իվանե Օրբելու կողմից 572=1123 թվականին «Տավուշի, Գագի, Տերունականի, Լոռու և Անիի գրավման վերաբերյալ, նշում է, որ «Դրա համար էլ թագավորի կողմից չատ սիրվեց ու հարգվեց: Ի հավելումն իրենց տիրույթների՝ թագավորի կողմից նրանց տրվեց Լոռեն՝ իր գավառով, Ագարակը[17]՝ որպես ապարանքի տեղ, նաև Շամշվիլդեն, որ իրենց

---

13 **Իվ. Ջավախիշվիլի**, Վրաստանի սահմանները, 22:

14 *Նույն տեղում*, 22-23:

15 Հմմտ. Տփխիս-Տփղիս (Թբիլիսի):

16 **Վարդան**, 119, հմմտ. **Իվ. Ջավախիշվիլի**, Վրաց ժողովրդի պատմություն, I-II, 526:

17 Ագարակը գտնվում է Լոռու մոտակայքում: Տե՛ս **[А. Ерицов]**, Монастырь Ахтала.-

սեփականութիւնն էր, վերստին տրվեց՝ գավառով հանդերձ»[18]*:*

Հայաստանի գրավման ժամանակ Դավիթ Շինարարը, ինչպես հայտնի է, մեծ հովանավորութիւն ցուցաբերեց հայերի հանդեպ: Այդ մասին, ի միջի այլոց, պատմում են Մատթեոս Ուռհայեցին[19] *և Վարդանը*[20]*: Այդպիսի հովանավորութիւն Դավիթը ցուցաբերել է նաև «Հյուսիսային կողմանց» նկատմամբ, մասնավորապես այնպիսի օջախների, ինչպիսիք են Հաղբատն ու Սանահինը: Սա երևում է Հաղբատի գլխավոր եկեղեցու արևմտյան մուտքի դռան փորագրութիւնից, կատարված 1123-1125 թվականներին*[21]*: «Միապետ Դավիթ արքան՝ որդին Գիորգիի, որդին Բագրատի..., որը գրավեց երկրներ, «եղև խնամալուղ Հաղբատայ և Սանահնի...», Հաղբատը փրկեց խավարից ու ավերումից»*[22]*:*

Ճիշտ այդ ժամանակ՝ Դավիթ Շինարարի և նրա որդի Դեմետրե Ա.-ի տիրակալութեան տարիներին, մեծապես ծավալվեց Օրբելինների շինարարական գործունեութիւնը Լոռի-Տաշիրում, որի հետքն այսօր էլ երևում է, այսպես կոչված, «Հնէվանք»-ի, այսինքն՝ հույների վանքի *այունագլխի բոլորգիր արձանագրութեան մեջ, որտեղ հիշատակված է տաճարի վերանորոգողը՝ «Սովբատ [որդի Իվանեի] ամիրսպասալարը»*[23]*, այսինքն՝ Սմբատը՝ որդին մեծն Իվանե Օրբելու և հայրը Գիորգի Գ.-ի ժամանակակցի՝ Իվանե Օրբելու: Այս Սմբատը՝ որպես Լոռի-Տաշիրի տիրակալ, հայտնի է դարձել իր հոր՝ Իվանեի մահից հետո, որը* Ստեփանոս Օրբելյանը *թվագրում է 577=1128*

«Кавказская Старина», № 1 (1872), стр 21-22: Սխալ կարծիք այս Ագարակի մասին Ախթալայի հետ կապված տե՛ս **Ախուշտիի** ինքնակենսագրականում (Description, 142 = **Մ. Ջանաշվիլու** հրատ., 43), նույնպես **П. Иоселиани**, Путевые заметки от Тифлиса до Ахталы, Тфл., 1850, стр. 23:

18 **Օրբէլեան**, 379, **Ստեփանոս Օրբելյանի** Պատմության 66-րդ գլխի վրացական տարբերակում, որը պատրաստել ենք տպագրության, այս մեջբերումը տրված է հետևյալ կերպ. «Մեծապես սիրվեց և հարգվեց [Իվանեն] թագավորի կողմից և իր կալվածքից բացի, թագավորից ստացավ Լոռին՝ իր շրջակայքով, իբրև ապարանք, թեկուզ պալատ, ինչպես նաև Սամշվիլդեն, որը նրանց կալվածքն էր, վերստին տրվեց նրանց՝ հովիտներով հանդերձ» (տե՛ս նախկին եկեղեցական թանգարանի ձեռ. Ֆմր 864, էջ 6ա):

19 **Մատթէոս Ուռհայեցի**, 356:

20 **Վարդան**, 120:

21 Արձանագրությունը վնասված է, ուստի ՇՀ.-57 կարելի է վերականգնել ՇՀԲ.-ՇՀԴ. 572-574, որը կտա 1123-1125:

22 **Յովհ. Ղրիմեցի,** 4 = **Երզնկեան**, 32 = **Կոստանեանց,** 28, թվագրության մասին տե՛ս **Յովհ. Ղրիմեցի,** էջ 4, ծնթ. 4:

23 Մեր կողմից 1926 թ. ամռանը կազմակերպված արշավի նյութերից, որը պատրաստում ենք հրատարակության:

թվականով[1]*, հետևաբար՝ դա եղել է Դեմետրե Ա.-ի գահակալության տարին: Հենց նա էլ հիշատակվում է որպես* Սմբատ սպասալար՝ *որդին մեծն Իվանե սպասալարի և հայրը* Իվանե Օրբելյան *սպասալարի, Սանահնի (այժմ գոյություն չունեցող) 622=1173 թվականի արձանագրության մեջ*[2]*, որը փորագրվել է Գիորգի Գ.-ի գահակալության ժամանակ, ի հիշատակ Իվանե Օրբելու՝ «Սանահին Սուրբ Աստուածածնիս» աղոթքի գալու», ինչի համար էլ նրան են վերադարձվել բոլոր կալվածքները*[3]*:*

ԺԲ. դարի քսանական թվականներից մինչև ԺԳ. դարի երեսնական թվականները ներառյալ, մեկ դարի ընթացքում, անկասկած, աննշան թերութիւններն անտեսելով, այսպես կոչված «Հյուսիսային կողմը» Վրաստանի քաղաքական ենթակայության տակ էր գտնվում, և այս «կողմանց» կենտրոնը՝ Լոռե քաղաքը, մինչև 1177 թվականը համարվում էր Օրբելիների տիրույթ[4]*:*

Օրբելիների ապստամբությունը ճնշելուց և նրանց Վրաստանից վտարելուց հետո, Գիորգի Գ.ը, ըստ «Թագակիրների պատմության և գովասանության» երկի՝ «ամիրսպասալար դարձրեց տոհմական բարձր ծագումով և պատերազմների բովում կոփված «Սարգիս Երկայնաբազուկին», որին Թամարը նվիրեց Լոռու իշխանությունը [և] իշխանական կալվածքը Սոմխիթիի ներսում»[5]*, ինչը ըստ* Իվ.Ջա-

1 **Օրբէլեան,** 379 և հջրդ. հմմտ. նախկին եկեղեցական թանգարանի ձեռ. Ֆմր 864, էջ 6ա:

2 «Հնէվանքի» արձանագրության մեջ Սմբատ Օրբելին հիշատակվում է՝ «որդի Իվանե ամիրսպասալարի»: Եվ քանի որ Իվանե ամիրսպասալարը, Ստեփանոս Օրբելյանի տեղեկության համաձայն, վախճանվել է 1128 թվականին, հետևաբար, այս արձանագրությունը պետք է փորագրված լինի մինչև 1128 թվականը, քանի որ Սանահնի այս արձանագրության մեջ էլ Իվանեն և Սմբատը հիշատակվում են որպես սպասալարներ (ես, Օրբէլեան Իվանէ սպասալարս, թոռն մեծին Իվանէ սպասալարիս և որդի Սմբատայ սպասալարին), անպատճառ այլ եզրակացության պետք է հանգենք, որ ամիրսպասալարությունը Դավիթ Շինարարի օրոք գոյություն ուներ (հմմտ. **Իվ. Ջավախիշվիլի,** Վրաց իրավունքի պատմություն, Քութայիս, 1919, էջ 143-144, 145 (ქართული სამართლის ისტორია, ქუთაისი, 1919, გვ. 143-144, 145):

3 **Ջալալեանց, Ա.,** 30 = Կոստանեանց, 35. այս արձանագրությունը, որը Ջալալեանցից բացի ոչ ոք չի հիշատակում, մենք տեղում չգտանք, հավանական է, որ այն ոչնչացել է 1836 թվի վերականգնման ժամանակ: (տե՛ս **Յարութիւնեան,** Սանահին.-ԱՀ, Գ., 294): Այն կասկածելի է թվագրման առումով: Ջալալեանցը այն թվագրել է ՈՒԲ. 632 = 1183, որը սակայն բոլորովին անհնար է, որովհետև Օրբելիները 1177 թ. վտարվեցին Վրաստանից, պետք է կարծել, որ թվագրության տասնավորի մեջ սխալ է թույլ տրվել, ուստի այն պետք է ճշտվի՝ ՈՒԲ. 622 = 1173 թվերով:

4 Տե՛ս **Օրբէլեան**, 378-389, հմմտ. նախկին եկեղեցական թանգարանի ձեռ. Ֆմր 864. էջ 5բ-10ա:

5 **Ք. Ց.**, Թաղ., 409 = **Բրոսէ**, 282:

վախիշվիլու՝ «*պետք է եղած լիներ Թամարի թագավորության հենց առաջին տարիներին, մինչ առաջին ամուսնությունը, կամ 1184-1186 թթ.*»[6]:

Բայց, պարզվում է, Սարգիս երկայնաբազուկը երկար ժամանակ չէ ամիրսպասալար եղել, որովհետև նա, ինչպես նրա գերեզմանի խաչքարի (Սանահնում) արձանագրությունն է հուշում, վախճանվել է 1187 թ.[7]*: Ինչպես հայտնի է՝ 1187-1190/1191 թվականներին ամիրսպասալարը եղել է Գամրեկելի Թորելին*[8]*: Սակայն Գամրեկելու մահից հետո, նույն «Թագակիրների պատմություն և գովասանություն»-ի տեղեկությամբ, ամիրսպասալարի կոչումը շնորհվել է Զաքարիա Երկայնաբազուկին՝ որդուն Սարգիս ամիրսպասալարի՝ Հայաստանի թագավորի տեղապահի և Լոռու տիրակալի»*[9]*: Եվ սա,- Իվ. Ջավախիշվիլու կարծիքով,- 1191 թ. պետք է տեղի ունենցած լիներ, քանզի «Սանահնի վանքի 1191 թ. արձանագրության մեջ Զաքարիայի ամիրսպասալարությունն է հիշատակված»*[10]*:*

Դրանից հետո ամբողջ «Հյուսիսային կողմերը», Լոռե քաղաքի հետ միասին, վերջնականապես Երկայնաբազուկներին են անցնում[11]*, նրանց ձեռքին էր նաև Անիի թագավորությունը:*

Ամեն դեպքում պարզ երևում է, որ Հայաստանի և հատկապես, այսպես կոչված, «Հյուսիսային կողմանց» գրավումից հետո վրաց թագավորները իրենք իրենց հայ թագավորների ժառանգորդներ էին համարում և մինչև 1170 թվականը սեփականել էին «չահնշա-

[6] **Իվ. Ջավախիշվիլի**, Վրաց ժողովրդի պատմություն, I-II, 584:

[7] **Ջալալեանց, Ա.**, 28 = **Ի. Յարութիւնեան**, Սանահին.- ԱՀ, Գ., 304 = **Լալայեան**, 391 = **Կոստանեանց**, 36, հմմտ. **Իվ. Ջավախիշվիլի**, նշ. աշխ., 590:

[8] **Իվ. Ջավախիշվիլի**, նույն **տեղում**, 590-591 և հջրդ.:

[9] **Ք.Ց.**, Թաղ., 444 = **Բրոսէ**, 297:

[10] **Իվ. Ջավախիշվիլի**, նշ. աշխ., 597 (Սանահնի արձանագրություն. **Ջալալեանց**, 18 = **Յարութիւնեան**, նշ. աշխ., 283 = **Կոստանեանց**, 37):

[11] Երկայնաբազուկների պատմության մասին տե՛ս, **M. Brosset**, Additions et eclaircissements à l'Histore de la Georgie, Add. XVII, pp. 226-279 (Notics et details historiques sur la famille des Mkhargrdzekidze), **Ղ. Ալիշան**, Շիրակ, 175 (ծագումնաբանություն), **Լալայեան**, 319-329, **Ասլան Շահնազարեան**, Ջաքարեան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը, գաղթը դէպի Ջորագետ և նախորդները.- «Շողակաթ», Ա., էջմ., 1915, էջ 66-83 [հմմտ. **Ն. Մառի**] գրախոսություն հրատարակության մեջ: Отчет о состоянии и деятельности С. Петербургского Университета за 1908 год., Спб., 1909, отд. II, стр. 73-77: **Ստ. Լիսիցեանի** գրախոսությունը. Տեղեկագիր Թիֆլիզու Վանաց աւագ եկեղեցու կրօնա-պատմական թանգարանի մնայուն յանձնաժողովի 1908 ապրիլ 5, Տփղ., 1910, էջ 11-18, գրախոսությունը կցված է ռուսերեն հրատարակության առթիվ (էջ 19-24): «Վագրենավորը» **Սարգիս Կակաբաձեի** խմբագրությամբ, երկրորդ հրատարակություն, Տփղ., 1927 էջ XCIV (ծագումնաբանական աղյուսակ), և այլն:

հի» (արքայից արքայի) տիտղոսը, բացի դրանից, 1171-1177 թվականներին ընդունեցին նաև «Հայոց արքա» կոչումը[12]*: Հետաքրքիր է, որ Երկայնաբազուկները ևս համարվում էին «ամիրսպասալար Հայոց և Վրաց»: Օրինակ՝ Սարգսի գերեզմանաքարի 1187 թվի*[13] *արձանագրությունում և Զաքարիայի կողմից Ամբերդի գրավման հիշատակին փորագրված 1200 թվի արձանագրությունում, որը այժմ Ինաքլու եկեղեցու պատի մեջ է տեղադրված*[14]*:*

Սակայն Երկայնաբազուկներին միայն ամիրսպասալար չէ, որ կոչում էին, այլ հաճախ «թագաւոր», «շահնշահ» և [իբրև ժառանգ] «յազգէ Բագրատունեան»:

Օրինակ՝ Անիի Ղզլար (ղզղալ) եկեղեցու անթվակիր արձանագրության մեջ հիշատակված է Սահակդուխտ «ծնաւղ Զաքարիա և Իվանէ թագաւորաց Հայոց»[15]*: Գեղարդի 1215 թվականի արձանագրության մեջ ասված է, որ այս կաթողիկեն կառուցված է «ի ժամանակս թագաւորազնոյն Զաքարիայի և Իվանէի»*[16]*: Բայց նույն Գեղարդի չթվագրված երկրորդ արձանագրությունը Իվանե Աթաբագի կինը՝ Խոշակը, հիշատակված է որպես «Վրաց և Հայոց Աթաբագի կինը՝ Խոշակը, հիշատակված է որպես «Վրաց և Հայոց թագո[ւ]հի» և «վերայիշյալ տանս Վրաց և Հայոց և նովին (sic) թագո[ւ]հի»*[18]*: Հաղբատի 1209*[19]*, Անիի 1206*[20]*, Շիրակի տարբեր վայրերի 1212, 1210 և 1191 թվականների*[21] *և Բջնիի 1209 թվականի*[22] *արձանագրություններում Երկայնաբազուկները հիշատակված են*

[12] **С. Какабадзе**, Грамота груз. царя Георгия III по поводу восстания князей Орбели в 1177г.- Изв.КИАИ, т. IV, 1926, стр.124:

[13] Տե՛ս վերը, ծնթ. 30:

[14] Հրատարակված չէ. օգտվում ենք **Գարեգին Հովսեփյանի** կողմից անձամբ փոխանցված տեղեկությունից:

[15] **Ջալալեանց, Բ.**, 13 = **Ալիշան**, 58 = **Կոստանեանց**, 41:

[16] **Ստեփաննոս Մխիթարեանց**, Ստորագրութիւն հռչակաւոր մեծի ուխտին Այրիվանայ սրբոյն Գեղարդայ, Վաղ., 1873, էջ 27:

[17] **Նույն տեղում**, 16.

[18] **Ներսես Սարգիսեան**, Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայս, Վնտ., 1864, էջ 170 = **Ալիշան**, 10:

[19] **Ջալալեանց, Ա.**, 58 = **Երզնկեան**, 57:

[20] **H. Марр**, Камень с армянскою надписью из Ани в Азиатском Музее.- Изв. АН, 1910, стр. 1151:

[21] **Ն. Սարգիսեան**, նշ. աշխ., 111, 112, 149 = **Ալիշան**, 41, 117, 164:

[22] **Շահխաթունեանց**, Բ., 182 (§ 484):

որպես «չահնչահ»: Նմանապես Կիլիկիայի Լևոն Թագավորի թղթերում ևս Զաքարիան անվանվում է «մեծ սպարապետ և չահնչահ արևելեան կողմանցն»[23]: Իսկ Հաղարծնի թվագրություն չունեցող մի արձանագրության մեջ[24] երկայնաբազուկները հիշատակվում են որպես [ժառանգներ] «յազգէ Բագրատունեան»:

Բացի դրանից, երկայնաբազուկների իշխանությունը ամբողջ Հայաստանի վրա ընդհանրապես և մասնավորապես՝ այսպես կոչված, «Հյուսիսային կողմանց» վրա հիշատակվում է որպես «աշխարհակալութիւն», ինչպես օրինակ՝ Բջնիի 1209 թվականի[25] և Արեղեսի անթվակիր[26] արձանագրություններում է, «աշխարհակալ տէրութիւն», ինչպես Հաղարծնի 1206 թվի արձանագրության մեջ[27] է, կամ «պետական իշխանութիւն», ինչպես Բագնայրիի 1210 թվի արձանագրության մեջ է[28]:

Բոլոր այս տեղեկությունները, կապված վրաց և հայոց պատմական գրականության բազմաթիվ սուրյդ փաստերի հետ, հաստատում են, որ երկայնաբազուկները ԺԲ. դարի վերջին և ԺԳ. դարի սկզբին, այսինքն՝ մոտավորապես Թամար Թագուհու և նրա ժառանգորդների տիրակալության օրոք, փաստացի լիիրավ տերերն են եղել ընդհանրապես ամբողջ Հայաստանի և մասնավորապես, այսպես կոչված, «Հյուսիսային կողմանց»: Ամեն դեպքում, երկայնաբազուկներն իրենք իրենց համարում էին հայ Թագավորների ժառանգորդներ, թեև իրականում նրանք վրաց Թագավորների տեղապահներն էին Հայաստանում:

Թե ծագումով ովքեր են եղել երկայնաբազուկները, բավականին բարդ խնդիր է. պարզաբանման համար գիտական գրականության մեջ մի քանի փորձ կարելի է գտնել, այսպես, օրինակ, ըստ Ասլան Շահնազարյանի, նրանք Զորագետում վերաբնակված և հայացած քաղդէացիներ էին[29], ըստ Մաղաքիա Օրմանյանի՝ *Օրբելյան-*

[23] **Կիրակոս**, 159:

[24] **Շահխաթունեանց**, Բ., 370 (§ 604) = **Ջալալեանց**, Ա., 131 = **Բարխուդարեան**, 366 = **Մեսրոպ Տէր-Մովսիսեան**, Հայկական արձանագրություններ.- ԱՀ, Իե., 1917, էջ 67:

[25] **Շահխաթունեանց**, Բ., 182 (§ 484) = **Կոստանեանց**, 50:

[26] **Ջալալեանց**, Բ., 187:

[27] **Շահխաթունեանց**, Բ., 370 (§ 604) = **Ջալալեանց**, Ա., 132 = **Բարխուդարեան**, 366 = **Մ. Տէր-Մովսիսեան**, նշ. աշխ., 68:

[28] **Սարգիսեան**, նշ. աշխ., 180 = **Ալիշան**, 117:

[29] **Ա. Շահնազարեան**, նշ. աշխ.:

ներ[30], ըստ Կարապետ Տեր-Մկրտչյանի՝ *Բագրատուններ[31], իսկ ըստ Սարգիս Կակաբաձեի՝ վրացի «Թորելիներ»[32]: Սակայն պակաս հետաքրքիր չէ այն, որ երկայնաբազուկները որոշ հուշարձաններում, ինչպես արդեն նշել ենք, համարվում են «Բագրատունիներից սերած» և բարեկամական-խնամիական կապերի մեջ էին Լոռի-Տաշիրից վտարված Կյուրիկյանների դինաստիայի հետ (օրինակ, Սարգիս Զաքարի երկայնաբազուկի դուստրը՝ Վանենին, ամուսնացած էր Մածնաբերդի Կյուրիկյանների Աբաս Թագավորի[33] հետ):*

Որքանով է արդարացի ակադ. Մ. Բրոսեն, որ գրում է,- «regne de Thamar n'etait, pour ainsi dire, que celle des exploits des Mkhargrdzelidze, je reunirai ici tout ce que nous savons de cette famille»[34], սա պարզաբանելու համար մենք այստեղ կանգ չենք առնի: Բայց մի բան պարզ է, որ ինչպես Լեոն (Առաքել Բաբախանյան) է իրավացիորեն նշում, երկայնաբազուկներին բախտ վիճակվեց «կազմակերպել մի ուժեղ դաշնակցություն (ֆեդերացիա), որ խիտ ցանցով ծածկում է արևելյան Գուգարքը, Արցախը, Սյունիքը, Գեղարքունիքը, մինչև Արածի և Արայի լեռները»[35]: Եվ մասամբ հենց այս կապով, մասամբ

[30] **Օրմանեան**, Ազգապատում, էջ 1486-1487 (§ 1021), 1570 (§ 1080), 1650 (§ 1133), որտեղ Զաքարիա և Իվանե երկայնաբազուկները Օրբելյաններ են կոչվում և ոչ թե Երկայնաբազուկներ:

[31] **Կարապետ եպիսկոպոս**, Դօփեանք և Մելիք-Շահնազարեանք, 18-31:

[32] **Սարգիս Կակաբաձե**, Ով է եղել և երբ է ապրել Սարգիս Թմոգվեցին, Տփղ., 1913, **նույնի**՝ Հոդվածներ և նյութեր Վրաստանի պատմության համար, Գիրք 1, Տփղ., 1914, էջ 58-65, նույնի՝ Ընծեղավորը, երկրորդ հրատարակություն, էջ LXXXIX-XCIV, հմմտ. **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Հայերը վրաց հին գրականության մեջ.- «Գեղարուեստ», 7, Տփղ., 1921, էջ 40:

[33] **[И. Орбели]**, Надпись Санаинского моста,- ХВ, IV, 191-192. **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Քոբեր, 67, 72-73:

[34] **M. Brosset**, Additions, 266:

[35] **Լեո**, Սահմանավէճեր, 47. իր մեկ այլ աշխատության մեջ (Պատմութիւն Ղարաղի թեմական հոգևոր դպրոցի 1838-1913, Տփղ., 1915, էջ 44) հեղինակը, բաղի թեմական հոգևոր դպրոցի 1838-1913, Տփղ., 1915, էջ 44) հեղինակը, անդրադառնալով նույն թեմային, մեծ համակրանքով է հիշում այն «դաշնակցական միութիւնը», որը գոյություն ունի «Գուգարքի (յատկապես նրա այն մասի, որ Վրացիներն անուանում են Սօմխեթ) և Արցախի իշխանական տների մեջ, մի միութիւն, որի կապերը գլխաւորապես խնամիական են»: Իսկ «այս ազգակցական կապերի տեսակէտից մի տեսակ կենտրոնի դեր կատարում է Գուգարքի հին Չորափոր գաւառը, Աղստև (Աղստաֆա) գետի հովտում (այժմեան Դիլիջանի ծորը)»: Այս աշխատության մեկ այլ մասում **Լեոն**, խոսելով իշխանական տոհմերի միջև գոյություն ունեցող բարեկամական կապերի մասին, նշում է. «Ահա այս և ուրիշ այսպիսի ազգակցական կապերը ամրացնում են Լոռու, Խաչէնի և այլ գաւառների իշխանական դաշնակցութեան ցանցը, որի վրայ յենուած Զաքարէ սպասալարը իր եղբօր հետ լցրեց աշխարհը իր զարմանալի քաջագործութիւնների փառքով» (էջ 45): Բայց դա Հիւսիսային Հայաստանի իշխանական տների ֆեդե-

դեռևս նախորդ դարաշրջանում կյուրիկյանների և Անեցի Բագրատունիների միջև գոյություն ունեցող ազգակցությամբ[36] և նույն կյուրիկյանների ու արևելյան գավառների հայ իշխանների հետ հաստատված խնամիական կապերով պետք է բացատրել, որ, այսպես կոչված, «Հյուսիսային կողմանց» գիտագրական գործունեության մեջ, գանձակեցիներից ու անեցիներից հետո, առաջնակարգ տեղ են գրավում հենց խաչենցիները, որոնք նվիրվածությամբ ծառայում և իրենց ամբողջ կորովն ու եռանդն էին նվիրաբերում այս կողմերի փառապանծ օջախների ծաղկմանն ու հզորացմանը:



րացիան չէր միայն, այլ միաժամանակ և դաշնակցութիւն Վրաց ուժեղ թագավորութեան հետ (էջ 45-46): Այս հանգամանքը հեղինակը բացատրում է նրանով, որ «Երկու քրիստոնեայ ազգութիւնները, կարծես գիտակցել էին իրենց ճակատագիրը իսլամ աշխարհի մէջ և իրար թիկունք դարձած «միացած ուժերով իրենց իրաւունքներն էին պաշտպանում: Մի երևույթ, որ, դժբախտաբար չը կրկնուեց այնուհետև դարերի ընթացքում (էջ 46): Այդ միութիւնը տուեց Զաքարէին հնարաւորութիւն նուաճելու ամբողջ Արարատեան նահանգը, Անի մայրաքաղաքով միասին և այլ բազմաթիվ հայկական երկիրներ, ուր վաղուց մեռած էր հայ քաղաքական կեանքը: Կարծես վերածնւում էր հայկական անկախութիւնը, այս անգամ ավելի ընդարձակ չափերով, քան Բագրատունիների ժամանակ» (էջ 46):

[36] Խաչենցիների դերի վերաբերյալ Հաղբատ-Սանահնի պատմության մեջ տե՛ս **Լէօ,** Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, 49-50: **Լեոն** իրավացիորեն նշում է, որ «Լոռու երկու հռչակաւոր կրօնական կենտրոններում Հաղբատ և Սանահին, յաճախ են երևան եկել Խաչենցիք: Յայտնի է և Յովհաննէս եպիսկոպոս Խաչենցի, բայց աւելի յայտնին Գրիգոր Տուտէորդին էր, խաչենցի, հռչակած իր արիական պաշտպանութեամբ հայրենի եկեղեցական աւանդութիւնների, ընդդէմ ոչ միայն Կիլիկիայի հոգևորականութեան, որի գլուխն էր Ներսէս Լամբրոնացու պէս մի բազմահմուտ և տաղանդաւոր հոգևորական, այլև ընդդէմ նոյնիսկ այնպիսի մի իշխանաւորի, որպիսին էր Զաքարէ Սպասալարը: Հաղբատի և Սանահնի արձանագրութիւնները ցոյց են տալիս, որ Խաչէնի և Լոռու մէջ հաստատուած էին սերտ յարաբերութիւններ: Դրանք սահմանակից երկրներ էին, որոնց միացնողն էր Աղստափա գետի հովիտը: Շատ Խաչէնցիների համար գերեզմանատեղի են դարձել այդ երկու մեծահռչակ վանքերը: Խաչէնն ու Լոռին միացնում էին եւ յաճախակի տեղի ունեցող խնամիական կապերը» (էջ 50): Մխիթար Գոշի մասին խոսելիս **Լեոն** ասում է. «Խաչէնի իշխանների աջակցութեամբ էր որ այս վարդապետը կառուցեց Գետիկի վանքը Աղստափա գետի հովտում» (էջ 49), որը «դարձաւ Հայաստանի այն ժամանակուայ ամենայայտնի դպրոցներից մէկը» (*նույն տեղում*):

ԳԼՈՒԽ Ե.

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՑ» ԳԼԽԱՎՈՐ ԳԻՏԱԳՐԱԿԱՆ ՕՋԱԽՆԵՐԸ ԺԱ-ԺԳ. ԴԱՐԵՐՈՒՄ

Ինչպես երկրորդ գլխում տեսանք, «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետները»-ի կողմից Գրիգոր Տղային ուղղված թղթի սկզբում մեկ առ մեկ հիշատակված են բոլոր այն վանքերը, որոնց ներկայացուցիչները, այսպես կոչված «Հյուսիս-արևելքի եպիսկոպոսի» առաջնորդությամբ մասնակցել են այս թուղթը կազմելուն: Օրինակ՝ «Սանահինը», «Հաղբատի մետրոպոլիան», «Հաղարծինը», «Խորակերտը» և «Գետիկը», Հաղբատ-Սանահնի գաղափարական առաջնորդությամբ:

Սրանք էին գլխավոր գիտագրական կենտրոնները, որ հայտնի էին ԺԱ-ԺԳ. դարերում:

Սակայն սրանցից ամենահռչակավորները Հաղբատն ու Սանահինն էին:

Մենք արդեն գիտենք, որ վերոհիշյալ թղթում Հաղբատը հիշատակվում է որպես «մայրաքաղաք»[1]: Հովհաննես Սարկավագի «Սաղմոսագրքի» մի հին ձեռագրի հիշատակարանում այն ներկայացված է՝ «մայրաքաղաք մենաստան ի Հաղբատ»[2], իսկ Գրիգոր Տղայի թղթերում՝ «մայրավանք»[3]: Սանահինն էլ Գրիգոր Մագիստրոսի թղթերում[4] և Սանահնի 1061 թվականի մի արձանագրության[5] մեջ «մայրաքաղաք», իմա՛ <1061 թ. արձանագրության մեջ> «մայրաքաղաք» է կոչվում: Հետևաբար, Հաղբատը և Սանահինը հայ իրականության մեջ նույնպիսի տեղ են զբաղեցնում, ինչպիսին օրինակ՝ Շիոմղվիմեի, Դավիթ Գարեջիի կամ Սաֆարի լավրաները Վրաստանում:

[1] Թուղթ ընդհ., 427 = **Տաշեան**, 950:

[2] **Գար. Զ[արբհանալեան],** Հայկական հին դպրութեան պատմութիւն, Գ. տպ., Վնտ., 1897, էջ 614, ծնթ. 1:

[3] Նամականի, 5:

[4] **Կ. Կոստանեանց,** Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղէքսանդրապոլ 1910, էջ 138:

[5] **Ջալալեանց,** Ա., 28 = **Յովհ. Դրիմեցի**, 49 (առկա հրատարակություններում սխալմամբ մայրաքաղաք է գրված, պետք է լինի մայրքաղաք):

Երկու վանքերն էլ՝ Հաղբատը և Սանահինը, պատմականորեն այնպես են կապված իրար, որ խոսել մեկի մասին մյուսից անկախ՝ անհնար է: Ահա ինչու միանգամայն իրավացի է Սմբատ Տեր-Ավետիսյանը, *երբ նրանց մասին ասում է. «Առանց Հաղբատի հասկանալի չէ Սանահինը և առանց Սանահնի՝ Հաղբատը. այդ երկու վանքերը պատմութեան համար մի ամբողջութիւն են կազմում»[6]: Այս առումով այդ զույգ վանքի ճակատագիրը հիշեցնում է Վրաստանի Դավիթգարեջա-Նաթլիսմցեմելիի կամ Իղալթո-Ալավերդիի, կամ Սափարա-Զարմիի ճակատագիրը:*

Պատմական աղբյուրներում նույնպես երկու վանքերն էլ համարյա միշտ մեկը մյուսից անբաժան են հանդես բերված[7]:

Ասողիկը *(ԺԱ. դ.), խոսելով Աշոտ Բագրատունու (951-977) մասին, նշում է, որ «Յաւուրս սորա շինեցան կրօնաւորանոցք (=վանքեր), ճգնաւորականաց տեղիք Սեաւորդեաց[8] աշխարհին, հասարակեացք, միաբանականք, ըստ յառաջացեալ կանոնին սահմանադրութեան սրբոյն Բարսղի, որոնց երկոցունց տեղեացն անուանք Հաղբատ և Սանահին հանդէպ միմեանց, միակրօնք[9] ի տան Աստուծոյ՝ արանց Շ.ոց (500ոց)»[10]:*

Սամուել Անեցին *(ԺԲ. դ.) գրում է. «Ի ՆԺԶ. (967) թվին շինեցաւ Հաղբադ, եւ Սանահինն՝ Ժ. (10) ամաւ յառաջ քան զՀաղբադ շինեցաւ ի Խոսրովանուշ թագուհւոյն՝ ի կնոջէ Աշոտոյ Շահնշահի»[11], նույնպես՝ «ՇԾԴ. (1105) Խզըլն էառ զԼօռէ՝ եւ զուխտսն սուրբ զՀաղբատ եւ զՍանահինն այրեաց»[12]: Վարդանը (ԺԳ. դ.) իր «Պատմութեան» մեջ գրում է. «Խոսրովանուշ շինէ զփառազարդ սուրբ ուխտսն զՍանահին եւ զՀաղբատ»[13]: Իսկ «Աշխարհագրութեան» մեջ*

6 Սմբատ Տեր-Ավետիսյանի "Надписи Санаина" անտիպ աշխատության առաջաբանից:

7 Ի դեպ, սրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ գոյություն ունեցող գրականության մեջ նրանց նկարագրությանը նույնպես համարյա միշտ միասին ենք հանդիպում: Այդ պատճառով հին գրականության մեջ որոշ Սանահինցիներ, օրինակ՝ Անանիան և Գրիգոր Տուտեորդին, Հաղբատցի են անվանված: Գրիգոր Տուտեորդին նույնպես իր թղթերում, ուղղված Գրիգոր Տղային, մի անունով է հիշատակում Հաղբատ Սանահին (**Արշակ Տէր-Միքէլեան**, Միջին դարերի կաթուղիկոսների ձգտումները, էջ 88):

8 Տե՛ս աստ, Գլ. Գ., ծնթ. 10:

9 Միակրօնք հատկապես ասում էին երկու վանքերի միևնույն դավանական, այս դեպքում՝ հակաքաղկեդոնական ուղղությանը պատկանելու համար:

10 **Ասողիկ**, 181:

11 **Սամուէլ**, 100:

12 *Նույն տեղում*, 121:

13 **Վարդան**, 90:

ասում է. «ԶՏաշիր ի վերայ Սեւորդաց[14] Ջորոյ գետին[15] է չինեալ հոյակապ եւ հռչակաւոր սուրբ ուխտ[ք]ն Հաղբատ եւ Սանահին, զոր չինեաց Խոսրովանուշ թագուհին՝ կինն Աշոտոյ Ողորմածին ծին ի ՆԺ. (410՝ 961) թվին»[16]: Սամուէլի «Թ» ձեռագրի հավելողը բացատրում է. *«Շինեաց ի Սեւորդիան զհրաշալի ջուխտն զՀաղբատ եւ զՍանահին կինն Աշոտոյ ողարմածին Խոսրովանուշ՝ վասն արեւշատութեան որդւոցն իւրոց Գուրգենայ, Սմբատայ եւ Գագկայ»[17]:* Կիրակոս Գանձակեցին *(ԺԳ. դ.)* անդրադառնալով Կյուրիկե թագավորին՝ Դավթի որդուն և Դերենիկի թոռանը, նշում է, որ նա՝ Կյուրիկեն, *«հիմնարկեաց զհռչակաւոր ուխտսն՝ զՀաղբատ և զՍանահին»[18]:*

Ինչպես նախորդ գլխում տեսանք, Հաղբատի 1123-1125 թվականների մի արձանագրություն Դավիթ Շինարարին հիշատակում է որպես «Սանահնի եւ Հաղբատի խնամատար»:

Հաղբատի և Սանահնի *վերաբերյալ վրաց գրականության մեջ երկու աշխատություն կա՝ 1)* Վախուշտիի *«Աշխարհագրություն»[19] և 2)* Անանուն *հեղինակի կողմից 1837 թվին կազմված «Նկարագրություն Թիֆլիսի թեմերում և գավառներում գտնվող եկեղեցական ցուցակների»[20], որը ներկայացնում է Վախուշտիի բառերի պարզաբանումը՝ կապված հայ պատմիչների տեղեկությունների հետ:*

Ահա այդ երկու երկերի տեղեկությունները.

Վախուշտիի «Աշխարհագրություն»ը	Անանուն հեղինակի «նկարագրություն»ը
Բայց Հաղբատը և Սանահի-	Հաղբատը և Սանահինը,
նը վրացի արքաների կողմից	որպես փառահեղ եկեղեցի-
են կառուցվել (տարբերակը	ներ, նմանապես գյուղերը,

14 Տե՛ս Գլ. Գ. ծնթ. 10:

15 Հմմտ. **Վարդան**, 90 (Տաշիր Սևորդուվքն Ջորոյգետին). նկատի է առնված, որ ուրիշ «Ջորոյգետն Ածի է» ([տե՛ս M.**Saint-Martin**, նշ. աշխ., II, 418]):

16 M. **Saint-Martin**, նշ. աշխ., II, 424:

17 **Սամուէլ**, 100, ծնթ. 9:

18 **Կիրակոս**, 91:

19 Description, 138 = Մ. **Ջանաշվիլու** հրատ., 41:

20 **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Նյութեր Թիֆլիսի և «Սոմխիթիի» հնությունների պատմության համար, «Ձվենի մեցնիերեբա», № 1, Թիֆ., 1924, էջ 95 (ლ. მელიქსეთ-ბეგი, მასალები ტფილისისა და «სომხითის» სიძველეთა ისტორიისათვის, „ჩვენი მეცნიერება“, № 1, ტფ., 1924, გვ. 95).

հավելում է. սակայն հայերը գրում են, թե երբ տիրել են հայ թագավորները, նրանք են կառուցել)[21] գմբեթավոր եկեղեցիներ(ով), փառահեղ եպիսկոպոսարան(ով): Մի՞թե այստեղ հայերն են նստում, մինչդեռ Քարթլիի արքան էր նստեցնում եպիսկոպոսին՝ հոգևոր տերերի գրությամբ[22], քանի որ Քարթլիի հայ բնակիչները նրա ծխականներն են:

վրացի արքաների կողմից են կառուցվել, բայց հայերը գրում են, թե դրանք կառուցել են հայ թագավորները, ապագայի համար ճշմարիտն եմ ասում: Ե՛ւ շատ գեղեցիկ են և՛ փառահեղ: Հաղբատի եկեղեցին[23] կառուցվել է քառասունքը նշելու համար նվիրաբերած գումարներից[24] և երբ հանգուցյալին տանում են այնտեղ, այնտեղ են լինում սգակիր միաննձնուհիները, ովքեր մեկ օրում հանգուցյալի

[21] Քանի որ Հաղբատ-Սանահնի հիմնադրումը և սկզբնական շրջանի պատմությունը սերտորեն կապված է Լոռի-Տաշիրի Կյուրիկյանների դինաստիայի հետ, որն էլ ազգակցությամբ և խնամիությամբ կապված էր Հերեթ-Կախեթի Քորիկոզների և Բագրատունիների հետ, ուստի՝ կարող ենք ենթադրել, որ այս հանգամանքն է թելադրել **Վախուշտիին** Կյուրիկյան թագավորներին վրացի հայտարարել: **Մ. Ջանաշվիլին** (**Царевич Вахушти**. География Грузии, пер. М. Джанашвили [Зап. Кавк. Отд. Рус. Геогр. О-ва, т. XXIV], Тфл., 1904, стр. XLIX, հմմտ. վրաց. բնագիրը, նույնի՝ հրատ. էջ 118] կարծում է, որ **Վախուշտին** սխալմամբ է բերել այս վանքերի արձանագրությունները, որոնք Վրաստանի թագավորներին՝ Դավիթ Շինարարին, Գիորգի Գ.-ին, Թամարին, Լաշա Գիորգիին և մյուսներին հիշատակում են որպես «ինքնակալ, բարեգործ, անպարտելի» խնամակալներ այս եկեղեցիների հարստացման, նորացման և խաղաղ զարգացման համար: Այսպես թե այնպես, ոչ մի քննադատության չի դիմանում **Զ. Ճիճինաձեի** (Հարավային Վրաստան, 14) բառերը, իբր, «Հաղբատի եկեղեցին....Վախտանգ Գորգասալն է կառուցել», բայց «այսօր հայերը զավթել են, այն իրենց սեփականությունն են համարում, թե, իբր, հայոց թագավորներն են կառուցել, սակայն իզուր», քանի որ «հայերը այս եկեղեցին զբաղեցրել են *տասնհինգերորդ* (sic՝ Լ. Մ-Բ.) դարից հետո, երբ այստեղ վրացիները սկսել են նվազել»: Կամ էլ, իբր, «Սանա[հ]նի տաճարը, վրացիների թագավորների կողմից կառուցված, մինչև այսօր պահպանված, այժմ նրան տիրել են հայերը, և հայոց պատմությունն էլ իր որդիների սեփականություն է համարում, սակայն սա ճիշտ չէ», քանի որ «վրաց տոհմի վերացման պատճառով ինչ պատահեց Հաղբատի հետ, այն էլ պատահեց Սանահնի տաճարին» (sic): Հետաքրքիր է, որ վրաց լեզվով վրաց արքաների հրովարտակներ մեզ հասել են միայն Հաղբատի մասին, այն էլ ԺԶ-ԺԸ. դարերի [(**Է. Թաղաիշվիլի**, საქართველოს სიძველენი (Վրաստանի հնությունները), I Տիղ., 1889, էջ 433 et pass, հմմտ, Մ. **Ջանաշվիլու** զեկուցումը Ахпатский монастырь и его документы на грузинском языке, Ամփոփում.- Изв. Кавк. Отд. И. Моск. Арх. О-ва, т. I, Тфл., 1915 стр. 2. прот. № 67):

[22] Այսինքն՝ հոգևոր տեր (հմմտ. Description, 139-140, n. 2, **Լ. Մելիքսեթ-Բեկ,** նյութեր, 95, ծնթ. 2, **նույնի՝** Վախուշտիական «Իշխուտրուկի» մասին, «Սիստորիո մոամբե», 1924, № 2, էջ 229): * Մինչեւ ԺԸ. դ. վերջ «Հոգեւոր տէր» կոչում էին Ամենայն Հայոց կաթողիկոսին, ինչպես այժմ՝ «Վեհափառ» - Գ. Տ-Վ.:

[23] Պետք է լինի՝ վանք:

[24] Այս տեղեկությունը, այնպես, ինչպես ցուցմունք է տալիս Սանահնի 40 զոհասեղանի մասին (**Գիւտ Աղանեանց**, Դիւան հայոց պատմութեան, Ժ., Տիղ., 1910, էջ 372), անշուշտ, իրական փաստերի վրա պետք է հենված լինի, որը և իրազեկ կուլտուրայի մնացորդներն էլ են հաստատում: Հմմտ. մեր կարծիքը այս երևույթի

քառասունքը[25] են կատարում: Հաղբատի այս եկեղեցին այժմ այնպես փառահեղ չէ, ինչպես վաղ ժամանակներում էր: Այստեղ Վրաստանի թագավորի կամքով նստում էր եպիսկոպոսը[26], հայերի գրությամբ՝ էջմիածնի հասարակության հոգևոր տիրոջ՝[27] կաթողիկոսի (համաձայնությամբ), և նրա ծխականները Քարթլիի բնակիչ հայեր էին: Նրանց պատմելով՝ Հաղբատը և Սանահինը՝ որպես գյուղեր, նաև փառահեղ գմբեթավոր եկեղեցիները կառուցվել են 961 թ.[28] Աշոտ Երրորդ (sic) Բագրատունու՝ Ողորմած կոչված, ամուսնու՝ Խոսորովանույշի կողմից:

Հաղբատը և Սանահինը միմյանցից անբաժան հիշատակվում են «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» և Գրիգոր Տղայի նամակագրության մեջ, որոնցից մեկը, ինչպես տեսանք առաջին գլխում, վերնագրված է՝ «Թուղթ վարդապետացն Հայոց հիւսիսային կողմանց, որ ի Հաղբատ և ի Սանահին, առ պատուական կաթողիկոսն տէր Գրիգորիոս»: Սակայն Գրիգոր Տղան իր պատասխանում հանդիմանում է «Հայոց վարդապետներին», նրանց, որ «ի Սանահի՞ն խօսեցաւ, եթէ ի Հաղբատ հրապարակեցաւ <տրբրկ.՝ հրատարակեցաւ>[29], կամ «ոչ է Հաղբատեցի, կամ Սանահնեցի»[30] լսվում է Գրիգորի մի կշտամբանքում՝ ուղղված նույն վարդապետներին:

Կիրակոս Գանձակեցին, *նկարագրելով Զաքարիա Երկայնաբա-*

վերաբերյալ «քառասուն»: **Լ. Меликсет-Беков**, О междоусобице в Тифлисе в 1197 году по поводу Кривой пасхи.- Изв. КИАЛ, т. III, стр. 52-55:

[25] Հայ.՝ քառասունք = сорокоуст.

[26] Պետք է լինի՝ եպիսկոպոս, եթե, իհարկե, այստեղ նկատի չի առնվում Հաղբատի կամ Աղվանքի առանձնացած կաթողիկոսը:

[27] Տե՛ս վերը՝ ծնթ. 22:

[28] Ինչպես երևում է՝ հիմնված է Վարդանի տեղեկության վրա (տե՛ս այստեղ՝ վերը, ծնթ. 16):

[29] Թուղթ ընդհ., 437, Նամականի, 58:

[30] **Արշակ Տէր-Միքելեան**, Միջին դարերի կաթուղիկոսների ծգտումները, 78:

զուկի որդու՝ Շանչեի օրոք Սանահնի և Հաղբատի միջև տեղի ունեցած վիճաբանությունը այն պատճառով, որ Հաղբատի վանահայր Հովհաննեսը «չինեաց բերդ մի գեղեցիկ ամրագոյն պարսպօք մէջ ընդ Հաղբատ եւ ընդ Սանահինն» «չինեաց բերդ մի գեղեցիկ ամրագոյն պարսպօք մէջ ընդ Հաղբատ՝ և ընդ Սանահինն[31]: Վասն որոյ գժտութիւն ընդ երկու մեծամեծ վանքերն եղեւ, որպէս թէ ի հողոյ Սանահնին իցէ. եւ վրէժխնդիր եղեւ իշխանն Շահնշահ՝ որդին Զաքարէի, Սանահնին, զի հայրն նորա անդ թաղեալ էր, եւ իւրեանց սեպհական համարէին. զի Հաղբատ ի վրաց թագաւորացն հաշուի էր»[32]:

Հաղբատի և Սանահնի հիմնադրման հարցը վերջնականապես վճռված չէ: Ավելի ճիշտ՝ այս հարցը այժմ էլ նույն վիճակում է, ինչպես մեկ կամ կես դար առաջ, երբ Հովհաննէս Ղրիմեցին իրավացիորեն եզրակացնում էր. "На счет первоначального построения Ахпата, так же Санагина, разноречиво повествуют древние историки, по трем обстоятельствам. а) по месту и области, где монастыри построены, и как они в древности назывались, б) по времени, когда построены, и г) кем первоначально основаны»[33]:

Հաղբատ-Սանահնի նախասկզբնական հիմնադրման հարցը, մեր կարծիքով, վճռել կարելի է միայն և միայն հայ պատմիչների տեղեկությունների հիման վրա, որոնցից վճռորոշ նշանակություն, ինքնին պարզ է, Ասողիկին և Սամուել Անեցուն պետք է տալ: Նրանց չի հակասում նաև Վարդանի «Աշխարհագրության» տեղեկությունը, որտեղ տարեթվի տարբերությունը միայն միավորի մեջ է, երևի այն պատճառով, որ վերջինիս միավոր արտահայտող թիվը, հնարավոր է, պատահաբար բաց է թողնված (Նժ[Զ]. 41[6]-ի փոխարեն՝ Նժ[-] 41[-] 1, որը 967-ի փոխարեն 961 է տալիս: Ամեն դեպքում, եթե Սանահինը, ըստ Սամուել Անեցու, Հաղբատից տասը տարի չուտ է հիմնադրվել, պարզ է, որ նրանց սկզբնական կառուցման տարեթիվը պետք է սահմանել՝ Սանահնի համար 957 թվականը, իսկ Հաղբատի համար՝ 967 թվականը[34]:

[31] **Կիրակոս**, 92:

[32] **Նույն տեղում:**

[33] **Յովհ. Ղրիմեցի**, 9:

[34] Որ Սանահինը Հաղբատից շուտ է հիմնադրվել, այս մասին է խոսում նաև ժողովրդական ստուգաբանությունը, որտեղ Սանահինը «սա նա հին է» հիշատակված, այսինքն՝ այս (Սանահինը) **նրանից** (Հաղբատից) **հին** է: Ժողովրդական ստուգաբանությունից բացի, գիտական գրականության մեջ գոյություն ունի ակադ. **Մ. Բրոսեի** (**Յովհ. Ղրիմեցի**, Appendice, 68) նույն այս բառի բացատրությունը՝

Ինչ վերաբերում է այժմյան կառույցներին, մասնավորապես գլխավոր եկեղեցուն կամ կաթողիկեին, նրանց վերաբերյալ հետևյալը պետք է ասել:

Հաղբատի գլխավոր եկեղեցու (Սուրբ Նշան) խնդիրը լուծվում է դրսից պատի մեջ տեղադրված՝ չինարար արքաների չարձանագրված քանդակներով[35], կապված հյուսիսային պատի երկու արձանագրության հետ, որոնցից մեկը պատուհանի վերևում է, իսկ մյուսը՝ դռների: Առաջինում, ի միջի այլոց, ասված է. Ի «Նխ. թուակ[ա]նութեան] Սիմեւոն հայրը և Տիրանուն երեց չինեցաք զեկեղեցիս [վասն] փրկութեան Սմբատա և Գուրգենա[36] 440 <=991> թվականին»: Սմբատը և Գուրգենը Անիի թագավորի՝ Աշոտ Ողորմածի որդիներն են, որոնցից երկրորդը (Գուրգենը) ավանդաբար, այսպես կոչված, Կյուրիկյանների (Լոռի-Տաշիրի) դինաստիայի հիմնադիրն է համարվում[37]: Երկրորդ արձանագրությունը նույն տաճարի կամ կաթողիկեի («զս՛՛ը կաթողիկէ») 465 = 1016 թվականի նորացման մասին է խոսում[38]: Հետևաբար, 991 թվականին պետք է լինեն Հաղբատը կառուցող թագավորների չարձանագրված փորագրությունները, որտեղ ներկայացված են Բագրատունյաց Աշոտ «Ողորմածի» որդիները՝ Գուրգենը և Սմբատը:

Սակայն Սանահնի գլխավոր եկեղեցու (Ամենափրկիչ) կառուցման հարցը վճռվում է միայն և միայն նույն եկեղեցու արևելյան պատի մեջ դրսից տեղադրված՝ կառուցող թագավորների քանդակներով, որոնց վրա գրված է «[Կ]որիկէ թագաւոր, Սմբատ <իրոք՝ ներով, որոնց վրա գրված է «[Կ]որիկէ թագաւոր, Սմբատ <իրոք՝ Սմպատ> թագաւոր»[39]: Այս Կորիկէ-Կյուրիկեն և Սմբատը (Սմպատ) անպայման Կյուրիկյանների դինաստիայի Կյուրիկեն և Սմբատը

«սան հին» antique chaudire, այսինքն՝ **հին** քարայր է: Սրան համաձայն է **Մ. Ջանաշվիլին** (**Վախուշտիի** Աշխարհագրության հրատ. էջ 118): Հաղբատ անվան նշանակությունն անբացատրելի է:

[35] **H. Mapp**, О раскопках и работах в Ани летом 1906 года [ТПХ.], Спб., 1907, стр. 20-21 и рис. 16 рис.(стр. 21).

[36] **Ջալալեանց**, Ա., 79 = **Յովհ. Ղրիմեցի**, 11 = **Կոստանեանց**, 10 (գոյություն ունեցող հրատարակություններում այս մակագրության բովանդակությունը խեղաթյուրված է, մասնավորապես *Գուրգենա*-յի փոխարեն ընթերցված է՝ Գուրգեայ):

[37] Սա հնագույն արձանագրությունն է Հաղբատում (հմմտ. "Изв. Кавк. Отд. И. Моск. Арх. О-ва", в т. III, 1913, стр. 75, прот. № 64):

[38] **Ջալալեանց**, Ա., 68 = **Յովհ. Ղրիմեցի**, 3-4 = **Երզնկեան**, 45 = **Կոստանեանց**, 15:

[39] **H. Mapp**, Санаинская скульптурная группа ктиторов.- ХВ, I. 1912, стр. 350, и табл. XX (գոյություն ունեցող այլ հրատարակություններում երկրորդ անվանումը սխալմամբ նշված է՝ Սմբատ):

պետք է եղած լինեն[40]*, որոնց Բագրատ Դ. 1065 թվականին Քուեշի հովտում պարտութեան մատնեց, և որոնք հիշատակվում են Սանահնի 512 = 1063 թվակիր արձանագրութեան մէջ*[41]*: Հետևաբար, մինչև 1065 թվականը պետք է փորագրված լիներին Սանահինը կառուցող Թագավորների արձանագիր քանդակները, որտեղ ներկայացված են Կյուրիկանների Դավիթ «Անհողին» կոչված Թագավորի որդիները՝ Կյուրիկեն և Սմբատը:*

Այսպիսով, մեր դիտարկումը Հաղբատ-Սանահնի վանքերի մասին, հանգեցրեց եզրակացութեան, որ այս վանքերի գլխավոր եկեղեցիների կառուցումը պետք է վերագրել տարբեր ժամանակների և տարբեր անձանց. Հաղբատինը՝ 991 թվին, Բագրատունյաց Աշոտ «Ողորմածի» որդի Սմբատին (Սմբատ Բ. Շահնշահին) և Գուրգենին (Կյուրիկե Ա.), իսկ Սանահնինը՝ ԺԱ. դարի կեսին. ոչ շուտ՝ 1048 և ոչ ուշ՝ 1065 թվականներից, Կյուրիկյանների, այսպես կոչված, Դավիթ «Անհողինի» որդի Կորիկեին (Կյուրիկե Բ.) և նրա եղբայր Սմբատին, այլ կերպ ասած՝ «Բագրատունիները» որպես այդպիսիք, բացարձակապես չեն մասնակցել Սանահնի գլխավոր եկեղեցու կառուցման աշխատանքներին, այնպես, ինչպես «Կյուրիկյանները» ծառայութիւն չունեն Հաղբատի գլխավոր եկեղեցու շինարարութեան գործում, որովհետև մի դեպքում մենք գործ ունենք մի խմբի՝ Սմբատ և Գուրգեն Կյուրիկյանների հետ, իսկ երկրորդ դեպքում՝ բոլորովին այլ խմբի՝ Կորիկե-Կյուրիկեի և Սմբատի հետ[42]*:*

[40] Հմմտ. **Յովհ. Դրիմեցի**, էջ 51, ծնթ. 4, **Ղ. Մովսէսեան**, Նշ. աշխ. 32-33:

[41] **Ջալալեանց**, Ա., 32 = **Յովհ. Դրիմեցի**, 49 = **Կոստանեանց**, 24:

[42] Հաղբատ-Սանահնի մասին գրականությունը տե՛ս. **Ջալալեանց**, Ա., 9-52 (Սանահին), 53-80 (Հաղբատ), [**А. Муравьев**], Грузия и Армения, II, 289-312 (Лори, Санагин, Ахпат), նկարագրութիւն Սանահնի.- «Մեղու Հայաստանի» 1860 №№ 1, 2, 3, **Յովհ. Դրիմեցի**, 1-46 (ч. I, О монастыре Ахпатском), 47-67 (ч. II, О монастыре Санагинском), [**А. Ерицов**], Ахпатский монастырь.- "Кав. Старина", № 2 (1872), 49-52, № 3 (1873), 83-88, **Երզնկեան**; **Ի. Յարութիւնեան**, Սանահին.- ԱՀ Գ., 1898, էջ 273-275, **Գիւտ Աղանեանց**, Հնից-նորից, Հնախուզական ուղևորութիւն. Տփղ., 1900, էջ 7-21 (Ջ. մի պտոյտ Հաղբատի շուրջը): **Լալայեան**, 378-395 (Սանահնի վանքը), 396-419 (Հաղբատ), Եր[ուանդ] ս. [**Տէր-Մինասեանց**], Հաղբատ և Սանահին.- Ա, 1901, էջ 271-277, 338-344, H. M[app], Санаһинская скульптурная группа ктиторов.- ХВ, I, 350 и табл. XX, H. M[app], Фресковое изображение парона Хут'лу-буги в Ахпате (hAr'бате).- ХВ I, 350-353, **Գաբրիէլ Յովհաննիսեանց-Քաջբերունի**, Սանահնի և Ղազախ գաւառի արձանագրութիւնները, հաւաքեց և ճշտեց **Սմբատ Տէր-Աւետիսեան**, 1903-1908 թ.- «Տեղեկագիր» Թիֆլիսի վանաց աւագ եկեղեցու կրօնապատմական թանգարանի մնայուն յանձնաժողովի, 1908 ապրիլ 5 - 1910 ապրիլ 5, Տփղ., 1910, էջ 25-99: **Ս. Տեր-Ավետիսյանի** կողմից հավաքված և ճշտված Հաղբատ-Սանահնի արձանագրությունների ամբողջական ժողովածուի առաջին մասը, որը բովանդակում է Սանահինը, երկար ժամանակ է, ինչ տպագրվում է Միութենական Գիտական Ակադեմիայի կողմից:

Երկու վանքն էլ՝ Հաղբատն ու Սանահինը, բազում կառույցներ են պարունակում, որոնցից հատուկ ուշադրության են արժանի՝ այսպես կոչված «Գրատունք»-ը[43]*, դահլիճանման շինություններ՝ պատի պահարաններով, որոնք հետագայում վերածվեցին մատենների: Սրանք գրապահոցներ են, ի դեպ, հիշատակված Հովհաննես Սարկավագի «Սաղմոսագրքի» հավելվածում՝ «մտեալ ի յարկեղս գրեանցն՝ որ ի Հաղբատ»*[44]*: Սրանց մասին է խոսվում նաև Հաղբատի 1179*[45] *և Սանահնի 1214*[46] *թվականների արձանագրություններում (տե՛ս նկ. № 1):*

Հաղբատ-Սանահինը հռչակված էին իրենց քարանձավներով, որոնց մեջ հին ժամանակներից ի վեր պահպանվում էին գանձեր և, ի միջի այլոց, նաև ձեռագրեր: Հաղբատում հայտնի է՝ «Ծակ-քար», «Ջառնի էր» և «Պարնի էր», իսկ Սանահնում՝ «Աչարենց էր»[47]*: Սրանք այն քարանձավներն են, որոնց հետ կապված է Հովհաննես Սարկավագի հետ պատահած հայտնի միջադեպը, որտեղ ասված է, որ նա՝ Հովհաննեսը, իր մերձավորների հետ (Դավիթ Ալավկա որդու և Գրիգոր Թոքակերի որդու) միասին հաճախ դուրս էր գնում Հաղբատից, ըստ* Կիրակոս Գանձակեցու՝ *[մեկ] «յայրն, ուր գրեանն էին*[48]*», որտեղ* Ղուկաս Ինճիճյանի *(ԺԸ. դ.) խոսքերով՝ «յորում նախնիք վանաց պահէին զմատեանս առ ահի*[49] *ասպատակած լեռնականացն, որոնց մասին* Ստեփանոս Օրբելեանի *«Այունիքի պատմութեան» վրացերեն թարգմանության հիշատակարանում ասված է. «Այս նամակը իսկակ[անը] սկզբնական տեսքով* գտանք Սանահնի քարայրում»*[50]:*

Քանի որ ամբողջ ԺԹ. դարում այս քարանձավներից բազմիցս

[43] **Լալայեան**, 388-389 (Սանահնի), 407 (Հաղբատի):

[44] **Ոսկեան**, Մատ. քննութ., 34:

[45] **Յովհ. Դրիմեցի**, 16:

[46] **Նույն տեղում**, 55:

[47] «էր»-ը գրական նույն «այր»-ն է, որ նշանակում է՝ **անձավ, քարանձավ, քարայր**: Այն հիմք է հանդիսանում համարյա Հայաստանի բոլոր քարայրերի անվանման համար: **Այրավանք, Քվաբայր-Քոբայր, Հոռոմայր** (հմմտ. Լ. **Մելիքսեթ-Բեկ**, Քոբեր, 60-61): Այսպիսի գաղափար է բովանդակում Մ. **Բրոսեի** կարծիքով, ինչպես տեսանք (տե՛ս վերը, ծնթ. 34), նաև Սանահնի անվանումը (Սան)+(հին), այսինքն՝ **քարանձավ հին**:

[48] **Կիրակոս**, 107-108:

[49] **Ղուկաս Ինճիճեան**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մս. Ա., հտր. Ա., Վնտ., 1805, էջ 279:

[50] Տե՛ս նախկին եկեղեցական թանգարանի (ԺԸ. դ.), ձեռ. Ɜ՟ր 864, էջ 31ա:

քարացած ձեռագրեր կամ նրանց կտորներ են հայտնաբերել, ա) այդ պատճառով գիտական շրջանակներում իրավացիորեն բարձրացավ այս քարանձավների ամբողջական ցուցակագրման և ուսումնասիրման հարցը, անհրաժեշտության դեպքերում (հին ձեռագրերի հայտնաբերման նպատակով)՝ նաև պեղումներ կատարելու[51]: Վերջին անգամ այդ քարանձավներում 1899-1900 թթ. փորձնական փնտրտուք իրականացրեց Գյուտ Աղանյանցը*: Նա Հաղբատի, այսպես կոչված, «Ծակ-քար» և «Պարնի էր»-ի անձավներից ձեռագիր պատառիկների ամբողջ հավաքածու հայտնաբերեց, որոնք 1912-1913 թթ. հանձնեց Գիտությունների Ակադեմիայի Ասիայի թանգարանին[52]: Մյուս կողմից՝ Հաղբատը և Սանահինը հռչակված են իրենց պանթեոններով: Առավելապես հետաքրքիր է Հաղբատի պանթեոնը (տե՛ս № 2 նկարը), որը գտնվում է «գրապահոցի» և զանգակատան միջև, և որտեղ թաղված են «Հայոց հյուսիսային կողմանց վարդապետների» խմբակից «սուփեստոս» Հովհաննես Սարկավագը, Դավիթ Քոբայրեցին, Վարդան Հաղբատեցին և Թորոսը[53], իսկ այս միջավայրից դուրս անձանցից՝ Խոսրովը, ինչպես նաև, այսպես կոչված, մայրավանքում՝ «սուփեստոս» Ստեփանոսը, Հովհաննեսը և Գևորգը: Սանահնում և այլևայլ տեղերում գտնվում են գերեզմաններ «Հայոց հյուսիսային կողմանց վարդապետների» միջավայրից՝ Գրիգոր Տուտեորդու, Գրիգոր Աբասաորդու, Դիոսկորոսի և «փիլիսոփա» Ներսեսի:*

---

51 **Գիւտ Աղանեանց**, Հնից-նորից, 11-21, **С. Тер-Аветисьян**, Важность, археологического исследования пещер Ахпата и Санаина.- “Изв. Кавк. Музея”, т. IX, в. 2, 1915, стр. 130-134 (հմմտ. “Изв. Кавк. Отд. И. Моск. Арх. О-ва” в. III, стр. 52, прот. № 55):

52 Տե՛ս Изв. АН, 1913, стр. 213, прот. зас. 16. I. 1913, հմմտ. **Н. Марр,** Отчет Анийского Музея древностей за 1915 год “Анийские древности”, II, Пгр., 1917 стр. 35, հմմտ. **С. Тер-Аветисьян**, նշ. աշխ., стр. 133: Քարանձավներում հայտնաբերած ձեռագրերի պատառիկների նկարագրությունը տե՛ս **Գիւտ Աղանեանց**, նշ. աշխ., 12-16, 17-18:

53 Հենց այստեղ է նկարագրված Հովհաննես Երզնկացու կամ Ծործորեցու («Պլուզ» կոչված) գերեզմանը: Սակայն սա իրականությանը չի համապատասխանում, քանզի այս գերեզմանի արձանագրությունը փորագրված է 1824 թվականին, Եփրեմ Կաթողիկոսի հրամանով (**Յովհ. Դրիմեցի**, 41 = **Երզնկեան**, 53 = **Լալայեան** 308), մինչև այդ ժամանակ, ինչպես վկայում է **Մինաս Բժշկեանցը** (ճանապարհորդութիւն ի Լեհաստան. եւն., Վնտ., 1830, էջ 80 [§.126], այն «անգիր» է եղել: **Մ. Օրմանյանը** (Ազգապատում, էջ 1798-1800 [§ 240], հիմնվելով այն փաստի վրա, որ Հովհաննես Պլուզն իր կյանքի վերջին տարիները անցկացրել է Ծործորում և Երզնկայում, համամիտ է **Գարեգին Սրվանձտյանի** (Թորոս Աղբար, Բ., 50) կարծիքին, համաձայն որի նա պետք է թաղված լինի Երզնկայի Սուրբ Նշան վանքում:

* * *

«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» թղթերում Հաղբատ-Սանահնից հետո հիշատակված են Հաղարծինը, Խորակերտը և Գետիկը:

Հաղարծինը, *ԺԲ. դարի երկրոդ կեսի և ԺԳ. դարի իր շինություններով*[54], *Դիլիջանի մոտակայքում է և հայտնի է որպես Խաչատուր Տարոնացու գործունեության վայր:*

Խորակերտը, *Վախուշտիի քարտեզով՝ Խվարակերտ (ֆրանսիական հրատարակության մեջ սխալմամբ՝ Khwaraceiti), Շուլավեր գետի ակունքում է՝ Աղբյորփի գյուղի մոտ: Եկեղեցին կառուցվել է ըստ* Ս. Ջալալյանց *ի՝ 721=1272 թվականին, սակայն ըստ* Ե. Լալայանի՝ *701=1252 թվականին*[55] *և հայտնի է որպես Մխիթար Խորակերտցու գործունեության վայր:*

Գետիկը (Նոր Գետիկ) *կամ [Մխիթար] Գոշավանքը (Գօշայ վանք) Դիլիջանի շրջանում է՝ ԺԲ. դարի Բ. կեսի և ԺԳ. դարի շինություններով*[56], *և հայտնի է որպես Մխիթար Գոշի գործունեության վայր, որոնցից երկրորդում է գտնվում նրա գերեզմանը:*

Մյուս օջախներից, որոնք հիշատակված չեն վերոհիշյալ թղթերում, նշանակալից են՝ Զորագետի հովտում՝ Հոռոմայրը և Հովհան-

---

54 **Ղուկաս Ինճիճեան**, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վնտ., 1822, էջ 312-313, **Շահխաթունեանց**, Բ., 370-371 (§ 604): **Ջալալեանց**, Ա., 131-136: **Քաջիկեան**, Ճանապարհորդական յիշատակարան.- «Արծագանք», 1888, № 8, էջ 101-104, **Բարխուդարեան**, Արցախ, 364-370, **Մեսրոպ Տէր-Մովսիսեան**, նշ. աշխ., ԱՀ, ԻԵ., 61-74: **Л. Меликсет-Беков**, Одна из надписей hАг᾽арцинского манастыря.- XB, т. III, 1913, стр. 197-198, հմմտ **Տ. Ինասարիձե**, «Հաղարծնի վանքը», «Իվերիա», 1895 թ., № 220 (այս հոդվածում հեղինակը, ի միջի այլոց, հայերի Հաղարծին վանքը, չգիտես ինչու, համեմատում է Մեսխեթիի Սաֆարի լավրայի հետ. «Առաջին հայացքից այս վանքը.- ասում է նա Հաղարծնի մասին.- հիշեցնում է Սաֆարի վանքը, միայն մեծ տարբերությամբ, որ Սաֆարի վանքի ճարտարապետությունը գերազանցում է, ամբողջովին պահպանված է և մաքուր է: Հաղարծնի վանքի ճարտարապետությունը բավականին ցածր մակարդակի է, պատերն այստեղ այստեղ քանդված են»):

55 **Վարդան**, 90.- **Ղ. Ինճիճեան**, Ստորագրութիւն. ևլն., 131-132, 313-31: **Ջալալեանց**, Ա., 87, **Լալայեան**, 425-426:

56 **Վարդան**, 140, **Կիրակոս**, բազմաթիվ տեղերում. **Շահխաթունեանց**, Բ., 367-370 (§. 603): **Ջալալեանց**, Ա., 136-145, **Քաջիկեան** նշ. աշխ.- «Արծագանք», 1888, № 9, էջ 116-118: **Մակար Բարխուդարեան**, Արցախ, 349-356: **Իսահակ Յարութիւնեան**, Գոշայ վանք կամ Նոր Գետիկ.- ԱՀ, 1903, էջ 5-38: **Յով. Սպենդիարեան**, Մխիթար Գօշի վանքը (ամառային յիշողութիւններից).- «Մշակ» 1911 թ. №№ 16, 17, 18, **Х. Кучук-Иоаннесов**, Сведения и заметки о старинных армянских рукописях и армянских надписях, находящихся в пределах России.- “Древности Восточные”, т. IV, Москва, 1913, стр. 16-24 (V. Надписи в армянском монастыре Гошаванк).

նես Օձնեցու վանքը, առաջինը գտնվում է Ս. Իգահատի[57], իսկ երկրորդը՝ Ս. Արդվիի մոտակայքում, որի օջախների վերականգնման համար ԺԷ. դարի վերջում հոգում էր վրացի Հերակլ Բատոնիշվիլու որդին՝ Գիորգին[58], իսկ հին Ուտիք-Կանգարք-Գարդաբանիի (այժմյան Ղազախի և Գյանջայի գավառների) սահմաններում՝ Խորանաշատը[59], որպես Հովհաննես Վանականի (Տավուշեցու) գործունեության վայր[60], Դասնոյը՝ որպես Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոցի» գրելու վայր, Խամշին[61], որպես Աղվանքի կաթողիկոսարանի հնագույն կենտրոն և Մակարավանքը[62]:

* * *

Վերոհիշյալ բոլոր օջախները, ինչ խոսք, «հակաքաղկեդոնական» ուղղության էին: Բայց նրանց կողքին, քաղկեդոնականության հողի վրա, ստեղծվեցին նաև «քաղկեդոնական» ուղղության մի քանի օջախներ, որոնցից ԺԱ-ԺԳ. դարերում հայտնի էին Հնէվանքը, Պղնձահանքը, Ոսկեպարը և այլն:

Քոբերը կամ հայերեն՝ Քոբայրը,[63] և Հնէվանքը[64], որոնք նշված են

[57] Միասին են հիշատակված **Վարդանի** «Պատմութեան» (**Վարդան**, 129) և «Աշխարհագրութեան» մեջ (**Զ. Maint-Martin**, նշ. աշխ., II, 421), տե՛ս նաև **Ջալալեանց**, Ա., 92-102:

[58] **Գիւտ Աղանեանց**. Դիւան հայոց պատմութեան, Դ., 1898, էջ 240-242: Հմմտ. Լ. Մ-Բ. «Հայոց պատմութեան արխիվ».- «Վրաստանի արխիվ», II, 1927, էջ 105:

[59] **Կիրակոս**, 311, 333, **Ղ. Ինճիճեան**, Ստորագրութիւն, 313-314, **Քաջիկեան**.- «Արծագանք», 1888, № 7, էջ 87-89, **Բարխուդարեան**, 322-324 (ինքնատիպ է ինքը՝ անվանումը՝ «Խորանաշատ», որ նշանակում է՝ բազմախորան, բազմագմբեթ):

[60] Ղ. **Ինճիճեան**, Ստորագրութիւն, 314:

[61] **Բարխուդարեան**, 309-310. «Խամշի անվանումը հիշեցնում է Կախեթից դուրս գտնվող հայտնի գյուղի «Խամշի» անվանումը», որի հետ, անշուշտ, ինչ-որ կապ պետք է լինի, ամեն դեպքում զարմանալի է, որ այս Խամշիի մոտակայքում հայտնի է նաև «**Կածարեթ**»-ը, ճիշտ այնպես, ինչպես Կախեթից դուրս Խաշմիի մոտակայքում է «**Կածարեթ**»-ը Սամեբիի վանքով հանդերձ: Երկու անվանումն էլ, ինչպես «**Կածարեթ**»-ը (**Վարդան**, 145, **Կիրակոս**, 155), այնպես էլ «Խաշմի»-ն (**Կիրակոս**, 472, 180-190, 263, 275, 276: **Մխիթար**, 65) պարզ չեն: Նրանց մասին առայժմ տե՛ս **Լևոն Մելիքսեթ-Բեկ**, Կածարեթ, «Սաիստորիո մոամբե» 1924, № 2, էջ 160-161:

[62] **Կիրակոս**, 204, **Ջալալեանց**, Ա., 147-154, **Քաջիկեան**.- «Արծ.», 1888, № 10, էջ 131-134:

[63] ლ. მელიქსეთ-ბეგი,„ქობერი და მისი სომხური და ქართული წარწერები“,„ტფ. უნ. მოამბე“, VII, 60-63, 1927 (**Լևոն Մելիքսեթ-Բեկ**, Քոբերը և նրա հայերեն ու վրացերեն արձանագրությունները.- «Թիֆ. համալս. բանբեր», VII, 60-73:- Հենց այնտեղ է այս օջախի մասին եղած գրականությունը):

[64] **Л. М. Б.**, Об экспедиции в Лори-Ташир и по ущелью Машавер-и летом 1926 г.- Изв. КИАН, т. IV, Тфл., 1926, стр. 135-136, հմմտ. **Ջալալեանց**, 436:

նաև Վախուշտիի քարտեզի վրա, տեղադրված են Զորոգետի հովտում. առաջինը՝ Սանահին գյուղի և Քոլագերանի միջև, նույնանուն կիսակայարանի և գյուղատեղիի մոտակայքում, Զորոգետի = Դեբեդչայ գետի ձախ ափին, իսկ երկրորդը՝ Քոլագերան գյուղից Լոռի տանող ճանապարհից և Զորոգետից = Կամենկա գետից աջ (որտեղ այժմ, այսպես կոչված, Զորոհէկն է կառուցվում): Առաջինը «Քոբեր» (Քոբայր) է կոչվում այն պատճառով, որ նրա հին ամբողջությունը կոմպլեքսը ներկայացնում էր քարայր վանք (Քոբայր-Քւաբայր-Քվաբ+այր, իսկ մյուսը՝ Հնէվանք, այն պատճառով, որ եղել է «քաղկեդոնացիների» վանք (Հնէվանք, նշանակում է՝ հույների վանք):

Քոբերը, ինչպես մենք արդեն պարզաբանել ենք[65], նախապես «հակաքաղկեդոնականների» մենաստան է եղել (1153, 1185 և 1186 թվականների հայկական արձանագրությունները հաստատում են, որը փոքր եկեղեցին կառուցվել է 1153 թվականին), բայց հետագայում այն հանդես է գալիս որպես «քաղկեդոնականների» վանք (1292 և 1295 թվականների վրացերեն արձանագրությունները հաստատում են, որ մնացած շինությունները հենց այս ժամանակի են): Սակայն Հնէվանքը կառուցված պետք է լինի ոչ ուշ, քան ԺԲ. դարի սկզբին, քանզի գմբեթի այունագլխի (կոզմիդի) վրացերեն աստվածավրուվի (երկաթագիր) արձանագրությունը հուշում է, որ այն 1128 թվականից հետո նորացրել է մեծն Հովհաննես Օրբելու որդի Սմբատ ամիրսպասալարը[66], սակայն ԺԲ-ԺԳ. դարերում կրկին վերանորոգվել է երկայնաբազուկների կողմից:

Այս երկու վանքերի նկարագրությունները պահպանվել են վրաց վրացական մատենագրության մեջ, դրանց մասին մասնավորապես խոսում են Վախուշտին և նրա հետևորդը՝ 1837 թվի «Նկարագրություն»-ի Անանուն հեղինակը:

Վախուշտիի «աշխարհագրություն»

[Հաղբատից և Սանահնից] վերև գտնվում է մի փոքրիկ եկեղեցի: Քոբերի նման փառահեղ: Տիրացել են հայերը: Դրանից արևմուտք գոյություն ունի Հնէվանքը հրա

Անանուն հեղինակի «նկարագրություն»

Հաղբատից վերև գտնվում է կառուցված մի փոքրիկ վանք՝ Հնէվանք անունով, որ տիրել են հայերը: Այստեղ կան (փորված) բազմաթիվ քարայրներ, որոնց ներսում՝

[65] Տե՛ս վերը՝ ծնթ. 63:

[66] Տե՛ս վերը՝ Գլ. Դ., ծնթ. 25:

շալի Բերդուջ (sic) գետից վերև: Նույնպես տիրացել են հայերը: Այստեղ՝ բարձր ժայռի մեջ, կան բազմաթիվ քարայրներ, և այդ քարայրների մեջ կան բազմաթիվ հին գրքեր, մինչդեռ մարդկանց բարձրանալու համար անմատչելի են[67]:

Պղնձահանք *անվամբ հայտնի է երկու օջախ. մեկը այժմյան Ախթալան՝ Զորոգետի հովտում[70], ԺԱ-ԺԲ. դարերի շինություններով, իսկ երկրորդը՝ հին Բջնիի կողմերում (այժմյան Ծաղկաձորի կամ Դարաչիչակի մոտակայքում) ընկած Թայչարուխի այսպես կոչված, «Գյուրջիքիլիսա»-ն, (որ* վրացիների եկեղեցի *է նշանակում) ԺԲ-ԺԳ. դարի շինություններով, երկուսում էլ առկա են վրացերեն արձանագրություններ:*

Ոսկեպարը, *որ նշված է նաև* Վախուշտիի *քարտեզի վրա, գտնվում է Աղստևի = Աղստաֆայի հովտում. ինչպես երևում է, դարձյալ ԺԲ-ԺԳ. դարերում է կառուցվել և զարդարված է որմնանկարներով ու վրացերեն արձանագրություններով*[71]*:*



[67] Description, 138, 140 = Մ. **Ջանաշվիլիի** հրատ, 4:

[68] **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Նյութեր Թիֆլիսի և «Սոմխիթիի» հնությունների պատմության համար, էջ 95:

[69] [**А. Муравьев**], Грузия и Армения, II, 313-331; **П. Иоселиани,** Путевые записки от Тифлиса до Ахталы, Тфл., 1850, стр. 23-33, [**А. Ерицов**], Монастырь Ахтала.- "Кавк. Старина", №1 (1872), стр. 20-24, **Е. Такайшвили**, Грузинские надписи Ахталы.- СМК XXIX, 1901, стр. 138-145:

[70] **Շահխաթունեանց, Բ.**, 200-201, **Ղ. Ալիշան**, Այրարատ, Վնտ., 1890, էջ 258, 278-279, **Ե. Լալայեան,** Նոր-Բայազետի գաւառ.- ԱՀ, Ի., 1910, էջ 45: Այս վանքի մասին պատրաստվում են պրոֆ. Ակ. Շանիձեի հոդվածները, և մեր կողմից հավելյալ նամակներ (հմմտ. մեր զեկուցումը Միութենական Գիտությունների Ակադեմիայի Կովկ. պատմ.-հնագիտության ինստիտուտում 1925 թ. 14/XII հետևյալ վերնագրով՝ К вопросу о местоположении монастыря Медной руды):

[71] Այս տեղեկությունը ինձ հայտնել է **Ս. Տեր-Ավետիսյանը**, որը այցելել է Ոսկեպար 1926 թ. աշնանային ճամփորդության ժամանակ:

այդ քարայրների մեջ, կան բազմաթիվ հին գրքեր, և դրանց մոտ բարձրանալու համար[68] մարդկանց համար ճանապարհ չկա, ուստի և դրանք անօգտագործելի են[69]:

ԳԼՈՒԽ Զ.

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՑ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ» ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳԻՏԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» ինքնությունը երևան բերելը հնարավոր է տարբեր ճանապարհներով:

Նպատակին հասնելու համար առաջին հերթին պետք է նկատի ունենալ հենց այս վարդապետների թղթերը՝ ուղղված Գրիգոր Տղային, որ պետք է գրված լինեն Հաղբատում 1184-1185 թվականներին[1]*: Նրանցում հիշատակված են՝*

«Բասիլ *եպիսկոպոս որ յարևելս հիւսիսոյ. վարդապետ,* Գրիգոր Սանահնին, և Հայր Յոհաննես. *վարդապետք մայրաքաղաքիս Հաղբատայ՝* Իգնատիոս, Պետրոս, Վարդան և Դաւիթ. Խաչատուր *վարդապետ Հաղարծնին.* Մխիթար *վարդապետ Խոռակերտայ. և միւս* Մխիթար *վարդապետ Գետկայ. և այլք աշակերտեալք ամենեքեան սրբոց կտակարանաց»*[2]*:*

Կասկածից դուրս է, որ այս տեղեկությունը վերջնակետ պետք է ընդունել «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» ինքնությունն ի հայտ բերելու համար:

[1] Քանի որ 1184-1185 թվականների նամականիում հիշատակված Մխիթար Գոշը «Գետիկցի» կարող էր կոչվել հին Գետիկում բնակություն հաստատելու պատճառով, որը տեղի է ունեցել Թամարի թագադրումից (1184) հետո, մյուս կողմից նրանում հիշատակված Բասիլ եպիսկոպոսը 1180 թվականի Հաղբատի արձանագրության մեջ (**Յովհ. Որիմեցի**, 5, = **Երզնկեան**, 33 = **Կոստանեանց**, 33) դեռևս որպես եպիսկոպոս չի երևում, իսկ 1185 թ. արձանագրության մեջ (**Յովհ. Որիմեցի**, 8 = **Երզնկեան**, 21, **Կոստանեանց,** 36) նա արդեն հիշատակված է որպես արքեպիսկոպոս, հետևաբար, նամակը գրելու թվականը պետք է սահմանափակվի terminus a quo 1184 թվականով և terminus ad quem 1185 թվականով: **Ներսես Ակինյանը** (Մատ. հետազ., 46) սա թվագրում է 1080 թվականով, թեև հարցական նշան է դնում: **Մաղաքիա Օրմանյանը** (Ազգապատում, էջ 1525 [§ 1043]) «հյուսիսային եպիսկոպոս»-ին անեցի է համարում, բայց քանի որ նամականին արևելյան եպիսկոպոս»-ին անեցի է համարում, բայց քանի որ նամականին կազմելու գործում միայն «հյուսիսային կողմանց» հովիտների ներկայացուցիչներն են մասնակցել, իսկ Անիի և Շիրակի կողմերից՝ ոչ ոք, այդ իսկ պատճառով էլ Անիի քահանայապետի մասին այստեղ խոսք լինել չի կարող: Եվ **Մ. Օրմանյանի** սխալը, մեր կարծիքով, առաջացած պետք է լինի այն պատճառով, որ ԺԲ. դարի 80-ական թվականներին Անիում հայտնի է եղել մեկ այլ Բասիլ կամ Բասիլիոս «Բասիլիոս արքեպիսկոպոս թագաւորանիստ քաղաքին Անւոյ», տե՛ս. Թուղթ ընդհ., 274:

[2] Թուղթ ընդհանրական, էջմիածնի հրատարակություն, էջ 427, Երուսաղեմի, 308 = **Տաշեան,** Յուցակ, 950: Այս տեղի մասին հմմտ. **Մ. Օրմանյանի** մեկնաբանությունը (Ազգապատում, էջ 1461-1462 [§ 1004]):

Ընդհանրապես «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» ինքնության պարզումը կարելի է կատարել հետևյալ երեք աղբյուրներով՝

1) ԺԱ-ԺԳ. դարերի հայ և օտար պատմիչների երկերով, 2) այլևայլ հավաքածուների ձեռագրերում տեղ գտած նյութերով, մասնավորապես՝ հիշատակարաններով, 3) տարբեր վանքերի պատերին արված փորագրություններով և մեզ հասած արձանագրություններով:

Ա. Պատմիչներից նախ և առաջ նշանակալի է ԺԲ. դարի առաջին կեսի գործիչ Մատթեոս Ուռհայեցին կամ Եդեսացին, որը նկարագրել է 952-1136 թվականների[3] դեպքերը: Մեզ համար Մատթեոսի աշխատության մի մասն է օգտակար, որտեղ նա խոսում է հայ այն գրողների մասին, ովքեր փառավորեցին Անիի թագավոր Գագիկ Բ.-ի (1042-1044) անունը, եւ ովքեր հանդիսացան հայոց երկրի («լուսաւորք»)[4]: Նրանց շարքում հեղինակը հիշատակում է «Դէոսկորոս Սանահնեցուն, Անանէ Հաղպատացուն <տրբրկ.՝ Խաբատացուն>[5] Քարհատի որդի Յակոբին»[6]:

Ժամանակագրական առումով Մատթեոս Ուռհայեցին *հաջորդում է* Սամուել Անեցուն, *ԺԲ. դարի գործիչ, Հաղբատի դպրոցի ներկայացուցիչ և Հաղբատում ուսանած՝ որին պատկանում է ժամանակագրական բնույթի մի երկ՝ աշխարհի ստեղծումից մինչև 1179 թվականը[7]: Այս աշխատության մեջ հեղինակը խոսում է Հովհաննես Սարկավագի, նրա մտերիմների և աշակերտների մասին, որոնց թվում հիշատակում է նաև ինքն իրեն[8]:*

Մյուս հեղինակները՝ Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին և Մխիթար Այրիվանեցին ԺԳ. դարի գործիչներ էին:

Վարդան Արևելցուն *է պատկանում աշխարհի պատմությունը՝ նկարագրված սկզբից մինչև 1267 թվականը[9]: Սա նույնպես, Սա-*

[3] **Մատթէոս Ուռհայեցի**, Պատմութիւն, Երուսաղէմ, 1869, **Մատթէոս Ուռհայեցի**. ժամանակագրութիւն, Բ. տպ. [հրատ. **Մամբրէ Մելիք-Ադամեան և Ներսէս Տէր-Միքայէլեան**], Վաղ., 1898: Մենք օգտվում ենք երկրորդ հրատարակությունից (նշում ենք՝ **Մատթէոս Ուռհայեցի**):

[4] **Մատթէոս Ուռհայեցի**, 215:

[5] Պետք է լինի (Սանահնեցի). տե՛ս վերը՝ Գլ Ե., ծնթ. 7:

[6] **Մատթէոս Ուռհայեցի**, 215:

[7] **Սամուէլ քահանայի Անեցւոյ** «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», հրատ. **Արշակ Տէր-Միքէլեանի**, Վաղ., 1893 (նշում ենք՝ **Սամուէլ**):

[8] Նույն տեղում, 128:

[9] Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ «Պատմութիւն Տիեզերական», ի լոյս ընծայեաց **Մկրտիչ Էմին**, Մոսկվա, 1861, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վնտ., 1862: Մենք օգտվում ենք երկրորդ հրատարակությունից (նշում ենք՝ **Վարդան**):

մուելի նման, խոսում է նույն Հովհաննես Սարկավագի, նրա մտերիմների ու աշակերտների, նաև Մխիթար Գոշի և ԺԳ. դարի մի քանի այլ գործիչների մասին[10]:

Կիրակոս Գանձակեցուն *է պատկանում Հայաստանի պատմությունը «Հայոց դարձ»-ից մինչև 1267 թվականը[11]: Նրա երկը բավականին ուշագրավ է այն առումով, որ մանրամասն տեղեկություններ է հաղորդում ԺԲ-ԺԳ. դարերի հայ վարդապետների, նրանց թվում՝ «յԱրևելս արք անուանիք և գիտնականք, լուսաւորիչք եկեղեցւոյ) մասին, որոնք էին՝ Անանիա Սանահնեցին և գանձակեցիների խումբ՝ Հովհաննես Սարկավագը, Ալավկա որդի Դավիթը և Թոքակերի որդի Գրիգորը[12], ինչպես նաև Լոռիում մոտավորապես 1205 թվականին տեղի ունեցած ժողովի մասնակիցների մասին գրվածքում նրա կողմից հիշատակված են՝ «վարդապետք երեւելիք՝ Մխիթար, որ Գոշն կոչիւր, շինող վանացն Գետկայ, այր իմաստուն եւ հեզ, եւ վարդապետական ուսմամբ հռչակեալ, Իգնատիոս, Վարդան, Դաւիթ Քոբայրեցին ի Հաղբատայ, Յովհաննէս, հայր Սանահնին, որ էր զկնի մահուան վարդապետին Գրիգորոյ, զոր Տուտայ որդին կոչէին»[13]:*

Վերջում նույն հեղինակը համեմատաբար ավելի մանրամասն խոսում է Մխիթար Գոշի և նրա աշակերտների մասին[14]:

Մխիթար Այրիվանեցուն *է պատկանում «Աշխարհի ստեղծումից ի վեր» ժամանակագրությունը, որն ընդգրկում է մինչև 1289 թվականը[15]: Նա հիշատակել է Անանիա (Սանահնեցուն), Հովհաննես Սարկավագին, Սամուել [Անեցուն], Մխիթար Գոշին, Վանականին իր դպրոցով[16]: Համառոտակի պատմում է Հովհաննես Սարկավագի և*

[10] **Վարդան**, 121-122, 146-147 և շրնկ.:

[11] Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, ի լոյս ընծայեաց **Ոսկան Տէր-Գևորգեան Յովհաննիսեանց Երևանցի**, Մոսկվա, 1858: Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ Համառօտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ մինչև ցաւուրս իւր լուսաբանեալ, Վնտ., 1865: Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ [ՂՄ 3], Տփղ., 1910 (արտատպված է 1858 թվականի մոսկովյան հրատարակությունից): Մենք օգտվում ենք երրորդ հրատարակությունից (նշում ենք՝ **Կիրակոս**):

[12] **Կիրակոս**, 104-108:

[13] Նույն տեղում:

[14] Նույն տեղում, 195-211:

[15] **Մխիթարայ Այրիվանեցւոյ** Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց **Մ. Էմին**, Մոսկվա, 1860: Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծայեաց **Ք. Պատկանեան**, ՍՊբ., 1867: Երկրորդ հրատարակությունը ձեռքի տակ չունենալու պատճառով օգտվում ենք առաջինից, նշում ենք՝ **Մխիթար**), բացի մեկ դեպքից, երբ հիմնվում ենք երկրորդ հրատարակության վրա (տե՛ս այս գրքի երկրորդ մասի է. գլուխը):

[16] **Մխիթար**, 23:

Դավիթ Ալավկա որդու մասին[17] *ու մանրամասն տեղեկություններ է հաղորդում առաջինի գրական գործունեության վերաբերյալ*[18]*:*

«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» վերաբերյալ տեղեկություններ կարելի է գտնել նաև հետագա շրջանի հայ պատմագիրների աշխատություններում: Բայց քանի որ վերջիններս նախորդ շրջանի պատմիչների համեմատ էապես որևէ նոր բան չեն հաղորդում, նույնիսկ շատ դեպքերում կրկնում են նրանց, այդ իսկ պատճառով այս պատմիչների նյութերից մենք հազվադեպ ենք օգտվում, այն էլ այնքանով, որքանով որ տվյալ նյութի օգտագործումը թույլատրելի է մեթոդաբանական առումով:

Ճիշտ է՝ հայկական աղբյուրների համեմատ վրացական աղբյուրները «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետներին» վերաբերող որոշակի տեղեկություն չեն տալիս. սակայն մեկ-երկու բնութագրություններ, որ գտնում ենք Դավիթ Շինարարի և Թամար թագուհու առաջին պատմիչների երկերում, բավականին ուշագրավ են և նշանակալի հենց այս «վարդապետների» դավանաբանական-գաղափարական հայացքները պարզաբանելու համար:

Պատմիչներն անդրադառնում են հայ-վրացական եկեղեցական այն բանավեճերին, որոնք տեղի են ունեցել Թիֆլիսում, հիշյալ թագավորների նախաձեռնությամբ: Մեկը՝ ԺԲ. դարի քսանական թվականներին՝ 1123-1125[19]*, մյուսը՝ 1197-1205 թթ.*[20]*: Այս երկու հեղինակները հայ ներկայացուցիչներին բնութագրում են որպես վրացիների հակառակորդների: Այսպես, Դավիթ Շինարարի պատմիչը նշում է, թե ինչպես «Մի օր արքայի (Դավթի) առաջ հավաքվեցին ցեղակիցները՝ հայոց բազմաթիվ նենգ եպիսկոպոսներ և նրանց վանքերի առաջնորդներ,* ովքեր պարծենում էին, թե ինչպես են հասել ուսման և գիտության բարձունքներին»[21]*, իսկ Թամարի առաջին պատմիչը նշում է. Զաքարե ամիրսպասալարը «մարդիկ ուղարկեց նրանց կաթողիկոսի մոտ», <հայերի> բոլոր եպիսկոպոսները և վարդապետները և գիտնականները*[22]*» և Վանի կաթողիկոսը*[23] *արձագանքեցին այս վկայությանը, որոնք գնացել էին բանավեճին մասնակցելու նպատակով*[24]*: Բանավեճը տեղի է ունեցել վրաց Իոանե կաթողիկոսի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ, Թամար թագուհու և Դավիթ Սոսլանի ներկայությամբ, քանզի պատմիչը նշում է.*

«Երբ [կաթողիկոս Իոանեն] ներս մտավ, թագավորները ոտքի կանգնեցին և պատիվ տվեցին, նմանապես՝ հայոց քահանաները և վարդապետները»[25]*: Ինչպես տեսնում ենք, Դավիթ Շինարարի ժամանակ կայացած բանավեճը համընկնում է Հովհաննես Սարկավագի ժամանակաշրջանին, Թամար թագուհու ժամանակի բանավեճը՝ Մխիթար Գոշի ժամանակաշրջանին:*

Հետագա շրջանի վրացական մեկ այլ աղբյուր, որը «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» խմբի որոշ ներկայացուցիչների (օրինակ՝ Վարդանի, [Մխիթար Գոշի] վերաբերյալ տեղեկություններ է տալիս, Անտոն կաթողիկոսի «Էրիստիկա»-ն է, մասնավորապես այդ երկի Դ. գլուխը, որի վերնագիրն է «Ահա կաթոլիկ եկեղեցու դարերի հայ պատմագիրների երկերին, սկզբնաղբյուրի նշանակությունն չի տրվում, նրանից մենք օգտվում ենք պայմանականորեն:

Բ. Ձեռագիր նյութերը *մեր կողմից օգտագործված են այնքանով, որքանով հնարավոր էր մեր պայմաններում: Այս իմաստով մեր մենագրության հիմքում ընկած են անձամբ մեր կողմից քննված՝ Էջմիածնի Մատենադարանի նոր ձեռագիր հավաքածուների տեղեկությունները, մասամբ Միութենական գիտությունների Ակադեմիայի Ասիական Թանգարանի, Լենինգրադի, Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի գրադարանի (վերջինը, մեր խնդրանքով, մեզ է հանձնել* Գարեգին Հովսեփյանը*)*[27]*, որոնք մեկ առ մեկ նշված են համապա-*

[17] **Նույն տեղում**, 60, 61:

[18] Տե՛ս **Ք. Պատկանեանի** հրատ., 33:

[19] Հմմտ. պրոֆ. **Կոռն. Կեկելիձե**, Վրաց գրականության պատմություն, I, էջ 289:

[20] Հմմտ. **Л. Меликсет-Беков,** О междоусобице в Тифлисе в 1197 году по поводу Кривой пасхи.- ИЗВ. КИАИ, т. III, стр. 49-60, **Իվ. Ջավախիշվիլի**, Վրաց ժողովրդի պատմություն, I-II, 610:

[21] **Ք. Ց.** Թաղ., 325 = **Բրոսէ**, 258: Աննա թագուհու տարբերակով, որը պատկանում է պրոֆ. **Իվ. Ջավախիշվիլուն**, տետր, թուղթ 3r (էջ 5): Վերջինից օգտվելու թույլտվության համար պրոֆ. **Իվ. Ջավախիշվիլուն** հայտնում եմ սրտագին շնորհակալություն:

[22] Ք.Ց., Թաղ., 482-483 = **Բրոսէ**, 313:

[23] Այսինքն՝ Աղթամարի. թե հատկապես Թամար թագուհու ժամանակ ով էր Աղթամարի կաթողիկոսը, եղած աղբյուրներով, ցավոք, չի պարզվում. տե՛ս **Մեսրոպ Աքսուդեանց**, Հաւաքարան անուանց կաթուղիկոսաց [Աղթամարայ], էջմ., 1916, **Ներսէս Ակինեան**, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ. Պատմական ուսումնասիրութիւն [ԱՄ ՁՁ.], Վն., 1920:

[24] **Ք.Ց.**, Թաղ., 483 = **Բրոսէ**, 313:

[25] **Ք.Ց.**, Թաղ., 483 = **Բրոսէ**, 313:

[26] **Էրիստիկա**, էջ 107 և հջրդ., օրինակ 111:

[27] Ինչպես այս նյութերի մատուցման, այնպես էլ բազմաթիվ այլ օգնությունների ցու-

տասխան ծանոթագրություններում: Քանի որ բոլոր կարևոր նյութերի սպառումը ձեռագրերի հետ անմիջականորեն ծանոթանալու ճանապարհով անհնար էր, այդ պատճառով մենք հաճախ օգտվում ենք նաև զանազան հավաքածուների վերաբերյալ կազմված քարտագրացուցակներից, օրինակ՝ Էջմիածնի՝ ըստ Ա. Կարինյանի, *Վիեննայի Մխիթարյան միաբանության՝ ըստ* Հակոբ Տաշյանի, *Հռոմի Վատիկանի՝ ըստ* Հ. Միսքճյանի *և այլոց, որոնք նույնպես հաստատագրված են համապատասխան տեղերում:*

«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» մեկ առ մեկ թվարկումը հենց այս վարդապետների՝ 1184-1185 թվականների նամականու և ԺԱ-ԺԳ. դարերի պատմիչների գործերից բացի, արձանագրություններում ոչ մի տեղ գրեթե չի հանդիպում: Այս առումով, անկասկած, անգնահատելի են վերոբերյալ նամականին և Կիրակոս Գանձակեցու *«Պատմության» տեղեկությունները, որոնց հետ թերևս համեմատվի Հաղբատում գրված Եփրեմ Ասորու մի երկի (Evangelii concordantis expositio, facta a S. Ephraemo)*[28] *հիշատակարանը, որտեղ 644 = 1195 թվականի տակ, ի միջի այլոց, գրված է.*

«[Գրեցաւ] գիրքս այս ի գաւառիս Զորոյգետ, ի վանքս Հաղբատ... յեպիսկոպոսութեան տեառն Յովհաննիսի *և ի մահուան տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի, ի վարդապետութեանն* Դաւթի, Պետրոսի, Իգնատիոսի, *և զկնի մահուան* Վարդանայ *վարդապետի»*[29]*:*

Գ. ԺԱ-ԺԳ. դարերի արձանագրությունները, *որոնց մեջ տեղեկություններ են գտնվում «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» խմբակի այս կամ այն ներկայացուցչի մասին, գրված են տարբեր վանքերի պատերին, որոնց ցուցակը բերեցինք նախորդ գլխում*[30]*: Այս արձանագրությունները կարևորագույն նշանակություն ունեն հատկապես ժամանակագրական բնույթի հարցեր պարզաբանելու համար: Դրանք հավաքվել են տարբեր ժամանակներում, տարբեր անձանց կողմից, որոնց ի մի բերելու փորձը ներկայացված է* Կ. Կոստանյանցի *կազմած ժողովածուի մեջ*[31]*:*

ցաբերելու համար՝ 1927 թ. փետրվարին Էջմիածնում եղածս ժամանակ, մեծարգո **Գարեգին**ին ի սրտե շնորհակալություն եմ հայտնում:

[28] Հմմտ. **Գար. Զ[արբհանալեան]**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889, էջ 447-449:

[29] **Ղ. Ալիշան**, Հայապատում, Բ., 383, հմմտ. հենց այսպիսի տեղեկություններ են **Հովսեփ Արղության-Երկայնաբազուկի** հիշատակարանում (**նույն տեղում**, Ա., 102):

[30] Տե՛ս վերը՝ Գլ. Ե., ծնթ. 42, 51-56:

[31] Վիմական տարեգիր. Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց կազմեաց **Կ. Կոստանեանց** [BAG II], Cnճ., 1913:

* * *

«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» ինքնությունը երևան հանելու համար կարելի է գործադրել նաև այլ միջոցներ:

Մեկն այն, որ համապատասխան վանքերը, հատկապես Հաղբատի պանթեոններն ունեն իրենց լեզուն[32]*: Եվ այդ լեզուն, հայտնաբերված գերեզմանների արձանագրությունների միջոցով, հիմք է տալիս բացահայտելու այս կամ այն գրողի՝ այս կամ այն խմբակին պատկանելը:*

Դրանից բացի, չի կարելի մասամբ հաշվի չառնել հին ճանապարհորդների տպավորությունները, ինչպիսիք են, օրինակ՝ Թովմաս Նուրիջանյան Վանանդեցու՝ Գողթնի եպիսկոպոսի *(ԺԷ. դ.)՝ բանաստեղծությամբ արտահայտված «Ակնարկ Հայաստանի սրբավայրերի»-նը, որտեղ Հաղբատի վեհապանծ պանթեոնի նկարագրությունը տրված է հետևյալ խոսքերով՝*

Ի նահանգէ յԱրարատեան...
Անցեալ յԱլանս բարեհամբաւ
Ի Շամախի կեցեալ բարեաւ:
Անտի յուսով մեծաւ դիմեալ,
Ի սուրբ յուխտն Հաղբատ հասեալ,
Ուր են շիրիմքըն հոչակեալ,
Սքանչելի արուեստքն լեալ:
Վարդապետաց անցեալ կանխաւ,
Ստեփաննոսի՝ որ սպանաւ,
Սարկաւագայ՝ որ անդ եղաւ
Եւ Յովհաննէս անուանեցաւ:
Վարդան մեկնիչըն քաջաբան,
Ղուկաս քարոզըն տէրունեան,
Ռուսինոան անմարմնական
Ընդ նոսա եղեալ կայ ի տապան[33]*...*



[32] Մասնավորապես Հաղբատի պանթեոնի նկարագրությունը տե՛ս **Մինաս Բժշկեանց**, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 80 (§ 126), **Յովհ. Դրիմեցի** 40-41 (**Крымский,** 40-41), **Երզնկեան**, 51-54, **Աղանեանց**, Հնից-նորից, 9-10, **Լալայեան**, 408-409:

[33] **Թովմայի վարդապետի Վանանդեցւոյ**, ի խնդրոյ Սահակայ և Ասլանի՝ Բան չափեալ ի սրբազան տեղիս աշխարհին Հայոց.- «Ճռաքաղ», 1860 թ., տետր Ը. և Թ., էջ 121-122:

ԳԼՈՒԽ Է.

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՑ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ» ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ

ԺԱ-ԺԳ. դարերում «Հիւսիսային կողմանք»-ն այն ոստանն էր, որտեղ հայ եկեղեցական-ջատագովական գրականությունը քաղկեդոնական վարդապետների դեմ պայքարում հասավ զարգացման որոշակի աստիճանի, որը հետագայում՝ ԺԴ-ԺԵ. դդ., ավելի համարձակ և ուժգին գլուխ բարձրացրեց Սյունիքում: Սակայն «Հյուսիսային կողմանց» վարդապետների գործունեությունը հենվեց այն գաղափարախոսությանը, որը նրանց էր հասել անցյալ դարերից:

Մեր նպատակը «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» ինքնությունը ի հայտ բերելն է: Սակայն մինչ հարցի քննարկմանն անցնելը, անհրաժեշտ է, որ ընդհանուր գծերով բնութագրենք այն գաղափարախոսությունը, որը հիմք դարձավ նրանց գիտագրական ամբողջ գործունեության համար:

Ինքնին հասկանալի է, որ «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» գաղափարախոսության հիմքում պետք է ընկներ մոնոֆիզիտներին բնորոշ այն յուրահատուկ կարծիքը, մի փոքր տարօրինակ դիոֆիզիտների գաղափարներով, որը ծագել, զարգացել ու վերջնականապես ձևավորվել էր Կյուրեղ Ալեքսանդրացու *Epistula 46 ad Succensum, episcompum-ում առաջ քաշած դրույթի* ετὰ... τὴν ἕνωσιν μία φύσις νοεῖται τοῦ λόγου σεσαρκωμένη *հիման վրա*[1]*, տիեզերական Դ. (քաղկեդոնական) ժողովից հետո, մասնավորապես՝ Զ., Է. և Ը. դարերի սկզբին, Զ. դարի սկզբին՝ 506 թվականին, Բաբկեն կաթողիկոսի ղեկավարությամբ տեղի ունեցած Դվինի ժողովում*[2]*, Է. դարի սկզբին (ըստ* Իվ. Ջավախիշվիլու՝ *607-ին, իսկ ըստ*

[1] **Migne**, PG., t. 77, col. 240a-241a. ինչպես այս, այնպես էլ ստորև 24-րդ ծանոթագրությունում նշված հրատարակությունը Թիֆլիսում չունենալու պատճառով, նրանից անհրաժեշտ տեղեկությունները մեր խնդրանքով Լենինգրադում արտագրեց և մեզ ուղարկեց պրոֆ. Գր. Ծերեթելին, որին հայտնում եմ խորին շնորհակալություն:

[2] **Կ[արապետ]** վ., Հայոց եկեղեցւոյ առաջին մասնակցութիւնը դաւանաբանական վէճերի մէջ և Բաբգէն կաթուղիկոս.- Ա, 1898, էջ 431-436, 434, **Երուանդ** վ., Բաբգէն կաթուղիկոսի ժողովի թուականը և տեղը.- Ա, 1908, էջ 690-707, նույնի՝ Հայոց եկեղեցու յարաբերությունները Ասորւոց եկեղեցիների հետ, էջմ., 1908, էջ 70,

Ն. Ակինեան *ի՝ 608-609 թվականին), հայ-վրացական եկեղեցական պառակտման շուրջ ստեղծված բանավեճի ժամանակ*[3]*, և Ը. դարի սկզբին՝ 726 թ. Մանազկերտում տեղի ունեցած ժողովում*[4]*:*

Հայերի՝ քրիստոսագիտությանը վերաբերող զանազան կարծիքներ գոյություն ունեն: Սակայն ինչպիսի տարբերություն լինի կարծիքների միջև, մի բան միանգամայն պարզ է. «Հայոց եկեղեցին,- եթե կրկնենք Երվանդ Տեր-Մինասյանցին,- *լիակատար կերպով ընդունեց Կիւրեղ Աղէքսանդրացու քրիստոսագիտությունը, բայց նա միևնույն կետի վրա անշարժ կանգնած չմնաց, այլ անցկացրեց իր մեջ միաբնութեան այն ամբողջ զարգացումը, որ սկսել էր Յուլիանոսի և Սևերոսի վիճաբանութեամբ Քրիստոսի մարմնի մասին»*[5]*, թեև հետագայում Մանազկերտի ժողովը վերջնականապես նզովում էր «երկու բնութեան ուսմունքը»: Հենց նա անիծեց «թէ՛ Սևերոսի վարդապետութիւնը» և թէ՛ Յուլիանոս Հալիկառնասցուն»*[6]*: Հակաքաղկեդոնական վարդապետների ուսմունքն արտահայտող կարևոր աշխատություն պետք է համարել Ալեքսանդրիայի պատրիարքի (Ե. դ.)* Տիմոթեոս Էլուրոսի *(Αἴλουρος) կամ* Կուզի «Բան հակաճառութեան ընդդէմ քաղկեդոնեաց»-*ը, որի հայերեն թարգմանությունը, կատարված հունարենից, հայտնաբերվել է և նույնիսկ հրատարակվել*[7]*: «Բան հակաճառութեան» հայկական տարբերակը հրատարակողներ* Կարապետ Տեր-Սկրտչյանի և Երվանդ Տեր-Մինասյանցի *արդարամիտ կարծիքով՝ այս աշխատությունը «մեծ նշանակություն է ունեցել հայ եկեղեցական գրականության տեսանկյունից» և «հայ եկեղեցական գործիչների համար ծառայել է որպես քաղկեդոնական ուսմունքի դեմ պայքարի զենք»*[8]*: Անորոշ է միայն նրա գրու-*

նույնպես 65-69, և այլն, հմմտ. **Л. Меликсет-Беков**, Об источниках древнеармянского права.- Изв. КИАН, т. II, Лнгр., 1927, стр. 155, прим. 2.

[3] Գիրք թղթոց, Տփղ., 1901, էջ 110-195. տե՛ս նաև. **И. Джавахов**, История церковного разрыва между Грузией и Арменией в начале VII.- Изв. АН, 1908, стр. 433-446, 511-536, **Ներսէս Ակինեան**, «Կիւրիոն կաթողիկոս Վրաց» Պատմութիւն հայ-վրացական յարաբերութեանց եօթներորդ դարու մէջ [ԱՄԿ.], Վն., 1910:

[4] **Երուանդ Տէր-Մինասեանց**, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները. նշվ., 173 և հջրդք.:

[5] **Նույն տեղում**, 89:

[6] **Նույն տեղում**, 175-176:

[7] Timotheus Älurus' des Patriarchen von Alexandrian Widerlegung der auf der Synode zu Chalcedon Festgesetzten Lehre. Armenischer Text mit deutschen und armenischen Vorwort... herausgegeben **von Karapet Ter-Mekerttchian** und **Ervand Ter-Minassiantz**, Leipzig, 1908.

[8] **Նույն տեղում**, XXI:

թյան ժամանակը, որը տարբեր հետազոտողների կողմից տարբեր կերպ է սահմանվում, օրինակ, հենց իրենք՝ հրատարակողները, այն համարում են Զ. դ. կեսի հուշարձան[9], Գալուստ Տեր-Մկրտչյանը *համարում է 480-484 թվականների*[10], Ներսես Ակինյանը՝ *548-577 թվականների*[11], *իսկ Ն. Մառը ոչ Ե., Զ.-ի, ոչ էլ Է. կամ Ը. դարերի, այլ հետագա ժամանակաշրջանի*[12]:

Հայկական հողի վրա ծագած գրական հուշարձաններից, որոնք գրեթե պաշտոնական ձեռնարկ էին և հայ աստվածաբանական ու օրենսդրական գրականության հիմք են եղել դարերի ընթացքում, առանձնապես նշանակալից են երեք ժողովածու. 1. «Գիրք թղթոց», 2. «Կնիք հավատոյ», 3. «Կանոնագիրք Հայոց»: Դրանցից առաջին երկուսը պատշաճ կերպով հրատարակված են, իսկ երրորդը՝ անբավարար, թերի:

«Գիրք թղթոց»-ը[13], *ըստ* Մ. Օրմանյանի՝ *«Հայոց հայրապետանոցին մէջ սկսած պաշտօնական հաւաքածոյ մըն է»*[14] *և ընդգրկում է Հայոց եկեղեցու նամակագրությունը ասորի, հույն և վրաց եկեղեցիների հետ հավատի և եկեղեցական ծեսերի վերաբերյալ, ինչպես նաև զանազան հեղինակների սկզբունքային բնույթ ունեցող դավանաբանական-բանավիճային երկերը, սկսած Ե. դարից մինչև Ը. դարը: Ակնհայտ է՝ այն տարբեր ժամանակների գրություններ է պարունակում, քանզի նախնական տեսքով Հայոնի խմբագրության*

[9] **Նույն տեղում**, XVII:

[10] **Գալուստ Տէր-Մկրտչեան,** Տիմոթէոս Կուզի հակաճառութեան հայ թարգմ. ժամանակը և Սուրբ Գրքի երրորդ կամ «նորաբեր» հայ թարգմանութիւնը.- Ա, 1908, էջ 564-589, 707-708, նույնի, Հայ մատենագրութեան հնագոյն թուականները.- «Շողակաթ», Ա., Վաղ., 1913, էջ 154-159: Սրան դեմ է **Եր[ուանդ] Տէր-Մինասեանցը**. տե՛ս «Կնիք հաւատոյ» գրքի գրախոսությունը.- «Բանբեր էջմիածնի Գիտական Ինստիտուտի», Ա-Բ., էջմ., 1921-1922, էջ 262:

[11] **Ներսես Ակինեան**, Տիմոթէոս Կուզ հայ մատենագրութեան մեջ [ԱՄ ՕԲ.], Վն., 1909, էջ 1-60:

[12] **Н. М[арр]**, Сирийская версия Возражений Тимофея Элура против Халкедонского собора.- ХВ, II, 1913, стр. 405-406, հմմտ. Изв. АН.1914, стр. 457: Տիմոթէոս Կուզի վերաբերյալ հայ գրականության մեջ տե՛ս նաև՝ **Հրաչեայ Աճառեան**, Տիմոթէոս Կուզ և Ս. Գրքի նորաբեր թարգմանութիւնը.- «Շողակաթ», Ա., էջ 1-22. հմմտ. *նույնի՝* Հայերէն նոր բառեր Տիմոթէոս Կուզի հակաճառութեան մէջ [ԱՄ ՕԸ.], էջ 61-106:

[13] Գիրք թղթոց, Տփղ. 1901: Բաց թողնված հատվածները հրատարակված են լրացումներով [**Յ. Գիւլխանդանեան**], «Գիրք թղթոց»-ի պակասները և նրանից դուրս մնացած թղթեր.- Ա, 1902, էջ 560-569, 748-753:

[14] **Մ. Օրմանեան**, Ազգապատում, էջ 608 (§ 407): Մոտավորապես նման կարծիքի է նաև պրոֆ. **Իվ. Ջավախիշվիլին** (Վրաց հին պատմական գրականություն, երկրոդ հրատ., Թիֆ., 1921, էջ 59-60):

հարցը պարզաբանված չէ, այսպես, հենց այդ ժողովածուի գիտական խմբագիր-հրատարակիչները (Մ. Օրմանյան, Գ. Աղանյա՞նց) այն կարծես Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի (մինչև 728 թիվը) գործն էին համարում[15]. *ըստ Մ. Օրմանյանի՝ նույն Հովհաննեսին է վերագրվում*[16], *ըստ Ներսես Ակինյանի՝ Մովսես եպիսկոպոս Յուրտավեցուն (Է. դ. սկիզբ)*[17], *ըստ պրոֆ.* Ն. Ադոնցի՝ *Կոմիտաս կաթողիկոսին (մինչև 682 թվական)*[18], *այս կարծիքին է նաև Կարապետ Տեր-Մկրտչյանը*[19]: *Եվ այսպես՝ ոմանք Ը. դարի սկզբին են վերագրում, ոմանք՝ Է. դարի սկզբին*[20]:

«Կնիք հաւատոյ»[21]. *սա այն ձեռնարկներից է, որոնք միայն դավանաբանական-բանավիճային բնույթի տեղեկություններ են պարունակում և հայտնի են եղել տարբեր վերնագրերով: Օրինակ,* Ասողիկը *վկայում է, թե «Մայրագոմեցին երեք գիրք գրեց, բայց իր անունով չտոորագրեց՝ ժողովրդի կողմից ընդունված չլինելու պատճառով: Մեկի վերնագիրը «Խրատ վարուց» է, մյուսինը՝ «Հաւատ-արմատ», իսկ երրորդինը՝ «Նոյեմակ»*[22]: *Ինչպես ասված է այս ժողովածուի ենթավերնագրում, այն «յաւուրս Կոմիտաս կաթուղիկոսի համահաւաքեալ»*[23] *է, հետևաբար՝ 618-628 թվականների միջև է, որը հաստատվում է նաև բյուզանդական մատենագրության տեղեկություններով.* βιβλίων τὸ ὄνομα ἐστὶν Ἀμαρτανάκ κατὰ τὴν Ἀρμενίων διάλεκτον *այս ժողովածուում ասված է Կոմիտաս կաթողիկոսի վերաբերյալ հայտնի զրույց Naratio de rebus Armeniae-ում*[24], *իսկ Ἀμαρτανάκ Կարապետ Տեր-Մկրտչյանի կարծիքով*[25], *Հա-*

[15] Գիրք թղթոց, էջ Ե.:

[16] **Մ. Օրմանեան**, Ազգապատում, էջ 833-834 (§ 569-570):

[17] **Ն. Ակինեան**, Կիւրիոն կաթողիկոս Վրաց, 37-44:

[18] **Н. Адонц,** Ампелий, епископ Херсонский (К критике армянской Книги посланий).- ХВ, II, 175-176.

[19] Կնիք հաւատոյ, հրատ. **Կարապետ եպ.**, էջ XXV-XXVI:

[20] Անճամբ ավելի ճշմարտացի ենք համարում **Ն. Ադոնցի** (և **Կարապետ Տէր-Մկրտչյանի**) կարծիքը, որը հիմնավորված է «Գիրք թղթոց»-ում գոյություն ունեցող 527 = 1078 թվականի հիշատակարանով. վերջինս հետևում է Կոմիտաս Կաթողիկոսի (618-628) «Վասն հաւատոյ» գրվածքին, որտեղ ասված է, որ «աւրինակ գրոցս՝ որ լեալ էր տէր Գրիգորի վկայասիրին՝ ցայս վայր էր». տե՛ս Գիրք թղթոց, 219:

[21] Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ յուղղափառ և ս. հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց, յաւուրս Կոմիտաս կաթուղիկոսի համահաւաքեալ, հրատ. **Կարապետ** եպ., էջմ., 1914, հմմտ. **Երվանդ Տէր-Մինասյանց**, Գրախոսություն այս գրքի.- «Բանբեր էջմիածնի Գիտական Ինստիտուտի», Ա-Բ., էջ 262-279:

[22] **Ասողիկ**, 87:

[23] Կնիք հաւատոյ, 3:

[24] **Migne**, PG, t. 132, col 1252a.

[25] Կնիք հաւատոյ, XVI, XXIV, XXVI, XXX, XXXI:

ւատարմատ, վերջին հաշվով՝ Արմատ-Հաւատոյ-ի աղաւաղված ձևը պետք է լինի[26]*:*

Կանոնագիրքը[27] *հայոց եկեղեցու համար եղել է նոյնը,- իրավացիորեն նշում է Ա. Ղևոնդյանը*[28]*,- ինչ որ Հռոմի եկեղեցու համար Corpus iuris canonici-ն»: Այն հակաքաղկեդոնական եկեղեցու օրենսդրության աղբյուրներից միակն է, որի առաջին խմբագրությունը, ինչպես կարծում են, պետք է սկզբնավորված լիներ կաթողիկոս Օձնեցու (717-728) ժամանակ*[29]*, չնայած գոյություն ունի նաև կարծիք, որով այս ժողովածուի առաջին համախմբան փորձը սահմանափակվում է Պարտավի 768 թվականի ժողովից ոչ շուտ կամ, թերևս, Թ-Ժ. դարերով*[30]*:*

Այսպես ուրեմն, Տիմոթեոս Կուզի *«Բան հակաճառութեան ընդդեմ քաղկեդոնականութեան...»-ը (հայկական տարբերակում) և որպես պաշտոնական ձեռնարկ հայտնի «Գիրք թղթոցը», «Կնիք հաւատոյ»-ն և «Կանոնագիրք»-ը, որոնց ծագումը հայ մատենագրության մեջ Ը. դարից չի անցնում, այն հիմնական աղբյուրներն են, որոնք, որպես հակաքաղկեդոնականություն, հիմք դարձան հաջորդ դարերի հայ դավանաբանական-բանավիճային գրականության համար:*

Նույն միտումը, վերոհիշյալ ժողովածուների և նրանց մեջ ներառված տարբեր հեղինակների ստեղծագործություններին զուգա-

[26] Այս կարգի ժողովածուներ հայտնի են եղել նաև հետագայում, որոնցից մեկից օգտվել է **Անտոն Կաթողիկոսը**՝ «էրիստիկա»-ն կազմելու ժամանակ: Օրինակ մի տեղ **Անտոնը** հիշատակում է ոմն «Հակոբ Կեղծ-վարդապետի հայերից», որպես «Վէմ հաւատու»-ն կազմողի, «էրիստիկա», 563, բայց այս «Վէմհաւատու»-ն վրացերեն տառադարձությունն է հայերեն «Վէմ հաւատոյ»-ի:

[27] Ինչպես հարկն է իրատարակված չէ, Վիեննայի Մխիթարյան միաբանությունը նպատակադրվել է իրականացնել նրա հրատարակությունը **Համազասպ Ոսկյանի** խմբագրությամբ (ՀԱ, 1923, էջ 480): Ժողովածուի ոչ լրիվ հրատարակությունը տե՛ս Կանոն/ա/գիրք Հայոց, խմբ/ագր/եց **Արսէն Ղլտճեան** [ՂՄ 12], Տփղ., 1914, Լատ. **Ang. Mai**, Scriptorum veterum nova collectio e Vaticanis codicibus edita, t. X, pars 2, Romae 1838, pp. 269-316 [Ecclesiae Armenicae canones selecti], **Ներսէս Մելիք-Թանգեան**, Հայոց եկեղեցական իրաւունքը, Ա. գիրք. Ներածութիւն և աղբիւրներ, Շուշի, 1903, հետազոտություն. **С. Тигранян,** Древне-армянская "Книга канонов". Очерки описания и исследования памятника. I, Описательная часть [Зап. АН, VIII сер. по ИФО, т. XIII, N 3], Пгр., 1918.

[28] **Արսեն Ղլտճեան**, Հայոց հին իրաւունքը, Ալէքսանդրապոլ, 1913, էջ 38:

[29] **Սիրական Տիգրանեան**, Կանոնագիրքը և մեր կանոնական իրաւունքը.- Ա, 1902, էջ 124-125, նույնի՝ Հայոց իրավունքի պատմության ներածություն, Յերեվան, 1924, էջ 135-178, **С. Тигранян**, "Судебная книга" Мхитара и "Книга канонов",– Изв. КИАИ, т. III, стр. 61, **Խաչիկ Սամուէլեան**, Մխիթար Գօշի Դատաստանագիրքը և հայոց հին քաղաքացիական իրաւունքը [ՍՄ ԿԳ.], Վն., 1911, էջ 81, **Մ. Օրմանեան**, Ազգապատում, էջ 831-834 (§§ 567-568), **Н. Адонц,** Армянская литература, цит. изд. стлб. 648:

[30] **Արսէն Ղլտճեան**, Հայոց հին իրաւունքը, Ալէքսանդրապոլ, 1913, 36-38:

հետ, զգացվում է նաև հայ գրականության մեջ հայտնի և բազմաթիվ ականավոր այլ գիտնական գրողների երկերում, ինչպիսիք են՝ Ե. դարում Հովհաննես Մանդակունի կաթողիկոսը[31]*, Զ. դարում՝ Սյունյաց Պետրոս եպիսկոպոսը*[32]*, Զ-Է. դարերում՝ Վրթանես Քերթողը*[33]*, Է. դարում՝ Մաթուսաղան*[34]*, Հովհաննես Մայրագոմեցին*[35]*, Անանիա Շիրակացին*[36]*, Սահակ Զորափորեցին*[37]*, Ը. դարում՝ Խոսրովիկ Թարգմանիչը*[38]*, Հովհաննես Օձնեցին*[39]*, Ստեփաննոս Սյունեցին*[40] *և շատ ուրիշներ:*

[31] Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի ճառք, Բ. տպ. Վնտ., 1860, **J. M. Schmid**, Reden der Johan Mandakuni, Regenburg 1871, Բ. **Սարգիսեան**, Քննադատութիւն Յովհան Մանդակունւոյ և իւր երկասիրութեանց վրայ, Վնտ. 1895, **Գալուստ Տէր-Մկրտչեան, Յովհան Մանդակունի**.- Ա, 1903, էջ 562-575, 662-672, 774-784, **Կարապետ** եպ., **Յովհան Մանդակունի, Յովհան Մայրագոմեցի**.- «Շողակաթ», Ա., 84-136 և այլն:

[32] **Գալուստ Տէր-Մկրտչեան,** Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց.- Ա, 1902, էջ 80-98, 183-203, 368-400, **Ներսէս Ակինեան**, Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց.- ՀԱ, 1904, էջ 18-22, 77-83, 105-113:

[33] **Ներսէս Ակինեան**, Վրթանէս վարդապետ Քերդող և իւր երկասիրութիւնք.- ՀԱ, 1910, էջ 8-11, 37-46:

[34] Թուղթ Մաթուսաղայի Սիւնեաց եպիսկոպոսի, զոր գրեաց առ Հերակլ կայսր (Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց. կէս., Նոր Ջուղա, 1688):

[35] **Կարապետ** եպ., **Յովհան Մանդակունի** և **Յովհան Մայրագոմեցի**.- «Շողակաթ», Ա., 84-136:

[36] **Անանիայի Շիրակունւոյ** Մնացորդք բանից, ի լոյս ետծ **Ք. Պ[ատկանեան]**, ՍՊբ., 1877, **Գալուստ Տէր-Մկրտչեան, Անանիա Շիրակացի**.- Ա, 1896, էջ 143 -156, 199-208:

[37] Բացայայտութիւն.... ասացեալ սրբոյ վարդապետին Սահակայ Հայոց կաթուղիկոսի և մեծի թարգմանչի՝ Ընդդէմ երկաբնակաց նեստորականացն (Գիրք թղթոց, 413-482)՝:

[38] **Գարեգին Յովսէփեան**, Խոսրովիկ թարգմանիչ և երկասիրութիւնք նորին, Վաղ., 1903, **Գալուստ Տէր-Մկրտչեան,** Խոսրովիկ թարգմանիչ.- Ա, 1892, էջ 275-280, **Յակովբոս Տաշեան**, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, հետազոտութիւնք և բնագիրք, մ. Ա. [ԱՄ ԺԶ.], Վն., 1895, էջ 49-146, **Ներսէս Ակինեան**, Խոսրովիկ թարգմանիչ և իւր երկասիրութիւնք.- ՀԱ, 1904, էջ 262-270, 304-316, 353-361, 1905, էջ 19-22, 114 -116, 213-220, 361-370:

[39] Domini Johannis Philosophi Oznienzis Armeniorum Catholici Opera, Venetiis, 1834, Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթուղիկոսի խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնանալոյ Բանին. կէս., հրատ. **Կարապետ** վ. Վաղ., 1896, **Ներսէս Ակինեան**, Յովհաննէս կաթուղիկոս Օձնեցւոյ նորագիւտ գրուածք մը բանին մարմնանալոյ վրայ.- «Յուշարձան», Վն., 1911, էջ 336-344:

[40] **Գալուստ Տէր-Մկրտչեան,** Ստեփաննոս Իմաստասէր.- Ա, 1902, էջ 368-400:

* * *

Մասնավորապես, հայ-վրացական եկեղեցական պառակտման հարցի վերաբերյալ, ինչը քաղկեդոնական ժողովի կողմից ճանաչված դիոֆիզիտական քրիստոսաբանության ընդունման կամ չընդունման հարցն էր շոշափում, ուշադրության արժանի է Զ-Է. դարերի Վրթանես Քերթողի, հայոց կաթողիկոսի տեղապահի, Սմբատ Վրկանի մարզպանի, հայոց Աբրահամ և վրաց Կյուրիոն կաթողիկոսների նամակագրությունը «Գիրք թղթոցում»[41], որտեղից էլ մի փաստաթուղթ, մասնավորապես՝ Աբրահամի երրորդ թուղթը առ Կյուրիոն[42], համառոտ տեսքով ներառնված է «Կնիք հաւատոյ»-ում[43], իսկ հայ-վրացական բաժանման մասին «Գիրք թղթոց»-ում զետեղված գրագրությունը հիմնավորապես դրված է Ժ. դարի պատմիչ Ուխտանեսի «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց»[44] վերնագրով հատուկ երկում, որտեղ այս գրագրությունը գրեթե բառ առ բառ կրկնվում է, միայն թե նյութի փոքր-ինչ տարբեր դասավորությամբ, որոշ կրճատումներով, մասամբ էլ խեղաթյուրված:

Այս նույն բնագավառի գրվածքներից է Ը. դարի գործիչ Սողոմոն Մաքենացու, հետագայում՝ կաթողիկոսի, «Վասն ինն դասուց...» երկասիրությունը, որտեղ, ի միջի այլոց, առաջադրված է հայոց պատրիարքության, Աղվանքի արքեպիսկոպոսության և վրացիների միտրոպոլիտության հարցը: Ճիշտ է՝ այս գրվածքը ուղղակիորեն մեզ չի հասել, բայց այն ամբողջությամբ պահպանել է Ժ. դարի նշանավոր պատմիչ Մովսես Կաղանկատվացին կամ Ուտիեցին[45]:

Սողոմոն Մաքենացու կողմից պարզաբանված հարցին անդրադառնում է Թ. դարի հայտնի գործիչ, հետագայում կաթողիկոս

[41] Գիրք թղթոց, 110-195, հավելվածը տե՛ս Ա, 1902, էջ 566-569 (լրացնում է «Գիրք թղթոցի» 185-186 էջերում տեղադրված Կյուրիոնի նամականին ուղղված Աբրահամին):

[42] Գիրք թղթոց, 108-184:

[43] Կնիք հաւատոյ, 139-142:

[44] **Ուխտանես**, Հատուած երկրորդ. Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց = **M. Brosset**, Deux historiens armeniens, SPB, 1870, pp. 277-351: Այս երկը հայ գրականության մեջ, ինչպես իրավացիորեն նշում է պրոֆ. **Իվ. Ջավախիշվիլին** (Վրաց հին պատմական գրականություն, երկրորդ հրատ., 60), այն պահանջներով է գրված, ինչ պահանջներով որ գրվել է Արսեն կաթողիկոսի «ცანყოფისა-თჳს ქართლისა და სომხითისა»-ն վրաց գրականության մեջ, հատկապես որ **Ուխտանէսը** նկարագրում է «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց»-ում այնպես, ինչպես **Արսենն** է նկարագրել «Բաժանումն **Վրաց** ի Հայոց»-ում (**Թ. Ժորդանիա**, ժամանակագրություններ, I, 314), հմմտ. **Իվ. Ջավախիշվիլի**, նշ. աշխ., էջ 64, ծնթ. ...՞:

[45] **Մովսիսի Կաղանկատուացւոյ** Պատմութիւն Աղուանից [ՂՄ 8], Տփղ., 1913, էջ 309-313:

ընտրված Մաշթոցը կամ Մաշտոցը, որին պատկանում է ընդարձակ վերնագրով հետևյալ երկը՝ «Թուղթ երանել[ւ]ոյն Մաշտոցի, նախ քան զկաթուղիկոսութիւն, առ Տէր Գէորգ Հայոց կաթուղիկոս՝ Վասն Սիւնեաց խաչին, թե է՞ր աղագաւ տուաւ <տրբրկ.՝ տուեալ եղև >»[46]:

Մովսես Ուտիեցու *«Պատմութիւն Աղուանից»-ում ուշադրություն են գրավում երկրորդ մասի 47-րդ և 48-րդ գլուխները, որոնցից առաջինը պարունակում է տեղեկություն այն մասին «Թէ որով ժամանակաւ անիծաւ ժողովն Քաղկեդոնի... [և եղև] բաժանումն Վրաց ի Հայոց»[47], իսկ երկրորդը՝ դատողություն «Վասն ինն դասուց...» ստորակարգության վերաբերյալ Սողոմոն Մաքենացու երկասիրության համաձայն[48]:*

Նույն Ժ. դարի մեկ այլ գործչի՝ Անանիա Մոկացու տրակտատում, որի վերնագիրն է «Տեառն Անանիայի Հայոց կաթուղիկոսի՝ Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն»[49], կրկնվում է հայացքը վրաց «արքեպիսկոպոսի» կողմից հայ կաթողիկոսին հնազանդվելը ուրանալու մասին:

Վրացիների՝ հայերից կախվածություն ունենալու և հայերից այդ կախվածությունը ուրանալու մասին յուրովի է մեկնաբանում Ժ. դարի նշանավոր պատմիչ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին[50], *որին այս պարագայում հետևում է (համառոտ) ԺԱ. դարի նշանավոր պատմիչ* Ասողիկը[51]:

Սակայն, ինչպես կտեսնենք, այս ստեղծագործություններից հետագա գրականության հիմքում ընկած են՝ 1) Ուխտանեսի *պատմությունը, 2)* Սողոմոն Մաքենացու *երկասիրությանը փոխարինող* Մովսես Ուտիեցու *պատմությունը, 3)* Մաշթոցի *չարադրանքը*[52]:

[46] **Յ. Գիւլխանդանեան**, նշ. աշխ.,.- Ա, 1902, էջ 748-753:

[47] **Մովսիսի Կաղանկատուացւոյ** Պատմութիւն Աղուանից, 306-307:

[48] **Նույն տեղում**, 308-313:

[49] Այս վերնագրով հրատարակել է Գալուստ Տեր-Մկրտչյանը՝ Ա, 1897, էջ 129-144, հատկապես՝ 137:

[50] **Յովհաննու** կաթուղիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց [ՂՄ 5], Տփղ., 1912, էջ 65 և հջրդ.:

[51] **Ասողիկ**, 83 և հջրդ.:

[52] Այս երեք փաստաթղթերն էլ որպես հայ-վրացական բաժանման գլխավոր աղբյուրներ են ճանաչված եղել նաև **Ստեփանոս Օրբելյանի** ժամանակ (ԺԳ. դ.), տե՛ս **Օրբէլեան**, 99-100:

* * *

«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» գաղափարախոսության հիմքը պարզաբանելու համար որպես փաստաթուղթ կարող են օգտագործվել նաև, այսպես կոչված, «Գաւազանագիրք» անունով հայտնի հուշարձանները, որտեղ հեղինակները ձգտում են ժամանակագրական-գաղափարական ճյուղավորումը ներկայացնել սկսած Հայոց այբուբենն «ստեղծող» Մեսրոպ Մաշտոցից մինչև իրենց օրերը: Չնայած այս «Գաւազանագրքերը» ընդհանրապես ԺԷ-ԺԸ. դարերից չեն անցնում, այդուհանդերձ դրանք չափազանց բնորոշ են այն առումով, որ դրանց կենտրոնում միշտ միայն և միայն Մխիթար Գոշն է[53]*: Օրինակ՝ մեկ տարբերակով գաղափարական ճյուղը մինչև ԺԳ. դարը ներկայացվում է հետևյալ գործիչներով՝ Մեսրոպը և նրա աշակերտները՝ Մովսես Քերթողը և Դավիթ Անհաղթ փիլիսոփան, նրա աշակերտ Ղազար Փարպեցին, նրա աշակերտ Պողոսը (՞), նրա աշակերտ Աբրահամը [քերական], նրա աշակերտ Հովհաննես [Մայրա]գոմեցին, նրա աշակերտ Ներսես Կլայեցին, նրա աշակերտ Տղայ կոչված Գրիգորը, նրա աշակերտ «մեծ և երանելի րաբունապետ Մխիթարը, որ մակ [անուամբ] Քօշ ասի»: Սա գավազանը նվիրեց Հովհաննես Վանականին, վերջինս էլ՝ Վարդան Մեծին*[54]*: Երկրորդ տարբերակով՝ «Մեսրոպը, որը գրեր ստեղծեց հայերի, վրացիների և աղվանների համար» Մովսես Քերթողը, Դավիթ Անհաղթը, Եզնիկը, Մամբրեն, Ղազարը, Պողոսը (՞), Աբրահամը, Ներսես Մեծոփեցին, Հովհաննես Օձնեցին, Վռամը, Ներսես Կլայեցին, Գրիգորը, «Մխիթարն՝ որ մականուամբ Գօշ ասի», Հովհաննես Վանականը, Վարդանը, եւլն.*[55]*:*



[53] Գոյություն ունեն նաև այնպիսի «Գաւազանագրքեր», որտեղ գործիչների ցուցակներն սկսվում են Մխիթար Գոշից (**Տաշեան**, Ցուցակ, 431):

[54] **Տաշեան**, Ցուցակ, 1032:

[55] **Յակոբ Թօփճեան**, Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադեան, Վաղ., 1898, էջ 53:

ԳԼՈՒԽ Ը.

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՑ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՎՐԱՑԻՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» գործունեությունը, ինչպես արդեն նշել ենք, ընդգրկում է ԺԱ-ԺԳ. դարերը և տևում է առնվազն մեկուկեսից երկու դար: Մեր մենագրության բուն նպատակը, ինչպես հուշում է վերնագիրը, հիշյալ վարդապետների ինքնությունը բացահայտելն է, իսկ նրանց գրական գործունեությունը մեզ հետաքրքրում է այնքանով, որքանով այդ գործունեության բնութագրումը մեզ հնարավորություն կտա ավելի հստակ պատկերացում կազմելու և վերջապես ստանալու այդ արմատական հարցի պատասխանը, նաև նշելու նրանց ծառայությունները հայ դպրության ասպարեզում: Սրա հետ մեկտեղ, քանի որ մեր նպատակը հիշատակված վարդապետների ինքնությունը պարզելն է յուրահատուկ թեքումով՝ նրանց առնչությունը հայ-վրացական հարաբերություններին, ուստի հնարավորինս մանրամասն կանգ ենք առնում հիշյալ վարդապետների կենսագրության և գիտագրական գործունեության մեկնաբանության այն պահերի վրա, որտեղ ի հայտ է գալիս հայ-վրացական հարաբերությունների գրական կամ գործնական բնույթի որևէ հարց: Բայց քանի որ բոլոր այս երևույթների հավուր պատշաճի լուսաբանումը հնարավոր չէ, ուստի մեր «մեկնաբանության մեջ» հիմնականում առաջնորդվում ենք հիշյալ տեսանկյունով:

Ինքնին խնդիրը «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» վերաբերյալ, կապված հայ-վրացական հարաբերությունների հարցերի հետ, մեր կողմից մեկնաբանված է երկու ժամանակաշրջանով, երկու մասով: Մեկում (այս մենագրության երկրորդ մասում) անդրադառնում ենք հատկապես Հաղբատ-Սանահնի խմբին ԺԱ-ԺԲ. դարերում, այսինքն՝ մոտավորապես ԺԱ. դարի կեսից մինչև ԺԲ. դարի երկրորդ կեսը, երբ բացի, այսպես կոչված, «Հյուսիսային

կողմանց» այս խմբակից, ուրիշ օջախներ կա՛մ բոլորովին գոյություն չեն ունեցել, կա՛մ եթե նույնիսկ գոյություն են ունեցել, ապա դեռևս գիտական-գրական կենտրոնների չէին վերածվել: Մենք փորձում ենք պարզել հենց այս խմբի կազմավորվելու ու նրա նախնական գոյության հարցը մինչև այն ժամանակաշրջանը, երբ այն կվերածվեր գիտագրական կենտրոնի և մինչ նրանում կձևավորվեր գիտական որոշակի դպրոց, բառիս բուն իմաստով, այսինքն՝ մինչ հանդես կգային Անանիա Սանահնեցին և Հովհաննես Սարկավագը՝ իրենց համախոհների և աշակերտների հետ միասին: Յավոք, Հովհաննես Սարկավագի (վախճանվել է 1129 թ.) և նրա աշակերտների մասին տեղեկություններն ընդհատավում են, և հաջորդ ճյուղավորումը (ֆիլիացիան) մնում է անծանոթ: Ժ.Գ. դարի երկրորդ կեսին՝ մոտավորապես 80-ական թվականներին, գլուխ է բարձրացնում, այսպես կոչված, «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» առանձին խումբը՝ Բասիլ եպիսկոպոսի գլխավորությամբ, իրականում՝ Գրիգոր Տուտեորդու ղեկավարությամբ և Մխիթար Գոշի մասնակցությամբ, որոնք հայտնի որոշ գործիչների հետ «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» խմբերի ընդհանուր գործունեության երկրորդ շրջանն են բնութագրում: Եվ այս ժամանակաշրջանի բնորոշն այն է, որ Հաղբատ-Սանահնի կողքին արդեն իսկ հայտնի են դառնում հարևան օջախներ ևս՝ Խորակերտը, Հաղարծինը և Գետիկը, նաև այն, որ այս շրջանում, այսպես կոչված, «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» գործունեության կենտրոնը կամաց-կամաց դեպի արևելք է տեղափոխվում, Հաղբատ-Սանահինն ընկնում է, և նոր կենտրոններ են ծաղկում, ինչպես Խորանաշատը, որն իր արժանիքներով Հաղբատ-Սանահնի տեղն է գրավում, սակայն երբ այստեղ մարում է առողջ ստեղծագործական ոգին, գիտագրական աշխատանքի ալիքը հարավ-արևելքով տեղափոխվում է Սյունիք: Այս երկրորդ շրջանին, որի մեջ ընգրկում ենք ԺԲ. դարի վերջին քառորդից մինչև ԺԳ. դարի երկրորդ քառորդը, այսինքն՝ մինչև մոնղոլների ներխուժման ժամանակաշրջանը, մենք նվիրում ենք հաջորդ (այս մենագրության երրորդ) մասը:

Այսպիսով, մենագրության երկրորդ մասում մենք քննարկում ենք Հաղբատ-Սանահնի դպրոցի գործունեությունը ԺԱ-ԺԲ. դարերում, իսկ երրորդ մասում՝ նույն Հաղբատ-Սանահնի դպրոցը և հարևան օջախների խմբակներինը՝ ԺԲ-ԺԳ. դարերում: Խորանաշատի դպրոցի մասնակի բնութագրումով ընդհատում ենք մեր վերլուծությունը, քանի որ ինչպես այս դպրոցի չարունակությունը,

այնպես էլ Սյունիքի դպրոցների գործունեությունը «Հյուսիսային կողմանց վարդապետների» խմբերից ժամանակագրական և քաղաքական-աշխարհագրական տեսակետից բաժանվում է, այդ պատճառով նրա ուսումնասիրությունը Վրաստանի պետականության ոլորտում դառնում է անհնարին: Անտարակույս, նրան հարկավոր է առանձին հետազոտություն կամ հետազոտություններ, որոնցից մեկն արդեն կատարված է հանձին Համազասպ Ոսկեանի «Յովհաննէս Վանական և իւր դպրոցը»[1] մենագրության:

Հարցը, «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» վերաբերյալ, մենք ուսումնասիրում ենք ժամանակագրական հաջորդականությամբ, և եթե որոշ տեղերում այս կարգը խախտված է (օրինակ՝ Աբասաորդի Գրիգոր Սանահնեցու մասին խոսում ենք Գետիկցի Մխիթար Գոշից առաջ և ոչ թե հետո), սա բացատրվում է նրանով, որ Հաղբատ-Սանահնի հարևան օջախների մասին կխոսենք միայն այն բանից հետո, երբ Հաղբատ-Սանահնի դպրոցի պատմությունն ամբողջովին սպառված կլինի:

Ամեն դեպքում ընթերցողներին հնարավորինս կներկայացնենք «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց»-ի ամբողջական պատկերը, բայց, աշխատանքն անթերի չի կարող լինել. որի հաղթահարումը անհնարին էր սկզբնաղբյուրների անբավարար լինելու պատճառով:

* * *

Կա մեկ հանգամանք ևս, որին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ի սկզբանե: Եթե մենք ուզում ենք ԺԲ-ԺԳ. դարերում տեղի ունեցած նույնպիսի բանավեճերը բնութագրելիս ճիշտ եզրակացության հանգել, ապա անպայման սկզբից ևեթ պետք է նկատի ունենանք, թե ինչ բնույթ է կրել հայ-վրացական բանավեճը մինչև ԺԱ. դարերը:

Բանն այն է, որ ինչպես այժմ արդեն աքսիոմա է համարվում. «ի սկզբանե Քարթլիի եկեղեցին, հայերի հետ միասին, հարում էր մոնոֆիզիտիա կամ հակաքաղկեդոնական քրիստոսագիտությանը, վեցերորդ դարի երկրորդ կեսից, սակայն տարբեր պատճառներով բյուզանդական կողմնորոշում ընդունեց և է. դարի սկզբին վերջնականապես հեռացավ Հայաստանից՝ համառորեն պաշտպանվելով հակաքաղկեդոնականությունից»[2]: Ինքնըստինքյան հասկանալի է,

[1] **Համազասպ Ոսկեան**, Յովհաննէս Վանական և իւր դպրոցը [ԱՄ ՂԳ.], Վն., 1922:

[2] **Կոռն. Կեկելիձե**, Վրաց գրականության պատմություն, I, 532:

որ այս հանգամանքը՝ մի կողմից, հայերի՝ վրացիների հետ ու վրացիների՝ հայերի հետ եկեղեցական-քաղաքական մերձավորությունն ու հարևանությունը՝ մյուս կողմից, հնարավորություն պիտի ստեղծեին հայերի մեջ հակադիոֆիզիտական կամ հակաքաղկեդոնական գրականություն ստեղծելու համար, իսկ վրացիների մեջ՝ հակամոնոֆիզիտականի համար[3]*: Բայց քանի որ Քարթլիի եկեղեցին նախապես կախվածության մեջ էր հայ եկեղեցուց*[4]*, վրացիների անջատումը հայերը չէին հանդուրժում, այդ պատճառով նրանք ամեն կերպ առիթ էին փնտրում վրացիներին մեղադրելու, իսկ վրացիները պաշտպանվում էին և հանդես գալիս պատասխաններով: Այսպիսին է Աբրահամի և Կյուրիոնի միջև կայացած նամակագրության հիմնական բովանդակությունը, որը ներառված է «Գիրք թղթոց»-ում: Նման եզրակացության կարելի է հանգել Աբրահամի հայտնի կոնդակից, որտեղ նա կարգադրում է իր հոտին՝ հայերին, հեռանալ վրացիներից, նրանց հետ բոլորովին չհաղորդակցվել ո՛չ աղոթքով, ո՛չ կերուխումով, ո՛չ ազգական-բարեկամական կապերով, ո՛չ մանուկների դաստիարակությամբ, ո՛չ Մանգլիսի ու Մցխեթի Ջվարիի երկրպագությունով, բացի առևտրից, ինչպես հրեաների հետ*[5]*: Այս բնույթի են նաև հայ-վրացական պառակտման հարցի վերաբերյալ մինչև Ժ-ԺԱ. դարերի երկերը, դրանց մեջ է մասնավորապես Ուխտանեսի «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց» երկը: Իսկ ինչ վերաբերում է վրացական հուշարձաններին, մասնավորապես՝ Արսեն կաթողիկոսի «Վասն բաժանման Վրաց ի Հայոց»-ին, նրանց մեջ ևս մինչև նույն Ժ-ԺԱ. դարերը հայերի հանդեպ ոչ մի ագրեսիվություն չի նկատվում*[6]*: Վրացիները կամ միայն իրենց էին պաշտպանում, ինչպես Արսենի գրվածքն է համոզում, կամ էլ առաջ քաշված հարցին այս կամ այն պատասխանն էին հակադրում հակամոնոֆիզիտական արդարացումով: Ինչպես կտեսնենք, բոլորովին այլ եղանակով է ընթանում հայ-վրացական բանավեճը Ժ-ԺԳ. դարերում, երբ «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» միջավայրից ելած բանավիճողները միանգամայն այլ լեզվով էին խոսում վրացիների հետ, իսկ վրացիները բոլորովին այլ տոն էին օգտագործում նրանց և առհասարակ հայերի հանդեպ: Սա, իհարկե, իր պատճառն ունի, որ մենք, մի կողմից «Հյուսիսային կողմանց» Վրաստանի պատականության տարածման պայմաններով պիտի բացատրենք, իսկ մյուս կողմից՝ նույն «Հիւսիսային կողմանք»-ում քաղկեդոնականության պրոպագանդելու ուժեղացման փաստով*[7]*:*

Մի խոսքով, հայ-վրացական հարաբերությունների հարցերի հետ կապված, Ժ-ԺԳ. դարերում «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» թղթերում, մենք հաշվի պիտի առնենք այն հանգամանքը, թե ինչ բնույթ էին կրում բանավեճերը մինչև Ժ-ԺԱ. դարերը, և ինչ բնույթ կրեցին դրանք Ժ-ԺԳ. դարերում, թե ով էր հարձակվողն ու պաշտպանվողը մինչև Ժ-ԺԱ. դարը, ով դարձավ հարձակվող և պաշտպանվող Ժ-ԺԳ. դարերում. և եթե տեղի ունեցավ դերերի ինչ-որ փոփոխություն, ապա ե՞րբ, ինչպե՞ս և ինչո՞ւ տեղի ունեցավ:

---


[3] Հմմտ. **Նույն տեղում**:

[4] Հմմտ. **Н. Марр,** Исторический очерк грузинской церкви с древнейших времен, “Церковные Ведемости”, 1906 г., прил., прот. пред соб. присутствия № 5, стр. 115 и прим. 2 ib.: **Ն. Ակինեան**, Կիւրիոն կաթողիկոս Վրաց, 169 և հջրդ.. **Կոռն. Կեկելիձե**, նշ. աշխ., 36-37:

[5] Գիրք թղթոց, 194:

[6] Հմմտ. **Կոռն. Կեկելիձե**, նշ. աշխ., 532-539:

[7] Որպես «հյուսիսային կողմերում» քաղկեդոնական քարոզչության ուժեղացման փաստաթուղթ ԺԱ-ԺԳ. դարերի համար մենք կարող ենք օգտագործել այն ժամանակների հետևյալ վանքերի գոյությունը՝ Լոռու «Պղնձահանքի» (=Ախթալա), Բջնիի «Պղնձահանքի» (=Գյուրջիքիլիսա), Քոբերի, «Հնէվանքի», Ոսկեպարի. եւն, որոնց վերաբերյալ մենք խոսեցինք Ե. գլխում: Հաղբատի վանական կյանքի և արարողության վրա վրացիների *յուրահատուկ ազդեցության* մասին է խոսում նաև **Ներսես Լամբրոնացին** (1154-1199), որը Կիլիկիայի Լևոն թագավորին ուղղված իր թղթերում հետևյալ բառերով է խոցում Հաղբատցիներին. «Հագնի՞մ **գիշտ** որպես Հաղբատայ եպիսկոպոսն, և երկու թիզ կնկուղ **վրացի սաքուլայով**, և պատարագե՞մ հաղբատեցի սև փիլոնով, և **փակե՞մ զդուռն ի վերայս**. և ձգե՞մ զվարագոյրն, և անհաղո՞րդ առնեմ ժողովուրդն յիւրեանց Աստուծոյն քաւիչ մահուանէն» (Տն. Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի Ատենաբանութիւնն և թուղթ և ճառք [Շարք ընտիր մատենագրաց Հայոց, 8], Վնտ., 1865, էջ 218):



Նկար 3. Սանահնի վանքի պլանը

1 - Գրապահոց

2 - Գրապահոցի գավիթը

3 - Սուրբ Գրիգոր եկեղեցին

4 - Ս. Աստվածածին եկեղեցին

5 - Այսպես կոչված «Մագիստրոսի ճեմարանը»

6 - Ս. Ամենափրկիչ տաճարը

7 - Զանգակատուն


8 - Ս. Աստվածածին եկեղեցու գավիթը

9 - Ս. Ամենափրկիչ տաճարի գավիթը

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՂԲԱՏ-ՍԱՆԱՀՆԻ ԴՊՐՈՑԸ

ԺԱ-ԺԲ. ԴԱՐԵՐՈՒՄ



Նկար 4. Դ. Այսպես կոչված Մագիստրոսի ակադեմիան Սանահնում (ներսից) *(վրացերեն հրատարակությունից՝ էջ 93)*



Մագիստրոսի ակադեմիան մեր օրերում (2006 թ.)

ԳԼՈՒԽ Ա.

ՀԱՂԲԱՏ-ՍԱՆԱՀՆԻ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ. ԴԻՈՍԿՈՐՈՍԻ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մեր մենագրության առաջին մասի հինգերորդ գլխում արդեն ասել ենք, որ Հաղբատը և Սանահինը պատմականորեն այնքան են կապված մեկը մյուսին, որ խոսել նրանցից մեկի մասին մյուսից անկախ, թուլլատրելի է, քանզի «առանց Հաղբատի անհասկանալի է Սանահինը, առանց Սանահնի՝ Հաղբատը». «երկու վանքերը պատմության համար ներկայացնում են մեկ ամբողջություն»:

Պարզ է, ուրեմն, որ Հաղբատի և Սանահնի գիտագրական դպրոցների մասին խոսելառանձին-առանձին, ճիշտ չի լինի, չնայած Հաղբատի դպրոցը իր բեղունությամբ և նշանակությամբ անհամեմատ առաջ է անցել Սանահնի դպրոցից: Բայց և այնպես, ըստ էության, խոսել Հաղբատի դպրոցի մասին, եթե նախօրոք չանդրադառնանք Սանահնի դպրոցի հիմնադրմանը, անկարելի է, մանավանդ ժամանակագրորեն և ըստ պատմական աղբյուրների՝ Սանահինը ավելի վաղ է հիմնադրվել, քան Հաղբատը:

Սանահին-Հաղբատի, մասնավորապես՝ Սանահնի դպրոցի ստեղծման հարցը մշուշապատ է. ոչ մի տեղ վկայված չէ՝ վանքերի հիմնադրման ժամանակից ի վեր նրանցում կրթօջախներ բացվե՞լ են, ովքե՞ր էին առաջին գիտական-գրական գործիչները, որտեղի՞ց էին եկել և այլն: Հայտնի են միայն ԺԱ. դարի մի քանի գործիչներ, որոնց անուննները կապված են Սանահնի, մասամբ Հաղբատի հետ:

Այսպես, առաջին հերթին, հայտնի է ոմն Դիոսկորոս կամ Դեոսկորոս եպիսկոպոս, որ հետագայում օծվեց կաթողիկոս, ապա և վտարվեց: Նա է համարվում Սանահնի դպրոցի հիմնադիրը: Նրա մասին տեղեկություններ են հաղորդում Մատթեոս Ուռհայեցին, Կիրակոս Գանձակեցին, Վարդանը և մի քանի վանքերի արձանագրություններ:

Մատթեոս Ուռհայեցին նրան անվանում է «*զմեծն Դէոսկորոս՝ զհայր վանիցն [Սանահնոյ]*» և «*մեծ հռետորն Դէոսկորոս*»[1]: Կիրա-

[1] **Մատթէոս Ուռհայեցի**, 76:

կոսի *խոսքերով՝ «զ Դէոսկորոս ոմն առաջնորդ սուրբ ուխտին՝ որ կոչի Սանահին»*[2], Վարդանը *հիշատակում է «զ Դէոսկորոս առաջնորդ սուրբ ուխտին Սանահնին... այր սուրբ և առաքինի»*[3]:

Մատթեոս Ուռհայեցին *մանրամասնորեն, իսկ* Կիրակոս Գանձակեցին *համառոտակի, պատմում են, թե ինչպես Անիի թագավոր Հովհաննեսը[-Սմբատ]-ը (1020-1039), ձերբակալեց կաթողիկոս Պետրոս Գետադարձին*[4]*, «առաքեաց [զարս]... ի վանքն ի Սանահին»*[5]*՝ հիշյալ Դիոսկորոսին Անի բերելու համար և Պետրոսի փոխարեն նրան կաթողիկոս դրեց: Եվ Դիոսկորոսին «նստուցին զնա կաթողիկոս յաթոռ Հայրապետութեանն Հայոց գտարի մի և զամիսս երկու, և ոչ ըստ Աստուծոյ հրամանացն»*[6]*: Եվ դրա համար նա՝ Դիոսկորոսը, ըստ տարեգրի՝ «Ձեռք չբերեց Հայ ժողովրդի կարեկցանքը և վստահությունը, առավել ևս, որ ինքը չկարողացավ ինչպես հարկն է պաշտպանել իր գահի հեղինակությունը, 1038 թ. Աղվանքի Հովսեփ կաթողիկոսի ղեկավարությամբ Անի քաղաքում տեղի ունեցած եկեղեցական ժողովը նրան ազատեց կաթողիկոսի պաշտոնից, որից հետո,- ըստ* Մատթեոս Ուռհայեցու՝ *«գնաց ի Սանահինն, ի վանքն իւր և կարի յոյժ ամաչելով ընդ գործս իւր»*[7]*, սակայն, ըստ* Սամուել Անեցու՝ *«յուղարկեալ... ի վանս իւր»*[8]*,* Կիրակոս Գանձակեցու *տեղեկությամբ՝ «գնաց սրտմտութեամբ... ի տուն իւր ի Սանահինն, և անդ եղև վախճան կենաց նորա, և եղաւ Հուպ յեկեղեցին)*[9]*:*

Եթե նկատի ունենանք, որ կաթողիկոսի պաշտոնից Դիոսկորոսի հեռացումը Կիրակոս Գանձակեցու *վկայությամբ*[10] *տեղի է ունեցել Անի քաղաքում «ընթացեալ յանդգնութեամբ ի վերայ Դէոսկորոսի, պատառեցին զքօղն յերեսաց նորա յաւուր յայտնութեան Տեառն՝ մինչդէռ օրհնէին զՂուրն, քանզի քօղով վարէին յայնմ ժամանակի կաթողիկոսքն, եւ հանին անարգանօք զնա ի քաղաքէն, եւ կացու-*

[2] **Կիրակոս**, 84.

[3] **Վարդան**, 98.

[4] **Միքայել Չամչյանի** «Պատմութիւն Հայոց»-ի վրացական տարբերակում Գետադարձ-ը թարգմանված է բառացի՝ գետ, որը հետ է հոսում (Վրաստանի պատմաազգագրական թանգարանի ձեռ. Հ՝թ 3107, տետր II, էջ 3բ):

[5] **Մատթեոս Ուռհայեցի**, 76:

[6] **Նույն տեղում**.

[7] **Նույն տեղում**, 76-78:

[8] **Սամուէլ**, 107:

[9] **Կիրակոս**, 84:

[10] **Նույն տեղում**. նույնը կրկնում է ԺԷ. դարի պատմագիր **Առաքել Դավրիժեցին** (Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժցւոյ, Բ. տպ., Վաղ., 1896, էջ 622):

ցին զ Պետրոս յաթոռ իւր», իսկ ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ *նա՝ Դիոսկորոսը*[11]*, կաթողիկոսի պաշտոնը վարեց 14 ամիս, մենք անպայման կաթողիկոսի պաշտոնում նրա մնալը պետք է սահմանափակենք 1036 թ. նոյեմբերից մինչև 1038 թ. հունվարի 6-ը»*[12]*:*

Չնայած Դիոսկորոսը 1038 թվականից այլևս կաթողիկոս չէր, սակայն մինչև մահ կրել է Հայրապետի կոչումը[13]*: Դրանով է բացատրվում, որ տարբեր վանքերի, հատկապես Սանահնի արձանագրություններում, նա մինչ իր մահը կոչվել է «Հայրապետ»*[14]*՝ այս բառի պատմական նշանակությամբ: Օրինակ, 1040 թ. Թալինի արձանագրությունում*[15]*, Սանահնի այլևայլ ժամանակների արձանագրություններում՝ մինչև 1063 թ.*[16]*: Ամեն դեպքում՝ վերջին արձանագրության համաձայն՝ պարզվում է, որ 1063 թվականին Դիոսկորոսը դեռևս ողջ է եղել: Նրա գերեզմանի տեղը Սանահնում հայտնի չէ*[17]*:*

Ինչ վերաբերում է Դիոսկորոսի գիտագրական գործունեությանը, այդ մասին գոյություն ունեցող աղբյուրներում, ցավոք, ոչինչ չկա, բացի մեզ արդեն հայտնի է Մատթեոս Ուռհայեցու *վկայությունից, որը նրան կոչում էր «մեծ հռետոր». ինքնին հասկանալի է, դա չպետք է գործածված լինի հասարակ քարոզչի իմաստով:*

* * *

Դիոսկորոսի ժամանակակիցն էր նույն՝ ԺԱ. դարի ականավոր գործիչ Գրիգոր Մագիստրոսը՝ *Պահլավունիների ազնվական տոհմից, ում անունը, չգիտես ինչու, կապում են Սանահնի հետ:*

[11] **Մատթեոս Ուռհայեցի**, 76:

[12] Այսպիսով, 1036 թ. մայիսի 10-ին Դիոսկորոսը դեռևս կաթողիկոս չէր կարող լինել, ինչպես կարծում է **Ս. Ջալալեանցը** (Ճանապարհորդութիւն, Ա., 52): Սխալ է նաև **Աբել [Մխիթարեան]**-ի (Պատմութիւն հալածչած, ուրացողաց, հերձուածողաց և բաժանելոց յեկեղեցւոյն Հայոց.- Ա, 1875, էջ 293-294) կարծիքը՝ իբր Դիոսկորոսը Անիում հակաթոռ կաթողիկոս է եղել 2 տարի:

[13] Հմմտ. Կ. **Կոստանեանց**, Տէր Պետրոս Գետադարձ, Վաղ., 1897, էջ 29:

[14] Հայերեն՝ հայրապետ = πατράρχης, ռուսերեն՝ патриарх, իսկ վրացերեն թարգմանվում է՝ **մամաթմթավարի**:

[15] **Շահխաթունեանց**, Բ., 51-52 (§ 379), որտեղ Դիոսկորոսի անունը սխալ է ընթերցված՝ Թէոսկորոս (այս արձանագրությունը մենք վկայել ենք դեռևս 1924 թ.):

[16] **Ջալալեանց**, Ա., 28, 32, 52, **Յովհ. Դրիմեցի**, 48-49, **Յարութիւնեան**, Սանահին, 297: **Կոստանեանց**, 21, 24: Ամենուր հիշատակված է՝ **Դիոսկորոս**:

[17] Դիոսկորոսի մասին ընդհանրապես տե՛ս **Կ. Կոստանեանց**, Տէր Պետրոս Գետադարձ, 27-29, **Օրմանեան**, Ազգապատում, 1213-1214 (§ 835):

Բանն այն է, որ Սանահնի չենքի մի մասը, որ պահպանվել է մինչև մեր օրերը, կոչում են «Մագիստրոսի ճեմարան»[18]*: Դա, ինչպես երևում է այստեղ զետեղված նկարներից (Հմր 3 և 4), բավականին լայն ելումուտի միջանցք է (այժմ՝ վերացված), որ գոնվում է արևմուտք-արևելյան ուղղությամբ և, այսպես կոչված, Ամենափրկիչ տաճարի հյուսիսային և Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատերի միջև: Այն ներառում է 6 կամար, որոնք հենվում են 6 զույգ սյուների վրա, իսկ այս սյուների արանքներում կան յոթական աթոռներ աջից և ձախից*[19]*, յուրաքանչյուրը մեկ մարդու համար: Իհարկե, այդ չենքում «ճեմարան» հիշեցնող ոչինչ չկա, բայց հետաքրքիր է, թե Սանահնում ինչպես է առաջացել այդ կեղծ պատկերացումը «Գրիգոր Մագիստրոսի «ճեմարանի» մասին:*

Սարգիս Ջալալյանցը *1842 թ. գրել է. «...Աստուածամայր եկեղեցւոյն է արճակավայր երեք խորանաւոր գաւիթ, զետեղեալ ի վերայ վեցից սեանց. յորում են գերեզմանք վեհապն և պայազատ իշխանաց Գրիգորի Վահրամեանց՝ հաւուն Մագիստրոսի»*[20]*: Այս տեղեկությունը մենք ստուգել ենք տեղում՝ Սանահնում, 1927 թվականի ամռանը, մեր այնտեղ գտնվելու ժամանակ. պարզվեց՝ հիշատակված գավիթը իրենից ներկայացնում է բավականին մեծ սրահ-գերեզմանատուն: Նրա առաջին շարքում ընդամենը 11 գերեզման է, որոնցից երեքը, այսինքն՝ Հմր 1, 2 և 10, առանց մակագրությունների են, իսկ մնացած ութը՝ Հմր 3-9 և 11, մակագրություններով, որոնք կարդացվում են հետևյալ կերպ. 3.* Վաչէ Ալճեցի, *4.* Համազասպ Մեծ, *5.* Սարգիս Աղեկեցե[ի], *6.* Սմբատ, *7.* Գաւգա[ն], *8.* Վահրամ Գաւգանի, *9.* Գրիգոր *և 11.* Հասան*: Այս արձանագրությունների մեջ, ի միջի այլոց, հիշատակվում են նաև՝ Գրիգոր, Հասան, Վահրամ և Սմբատ, որովհետև Գրիգոր Մագիստրոսի հոր անունը Հասան էր, հորեղբորը և տղայինը՝ Վահրամ, իսկ հորեղբորորդունը՝ Սմբատ, թերևս այդ հանգամանքն է հուշել Սանահնի միաբանության անդամներին և Ս. Ջալալյանցին, որ նրանք հիշատակված գերեզմաններում Պահլավունիների տոհմական գերեզմանոցն են փնտրել*[21]*: Բայց քանի որ*

[18] [**А. Муравьев**], Грузия и Армения, II, 306-307, **Ջալալեանց**, Ա., 14, **Յարութիւնեան**, Սանահին, 295-296, **Լալայեան**, 382, 386 և այլն:

[19] **Ա. Մուրավյովը** (նշ. աշխ.) 12 գահաթոռ է հաշվում:

[20] **Ջալալեանց**, Ա., 13.

[21] **Մ. Չամչեանը** (Պատմութիւն Հայոց, Բ., 938), չգիտես ինչու, Վահրամի գերեզմանը Սանահնում է ցույց տալիս: Դրան հակադրվում են Պահլավունիների տոհմական Մարմաշենի վանքի արձանագրությունները): (**И. Орбели,** Надписи Мармашена [Памятники армянской эпиграфики, I], Пгр. 1914, стр. 2-3, 5), որոնց համաձայն՝ վերջինում թաղված է թե՛ Վահրամը և թե՛ Գրիգորը:

հետազոտողները «մագիստրոսի» տիտղոսը համարել են գիտական աստիճան, *ոչ թե Բյուզանդական արքունիքի պատվավոր պաշտոն կամ տիտղոս*[22]*, հատկապես դրա համար Պահլավունիների գերեզմանոցը ուսումնասիրելուց հետո նույն միաբանության անդամները բնականաբար պետք է փնտրեին Մագիստրոսի ճեմարանը, որի համար հարմար չենք ամբողջ Սանահնի եկեղեցու շրջապատում մնում էր միայն և միայն վերը նշված ելումուտի միջանցքը, առավել ևս, որ ելքի մոտ կար 7 զույգ = 14 (և ոչ թե 12, ինչպես Մուրավյովն է հաշվել՝ առաքյալների քանակին նմանեցնելով) տեղ նստելու համար, հեշտությամբ կարելի էր գտնել նստատեղերը, որտեղ պարապում էին մագիստրոսի աշակերտները*[23] *(տես Հմր 3 և Հմր 4 նկարները):*

Այսպիսով, Սանահնում գոյություն ունեցող «Գրիգոր Մագիստրոսի ճեմարանը» պետք է համարվի նույնատիպ մի հեքիաթ, ինչպիսին է Շոթա Ռուսթավելու *անկյալի գոյության մասին* ավանդագրույցը, *որ հայտնի է Իղալթոյի ակադեմիայում*[24]*:*

Գրիգոր Մագիստրոսի կենսագրություններից, որ կազմել է Կ. Կոստանյանցն է պարզել[25]*, որ Գրիգորը հոգացել է Հայաստանի վանքերի նորացման գործը, որոնց մեջ առաջինը Ա. Հավուց Թառն էր (Գառնիի մերձակայքում՝ Երևանի մոտ), երկրորդը՝ Բջնիի Աստվածամոր, երրորդը՝ Կեչառիսի սուրբ Գրիգոր Լուսավորիչ (Ծաղկաձոր-Դարաչիչակ) վանքերը: Իսկ Սանահնի հետ, ինչպես և մի քանի այլ եկեղեցիների հետ, օրինակ՝ Մարմաշենի, նա սոսկ նամակցություն ունեցել է, ինչպես կարելի է եզրակացնել Մագիստրոսի նամակներից, որոնք պահպանվել են Մատենադարանում:*

[22] Glossarium ad scriptores mediae et infimae graecitatis, auctore Carolo du Fresne, Domino du Cange, t. I, Vratislaviae, 1891, col. 843-844. **Н. Скабаланович**, Византийское государство и церковь в XI веке, Спб., 1884, стр. 153, стр. 194, 198, **Д. Беляев**, Ежедневные и воскресные приемы византийских царей и праздничные выходы их в храм св. Софии в IX-X в. [Byzantina II], Спб., 1893, стр. 11, 14, 15, 22, 23, 26, 34, 42, 53, 61, 62, 64, 67, 205, 207, 230: **Կ. Կոստանեանց**, Գիրգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապօլ, 1910, էջ ԽԳ-ԽԵ.:

[23] Մագիստրոսի ճեմարանի մասին լեգենդն այնքան զորեղ է Սանահնում, որ նրա գոյությանը հավատում են (**Լ. Հովհաննիսյան**, Գրիգոր Մագիստրոսը որպես XI դարու հայ բժշկության ներկայացուցիչ.- "Bulletin de l' Université d'Etat de la R. S .S. d'Arménie", № 1, Երեվան, 1925, էջ 122):

[24] Հմմտ. **Մ. Ջանաշվիլի**, Կախեթում, «Սաքարթվելո» (լրագիր), 1917 թ., № 190:

[25] **Կ. Կոստանեանց**, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ Թ-ԽԸ. (Պահլաւունիք և Գրիգոր Մագիստրոս), նույն տեղում՝ Գրիգոր Մագիստրոսի թղթերը: Վերջիններիս մասին տե՛ս նաև **Իսահակ Սրապեան**, Գր. Մագիստրոսի գրուածոց նոր հաւաքածոյ մը Անտոնեան հարց մատենադարանի մէջ.- ՀԱ, 1909, էջ 110:

գրուԹյուն ուներ: Սանահնին ուղղված նրա գրուԹյուններից մեկը ԹղԹերի ժողովածուի մեջ ունի հետևյալ վերնագիրը. «Պատասխան սրբազան եղբարցն սուրբ ուխտին Սանահին, որ գրեալ էին ԹուղԹ օրհնուԹեան ի Միջագետս և մեղադրականս սակս ոչ գրելոյ ԹուղԹ առ նոսա»[26]:

Այս ԹուղԹը հետաքրքիր է երկու առումով. 1) դրանով հաստատվում է, որ Գրիգոր Մագիստրոսը չի պատկանել սանահինյան միաբանուԹյանը և այդ միաբանուԹյան հետ նա միայն դրսից է նամակագրուԹյուն վարել, և 2) նրանում Գրիգոր Մագիստրոսը՝ յիշելով «զհայրական ծերոցդ ծայրագունից խնամս առ մեզ և խրատս»[27], նրանց շարքում նշում է իր վախճանված հորը և նրա եղբորը, այսինքն՝ հորեղբորը («յաղագս կատարման ծնողին իմոյ և հարազատին իւր»)[28]: Հետաքրքիր է, որ Գրիգորը Սանահինը համարում է մայրաքաղաք[29]՝ իր վարժարաններով, որտեղ «զերիտասարդացն, որք ի վարժարանսն, հռետորական և երաժշտական զնոցայն զմտաւ ածեալ»[30]):

Պակաս հետաքրքրուԹյուն չի ներկայացնում ԹղԹակցուԹյան վերջին հատվածը, որտեղ Գրիգորը գրում է. «Այլ կամէի եւ կամիմ ձիր եւ ընծայ ինչ սուրբ ուխտիդ առաքել, որպէս պարտ է ճշմարիտ հարազատի *ձեր եւ եղբաւր»[31]:*

Երվանդ Տեր-Մինասյանցը *միանգամայն արդարացի է, երբ այդ ԹղԹակցուԹյունից անում է հետևյալ եզրակացուԹյունը. «Գրիգոր Մագիստրոսի նման ականաւոր անձնաւորուԹիւնը Սանահնի միաբաններին իրեն հայր և խրատող է անուանում, բոլոր արուեստից և մակացուԹեանց մէջ իմաստուն, ամբողջ Արամեան սեռի մէջ ակունք»[32]:*

Երվանդ Տեր-Մինասյանցը, *չգիտես ինչու, կարծում է, «որ նոյն Գրիգոր Մագիստրոսը շատ ԹղԹեր ունի գրած նաև Անանիա Սանահնեցուն զանազան խնդիրների համար», և որ «ժամանակի երկու նշանաւոր գիտնականները մտերմական սերտ յարաբերուԹիւններ ունէին, և շարունակ նամակաբերները գնում և գալիս էին միմեանց*

[26] **Կ. Կոստանեանց**, Գրիգոր Մագիստրոսի ԹղԹերը, 136 -142, հմմտ, **Եր[ուանդ]** ս. **[Տէր-Մինասեանց]**, Հաղբատ և Սանահին վանքերը.- Ա, 1901, էջ 339-340:

[27] **Կ. Կոստանեանց,** նշ. աշխ., 136, հմմտ. Եր. ս., 339:

[28] **Կ. Կոստանեանց**, նշ. աշխ., 141:

[29] **Կ. Կոստանեանց,** նշ. աշխ., 138, հմմտ. Եր. ս., նույն տեղում:

[30] **Կ. Կոստանեանց**, նշ. աշխ., 136, հմմտ. Եր. ս., նույն տեղում:

[31] **Կ. Կոստանեանց**, նշ. աշխ., 142, հմմտ. Եր. ս., նույն տեղում:

[32] Եր. ս., 340:

մօտ»[33]: Որ Գրիգոր Մագիստրոսը սուրհանդակների միջոցով էր վարում ԹղԹատարուԹյունը սանահինցիների հետ, դա հատակ հաստատվում է վերոնշյալ նամականու[34] վերջին մասով: Բայց որ Գրիգորը ճիշտ Անանիա Սանահնեցու և ոչ Թե մեկ ուրիշ Անանիայի հետ էր նամակագրուԹյուն[35] վարում, դա ոչ մի բանից չի երևում[36]:

Ամեն դեպքում, եԹե Գրիգոր Մագիստրոսի ճեմարանի գոյուԹյունը Սանահնում մենք կասկածելի ենք համարում, ապա նրա ամբողջ գործունեուԹյան վերլուծուԹիւնը, նրա իսկ վարած գրագրուԹյունը, մասնավորապես՝ հղված Սանահնի միաբանուԹյանը, բոլոր այդ ԹղԹերը պարզորոշ ցույց են տալիս, որ նա՝ Գրիգոր Մագիստրոսը, Սանահնի հետ, իսկապես ինչ-ինչ կապեր ունեցել է: Պարզվում է նաև, որ Գրիգոր Մագիստրոսի գործունեուԹյան ժամանակ Սանահնում գոյուԹյուն ունցել է հոգևոր դպրոց, որտեղ, նրա իսկ խոսքերով,- «եւ որք ի վարժարանսն՝ հռետորական եւ երաժշտական, զնոցայն զմտաւ ածեալ հանդէս եւ զմբցումն եւ զգեղեցիկ մոլուԹիւնս»: ԵԹե հենց վանքի միաբանների խմբակում ծավալվեր գիտական-գրական աշխատանք, բառիս իսկական իմաստով, և եԹե այդ խմբակը համապատասխան պատրաստվածուԹյամբ, անհրաժեշտ խորագիտուԹյուն ունեցող հեղինակավոր ղեկավար կամ ղեկավարներ ունենար, ապա եկեղեցական միաբանուԹյունը ստիպված չէր լինի Սանահնի և Գետամեջի հարաբերուԹյունների մեջ առաջացած ինչ-որ թյուրիմացուԹյան պատճառով դիմել դրսի այնպիսի անձնավորուԹյան, ինչպիսին այն ժամանակ Գրիգոր Մագիստրոսն էր: Միաժամանակ լիովին հասկանալի է դառնում Գրիգոր Մագիստրոսի նշանակուԹյունը [Հաղբատ-]Սանահնի դպրոցի համար: ԵԹե նրան չի կարելի համարել այդ դպրոցի հիմնադիրը, ապա, վերջին հաշվով, կարելի է համարել նրա վերածնողներից կամ ոգեշնչողներից մեկը, որի պատճառով միանգամայն բնական է դպրոցի ներկայացուցիչների գործունեուԹյան գնահատուԹյունը, Դիոսկորոսից բացի, հիշատակելով Գրիգոր Մագիստրոսի անունը, առավել ևս, որ զգացվում է՝ ինքը՝ Գրիգորը, Սանահնում է դաստիարակվել:

[33] **Նույն տեղում**:

[34] **Կ. Կոստանեանց**, նշ. աշխ., 142:

[35] **Նույն տեղում**., 116-124:

[36] **Նույն տեղում**., 305-306 (ծնթ. 18), հմմտ. 123:

ԳԼՈՒԽ Բ.

ՄԱՏԹԵՈՍ ՀԱՂԲԱՏԵՑԻ ԵՎ ՎԱՐԴԱՆ ՍԱՆԱՀՆԵՑԻ. ՀԱԿՈԲ ՔԱՐԱԲՆԵՑԻ-ՍԱՆԱՀՆԵՑԻ

Դիոսկորոսի ժամանակակիցներն էին Մատթեոս Հաղբատեցին *և* Վարդան Սանահնեցին, *որոնց 1049 թվագրությամբ հիշատակում է* Մատթեոս Ուռհայեցին*:*

Դիոսկորոսին կաթողիկոսի գահից հեռացնելուց հետո՝ 1038 թ., Անիում գումարված եկեղեցական ժողովը վերականգնեց կալանքից ազատված Պետրոս Գետադարձին: Վերջինս, ժամանակագրի տվյալներով, իր շուրջը հավաքեց ժամանակի հանրաճանաչ գործիչներին, նրանց թվում՝ Մատթեոս Հաղբատեցուն և Վարդան Սանահնեցուն «վարդապետք և իմաստասէրք և հմուտք Հին ու Նոր կտակարանացն Աստուծոյ»[1]*: Այդ երկու գործիչները, ի միջի այլոց, հիշատակված են այն 18 անձանց թվում, ովքեր 1049 թ.*[2] *Կոնստանդին Մոնոմախի հրավերով Պետրոսին ուղեկցեցին Կոստանդնուպոլիս: Այլ տեղեկություններ նրանց մասին չկան:*

* * *

*Մատթեոս Հաղբատեցուց և Վարդան Սանահնեցուց համեմատաբար լավ հայտնի է Դիոսկորոսի աշակերտ «*Յակոբոս Քարաբնեցին կամ Սանահնեցին*», որի մասին բավականին ընդարձակ պատմում է* Մատթեոս Ուռհայեցին*. Հայոց 534 <=1085> թվականին վախճանվեց հայոց վարդապետ Հակոբ Քարաբնեցին, որին կոչում էին Սա-*

[1] **Մատթէոս Ուռհայեցի**, 104-105:

[2] Ըստ **Երվանդ Տեր – Մինասյանցի**՝ «Հաղբատ և Սանահին վանքերը.- Ա, 1901, էջ 339», «Պետրոս Գետադարձ հայրապետը տեղ գնալիս՝ այդ վանքերից էր ուղեկիցներ առնում իր հետ... նորա հետ Պոլիս են գնում Վարդան Սանահնեցի և Մատթէոս Հաղբատցի վարդապետները»: Սա, սակայն, իրականությանը չի համապատասխանում, որովհետև 1049 թ. Կոստանդնուպոլիս ուղեկցած 18 անձանցից միայն երկուսն են Հաղբատ-Սանահնից. դրանից բացի, հնարավոր է, որ Մատթեոսի և Վարդանի ինքնությունը հավաստող մակդիրները՝ «Հաղբատեցի» և «Սանահնեցի», ցույց են տալիս **ծագումով** նրանց **որտեղացի** լինելը, ոչ թե գործունեության վայրը:

նահնեցի, այր՝ հզոր և կորովի. «Սորա հասեալ ի վերայ Հին և Նոր կտակարանացն Աստուծոյ, ուսեալ և հասեալ սորա ի վերայ հռետորական իմաստասիրութեանցն և տեղեկացեալ ամենայն փիլիսոփայական խորին գիտութեանցն»: Նա Սանահնի հայր[-ապետ]-ի՝ մեծն Դիոսկորոսի աշակերտներից էր: Եվ սա այն Հակոբն էր, որը Սենեքերիմի որդիներին ուղեկցեց Կոստանդնուպոլիս Հոռոմների (այսինքն՝ Հույների) իմաստասերների մոտ և խոսեց հայերի հավատքի մասին Դուկի ժամանակ[3] *«խոսեալ վասն հաւատոցս Հայաստանեայցս, և հաճեալ ի բանս նորա ամենայն տունն Յունաց: Եւ յայսմ ժամանակիս էր ի քաղաքն յՈւռհա, և ծերութեամբ քաղաքաւարեալ զկեանս իւր»*[4]*:*

Մասնավորապես այն դավանանքի շուրջ զրույցներին, որոնց մասնակցում էր Հակոբը, նույն տարեգիրն ասում է. «Իսկ թագաւորն Տուկիծ արար քննութիւն հաւատոյ իւր առաջի, և Յակոբոս վարդապետն՝ որ ասի Սանահնեցի, արար դիմադրութիւն բազում յամենայն հարցմունսն ընդդէմ Հոռոմոց. բայց սակաւ մի վասն երկբնութեանն Քրիստոսի ի կողմն Հոռոմոց դարձաւ: Եւ յամենայն պատճառսն հաւատոցն հաճեալ թագաւորն և հրամայեաց յայնր վերայ գիր միաբանութեան գրել ընդ Հայք և ընդ Հոռոմք. և վարդապետն Հայոց Յակոբոս գրեաց գիր միաբանութեան Հայոց և Հոռոմոց: Եւ հաճեալ թագաւորին ի գիր հաւատոյն, հրամայեաց դնել զգիրսն ի սուրբն Սոփի, զի ահա յայսմ հետէ եղիցին ի միասին միաբանեալ Հայք և Հոռոմք»[5]*:*

Եվ, այսպես, Մատթեոս Ուռհայեցու *խոսքերից պարզվում է, որ Սանահնեցի անվանված Հակոբ Քարաբնեցին՝ 1) իրականում եղել է Դիոսկորոս Սանահնեցու աշակերտը, 2) նա եղել է մեկը ԺԱ. դարի այն նշանավոր և փառաբանված գործիչներից, որը կոնստանտին Դուկասի ժամանակ (1059-1068) մասնակցել է հայերի և հույների միջև ծագած կրոնական վեճին և միացել երկաբնակների ճամբարին, որը Հաղբատ-Սանահնի դպրոցի՝ իր սկզբանե վերցրած ուղղու տեսակետից իբրև թե զգալի աննշանակություն էր առաջացնում, 3)*

[3] Կոստանդին Դուկաս (1059-1068):

[4] **Մատթէոս Ուռհայեցի**, 227:

[5] **Նույն տեղում**, 161-162: Կարծես այս և նախորդ մեջբերման կրկնությունն է **Կիրակոս Գանձակեցու (Կիրակոս**, 351-352) տեղեկությունը ոմն «Գիտուն և մեծ վարդապետ Հակոբի» մասին, որին բարեկամության և միաբանության համար Հայոց Կոստանդին կաթողիկոսը (1221-1267) ուղարկել էր հույների թագավոր Հովհաննեսի (1222-1228) մոտ. ուրեմն՝ մոտավորապես 1222-1228 թվականներին, եթե, իհարկե, այստեղ, ժամանակագրական սխալ չկա:

հույների հետ նրա կնքած պայմանագիրը հույների համար այնքան ձեռնտու էր և ընդունելի, որ իր մասնակցությամբ կազմված «Գիրք հաւատոյ» երկը պահպանվում է սուրբ Սոֆիայում, 4) նա իր գործունեության վերջին շրջանը, ամեն դեպքում՝ 1059-1068 թվականներից հետո մինչև իր մահը անցկացրել է Ուռհա քաղաքում (Եդեսիայում) և այնտեղ էլ վախճանվել է 1085 թվականին:

Հակոբ Քարաբնեցու գործունեության բնութագրությունն ավարտուն չի լինի, եթե մենք հաշվի չառնենք, այսպես կոչված, շարականները, այսինքն՝ եկեղեցական օրհներգերը, որոնցից մեկը Հակոբ *անունն է կրում*[6]*, իրենից ներկայացնում է ակրոստիքոս, որի սկզբնատառերը տալիս են ՅԱԿՈԲ.*

Յանըսկըզբնական ծոցոյ Հօր խոնարեալ...
Անոխակալ քաղցրութեամբ Որդի Աստուծոյ...
Կամաւորական մահուամբ քո լուծեր...
Որ փոխանակ մեղաւորաց ըզմեռանիլ...
Բարեբանեմք զանչափ քո ըզմարդասիրութիւնդ...[7].

Գրականության մեջ իշխող կարծիքը այս շարականը վերագրում է Հակոբ Քարաբնեցուն[8]*, բայց, ճիշտն ասած, չկա որևէ փաստարկություն, որ հաստատի կամ ժխտի սույն կարծիքը, ահա ինչու, շարականի հեղինակի հարցը առայժմ թողնում ենք բաց:*

[6] Շարական, էջմ., 1861, էջ 672:

[7] **Նույն տեղում**

[8] **Կ. Կոստանեանց**, Տէր Պետրոս Գետադարձ, էջ 47, Եր. ս., Հաղբատ և Սանահին վանքերը.- Ա, 1901, էջ 274, Շարական, էջ Բ., Шаракан, пер. **Н. Эмина**, 2-е изд., Москва, 1914, стр. 400.

ԳԼՈՒԽ Գ.

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Սանահնի փառքն ու պարծանքը, նորա ամբողջ գիտնական ուսման և ոգու ներկայացուցիչը, այն բազմիմաստ և պերճաբան վարդապետն է՝ Անանիա Սանահնեցին, որի գրուածքներն այժմ էլ կարդալիս ընթերցողն զգում է, թէ ի՛նչպիսի ուժի ու գրչի տէր է եղել նա»,- Անանիա Սանահնեցուն այսպես է բնութագրում Երվանդ Տեր-Մինասյանցը[1]*:*

Ցավոք, այնպիսի անհատի մասին, որպիսին Անանիա Սանահնեցին *է, կենսագրական գրեթե ոչ մի տեղեկություն չունենք: Գիտենք միայն, որ նա Դիոսկորոսի ժամանակակիցն է, հետևաբար՝ ԺԱ. դարում կանացուն կնքել, դեռևս մնում է անորոշ*[2]*:*

Հայ պատմագրական աղբյուրներում Անանիայի մասին տեղեկությունների հանդիպում ենք միայն Կիրակոս Գանձակեցու *և Վարդանի երկերում:*

Կիրակոսը *հիշատակելով, որ «յԱրևելս արք անուանիք և գիտնականք, լուսաւորիչք եկեղեցւոյ»*[3]*, Անանիայի մասին առանձնապես ասում է. «Անանիա վարդապետ ի Սանահինն, յաւուրս Դէոսկորոսի, այր մտաւոր և հանճարեղ, գիտող տոմարական արհեստի, և գրոց աստուածայնոց մեկնող: Սորա ասեն ի մի հաւաքեալ ի մեկնութիւնն առաքելոյ զբանն Եփրեմի և Յովհաննու Ոսկեբերանին և Կիւրղի և այլ սրբոց, արարեալ համառօտ վասն դիւրահասութեան ընթերցողաց, արար և խորհրդական և մտաւոր տեսութիւն և համեմատութիւն աւետարանացն առ օրինակս. գրեաց և լուսաւոր իմացուածս վասն խորհրդական սրբասացութեանս, որ յեկեղեցիս*

[1] **Եր[ուանդ]** ս. **[Տէր-Մինասեանց]**, Հաղբատ և Սանահին վանքերը.- Ա, 1901, էջ 274:

[2] **Ա[բրահամ] Զամ[հնեան]ը**, (Պատմութիւն հայ գրականութեան, Ա., Նոր-Նախիջևան, 1915, էջ 162) նրա մահվան տարեթիվը նշել է՝ 1070, բայց, ցավոք, չի նշել աղբյուրը, եթե, իհարկե, այդպիսին գոյություն ունեցել է:

[3] **Կիրակոս**, 103-107:

ուղղափառաց <այսինքն՝ հակաքաղկեդոնականների> խաչեցարիւ ասեն, և զ Ներբողեանն Շողակաթին»[4]:

Վարդանը, պատմելով Հովհաննես Սարկավագի, նրա աշակերտների և Սամուել Անեցու մասին, նշում է, որ «*եւ նախ քան զսոսա Անանիա, որ զառաքեալն համառօտեաց հրամանաւ կաթուղիկոսին Պետրոսի, Սանահնեցին»*[5]:

Մի ձեռագիր ժողովածուի մեջ կա Կիրակոսի *և* Վարդանի *տեղեկությունների միացմամբ խմբագրություն, որ ավելի ուշ ժամանակների (ԺԸ-ԺԹ. դդ.) ձգձգված խմբագրություն է հիշեցնում. «Մեկնչաց աստուածային գրոց ի մերոց վարդապետաց, թէ ո՞վ ոք է արարեալ - Անանիա վարդապետն Սանահին վանուցն. այր մտաւոր եւ հանճարեղ, գիտող տոմարական արհեստին, էր ի ժամանակս Պետրոս կաթուղիկոսին, եւ հրամանաւ նորա ի մի հաւաքեալ զբանս Եփրեմի եւ Յոհաննու Ոսկեբերանին, եւ Կիւրղի եւ այլ սրբոցն, զ Դ-ժ.ան (14) թուղթն Պաւղոսի առաքելոյն, համառաւատ եւ դիւրահաս ընթերցողաց»*[6]:

Ինչ վերաբերում է այն իրողությանը, որ Անանիան որոշ փաստաթղթերում Սանահնեցի *չի հիշատակվում, իսկ երբեմն կոչվում է Անանէ Հաղբատացի, ինչպես, օրինակ,* Մատթեոս Ուռհայեցու *երկում է*[7] *կամ* Զորագետցի *(Անանիա վարդապետ Զորագետցի), ինչպես կարդում ենք [նրա երկի] Հովհաննես Երզնկացու տարբերակում*[8]*, սա առանձնակի բացատրություն-մեկնաբանության կարիք չունի:* Մատթեոս Ուռհայեցին Անանիային *կոչում է* Սանահնեցի, *կարծես այն միավածությամբ, որի պատճառով, ինչպես մեկ անգամ արդեն նշել ենք*[9]*, Սանահնի որոշ նշանավոր գործիչներ հայտարարվել են* Հաղբատցիներ *(օրինակ՝ Գրիգոր Տուտեորդին)*[10]*, և եթե* Հովհաննես Երզնկացու *տարբերակում Անանիան* Զորագետցի *է կոչված, այն պատճառով, որ, ինչպես արդեն պարզել ենք*[11]*,* Զորագետցին *երբեմն քողարկում է* Սանահնեցուն*:*

4 **Կիրակոս**, 104:

5 **Վարդան**, 121:

6 **Յակոբ** Ց. **Թօփճեան**, Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադեան, Վաղ., 1898, էջ 91բ: * Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. 3964 (ԺԸ. դ.), 47բ-5բ - Գ. Տ-Վ.:

7 **Մատթէոս Ուռհայեցի**, 179:

8 Տե՛ս էջմ. թանգ. նոր հավաք. ձեռ. Հ՝ր 1110 [=6453], էջ 1ա:

9 Տե՛ս այս գրքի առաջին մասի Գլ. Ե., ծնթ.:

10 Նամականի, 5:

11 Տե՛ս այս գրքի առաջին մասի Ա. գլխի շարադրանքի երկրորդ կեսը:

* * *

Անանիա Սանահնեցին Հաղբատ-սանահինյան դպրոցի այն գլխավոր ներկայացուցիչն է, որի գործունեությամբ է բնութագրվում դպրոցը, այսինքն՝ եթե հետևենք Երվանդ Տեր-Մինասյանցին*, ապա «Անանիայի ոգին Սանահնի դպրոցի ոգին է, Անանիայի ուսումը ամբողջ Սանահնի դպրոցի ուսումն է. ուրեմն Անանիայի ոգին ըմբռնելով և նրա ուսման ու հայեացքներին ծանոթանալով, մենք մասամբ ըմբռնած կլինենք Սանահնի դպրոցի ոգին ու ուսումը»*[12]:

Ցավոք, այս գործչի երկերից ցայսօր գրեթե ոչինչ հրատարակված չէ, եթե, իհարկե, նկատի չունենանք նրա նշանակալից գրվածքներից այն մի քանի հատվածները, որոնք զետեղված են վեջին շրջանի այս կամ այն գիտական աշխատություններում:

Անանիա Սանահնեցու անունը հայ գրականության մեջ հռչակված է հիմնականում նրա մեկ չափազանց նշանակալից գրվածքով, որը ներկայացնում է հայ հակաքաղկեդոնական գրականության զարգացման գործընթացի գլխավոր աստիճաններից մեկը՝ այն երկերից հետո, որոնց մասին մենք խոսեցինք առաջին մասի երկրորդ գլխում: Այս երկը հիմնականում դոգմատիկական-բանավիճային բնույթի ժողովածուում է հանդիպում և հայտնի է հետևյալ վերնագրով.

«Անանիայի վարդապետի Հայոց՝ Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց, զոր գրեաց հրամանաւ տեառն Պետրոսի Հայոց վերապատրիարգի»[13]:

Քանի որ Կիրակոս Գանձակեցին *այս երկի մասին չի հիշատակում, ուստի հարց է ծագում. իսկապե՞ս դրա հեղինակը Անանիա Սանահնեցին է, թե՞ մեկ այլ Անանիա: Որ դա պատկանում է Անանիա Սանահնեցուն, հաստատում է Հովհաննես Երզնկացու ժողովածուն, որը ԺԳ-ԺԴ. դարերից դասագրքի նշանակություն է ունեցել*

12 **Եր[ուանդ]** ս. [**Տէր-Մինասեանց**], նշ. աշխ., 275:

13 Տե՛ս էջմ. թանգարանի հին հավաքածուի ձեռ. Հ՝ր 567 (=518), էջ 4բ-109բ, 436 (=655), էջ 1-121, նոր հավաքածուի Հ՝ր 929 [5618], 1110 [=6453], և Միութենական Գիտությունների Ակադեմիայի Ասիական թանգարանի ձեռ. Հ՝ր 9, էջ 3-164 [ИВ, В 95]: Գրականություն. **Միաբան** (**Գալուստ Տէր-Մկրտչեան**, Անանիա Նարեկացի, Գիր խոստովանութեան.- Ա, 1892, էջ 275-282, **Յակովբոս Տաշեան**, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, հետազօտութիւնք և բնագիրք, Ա. [ԱՄ ԺԶ.], Վն., 1895, էջ 57, **Գ. Զ[արբհանալեան]**, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Գ. տպ., Վնտ., 1897, էջ 589, **Գարեգին Յովսէփեան**, Խորովիկ թարգմանիչ. Կեն., էջ 24, **Արիստակէս Սեդրակեան**, Հայաստանեայց եկեղեցւոյ պատկերայարգութիւնը, ՍՊբ., 1904, էջ 127-129. և այլն:

հայերի համար: Այդ ժողովածու-դասագիրքը ներառում է դոգմատիկական-բանավիճային բնույթի երեք երկ՝ ուղղված քաղկեդոնականների դեմ: Հենց կազմողի՝ Հովհաննես Երզնկացու վկայությամբ՝ սա ներկայացնում է «զերեք գիրս[14], որ են հիմունք հաւատոյ ուղղափառութեան», այսինքն՝ 1) Անանիա Զորագետցու, 2) Խոսրովիկ Հռետորի (թարգմանչի) և 3) Հովհաննես Սարկաւագ վարդապետի, իսկ ժողովածուն մեզ է հասել բազում ձեռագրերի տեսքով: Այդ ձեռագրերից մի տարբերակին կցված է հետևյալ ընդարձակ ներածությունը.

«Գիրք հակաճառութեան և ընդդիմաբանութեան ընդդէմ երկաբնակաց: Արարեալ ի վաղնջուց ժամանակաց ի մերոց նախնի երանելեաց՝ երից արանց գերիմաստից և հմտագունից: Նախ՝ Անանիայի վարդապետի Զորագետցւոյ՝ յաւուրս հայրապետութեան *տեառն* Պետրոսի Գետադարձի[15]*: Երկրորդ՝ Խոսրովկայ թարգմանչի քաջ հռետորի (որ յառաջ է ժամանակաւ քան զԱնանիա վարդապետն): Երրորդ՝ Յովհաննէս վարդապետի Սարկաւագ կոչեցելոյ Հախպատեցւոյ: Զորս դարձեալ յառաջ ժամանակաւ հաւաքեալ է ի մի երանելի վարդապետն մեր Յովանէս Եզնկայեցի: Իսկ նարդենիս ի յաւուրս գերիշխանական հայրպետութեան տեառն Ղուկասու սրբազնակատար կաթուղիկոսի ի հնագոյն և յընտիր օրինակէ եւտու գրել վասն իմ՝ նուաստ ծառայս Քրիստոսի Աստուծոյ մերոյ և յետինս ի պաշտօնէից մօրս լուսոյ սրբոյ աթոռոյս էջմիածնի Իսահակ վարդապետս Գեղամեցի ի թուոջ Փրկչին ՌՋՁԷ. և ի մերումս թուոջ ՌՄԼԶ.[16]»:*

Քանի որ այս ներածականում Անանիան հիշատակվում է որպես «Անանիա վարդապետ Զորագետցի», իսկ Զորագետցի, ինչպես արդեն գիտենք[17], Սանահնեցի *է նշանակում, պարզ է, որ Անանիա Սանահնեցուն վերոհիշյալ երկի հեղինակ համարելու որևէ խոչընդոտ չպետք է լինի:*

Հովհաննես Երզնկացու *խմբագրությունն ունի առաջաբան և վերջաբան: Հատկապես հետաքրքիր է վերջինը[18], որից պարզվում է, որ*

[14] Ձեռագրում՝ «գիրքս» (sic):

[15] Այս կետը Անանիայի երկի վերնագրի կրկնությունն է:

[16] Տե՛ս էջմ. թանգ. նոր հավաքածուի ձեռ. Ֆ՝ր 1110 [=ՄՄ 6453], էջ 1ա:

[17] Տե՛ս այս գրքի առաջին մասի Ա. գլխի շարադրանքի երկրորդ կեսը:

[18] Տե՛ս **Գիւտ Աղանեանց**.- «Արծագանք» 1888, էջ 63-64, **Միաբան (Գ. Տէր-Մկրտչեան)**, **Անանիա Նարեկացի**.- Ա, 1892, էջ 379-380, **Յ. Տաշեան,** Մատենագրական մանր ուսումնասիրութիւններ. Կլն., 58-59, **Գ. Յովսէփեան,** Խոսրովիկ թարգմանիչ. Կլն., 1-2, **Ե. [Տէր-Մինասեանց],** Հաղբատ և Սանահին վանքերը, 338-339:

Անանիան իր երկը գրել սկսել է կաթողիկոս Պետրոս Գետադարձի (1019-1036, 1037-1051/1054) հանձնարարությամբ, սակայն վերջացրել է նրա հետնորդի՝ Խաչիկ կաթողիկոսի (1054-1060) օրոք, որին էլ նվիրել է այս աշխատությունը[19]:

Եվ, այսպես, եթե Անանիա Սանահնեցու գրվածքն ավարտելու ժամանակը սահմանենք 1054-1060 թվականները, ապա կտեսնենք, որ այն համընկնում է ճիշտ այն ժամանակին, երբ Կոստանդնուպոլսում տեղի էր ունենում բանավեճ Յակոբ Քարաբնեցու մասնակցությամբ (մոտավորապես 1059-1068 թթ.)[20] և Ղրտիլայի բանավեճը՝ Սոսթենես Մարմաշենցու մասնակցությամբ (1046 թ.)[21]: Եվ բոլորովին սխալ չի լինի, եթե ասենք, որ այդ երկն անմիջական արդյունքը լինի հենց Ղրտիլայի (Ջավախքում) 1046 թվականի բանավեճի և նրա յուրովի արձագանքը՝ հայ մատենագրության մեջ:

Տվյալ աշխատությունը բավականին ծավալուն է և ներառում է հետևյալ հոդվածները՝

Ա. Վասն մեծի հինգշաբաթին:

Բ. Առ ապականացու ասողն է զմարմինն Տեառն:

*Գ. Վկայութիւնք՝ 1) Պրոկղի, 2) Նորին Սքանչելագործի (sic), 3) Կիւրղի Աղէքսանդրացւոյ, 4) [Գրիգորի] Նիւսացւոյ, 5) Տեառն Եփրեմի, 6) Սրբոյն Աթանասի, 7) Սրբոյն Գրիգորի՝ Լուսաւորչին մերոյ, 8) Սրբոյն Եպիփանու, 9) Անփիլայ եպիսկոպոսի, 10) Գրիգորի Նիւսացւոյ, 11) Սրբոյն Բարսեղի, 12) Գրիգորի Աստուածաբանի, 13) Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի, 14) Կիւրղի Աղէքսանդրացւոյ, 15) Սեբերիանոսի, 16) Պրոկղի, 17) Յովհաննու ճգնաւորի, 18) Ոսկեբերանի, 19) Սրբոյն Աթանասի հայրապետի, 20) Դիոնէսիոսի Արիոպագացւոյ, 21) Սրբոյն եփրեմի, 22) Սրբոյն Գրիգորի՝ Հայոց Լուսաւորչի, 23) Սրբոյն Աթանասի, 24) Բարսղի հայրապետի, 25) Փիլիքսիմա Բաքայ եպիսկոպոսի, 26) Սրբոյն երիանոսի, 27) Կիւրղի՝ Աղէքսանդրացւոյ, 28) Սրբոյն Աթանասի, 29) Սրբոյն Գրիգորի՝ Լուսաւորչին մերոյ, 30) Սրբոյն Եպիփանու, 31) Սրբոյն Բարսեղի, 32) Սրբոյն Գրիգորի Աստուածաբանի, 33) Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի, 34) Սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ, 35) Սրբոյն Եփրեմի, 36) Սրբոյն Աթանասի, 37) Սրբոյն Գրիգորի՝ Լուսաւորչին, 38) Սրբոյն Եպիփանու, 39) Սրբոյն Բարսեղի, 40) Սրբոյն Գրիգորի Աստուածաբանի, 41) Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի, 42) Սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ, 43) Սրբոյն Եփրեմի, 44) Սրբոյն Աթանասի, 45) Սրբոյն Գրիգորի՝ Լուսաւորչին, 46) Սրբոյն Եպիփանու, 47) Սրբոյն Բարսեղի, 48) Սրբոյն Գրիգորի Աստուածաբանի, 49) Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի, 50) Սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ, 51) Սրբոյն Եփրեմի, 52) Սրբոյն Աթանասի, 53) Սրբոյն Գրիգորի՝ Լուսաւորչին,

Երուսաղէմի հայրապետի, 28) Եպիփանու Կիպրայ, 29) Աթանասի հայրապետի, 30) Յուլիայ՝ Հռոմայ հայրապետի:

Դ. Առ ներքին անցեալսն:

Ե. Վասն պատկերապաշտ[ութեան][22]:

Զ. Վասն ժողովոյն Քաղկեդոնի,

Է. Վասն բաժանման Վրաց[23]:

Ը. Ի յԱղուանից պատմութենէն[24]:

Թ. Պատճառ բաժանմանն Վրաց[25]:

Ժ. Վասն չորից աթոռոցն:

ԺԱ. Վասն մեռոնին:

ԺԲ. Վասն բաղարջին:

ԺԳ. Վասն տօնի Ծննդեան Քրիստոսի:

ԺԴ. Պատճառ երից սրբասացութեան, զոր Հայք ի դէմս Որդւոյ ասեն[26]:

Անանիայի գրվածքի տարբեր մասերը, ի դեպ, հաստատում է նաև Կիրակոս Գանձակեցին*: Եվ, իսկապես, այդ դրույթի ճշմարտության մեջ համոզվելու համար բավական է վերը նշված ցուցակի վերջին հոդվածի վերնագիրը՝ «Պատճառ երից սրբասացութեան», համեմատենք* Կիրակոսի *հիշատակած համապատասխան ստեղծագործության հետ:*

Տիմոթեոս Կուզի երկի հայկական տարբերակի հրատարակիչները՝ Կարապետ Տեր-Սկրտչյանը *և* Երվանդ Տեր-Մինասյանցը *պնդում են[27], որ Անանիան բավականաչափ օգտվել է համաշխարհային հայրերի ստեղծագործություններից, մասնավորապես՝ Իրինեոսի, Գրիգոր Սքանչելագործի, Հուլիոս Հռոմայեցու, Հովհան Ոսկեբերանի, Աթանասի, Կյուրեղի, կապադովկիացի մեծերի և այլոց աշխատություններից, որոնք մեծ մասամբ նման են Տիմոթեոս Կուզի «Բան*

[22] Այդ հոդվածը ամբողջովին հրատարակել է **Արիստակէս Սեդրակեանը (Արիստակէս Սեդրակեան**, Հայաստանեայց եկեղեցու պատկերայարգութիւնը, ՍՊբ., 1904, էջ 127-129, նոր հայերենով թարգմանված 129-131 էջերում. «Պատկերապաշտության համար»:

[23] Այս հոդվածը տպագրում ենք հաջորդ՝ Դ. գլխում. «Վրացիների պառակտումը»:

[24] Այս հոդվածը տպագրում ենք հաջորդ՝ Դ. գլխում. «Աղվանքի պատմությունից»:

[25] Այս հոդվածը տպագրում ենք հաջորդ՝ Դ. գլխում. «Վրացիների պառակտման պատճառները»:

[26] Անանիայի երկի մասին տե՛ս **Եր[ուանդ]** ս. **[Տէր-Մինասեանց]**, Հաղբատ և Սանահին վանքերը, 275-277, **Երուանդ Տէր-Մինասեանց**, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ, էջմ., 1908, էջ 299, Timmotheus Älurus'.... Widerlegung der auf der Synode zu Chalcedon Festgesetzten Lehre, էջ XX-XXI:

[27] Timotheus Älurus, XXI:

հակաճառութեան»-ից բերված մեջբերումներին, նրանք չեչտում են հատկապես Հուլիոս Հռոմեացուն, որը Անանիայի երկերի մեջ ամբողջովին բերված է Տիմոթեոսի գրքից[28], ինչպես նաև հատվածներ՝ Գրիգոր Սքանչելագործի հոդվածներից:

Երվանդ Տեր-Մինասյանցը, *անդրադառնալով Անանիայի գիտական գործունեությանը, մեկ առ մեկ մատնացույց է անում այն բոլոր երկերը, որոնք Անանիա Սանահնեցու անունով մեզ են հասել ձեռագիր վիճակում և դրանց շարքում նշում է «Պողոսի չորեքտասան թղթոց մեկնութիւնը» և «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց»-ը, բացի հետևյալներից[29].*

- Խրատ ոգեշահ, թե ո՞րպէս կարասցէ մարդ զմիտս որոշել յերկբաւորացս:

- Խրատ քահանայից:

- Ի խորհուրդ Յովհաննու մարգարէի:

- Դրուատ ի սուրբ Մկրտիչն Յովհաննէս:

- Սակս անխտիր հաղորդելոյն Յունաց[30]:

- Վասն խոնարհութեան:

- Վասն համբերութեան:

- Վասն զղջման և արտասուաց:

- Վասն անցաւոր աշխարհիս:

- Վասն ապաշխարութեան:

- Յաղագս խորհրդոյ:

- Խրատք:

- Մեկնութիւն Մատթէոսի աւետարանին:

Այս ցուցակը, իհարկե, անհրաժեշտ է համապատասխան ձեռագրերի հետ ստուգել: Ամեն դեպքում, եթե մենք վերոթվարկյալ սկզբնաղբյուրներին, այսինքն՝ Կիրակոս Գանձակեցու *և* Վարդանի *տեղեկություններին հավատանք, ապա չենք կարող [երկն] Անանիա Սանահնեցուն չհատկացնել, նախ, որ «վասն անխտիր հաղորդելոյն Յունաց» երկասիրությունը, որը իր ուղղվածությամբ*

[28] **Նույն տեղում**, 259-262:

[29] **Եր[ուանդ]** ս. **[Տէր-Մինասեանց]**, Հաղբատ և Սանահին վանքերը, 274-275:

[30] Այս երկը «Վասն անխտիր հաղորդելոյն Յունաց» ներառված է «Կանոնագրքում», այդ մասին տե՛ս **Արշակ Տէր-Միքելեան**, Հայաստանեայց եկեղեցին և Բիւզանդական ժողովոց պարագայք, Մոսկվա, 1892, էջ 150 -151, ծնթ. 1, **Յ. Տաշեան**, Ցուցակ, 655, **Արիստակէս Դաւթեան**, Կանոնք ս. ժողովոց և հարց եկեղեցւոյ, Տփղ., 1904, էջ 134-138, **С. Тигранян**, Древнеармянская «Книга канонов», стр. 92,164, բնագիրը հրատարակել է **Արիստակէս Դաւթեանը**՝ Կանոնք ս. ժողովոց, նույն տեղում (Անանիայի Հայոց վարդապետի՝ Ընդդէմ Յունաց, որ վասն յաճախ հաղորդելոյ):

«Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակացն» դեմ է գրված և կարծես նույն հեղինակի գործն է[31]*, այնուհետև «Պողոսի չորեքտասան թղթոց մեկնութիւնը» և «Մեկնութիւն Մատթէոսի աւետարանին»-ը, որոնցից վերջինը գրել է հեղինակը՝ «ընկալեալ զհրաման Տեառն... հօր Դէոսկորոսի և հոգելիր վարդապետի՝ Սանահնի սուրբ ուխտի առաջնորդի»*[32]*:*

Ջենք կարող Անանիա Սանահնեցուն չհատկացնել նաև Կիրակոսի *հիշատակած «զներբողեանն Շողակաթին»-ը՝ հետևյալ վերնագրով՝*

«Երանելւոյն Հօր Անանիայի հոգեվարժ <տրբրկ.՝ հոգեշնորհ> փիլիսոփային՝ Ներբողեան ասացեալի ի սուրբ կաթողիկէ եկեղեցի, որ է ի Նոր քաղաք, որ այժմ կոչի Վաղարշապատ, յորում տեղւոջ ցուցաւ հրաշական տեսիլն մեծ նահատակի սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի»[33]*:*

[31] Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

[32] **Եր[ուանդ]** ս. [**Տէր-Մինասեանց**], Հաղբատ և Սանահին վանքերը, 275:

[33] Տպագրված է հետևյալ վերնագրով՝ Անանիայի հոգեվարժ փիլիսոփայի՝ Ներբողեան ի Կաթողիկէն Վաղարշապատու, Կ. Պոլիս, 1747, «Ճռաքաղ», 1859, հմմտ. **Ա. Ղազիկեան**, Հայկական նոր մատենագիտութիւն, Ա., Վնտ., 1912, էջ 155:

ԳԼՈՒԽ Դ.

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԹՂԹԵՐԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՇՈՒՐՋ

«Երկաբնակների դեմ» իր երկասիրության մեջ Անանիա Սանահնեցին չոչափում է հայ-վրացական հարցը, որին նվիրում է 3 բաժին՝ հետևյալ վերնագրերով. 1) «Վասն բաժանման Վրաց», 2) «Ի յԱղուանից պատմութենէն» և 3) «Պատճառ բաժանմանն Վրաց»:

Առաջին *բաժինը՝ ամբողջովին կառուցված*[1] Ուխտանեսի երկի հիման վրա, շատ թե քիչ ինքնուրույն է, այն կարելի է համարել անանիական, և հետաքրքիր է այն առումով, որ ԺԳ. դարի սկզբին, ինչպես դա կպարզվի հետագայում, այն դրվեց Մխիթար Գոշի հայ-վրացական բաժանման հարցին վերաբերող պատմության հիմքում: Երկրորդը ներկայացնում է Մովսես Կաղանկատվացու կամ Ուտիեցու «*Պատմութիւն Աղուանից աշխարհի*» երկի 47-րդ գլխի երկրորդ *բաժնի առաջին կեսի կրկնությունը (մինչև Հայոց Աբրահամ կաթողիկոսի թղթից արված մեջբերումը)*[2]*, որը օգտագործել է նաև* Պողոս Տարոնեցին *ԺԲ. դարի սկզբին*[3]*: Իսկ երրորդը նույն այդ* Մովսես Ուտիեցու «*Աղուանից պատմութեան*» *2-րդ մասի հաջորդ (48-րդ) գլխի մեծագույն մասի կրկնությունն է, որտեղ բերված է Ը. դարի վերջերի գործիչ, կաթողիկոս* Սողոմոն Մաքենացու[4] *նամակը, ինչպես նաև նույն* Մովսեսի *հավելած բառերը, բացառությամբ սկզբնամասի ոչ մեծ հատվածի*[5]*: Այն աղբյուրից, որից օգտվել է Անանիան, հետագայում օգտվել է նաև* Ստեփանոս Օրբելեանը *(ԺԳ. դարի վեր-*

[1] Մասնավորապես համեմատի՛ր **Ուխտանեսի՝** Բաժանման պատմության 53-րդ գլուխը՝ իբրև Պետրոս եպիսկոպոսի մասին տեղեկություններ բովանդակող:

[2] Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի [ՂՄ 8], Տփղ., 1913, էջ 306-307:

[3] **Յով. Միսքճեան**, Յուցակ հայերէն ձեռագրաց քահանայապետական մատենադարանին Վատիկանու ի Հռոմ.- ՀԱ, 1892, էջ 340, **Տաշեան**, Յուցակ, 768:

[4] Սողոմոն Մաքենացու մասին տե՛ս **Մ. Չամչեան**, Պատմութիւն Հայոց, Բ., 425-426, **Օրմանեան**, Ազգապատում, էջ 911-914 (§ 626-627), հմմտ. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Տփղ., 1912, էջ 110-111:

[5] **Մովսիսի Կաղանկատուացւոյ** Պատմութիւն Աղուանից աշխարհի, 309-313:

ջերին) «Վասն ինն դասուց եկեղեցւոյ...» մասին խոսելիս, ինչպես հենց ինքն է պատմում[6]:

Քանի որ Անանիայի «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց» երկը, որի մեջ զետեղված են նշված հատվածները հայ-վրացական պառակտման վերաբերյալ, մինչև օրս չի հրատարակվել, ուստի, հաշվի առնելով մեր աշխատութեան յուրահատուկ բնույթը, նպատակահարմար ենք գտնում բոլոր այդ նյութերը, երեք մասի բաժանած[7], հրապարակել այստեղ՝ Մովսես Ուտիեցու պատմությունից վերցրած բնագրին զուգահեռ[8]:

Թեև բովանդակության առումով այս բաժիններում էական ոչինչ չկա, բայց և այնպես մինչ դրանց ծանոթանալը, հարկ է հաշվի առնել ուշադրության արժանի մեկ հանգամանք. որովհետև Անանիա Սանահնեցուն համարում ենք Դիոսկորոսի ժամանակակիցը, այսինքն՝ ԺԱ. դարի կեսերի գործիչ, ուստի ենթադրվում է, որ հայ-վրացական պառակտման մասին նրա երկը՝ «...Ընդդէմ երկաբնակաց», պետք է որ արդյունք լինի այն բանավեճի, որը տեղի է ունեցել ԺԱ. դարում, մասնավորապես Բագրատ Դ.-ի օրոք, Ղրտիլայի 1046 թ. ժողովում, վրացիների կողմից՝ Էքվթիմե Գրձելու կամ Երուսաղեմացու և հայերի կողմից՝ Սոսթենես Մարմաշենցու մասնակցությամբ[9]: Մեր կարծիքով՝ դրանով պետք է բացատրել և երկի բնույթը, որտեղ հեղինակը հանդես է գալիս ոչ թե հարձակվողի, այլ պաշտպանվողի դերում[10]:

---

[6] **Օրբէլեան**, 99-100, «Վասն ինն դասուց...»-ի մասին տե՛ս **Օրբելյանի** «Պատմութեան» 27-րդ գլխի վերնագիրը՝ «Վասն ինն դասուց եկեղեցւոյ թէ ո՞րք են և ո՞րպէս վարին» (**նույն տեղում**., 107-112) էլ ավելի ընդարձակ է, քան **Մովսես Ուտիեցու** և **Անանիա Սանահնեցու** երկերում է: Ուխտանեսից, Սողոմոն Մաքենացուց և Մովսես Ուտիեցուց բացի, **Օրբելեանը** հիշատակում է նաև **Մաշտոցի** թուղթը՝ Գեորգ կաթուղիկոսին (**նույն տեղում**., 100, 106), իսկ **Մաշտոցի** մասին տե՛ս **Գ. Ձ[արբհանալեան]**, նշ. աշխ., 509-511:

[7] Բնագիրը մենք հրապարակում ենք վերականգնված տեսքով՝ համաձայն էջմ. թանգ. հին հավաք. ձեռ. Ֆմր 567 (=518), ԺԳ. դար, էջ 79ա-82բ, նոր հավաք. Ֆմր 929 [5618], էջ 424 և հջրդ., № 1110 [=6453], էջ 60բ-63ա, և Միութենական Գիտությունների Ակադեմիայի Ասիական թանգարանի № [ИВ, В 95], էջ 120-125 (վերջին երեքը ԺԵ-ԺԸ. դարերի են):

[8] **Մովսիսի Կաղանկատուացւոյ** Պատմութիւն Աղուանից աշխարհի, 306-307, 309-313:

[9] Տե՛ս այս գրքի նախորդ Գ. գլխի ծնթ. 21 և շարադրանքի համապատասխան մասը:

[10] Հմմտ. Անանիայի երկի բնութագրությունը իբրև **օբյեկտիվ** երկ, **Եր[ուանդ]** ս. **[Տէր-Մինասեանց]**, Հաղբատ և Սանահին վանքերը, 275-277, **Ա. Ձամ[ինեան]**, նշ. աշխ., 162-163, 165:

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԱՆԱՀՆԵՑՒՈՑ ՄՈՎՍԻՍԻ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑՒՈՑ

Վասն բաժանման Վրաց

Իսկ ի՞նչ ասացից վասն Վրաց որոշելոյն ի մերոյ հաւատոյս, և ի ձէնջ ո՛չ ընկալեալ. Ճ. (100) ամ ընդ մեզ նզովեցին զժողովն Քաղկեդոնի. և մինչև ժողովեցան Հայք ի Դուին և ի Մանազկերտ և որոշեցին զհաւատն Քաղկեդոնի և հաստատեցին զնոյն հաւատ, զոր ընկալան ի սրբոյն Գրիգորիոսէ և յերից սուրբ ժողովոյն. ընդ մեզ էր և եպիսկոպոսապետն Մցխիթայի Գաբրիէլ Խաղաղացի: Եւ այսչափ ընդ մեզ միաբանեալ՝ յետոյ որոշեցան ի մէնջ, մինչ վախճանեցաւ Գաբրիէլ Խաղաղացին: Եւ կացուցին ի տեղի նորա զԿիւրիոն ոմն, որ ունէր զսերմն քաղկեդոնական հերձուածոյն ի գաղտնի. և վասն գահերիցութեան ախտացեալ և զչարեալ վասն վեհադոյն դնելոյ քան զնոսայն զԱղուանիցն և զՍիւնեացն աթոռակալութիւն, որոշեցաւ ի մէնջ յաւուրս Աբրահամու Հայոց կաթուղիկոսի. և կոչեցեալ միանգամ և երկիցս՝ ոչ հնազանդեցաւ: Եւ ապա առաքեաց զդրան եպիսկոպոսն Պետրոս, զի թէ ոչ հաւանեսցի հնազանդել, լուծցի ի կարգէն: Եւ նորա եկեալ՝ ոչ կարացեալ հաւանեցուցանել, կամեցաւ լուծանել ի կարգէն: Իսկ նա իւրով կամաւ մերկացեալ ի շնորհացն, տայր ցնա զգեստ հայրապետութեան: Եւ ընդդէմ մեր փոխարկեալ զձև կարգին, յետս ընդդէմ դարձուցեալ զամենայն զկերպս և օտարաձև զգեցեալ: Իսկ Կիւրիոն աւազակս առաքեալ զկնի նորա՝ սպանին զնա. և հասեալ ի Կանգուարս, քարկոծ արա-

բին զ Պետրոս: Եւ այսպէս արիւնապարտ եղեալ՝ դարձաւ ի հաւատն Քաղկեդոնի. զորս Ճ. (100) ամ ընդ մեզ հոմեալ նզովեցին. և դարձեալ ի նոյն փոխած վերատին դարձան: Այս են պատճառք Վրաց որոշելոյն ի մէնջ:

յԱղուանից պատմութենէն

Քառասներորդ ամ էր թուականին Հոռոմոց, յորժամ լուսաւորեցան Հայք ի հաւատս, և Աղուանից լուսաւորութեան Մ. և Ն. (270) ամ յառաջ: Յետ Ճ. և Զ. (180) ամին ընդոյ հաւատալոյն Հայոց, յաղագս տիեզերակործան ժողովոյն Քաղկեդոնի եղև հանդէս ժողովոյ ի ժամանակս Բաբգենի Հայոց կաթուղիկոսի: Յոյնք և ամենայն Իտալիա, Հայք և Աղուանք, և Վիրք միաբանեալ նզովեցին զչարափառ ժողովն Քաղկեդոնի և զտումարն Լևոնի՝ հրամանաւ բարեպաշտ թագաւորացն Հոռոմոց Զենոնի և Անաստասայ: Եւ յետ ՁԷ. (87) ամի՝ անցելոյ, ի ժամանակս Աբրահամու Հայոց կաթուղիկոսի, բաժանեցան Վիրք ի Հայոց միաբանութենէ ի ձեռն անիծելոյն Կի[ւ]րիոնի, այլև Յոյնք և Իտալիա ընդ նոսա. և Աղուանք ոչ քակտեցան յուղղափառութենէ և ի միաբանութենէ Հայոց. զորոց ի շրջաբերական թղթին վասն Կի[ւ]րիոնի դիմադարձութեան Աբրահամ զամբաստանականսն վասն նորա գրէ յաղագս ամենայն ի բաց կորել սրով Հոգւոյն: Եւ նախ յԱղուանս գրեաց և նզովեալ արտաքսեցաւ Կի[ւ]րիոն:

Խորհրդազգածութիւն թէ ո՞րով ժամանակաւ անիծաւ ժողովն Քաղկեդոնի. եւ Աղուանից անխառն մնալ ի նմանէ, կամ բաժանումն Վրաց ի Հայոց, եւ զինչ Աբրահամու կաթուղիկոսի վասն Աղուանից

Քառասներորդ երրորդ ամ էր թուականին Հոռոմոց, յորժամ լուսաւորեցան Հայք ի հաւատս, և Աղուանից լուսաւորութիւնն երկու հարիւր և եօթանասուն (270) ամ յառաջ: Յետ հարիւր և ութսուն (180) ամ լցելոյ հաւատալոյն Հայոց, յաղագս տիեզերակործան ժողովոյն Քաղկեդոնի եղև հանդէս ժողովոյ ի ժամանակս Բաբկենի Հայոց կաթուղիկոսի: Յոյնք և ամենայն Իտալիա, Հայք և Աղուանք և Վիրք միաբանեալ նզովեցին զչարափառ ժողովն Քաղկեդոնի և զտումարն Լևոնի՝ հրամանաւ բարեպաշտ թագաւորացն Հոռոմոց Զենոնի և Անաստասայ: Եւ յետ ութսուն և եօթն (87) ամի անցելոյ, ի ժամանակս Աբրահամու Հայոց կաթուղիկոսի, բաժանեցան Վիրք ի Հայոց միաբանութենէ ի ձեռն անիծելոյն Կիւրիոնի, այլ և Յոյնք և Իտալիա ընդ նոսա: Իսկ Աղուանք ոչ քակտեցան յուղղափառութենէ և ի միաբանութենէ Հայոց. որոց շրջաբերական թղթով վասն Կիւրիոնի դիմադարձութեան Աբրահամ զամբաստանականս վասն նորա գրէ յաղգս ամենայն ի բաց կտրելով սրով Հոգւոյն: Ազդէ նախ յԱղուանս, տայ զգիտու-

Պատճառ բաժանմանն Վրաց

թիւն և գրէ այսպէս ի թղթին...[111]

Յաղագս Յունաց առ Հայս վասն ոչ ունելոյ զինն դասս եկեղեցական կարգաւորութեան, եւ Հայոց ջանք՝ Աղուանից լինել ընդ նոքօք արքեպիսկոպոս, որում ոչ հաւանեալ Աղուանից. եւ դառնալն Սիւնեաց ի Հայոց յԱղուանս եւ առնուլն զեռնադրութիւն և զձեռնադրութիւն և զկէթ

...Հայք համբաւէին զՅովհաննու Մայրագոմեցւոյ, եթէ ի կողմն Յունաց լեալ՝ հակառակ բերէր [Հայոց]. որոյ զրպարտութեան պատճառ էր Սողոմոն ոմն միայնակեաց, որ յետոյ Հայոց եղև կաթուղիկոս. և նորա հարցեալ զվարդապետն իւր Սողոմոն, որ Մաքենացւոցն էր Հայր՝ նա գրով ուսոյց զայս, եթէ «ոչ պարտեցան Հայք ի հաւատոյ մասին. այլ այսուիկ յոյժ եղեն պարտեալք, զի ասացին Յոյնք, եթէ կարգաւորեաց Աստուած զեկեղեցի լինն դասուք, որպէս ի վեր անդր երկնայինքն՝ նոյնպէս գահակալեցան ներքին խորանիս. պատրիարգ, որ է Հայրապետ, և արքեպիսկոպոս, որ կոչի եպիսկոպոսապետ [և] մետրապոլիտ, և եպիսկոպոսք, քահանայք և սարկաւագունք, կէսսարկաւագք, ընթերցողք և փսաղտք: Այսք ամենայն միաբանեալ՝ ապա կարեն ձեռնադրել զհայրապետն, և Հայրապետն՝ զամենեսեան:

Ասացին Յոյնք ընդ Հայս, թէ կարգաւորեաց Աստուած զեկեղեցի Թ. (9) դաս ըստ երկնայնոցն նմանութեան. պատրիարգ, որ է Հայրապետն, և արքեպիսկոպոսն, որ եպիսկոպոսապետ կոչի և մետրապոլիտ, և եպիսկոպոսք, քահանայք, սարկաւագունք, կէսսարկաւագք, ընթերցողք, և փսաղտք: Այս ամենայն միաբանեալ՝ ապա կարեն ձեռնադրել զհայրապետն, և հայրապետն՝ զամենեսեան:

Արդ եթէ ողջամտութեան հաւատոյն էք, խոստովան եղերուք, թէ ո՞վ է պատրիարգն ձեր, զի չորք միայն կացին ի վերայ երկրի. Աղէքսանդրին՝ Մարկոսի աթոռն, Անտիոքայն՝ Մատթէոսին, Հռոմայն՝ Ղուկասուն, Եփեսոսին յԱսիա՝ Յոհաննուն, ըստ չորեքկերպեան կենդանեացն, ըստ չորեքանկեան

Արդ, եթէ ողջամտութեամբ հա-

[111] Պատմութիւն Աղուանից, արարեալ Մովսիսի Կաղանկայտուացւոյ, ի լոյս ընծայեաց Կ. Շահնազարեան [«Շար հայ պատմագրաց»], Փարիզ, 1860, էջ 405-406, Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 214=[ՂՄ 8], Տփղ., 1913, էջ 306:

տիեզերացս, ըստ քառավտակ գետոյն Ադենայ, ըստ չորից աւետարանացն, ըստ չորից Մովսիսական օրինացն, զի երկրորդումն օրինացն որիշ համարի. և մեք ամենեցուն հնազանդ եմք. հնազանդեցարուք միում ի նոցանէ կամ ամենեցուն, որ միահաւատ լինիմք, քանզի ձեր ի կեսարիայ եպիսկոպոսապետէն միայն ձեռնադրեցաւ՝ սուրբն Գրիգոր և որ յետ նորա մինչև ցայսօր: Ապա թէ այլ ոք եկեղեցի ուղղափառ էք զատ ի յայսցանէ, ցուցէ՛ք և զպատրիարգն ձեր, ընդ որով դասի արք եպիսկոպոսապետն, որ մինչև ցայսօր ընդ մեօք է. ապա թէ պատրիարգ ոչ ունիք և բովանդակ զայլս կղերս եկեղեցւոյ, յայտնի ասեն խոտորեալ հերձուածօղ էք, ընդ Արիոս և ընդ խուժաստանս և ընդ այլ չարափառս: Այլ թէպետ յամենայն պատասխանիս զօրաւոր էին ընդդէմ յարակիրս ճարտարացն Յունաց, որ վստահնային ի սուր լեզուս հելլենական յորդաբանութեամբն, այլ այնուիկ անպատասխանիք և պարտեալ լինէին Հայք, զի այդպիսի դպրութեամբ վարէր եկեղեցի:

Իսկ թագաւորեալ Յուստիանոս փոխեաց զնշխարս Յոհաննու ի Կոստանդինուպոլիս, և հաստատեաց անդ աթոռ հայրապետական. և բուն աթոռն մնայ յԵփեսոս. նոյնպէս զՄատթէոսին փոխեաց յԱնտիոքայ յերուսաղէմ, ասէ՝ վասն զի քաղաք մեծի արքային է. և բունն մնայ յԱնտիոք: Յայնժամ չարժեցան ամենայն մեծամիտք և ուր առաքեալ էր վախճանեալ, զամենայն աթոռ պատրիարգի խոստովանեցին: Անդանօր ապա մերոյս բերաւ բան ի բերան յետ զկարգ նոցա դնելոյն. և զՀայս Պարսիկք և Յոյնք բաժանեալ էին, և տէր Մովսէս էր յաթոռ սրբոյն Գրիգորի ի Դուին. և ի կողմն Յունաց հակառակ նմա նստուցին յաթոռ զՅոհան ոմն մերձ առ նա: Իսկ յերկուանալն հայրապետութեան խոտեցին տեարքն Սիւնեաց և ո՛չ հաւանեցան ընդ մի ոք յերկուցն. հրամանաւ եպիսկոպոսին իւրեանց առաքինւոյն Պետրոսի, որ հասեալ ի վախճան՝ պատուէր ետ վիճակին իւրում առնուլ ձեռնադրութիւն յԱղուանս, և զմեռոնն օրհնութեան, մինչև միասցի աթոռ սրբոյն Գրիգորի: Վասն այնորիկ ձեռնադրեցաւ վրթանէս յեպիսկոպոսութիւն Սիւնեաց ի Զաքարիայ սուրբ հայրապետէն Աղուանից. ընդ նմին և գիւղն օծութեան առնուին ամ յամէ յԱղուանից, մինչև բարձաւ հակառակութիւն, և միապետեաց Աբրահամ զհայրապետական աթոռն:

Եւ սակս Ը. (9) դասակարգութեան՝ գլխաւորք եկեղեցական անձնահաճ կամօք, ըստ նպերտ Հայաստանեայցն, կարգեն զԱբրահամ պատրիարգ, և զԱղուանիցն՝ արքեպիսկոպոս, և զվրացն՝ մետրապոլիտ. խեռեցաւ Վրացն, որում Կիւ[ւ]րիոն կոչէին, և զհակարակութեան բերէր վճիռ: Իսկ հայրապետն Աբրահամ ասէր լինել յառաջահաւատ քան զվիրս՝ զԱղուանս, և նոցա անկ է եպիսկոպոսապետութիւն: Յայս մաքառմանէ և ի խնդիր ուղղափառութեան հաւատոյ դարձան

առաքեալ էր վախճանեալ՝ զամենեցուն աթոռ պատրիարգ խոստովանեցին: Անդանօր ապա և մերոյս բերաւ բան ի բերան յետ զկարգ նոցա դնելոյն: Եւ զՀայս Պարսիկք և Յոյնք բաժանեալ էին, և տէր Մովսէս էր յաթոռ սրբոյն Գրիգորի ի Դուին. և ի կողմն Յունաց հակառակ նմա նստուցին զՅոհան ոմն մերձ առ նա: Իսկ յերկուանալն հայրապետութեան նալն հայրապետութեան խոտեցին տեարքն Սիւնեաց, և ոչ հաւանեցան ընդ մի ոք յերկուցն. հրամանաւ եպիսկոպոսին իւրեանց առաքինւոյն Պետրոսի, որ հասեալ ի վախճան՝ պատուէր ետ վիճակին իւրում առնուլ զձեռնադրութիւն յԱղուանից և զմեռոնն օրհնութեան մինչև միասցի աթոռ սրբոյն Գրիգորի: Վասն այսորիկ ձեռնադրեցաւ վրթանէս յեպիսկոպոսութիւն Սիւնեաց ի Զաքարիայ սուրբ հայրապետէն Աղուանից. ընդ նմին և գիւղն օրհնութեան ամ յամէ առնուին Սիւնիք յԱղուանից, մինչև բարձաւ հակառակութիւնն և միապետեաց Աբրահամ զհայրապետական աթոռն:

Եւ սակս ԹՒ. (10) դասակարգութեան՝ գլխաւորք եկեղեցական անձնահաճ կամօք, ըստ նպերտ (տրբրկ՝ բիրտ) բարուց Հայաստանեայցն, կարգեն զԱբրահամ պատրիարգ, և զԱղուանիցն՝ արքեպիսկոպոս, և զվրացն՝ մետրապոլիտ: Խեռեցաւ Վրացն, որում կոչէին, և զհակառակութեան բերէր վճիռ. իսկ հայրապետն Աբրահամ ասէր լինել յառաջահաւատ քան զվիրս՝ զԱղուանս, և նոցա անկ է եպիսկոպոսապետութիւն: Յայս մաքառմանէ և ի խնդիր ուղղափառութեան հաւատոյ՝ դարձան

Վիրք և եղեն քաղկեդոնիկ: Իսկ ի Յունական զօրավարացն գրգռեալ զնա՝ խնդրել զգահերիցուԹիւն ի վերայ Աղուանից, որում ոչ հաւանեալ Աղուանից՝ զայլ ոմն երևեցուցին կանխաւ առաքեալ եկեալ ի յաշխարհն Աղուանից, Եղիշա անուն, յաշակերտացն Տեառն, քարոզել անդ և եկեղեցիս շինել նախկին քան ի Հայս, առաջին մայր եկեղեցեացն արևելեացն՝ Գիսու եկեղեցին, նորին հիմնադրեալ, զարձան ի Հայոց առ ինքեանս, չլինել ընդ ումեք իշխանուԹեամբ: Ահա Հայք վասն մեծաբանուԹեան Յունաց, որ փոքրկացուցանել չանային զկայս Հանգստեան Թադէոսի առաքելոյն՝ չունել եպիսկոպոսապետ և մետրապոլիտ, խորհեցան առնել մետրապոլիտ զՄարդապետականն եպիսկոպոս, տալ նմա խաչի պատիւ մերոյն և ոչ առնել ձեռնադրուԹիւն եպիսկոպոսի. և նորա խնդրեալ եպիսկոպոսս երկուս կամ երիս լինել ընդ իւր, որում ոչ հաւանեալ գլխաւորացն, երկուցեալ Թէ մի գուցէ արդեօք այլ իմն գունակ բաժանումն լինի միապետեալ աԹոռոյն: Ապա տեսանելով միշտ աստուածերկիւղս և հլու և հաւանս զտեարսն Սիւնեաց, և զկղերս եկեղեցեացն քաջուսմունս և ուղղափառս յամենայնի, նոցա ետուն զպատիւ լինել մետրապոլիտ Հայոց խաչանիշ մեծարանօք, և ոչ ժտել յիրս ինչ, և ո՛չ քարոզել եպիսկոպոսապետ զհայրապետն. և զայլ աշխարհի զառաջին սովորուԹիւն իւրեանց Թողին, զի մի՛ ամբոխ ինչ լինիցի: Վասն այնորիկ չքարոզեն եպիսկոպոսապետ Սիւնիք, և ո՛չ գրոյն պատասխան [նամ]ակին Հայոց, զի եԹէ քարոզելի էր և գրելի էր, բայց ո՛չ քարոզելն մեծուԹիւն է որպէս գոչ գրելն. և զխաչ առաջի ունել ի փառս տէրունեան է, և անուն լոկ խաչիւն քարոզովն է բնաւորեալ յիշատակ ոչ ուրուք ընդ նովաւ եղելոյ:

Վիրք և եղեն քաղկեդոնիտք: Իսկ ի Յունական զօրավարացն գրգռեալ նախ խնդրել զգահերիցուԹիւնն ի վերայ Աղուանից. որում ոչ հաւանեալ Աղուանից՝ զայլ ոմն երևեցուցին կանխաւ առաքեալ եկեալ յաշխարհն Աղուանից, Եղիշա անուն, յաշակերտացն Տեառն ձեռնադրեալ ի ձեռանէ Յակովբայ եղբօր Տեառն, քարոզեալ անդ և եկեղեցի շինեալ նախկին քան ի Հայս, առաջին մայր եկեղեցեացն արևելեաց՝ Գիսոյ եկեղեցին նորին հիմնադրեալ և զինքեանս նմա աւանդեալ, զարձան ի Հայոց առ ինքեանս՝ չլինելով ընդ ումեք իշխանուԹեամբ: Ապա Հայք վասն մեծաբանուԹեան Յունաց, որ փոքրկացուցանել չանային զկայս Հանգստեան Թադէոսի առաքելոյ՝ չունել եպիսկոպոսապետ և մետրապոլիտ, խորհեցան առնել մետրապոլիտ զՄարդապետականն եպիսկոպոս, տալ նմա խաչ և պատիւ միայն և ոչ առնել ձեռնադրուԹիւն եպիսկոպոսի. և նորա խնդրեալ եպիսկոպոսս երկուս կամ երիս լինել ընդ իւր, որում ոչ հաւանեալ գլխաւորացն, երկուցեալ Թէ մի գուցէ արդեօք այլ իմն գունակ բաժանումն լինիցի միապետեալ աԹոռոյն: Ապա տեսանելով միշտ աստուածերկիւղս և հլու և հաւանս պատուիրանաց զտեարսն Սիւնեաց, և զկղերս եկեղեցեացն քաջուսմունս և ուղղափառս յամենայնի, նոցա ետուն զպատիւն լինել մետրապոլիտ Հայոց խաչանիշ մեծարանօք, և ոչ ժտել իրս ինչ աւելի և ո՛չ քարոզել եպիսկոպոսապետ զհայրապետն. և զայլ աշխարհ ըստ առաջին սովորուԹեան իւրեանց Թողին, զի մի՛ ամբոխ ինչ լինիցի: Վասն այնորիկ չքարոզեն եպիսկոպոսապետ Սիւնիք, և ո՛չ գրեն ի պատասխան

նամակին Հայոց եպիսկոպոսապետ, զի Թէ քարոզելի էր, ապա և գրելի էր, բայց ո՛չ քարոզելն մեծուԹիւն է, որպէս ոչ գրելն. և զխաչն առաջի ունել ի փառս տէրունեան է, և անունն լոկ խաչիւն և քարոզովն է բնաւորեալ յիշատակ ոչ ուրուք ընդ նովաւ եղելոյ:

Այսպէս զետեղեցին զինն դասս: Եւ տէրունիք ի Սիւնիս հոգևոր տէր գրէին, և նոքա՝ ի ծառայէ: Ապա տեառն Եղիայի խակագործուԹիւն յերիցու վանս, յորժամ ի յԱղուանս երԹայր՝ սակս այնր ոչ գրեցին ի ծառայէ, արգելին և նոքա զՀոգևոր[-տէր]ն. այսպէս [է] ստուգուԹիւն իրացդ[12]

Այսպէս զետեղեցին զինն դասս: Եւ տէրունիք ի Սիւնիս Հոգևոր տէր գրէին, և նոքա՝ ի ծառայէ: Ապա տեառն Եղիայի խակագործուԹեան յերիցու վանս, յորժամ յԱղուանս երԹայր՝ սակս այնր ոչ գրեցին ի ծառայէ, արգելին և նոքա զՀոգևոր[-տէր]ն. այսպէս [է] ստուգուԹիւն իրացդ:



[12] Պատմութիւն Աղուանից, արարեալ Մովսիսի Կաղանկայտուացւոյ, ի լոյս ընծայեաց **Կ. Շահնազարեան** 407-412: **Մովսիսի Կաղանկատուացւոյ** Պատմութիւն Աղուանից աշխարհի, ի լոյս ընծ. Ս. Էմին, 215-219 = [ՂՄ 8], 308-313:

ԳԼՈՒԽ Ե.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԸ ԵՎ ՆՐԱ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Անանիա Սանահնեցին վերջին ներկայացուցիչն է Հաղբատ-Սանահինյան, մասնավորապես հաղբատյան գործիչների այն խմբի, որին պատկանում են Դիոսկորոսը, Վարդանը, Հակոբը, Անանիա Սանահնեցին, Մատթեոս Հաղբատեցին, և որոնց մենք կոչում ենք Հաղբատ-Սանահնի գործիչների առաջին սերունդ:

Այդ առաջին սերնդի գործունեությունը տեղի էր ունենում գլխավորապես Սանահնում, այն չի անցնում ԺԱ. դարից: Այդ դարի երկրորդ կեսին աչքի է ընկնում նշանավոր Հովհաննես Սարկավագը, ով համարվում է Հաղբատի դպրոցի հիմնադիրը: Նրանով մենք սկսում ենք երկրորդ սերնդի *ներկայացուցիչների ինքնության պարզաբանումը:*

«Անշուշտ Հաղբատի արագ յառաջ գնալուն մեծապէս նպաստեց Սանահինը. Սանահնի ազդեցութեամբ այստեղ կազմուեց մի դպրոց, որի ուսուցիչներն ու սանները չարունակեցին և աւելի ևս կատարելութեան հասցրին Սանահնում սկսուածը»[1]*:*

«Հաղբատի դպրոցի մասին նախ քան հռչակաւոր Յովհաննէս Սարկաւագ վարդապետը տեղեկութիւն չունինք,- չարունակում է հեղինակը:- Թէև նրանից առաջ էլ գոյութիւն ունէր վանքը, բայց որովհետև իսկապէս դպրոց եղաւ Յովհաննէս Սարկաւագ-վրդ.-ի միջոցով, ուստի նրան ևս պետք է համարենք Դպրեվանքի հիմնադիրը ԺԱ. դարու Բ. կիսին»[2]*:*

Հովհաննես Սարկավագ վարդապետը *այնքան խոշոր անձնավորություն է հայ մատենագրության բնագավառում, որ նրա կենսագրության և գիտական-գրական գործունեության վերլուծությունը արժանի է հատուկ ուշադրության:*

Հովհաննեսի հայրենիքի և ծնողների մասին տեղեկություններ

[1] **Եր[ուանդ]** ս. **[Տէր-Մինասեանց]**, Հաղբատ և Սանահին վանքերը.- Ա, 1901, էջ 340:

[2] **Նույն տեղում**.

հայտնում է Վարդանը. «Յովհաննէս, որն Սարկավագ, ի գաւառէն Փառիսոսոյ, ի քահանայական ազգէ, որոյ յիշատակք ճառագայթիցն փայլեն մինչև ցարդ ի բանս իւր, և ի նմանէ աշակերտեալսն»[3]*:*

Վարդանը Հովհաննեսի աշակերտների՝ «երեմիա, որ և Անճրևիկ», Սամուել երեց Անեցին, նաև նրանց նախնիների, արդեն հայտնի Անանիա Սանահնեցու անունը հիշատակելուց հետո՝ նշում է Հովհաննեսի մահվան թիվը[4]*:*

Վարդանի տեղեկությունը կարծես համընկնում է Սամուել Անեցու *կողմից բերված՝ Սարգիս վարդապետի անվանն առնչվող մի ծանոթագրության «Ի ՇՀԸ. <=1129> թվին փոխի յաշխարհէս մեծ վարդապետն Սարգիս, որ է ի Փառիսոսոյ, որդի քահանայի միոյ»*[5]*:*

Սամուելի *ժամանակագրության մեջ «Սարկաւագ» անվան փոխարեն «Սարգիս» կարդալը արդարացիորեն առաջ է բերել մի տեսակ կասկած, որ «Սարգիս»-ը հնարավոր է Սամուելի հնագույն ձեռագրում, վնասված տեղի (Սարկ...)- ի վերականգնման հետևանքը լինի՝ Սարկ[աւագ]-ի փոխարեն գրել են՝ Սարկ[իս] -Սարգ[իս]*[6]*:*

Ամեն դեպքում՝ ինչպես Վարդանի, այնպես էլ Սամուելի տեղեկությունների ուշադրության արժանի է, որ Հովհաննես Սարկավագի հայրենիքը մատնանշված է Փառիսոսը: Իսկ Փառիսոսը քաղաքական տեղի է հին Արցախի և Սիսականի սահմանի վրա՝ Շամխոր գետի երկու ափերին՝ բազմաթիվ եկեղեցի-վանքերի փլատակներով, որոնցից մեկի վրա նշմարվում է 1271 և 1461 թվակիր մակագրություն[7]*: Ինչպես իր «Սարեկ» ոտանավորի մեջ է նկարագրում, նրան սնել և դաստիարակել են «բարեպաշտ և իմաստուն ծնողները», և որպես բնությունից օժտված խելացի զավակ, հենց նրանցից էլ ստացել է նախնական գիտելիքներ.*

Ի նախնեաց բարեպաշտից և յիմաստուն ծնօղաց բուսեալ,
Որք սնուցին զիս օրինօք հոգւոյն կենաց,
Առնել քան ըստ բնութեան տածիւք խնամս յառ մանկունս,
Որովք յառաջնումն հասակին դաստիարակեալ՝ յոյս տայի քաջութեան[8]*:*

Հետագայում Հովհաննեսը ուսումը պետք է շարունակեր ժամա-

[3] **Վարդան**, 121:

[4] Նույն տեղում:

[5] **Սամուէլ**, 128. հմմտ. նույն տվյալները Հովհաննես Սարկավագի մահվան մասին, նույն **տեղում**., 129:

[6] Հմմտ. **Ոսկեան**, Մատ. քննութ., 1-3:

[7] **Ղ. Ինճիճեան**, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, 309-310, **Մ. Բարխուդարեան**, Արցախ, 306-308, 431, **Կոստանեանց**, 114, 174:

[8] **Ղ. Ալիշան**, «Բազմավեպ», 1847, էջ 215:

նակի վանական որևէ ուսումնարանում՝ կամ հենց Փառիսոսում, կամ էլ Հաղբատ-Սանահնում: Թեև ավելի հավանական է, որ նա սկզբում սովորած լինի Փառիսոսի վանքում, հետո փոխադրված լինի Սանահին, այնուհետև՝ Հաղբատ: Կամ էլ անմիջապես Հաղբատ: Եվ, իսկապես, Հովհաննեսը ուսման համար դեգերել է վանքից վանք և, ի վերջո, հանգրվանել Հաղբատում: Այդ մասին խոստովանում է նաև ինքը՝ այն նույն երկում, որտեղ, ի միջի այլոց, ասում է.

Ուսայ ես դեգերմամբ եւս ի բազմաց ամաց հետէ.

Զի տըքննեցայ զօր ամենայն և ըզգիշերըն բովանդակ.

Առ իմաստս ցանգուէթեամբ, նա և սիրուն որ առ հանճար...:

Յանապատի աստ գամ նըստիմ, զի օգտեցայց հանդարտութեամբ,

Ասացից և իմացայց, զի մի եղէց ընդ վայրատանջ,

Աչխատեցայց անշահաբար ունայատուր իմաստութեամբ[9]*:*

Թե ով էր կամ ովքեր էին Հովհաննեսի ուսուցիչները, այս մասին, ինչպես արդարացիորեն նշում է Համազասպ Ոսկյանը.- «Պատմությունը պատասխան չի տար, այս միայն յայտնի է, թէ գիտութեան մէջ մեծ և բազմակողմանի հմտութիւն մը կ'իւրացնէ»[10]*:*

Հովհաննեսի դաստիարակության և կրթության մասին սկզբնաղբյուրներում այս տեղեկություններից բացի, ավելին չի հայտնաբերվել:

Մեզ նոր բան չի տալիս նաև Հովհաննեսի «Վարքը», որը գրված է եղել դեռևս հնում, բայց մեզ է հասել հետագայում կազմված «Վարք Սրբոց» ժողովածուների մեջ: Օրինակ, մի այսպիսի՝ դեռևս չհրատարակված երկի համապատասխան ժողովածուում[11]*, որի վերնագիրն է՝ «Հանդէս բանի վասն երանեալ առնն Աստուծոյ Սարկաւագին կենաց և մահուան, և այլոց սրբոց՝ հուպ յայն ժամանակս», Սամուէլի հավելյալ խոսքերով՝ «երիցս երջանիկ վարդապետն Յոհաննէս և անուն բարդ՝ Սարկաւագն»....(«դաստիարակեալ առ սրբասնունդ քեռ[ւ]ոյն իւրոյ, ի վանսն Հաղբատ»)*[12]*: Այնուհետև*

[9] Նույն տեղում, 221-223.

[10] **Ոսկեան**, նշ. աշխ., 6:

[11] Տե՛ս էջմիածնի թանգարանի հին հավաքածու, ձեռ. Հ՝ր 2680, անթվակիր, էջ 579ա$_1$-581բ$_2$:

[12] **Նույն տեղում**, 579ա$_1$.- Հետաքրքիր են հարց և պատասխանի ձևով կազմված որոշ կենսագրական տեղեկություններ Հովհաննեսի մասին, որտեղ ասված է. (հավաքել ենք էջմիածնի տարբեր ձեռագրերից): «Հարցումն՝ Սարկաւագ վարդապետ, որ ի Հաղբատ: Պատասխանի՝ Անունն Յոհան և ի գեղջէն Մանճար, ի գետեզր...

նկարագրում է Հովհաննեսի արտասովոր ճիրքը և վարքը՝ որպես նշանավոր պատանու, այլ պատանիների մեջ:

Ո՛չ պատմական աղբյուրները, ո՛չ էլ արձանագրությունները, ցավոք, մեզ ոչ մի հնարավորություն չեն ընձեռում՝ պարզելու, թե ինչ պաշտոն է զբաղեցրել Հովհաննես Սարկավագը Հաղբատի վանքում: Ալիշանը[13], Զարբհանալյանը[14], Տեր-Մինասյանցը[15], Օրմանյանը[16] *և ուրիշներ կարծում են, որ Հովհաննեսը այդ վանքի վանահայրն է եղել: Բայց այդ մասին ո՛չ* Սամուել Անեցին, *ո՛չ* Կիրակոսը, *ո՛չ* Վարդանը *և ո՛չ էլ* Մխիթար Այրիվանեցին *խոսք չեն ասում: Թեպետ* Կիրակոսը, *նկարագրելով Ստեփանոս-Զոմզոմայի և Հովհաննեսի միջև եղած բախումը, այսպես է ներկայացնում Հովհաննեսին, թե, իբր, նա «հրամայեց եկեղեցու վերակացուին՝ նրան ավագերեց դարձնել» («հրամայեաց եկեղեցապանին առնել զնա <Զոմզոմա> աւագ երէց)*[17]*: Իսկ Հովհաննեսի մականունը՝ «Սարկաւագ», մենք ուղղակի իմաստով հենց սարկավագ (διάκονος, диакон) չպետք է հասկանանք, ինչպես կարծում են* Ալիշանը[18], Ադոնցը[19] *և շատ ուրիշներ, այլ պետք է հասկանալ որպես հատուկ կամ անձնական անուն*[20]*, - հենց այսպես, ինչպես, օրինակ, նման բառերը՝ Տէրտէր,*

[13] **Ղ. Ալիշան**, Յուշիկք հայրենեաց Հայոց, Բ., Վնտ., 1870, էջ 296: **Նույնի՝** Հայապատում, Ա., 93:

[14] **Գար. Չ[արբհանալեան]**, Հայկական հին դպրութեան պատմութիւն, 608:

[15] **Եր[ուանդ]** ս. **[Տէր-Մինասեանց]** նշ. աշխ., 343:

[16] **Մ. Օրմանեան**, Ազգապատում, էջ 1307 (§ 899):

[17] **Կիրակոս**, 106:

[18] **Ղ. Ալիշան**, Յուշիկք, Բ., 281:

[19] **Հ. Адонц**, Армянская литература, ц. изд., стлб. 653.- (այս Սարկաւագս՝ այր սուրբ և տեսանող, զուարթերես և լի հոգւով), **Տաշեան**, Յուցակ, 463-464, **Ոսկեան**, Մատ. քննութ., 34:

[20] Հմմտ. **Ոսկեան**, Մատ. քննութ. 5, հմմտ. **Հր. Աճառեան**, Մի քանի սրբագրութիւններ հայ մատենագիրներու մէջ.- Ա, 1913, էջ 1144-1146.- բոլոր գրողները Հովհաննեսին **Հովհաննես Սարկաւագ** էին կոչում, Սամուէլից բացի (**Սամուէլ**, 129), որը նրան միայն **Սարկաւագ** է անվանում, իսկ «սարկավագ» ինչպես հատուկ անուն հիշատակվում է ի միջի այլոց հետևյալ արձանագրությունների մեջ. 1151 թ. Հաղբատի (սարկավագի գերեզմանաքարի մակագրությունը տե՛ս ներքևում), 1233 թ. Խծկոնքի (**Սարգիսեան**, 211, **Ալիշան**, Շիրակ, 128, **Կոստանեանց**, 85), 1261 թ. Հաղբատի (**Յովհ. Ղրիմեցի**, 32, **Երզնկեան**, 30, **Կոստանեանց**, 103), 1271 թ., Նորավանքի (**Ալիշան**, Սիսական, Վնտ., 1893, էջ 190, **Լալայեան**, Վայոց ձոր.- ԱՀ, ԻՋ., 1917, էջ 49: **Կոստանեանց**, 114), 1286 թ. Անիի (**Սարգիսեան**, 119: **Ալիշան**, Շիրակ, 72: **Կոստանեանց**, 129), 1307 թ., Կայծոն (**Ալիշան**, Սիսական, 107, **Կոստանեանց**, 154), առանց տարեթվի՝ Բագնայր (**Սարգիսեան**, 182, **Կոստանեանց**, 236-237): Որպես սարկավագ հայտնի է նաև Մխիթար Գոշի աշակերտը, Գետիկի ավագերեցը (**Կիրակոս**, 197) և Աղվանքի եպիսկոպոսը (**նույն տեղում**., 168):

Տիրացու, Երիցակ, Վանական, Վարդապետ, Հայրապետ և այլն վերածվել են հատուկ անունների: Եվ, իսկապես, որ այս պարագայում «Սարկավագ»-ը գործածված է որպես մականուն[21], հաստատում են նաև հին գրողները, օրինակ՝ Սամուելը ասում է. «Ընթերցաք գրեալ վարդապետին մեծի, որ Սարկաւագ վերակոչի անուանեալ»[22] կամ՝ «ի ՇՀԸ. <=1129> ամին փոխեցաւ ի Քրիստոս մահուամբ վարդապետն մեծ որ Սարկաւագն կոչիւր՝ ի Հաղբատ»[23]: Բազմաթիվ ձեռագրերում Հովհաննեսը իր երկերի վերնագրերում հիշատակում է՝ «Աղաւթք Յոհաննու սրբոյ վարդապետի որ մականուն Սարկաւագ կոչի»[24] կամ «Յովհաննէս վարդապետ, որը Սարկաւագ (διάκονος) կոչիւր»[25]:

«Սարկավագ» մականունից բացի, Հովհաննեսը տարբեր ստեղծագործություններում հիշատակվում է հետևյալ մակդիրներով՝ «մեծ վարդապետ», «մեծ//քաջ իմաստասէր», «հռետոր», «մեծ սոփեստոս», «պուէտիկոս», և այլն[26]: Երբեմն նա հիշատակվել է մի քանի մակդիրներով[27] «քաջ իմաստասէրն և սոփեստոս հռետորն Յովհաննէս վարդապետ, որ Սարկաւագ կոչիւր»[28]:

Ալիշանը արդարացիորեն նշում է, որ հայերենում «փիլիսոփա» բառը գործածվում է երեք իմաստով, մասնավորապես՝ հայ հին մատենագրության մեջ որպես «փիլիսոփայ» հայտնի է Դավիթ Անհաղթը, որպես «իմաստասէր»՝ Հովհաննես Օձնեցին, «սոփեստէս»՝ Հովհաննես Սարկավագը[29], նույն այս Հովհաննեսը, ինչպես երևում է նրա իսկ մի աշխատության վերնագրից, կոչվում է «մեծ պուէտիկոս»[30]:

---

[21] Հմմտ. նույն անունները նույնպես՝ Յարութիւն, Համբարձում, Գալուստ, Արքայութիւն և այլն:

[22] **Սամուէլ**, 97:

[23] **Նույն տեղում**., 129.

[24] Տե՛ս էջմ. թանգ. հին հավաք. ձեռ. Ցմր 7 (=16), էջ 71ա, **Տաշեան**, Ցուցակ, 465, 466, 467, **Հ. Աճառեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի, Վն., 1900, էջ 23: **Ոսկեան**, Մատ. քննութ., 34:

[25] **Տաշեան**, Ցուցակ, 397, 398:

[26] **Ղ. Ալիշան**, Յուշիկք, Բ., 285: **Տաշեան**, Ցուցակ, 397, 463-464:

[27] Հովհաննես Սարկավագի տաղանդի բնութագիրը տե՛ս **Ղ. Ալիշան**, Յուշիկք, Բ., 279:

[28] **Տաշեան**, Ցուցակ, 397 = 851:

[29] **Ղ. Ալիշան**, Յուշիկք, Բ., 307, որպես սոփեստոս է հիշատակվում նաև Հաղբատի կուսանաց վանքում թաղված Ստեփանը (Սոփեստոս Ստեփաննոս):

[30] Տե՛ս էջմ. թանգ. հին հավաք. ձեռ. Ցմր 777 (=526). էջ 51բ (ԺԳ. դար), հմմտ. **Գարեգին Յովսէփեան**, Գրչութեան արուեստը հին Հայոց մէջ, մ. գ. Քարտէզ հայ հնագրութեան, Վաղ., 1913, տախտակ ԿԵ., նկ. Ցմր 112:

Կիրակոս Գանձակեցին Հովհաննեսի կյանքից նկարագրում է երկու դրվագ, որոնք լավագույնս բնութագրում են նշանավոր գիտնականի անսպառ ունակությունները ու մեծ տաղանդը:

Առաջին դրվագում Կիրակոսը Հովհաննես Սարկավագին ներկայացնում է իր ժամանակակցի և բարեկամի՝ Ալավկա որդի Դավթի և Թոքակերի որդի Գրիգորի հետ, որոնք (երեքն էլ) Գանձակ աշխարհից էին, որտեղից էր և ինքը՝ Կիրակոսը, և պատմում է հետևյալը. «Եւ միւս եւս սքանչելի վարդապետ, զոր Թոքակերի որդի կոչէին, Գրիգոր անուն: Սոքա երեքեանս էին յաշխարհէն Գանձակայ, ուստի եւ ես: Դէպ եղեւ, զի յաւուր միում նստէին երեքեան արքս սքանչելի, եկն անդ ոմն չինական այր մի եւ ասէ ցնոսա. «Երանի՛ որ գիտէ, թէ ի ձէնջ ո՞ իմաստագոյն իցէ»: Զայս իբրեւ ծաղրական ասաց: Պատասխանի ետ Թոքակերի որդին եւ ասէ. «Ես ասեմ քեզ: Մինչդեռ էաք ի մերում աշխարհին, ես կտրող էի եւ կարող. իսկ Սարկաւագս՝ կարել միայն գիտէր. իսկ այժմ սա կտրէ եւ կարէ[31], եւ բազում նկարս յաւելու ի վերայ»: Զայս առակաբար վասն իմաստութեան նորա ասաց: Զի ա՛յնպէս փոյթ էր այրն յուսումն, մինչ զի պատահեաց յաւուր միում գնալ նմա յայրն, ո՛ւր գրեանն էին, եւ այլք ընդ նմա: Իբրեւ ելին, որ ընդ նմայն էին, եւ փակեցին զդուռն, նա թաքոյց զանձն ի ներքս, այսպէս գիտելով նոցա, եթէ նախ ել նա: Իբրեւ անցին բազում աւուրք ի վերայ, դարձեալ գնացին յայրն ի պէտս ինչ, տեսին զնա եւ սքանչացան, հարցանէին զնա, թէ՝ «Ո՞րպէս ապրեցար առանց կերակրոյ եւ ըմպելոյ»: Եւ նա եցոյց նոցա զգրեանն, զոր ընթերցեալ էր. եւ ասէ՝ «Այդ է իմ կերակուր եւ ըմպելի, զոր կերայ եւ արբի զաւուրս զայսոսիկ»»[32]:

Երկրորդ դրվագում պատմվում է, թե ինչպես Հովհաննես Սարկավագը Ստեփանոս Զոմզոմային արգելում է ժամերգություն (սուրբ պատարագ) կատարել, և հետո նա հրամայում է վերականգնել Զոմզոմայի բոլոր իրավունքները այն բանից հետո, երբ վերջինս նպատակադրվել էր սպանել Հովհաննես Սարկավագին, երբ նա՝ Հովհաննեսը, «գայր, յայրէ անտի, որ ի ներքոյ կայ վանիցն, հայելով ի վերայ գետոյն»[33]:

Պատմաբանները բավական ընդարձակ պատմում են Հովհաննե-

---

[31] **Ոսկեան**, Մատ. քննութ., 10:

[32] **Կիրակոս**, 107-108:

[33] **Նույն տեղում**, 105-106.

(1122-1126 թվականների միջև) կոչել է «իմաստասէրն աստուածային», նմանապես նա հիշվում է Դավիթ Շինարարի հետ իր ունեցած հանդիպումների ընթացքում, մոտավորապես 1123-1125 թվականների միջև, ինչի վրա մեր ուշադրությունն են հրավիրում «Քարթլիս ցխովրեբայի» հայկական տարբերակը, Կիրակոս Գանձակեցին *և այլ սկզբնաղբյուրներ*[44]*:*

Եվ, այսպես, Հովհաննես Սարկավագի մահվան վերջնական թվականը մենք պետք է ընդունենք 1129-ը[45]*, իսկ, ընդհանրապես, նրան պետք է համարենք Դավիթ Շինարարի և Արսեն Իղալթոեցու*[46] *ժամանակակիցը:*

Ինչպես ասված է «Քարթլիս ցխովրեբա»-ի հայկական տարբերակում՝ Հովհաննես Սարկավագը [1123-1125] թվականներին բավականին ծեր է եղել: Ահա թե ինչու, Մ. Չամչյանը, *միանգամայն իրավացիորեն, հանգել է եզրակացության, որ Հովհաննեսը վախճանվել է «ի բարւոք ծերութեան»*[47]*, և ստացվում է, որ նա պետք է ծնված լինի ԺԱ. դարի կեսերին կամ ավելի վաղ:* Ոսկյանը *ենթադրում է, որ Հովհաննեսն իր մահկանացուն պետք է կնքած լինի 75-85 տարեկանում, և սրանից ելնելով՝ նրա ծննդյան թվականը պետք է «ամփոփել 1044-1054 թվականների միջև»*[48]*, չնայած դա հաստատելու համար նա որևէ փաստարկ չի վկայում:*

Հովհաննես Սարկավագ վարդապետի աճյունը հանգչում է ճիշտ այն վայրում, որտեղ մատնանշում է Կիրակոս Գանձակեցին՝ *Հաղբատի մայրավանքի փառահեղ դամբարանում՝ հայ ճարտարապետների գլուխգործոց ճանաչված հրաշագեղ զանգակատան առաջ, իր ժամանակակիցների, բարեկամների և աշակերտների շարքում (տե՛ս նկար Հ[մր] 2, էջ 53): Գերեզմանի վրա դրված է դագաղանման սպիտակավուն ժայռաբեկոր (տե՛ս նույն տեղում վերջին գերեզմանը), որ զարդարուած է բոլորգիր հայերենով գրված հակիրճ, բայց բազմիմաստ երկտող մակագրությամբ*[49]*:*

[44] Տե՛ս հաջորդ գլուխը:

[45] Տարօրինակ է **Սմալի** (**S. Somal**, Quadro della storia letteraria di Armenia, Venezia 1829, p. 89) կարծիքը, թե, իբր, Հովհաննես Սարկավագն ապրել (ստեղծագործել) է Գրիգոր Պահլավունու ժամանակ՝ 1157 թվականին (sic):

[46] **Կոռն. Կեկելիձե**, Վրաց գրականության պատմություն, I, էջ 287 և ծնթ.. 2 և էջ 541:

[47] **Մ. Չամչեան**, Պատմութիւն Հայոց, Գ., Վնտ., 1786, էջ 41:

[48] **Ոսկեան**, Մատ. քննութ., 3:

[49] Ստուգված է մեր կողմից: Գրականություն. **Մինաս Բժշկեանց**, ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 80 (§ 126), **Տէր-Յովհաննես Ոսկերչեանց**, Հաւաքումն արձանագրութեանց [**Տաշեան**, Ցուցակ, 984], «Կռունկ Հայոց աշխարհի», 1862, ապրիլ, **Յովհ. Դրիմեցի**, 40, **Երզնկեան**, 52, **Աղանեանց**, Հնից-նորից, 10, **Լալայեան**, 408, **Կոստանեանց**, 30, **Ոսկեան**, 39-40:

ԱՐՁԱՆՍ ԱՅՍ ՍԵՄԱԿԱՆ[50] *Է ՍՈՓԵ*

ՍՏՈՍԻ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ Ո.[51]*:*

«Արձանս այս սեմական է Սոփեստոսի Սարկաւագին. Ո.» 600 <1151>»[52]*:*

[50] Այդ բառը Ռոստոմբեկ Երզնկյանը (**Երզնկեան**, 52) և **Լալայանը (Լալայեան**, 408) կարդում են վսեմական (sic!), ոմանք էլ՝ **սեփական** (այս մասին տե՛ս **Ալիշան**, Յուշիկք, Բ., 306, **Ոսկեան**, Մատ. քննութ. 22), բայց սրանցից ոչ մեկն ընդունելի չէ, որովհետև, եթե [վ]սեմական լիներ, կհակադրվեր [ն]սեմական-ին, և ամբողջ նախադասությունը այլ կառույց կունենար՝ «արձանս այս է [վ]սեմական Սոփեստոսի Սարկաւագին. Ո.», այսինքն՝ օժանդակ բայը այս տերմինից առաջ պիտի գրեին, իսկ սեմական-ի փոխարեն սեփական կարդալը, ինչպես իրավացիորեն նշում է **Ոսկյանը** նույն տեղ., «բռնի է». **Ալիշանը** (Յուշիկք, Բ., 306, հմմտ, Հայապատում, Ա., 95) ճիշտ է նկատում, որ սեմական բառը ունի սեամ հիմքը և նշանակում է, որ «այն քարն իբրև սեամ է, զոր կոխելով Սարկաւագ՝ պիտի մտնէ յանմահութեան տաճարը»: Միաժամանակ կարծիք է հայտնում, թե՝ «Ով գիտե, գուցե Սարկավագն ինքն է հանճնարարել, որ այդպես գրեն»: Սեմական տերմինի ծագումը սեմ-ից՝ **սեմ, դրունք** իմաստով, ընդունելի է համարում նաև **Ոսկյանը** (**Ոսկեան**, Մատ. քննութ., 22), բայց վերջինիս համար անհիմն է **Ալիշանի** կարծիքը այն մասում, որտեղ ասված է, իբր, Սարկավագն ինքն է կենդանության օրոք հանճնարարել, որ ժայռաբեկորի վրա այդպես գրեն, քանզի նրա կարծիքով, Սարկավագը՝ որպես համեստ անձնավորություն, չէր կարող ինքն իրեն սոփեստոս անվանել: Մակագրությունն ընթերցվում է «սեմական», ինչը **Ալիշանի** և **Ոսկյանի** մեկնաբանությամբ հնարավոր է՝ առաջացել է սեամ բառից, իսկ դա նշանակում է «շեմ», «դրունք» (հմմտ. Հայկազեան բառարան, 704):

[51] Հովհաննես Սարկավագին հայ հին գրականության մեջ, **Թովմաս Վանանդեցուց** բացի, հիշատակում է նաև **Յովհաննես Գառնեցին** հետևյալ խոսքերով՝ «Եւ ապա գնացի հետի իմով ի սուրբ ուխտն Հաղբատ՝ ի վանք նորուն, եւ երկրպագեցի սուրբ խաչին եւ համբուրեցի գերկնային գանձարանն՝ զկենդանի եւ զբժշկաբաշխ գերեզման մեծի եւ տեսանող իմաստասիրին հայոց՝ սուրբ վարդապետին Յոհաննիսի, որ Սարկաւագ կոչեցեալ» (**Տաշեան**, Ցուցակ, 465, **Ոսկեան**, Մատ. քննութ, 34):

[52] Հմմտ. Նման բովանդակության արձանագրություն՝ փորագրված 673 = 1224 թ., կա Հաղբատի կուսանաց վանքում՝ «Արձանս այս սեմական է Սոփեստոսի Տէր Ստեփաննոսի» (**Յովհ. Դրիմեցի**, 36 = **Երզնկեան**, 65 = **Լալայեան**, 414, հմմտ. **Ոսկեան**, 22-23), հետևաբար, սոփեստոս է եղել նաև Ստեփանոսը, մինչդեռ վերջինս այն Ստեփանոսն է, որը հիշատակվում է **Թովմաս Վանանդեցու** բանաստեղծության մեջ և ոչ թե Զոմզոմա կոչված Ստեփանոսը:

ԳԼՈՒԽ Ջ.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԸ ԵՎ ՎՐԱՑԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Առանձնապես հիշատակելի է Հովհաննես Սարկավագի հեղինակությունը վրացիների մեջ և ընդհանրապես նրա կապը վրացիների հետ:

Ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, Հովհաննեսը՝ որպես ուսյալ և հանրաճանաչ գիտնական, սերտ կապեր ուներ ղեկավար շրջանների՝ հոգևորականության, պալատի, ինչպես նաև անձամբ իր՝ Դավիթ Շինարար արքայի հետ:

Այս գրքի առաջին մասի չորրորդ գլխից արդեն գիտենք, որ Հայաստանը, մասնավորապես, այսպես կոչված, «Հյուսիսային կողմերը» գրավելու ժամանակ (1123 թ.), Դավիթ Շինարարը դավանանքի առումով զգալի ներողամտություն ցուցաբերեց հայերի հանդեպ, որի մասին Մատթեոս Ուռհայեցին պատմում է հետևյալը. «Եւ էր Դաւիթ արքայ սուրբ և առաքինի, զարդարեալ ամենայն աստուածապաշտութեամբ և բարի արդարութեամբ, և սա երևեցաւ ընդունող և սիրող ազգին Հայոց: Առ սա ժողովեցան մնացեալ զօրքն Հայոց. և սա չինեաց քաղաք Հայոց յաչխարհն Վրաց և հաստատեաց եկեղեցիս և վանորայս բազումս, և անուանեաց զանուն քաղաքին Գոռա (Գոռա՝ այժմյան Գորի քաղաքը), և ունէր մեծաւ ուախութեամբ և ցնծութեամբ զամենայն ազգն Հայոց»[1]:

Դավիթ Շինարարը մոտ հարաբերությունների մեջ է եղել Հայոց եկեղեցու գլուխ կանգնած գործիչների, մասնավորապես Վրաստանի սահմաններում գտնվող գիտագրական հանրահայտ օջախների ղեկավարների հետ:

Այս առումով չափազանց հետաքրքիր է «Քարթլիս ցխովրեբա»-ի հայկական տարբերակի (ԺԲ-ԺԳ. դդ.) վերջին մասը, որը վրացերեն բնագրից հիմնականում տարբերվում է նրանով, որ եթե վրացերեն համապատասխան տեղում պատմվում է հայ-վրացական եկեղեցական պառակտման մասին՝ Դավիթ Շինարարի ժամանակ, ապա հայերեն տարբերակում այդ վիճաբանության մասին խոսվում է հակիրճ, փոխարենը համեմատաբար ընդարձակ տեղ է հատկացված Դավիթ Շինարարի և Հովհաննես Սարկավագի հարաբերություններին:

Առանձնահատուկ հետաքրքրության համար այդ մասը բերում ենք ամբողջությամբ, վերականգնված գոյություն ունեցող բոլոր ձեռագրիպ տարբերակների հիման վրա.

«...Այլ և կամեցաւ [թագաւորն Դաւիթ] միաւորել զՀայս և զՎիրս. և կոչեաց զՅովհաննէս կաթողիկոսն Քարթլայ և զԱրսէնիոս Քարթլեցի՝ զթարգմանն Վրաց և Յունաց լեզուին, և զեպիսկոպոսս, և զվարդապետս Հայոց. և արար ժողով, և քննէին յառաւաւտէ մինչև ցերեկոյ, և ոչ հաւանէին միմեանց: Ապա ասէ թագաւորն. «Մեք անվարժ եմք ի խորագոյն բանսդ՝ զոր արկեալ էք առաջի, և ոչ կարեմք դուք ելանել ի դուրս»: Եւ ինքն պարզ և յայտնի բանիւ խաղացուցեալ զերկոսին կողմանն՝ արձակեաց զժողովն:

Այլ ինքն սիրէր զազգն Հայոց և զեկեղեցիսն և զոմն հռետոր վարդապետ ի Հաղբատ՝ Սարկաւագ անուն, խոստովանէր նմա զյանցանս իւր և կորացուցեալ զպատուական գլուխն՝ աւրհնէր ի նմանէ, և նատէր ընդ նմա և փարէր զպարանոցաւ նորա, և նա ասէր. «Լուծեալ եմ և հոտեալ ի ծերութենէս, ի բաց գնա՛ յինէն, զի մի՛ աչխատ լիցիս»: Եւ թագաւորն համբուրէր և ասէր՝ «Անպակաս լիցի հոտս այս յինէն, հա՛յր պատուական»: Եւ պարգեւաց նմա գեաւղ առ ընթեր վանացն ի ծառայութիւն նմա: Եւ ի յաւրհնելն զթագաւորն զայս ասէր, եղեալ զձեռս ի վերայ գլխոյն. «Գտի զ Դաւիթ ծառայ իմ և եւղով սրբով իմով աւծի զնա» (մինչև ցառաներորդ տունն)[2]: Եւ զուարճանայր արքայն և գովէր գեղեցկակերպ թարգմանութիւնն Հայոց»[3]:

Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի Ասիական թանգարանում պահված ձեռագրի համապատասխան պարբերությունների լուսանցքներում հավելված են ուշադրության արժանի հետևյալ վերնագրերը. առաջինի դիմաց՝ «Առնէ [թագաւորն Դաւիթ] ժողով վասն միաւորութեան Հայոց և Վրաց», երկրորդի դիմաց՝ «Սէր

---

[1] **Մատթեոս Ուռհայեցի**, 356:

[2] Սաղմոս ՁԸ., 21-33:

[3] Տե՛ս էջմիածնի թանգարանի հին հավաք. ձեռ. Ձ՛՛՛ 1902 (=1792), ԺԳ. դար, էջ 309բ-310բ (սիգնատուրայով՝ Վրաց պատմութիւն) և Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի Ասիական թանգարանի № [ИВ, В 133], ակադ. **Մ. Բրոսեն** վերնագիրը ԺԸ. դարի ոճին համապատասխան ֆրանսերեն թարգմանել է Chronique Arménienne (**M. Brosset**, Additions, 60-61), ինչպես նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության, որի համաձայն հայերեն թարգմանությունը իրականացրել է **Ա. Տ[իրոյեան]**ը (Համառօտ Պատմութիւն Վրաց, Վնտ., 1884, էջ 122-123):

Դաւթի թագաւորի առ Յովհաննէս Սարկաւագ վարդապետան Հայոց»:

Իսկ Կիրակոս Գանձակեցին *Հովհաննես Սարկավագի հանդեպ Դավիթ Շինարարի տածած սերը նկարագրում է հետևյալ կերպ. «Եւ կարի յոյժ սիրէր զսա թագաւորն Վրաց Դաւիթ, Հայրն Դեմետրեայ, պապն Դաւթի եւ Գիորգեայ, այնքա՛ն, զի մինչ լսէր զգալուստ նորա, յոտն յառնէր եւ ելանէր ընդ առաջ նորա, եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ խնդրէր ի նմանէ օրհնութիւն. եւ նա եդեալ գձեռն ի վերայ գլխոյ նորա, զայս սաղմոս ասէր. «Գտի զ Դաւիթ ծառայ իմ եւ իւղով սրբով իմով օծի զնա: Ձեռն իմ ընկալցի զնա եւ բազուկ իմ զօրացուսցէ զնա: Մի՛ մեղիցէ նմա թշնամի[4] եւ որդի անօրէնութեան մի՛ չարչարեսցէ զնա»: Եւ ի պատճառս, սորա սիրէր թագաւորն զազգս Հայոց»[5]:*

«Քարթլիս ցխովրեբայի» հայկական տարբերակի և Կիրակոս Գանձակեցու *խոսքերից ելնելով՝ դյուրին կարող ենք ընկալել Վարդանի այն խոսքերը, որոնք պետք է որ Դավիթ Շինարարի և Հովհաննես Սարկավագի հարաբերություններին վերաբերելիս լինեն «Եւ ոչ էր նա երկմիտ յեկեղեցւոյ և յաղօթից մերոյ. վասն որոյ բազում անգամ դնէր գգլուխ իւր 'ի ներքոյ ձեռաց մերոցն՝ խնդրելով օրհնութիւն..»[6]:*

Շատ ավելի ուշագրավ է հայկական տարբերակի այն տեղեկությունը, որտեղ նշված է, որ Դավիթը՝ ի պատիվ Հովհաննես Սարկավագի նկատմամբ տածած հարգանքի և սիրո, «Եւ պարգևաց նմա գեաւղ առ ընթեր վանացն [Հաղպատայ]՝ ի ծառայութիւն նմա», որը, ասես հաստատվում է Հաղբատի գլխավոր եկեղեցու արևմտյան մուտքի բարավոր սալաքարի վրայի մակագրությամբ (գլխավոր մուտքի մոտ), որը պետք է որ փորագրված լինի 572=1123 թ. ոչ շուտ և 574=1125 թ. ոչ ուշ:

Մակագրության մեջ, որ վնասված է և հազիվ է կարդացվում, ի միջի այլոց, ասվում է. «Ի ժամանակս ինքնակալ արքային Դաւթի բարեպաշտի և յաղթաւղի՝ որդւոյ Գիորգեայ, որդւոյ Բագրատայ... որ տիրեաց գաւառս և ազինս... եղև խնամաւղ Հաղբատայ և Սանահնի... ընթացեալ քաղցր և բարեսէր աստուածպաշտութեամբ... զՀաղբատս ի մթնութենէ աւերութեանն ազատեաց, գրով և վճռով ընծայեաց ի սուրբ եկեղեցիս զայգիս..., զգեւղն... և ամենայն հողով և

4 Սաղմոս ՁԸ., 21-23:

5 **Կիրակոս**, 105:

6 **Վարդան**, 120:

վիճակովն... զեղեալ կալուածս ամենայն վերահաստատեաց... Գրեցաւ գիրս յարքեպիսկոպոսութեան... առաջնորդի Հաղբատայ, որ է եղբայր Գրիգորի... ի թուին ՇՀ. [Բ. - Գ. -Դ.][7]:

Վրացական միջավայրի հետ Հովհաննես Սարկավագի ունեցած կապերի մասին է խոսում հրատարակված մի բավականին հետաքրքիր երկասիրություն, որը մեզ է հասել ԺԳ. դարի մեկ եզակի ձեռագրի տեսքով և ունի հետևյալ վերնագիրը. «Հարցմունք Վրաց եպիսկոպոսի ի Հայոց վարդապետէ Սարկաւագէն՝ Գիր[8] գոլով յազգս ամենայն, եթէ զի՞արդ ունի երգք սաղմոսին ասացեալ՝ «Դու խորտակեցեր զգլուխ վիշապաց ի վերայ ջուրց: Դու փչրեցեր զգլուխ վիշապին և եատուր զնա կերակուր զաւրացն Հնդկաց[9]»[10]:*

Բոլոր այս տեղեկությունները խոսում են այն մասին, որ Հովհաննես Սարկավագը մեծ հեղինակություն է եղել ոչ միայն հայերի, այլև վրացիների համար:

Մենք, իհարկե, այստեղ կանգ չենք առնի այն երևույթի մեկնություն-բացատրության վրա, թե ինչու են իրարից տարբերվում Դավիթ Շինարարի պատմիչի երկի և «Քարթլիս ցխովրեբա»-ի հայերեն տարբերակները. խոսքը վերաբերում է Դավթի ժամանակ՝ մոտավորապես 1123-1125 թվականներին տեղի ունեցած հայ-վրացական բանավեճերի նկարագրությանը, որ ինչպես բովանդակությամբ, այնպես էլ, առավել ևս, փաստերը վկայելու առումով հակադրվում են իրար. ըստ Դավթի պատմագրի՝ այն անցել է հօգուտ վրացիների (այսինքն՝ ըստ այս պատմիչի՝ վրացիներն են հաղթողները), իսկ հայկական տարբերակով՝ հօգուտ հայերի (այսինքն՝ այս տարբերակով էլ հայերն են հաղթողները)[11]: Ճիշտ այնպես, ինչպես վրաց Արսեն կաթողիկոսի (Թ. դ.) և հայ Ուխտանես եպիսկոպոսի (Ժ. դ.) երկերը իրենց միակողմանիությամբ հակասում են միմյանց: Մեզ համար ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ բո-

7 **Յովհ. Ղրիմեցի**, 4 = **Երզնկեան**, 32 = **Կոստանեանց**, 28, հմմտ. [**А. Ерицов**], Ахпатский монастырь.- «Кавк. старина», № 2 (1872), стр. 51: Տարեթվի մասին տե՛ս վերը՝ առաջին մասի Գլ. Դ., ծնթ. 21:

8 * Ճիշտը՝ «գեր», իմա՝ վեր, բարձր - Գ. Տ-Վ.]:

9 Սաղմոս ՃԳ. 13-14:

10 Տե՛ս Երուսաղեմի հայոց պատրիարքության գրադարանի ձեռ. Ֆ՝ր 1272, որը թվագրված է 739 = 1290 թ., էջ 376ա-380բ: Օգտվում ենք **Գարեգին Հովսեփյանի** անձամբ մեզ տրամադրած նյութից: Նմանապես՝ հմմտ. **Գար. Զ[արբհանալեան]**, Հայկական հին դպրութեան պատմութիւն, 615 ծնթ.: 1, **Եր[ուանդ]** ս. **[Տէր-Մինասեանց]**, Հաղբատ և Սանահին վանքերը, 341:

11 Հմմտ. **Ա. Տ[իրոյան]ի** ծանոթագրությունները. Համառօտ Պատմութիւն Վրաց, էջ 122-123, ծնթ. 2:

լոր վերոհիշյալների և մասնավորապես «Քարթլիս ցխովրեբա»-ի հայկական տարբերակի տեղեկություններով մենք գրեթե հնարավորություն ենք ստանում կռահելու Դավիթ Շինարարի պատմիչի՝ հայ գործիչների մասին մշուշապատ տեղեկությունը, «ովքեր հասել են ամենայն ուսմանց և գիտության», երբ նա խոսում է Դավիթ Շինարարի ժամանակ (1123-1125)[12] *Տփղիսում կայացած հայ-վրացական եկեղեցական բանավեճի մասին, իր՝ Դավիթ արքայի, Հովհան կաթողիկոսի և Արսեն Իղալթոյեցու (ըստ Կոռն. Կեկելիձեի՝ Արսեն որդի Վաչեի [Մաղաչվիլու՞])*[13] *ներկայությամբ:*

Դավթի պատմիչի երկում ասված է.

«Մի օր հավաքվեցին արքայի առաջ չարսիրտ ցեղակիցները՝ հայ բազմաթիվ նենգ եպիսկոպոսներ և նրանց վանքերի առաջնորդներ, ովքեր պարծենում էին, թե ինչպես են հասել ամենայն ուսմանց և գիտության գագաթնակետին»[14]*:*

Մենք գիտենք, որ 1) Դավիթ Շինարարի ժամանակակից, ականավոր կամ ավելին՝ հանրահռչակ հայոց վարդապետներից և գործիչներից էր Հովհաննես Սարկավագը, ում հանդեպ բարեկամաբար էր տրամադրված ինքը՝ Դավիթը, և ում խորապես հարգում էր. 2) Հովհաննես Սարկավագը ճիշտ և ճիշտ այն անձնավորությունն էր, ով, եթե կրկնենք Դավթի պատմիչի խոսքերը. «հասել էր ամենայն ուսմանց և գիտության գագաթնակետին» և ով ժամանակակիցն էր Արսեն Իղալթոյեցու» (Արսեն որդի Վաչեի՞). 3) Հովհաննես Սարկավագը՝ հյուսիսային կողմանց և, մասնավորապես, Հաղբատի մայրավանքի ակնառու ներկայացուցիչը, Վրաց արքունիքին մերձավոր անձնավորությունը, այնպիսի նշանակություն ունեցող հարցի քննարկմանը, որպիսին հայ-վրացական միաբանության համար գումարված բանավեճն էր, վրաց Իոանե (Հովհան) կաթողիկոսի և Արսեն Իղալթոյեցու մասնակցությամբ, իհարկե չէր կարող պատշաճ մասնակցություն չունենալ: Ահա ինչու, կարելի է կարծել, որ Դավթի պատմիչը երբ խոսում էր հայոց «բազմաթիվ եպիսկոպոսների և վարդապետների մասին, որոնք «պարծենում էին, թե ինչպես հասել են ամենայն ուսմանց և գիտության գագաթնակետին», նախ և առաջ նկատի ուներ Հովհաննես Սարկավագ վարդապետին, որին հիշատակում է առաջիններից (և ներկայացնում որ-

[12] Հմմտ. պրոֆ. **Կոռն. Կեկելիձե**, Վրաց գրականության պատմություն, I, 289:

[13] **Նույն տեղում**, 287, հմմտ. 541:

[14] Տե՛ս Աննա թագուհու «Քարթլիս ցխովրեբա»-ի ձեռագիրը, տետր. 3r (էջ 5), հմմտ, **Ք. Ց.**, Թաղ., 325-326 = **Բրոսէ**, 258:

պես հաղթողի) «Քարթլիս ցխովրեբա»-ի հայկական տարբերակում, իսկ հետագայում նաև նույն ժամանակաշրջանի ուրիշ հայտնի գործիչների երկերում, որպիսիք են Հովհաննես Սարկավագի ժամանակակիցների և բարեկամներից Ալավկա որդի Դավիթը և Թոքակերի որդի Գրիգորը:

Ամբողջ վերոգրյալից հետո մենք չենք կարող չմիանալ Աբրահամ Զամինյանի գնահատանքին, որ «իր ունեցած մեծիմաստ յուսանափիտությամբ՝ Սարկաւագ վարդապետը փառաւորեց Հաղբատի անունը: Նա ոչ միայն հայերէն, այլ և վրացիներէն մեծ յարգանք կը վայելէր»[15]*:*

[15] **Աբր. Զամ[ինեան]**, Պատմութիւն հայ գրականութեան, Ա., 169:

ԳԼՈՒԽ Է.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ԳԻՏԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Սարկավագին բնութագրող մակդիրները՝ «հռետոր», «իմաստասեր», «սոփեստոս» և «պոետիկոս» («պոետ»), պարզ ցույց են տալիս, թե ինչ մեծ գիտնական և մտածող պետք է եղած լինի նա ժԲ. դարի հայոց գիտագրական ասպարեզում:

Իրավացի է Մանուկ Աբեղյանը, որ Հովհաննեսին համարում է «մեծ գիտնական, փիլիսոփայ, մատենագիր, տոմարագետ, պատմագիր, հեղինակ կրոնական ներբողյանների, ճարտասան և բանաստեղծ»[1]*:*

Աբրահամ Զամինյանը *Հովհաննեսի աշխատությունները բաժանում է չորս գլխավոր բնագավառի՝ 1) Կրոնական, 2) Տոմարագիտական, 3) Քերթողական, 4) Պատմական*[2]*:*

Համազասպ Ոսկյանը *նպատակահարմար է գտել դրանք բաժանել 9 մասի՝ 1) Ներբողներ, 2) Ճառ քահանայության, 3) Աղոթագիրք, 4) Սաղմոս, 5) Պատմություն, 6) Ի սարեկ թուչունն, 7) Տոմարական երկեր, 8) Մանր և տարակուսական երկեր, 9) Քննություն Պիսիդեսի «Վեցօրեայքի*[3]*»: Մենք անձամբ ցանկանում ենք Հովհաննես Սարկավագի գիտագրական գործունեության վերլուծությունը ներկայացնել բոլորովին այլ սկզբունքով: Սակայն նախօրոք պետք է ստուգենք հին պատմիչների՝ տվյալ հարցին առնչվող տեղեկությունները:*

Անանիա Սանահնեցու գործունեությունը բնութագրելուց հետո, Կիրակոս Գանձակեցին *անդրադառնում է Հովհաննես Սարկավագին. «Սոյնպէս եւ մեծիմաստն գիտութեամբ քան զյոլովս եւ հանճարեղն*

---

[1] **Մ. Աբեղյան**, Համառոտություն հայ ժողովրդական վեպի յեվ պատմության, Յերեվան, 1923, էջ 44:

[2] **Աբր. Զամ[ինեան]**, Պատմութիւն հայ գրականութեան, Ա., 169:

[3] **Ոսկեան**, Մատ. քննութ., 26: **Ալիշան** (Յովհաննէս Սարկաւագ-Վարդապետ.- «Բազմավէպ» 1847, № 14, էջ 218 և հջրդ): Հայապատում, Ա., 93 և հջրդ): Ներկայացված դասակարգմանը դիտմամբ չենք անդրադառնում, որովհետև դա ոչ մի քննադատության չի դիմանում:

յամենայնի՝ մտահարուստն Յովհաննէս, Սարկաւագն կոչեցեալ, ի Հաղբատ: Սա բազում ինչ աշխատասիրեաց ի գիրս՝ յիշատակ բարի թողեալ. սա զբազմաց փափագելին եւ ո՛չ ձեռնհաս, զհաստատ եւ զանշարժ տոմարն կարգեաց հայոց փոխանակ շարժականին եւ անհաստատնոյն. արար եւ միաբանութիւն ամենայն ազգաց տոմարի ընդ հայոց. վասն զի յոյժ իմաստուն էր այրն եւ աստուածային շնորհօք զարդարեալ, նորա բանքն ամենայն իմաստասիրական ոճով, որպէս զ Գրիգորի Աստուածաբանին, եւ ոչ գեղջուկ: Սա գրեաց ճառս ներբողականս ի մեծազօր արքայն Հայոց Տրդատ, եւ ի սուրբ հայրապետն Ներսէս, եւ ի սքանչելին Սահակ եւ Մեսրոպ. արար եւ շարական Ղեւոնդեանցն՝ քաղցր եղանակաւ եւ յարմար բանիւ, որոյ սկիզբն է այս. «Պայծառացան այսօր սուրբք եկեղեցիք»: Գրեաց նոցուն եւ ճառս ներբողականս. գրեաց սա եւ Գիրս աղօթից. գրեաց եւ օրինակս ստոյգ գրոց»[4]*:*

Այսպես ուրեմն, ըստ Կիրակոսի՝ *Հովհաննես Սարկավագը շատ մեծ վաստակ ունի հայոց մատենագրության պատմության մեջ. «... Սա զհաստատ և զանշարժ տոմարն կարգեաց Հայոց՝ փոխանակ շարժականին և անհաստատնոյն... գրեաց ճառս ներբողականս ի մեծազոր արքայն Տրդատ, և ի սուրբ հայրապետն Ներսէս, և՛ի սքանչելին Սահակ և Մեսրոպ, արար և շարական Ղևոնդեանցն՝ քաղցր եղանակաւ և յարմար բանիւ, գրեաց սա Գիրս աղօթից, գրեաց և օրինակ ստոյգ գրոց»:*

Բացի սրանից, Սամուել Անեցին *ցույց է տալիս Հովհաննես Սարկավագի պատմական այն մեկ երկը, որտեղ նկարագրված է եղել սելջուկների արշավանքի պատմությունը, որտեղից էլ* Սամուելը *վերցրել է որոշ տվյալներ. «...Այսպիսի պատճառաւ ընթերցաք, գրեալ վարդապետին մեծի՝ որ Սարկաւագ վերակոչի անուանեալ»*[5]*:*

Մի այլ տեղ Սամուելը, *պատմելով Մելիքշահի (1072-1092) մասին, մատնանշում է աղբյուրը. «Զայսոսիկ նշանակաւ գրոյ եցոյց մեզ իմաստասէրն մինչև ցՄելիք շահն, զոր յիւրում տեղւոջն գրեցից սորին ձեռնտուութեամբ»*[6]*: «Տեսաք երբեմն գրեալ սորին <այսինքն՝ Սարկավագի> ձեռօք, ստոյգ գտակաւ»*[7]*, «զի ասէ իմաստասերն աստուածային, թէ իբրև առնոյր զփառս իշխանութեանն»*[8]*:*

---

[4] **Կիրակոս**, 104-105:

[5] **Սամուէլ**, 97, հմմտ. **Գ. Զ[արբհանալեան]**, նշ. աշխ., 609:

[6] **Սամուէլ**, 98, հմմտ. **Գ. Զ[արբհանալեան]**, նշ. աշխ., նույն տեղում:

[7] **Սամուէլ**, 98, հմմտ, **Գ. Զ[արբհանալեան]**, նշ. աշխ, 610:

[8] **Սամուէլ**, 115, հմմտ, **Գ. Զ[արբհանալեան]**, նշ. աշխ., loc cit.

Խաչակիրների արշավանքի և Ալեքսիոս Կոմնենոսի մասին խոսելիս Սամուէլը *հաղորդում է, թե.«այս բանք գրեալ էր վարդապետին Սարկաւագի»*[9]*:*

Իսկ Կիրակոսը, *հիմնվելով* Սամուելի *տեղեկությունների վրա, ցույց է տալիս սկզբնաղբյուրը. «...Ձի մինչև ցՄելիքշահ սուլթանն գրեալ էր զպատճառս տիրելոյն նոցա <այսինքն՝ Ռուբինյանների> մեծիմաստ վարդապետին, որ Սարկաւագն կոչէր և երկրորդեալ էր Սամուէլի քահանայ»*[10]*:*

Այս պարագայում Սամուելը *և* Կիրակոսը *նկատի ունեն Հովհաննես Սարկավագի կողմից չարադրված, այսպես կոչված, Պատմությունը, մինչ Մելիքշահը:*

Կիրակոսը *ծանոթ չի եղել Սարկավագի բոլոր աշխատություններին և «Օրինակ ատոյգ գրոց»-ից բացի, չրջանցում է նրա բազմաթիվ երկերը և առաջին հերթին՝ մեկնաբանական երկասիրությունները, որոնք գեղեցկացնում են հայ հին գրականությունը:*

Ընդհանրապես Հովհաննես Սարկավագը իր գիտագրական գործունեության ընթացքում անդրադարձել է մատենագրության համարյա բոլոր ոլորաններին, և նրա աշխատությունները կարելի է քննարկել հետևյալ դասակարգմամբ՝ ջատագովություն-դավանաբանություն (որին հատկացրել ենք առանձին գլուխ), մատենագիտություն, մեկնաբանական երկեր (էգզեգետիկա), ներբողներ, ճգնակեցություն, պատարագ, պոեզիա, տիեզերաբանություն, տոմարագիտություն, պատմաժամանակագրություն:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Սաղմոսարան»՝ «զի սա է գաղափարն գերունակ սուրբ վարդապետին և մեծ սոփեստոսին սուրբ ուխտին Հաղբատայ Սարկաւագին... այն՝ որ բազում ճգամբ զսաղմոսս ի թարգմանչագիր Սաղմոսարանէ գաղափարեաց»[11]*: Ահա թե ինչու, զարմանալի չէ, որ հատկապես այս խմբագրությունը տարածվեց ամբողջ Հայաստանում. «Եւ ցրուեաց ընդ ամենայն սահմանս Հայաստանեայց զայս աւրինակ»*[12]*:*

[9] **Սամուէլ**, 120, հմմտ, **Գ. Զ[արբհանալեան]**, նշ. աշխ., loc cit.

[10] **Կիրակոս**, 78:

[11] **Տաշեան**, Ցուցակ, 463-465, **Գ. Զ[արբհանալեան]**, նշ. աշխ., 614, ծնթ., **Հր. Աճառեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի, Վն., 1900, էջ 23, **Ոսկեան**, Մատ. քննութ, 33-35:

[12] **Տաշեան**, 464, հմմտ. **Ոսկեան**, նշ. աշխ., 35:

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

1. «Կարգադրութիւք գրոց սրբոց, որք ստուգաբանեցան ի Սարկաւագ վարդապետէն, և գրեցան յինէն՝ ի տէր Մխիթար վարդապետէս պատմագրէ ի մին տուփ զաւուրս ճՀ. (170)»[13]*: Այս ստեղծագործությունը, ցավոք, ցայժմ գտնված չէ, և եթե այսօր կարող ենք սրա մասին որոշ դատողություններ անել, ապա լոկ այն տեղեկությունների հիման վրա, որ մեզ փոխանցում է* Մխիթար Այրիվանեցին[14]*: Նոր գիտական գրականության մեջ նրան թուրքիկ են անդրադարձել* Մեսրոպ Տեր-Մովսիսյանը[15] *և* Ներսես Ակինյանը[16]*: Այդ ստեղծագործությունը հետաքրքիր է այնքանով, որ առաջին փորձն է աստվածաշնչյան և փիլիսոփայական երկերի քննության, որը իր տեսակի մեջ հիմք դարձավ բազմաթիվ այլ դասագրքերի համար և, ի միջի այլոց, նաև Աբասի որդի Գրիգորի համար (ԺԲ-ԺԳ. դդ.), այսպես կոչված, «Գիրք պատճառացի» համար*[17]*: Այն գրված է նաև* Վանականի *(ԺԳ. դ.) ցուցակի հիմքում*[18]*:*

Այս ստեղծագործության մեջ, ինչպես նշում է Ն. Ակինյանը, *կազմողը՝ Հովհաննես Սարկավագը, այսպես կոչված «սուրբ գրքերը» բաժանում է երեք խմբի՝ 1) «Նոր կտակարան», 2) «Հին կտակարան», 3) «Նուրբ մատեաններ»*[19]*: Վերջիններիս թվում նկատի են առնվում Փիլոնի, Պորփյուրի, Դիոնիսիոսի, Բարսեղի, Գրիգոր Աստվածաբանի, Գրիգոր Նյուսացու և ուրիշների փիլիսոփայական-այլաբանական գրությունները*[20]*:* Գ. Գալեմքեարյանը[21] *և* Հ. Ոսկեանը[22] *կարծում են՝ թերևս այդ գիրքը նկատի առնվի Հովհաննես Սարկավագի գործունեության այն մեկնաբանության մեջ, որը* Կիրակոսը

[13] **Մխիթարայ Այրիվանեցւոյ** Պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծայեաց **Ք. Պատկանեան**, ՍՊբ., 1867, էջ 33, **Գ. Գալէմքեարեան]**, Մխիթար Այրիվանեցի և իւր նորագիւտ գրութիւնը.- ՀԱ, 1891, էջ 162, հմմտ, **Месроп Тер-Мовсесян,** История перевода Библии на армянский язык, СПб., 1903, стр. 239 և այլն:

[14] Տե՛ս **Մխիթարայ Այրիվանեցւոյ** Պատմութիւն ժամանակագրական, ՍՊբ., 1867, էջ 33-36, **Գ. Գալէմքեարեան]**, op. cit., 163-164:

[15] **М. Тер-Мовсесян**, նշ. աշխ., 229-230, 239-240:

[16] **Ն. Ակինեան**, Մատ. հետազ., 30, 34-43:

[17] **Նույն տեղում**., 36, **Ոսկեան**, Մատ. քննութ., 36-37:

[18] **Բարսեղ Սարգիսեան**, Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանցի Վենետիկ, Ա., Վնտ., 1914, էջ 38, 22:

[19] **Ն. Ակինեան**, նշ. աշխ., 34:

[20] **Ոսկեան**, նշ. աշխ., 36:

[21] **Գ. Գալէմքեարեան]**, նշ. աշխ., էջ 162, ծնթ. 1:

[22] **Ոսկեան**, նշ. աշխ., նույն տեղում:

փոխանցում է «Օրինակ ստոյգ գրոցի» հիշատակումով:

2. «Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու», զոր կհիշէ իր աշակերտն Կունդ Սարգիս[23]:

3. «Հարցմունք Վրաց եպիսկոպոսէ ի Հայոց վարդապետէ Սարկաւագէն՝ գեր գոլով յազգս ամենայն, եթէ գի՞արդ ունի երգք սաղմոսին ասացեալ՝. «Դու խորտակեցեր զգլուխս վիշապաց ի վերա[յ] ջուրց». ևլն.)[24]:

[4.] Գարեգին Զարբհանալյանը *Յովհաննես Սարկավագին է վերագրում նաև Գևորգ Պիսիդեսի «Յաղագս վեցօրեայ արարչութեան»-ի հայերեն[25] թարգմանությունը, բայց այդ միտքը հաստատելու փաստեր չի բերում, և ոչ էլ գոյություն ունեն[26]:*

ՆԵՐԲՈՂՆԵՐ

1. Գրիգոր Լուսավորչին. «Յովհաննու Սարկաւագ վարդապետի՝ Ներբողեան ի սուրբ Գրիգոր Լուսաւորիչն Հայոց[27]»:

2, 3, 4 և 5. «Սա գրեաց ճառս ներբողականս ի մեծազօր արքայն Հայոց Տրդատ, և ի սուրբ հայրապետն Ներսէս, և ի սքանչելին Սահակ և Մեսրոպ. արար և չարական Ղևոնդեանցն՝ քաղցր եղանակաւ և յարմար բանիւ...»,- նշում է Կիրակոսը[28]:

ՃԳՆԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ

1. «Յովհաննու, որ մականուն Սարկաւագ կոչի՝ Յաղագս քահանայութեան և քահանային և գլխոց նոցին»[29]: Այս ստեղծագործության մեջ, որը ինչպես բովանդակությամբ, այնպես էլ ծավալով տարբերվում է «Ընդդեմ երկաբնակաց» երկում զետեղված համա-

[23] **Ղ. Ալիշան**, Յուշիկք, Բ., 300, **Գ. Զ[արբհանալեան]**, Նշ. աշխ., 613, **Ոսկեան**, Նշ. աշխ., 49-59:

[24] Տե՛ս Երուսաղեմի հայոց պատրիարքության գրադարանի ձեռ. Ձմ 1272, էջ 376ա, հմմտ. **Գ. Զ[արբհանալեան]**, Նշ. աշխ., 615, ծնթ. 1:

[25] **Գ. Զ[արբհանալեան]**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, 655-656:

[26] **Յակովբոս Տաշեան**, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք. կև., Բ., 365-366, **Ոսկեան**, Նշ. աշխ., 59-61:

[27] Հրատարակված է՝ Սոփերք Հայկականք, Ե., 1853, էջ 5-36, **Ոսկեան**, Նշ. աշխ., 27-28:

[28] **Կիրակոս**, 104-105, հմմտ. **Ալիշան**, Հայապատում, Ա., 94, **Ոսկեան**, Նշ. աշխ., 28-29:

[29] Հրատարակված է՝ Սոփերք Հայկականք, Գ., 1853, էջ 9-79, հմմտ. **Գ. Գալէմքեարեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Միւնխէն, Վն., 1892, էջ 28, **Ե. [Տէր-Մինասեանց]**, Հաղբատ և Սանահին վանքերը, 342:

պատասխան գլխից՝ «Վասն քահանայութեան և քահանայից», հետևյալ վերնագրով է քահանայի կոչման ծանրությունը և ցույց է տալիս նրա պատասխանատվությունը[30]:

2. «Հարցումն ընդ սուրբ վարդապետն Սարկաւագ՝ եթէ արժան իցէ թողուլ ի ժամանակի ինչ զեղբարս, կենակիցս և երթալ յանապատս»[31]:

3. «Նորին Յովհաննու՝ Յաղագս չորից առաքինութեանց և հետևմանց նոցին»[32]:

4. «Զգուշական խրատս» առ Քոբայրի միաձնուհիներ, կյուրիկյան արքայադուստրեր Խորասու (?) և Մարիամ, որոնց հիշատակում է Վարդանը. «Խորասու և Մարիամ, առ որս գրեր սուրբ Վարդապետն Սարկաւագն զգուշական խրատս»[33]:

[5.] «Պատասխան ի հարցման Զաքարիա քահանայի»[34]:

[6.] «Բանք խրատու ուսումնասիրաց»[35], կցված է № 1-ում նշված երկին, այդ իսկ պատճառով վերագրվում է Հովհաննես Սարկավագին[36]:

ԾԻՍԱԿԱՆՔ

Աղօթքներ և մաղթանքներ 1) Աղօթք առ Աստուած Հայր, 2) Աղօթք առ Հայր, 3) Մաղթանք առ Հայրն երկնաւոր, 4) Աղօթք պղծման առ Հայր, 5) Աղօթք ի դէմս մանկանց առ Հայր Աստուած, 6) Աղօթք առ Քրիստոս Յիսուս (երկու), 7) Աղօթք ընդդէմ Հոգւոյն հայհոյութեան, 8) Աղօթք առ Հոգին Սուրբ, 9) Աղօթք առ Սուրբ Երրորդութիւն, 10) Աղօթք առ ամենասուրբ Երրորդութիւնն, 11) Աղօթք առ Որդին (յոթ), 12) Աղօթք ի դէմս Որդւոյ, 13) Աղօթք պանդխտի, 14) Ողբք, 15) Բանք մաղթանաց առ Սուրբ կոյսն Մա-

[30] **Ե. [Տէր-Մինասեանց]**, Նշ. աշխ., 342, **Ոսկեան**, Նշ. աշխ., 29-31:

[31] Էջմ. թանգ. հին հավաք. ձեռ. Ձմ № 777 (=513), էջ 113բ-127ա, հմմտ. **Կարինեանց**, Ցուցակ, 32, **Ե. [Տէր-Մինասեանց]**, Նշ. աշխ., 341, **Ոսկեան**, Նշ. աշխ., 59:

[32] Էջմ. թանգ. հին հավաք. ձեռ. Ձմ 777 (=513), էջ 113բ-127ա, հմմտ. **Կարինեանց**, Ցուցակ, 32, **Ե. [Տէր-Մինասեանց]**, Նշ. աշխ., 341, **Ոսկեան**, Նշ. աշխ., 59:

[33] **Վարդան**, 122:

[34] F. Macler, Catalogue des Manuscrits armeniens et ge'orgiens de la Bibliotheque nationale, Paris, 1908, p. 162, հմմտ. **Ե. [Տէր-Մինասեանց]**, Նշ. աշխ., 342, **Ոսկեան**, Նշ. աշխ., 59 (**Երվանդ Տէր-Մինասեանցի** հոդվածը հիշատակելիս **Ոսկեանը** սխալմամբ նշել է Ա, 1907, պետք է լինի՝ Ա, 1901):

[35] Հրատարակված է՝ Սոփերք Հայկականք, Գ., 83-84:

[36] **Ալիշան**, Յուշիկք, Բ., 300, **Գ. Զ[արբհանալեան]**, Նշ. աշխ., 613, **[Տէր-Մինասեանց]**, Նշ. աշխ., 341, **Ոսկեան**, Նշ. աշխ., 49:

րիամ Աստուածածին - ամբողջը՝ ընդամենը 22 հատ[37]*:*

Որ այս աղոթքները պատկանում են Հովհաննես Սարկավագին, հավաստում են համապատասխան ժողովածուները: Օրինակ՝ աղոթքների այսպիսի հավաքածուներում ուղղակի ասված է. «Բանք մաղթանց Յովհաննու քահանայի, որ և Սարկաւագն»[38]*, կամ «Բան մաղթանաց Յովհաննու քահանայի Սարկաւագ կոչեցելոյ»*[39]*, կամ էլ «Յոհաննու Սարկաւագ վարդապետի Բան մաղթանաց»*[40]*: Նույն աղոթքները որոշ ձեռագրերում տրված են տարբերակներով*[41]*:*

Նորին Յովհաննու [քահանայի] Աղաւթք. սկս՝. «Արարիչ իմանալեաց»:

Նորին Յովհաննու քահանայի Աղաւթք. սկս՝. «Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Նորին Յովհաննու քահանայի Աղաւթք. սկս.՝ «Որդի և Բան Հաւր, Աստուած ճշմարիտ»:

և այլն:

Յովհաննու սրբոյ վարդապետի մականուն Սարկաւագ կոչի՝ *Աղաւթք առ Աստուած Հայր:*

Նորին՝ *Աղաւթք առ Հայր:*

Նորին՝ *յՈրդի:*

Գիտական գրականության մեջ կա կարծիք, որ «Աղօթամատոյցը» Հովհաննես Սարկավագը գրել է Գրիգոր Նարեկացու երկի՝ «Ողբերգության մատյանի» ազդեցությամբ[42]*:*

ՊՈԵԶԻԱ

Հովհաննես Սարկավագի գրչին են պատկանում բանաստեղծական մի քանի երկեր՝ հիմնականում հոգևոր, մասնակիորեն նաև աշխարհիկ բնույթի:

1. Վերևում տեսանք, որ Կիրակոս Գանձակեցին Հովհաննես Սարկավագին է վերագրում Ղևոնդյաններին նվիրված չարականը[43]*: Այս չարականը, որը, իսկապես, սկսվում է «Պայծառացան այսօր սուրբք եկեղ[եցիք լուսաւորչօք կենդանեօք]» խոսքերով, լավ հայտնի է հայկական եկեղեցական երգարաններում կամ Շարակնոցներում*[44]*: Եվ որի հեղինակը, իրոք, Հովհաննես Սարկավագն է, հավաստում են նաև որոշ ձեռագիր ժողովածուներ, որտեղ ասված է՝*

«Եւ զ Ղևոնդեանց Մկ. Դ Ջ. Սարկաւագ վարդապետն [ասաց], որ ի Հաղբատ»[45]*:*

2. Հովհաննես Սարկավագին են վերագրում տարբեր բովանդակության[46] *մի քանի տաղեր ևս: Ի միջի այլոց, «Ի Յարութիւն Քրիստոսի»*[47]*, որից միայն մեկը իսկապես տպագրված է նրա անունով՝ «Սարկավագ վարդապետի ասացեալ մարտ ընդ Աստուծոյ»*[48]*:*

3. Հովհաննես Սարկավագի չափածո երկերի մեջ հռչակված է նրա բավականին ծավալուն բանաստեղծությունը՝ հետևյալ ընդարձակ վերնագրով՝ «Յովհաննու Սարկաւագի իմաստասիրի և վարդապետի ասացեալ՝ Բան իմաստութեան ի պատճառս զբօսանաց առ ձագն, որ զաղօթանոցաւ նորա ճռուողէր քաղցրաձայն, որ կոչի Սարեկ»[49]*: Սա դեպի բնություն և բնությանը նմանվելու գաղափարը:*

Ինչպես նշում է Մանուկ Աբեղյանը, սա եղել է առաջին նմուշը հայ պոեզիայի մեջ, քանի որ նա՝ Հովհաննես Սարկավագը, «Արվեստը, ուրեմն և բանաստեղծությունը, նմանողության էր համարում նաստեղծն աշխատի նմանվել բնությանը»[50]*:*

Բացի գաղափարականից, այս քերթվածը հատկապես հետաքրքիր է նաև այն առումով, որ պարունակում է կենսագրական որոշ տվյալներ Հովհաննես Սարկավագի մասին, որոնք մենք մասնակիո-

[37] Հրատարակված է՝ Սոփերք Հայկականք, ժէ., 1854, էջ 5-144, 1) 5-13, 2) 101, 3) 121-134, 4) 14-20, 5) 21-25, 6) 26-35, 36-42, 7) 43-48, 8) 49-53, 9) 54-55, 10) 56-60, 11) 61-65, 66-69, 70-73, 74-76, 77-83, 84-92, 109-112, 113-120, 12) 74-76, 13) 93-100, 14) 102-108, 15) 135-144, հմմտ. **Ոսկեան**, Ց2. աշխ., 31-33, **Ե. [Տէր-Մինասեանց]**, Ց2. աշխ., 342, (տեղում՝ նրանց գնահատականը) **Գ. Յովսէփեան**, Խոսրովիկ, 54-56:

[38] **Գ. Յովսէփեան**, Խոսրովիկ, 54:

[39] **Կարինեան**, Ցուցակ, 34, **Ոսկեան**, Ց2. աշխ., 32:

[40] **Ոսկեան**, Ց2. աշխ., 32:

[41] **Գ. Յովսէփեան**, Խոսրովիկ, 55-56:

[42] **Ոսկեան**, 31:

[43] **Կիրակոս**, 105:

[44] Շարական, 580-581:

[45] **Տաշեան**, Ցուցակ, 799, 779, հմմտ. **Ոսկեան**, Ց2. աշխ., 48-49:

[46] **Ոսկեան**, Ց2. աշխ., 43-44:

[47] **Գ. Չ[արբհանալեան]**, Ց2. աշխ., 613, **Ե. [Տէր-Մինասեանց]**, Ց2. աշխ., 341, **Ոսկեան**, Ց2. աշխ., 49:

[48] Վիեննայի Մխիթարյանների միաբանության ձեռ. Հ՝՛՛ 797, (**Ոսկեան**, Ց2. աշխ., 44):

[49] Հրատարակված է **Ղ. Ալիշանի** կողմից այդ նույն վերնագրով Վենետիկի Մխիթարյանների միաբանության «Բազմավէպ»-ում 1847 թ., էջ 221-225:

[50] **Մանուկ Աբեղյան**, Համառոտություն հայ ժողովրդական վեպի յեվ պատմության, Յերեվան, 1923, էջ 44-45:

բեն օգտագործում ենք 5-րդ գլխում: Հետաքրքիր են նաև որոշ տողեր, որտեղ հեղինակը իրեն համարում է իմաստասեր և բանաստեղծ[51]: Իսկ առհասարակ Հովհաննեսի՝ հայ գրականության պատմության մեջ կատարած քայլը մեզ ներկայանում է իբրև մի տեսակ ելք այն ժանամակվա պոեզիայի և բնափիլիսոփայության համար:

ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տիեզերագիտական աշխատություններով հայ գրականության մեջ մինչև Հովհաննես Սարկավագը ճանաչված էր միայն մեկ հեղինակ՝ Անանիա Շիրակացի ն (է. դ.)՝ հեղինակ բազմաթիվ տիեզերագիտական, տիեզերագրական և տոմարագիտական երկերի[52]: Ինչպես երևում է՝ Անանիա Շիրակացու ազդեցությամբ է ԺԱ.ԺԲ. դդ. գրվել թեև փոքր, բայց բավականին ուշագրավ մի աշխատանք: Նույն թեմային է անդրադարձել նաև Անանիան՝ «Վասն չարժման, ասացեալ Սարկաւագ վարդապետին»[53]: Այդ գրվածքը կարելի է համարել մի տեսակ անցման շրջան այն աքանչելի երկի համար, որը պատկանում է ԺԳ-ԺԴ. դարերի անվանի գործչին՝ փիլիսոփա, բանաստեղծ և աստղագետ Հովհաննես Երզնկացուն (Պլուզ կոչեցյալ) հետևյալ վերնագրով՝ «Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժմանէ, զլուսաւորացն՝ որ ի նմա, և զհաստատութենէ երկրի»[54], այդ ստեղծագործությունը շարադրվել է Տփղիսում, որպես Հաղբատի հակառակորդ հայտնի «Պարոն Ումեկի եկեղեցում», հետագայում, այսպես կոչված, «Կաթուղիկե», այժմ՝ սուրբ Գևորգ, որ գտնվում է Թաթարի հրապարակում, 1284 թ.[55]:

[51] **Ալիշան**.- «Բազմավէպ», 1847, էջ 221, 222:

[52] Օրինակ՝ «Յաղագս երկնի», «Յաղագս երկրի», «Յաղագս ծովու», «Յաղագս երկնային զարդուց», «Յաղագս որ ի մէջ երկնի և երկրի շարժմունք», «Յաղագս կաթին ծրոյ», «Յաղագս հիւսիսային աստեղաց», «Յաղագս լուսնի», «Յաղագս արեգական», «Յաղագս կենդանատեսակաց», «Յաղագս աստղաբաշխութեան», կև. տե՛ս Անանիայի Շիրակունւոյ Մնացորդք բանից, ի լոյս էած **Ք. Պ[ատկանեան]**, ՍՊբ., 1877, էջ 34-67:

[53] Հրատարակված է **Հ. Ոսկյանի** կողմից. **Ոսկեան**, նշ. աշխ., 53-55:

[54] Տե՛ս Տետրակ. համառօտ և իմաստախոհ բանիւք արարեալ հոգելից և իմաստուն վարդապետին Յոհաննիսի Երզնկացւոյ, որ և ասի Ծործորեցի, եւն., Ն. Նախիջևան, 1792 = Космографический трактат Иоанна Тцорзореци (XIII в.).- «Переводы и статьи **Эмина** по духовной армянской литературе» etc., Москва 1897, стр. 256-284, հմմտ, Всеобщая История Вардана Великого, пер. **Н. Эмина**, Москва, 1861, прил. 3, стр. 4-31:

[55] Տե՛ս Տետրակ համառօտ և լի. կև., էջ IX-X (առաջաբան): Հմմտ. **И. Орбели**, Фрагмент крестного камня с арабской надписью в Тифлисе.- ХВ, т. VI, 1917, стр. 198-199, **Л. Меликсет-Беков**, О междоусобице в Тифлисе в 1197 году etc..- Изв. КИАИ, т. III, стр. 59. Նույնի՝ Тифлис, его основание и краткий исторический очерк, Тфл., 1925, стр. 20: Այս Հովհաննեսի գերեզմանը Հաղբատում են ցույց տալիս (**Յովհ. Դրիմեցի**, 41, **Երզնկեան**, 53, **Լալայեան**, 408), բայց այս դրույթը, ինչպես մենք պարզել ենք (տե՛ս այս գրքի մասն առաջին, Գլ. Ե., ծնթ. 53:

ՏՈՄԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հովհաննես Սարկավագը չատ մեծ ներդրում ունի հայ տոմարագիտության մեջ, ինչը հավաստում է նաև Կիրակոսը[56]: 1084 թվականից նրա կազմած տոմարը կոչվում է Սարկաւագապիր: Հովհաննեսի ռեֆորմը հիմնականում արտահայտվում է նրանում, որ նրա ձեռամբ ընդունվում է անշարժ տոմարը շարժական տարով, այն դեպքում, երբ մինչ այդ բոլոր տարիները հաշվվում էին 365 օր, մինչդեռ այդ հաշվարկով շարժական տոների օրերը սխալվելու տեղիք էին տալիս[57]:

Այս ոլորտում Հովհաննես Սարկավագից հայտնի են հետևյալ աշխատությունները.

1. «Յովհաննու քահանայի և իմաստասիրի՝ Յաղագս ամսոյ Հայոց և տօնից և յաղագս չորեքտասանորդաց լուսնոյ Զատկի»[58]:

2. «Յովհաննու քահանայի և իմաստասիրի, որ մականուանի Սարկաւագ, ասացեալ յառաջ քան զգրուելիւն իւրոյ տումարին»[59]:

3. Մեկնութիւն տոմարի և յաղագս անկիւնաւոր թուոյ[60]:

4. Բանք վասն հինգհարիւրից[61]:

5. Տոմար ժամանակաց և թուականաց[62]:

ՊԱՏՄԱԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հովհաննես Սարկավագին է պատկանում «Ժամանակագրութիւնը՝ սկսած «Ադամից»: Երկը հայտնի է «Սարկաւագ վարդապետիւնը՝ սկսած «Ադամից»:

[56] **Կիրակոս**, 104:

[57] Տե՛ս **Բարսեղ Սարգիսեան**, Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն, Վն., 1890, էջ 353-355, **Գիւտ Աղանեանց**, Տոմար և տօնացոյց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, Բ. տպ., Տփղ., 1894, էջ 25-26, **Օրմանեան**, Ազգապատում, էջ 1306-1309 (§§ 899-900), **F. K. Ginzel**, Handbuch der Mathematishen und technischen Chronologie. Das Zeitrechnungeswesen der Volker, III Band, Leipzig, 1914, § 261 (Zeitrechnung der Armenier), S. 319 (Die kleine Ara des Johannes Diaconus):

[58] **Բարսեղ Սարգիսեան**, Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն, էջ 353-354, **Ոսկեան**, նշ. աշխ., 45:

[59] Հրատարակված է **Բարսեղ Սարգիսեան**, նշ. աշխ., 354-355, հմմտ. **Ոսկեան**, նշ. աշխ., 45:

[60] **Ալիշան**.- «Բազմավէպ», 1847, էջ 219, **Գ. Զ[արբհանալեան]**, նշ. աշխ., 613, **Ոսկեան**, նշ. աշխ., 45:

[61] **Գ. Զ[արբհանալեան]**, նշ. աշխ., 613, **Ոսկեան**, նշ. աշխ., 45-46:

[62] **Գ. Զ[արբհանալեան]**, նշ. աշխ., 613, **Ոսկեան**, նշ. աշխ., 46:

տին է բանս» վերնագրով, հրատարակել է Հ. Ոսկյանը[63], ներկայացնում է Անանիա Շիրակացու «Ժամանակագրության» կրկնությունը, ուստի հասկանալի է, թե Զ-է. դարերի միջնամասում, այսինքն՝ հայոց և վրաց եկեղեցիների բաժանման ժամանակ ինչու այն չէր կարող անտեսվել: Այս «Ժամանակագրությունը» մեզ համար հատկապես հետաքրքիր է իր վերջին մասով, որտեղ ներկայացված են համառոտ տեղեկություններ հայ-վրացական եկեղեցիների հակամարտության մասին.

«Եւ յՀԳ.[64] <sic> թուականին զկնի տէր Աբրահամու ի ԽԳ.[65] ամին տէր Յովանիսի բնաւին ի բաց կացին Վիրք ի Հայոց միաբանութենէ և հաւանեալ Քաղկեդոնի՝ զորոմն ընկալեալ ի Կ[ի]ւրիոնէ, զոր ՃԺԳ.[66] ամ ընդ մեզ նզովեցին զՔաղկեդոնի ժողովն»[67]:

2. Հովհաննես Սարկավագը, ամենայն հավանականությամբ, գրել է նաև սելջուկների «Պատմությունը»՝ մինչ Մելիքշահը (1072-1092). այդ մասին վկայում են Սամուել Անեցին *և* Կիրակոս Գանձակեցին, *որը, ցավոք, առայժմ չի հայտնաբերվել[68]: Ալիշանը և նրանից հետո Զարբհանալյանը ենթադրում են, որ այդ «Պատմությունը» բաղկացած է եղել երկու գրքից, ընդ որում՝ առաջինը հավանաբար բովանդակել է սելջուկների պատմությունը մինչ Ալփասլանը, իսկ երկրորդը՝ Ալփասլանի որդու՝ Մելիքշահի կյանքը և մահը[69]:*

3. Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի մի ձեռագրում, ինչպես գրում է Հ. Ոսկեանը[70], կարդում ենք. «Յեկեղեցական պատմութենէ, զոր երկրորդեալ է Սարկաւագ վարդապետի»: Նման երկեր, որ չա-

[63] **Ոսկեան**, նշ. աշխ., 46-48, հմմտ. համառոտ նկարագրություն. **Տաշեան**, Ցուցակ 172:

[64] Այսինքն՝ 73 [=551+73] =624 թ.՝ Աբրահամ [Աղբաթանացի] որպես կաթողիկոս հայտնի է մոտավորապես 607-615 թվականներին:

[65] Այսինքն՝ 43 [=551+43] = 594 թ. Հովհան [Բագարանցի] հայտնի է Բյուզանդական Հայաստանի հակաթոռ կաթողիկոս, մոտավորապես 590-611 թվականներին:

[66] Այս դեպքում թվերը հաշվարկված են Դվինի ժողովից, որի թիվը ավանդաբար ընդունված 494 թվականի փոխարեն այժմ ընդունվում է 506 թվականը (գրականություն այս մասին տե՛ս այս գրքի մասն առաջին, Գլ. է., է. 2): Ահա թե ինչու ՃԺԴ. - 114. մենք պետք է հաշվարկենք այսպես. 506+114 = 620 (մինչդեռ ավանդական ժամանակագրության վրա հենվելով՝ 494+114 = 608):

[67] **Ոսկեան**. նշ. աշխ., 48:

[68] **Ալիշան**, Յուշիկք, Բ. 300-305: **Գ. Զ[արբհանալեան]**, նշ. աշխ., 609-611, **Ոսկեան**, նշ. աշխ., 37-41:

[69] **Ալիշան**, նշ. աշխ., 301, **Գ. Զ[արբհանալեան]**, նշ. աշխ., 609, **Ե. [Տէր-Մինասեանց]**, նշ. աշխ., 342. հմմտ. **Ոսկեան**, նշ. աշխ., 38-39:

[70] **Ոսկեան**, նշ. աշխ., 41 (ձեռ. Հմր 384):

բադրած լիներ Հովհաննես Սարկավագը, նրա ձեռագրերում դեռևս չեն հայտնաբերվել, ահա ինչու, ենթադրվում է, որ, թերևս, [հատվածը] եկեղեցիական պատմությունից Հովհաննեսը միայն «կրկնել է» (և ոչ թե չարադրել), ուրեմն՝ պետք է ընկալվի իբրև նրա «Ընդդեմ երկաբնակաց» ընդարձակ աշխատության գլուխներից մեկը, մասնավորապես հատված Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցիական պատմություն» ե. գրքից՝ հետևյալ վերնագրով՝ «Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցիական պատմություն» ե. գրքից. նրանց համար, ովքեր ի սկզբանե հետևում էին Արտեմոնի նահատակությանն ու օրինակին և ինչպես հանդգնեցին պղծել սուրբ գրքերը[71]:

[71] Տե՛ս էջմ. թանգ. հին հավաք. ձեռ. Հմր 567 էջ 443բ-249բ: Հմմտ, այս գրքի հաջորդ Ը. գլխում առկա թվարկումը: -

ԳԼՈՒԽ Ը.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆԸ. «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՑ»-ԻՑ ԴՈՒՐՍ ԱՅԼ ԽՄԲԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ (ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ՊՈՂՈՍ ՏԱՐՈՆԱՑՈՒ) ՋԱՏԱԳՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հովհաննես Սարկավագի անունը առավել հռչակված է ջատագովական և դավանաբանական-վիճաբանական բնույթի աշխատություններով:

Եվ նրա կարևորագույն երկը այդ բնագավառում Խոսրովիկի *(Ը. դար)* և Անանիա Սանահնեցու *(ԺԱ. դար)* երկերի հետ հիմք դարձավ ԺԳ–ԺԴ. դարերի այն դասագրքի, որը հայտնի է իբրև Հովհաննես Երզնկացու *ժողովածու: Այն կազմված է մեկը մյուսից անկախ երկու մասերից հետևյալ վերնագրերով՝ 1) «Յովհաննու քահանայի՝ Յաղագս նշանակ հաւատոյ Նիկէական ՅԺԸ.-իցն»*[1]*, և 2) «Նորին Յովհաննու քահանայի՝ ի խնդրոյ Գագկայ կրօնաւորի՝ Յաղագս քաղկեդոնականացն»*[2]*:*

Որ այս ստեղծագործության հեղինակ Հովհաննես քահանան և Հովհաննես Սարկավագը նույն անձնավորությունը պետք է լինեն, պարզ երևում է Հովհաննես Երզնկացու *ժողովածուի առաջաբանից, որտեղ* Խոսրովիկից *և* Անանիա Սանահնեցուց[3] *հետո հիշատակված է.* «երրորդ. *զՍարկավագ վարդապետին և զմեծն իմաստասիրի զՀաղբատեցւոյ»*[4]*, իսկ այդ տեղը Սահակ Գողթնեցու ձեռագրում կարդացվում է «երրորդ՝ Յովհաննէս վարդապետի Սարկաւագ կոչեցելոյ Հախպատեցւոյ»*[5]*: Նմանապես երկրորդ աշխատությունը որոշ ձեռագրերում հայտնի է հետևյալ վերնագրով՝ «Յովհաննէս վարդապետի մականուն Սարկաւագի՝ Ընդդէմ քաղկեդոնականացն»*[6]*:*

Այս երկու աշխատությունները ձեռագրերում կա՛մ միասին են հանդիպում, կա՛մ առանձին-առանձին: Նրանք տարբեր ծավալի են, առաջինը համեմատաբար փոքր[7] *է և կազմված է երեք մասից, «[Յաղագս Հօր]», «Յաղագս որդ[ե]ոյ» և «Յաղագս Հոգ[ե]ոյն Սրբոյ*[8]*»: Մինչդեռ երկրորդն ավելի ծավալուն է և բաղկացած է բազմաթիվ գլուխներից. յուրաքանչյուր գլուխ ամբողջական երկասիրություն է և ներկայացված են հետևյալ հերթականությամբ*[9]*.*

– Վասն մի և ոչ երկու ասել զՏէր մեր Յիսուս Քրիստոս:
– Վասն տօնից միաբանութեամբ և բաժանման:
– Վասն յիշատակաց վկայից ճշմարտութեան:
– Վասն մկրտութեան, և թէ զիարդ իցէ:
– Վասն քահանայութեան և քահանայից[10]*:*
– Վասն աշխարհականացն ժողովրդոց:
– Վասն տաճարաց աղօթարանաց, որ է և եկեղեցիք:
– Վասն վկա[յա]րանացն սրբոց և անուանելոցն միայն:
– Վասն սրբոյ խաչին:
– Ի մի Տէր մեր Յիսուս Քրիստոս:
– Նորին [Յովհաննու քահանայի՝] վասն մասանց պատուոյ, յորում և վասն պատկերաց դարձեալ[11]*:*

---

[1] **Աղանեանց**.- «Արձագանք», 1888 թ., էջ 63, **Տաշեան**, Մատ. մանր ուսումն., 57, Գ. **Յովսէփեան**, Խոսրովիկ, 25, **Ոսկեան**, 55.- Էջմ. թանգ. հին հավաք. ձեռ. Ֆմր 567 (=518), էջ 174ա-187բ, նոր հավաք. № 1110 [=6453], էջ 131բ և հջրդ, Ֆմր 929 [5618], Գիտությունների Ակադեմիայի Ասիայի թանգարանի ձեռ. Ֆմր [ИВ, В 95], 1-217:

[2] **Աղանեանց**.- «Արձագանք», 1888 թ., էջ 63, **Տաշեան**, նշ. աշխ.,. նույն տեղում, **Ոսկեան**, նույն տեղում, էջմ. թանգ. հին հավաք. ձեռ. Ֆմր 567 (=518), էջ 187բ-295բ:

[3] Եվ ոչ թե (**Շիրակացւոյ**), ինչպես սխալմամբ ասում է **Հ. Ոսկյանը** (**Ոսկեան**, նույն տեղում):

[4] **Աղանեանց**.- «Արձագանք», 1888 թ., էջ 63-64, **Միաբան** (**Գ. Տէր-Մկրտչեան**), Անանիա Նարեկացի.- Ա, 1892, էջ 279-280, **Տաշեան**, Մատ. մանր ուսումն, 58-59, **Գ. Յովսէփեան**, Խոսրովիկ, Նախադրութիւն գրոցս:

[5] Տե՛ս էջմ. թանգ. նոր հավաք. ձեռ. Ֆմր 1110 [6453], էջ 1ա:

[6] Տե՛ս էջմ. թանգ. հին հավաք. ձեռ. Ֆմր 568 (=519) էջ 56բ և հջրդ. (հատվածաբար է), Վատիկանի Cod. Arм. VII (Յ. **Միսքճեան**, Յուցակ.- ՀԱ, 1892, էջ 340):

[7] Օրինակ՝ էջմ. թանգ. հին հավաք. ձեռ. Ֆմր 567 (=518), էջ 174ա-187բ:

[8] Տե՛ս նույն ձեռ., էջ 174ա-175բ, 175բ-184բ, 184բ-187բ:

[9] **Նույն տեղում**, էջ 187բ-295բ:

[10] Այս երկը, ինչպես հավաստիացնում է **Գ. Յովսեփյանը** (Խոսրովիկ, 56), տարբերվում է նույն վերնագրով հայտնի այլ ավելի ծավալուն երկից՝ «Յաղագս քահանայութեան և քահանայից և գլխոց նոցին», (Սոփերք Հայկականք, Գ., 1853, էջ 9-79), տե՛ս նախորդ գլխում, ճգնավորություն բաժնում:

[11] Այս գրվածքը իբրև առանձին հետազոտություն են ներկայացրել **Գ. Զարբհանալեանը**՝ «Հայկական հին դպրութեան պատմութիւն», 613, Հ. **Տաշյանը** (Յուցակ, 767) և **Հ. Ոսկյանը՝ Ոսկեան**, 52: Եվ որ այն իսկապես գոյություն ուներ նաև առանձին, վկայում է Երուսաղեմի հայոց պատրիարքության մատենադարանի՝ 1290 թվականին գրված Ֆմր № 1272 ձեռագիրը, էջ 381ա-396բ: Այն ժամանակակից հայերեն ամբողջական թարգմանությամբ հրատարակված է՝ Արիստակես Սեդրակյան, Հայաստանեայց եկեղեցու պատկերահագութիւնը գրքում, ՍՊբ., 1904, էջ 131-139 (134-139), հին հրատ. տե՛ս **Գ. Զարբհանալեան**, Յաղագս բարեխօսութեան, Վենետիկ-Բենկ, Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց

– Նորին Յովհաննու քահանայի՝ Առ որս պիղծ զմիս վարկանեն և զանձինս ոչ արգելուն[12]:

– Նորին՝ Յաղագս եթէ ոչ է արժան ըստ մասին բաժանել զԱստուածայնոց ձայնս ի վերայ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ոչ զառ ի յինքենէ գործս կամ կիրս:

– Յաղագս եթէ ոք յետ միանալոյն երկուս ասեն բնութիւնս ի Քրիստոսի, հարկ է հետևէին նեստորկանաց մտաց:

– Թէ զիարդ չարչարեալ Բանն մարմին եղեալ և անչարչարելի մնացեալ, և կամ որպէս դարձեալ ձայնակցեն չարափառքն:

– Յարացոյցք յաղագս մի զՔրիստոս ասելոյ և անբաժանելի:

– Նորին [Յովհաննու քահանայի]՝ Հակաբանութիւն հնագիտական ընդդէմ անգիտակաց ոմանց յիրս գիտութեան, որք տայ յօդ[13] ճառիւք <sic> հավանեցուցին զոմանս ի վայրագաց և պարզ մտաց հաւատալ անհաւաստի իւրեանց կարծեաց:*

– Եւսեբիոս Կեսարու յԵկեղեցւոյ Պատմութենէ, ի հինգերորդ դպրութենէ՝ Վասն այնոցիկ, որ եղեն ի սկզբանէ յաղանդոյ անտի Արտեմոնի, և որով օրինակաւ էին նոքա, և թէ որպէս համարձակեցան նոքա եղծանել զգիրս սուրբս:

– Նորին [Յովհաննու քահանայի]՝ Յաղագս բնութեան Բանի և միաւորութեան:

– Նորին՝ եթէ զիարդ ասի մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացեալս, ըստ ճշմարտութեան:

– Յաղագս կամացն:

– Յաղագս ներգործութեան:

– Նորին՝ Յայտարարութիւն զանազան հերձուածոց յայլ և յայլ ժամանակս՝ յարանց բղջախոհաց:

– Նորին՝ դարձեալ:

– Հինգերորդ գլուխ հայհոյութեան թղթոյն Լէովնայ:

– Նեստորի հերձուածողի վեցերորդ հայհոյութիւն:

– Նորին Նեստորի՝ յերրորդ մատենէն, ի տասներորդ գլխոյն:

թեան սրբոց, Վն., 1852, յաւելուած՝ 343-359:

[12] Երկը ձեռագրերում գոյություն ունի նաև առանձին, այսպիսին է, օրինակ, էջմիածնի թանգարանի հին հավաքածուի Ձ^{մր} 777 (= 526 [= 513])-ը, ԺԳ. դարի մագաղաթե ձեռագիր, խառնիխուռն (տե՛ս **Գ. Յովսէփեան**, Խոսրովիկ, 53, հմմտ. **Յ. Կարինեանց**, Ցուցակ, 32): Հավանաբար հենց դրա համար են այս երկը իբրև առանձին գործ ներկայացրել նաև Ե. Տեր-Մինասյանցը (**Եր. ս.**, Հաղբատ և Սանահին վանքերը, 342) և **Հ. Ոսկյանը** (**Ոսկեան**, 59) և դրանից, անշուշտ, օգտվել է **Ալավկա Որդի Դավիթը** իր «Կանոնագիրքը» կազմելիս. (այդ մասին տե՛ս ստորև Գլ. Թ., ծնթ. 25-26):

[13] * Ճիշտը՝ «ստայօդ» («տայ յօդ»ի փխ.) – Գ. Տ-Վ.:

– Թեոդորոս հերձուածողի ի Հակաճառութենէ ԲԺ.երորդ <այսինքն՝ 2x10=ի 20>[14] նզովիցն հա[յ]հոյութիւնք:*

– Ի սահմանէ ժողովոյն Քաղկեդովնի հայհոյութիւնք:

– Թէոդորիտեա[յ] հերձուածողի հայհոյութիւնք:

– Եւ յետ այլոց:

– Նորին Թէոդորիտեա[յ]:

– Կայութիւնք[15] սրբոցն, եթէ մի բնութենէ[16**] Բանին Աստուծոյ մարմնացելոյ երանելւոյն Յուղեա[յ], եպիսկոպոսապետին Հռովմա[յ], յառ Դիոնոսիոսն թղթոյն:*

– Նորին:

– Երանել[ւ]ոյն Աթանասի, հայրապետին Աղէքսանդրի:

– Երանել[ւ]ոյն Յովհաննու Ոսկեբերանի:

– Երանել[ւ]ոյն Տիմոթէոսի հայրապետի Աղեքսանդրի ի Հակաճառութենէ խոտեալ տումարի ժանտին Լէովնի:

– Սրբոյն Աթանասի:

Նորին՝ ի տօնականէ երկրորդում Դիոկղիտիանոսի:

– Նորին՝ ի տօնականէն:

– Նորին՝ ի Ե.երրորդ տօնականէն:

*– Նորին՝ ի [յ]աստուածերորդ <sic>[17***] տօնականէն:*

– Երանել[ւոյն] Գրիգորի Նէոկեսարեա[յ] եպիսկոպոսի:

– Գրիգորի Աստուածաբանի:

– Նորին՝ Յաղագս առաքինութեան Բանին:

– Երանել[ւ]ոյն Կիւրղի յառ Նեստորիոս Թղթոյն:

«Ընդդեմ երկաբնակաց» գրքի վերլուծության կապակցությամբ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել գլուխներից մեկին, որը վերաբերում է պատկերապաշտության խնդիրներին («Վասն մասանց պատուոյ, յորում և վասն պատկերաց դարձեալ»), այն առումով, որ նրան կցված է հետևյալ հիշատակարանը. «Աղաչեմ զստացող բանիդ՝ զերանելի վարդապետն Սարկաւագն և զհայեցողն ի նմանէ յիշեցէ՛ք»[18]: Նմանապես այդ նույն աշխատության մի մասը «Առ որս պիղծ զմիս վարկանեն և զանձինս ոչ արգելուն», որը ներառված է Հովհաննես Սարկավագի ժողովածուում, կցել է չափազանց հետաքրքիր մի գրություն, որտեղ, ի միջի այլոց, կարդացվում է.

[14] * Սխալ է, համառոտումը պէտք է կարդալ՝ «երկոտասաներորդ», այսինքն՝ «տասներկուերորդ» – Գ. Տ-Վ.:

[15] * «[վ]կայութիւնք» - Գ. Տ-Վ.:

[16] ** «Բնութիւն է» - Գ. Տ-Վ.:

[17] *** Կարդալի՝ «ի Աժ.երորդ» տասնմէկերորդ – Գ. Տ-Վ.:

[18] Էջմ. թանգ. հին հավաք. ձեռ. Ձ^{մր} 567 (=518), էջ 195բ. հմմտ. **Գ. Յովսէփեան**, Խոսրովիկ, 57:

«Այս բանք քերդողականք[19] ասացեալ մեծի պուէտիկոսին Սարկաւագին, որ ի տիեզերահռչակ ուխտին Հաղբատ գտի ես՝ նուաստ ոմն ի մանկունս եկեղեցւոյ»[20]:

Մինչդեռ այս մակագրությունը Հովհաննես Երզնկացու ժողովածուի առաջաբանում զետեղված տեղեկության հետ միասին ի վերջո հաստատում են, որ Հովհաննես քահանայի անունով մեզ հասած՝ «Ընդդեմ երկաբնակաց» երկը պատկանում է Հովհաննես Սարկավագ վարդապետին:

Այդ իսկ պատճառով, ո՛չ Ասողիկը, ո՛չ Սամուել Անեցին Ուխտանեսի գրածների մասին տեղեկություն չունեն: Ներսես Ակինյանը զարմացած ասում է. «Վրաց բաժանմամբ զբաղած են ԺԱ-ԺԲ. դարուն նաև Անանիա Սանահնեցի և Սարկավագ վրդ., որոնց գրուածներն սակայն ինձ մատչելի չըլլալով, աղբիւրներու մասին չեմ կրնար բան մ՚ըսել»[21]: Այսպիսով, գիտական գրականության մեջ հարց դրվեց՝ ի հայտ բերել Անանիա Սանահնեցու և Հովհաննես Սարկավագ վարդապետի համապատասխան աշխատությունները, ինչը և մեծապես հետաքրքրեց մեզ: Հայոց ձեռագրերի տարբեր հավաքածուների բազմաթիվ քարտարաններում այս մասին ոչինչ չկար: Ահա ինչու, մենք ստիպված էինք խորամուխ լինել բուն ձեռագրերի մեջ. էջմիածնի մատենադարանի և Միութենական Գիտությունների Ակադեմիայի Ասիական թանգարանի ձեռագրերին ուղղակիորեն ծանոթանալիս հանդիպեցինք եզրակացության, որ դեռևս 1910 թ. Ներսես Ակինյանի արտահայտած մտքերը արդարացվեցին միայն Անանիա Սանահնեցուն վերաբերող մասով: Եվ դրանից հետո, երբ մենք Անանիա Սանահնեցու «Բան հակաճառութեան ընդդեմ երկաբնակաց» երկում հայ և վրաց եկեղեցիների պառակտման վերաբերյալ մի քանի գլուխ գոյություն ունենալու փաստը վկայեցինք, չենք կարող չբարձրաձայնել Ն. Ակինյանի՝ Հովհաննես Սարկավագի մասին հայտնած կարծիքի անարդարացի լինելը, որովհետև վերջինս ո՛չ «Ընդդեմ երկաբնակաց» աշխատության մեջ, ո՛չ նման մեկ այլ

[19] Էջմ. թանգ. հին հավաք. ձեռ. Ցուց 777 (=513), էջ 51բ. հմմտ. **Գ. Յովսէփեան**, 53-54. նույնի՝ Գրչութեան արուեստը հին Հայոց մէջ, մասն Գ., Վաղ., 1913, տախտակ 112, հմմտ. էջ 42:

[20] Հայերեն քերդող resp. քերթող եզրույթը, որ համարժեք է հունարեն ποιητής, γραμματικός, տե՛ս **Н. Адонц**, Дионисий фракиский и армянские толкователи [BAG IV], Птр. 1915, стр. LXXIII; **Մեսրոպ Մաքսուդյանցի** գրախոսությունը այս գրքի մասին - Ա 1917, էջ 830, ծնթ. 1, հմմտ. Արսեն կաթողիկոսի աշխատությունը (Թ. Ժորդանիա, «Ժամանակագրություններ», I, 330 և ծնթ. 110):

[21] **Ն. Ակինեան**, Կիւրիոն կաթողիկոս Վրաց, 70:

ստեղծագործության մեջ բոլորովին չի խոսում «Հայերից վրացիների բաժանման մասին», եթե, իհարկե, նկատի չառնենք այն մի քանի տողերը, որ կան նրա «ժամանակագրության մեջ»:

Ինչպես Անանիա Սանահնեցու, այնպես էլ Հովհաննես Սարկավագի երկերում բերված է նախորդ շրջանի գրականությունը, ի միջի այլոց՝ նաև Տիմոթեոս Կուզի «Հակաճառությունը», որը, ի դեպ, հիմք է հայերեն գրված ամեն կարգի դավանաբանական-վիճաբանական երկերի»: Բացի դրանից, ինչպես հաստատել է Գարեգին Հովսեփյանը, Հովհաննես Սարկավագը բավականին օգտվել է Խոսրովիկից, որի որոշ կարծիքներ պարզապես կրկնում է:

Ինչ վերաբերում է հարցին, թե երբ է գրվել Հովհաննեսի աշխատությունը, որոշակի ոչինչ ասել հնարավոր չէ. կարելի է միայն ենթադրել, որ գուցե գրված լինի 1123-1125 թվականների միջև՝ կապված հայ-վրացական եկեղեցական հակամարտության հետ:

Վերջում անհրաժեշտ է նշել, որ Հովհաննես Սարկավագի անունով հայտնի է նաև ջատագովական բովանդակությամբ մի աշխատություն հետևյալ վերնագրով՝ «Սարկավագ վարդապետի բանք ընդդէմ այնոցիկ, որք վասն բաժակին մոլին», տրբրկ.՝ «Յովհան Սարկավագ Վարդապետի վասն բաժակի պատարագին»[22]:

Արշակ Տեր-Միքելյանը հիշատակում է Փարիզի մի ձեռագիր՝ Հովհաննեսի երկի վերնագրի հետևյալ փոփոխակով՝ «Սարկաւագ Վարդապետի ճառ ընդդեմ նեստորականաց»[23]: Իսկ Հ. Ոսկյանը[24] հիշատակում է իբրև թե Սարկավագին պատկանող անանուն երկ, վերնագիրը՝ «Յաղագս բաղարջին[25]»:

* * *

Հովհաննես Սարկավագի վաստակը հայ դավանաբանական-վիճաբանական և ջատագովական գրականության մեջ ինչպես հարկն է գնահատված չի լինի, եթե հաշվի չառնենք նաև այն պայմանները, որոնք առաջ բերեցին ոչ միայն Հովհաննես Սարկավագի, այլև նրա նախորդի՝ Անանիա Սանահնեցու պայքարը քաղկեդոնականների կամ երկաբնակների (հույների և վրացիների) դեմ: Այդ պայման-

[22] **Յ. Կարինեանց**, 33, 35, եր., ս. նշ. աշխ., 341, **Ոսկեան**, 58:

[23] **Սամուէլ**, 292, ծնթ. 40:

[24] **Ոսկեան**, 59:

[25] «Բաղարջ» տերմինի մասին տե՛ս **Н. Марр**, Предварительный отчет о работах на Синае и в Иерусалиме, в поездку 1902 г. [Сообщ. И. Прав. Палест. О-ва, т.XIV, ч.II], стр.17, հմմտ.. Изв. Кавк. отд. И. Моск. Арх. О-ва, в. III, стр. 25 (прот. № 38):

նները նոր չէին. դրանք ժամանակ առ ժամանակ ի հայտ էին գալիս՝ հենց որ հայերի բնակութեան վայրերում հույները և վրացիները ամեն քայլափոխի քաղկեդոնականութիւն էին տարածում, ինչը, բնականաբար, հաճախ ընդդիմութիւն էր առաջ բերում, և դա, առաջին հերթին, հայ հոգևորականների շրջանակներում, որի ծայրահեղ, պահպանողականորեն մտածող ներկայացուցիչները կենտրոնացել էին Հաղբատում և Սանահնում:

Բայց ԺԱ-ԺԲ. դարերում միայն Անանիա Սանահնեցին և Հովհաննես Սարկավագը չէին հույների և վրացիների հարձակումներից ազգային (հակաքաղկեդոնական) եկեղեցին պաշտպանում. Հաղբատ-Սանահնի առաջնորդների բարձրացրած ձայնը արձագանք էր գտնում նաև այլ վայրերում, մասնավորապես այնտեղ, որտեղ իր գործունեութիւնն էր շարունակում Հովհաննես Սարկավագի ժամանակակից և նրանից բոլորովին անկախ մտածող Պողոս Տարոնացին*:*

Պողոս Տարոնացին *Սասունին մոտ գտնվող Ս. Ղազար վանքի վանահայր էր, թեև չի անդամակցել, այսպես կոչված, «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» խմբակին, մասնավորապես՝ Հաղբատ-Սանահնի գիտագրական խմբին, և որևէ կապ չի ունեցել նրանց հետ, բայց իր ողջ էութեամբ և գործունեութեամբ պակաս հաստատակամութեամբ և եռանդով չի ծառայել հակաքաղկեդոնական աշխարհայացքի պաշտպանութեան գաղափարին, քան, ասենք, «Հյուսիսային կողմանց» հայ վարդապետները:*

Սովորաբար այս անճնավորութեանը համարում են ԺԱ. դարի գործիչ, սակայն դա իրականութեանը չի համապատասխանում. նա, ինչպես վկայում է Մատթեոս Ուռհայեցին *վախճանվել է 572=1123 թ. և թաղված է «ի վանս Ղազարու, մերձ ի Սասուն». նույն* Մատթեոս Ուռհայեցին *նրան անվանում է «երկրորդ լուսաւորիչ երեւեալ տանս Հայոց և վէմ ադամանդեայ ընդդէմ հերձուածողաց»*[26]*:*

Պողոս Տարոնացուն են պատկանում կամ թե նրան են վերագրվում ջատագովական, դավանաբանական-վիճաբանական հետևյալ թղթերը.

1. «Թուղթ երանելւոյն Պօղոսի Տարօնացւոյ, յաղթօղ ախոյեան վարդապետի՝ Ընդդէմ Թէոփիստեայ Հոռոմ փիլիսոփային»[27]*:*

[26] **Մատթէոս**, 356, 355:

[27] Հենց այս խորագրով 1752 թվականին հրատարակվել է Կոստանդնուպոլսում. ունի ընդամենը 357 էջ. 1-322՝ բնագիրն է, 323-324-ը՝ «Զեկուցումն առ բարեսէր ընթերցօղսդ վասն հեղինակի գրքոյս», 325-355-ը՝ «Ցանկ եւ ցուցակ նշանաւոր

2. «Պաւղոսի Տարոնացւոյ եռամեծի և բանիբուն ուղղափառ վարդապետի ասացեալ՝ Ընդդէմ երկաբնակաց ժողովոյն Քաղկեդոնի և այլ չարափառացն՝ հերձուածողացն»[28]*:*

3. «Գործնական և արդիւնական վարդապետին Հայոց մեծին Պաւղոսի Ղազարու վանից վանականի՝ Բացայայտութիւն կարգի ժամուց աղաւթից»:

4. «Նորին Պաւղոս վարդապետի՝ Յաղագս եկեղեցւոյ կարգաց ցոյցք»:

5. «Յաղագս քառասնորդաց պահոց՝ Պաւղոսի վարդապետի Ղազարու վանիցն վանականի բացայայտեալ»:

6. «Յաղագս առաջաւորացն պահոց՝ Նորին Պաւղոսի ասացեալ»[29]*:*

7. Նրան է պատկանում նաև մի փոքրիկ թուղթ, որը ներկայացնում է Մովսես Կաղականտվացու կամ Ուտիեցու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատության երկրորդ մասի 47-րդ գլխի կրկնությունը, ինչը մեզ համոզում է վերնագրերի և ներածության պարզ համեմատությունը:

Պողոս Տարոնացի	*Մովսէս Ուտիացի*
[Պատմութիւն] թէ ո՞րով ժամանակաւ անիծաւ չար և անօրէն (տրբրկ՝ անարժան) ժողովն Քաղկեդոնի և բաժանումն Վրաց ի Հայոց:	*Խորհրդածութիւն թէ որով ժամանակաւ անիծաւ ժողովն Քաղկեդոնի... և կամ բաժանումն Վրաց ի Հայոց:*
Քառասներորդ երրորդ ամ էր թուականին Հոռոմոց, յորժամ լուսաւորեացն Հայք...[30]*:*	*Քառասներորդ երրորդ ամ էր թուականին Հոռոմոց, յորժամ լուսաւորեացն Հայք ի հաւատս...*[31]*:*

Այս աշխատություններից ամենահետաքրքիրը առաջինն է՝

իրաց սոյնոյ մատենիս», 356-357-ը՝ «Յիշատակարան տպեցման գրքոյս»:

[28] Տե՛ս **Յ. Միսքճեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց քահանայապետական մատենադարանին Վատիկանի ի Հռովմ,- ՀԱ, 1892, էջ 340, **Տաշեան**, Ցուցակ, 578:

[29] Այս թվարկման 3-6 միավորները տե՛ս **Տաշեան**, Ցուցակ, էջ 767, 768 և 769 (վերջինում՝ 5ը և 6ը):

[30] Տե՛ս Վատիկանի ձեռ. Cod. Arm. № VII - ԺԴ. դ. - **Յ. Միսքճեան**, Ցուցակ,- ՀԱ, 1892, էջ 340, Վիեննայի Մխիթ. միաբանության ձեռ. Յմր 324. 1305 թվական - **Տաշեան**, Ցուցակ, 767-771:

[31] Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Տփղ., 1913, էջ 306-307, հմմտ. Անանիա Սանահնեցու երկի հետ. տե՛ս վերը՝ այս գրքի երկրորդ մասի Գլ. Դ., ծնթ. 11-ից առաջ և հետո դրված բնագրական համեմատությունը:

«Ընդդէմ Թէոփիստեայ», որտեղ հեղինակը, ի միջի այլոց, անցողակի անդրադառնում է հայ-վրացական եկեղեցական հակամարտության հարցին հետևյալ խոսքերով.

«Դարձեալ՝ Վրաց մետրապոլիտն» Գաբրիէլ տասն և հինգ եպիսկոպոսօք եկեալ յաշխարհս Հայոց՝ առ Բաբգէն եպիսկոպոս[ապետ]ն, և ամենայն ուղղափառ հաւատով միաբանեալ ընդ հայրապետն մեր, նզովեաց զժողովն Քաղկեդոնի և զամենայն հաւանօղսն նորա: Եւ նզովեաց զասացօղսն երկու բնութիւն ի Քրիստոս»[32]*:*

Պակաս հետաքրքրիր չէ և այն մասը, որտեղ հեղինակն անդրադառնում է Քրիստոսի ծննդյան տոնին և ջանում է ապացուցել, որ «ծննդյան օրը» հունվարի վեցն է եղել, որը նրա իսկ խոսքերով՝ հավասար է հրեաների, արաբների, մակեդոնացիների, եգիպտացիների, եթովպացիների, աթենացիների, բեթանիացիների, կապադովկիացիների, վրացիների, հույների, հռոմեացիների, ասորեստանցիների և հայերի այսինչ ամսվա, այսինչ թվին, մասնավորապես վրացիների հունվար ամսվա տասնմեկին «Վրաց՝ ապանի տասն և մէկ»[33]*:*

Որ Պողոս Տարոնացին եղել է հայ հակաքաղկեդոնականների գլխավոր ջատագովներից մեկը, հավաստում է այն փաստը, որ նրան ճանաչում էին նաև Հայաստանից դուրս, հատկապես Հայաստանի դեմ թշնամաբար տրամադրված քաղկեդոնականների բանակում. դրանով է բացատրվում, որ նա հիշատակվում է նաև վրաց հին մատենագրության մեջ: Օրինակ՝ Անտոն կաթողիկոսը իր «Էրիստակայում» (տե՛ս Պ. Կարբելովի հրատարակությունը) մի քանի անգամ հիշատակում է նրան. մի տեղ ասում է, որ «Պողոս Տարոնացին գրքեր է գրել երկաբնակների դեմ և «Ընդդէմ Թէոփիստեայ Հոռոմ փիլիսոփային» (գիրք Բ., գլուխ Դ., էջ 111), երկրորդ անգամ «Պողոս Տարոնացու կողմից ուսյալ հայոց եկեղեցին Քրիստոսի բնությունն ընդունում է երկրայնից փոխված երկնայնի» (գիրք Գ., գ. 23, էջ 601), սրանից բացի, նույն երկի սկզբում «Տարոնացի Պողոս» անունը հիշատակված է որպես աղանդավորի, <այսինքն՝ ոչ երկաբնակների կամ քաղկեդոնականների> վարդապետների շարքում (էջ 4)[34]*:*

[32] Պօղոսի Տարօնացւոյ Թուղթ... ընդդէմ Թէոփիստեայ, ևլն., Կ. Պոլիս, 752, էջ 133:

[33] Նույն տեղում էջ 225:

[34] Պարզ է, որ Հովհաննես Սարկավագի և «Հիւսիսային կողմանք»-ից դուրս այլ խմբակի ներկայացուցիչների, մասնավորապես Պողոս Տարոնացու ջատագովության առնչությամբ խոսել կարելի է միայն Արսեն Իղալթեցու (ըստ **Կոռն. Կեկելիձեի** Արսեն որդի Վաչեի [Մաղաշվիլո՞ւ]) հակահայկական ելույթների մասին, որոնք տեղ են գտել վրաց մատենագրության մեջ՝ Դավիթ Շինարարի օրոք: Սա չափազանց հետաքրքիր հարց է և ուշադիր դիտարկում է պահանջում: Իսկ Արսեն

ԳԼՈՒԽ Թ.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ՄՏԵՐԻՄՆԵՐԸ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ԱԼԱՎԿԱ ՈՐԴԻ ԴԱՎԻԹԸ, ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻՆ ԵՎ ՍԱՐԳԻՍ «ԿՈՒՆՏԸ»

Հովհաննես Սարկավագը համարվում է Հաղբատ-Սանահնի դպրոցի հիմնադիրը[1]*, թեև, եթե արդարամիտ լինենք, նա ունեցել է այնպիսի նախակարապետներ, ինչպիսիք էին Անանիա Սանահնեցին և ուրիշներ:*

«Յովհաննէս սարկաւագ վարդապետը, Հաղբատի կրօնական-գիտնական դպրոցի հիմնադիրը լինելով հանդերձ, նորա ամենանշանաւոր ուսուցիչն է ու ներկայացուցիչը, և անշուշտ բազմաթիւ պիտանի և բանիմաց մարդիկ է տուել իւր ժամանակակիցներին, որոնցից սակայն մի քանիսի անունները միայն յայտնի են մեզ այժմ, իսկ ոմանց գրուածքները մինչև այժմ էլ անյայտութեան մէջ են մնում»[2]*:*

Առհասարակ համեմատաբար ավելի շատ տեղեկություններ կան Սարկավագի ժամանակակիցների մասին, ում հետ նա գործակցել է Հաղբատի վանքում: Կիրակոսի տեղեկությունների համաձայն՝ դրանք են՝ գանձակեցի Դավիթ Ալավկա որդին և Գրիգոր Թոքակերի որդին[3]*:*

Այս երկու գործիչների մասին Կիրակոսը պատմում է Հովհաննես Սարկավագի 578=1129 թվականի մահը նշելուց հետո. «Եւ զկնի

կաթողիկոսի հակահայկական գրությունների և թարգմանությունների մասին առայժմ տե՛ս **К. Кекелидзе**, Грузинская версия арабского Жития св. Иоанна Дамаскина.-ХВ, III, 139-141, **Կ. Կեկելիձե**, Վրաց գրականության պատմություն, I, 186-187, 298-300, Л. М.-В., **Никиты Стифата**, иеромонаха Студийского, «опровержение армянской ереси».- ХВ, IV, 92-93, **Л. Меликсет-Беков**, К вопросу о Федоре Абукуре в древнегрузинской литературе.- Изв. КИАИ, IV, 41-50, մասնավորաբար՝ 45:

[1] **Н. Адонц**, Армянская литература, ц. йзд., стлб. 653.

[2] **Եր.** ս. **[Տէր-Մինասեանց]**, Հաղբատ և Սանահին վանքերը, 344:

[3] **Կիրակոս**, 107-108:

ամի միոյ վախճանեցաւ սուրբ լուսաւորիչն Դաւիթ վարդապետն, Ալաւկայ որդի, որ գրեաց զկանոնական օրինադրութիւնս՝ գեղեցկայարմարս և պիտանացուս ի խնդրոյ քահանայի միոջ, որում անուն էր Արքայութիւն, ի քաղաքէն Գանձակայ: Եւ միւս ևս սքանչելի վարդապետ, զոր Թոքակերի որդի կոչէին, Գրիգոր անուն»[4]*: Եվ անմիջապես ավելացնում է. «Սոքա երեքեանս էին յաշխարհէն Գանձակայ, ուստի և ես»*[5]*:*

Այսպես, ուրեմն, ըստ Կիրակոսի՝ Ալավկա որդի Դավիթը վախճանվել է 1130 թ.[6]*:*

Հիշյալ աշխատության մեջ վանահայր «Գրիգոր վարդապետը՝ որդին Թոքակերի» և «Դավիթ՝ որդի Ալավկայ» Կիրակոսի կողմից հիշատակված են իբրև աղվանցիների կաթողիկոս ոմն Գագիկի ընտրություններ[7]*:*

Դրանից հետո, ըստ նույն Կիրակոսի՝ Գրիգորը արդեն երևում է ([ի] մայրաքաղաքն Գանձակ), որը ահասարսուռ երկրաշարժից ավերվեց վրաց Դեմետրե արքայի գահակալության (1125-1154) ժամանակ, և ճիշտ այդ ժամանակ, նրա իսկ խոսքով՝ «մեռաւ ի շարժմանէն մեծ վարդապետն Գրիգոր՝ հանդերձ այլ բազմութեամբ արանց եւ կանանց եւ մանկտոց»[8]*:*

Երկրաշարժից Գանձակի ավերման և Թոքակերի որդի Գրիգորի զոհվելու ամսաթիվը Կիրակոսը ցույց չի տալիս: Ի դեպ՝ այդ ամսաթիվը մենք գտնում ենք Սամուելի և Վարդանի երկերում:

Սամուելը գրում է. «*ՇՁԸ. <= 1139> թվին, ի ԺԷ. (17) արեգ ամսոյ շարժմամբ կործանեցաւ Գանձակ քաղաք, և սուրբ վարդապետքն Գրիգոր և Սարգիս ընկղմեցան*»[9]*:*

Վարդանը նշում է. «*Ի հինգհարիւր ութսուն և ութ <=1139> թուին կործանեցաւ Գանձակ ի շարժմանէ*»[10]*:*

Վարդանը Հովհաննես Սարկավագի մահվան կապակցությամբ ասում է. «*Եւ զկնի ամի միոյ՝ լծակիցն իւր Ալաւկայ որդին Դաւիթ, որ կանոնք գրեաց դիտահաս: Եւ Թոքակերայ որդին կոչեցեալ, աշակերտ նորին, և այլ արք ճգնաւորք ի յԱղուանս, որպէս Պետրոս Խոնթկայ որդի և Յակոբ սքանչելին...*»[11]*:*

Սարկավագի մահվան կապակցությամբ (1111-1121 թ. sic) Դավթին հիշատակում է նաև Մխիթարը. «Մեռաւ Սարկաւագ վարդապետն... և Դաւիթ վարդապետն Ալաւկայ որդին, որ զկանոնքն բացայայտեաց»[12]*:*

Եթե նկատի ունենանք Վարդանի նշած Հովհաննես Սարկավագի մահվան թվականը՝ 1139, ապա Ալավկա որդի Դավթի մահը, ըստ նույն Վարդանի՝ կսահմանվի 1140:

Հարցը վերջնականապես վճռելու համար, այնպես, ինչպես Հովհաննես Սարկավագի ամսաթիվը վճռելիս, ինքնին հասկանալի է, նախապատվությունը Սամուել Անեցուն պիտի տալ, քանզի նա հատուկ ասում է. «Շ. <=1131> թվին... Ննջեաց յայսմ ամի լուսաւորիչ և սուրբ վարդապետն Դաւիթ Ալաւկայ որդի»[13]*:*

Քանի որ Սամուելի տեղեկությունը մոտավորապես համընկնում է Կիրակոսի տեղեկությանը (միայն մեկ տարվա տարբերություն է), մենք կարող ենք Ալավկա որդի Դավթի մահվան թվականն ընդունել 1130//1131-ը[14]*, իսկ Թոքակերի որդի Գրիգորինը, նույն Սամուելի և Վարդանի տվյալներով՝ 1139 թ.:*

Մի խոսքով՝ երկու գործիչն էլ լիովին կարող են համարվել Հովհաննես Սարկավագի ժամանակակիցները:

Սակայն գիտագրական ասպարեզում նրանցից միայն Ալավկա որդի Դավթին է հայտնի, որը, այսպես կոչված, «Սարգիս-Գրքի» 1458 թվականի հիշատակարանի մեջ հիշատակվում է Սարկավագի հետ միասին. «կային արևելքում Սարկավագ Հաղբատացին, Ալավկա որդի Դավիթը և ուրիշ շատերը»[15]*:*

Ալավկա որդի Դավթի գրչին է պատկանում տարբեր բովանդակություն պարունակող օրենքների, խրատների և խորհուրդների բավական ծավալուն մի ժողովածու, որը սխալմամբ «Կանոնագիրք»

[4] **Նույն տեղում**, 107:

[5] **Նույն տեղում:**

[6] Այդուհանդերձ պարզ է, որ Դավիթը Մխիթար Գոշի ժամանակակիցը չի կարող համարվել, ինչպես կարծում է **Ալիշանը** (Հայապատում, Ա., 379, ծնթ. 1):

[7] **Կիրակոս**, 188-189:

[8] **Նույն տեղում**, 189:

[9] **Սամուէլ**, 132:

[10] **Վարդան**, 123:

[11] **Նույն տեղում**, 121-122.

[12] **Մխիթար**, 61:

[13] **Սամուէլ**, 129-130:

[14] **Կ. Կոստանեանցը** (Դաւիթ վարդապետ Ալավկայ որդի.- ԱՀ, ԺԴ., 1906, էջ 106) Դավթի մահվան թվականն ընդունում է 1140-ը: Ակադ. **Մ. Բրոսեն** (Изв. АН, 1920, стр. 98), չգիտես ինչու, նրան համարում է ԺԱ. դարի գործիչ:

[15] **Տաշեան**, Ցուցակ, 751:

են կոչում[16]: Ձեռագրերում հայտնի է հետևյալ վերնագրերով.

Հիմնական բնագրում	Տարբերակում
Հարցումն պէսպէս խոստո-վանութեամբ բանից և պատահմանց եկելոց ի զգուշութիւն, զոր հարցեալ համբակ քահանայ, որոյ անուն Արքայութիւն կոչի, զԴաւիթ ոմն քահանայ գիտնական յոյժ[17]:	Դաւթի վարդապետի մականուն Ալաւկա[յ] որդի՝ վասն պէսպէս հարցմանց խոստովանութեանց[18]:

Ժողովածուն մեզ է հասել երկու խմբագրությամբ. նրանցից մեկը 40 հոդված է պարունակում, իսկ երկրորդը՝ 97//98[19]:

Համաձայն Կ. Կոստանյանցի՝ «Դավթի ժողովածուն գործողության մեջ պետք է եղած լինի նույն ժԲ. դարում: Դա երևում է այն բանից, որ Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» կան սահ-

16 Ամփոփ է. մեզ է հասել 3 ձեռագրով. 1) էջմիածնի թանգ. հին հավաք. Ձեռ 735 (ուսումնասիրել է **Կ. Կոստանեանցը**, նա էլ բնագիրը պատրաստել է տպագրության հենց այդ ձեռագրի հիման վրա), 2) նույն թանգ. նոր հավաք. Ձեռ 918/513 [5607] (ուսումնասիրված է մեր կողմից 1924 թ.), 3) գտնվում է Վիեննայի Մխիթարյան միաբանությունում՝ Ձեռ 256 (ընդարագրված է Հ. **Տաշեանի** կողմից, Ցուցակ, 656):

17 **Տաշեան**, Ցուցակ, 656, **С. Тигранян**, Древнеармянская «Книга канонов», стр. 99, 141-142, 146:

18 Տե՛ս էջմիածնի թանգ. նոր հավաքածուի ձեռ. Ձեռ 918/513 [5607], էջ 351ա:

19 Այս երկի մասին տե՛ս **Մ. Չամչյան**, Պատմութիւն Հայոց, Գ., 41-42, **S. Somal**, Quadro della storia etc., 90: **Զ[արբհանալեան]**, 662 և այլն: **Մեսրոպ Տեր-Մովսիսյանցի** հրատարակած, այսպես կոչված, Եղիշեի «Կանոններում» (Նախապաշարմունքներ Եղիշէ պատմագրի «Կանոններում».- ԱՀ, Բ., 1897, 295-299).- հանձայն **Ս. Տիգրանյանի** (Древне-армянская «Книга канонов», 146, пр. 1) դա, իսկապես, ոչ թե Եղիշեինն է, այլ Դավիթ Ալավկա որդունը, իսկ Եղիշեն, հավանաբար, այդ ժողովածուն արտագրողներից մեկի անունն է: Հայերեն այդ բնագիրն արդեն մի քանի տարի է՝ հանգուցյալ **Կ. Կոստանյանցը** ներկայացրել է Գիտությունների ակադեմիա, որն այն ընդունել է տպագրելու նպատակով՝ հետևյալ վերնագրով՝ «Давид Гандзакский, сын Алавика, и его Канонагирк [«Книга правил]», армянский текст с примечаниями и с особым предисловием, **К. Костанянц**» (Изв. АН, 1920, стр. 98). Տպագրության ուղարկած բնագիրն ակադ. **Ն. Մառը** բնութագրում է այսպես. «Текст оказался интересным также лингвистически и археологически. В нем ряд редких слов, иногда... неизвестные и мало употребительные слова бытового характера. Они очень ценны для истории материальной культуры. И те и другие напрашиваются на анализ и освещение с точки зрения их связи с восточно-кавказским культурным районом». Առհասարակ հուշարձանը մեր առաջ բացում է Դավթի ժամանակի կենցաղի, նիստուկացի պատկերը, հասարակության բարոյական մակարդակը, վարք ու բարքը և այլն: Նրա մասին առայժմ տե՛ս **Կ. Կոստանեանցի** հետազոտությունը. Դաւիթ վարդապետ Ալաւկայ որդի.- ԱՀ, ԺԴ., 1906, էջ 105-132, ԺԵ., 1907, էջ 62-67:

մանումներ, որոնք բառ առ բառ պետք է որ արտագրված լինեն Դավթի «Կանոնագրքից»:

Հայտնի է, որ Մխիթար Գոշը իր «Դատաստանագիրք Հայոցը» կազմելուն ձեռնամուխ է եղել 1184 թվականին, «ուրեմն, նույն գիտնականի հաշվարկներով, Դավթի մահից 44 տարի անց»[20]:

Նման հաշվարկը ճիշտ կլիներ, եթե Դավթի մահվան թվականն ընդունեինք Վարդանի վկայած 1140-ը: Բայց քանի որ մահվան թվականը մենք հայտարարել ենք 1130//1131-ը, այդ իսկ պատճառով մենք պետք է եզրակացնենք, որ Մխիթար Գոշը իր «Դատաստանագիրք Հայոցը» կազմելուն ձեռնամուխ է եղել Դավթի մահից 53//54 տարի հետո:

Ինչ վերաբերում է այն իրողությանը, թե Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոցի» որոշ օրենքներ Դավթի ժողովածուից են արտագրված, «անշուշտ, պատահական երևույթ չէ»[21]: Կ. Կոստանյանցը ապացուցում է, որ «այլ սկզբաղբյուրների հետ միասին Մխիթար Գոշը ձեռքի տակ ունեցել է նաև Դավթի «Կանոնագիրքը» եղբահանգումներ անելիս Կ. Կոստանյանցը բավարարվել է Դավթի ժողովածուի 21-րդ և 22-րդ հոդվածները համեմատելով Մխիթար Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի 109-րդ և 110-րդ գլուխների հետ, նաև Դավթի երկի 17-րդ հոդվածը՝ Մխիթարի ներածական խոսքի 8-րդ գլխի հոդվածներից մեկի հետ[23]:

Հատկանշական է, որ Դավթի ժողովածուում բազում զարմանալի խորհուրդ-խրատներ են զետեղված, ինչն էլ ժամանակին հիմք է տվել Հ. Տաշյանին՝ հայտարարելու, որ այդ ժողովածուում «մեծ մասամբ խենթական բաներ»[24] են: Բայց, չնայած դրան, մենք, այդուհանդերձ, ավելորդ չենք համարում կանգ առնել որոշ «խենթական բաների» վրա, որոնք հատկապես վերաբերում են վրացիներին:

Դավիթ Ալավկա որդին հայերին հորդորում է չօգտագործել վրացիների մորթած միսը, ինչը առաջացրել է Կ. Կոստանյանցի զարմանքը և ստիպել ասելու. «Տարօրինակ է Դաւթի ԺԱ. կանոնը, որ պատվիրում է չուտել վրացու մորթած միսը. տարօրինակ է այն պատճառով, որ վրացիք, դաւանութեամբ տարբեր, սակայն քրիս-

20 **Կ. Կոստանեանց**, Դաւիթ վարդապետ Ալաւկայ որդի.- ԱՀ, ԺԵ., 64:

21 **Նույն տեղում:**

22 **Նույն տեղում:**

23 **Նույն տեղում:**

24 **Տաշեան**, Ցուցակ, 656:

տոնեայ ազգ են»[25]*:*

Ահա այդ կանոնը. «Այլ վասն վրաց զենոյ (sic) զկենդանիս, մի՛ ոք կերիցէ ի մսոյն, բայց եթէ ի սովոյ հարկ լինիցի. իսկ Թերախում գինի մի՛ խոտեսցի բայց ի սուրբ խորհրդոյն: Նոյնպէս և ամանքն մի՛ խոտեսցին, յորս կազմի կերակուր նոցա, բայց ի մկնանկէ և ի նապաստակէ մսոյ պղծեցելոյ»[26]*:*

Սա միանգամայն բնորոշ է դավանաբանական այն մոլեռանդութեանը, որը հայ հոգևորականների միջոցով հայ իրականութեան մեջ սկիզբ էր առել Զ-Ի. դարերում, և որին, հավանաբար, նպաստել էր Աբրահամ կաթողիկոսի նշանավոր կոնդակը (607-609), որտեղ հայ եկեղեցու հովվապետի իր հոտին թելադրում էր՝ բոլորովին «հեռանալ» վրացիներից ոչ միայն աղոթքներով, բարեկամ-խնամիութեամբ, այլև ուտել-խմելու հարցում. «...մի՛ հաղորդել ընդ նոսա... մի՛ ի կերակուրս և մի՛ յըմպելիս», բացի առևտուր անելուց, «ինչպես հրեաների հետ» «բայց միայն գնել ինչ, և կամ գնոյ տալ՝ որպես հրէից»[27]*: Մի խոսքով՝ Դավիթ Ալավկա որդին ևս Աբրահամ կաթողիկոսի նման հայերին խորհուրդ է տալիս ընդհանրապես հեռու մնալ վրացիներից, բացառութեամբ այն դեպքերի, երբ ակամա պարտադրված կլինեն նրանց հետ կապի մեջ մտնել:*

Կարող ենք Դավիթ Ալավկա որդու օրենքների այս հոդվածները մի տեսակ հիմք համարել այն միտքը հաստատելու համար, համաձայն որի՝ Դավթի ժողովածուն պետք է գրված լինի այն շրջանում, որտեղ հայերը վրացիների հարևանութեամբ կամ էլ վրացիները հայերի հարևանութեամբ էին բնակվում, միաժամանակ, երբ դավանաբանական անհամաձայնութիւնները նրանց միջև ոչ միայն ամբողջովին չէին սպառվել, այլև ժամանակ առ ժամանակ ավելի էին սաստկանում:

Դրանից բացի, քանի որ Ալավկա որդի Դավիթը Հովհաննես Սարկավագի ժամանակակիցն էր, կարող ենք մեզ թույլ տալ ասելու, որ այդ հոդվածները նա գրած լինի Հովհաննես Սարկավագի «Ընդդեմ երկաբնակաց» աշխատութեան մեջ զետեղված համապատասխան երկի՝ «Առ որս պիղծ զմիս վարկանեն և զանճինս ոչ արգելուն»[28]*, ազդեցութեամբ:*

---

[25] **Կ. Կոստանեանց**, նշ. աշխ., 117-118:

[26] **Նույն տեղում**, 118

[27] Գիրք թղթոց, 194, հմմտ. Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, 307:

[28] Տե՛ս վերը՝ այս մասի Գլ. Ը, ծնթ. 12:

* * *

Կիրակոս Գանձակեցու *նկարագրած՝ Հովհաննես Սարկավագի կյանքի մի դրվագում, ինչպես կտեսնենք, հիշատակված է Հովհաննեորին, չգիտես ինչու, Համազասպ Ոսկյանը համարում է Հովհաննես սի աշակերտը. «Սարկաւագի ուրիշ մէկ աշակերտն ալ է, կարծեմ, Ստեփաննոս Զո[մ]զոմա»*[30]*: Ցավոք, այս Ստեփանոս Զոմզոմայի ո՛չ կյանքի, ո՛չ գիտագրական գործունեության մասին որևէ տեղեկութիւն չի հայտնաբերվել:*

Ինչ վերաբերվում է Հովհաննես Սարկավագի աշակերտներին, ապա նրանց մասին սոսկ կցկտուր տեղեկություն կարող ենք քաղել Վարդանի և Սամուէլի *երկերից:*

Վարդանը *Հովհաննես Սարկավագի կյանքը նկարագրելիս հիշատակում է «ի նմանէ աշակերտեալսն»: «Երեմիա որ [է] Անձրևիկ և որ զամս երեսուն չորակեր եղև, այնչափ հլու եղեալ վարդապետին իւրոյ, որ և ՚ի սաստելն երբեմն թէ՝ Լուռ լե՛ր, զամս երիս ոչ խօսեցաւ ընդ մարդ, բայց եթէ ընդ վարժիչն իւր ի կարիս. – և Սամուէլ երեց աշխարհի՝ որ զ Գաւազանն յօրինեաց քրոնիկոնին՝ Անեցին»»*[31]*:*

Սամուելը, *հիշատակելով Հովհաննես Սարկավագի մահվան թվականը 578=1129, գրում է. «Եւ աշակերտ սորա Երեմիա, որ եւ յաւելն վարդապետին, թէ՝ Լուռ լե՛ր, զամս Գ. (3) լուռ եկաց, ընդ միտս եւ ընդ Աստուծոյ խօսէր, որ եւ Անձրեւ կոչեցաւ: Եւ ընկերքերք սորա՝ տէր Խաչատուր եւ Գրիգոր եւ Յովհաննէս եւ Սամուէլ. ամենեքեան սոքա անեցիք»*[32]*:*

Այս մեջբերումներում թվարկված անձանցից գիտագրական բնագավառում հայտնի է միայն Սամուել Անեցին, որի գրչին պատկանում է ժամանակագրական բնույթի մի երկ՝ աշխարհի արարումից մինչև 1179 թվականը, հետևյալ վերնագրով՝ «Սամուէլ քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս»[33]*:*

---

[29] **Կիրակոս**, 105-106:

[30] **Ոսկեան**, 17:

[31] **Վարդան**, 121:

[32] **Սամուէլ**, 128:

[33] Այս վերնագրով հրատարակվել է Վաղարշապատում 1893 թ. **Արշակ Տեր-Միքելյանի** կողմից: Հմմտ. վերը՝ այս գրքի առաջին մասի Գլ. Զ., ծնթ. 7:

Չնայած հեղինակն իր երկը, ինչպես երևում է առաջաբանից[34]*, նվիրում է «Սրբազգեաց Գրիգորին», այդուհանդերձ չենք կարող Սամուելին համարել այդ Գրիգորի աշակերտը, որ Գրիգոր անվան տակ հետազոտողները մեկ Գրիգոր Մեղրիկին են նկատի առնում*[35] *(վախճանվել է 1104//1113 թ.), մեկ՝ Հաղբատի վանահայր Գևորգին*[36]*: Սամուել Անեցին աշակերտել է, անշուշտ, Հովհաննես Սարկավագին և ուրիշ վանահայրերի, որոնց հետ «Սրբազգեաց Գրիգորը» որևէ առնչություն չպետք է ունենար:*

Երեմիա «Անճրևիկը» այլ աղբյուրներում չի երևում: Նմանապես չեն երևում Խաչատուր, Գրիգոր և Հովհաննես Անեցիները[37]*:*

Բոլոր այս աշակերտներից բացի, հայտնի է «Կունտա» կոչված ոմն Սարգիս, նա իրեն Հովհաննես Սարկավագի աշակերտ է համարում: Այս Սարգսին է պատկանում «Մեկնութիւն սուրբ Աւետարանին Յովհաննու» աշխատանքը, որին կցված է իր՝ Սարգսի ընդարձակ հիշատակարանը, որտեղ ինքը, ի միջի այլոց, ասում է.

«...Շնորհիւն Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի... ես տրուպս և անպիտանս ի ժառանգաւորս եկեղեցւոյ՝ Սարգիս վարդապետ մականուն Կունտ կոչեցեալ ի գաւառէ Արարատեան...

Կատարեցաւ հոգեներոգ տառս մեկնութեան սուրբ Աւետարանին Յովհաննու, զոր կարգեալ և ուղղեալ բազում աշխատութեանբ մեծի իմաստնոյ Սարգիս կոչեցեալ, աշակերտ երիցս երանեալ սուրբ վարդապետի Սարկաւագ կոչեցեալ...[38]»:

Այս հիշատակարանից նաև երևում է, որ Սարգիսը «Մեկնությունը» սկսել է գրել նոր տոմարով (այսինքն՝ Սարկավագի կազմած) 63 թվականին «ի թուականիս նորոյ ԿԳ.»[39]*, ինչը հավասար է 1084+ 63 = 1147 թ. Ք. ծ.:*

---

[34] **Սամուէլ**, 3:

[35] **Գ. Զ[արբհանալեան]**, Հայկական հին դպրութեան պատմութիւն, 672:

[36] **Ոսկեան**, 15:

[37] Ինքնին հասկանալի է, որ **Սամուելի** հիշատակած **Խաչատուրը**, **Գրիգորը** և **Հովհաննեսը** չպետք է լինեն «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» կողմից 1184-1185 թթ. Գրիգոր Տղային հղված թղթում հիշատակված «Սանահինի վարդապետ Գրիգորը և հայրա[պետ] Հովհաննես.... Խաչատուր վարդապետ Հաղարծնեցին» (տե՛ս այս գրքի առաջին մասի Զ. գլխի և երրորդ մասի Ա. գլխի սկիզբները), քանի որ վերջիններս իրենց գործունեությունը ծավալել էին ԺԳ. դարի սկզբին, և, ինչ խոսք, հնարավոր չէ, որ սրանք աշակերտները լինեին մի անձնավորության, ով վախճանվել է 1129 (թեկուզ 1139) թվականին:

[38] **Ղ. Ալիշան**, Հայապատում, Բ., 371:

[39] **Ղ. Ալիշան**, նշ. աշխ., նույն տեղում:

Նույն տեղում Սարգիսը նշել է աղբյուրները՝ Եփրեմ Ասորու, Կյուրեղ Ալեքսանդրացու, Հովհան Ոսկեբերանի, Գրիգոր Աստվածաբանի, Թեոփանեսի, Եպիփան Կիպրացու, Մովսես Քերթողի, Մամբրե Վերծանողի, Ստեփանոս Սյունեցու, Գրիգոր Նարեկացու, Իգնատիոսի, Անանիայի (Սանահնեցո՞ւ), Հովհաննես Սարկավագի և այլոց երկերը[40]*:*

Այսպիսով՝ մենք պարզաբանել ենք Հովհաննես Սարկավագի աշակերտներից հետևյալ անձանց անունները՝ Երեմիա «Անճրևիկ», Խաչատուր, Գրիգոր, Հովհաննես, Սամուել (Անեցի) և Սարգիս «Կունտ»[41]*:*


Վերջում չենք կարող ուշադրություն չդարձնել հետևյալ հանգամանքի վրա. թվում է, թե Հաղբատ-Սանահնի գործիչների խմբակը բաժանվում է տարբեր սերունդների և մասնավորապես ԺԲ. դարի առաջին կեսի ու միջնամասի անեցիների նշանավոր սերունդը (Երեմիա, Խաչատուր, Գրիգոր, Հովհաննես և Սամուել) նախորդում է գանձակեցիների սերնդին (Հովհաննես Սարկավագ, Գրիգոր Թոքմակերի որդի և Դավիթ Ալավկայ որդի): Սա չափազանց հետաքրքիր երևույթ է, ինչը ասես թե օրինաչափ է, առանց որի անհնար կլիներ բացահայտել, թե ինչու ԺԲ. դարի երկրորդ կեսին և ԺԳ. դարի սկզբին Հաղբատի և Սանահնի միևնույն վանքում գանձակեցիների և անեցիների սերնդից հետո աչքի է ընկնում խաչենցիների սերունդը, որոնց վաստակը անջնջելի է «Հյուսիսային կողմանց» գիտական օջախների զարգացման պատմության մեջ[42]*:*

---

[40] **Նույն տեղում**, 370-371, հմմտ. **Ոսկեան**, 16:

[41] Հովհաննեսի աշակերտների մասին ընդհանրապես տե՛ս **Եր. ս. [Տէր-Մինասեանց]** Հաղբատ և Սանահին վանքերը, 344, **Ոսկեան**, 14-17:

[42] Խաչենցիների առաջընթացը, անշուշտ, առնչվում է երկայնաբազուկների առաջընթացին, որոնց հետ նրանք ունեին խնամիական կապեր: Ահա թե ինչու, հասկանալի է դառնում խաչենցիների շինարարական գործունեությունը ոչ միայն Կյուրիկյանների նախկին թագավորանիստ Սամշվիլդե քաղաքի շրջակայքում (այս մասին տե՛ս այս գրքի առաջին մասի Գլ. Ե., ծնթ. 59), այլ նաև հենց Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում ԺԲ-ԺԳ. դարերում (հմմտ. **Լևոն Մելիքսեթ-Բեկ**, Թիֆլիսի վանքի հիմնադրման հարցի շուրջ.- «Թիֆ. համալս. բանբեր»), IV, 1924, էջ 82-91 (ლეონ მელიქსეთ-ბეგი, ტფილისის ეკლესიის დაარსების საკითხისათვის, - „ტფ. უნ. მოამბე“, IV, 1924, გვ. 82-91):



ՄԱՍՆ ԵՐԵՔ

ՀԱՂԹԱՏ-ՍԱՆԱՀՆԻ ԴՊՐՈՑԸ

ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԿՐԹՕՋԱԽՆԵՐԻ ԽՄԲԱԿՆԵՐԸ

ՓԲ-ՓԳ. ԴԱՐԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ Ա.

ԺԲ. ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՎ ԺԳ. ԴԱՐԻ ՍԿԶԲԻ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ. ԳԻՏԱԳՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ ԱՆՀԱՅՏ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ՝ ԲԱՍԻԼ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԱՀՆԵՑԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՂԲԱՏԵՑԻ, ԻԳՆԱՏԻՈՍ, ՊԵՏՐՈՍ, ՄԽԻԹԱՐ ԽՈՐԱԿԵՐՏՑԻ ԵՎ ԳԵՎՈՐԳ ՀԱՂԲԱՏԵՑԻ

ԺԲ. դարի վերջի և ԺԳ. դարի սկզբի «Հյուսիսային կողմանց վարդապետների» կազմը պարզելու համար ունենք չափազանց հաստատ և հաստատուն մի քանի աղբյուր.

1) Հիշատակված վարդապետների *թղթերը՝ 1184-1185 թթ. հղված Գրիգոր Տղային, կազմել են «Բասիլ եպիսկոպոսը, որը Հյուսիս-ա[րևելքից էր, վարդապետ* Գրիգոր Սանահնեցին, *Սանահնի հայր[ա]պետ]* Հովհաննեսը, *Հաղբատի մետրոպոլիտի վարդապետներ* Իգնատիոսը, Պետրոսը, Վարդանը, Դավիթը, *ինչպես նաև Հաղարծնի վարդապետ* Խաչատուրը, *Խորակերտի վարդապետ* Մխիթարը և *Գետիկի երկրորդ* Մխիթար *վարդապետը».*

2) Եփրեմ Ասորու *1195 թ. աշխատանքներից մեկում հիշատակվում են՝ «Հաղբատի եպիսկոպոս* Հովհաննեսը և վարդապետներ Դավիթը, Պետրոսը, Իգնատիոսը և նորերս վախճանված Վարդանը».

3) Կիրակոս Գանձակեցու *«Պատմութ[յան» մեջ, առկա է մոտավորապես 1205 թ. հրավիրված Լոռու ժողովի արձանագրությունը,* որտեղ, *ի մի միջի այլոց, հիշատակվում են «երևելի վարդապետներ՝ Գետիկի վանքը կառուցող Գոշ կոչված Մխիթարը՝ մի իմաստուն, հեզ մարդ և օրինագիտական ուսումով հռչակված. Իգնատիոսը, Վարդանը, Հաղբատի Դավիթ Քոբայրեցին, Սանահնի հայր Հովհաննեսը, որ Գրիգոր վարդապետի մահից հետո էր, որին* Տուտեորդի *էին կոչում...»:*

Այս երեք աղբյուրների հիման վրա կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակը՝

Ա.

1184-1185 թթ. համար

(«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների») խմբակի գլխավորները.

1. Բասիլ *եպիսկոպոսը, «որը հյուսիս-արևելքից էր»,*
2. Գրիգոր *[Տուտեորդի] Սանահնեցին,*
3. Հովհաննես *Հայր(ապետ) Սանահնին,*
4. Իգնատիոս *Հաղբատեցին.*
5. Պետրոս *Հաղբատեցին,*
6. Վարդան*Հաղբատեցին,*
7. Դավիթ *Հաղբատեցին [Քոբայրեցի],*
8. Խաչատուր *Հաղարծնեցին [Տարոնեցի],*
9. Մխիթար *Խորակերտցին,*
10. Մխիթար *[Գոշ], Գետիկցին:*

Բ.

1195 թվականի համար

(Հաղբատի խմբակի գլխավորները),

1. *Հաղբատի* Հովհաննես *եպիսկոպոսը,*
2. Իգնատիոս *Հաղբատեցին,*
3. Պետրոս *Հաղբատեցին,*
4. † Վարդան*Հաղբատեցին,*
5. Դավիթ *Հաղբատեցին [Քոբայրեցի]:*

Գ.

1205 թվականի համար

(Գետիկ-Սանահին-Հաղբատի խմբակի ղեկավարները)

† Գրիգոր *Տուտեորդի* Սանահնեցին,

1. Հովհաննես *Սանահնեցին,*
2. Իգնատիոս *Հաղբատեցին,*
3. Վարդան*Հաղբատեցին,*
4. Դավիթ *Քոբայրեցին (Հաղբատեցի),*
5. *[Մխիթար]* Գոշ, *Գետիկցին:*

Այս վարդապետներից գիտագրական ասպարեզում հայտնի են՝ Գրիգոր Տուտէորդին կամ Տուտէի որդի Սանահնեցին (Ա. և Բ. ցուցակներում, երկրորդում նշված է՝ մահացած), Վարդան Հաղբատեցին (Ա. և Բ. ցուցակում), կամ երկրորդ Վարդանը՝ (Գ. ցուցակից),

Հաղբատի Դավիթ Քոբայրեցին (բոլոր երեք ցուցակներում), Խաչատուր Հաղարծնեցին (Ա. ցուցակում) և Մխիթար Գոշը (Ա. և Գ. ցուցակներում):

Բոլոր այս անձանց գործունեության մեկնաբանությանն ենք նվիրում մենագրության երրորդ մասը, որտեղ կքննարկենք նաև ԺԲ-ԺԳ. դարերի այն գիտնական-գրողների գործունեությունը, որոնք վերոբերյալ ցուցակներից ոչ մեկում չեն հիշատակվում, բայց հայտնի են այլ աղբյուրներից, որպես, այսպես կոչված, «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» խմբակի ներկայացուցիչներ և նրանց ժամանակակիցներ, օրինակ՝ Գրիգոր Աբասաորդին (ԺԲ-ԺԳ. դարերում) կամ աշակերտները, օրինակ՝ Մխիթար Գոշի ժառանգորդը՝ Հովհաննես վանական Տավուշեցին իր դպրոցով (ԺԳ. դար):

Գիտական-գրական ասպարեզում հայտնի չեն՝ Բասիլ եպիսկոպոսը (Ա. ցուցակից), Հովհաննես Սանահնեցին (Ա. և Գ. ցուցակներից), Հովհաննես Հաղբատեցին (Բ. ցուցակից), Իգնատիոս Հաղբատեցին (բոլոր երեք ցուցակներից), Պետրոս Հաղբատեցին (Ա. և Բ. ցուցակից և Մխիթար Խորակերտցին (Ա. ցուցակից). աղբյուրներում սրանց մասին կամ ոչինչ չկա, կամ շատ քիչ տեղեկություններ են պահպանվել:

* * *

Բասիլ եպիսկոպոսը՝ հյուսիս-արևելքից: Սա, անկասկած, Հաղբատի եպիսկոպոս Բասիլը կամ Բարսեղն է, Գիորգի Գ.-ի և Թամար Թագուհու ժամանակակիցը. նա հայտնի է Հաղբատի 1180, 1185, 1189 թվականների արձանագրություններից և Կիրակոս Գանձակեցու «Պատմությունից»[1]*:*

629=1180 թվականին արձանագրությունում (Գիորգի Գ. կողմից Հաղբատի կալվածքները հաստատելու մասին), ի միջի այլոց, հի-

[1] ԺԲ. դարի Բ. կեսին հայտնի են եղել մի քանի Բասիլ-Բարսեղներ՝ օրինակ, Գրիգոր Տղայի կողմից հունաց Միխայիլ պատրիարքին հղված թուղթը, ի միջի այլոց, ստորագրել են «մայրաքաղաք Անիի արքեպիսկոպոս Բասիլը»: Նրանցից առաջինը պետք է մայրաքաղաք Տփղիսի արքեպիսկոպոս Բասիլը: Նրանցից առաջինը պետք է եղած լինի նույն ինքը՝ Բարսեղը, ըստ **Մատթեոս Ուռհայեցու** (**Մատթէոս**, 220-221) և ըստ **Կիրակոսի** (**Կիրակոս**, 91), ըստ **Վարդանի** (**Վարդան**, 104), որը 1081 (այլ տարբերակով՝ 1076) թվականին համաձայն վերոհիշյալ բոլոր պատմագրերի՝ Աղվանքի կաթողիկոսի (ըստ **Ուռհայեցու** և **Վարդանի**՝ Ստեփանոսի, իսկ ըստ **Կիրակոսի** և **Մխիթարի**՝ Հովսեփի) կողմից տարվեց Հաղբատ, **Ուռհայեցու** վկայությամբ՝ ս. Գրիգորի գահին:

շատակվում է իբրև «Տէր Բարսեղ առաջնորդ տանս Հաղբատայ»[2]: 634=1185 թ. Կյուրիկեի դուստր Մարիամի՝ իր ծնողների գերեզմանին կառուցած աղոթատան արձանագրությունում հիշատակված է՝ «Յառաջնորդութեան տեառն Բարսղի արհիեպիսկոպոսի»[3]: Իսկ 638=1189 թ. (Առանի որդի Դավթի՝ իր հոր և քրոջ գերեզմանին կառուցած եկեղեցում) կարդացվում է «Յառաջնորդութեան տեառն Բարսղի»[4]:

Կիրակոս Գանձակեցին պատմում է. «և զՍարգիս ոմն դրան երէց Կիւրիկէի՝ ձեռնադրեն եպիսկոպոս Հաղբատայ. և յայնմ հետէ եղեւ աթոռ եպիսկոպոսի»,- և նշում է,- «Եւ յետ Սարգսի եղեւ եպիսկոպոս Գէորգ. և յետ նորա Բարսեղն: Սա է՛ր այր գեղեցիկ տեսլեամբ. զսա տեսեալ թագուհին Վրաց Թամարն, մեծապէս պատուեաց զնա վասն վայելչութեան գեղոյ նորա, զի և եղբարք նորա գործակալք էին տանն արքունի»[5]:

Այս Բարսեղը կամ «Բասիլ եպիսկոպոսը, որը հյուսիս-արևելքից էր», Խաչենցի[6], հետագայում տեղափոխվել է Տփղիս որպես արքեպիսկոպոս, հնարավոր է՝ սա հենց այն Բարսեղ-Բասիլը եղած լինի՝ «Բասիլիոս արք եպիսկոպոս թագաւորանիստ քաղաքին Վրաց Տփխեաց»[7] էր, ոչ թե այն «Բասիլիոս արք եպիսկոպոս թագաւորանիստ քաղաքի Անւոյ», որը Վարդանի «Պատմությունում» հիշատակված է «Բարսեղ՝ որ յարևելս»[8] հետագայում կարդված լինի Անիի ոչ պաշտոնական (պարտիկուլյար) կաթողիկոս:

Սանահնի հայր(ապետ) Հովհաննեսը *Սանահնի 1181, 1184 և 1191 թվականների արձանագրություններում հիշատակված է որպես «Յովհաննէս առաջնորդ»[9] կամ «Հայր Յովհաննէս»[10]: Նա մոտավորապես 1205 թվականին կայացած Լոռու ժողովի մասնակիցն է,*

[2] **Յովհ. Ղրիմեցի**, 5 = **Երզնկեան**, 33 = **Կոստանեանց**, 33, հմմտ. [**А. Ерицов**], նշ. աշխ., 52:

[3] **Յովհ. Ղրիմեցի**, 8 = **Երզնկեան**, 21 = **Կոստանեանց**, 36, հմմտ. [**А. Ерицов**], նշ. աշխ., loc. cit:

[4] **Ջալալեանց**, Ա., 74 = **Յովհ. Ղրիմեցի**, 7 = **Երզնկեան**, 25 = **Կոստանեանց** 37, հմմտ. [**А. Ерицов**], նշ. աշխ., նույն տեղում:

[5] **Կիրակոս**, 91-92:

[6] Ի գաւառէն Խաչենոյ, **Ալիշան**, Հայապատում, Բ., 382:

[7] Թուղթ ընդհ., 275 = **Տաշեան**, Ցուցակ, 350. հմմտ. **Ալիշան**, Հայապատում, Բ, 382:

[8] Եվ ոչ «յարևելս հիւսիսոյ»:

[9] **Յարութիւնեան**.- ԱՀ, Գ., 286 = **Կոստանեանց**, 33-34:

[10] **Ջալալեանց**, Ա., 27 = **Լալայեան**, 391 = **Կոստանեանց**, 35, **Ջալալեանց**, Ա., 18 = **Յարութիւնեան**, ԱՀ, Գ., 283 = **Կոստանեանց**, 37:

ինչպես նաև 1205 թ. արձանագրությունում հայտնի «Յովհաննէս գաւառաւս Խաչինեցի»[11]:

Հովհաննես Հաղբատեցին *այլ աղբյուրներում չի հիշատակվում*[12]: *«Վարդապետն ուսմամբ հռչակեալ Իգնատիոսն», ինքնին հասկանալի է, հայ գրականության պատմության մեջ հայտնի այն Իգնատիոսը չէ, ով Սև լեռան վանքում գործել է ԺԲ. դարի առաջին կեսին, և հռչակված է մեկնաբանական երկերով*[13]: *Իգնատիոս Հաղբատեցին, պարզվում է՝ 1205 թ. ողջ է եղել: Ռ. Երզնկեանը, հիմնվելով բանավոր տեղեկությունների վրա, նրա գերեզմանը նշում է Հաղբատի կուսանոցը*[14]: *Այլ առումով նա անծանոթ է*[15]:

Պետրոսը *հայտնի է որպես ուսուցիչ Դավիթ (ըստ Ն. Ակինյանի՝ Քոբայրեց վարդապետի) վարդապետի՝ ԺԲ. դարում, որը վերջինիս խնդրանքով գրել է Եսայու «Մարգարեության» մեկնությունը*[16]: *Ենթադրվում է, որ 1205 թ. նա արդեն վախճանվել էր: Այլ առումով նա ևս անծանոթ է:*

Մխիթար Խորակերտցին *ուրիշ աղբյուրներում չկա:*

Վերջում մեկ-երկու խոսք Գևորգ Հաղբատեցու *մասին, որը վերոբերյալ ցուցակներից և ոչ մեկում հիշատակված չէ, բայց, ինչպես արդեն տեսանք,* Կիրակոսը *նրան հիշատակում է Հաղբատի եպիսկոպոսական աթոռանիստի հիմնադրումից հետո՝ որպես երկրորդ եպիսկոպոսի, Սարգսից հետո և Բարսեղից առաջ*[17]*, այսինքն՝ մինչև 1184-1185 թթ.: Նա հայտնի է որպես Գրիգոր Տղայի Ներսես եպիսկոպոսին հղված ս. Սարգսի իրական պատմության մասին գրված թղթի հեղինակ: Նրա այդ թուղթը, ցավոք, մեզ չի հասել, բայց եթե այդ մասին մենք ինչ-որ բան գիտենք, ապա միայն շնորհիվ Ներսես պատասխանի, որը գրականության մեջ հայտնի է հետևյալ*

[11] **Յովհ. Ղրիմեցի**, 53.

[12] «Յովհաննէս առաջնորդ սուրբ ուխտին Հաղբատայ» հիշատակված է Սանահնի, այսպես կոչված, Համբարձման եկեղեցու արևելյան կողմում, Գրիգոր Տուտեորդու գերեզմանի մոտ գտնվող 676 = 1227 թվականի արձանագրությունում (**Լալայեան**, 392), բայց, սա, ուրիշ Հովհաննես է:

[13] **Գ. Զ[արբհանալեան]**, Հայկական հին դպրութեան պատմութիւն, 642-643, **Ա. Զամ[ինեան]**, Պատմութիւն հայ գրականութեան, 172:

[14] **Երզնկեան**, 65:

[15] **Ն. Ակինեան**, Մատ. հետազ., 68:

[16] Երանելւոյն Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Եսայեայ մարգարէի, Վնտ., 1880, էջ ԺԵ. հմմտ. **Ղազիկեան**, Հայկական նոր մատենագիտութիւն, Բ., 104, **Ն. Ակինեան**, Մատ, հետազ., 68:

[17] **Կիրակոս**, 91-92, հմմտ. **Վարդան**, 104:

վերնագրով՝ «Թուղթ առ ի Ներսիսէ եպիսկոպոսէ յեղբօրէ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց՝ Պատասխանի թղթոյն Գէորգեայ Արեւելեան եպիսկոպոսի, առաջնորդի սրբոյ ուխտին Հաղբատի՝ *Յաղագս հետազօտելոյ առ ի ստուգութիւն զպատմութիւնս երանելւոյ նահատակին Սարգսի»*[18]*:*

[18] Սոփերք Հայկականք, ԺՋ., 1854, էջ 4, այս երկը՝ **Պ. Պետերսը** (Paul Peeters, La Passion arméniènne de S. Serge le Stratelate.- «Յուշարձան», էջ 186), թվագրում է 1158 թ., բայց դա սխալ է՝ 1158 թ. ասորերենից հայերեն է թարգմանվել Սարգսի «Նահատակությունը» (տե՛ս Սոփերք Հայկականք, ԺՋ., 53, **Մ. Աւգերեան**, Լիակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց, Բ., Վնտ., 1881, էջ 48, հմմտ., **Л. Меликсет-Беков**, Грузинский извод сказания о посте «араджавор».- ХВ, VI, 99-100), բայց այս «մեկնությունը» պետք է կատարված լինի 1081-1184/1185 թվականներին:

ԳԼՈՒԽ Բ.

ԳՐԻԳՈՐ ՏՈՒՏԵՈՐԴԻ ԿԱՄ ՏՈՒՏԱՅԻ (ՏՈՒՏԵԻ) ՈՐԴԻ

Գրիգոր Տուտեորդին կամ Տուտեի, նաև՝ Տուտայի որդի (Գրիգոր Տուտեորդի, նաև՝ Գրիգոր, որդի Տուտեայ), Սանահնի վանահայրն էր:

Գրիգորի մասին թռուցիկ խոսում է Կիրակոս Գանձակեցին, *երբ նշում է, անեցիների՝ Սանահնում թաղված Դիոսկորոսի մասունքները «...յաւուրս իշխանութեանն Զաքարէի և առաջնորդութեան Սանահնին Գրիգոր վարդապետին՝ որդւոյն Տուտայ» գողանալու և գաղտնի Անի տանելու մասին: Այդ առթիվ Գրիգորին հիշատակում է որպես «այր երևելի», որը դեմ էր այդ քայլը կատարելուն*[1]*:*

Մոտավորապես 1205 թ. Լոռում հրավիրված ժողովի մասնակիցների մասին խոսելիս Կիրակոսը, ի միջի այլոց, հիշատակում է «Յովհաննէս, հայր Սանահնին, որ էր զկնի մահուան վարդապետին Գրիգորոյ, զոր Տուտայ որդին կոչէին»[2]*:*

Այսպես ուրեմն՝ 1205 թ. Գրիգոր Տուտեորդին արդեն վախճանված էր:

Ներսես Լամբրոնացու կողմից Լևոն արքային հղված թղթում, հիշատակված են ժամանակի առաջնորդները՝ «և որ անդ Տուտեորդին *և Քոբայրեցին և այլքն իւրեանց տեսողք»*[3]*:*

Գրիգոր Տուտեորդու նամակի՝ Գրիգոր Տղայի պատասխանում, ի միջի այլոց, հանդիպում ենք առաջինի հեգնական բնութագրությանը՝ «սուտ է որդին որոտման, և իրաւ է որդին Տուտեայ*»*[4]*: Այս պատասխան թղթում հատկապես Տուտեորդու անունը հիշատակվում է բազմիցս*[5]*:*

[1] **Կիրակոս**, 84-85:

[2] **Նույն տեղում**, 162.

[3] Ներսիսի Լամբրոնացւոյ Ատենաբանութիւնն և թուղթ և ճառք, 233:

[4] Նամականի, 21: Հմմտ. Ավետարան Մարկոսի Գ. 16-17. «Եւ եդ անուն Սիմովնի՝ Պետրոս. եւ Յակովբու Զեբեդեայ՝ եւ Յովհաննու եղբաւրն Յակովբայ՝ եդ նոցա անուանս բաներեգէս, որ է՝ որդիք որոտման»:

[5] Ներսիսի Լամբրոնացւոյ. եւն., 223, 227, 243 և հջրդ.:

Գրիգոր Տուտեորդու անունը հիշատակվում է Սանահնի 1173, 1184 և 1197 թվականների արձանագրություններում: Այսպես՝ 1173 թվականի արձանագրությունում ասված է. «առաջնորդ էր Տուտէորդի Գրիգոր եպիսկոպոսն»[6], 1184 թ. արձանագրությունում՝ «ես Գրիգոր վարդապետ՝ որդի Տուտէ, Խաչենացի»[7], 1197 թ. արձանագրությունում՝ «ես Գրիգոր վարդապետ՝ որդի Տուտայ»[8]: Հառիճի (Ղփչաղի) 1196 թ. արձանագրությունում ևս ասված է՝ «ես Գրիգոր վարդապետս՝ որդի Տուտայ»[9]:

Հատկապես հետաքրքիր է 633=1184 թ. արձանագրությունը, որը փորագրված է, այսպես կոչված, Համբարձման եկեղեցու ձախ մասում կամ հյուսիսային կողմում գտնվող՝ Գրիգորի գերեզմանի խաչքարի verzo-ին (նույն քարի recto-ն տե՛ս նկար Հ՝ր 5), որտեղ, ի դեպ, ասված է. «Այս տարի, երբ վախճանվեց վրացիների արքա Գիորգին, ես՝ Գրիգոր վարդապետս՝ Տուտեի որդի Խաչենցիս, կանգնեցրի այս խաչը իմ գերեզմանի համար... Հովհաննեսի վանահայրության ժամանակ» ևլն:

Իսկ արձանագրությունը, որը հրապարակվել է բազմիցս, մենք կարդում ենք այսպես (17 տողանոց)[10].

«Յամի, յորում եղև կատարո/ւմն արքային Վրաց Գիորգէ[11], ես՝ / Գրիգոր վարդապետ որդի Տուտէ / Խաչենացի[12] որ բնակեալ ընդ հով/անեաւ սրբո Ա[ստուա]ծածնիս, կանգնեցի զ/խաչս ի վերա հանգստարանի իմո, / ակն ունելով՝ ելից կենցաղոյս: / Եւ արդ, անկեալ դնիմ առ ոտս քո՝ / նչանդ Ա[ստուծո]յ, եւ աղաչեմ անբարբ/առ չրթամբք, զի ի մեծի երեւման / Քո լիցիս բարեխաւս անարժան ծ/առայիս Ք[րիստոս]ի: Եւ որք երկրպագէք, յի/շեցէք ի Ք[րիստո]ս Յ[իսու]ս: Կանգնեցաւ ի / հայրութեանս[13] Յովհաննէսի, յո/րում ամի նորոգեցաւ կաթո/ղիկէս ս[ուր]բ ի թու[ին] ՈԼԳ.[14]: Զմխիթար / կազմիչ յիշեսջիք ի Ք[րիստո]ս. ամեն»:

---

6 **Ջալալեանց**, Ա., 30 = **Կոստանեանց**, 35. հմմտ. վերը՝ այս գրքի առաջին մասի Գլ. Դ., ծնթ.26:

7 **Ջալալեանց**, Ա., 27 = **Լալայեան**, 391 = **Կոստանեանց**, 35:

8 **Ջալալեանց**, Ա., 26 = **Յովհ. Դրիմեցի**, 53 = **Կոստանեանց**, 39:

9 **Աբէլ Մխիթարեան**, Պատմութիւն մենաստանին Հառիճոյ, Տփղ., 1856, էջ 82-83, **Շահխաթունեանց**, Բ., էջ 268-269 (§ 568) = **Ալիշան**, Շիրակ, 158-159:

10 **Ջալալեանց**, Ա., 27 = **Լալայեան**, 391 = **Կոստանեանց**, 35:

11 Ըստ **Ջալալեանցի** և **Լալայեանի**՝ Գուրգէնի (sic) :

12 Ըստ **Ջալալեանցի** և **Լալայեանի**՝ Խաչենցի:

13 Ըստ **Ջալալեանցի** և **Լալայեանի**՝ հայրապետության (sic):

14 **Լալայանը** սխալմամբ կարդում է ՈԼԴ. 634 = 1185, մինչդեռ պետք է լինի՝ ՈԼԳ. 633 = 1184:



Նկար 5. Գրիգոր Տուտեորդու գերեզմանին կանգնեցրած հուշարձան-խաչքարը Սանահնում *(վրացերեն հրատարակությունից՝ էջ 184)*



Հուշարձան-խաչքարը մեր օրերում (2006 թ.)

Ուրեմն՝ դեռևս իր կենդանության օրոք Գրիգորը պատրաստել է տվել իր գերեզմանաքարը՝ համապատասխան փորագրությամբ:

Ինչպես այս վերջինը՝ գրված 1184 թ., այնպես էլ վերոհիշյալ՝ 1173, 1196 և 1197 թթ. արձանագրությունները, 1184-1185 թ. Գրիգոր Տղային հղված թղթի կապակցությամբ, մեզ հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ Գրիգոր Տուտեորդին կամ Տուտեի (Տուտայի) որդին՝ 1) ծագումով խաչենցի էր, 2) 1173 թ. ունեցել է եպիսկոպոսի աստիճան և եղել է Սանահնի վանահայրը, բայց ինչ պաշտոն է ունեցել 1184 թվականին, պարզ չէ, (քանզի ինչպես այդ տարվա գրությունում, այնպես էլ Գրիգոր Տղային հղված թղթում որպես վանա(հայր) հիշատակվում է Հովհաննեսը), 3) 1197 թ. նա դեռևս ողջ է եղել, և վախճանված պետք է լինի 1197-1205 թվականների միջև:

Այսպիսով՝ փոք-ինչ անհասկանալի է Ա. Ջամինյանի միտքը, իբրև թե Գրիգոր Տուտեորդին պետք է վախճանված լինի ԺԳ. դարի առաջին քառորդում[15]*: Նմանապես անհասկանալի է Մ. Օրմանյանի կարծիքը, քանզի գրում է, թե Գրիգորի մահվան թվականը համընկնում է Մխիթար Գոշի մահվան թվականին, այսինքն՝ մոտ 1213 թ.*[16]*, բայց սրա պատճառն այն է, որ վերջինիս դատողությունը բխում է այնպիսի սխալ դրույթից*[17]*, ինչպիսին է Գրիգոր Տուտեորդու նույնականացումը «Գրիգորէս եպիսկոպոս Հաղբատայ»-ի հետ, որը Զաքարիա [ամիր]սպասալարին ընդդիմադիր լինելու պատճառով վտարվեց. նա ստիպված էր թողնել Հաղբատի վանքը:* Կիրակոս Գանձակեցու *հաղորդմամբ՝ գնաց «ի վանքն Գետիկ, առ մեծ վարդապետն Մխիթար»*[18]*:*

Ինչ վերաբերում է Տուտեորդու ծննդյան թվականին՝ այն անորոշ է: Սոսկ համաձայն այն իրողության, որ Գրիգոր Տղայի՝ Գրիգոր Տուտեորդուն հղված թղթում նա հիշատակվում է որպես «ծերունի հայր»[19]*, պետք է ենթադրել, որ նա ծնված պետք է լինի ԺԲ. դարի առաջին կամ երկրորդ քառորդում:*

---

[15] **Աբր. Ջամ[ինեան]**, Պատմութիւն հայ գրականութեան, 175:

[16] **Օրմանեան**, Ազգապատում, էջ 1578-1579 (§ 1085):

[17] **Նույն տեղում**, հմմտ. **Ա. Ջամինեան**, նշ. աշխ., 227:

[18] **Կիրակոս**, 163:

[19] **Արշակ Տէր-Միքելեան**, Միջին դարերի կաթուղիկոսների ծգտումները, 42, 43, 44, 45:

1197 թ. գրութիւնը մասնաւորապես հետաքրքիր է այնքանով, որ նրանում Գրիգորի կողմից Սանահնին ընծայված իրերի մեջ հիշատակվում է 8 գիրք «Ը. գիրք»[20]*:*

* * *

Գրիգոր Տուտեորդին գիտական-գրական ասպարեզում հայտնի է իր նամակագրութիւնով Հայոց՝ Տղա կոչված Գրիգոր կաթողիկոսի հետ (Կիլիկիա): Մեզ են հասել Գրիգոր Տուտեորդուն Գրիգոր Տղայի կողմից ուղարկված երեք թուղթ և Տուտեորդու մեկ թուղթը՝ առ Գրիգոր Տղան:

Գրիգոր Տղայի թղթերի վերնագրերն են՝

1. «Հարցումն խրատուց, զոր խնդրեալ է կաթուղիկոսն Հայոց Գրիգոր Տղայն կոչեցեալ ի մեծապատիւ վարդապետէն Գրիգորէ որդո Տուտեայ՝ վասն ամբաստանութեան կաթողիկոսին Ադուանից տեառն Ստեփաննոսի, զոր գրեալ էին առ նա եպիսկոպոսքն Ադուանից, և վասն Հոռոմոց՝ որ յափշտակեցին զեկեղեցիան Հայոց, որ յաբևմուտս էին՝ յաշխարհն Հոռոմոց[21]*»:*

2. «Գիր ողջունի և հարցումն խրատու տեառն Գրիգորի Հայոց կաթուղիկոսի՝ Տղայն կոչեցելոյ, առ մեծապատիւ վարդապետն Գրիգոր՝ որդի Տուտեայ, խնդրելով ի նմանէ բան պատասխանի թղթին <ձեռ.՝ «պատասխանոյ թխտին»՝ այսպես> Հոռոմոց, որ էր գրեալ առ նա՝ ցուցանել նոցա գրով զկարգս եկեղեցական՝ զխոստովանութիւն հաւատոց մերոց»[22]*:*

3. «Պատասխանի թղթոյն վարդապետին Գրիգորի Տուտէորդւոյն կոչեցելոյ ի մայրավանսն Հաղբատայ[23] *գրեալ ի տէր Գրիգոր կաթողիկոսէ Հայոց, յեղբօրորդւոյ սրբոց կաթողիկոսացն Գրիգորիսի և Ներսեսի, որ մականունութեամբ Տղայ անուանի»*[24]*:*

Առաջին երկու նամակները հենց ինքը՝ Գրիգոր Տղան է ձեռնարկել, և Տուտեորդու պատասխանը նրանց՝ չի երևում: Երրորդ նամակը, ինչպես վերնագիրն է հուշում, Տուտեորդու նամակի պատասխանն է, բայց, ցավոք, առայժմ ոչ էլ Տուտեորդու նամակն է հայտնաբերվել:

---

[20] **Ջալալեանց**, Ա., 16 = **Յովհ. Դրիմեցի**, 53 = **Կոստանեանց**, 39:

[21] **Արշակ Տէր-Միքելեան**, Նշ. աշխ., 42 և հջրդ.:

[22] **Նույն տեղում**, 49 և հջրդ.:

[23] Տե՛ս վերը՝ այս գրքի առաջին մասի Գլ.Ե., ծնթ. 7 և երկրորդ մասի Գլ. Բ, ծնթ. 7-12: Հմմտ. **Օրմանեան**, Ազգապատում, էջ 1480 (§ 1018):

[24] Նամականի, 5 և հջրդ.:

Տուտեորդու թղթերից մեզ է հասել միայն մեկը՝ անվերնագիր[25]*, այստեղ էլ Տղայի պատասխանը չի երևում: Թե՛ այս, թե՛ Գրիգոր Տղայի թղթերը, չափազանց հետաքրքիր են Տուտեորդու գիտական-գրական գործունեությունը բնութագրելու համար:*

Այն փաստը, որ Հայոց եկեղեցու պետը՝ Տղա կոչված Գրիգոր կաթողիկոսը, հեռավոր Կիլիկիայից խորհրդի համար դիմում է, իր խոսքերով՝ «մեծապես պատվարժան» Սանահնի (և ոչ թե Հաղբատի, ինչպես ընթերցվում է համատեքստում) վարդապետ Գրիգոր Տուտեորդուն, մի կողմից՝ այնպիսի կարևոր հարցերով, ինչպիսիք են Աղվանքի Ստեփանոս կաթողիկոսի անհնազանդությունը և Հայոց եկեղեցիների ավերումը «արևմուտքում», այսինքն՝ հոռոմների (հույների) երկրում, մյուս կողմից՝ խնդրում նրան, որ գրավոր բացատրի նրանց (հոռոմներին) «եկեղեցու կանոնները, Հայոց եկեղեցու դավանանքը», բավական է հաստատել այն դրույթը, որ Գրիգոր Տուտեորդին եղել է ժամանակի ամենաակնառու և անզուգական գիտնականը, ինչպես նաև հակաքաղկեդոնականության ջատագովը:

Ի միջի այլոց, երկրորդ թուղթը, ըստ Արշակ Տեր-Միքելյանի՝ «Մի հրաշալի ապացոյց է, թէ ինչպէս Հայոց կաթողիկոսները հրապարակ էին կանչում իրենց վարդապետներին՝ գինակից լինելու ի պաշտպանութիւն Հայաստանեայց եկեղեցու: Նա, մերժելով օտար եկեղեցու վարդապետների խօսքերը, պահանջում է Հայոց եկեղեցու ս. Հայրերի գրութիւններով միայն պաշտպանել Հայոց դաւանանքը. սակայն լաւ գիտենալով, որ Հիւսիսային Հայոց վանքերը հարուստ էին հին գրչագրերով, դիմում է առ Տուտէորդին և նորանից վկայութիւններ խնդրում»[26]*:*

Ինչ վերաբերում է Գրիգոր Տուտեորդու թղթերին, ապա դրանք միանգամայն բնորոշ են ժամանակի Հայոց եկեղեցականների մտածելակերպին, որն ուղղված էր միայն և միայն նախնիների ավանդույթների պաշտպանությանը՝ ընդդեմ լատինասիրության, ինչը քաղկեդոնականության դեմ պայքարի նոր էտապներից մեկն էր:

Հեղինակն օգտվել է հայ և օտար հետևյալ հեղինակներից՝ 1) Մեսրոպ, Հովհաննես Իմաստասեր [Օձնեցի], «Անանիա մերազգի», Գրիգոր Լուսավորիչ, 2) Աթանաս Մեծ, Գրիգոր Սքանչելագործ, Պրոկղ, Երինեոս, Եփրեմ [Ասորի], Թեոդորիտես Անկյուրացի,

---

[25] **Արշակ Տէր-Միքելեան**, Նշ. աշխ., 59 և հջրդ.:

[26] **Նույն տեղում**, 57.

Գրիգոր Աստվածաբան, Կյուրեղ Երուսաղեմցի, Տիմոթեոս [Կո՞ւզ], Հովհան Ոսկեբերան, Դիոնիսիոս [Արիոպագացի]: Սրանցից բացի, նա օգտվել է նաև հետևյալ հեղինակների գործերից՝ 1) Վարդանի, Գրիգոր Նահատակ[ասեր]ի, [Գրիգոր նույնը՝ Գևորգ] Մեղրիկի, Կիրակոս Դրազարկեցու (՞), [Հովհաննես] Կոզեռնի, և 2) Դիոսկորոսի, Պետրոս Ուրացողի (Մկածրվեցու) և ուրիշների:

Բոլոր այս անձերից ուշադրության արժանի է հատկապես «Անանիա մերազգի»-նը, ով, թերևս, Անանիա Սանահնեցին է:

Հայ-վրացական հարաբերությունների վերաբերյալ Գրիգոր Տուտեորդու նամակը ոչինչ չի տալիս. նրանում խոսք անգամ չի ասվում վրացիների մասին, եթե հաշվի չառնենք, երբ հեղինակը հայերի, հրեաների և պարսիկների հետ կապված հիշատակում է նաև նրանց՝ «ընդ ո՞ւմ՝ ընդ Հայո՞ց, ընդ Վի՞րս, ընդ Եբրայեցի՞ս, թէ ընդ Պարսի՞կս»[27]:

Գրիգոր Տուտեորդին գրագրություն է ունեցել նաև Ներսես Լամբրոնացու հետ: Այս մասին մեզ հուշում է Ներսեսի պատասխանը. «Տեառն Ներսիսի Լամբրօնացւոյ եւ արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկ[ի]ոյ՝ Պատասխանի թղթոյն վարդապետին Տուտէորդւոյ և նորին նմանեաց Զորագետացւոցն և Հաղբատացւոցն»[28]: Թեև իր՝ Տուտեորդու նամակը, ցավոք, չի պահպանվել:

Վերջում անհրաժեշտ է նշել, որ Ներսես Լամբրոնացու՝ Կիլիկիայի Լևոն Թագավորին հղված թղթում կա մի հատված, որտեղ ձորագետցիներին բնութագրում է որպես «ախմար և անկարք և յիմար բանից չաղակրատողք»[29], իսկ Գրիգոր Տուտեորդուն և Դավիթ Քոբայրեցուն նույն հեղինակը բնորոշում է հետևյալ խոսքերով. «եւ ի Զորոյգետ գերկուց արանց, որք իբրև զշուն լիրբս հաջեն...»[30]:

[27] **Նույն տեղում**, 66.

[28] Տե՛ս վերը՝ այս գրքի առաջին մասի Գլ. Ա., ծ. 11-13:

[29] Ներսիսի Լամբրոնացւոյ. ևլն., 208-209, 223-224:

[30] **Նույն տեղում**, 232:

ԳԼՈՒԽ Գ.

ՎԱՐԴԱՆ ՀԱՂԲԱՏԵՑԻ ԵՎ ԴԱՎԻԹ-ՔՈԲԱՅՐԵՑԻ. ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԴԱՆԸ

«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների»՝ Գրիգոր Տղայինն 1184-1185 թվականներին գրված թղթում, Եփրեմ Ասորու «Ճառք եւ Մեկնութիւն համաբարբառ Աւետարանաց» աշխատության հայերեն տարբերակի 1195 թ. ձեռագրի հիշատակարանում և մոտավորապես 1205 թ. Լոռում հրավիրված եկեղեցական ժողովի մասնակիցների ցուցակում, ինչպես ցույց ենք տվել վերը, միասին հիշատակվում են Վարդանը և Դավիթ Քոբայրեցին, երկուսն էլ Հաղբատից:

Նրանցից մեկը՝ Վարդան Հաղբատեցին, 1195 թ. հիշատակարանում ներկայացված է «նորերս վախճանված»: Ահա ինչու, մոտավորապես 1205 թ. Լոռու ժողովի մասնակիցների ցուցակի Վարդանը ուրիշ Վարդան Հաղբատեցի պետք է եղած լինի, իսկ այս Վարդանին կարելի է համարել ԺԲ. դարի գործիչ, մահվան տարին՝ որպես terminus ad quem (սահման առ որ) 1194-1195 թ.[1]:

ԺԲ-ԺԳ. դարերի ընթացքում մի քանի Վարդանի գոյության բացահայտումը չափազանց բարդ խնդիր է, ինչը մեկ անգամ չէ, որ առաջադրվել է գիտական գրականության մեջ[2]: Այս խնդիրը դեռևս լուծում չի ունեցել:

Հաղբատի գերեզմաններից մեկի արձանագրությունը, որ կարդացել է Հովհաննես Ղրիմեցին, և որը, ինչպես երևում է, նրանից հետո ոչ ոք չի տեսել, ունի հետևյալ բովանդակությունը. «Թուին ՈԻ., ամ Վարդան»[3]՝ «620 <=1171>, Վարդան»: Եթե վստահենք Ղրիմեցու

[1] **Ն. Ակինյանը** (Մատ. հետազ., 73) նրա մահը թվագրում է 1191-1194 թվականներով:

[2] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վնտ., 1862, յառաջաբան, էջ Ա-ԺԱ., **H. Марр**, Сборники притч Вардана. Материалы для среневековой армянской литературы, т. I, СПб., 1899, стр, 283-286, **Գարեգին Յովսեփեան**, Ձագավանից ժողովը.- «Շողակաթ», Ա., էջ 29-33, Կնիք հաւատոյ, էջ CX-CXVI; **Ն. Ակինեան**, Մատ. հետազ., 68-77:

[3] **Յովհ. Ղրիմեցի**, 40: Այս արձանագրությունը չեն հիշատակում **Ջալալյանցը, Երզնկյանը, Լալայանը, Կոստանյանցը**: Մենք նույնպես այն տեղում չգտանք:

տեղեկութեան, կստացվի, որ Վարդանը վախճանվել է 1171 թվականին: Եթե այդպես է, պետք է ենթադրել, որ սա նույնպես ուրիշ Վարդան է և ոչ այն Վարդանը, ով 1195 թ. հիշատակվում է որպես «նորերս վախճանված»: Բայց Ն. Ակինյանի կարծիքով՝ հնարավոր է, որ այս արձանագրության մեջ տասնավոր արտահայտող Ի.՝ 20 թվի փոխարեն եղել է Խ.՝ 40[4]: Այս դեպքում արձանագրությունը կկարդացվեր՝ «Թուին Ոխ., Վարդան»՝ «640 <=1191> թ., Վարդան»: Այս տարեթիվը կմոտենար Վարդան Հաղբատեցու մահվան terminus ad quem 1194-1195 թվականին:

Կարապետ Տեր-Մկրտչյանը նշում[5] է, որ Հաղբատ-Սանահնի խմբակում ԺԱ-ԺԳ. դարերի սահմանագծում մի քանի Վարդան է եղել, որոնցից մեկը Սանահնի 1211 թվականի արձանագրության մեջ[6] հիշատակված է որպես Սանահնի առաջնորդ՝ «առաջնորդ սուրբ ուխտիս հայր Վարդան»: Այս Վարդանը, նույն հեղինակի կարծիքով, «կարող էր Լոռու ժողովին մասնակից եղած լինել»[7]:

Այսպիսով, մինչև 1195 թվականը վախճանված Վարդան Հաղբատեցին չէր կարող 1205 թ. Լոռում գումարված ժողովին մասնակից լինել. «Վարդան Լօռւոյ ժողովոյն ներկայ չէ գտնուած՝ արդեն վախճանած ըլլալով»[8], այսինքն՝ ԺԲ-ԺԳ. դարերի սահմանագծում հայտնի են եղել նվազագույնը երկու Վարդան Հաղբատեցի:

Ինչ վերաբերում է մինչև 1194-1195 թվականը իր մահկանացուն կնքած Վարդանի գիտագրական գործունեությանը, ապա այդ մասին որոշակի ոչինչ ասել հնարավոր չէ: Ն. Ակինյանը կարծում է, որ նա պետք է գրվածքներ ունենար, բայց «դժվարությունն կը ծագի յատկապէս այն հանգամանքէն, որ և իրմէ ոչ շատ վերջն, մանաւանդ թէ նոյն իսկ իրեն ժամանակ ծաղկեցան համանուն ուրիշ վարդապետներ ալ. Վարդան Այգեկցի, Վարդան Արեւելցի, որ եւ Մեծն Վարդան Բարձրաբերդցի»: Ահա թե ինչու, անհրաժեշտ է «որոշել Վարդան անուն կրող անթիւ երկասիրութեանց մէջէն իրեն գրածները»[9]:

Քանի որ այս հարցերը վճռված չեն, իսկ մենք հնարավորություն չունենք դա անելու, մեզ մնում է վկայել Վարդան Հաղբատեցու՝ հայ գրականության պատմության ասպարեզում տարբեր անձանց

4 **Ակինեան**, Մատ. հետազ., 74:

5 Կնիք հաւատոյ, էջ CX և հջրդ.:

6 **Ջալալեանց**, Ա., 24-25 = **Կոստանեանց**, 52:

7 Կնիք հաւատոյ, CXI:

8 **Ակինեան**, Մատ. հետազ., 72, ծնթ. 1, Կնիք հաւատոյ, CXI:

9 **Ակինեան**, նշ. աշխ., 75:

հեղինակած գրվածքները, ինչի մասին խոսում է Ներսես Շնորհալու «Բարձրացուցէք»-ի հիշատակարանի հետևյալ տողը՝ «ի խնդրոյ Վարդան վարդապետի, որ կայ ի Հաղբատ ի դամբանի»[10]:

Առայժմ բավարարվում ենք այսքանով և չենք շարունակում փնտրտուքը, թե հատկապես որ Վարդանն է վախճանվել 1191 թ. մինչև 1194-1195 թվականը (ըստ Ն. Ակինյանի՝ 1191-1194), թե ով է ողջ եղել մոտավորապես մինչև 1205 թվականը, ինչպես ենթադրում է Ժէ. դարի գրող Դավիթ Բաղիշեցին, երբ հիշատակում է սաղմոսների մեկնիչ Վարդան Հաղբատեցուն՝ «Վարդան վարդապետ Հաղբատեցի, որ մեկնեաց զսաղմոսն»[11] կամ Թովմաս Վանանդեցին, ով Հաղբատում հուղարկավորվածների շարքում նշում է «Վարդան մեկնիչն քաջաբան»[12]:

***

Դավիթ Քոբայրեցուն, չգիտես ինչու, Ն. Ակինյանը համարում է Դավիթ Հաղբատեցու աշակերտը: «Դաւիթ Քոբայրեցին իւր <Վարդանի> աշակերտն էր», «Դաւիթ կ՛աշակերտի հոս <ի Հաղբատ> ատ ոտս Վարդանայ և Պետրոսի», կամ «Վարդան Հաղբատացին և իւր աշակերտն Դաւիթ Քոբայրեցին»[13],- ասում է առանց հիմնավորելու, եթե ոչ երկուսի հանդեպ, ամեն դեպքում՝ Վարդանի հանդեպ համոզված:

Եվ, իսկապես, ոչ մի տեղ չի արձանագրվել, որ Դավիթը եղել է Վարդանի աշակերտը, սակայն չէ՞ որ նա եղել է Պետրոսի աշակերտը՝ ինչը ոչ մի կասկած չի հարուցում, քանի որ Եսայու «Մարգարեութեան» Հովհան Ոսկեբերանի մեկնության հայերեն տարբերակի նախաբանում նա հիշատակված է իբրև «Դաւիթ ոմն վարդապետ յերկոտասաներորդ դարու, որ ի յորդորանաց Պետրոսի վարդապետի իւրոյ գրեաց գծաղկաքաղ մեկնութիւն իւր Եսայայ»[14]: Այս տեղեկության համաձայն՝ Վարդանը պետք է մահացած լիներ ոչ ուշ, քան 1194-1195 թվականները (կամ 1191-1194 թվականների ժամանակամիջոցում), իսկ Դավիթը մոտավորապես 1205 թվականին

10 **Ակինեան**, նշ. աշխ., 83-84, հմմտ., 70-71, հմմտ., **Աղանեանց**, Հնից-նորից, 14:

11 **Գիւտ Աղանեանց**, Դիւան հայոց պատմութեան, ժ., էջ 42:

12 Տե՛ս վերը՝ այս գրքի առաջին մասի Գլ. Ջ., ծնթ. 33. առհասարակ Վարդանի մասին տե՛ս **Ակինյան**, նշ. աշխ., 63-77:

13 **Ակինյան**, նշ. աշխ., 68, 45, 59:

14 Երանելւոյն **Յովհաննու Ոսկեբերանի** Մեկնութիւն Եսայեայ մարգարէի, Վնտ., 1880, էջ ԺԵ., հմմտ., Ա., **Ղազիկեան**, Հայկական նոր մատենագիտութիւն, Բ., 104, **Ակինեան**, նշ. աշխ., 50:

կենդանի է եղել: Ուրեմն՝ կարող ենք հանգել եզրակացութեան, որ ժամանակագրորեն Դավիթը հաջորդում է Վարդանին, և ոչ թե հակառակը, ճիշտ այնպես, ինչպես նույն այս Դավիթը՝ իր վարդապետին կամ էլ վարդապետներից Պետրոսին:

Ն. Ակինյանն *անդրադառնում է Դավթի մականվանը և նշում բոլոր այն ձևերը, որոնց նա հանդիպում է հայ գրականութեան մեջ՝ Կիրակոս Գանձակեցի՝ Քոբայրեցի, Ներսես Լամբրոնացի՝ Քոբայրեցի և Գրիգոր Աբբասատրդի՝ Քոբերեցի*[15]*: Այս մականունը ըստ* Ն. Ակինյանի՝ *«որ անշուշտ կ՛ուզէ նշանակել, թէ Դաւիթ իւր միանձնական կենաց սկիզբն ըրած է Զորագետոյ ափանց վրայ՝ Այգեհատ գիւղի կից* Քոբայր (Քոբար) *կամ վրացերէն* Քոբեր *ԺԲ. դարու անուանի գեղեցկագիր մենաստանն»*[16]*: «Եզա՞ծ է հայրենիքն ալ այս կողմերն, կը լռեն այս մասին աղբերք, ինչպես նաեւ թէ ո՛րչափ ժամանակ կրօնաւորած է հոս Դաւիթ... ԺԳ. դարու վերջերն անցած կ՛երեւայ Քոբայրէն ոչ շատ հեռու, բայց աւելի մեծ եւ հռչակաւոր, նոյնպէս Զորագետոյ ափանց վրայ տարածուող «մայրավանքն» Հաղբատ: Շարժառիթն, որով հեռացաւ նա Քոբայրէն ծանօթ չէ, բայց անտեղի չէ կարծել թէ հրապուրուած Հաղբատայ «մայրաքաղաք»ի անունէն, որ կենդրոնն էր ԺԲ. դարու հիւսիսային Հայաստանի հոգեւոր եւ մտաւոր բարգաւաճման և հանդստարանն Յովհաննես Սարկաւագ վարդապետի ոսկերաց»*[17]*:*

Քոբայրը (Քոբար), Քոբեր, ինչպես արդեն պարզել ենք[18]*, ԺԲ. դարում մայրավանք էր, ուստի տարօրինակ է Ն. Ակինյանի կարծիքը, թե, իբր, Դավիթն այստեղ է անցկացրել իր ճգնավորական կյանքի սկիզբը, այդ պատճառով է ընտրել Քոբայրեցի անունը: Դրանից բացի, Դավիթը կոչվել է նաև Հաղբատեցի: Պետք է ենթադրել, որ Դավիթը Քոբայրեցի է կոչվել ոչ թե վանքի պատճառով, այլ այն գյուղի անունով, որտեղ ծնվել է. Քոբեր գյուղատեղին այժմ էլ հայտնի է նույն անունը կրող երկաթուղային կայարանով:*

Դավթի ինչպես ծննդյան, այնպես էլ մահվան թվականներն անհայտ են: Գիտենք՝ նա մահկանացուն կնքել է Լոռու ժողովից առաջ: Ուրեմն՝ 1205 թվականը համոզված կարելի է ընդունել իբրև նրա մահվան terminus ad guem թվական: Թաղված է Հաղբատի դամբարանում (տե՛ս նկ. Հ՝ր 2, և նրա գերեզմանաքարի վրա երկաթագիր տառերով խառն վորագրված է՝

[15] **Ակինյան**, նշ. աշխ., 44:
[16] **Նույն տեղում**, 44.
[17] **Նույն տեղում**, 44-45.
[18] **Լևոն Մելիքսեթ-Բեկ**, Քոբեր, 60-61:

«ՀԱՒՐ ՄԵՐՈ ՀՈԳԵՒՈՐԻ /
ԴԱՒԹԱ Վ[Ա]ՐԴ[ԱՊԵՏ]Ի ՔՈԲԱՅՐԵՑՈ Է ՏԱՊԱՆՍ.
ՅԻՇԵԱ Ի Տ[Է]Ր / Ս[ՈՒՐ]ԲՍ»[19]*:*

* * *

Դավիթ Քոբայրեցու գիտագրական գործունեության բնութագրությունը մեծ դժվարություն ունի, քանզի նրան վերագրվող բազմաթիվ երկերից մի երկուսն են Դավիթ Քոբայրեցու անունով հայտնի, մյուսները պատկանում են Դավիթ վարդապետին կամ Դավիթ քահանային[20]*, որոնց նույնությունը Դավիթ Քոբայրեցու հետ դեռևս պարզված չէ:*

Ն. Ակինյանը *Դավիթ Քոբայրեցուն վերագրում է հետևյալ աշխատությունները՝ 1) Մեկնութիւն Յոբայ Գրոց, 2) Եսայեայ մեկնութիւն, 3) Ի բանն Մաղաքեայ, 4) Թելադրութիւն յաւետարանն Մատթէի՝ ի պէտս աստենաբանութեան, 5) Ի սքանչելի վկայն Քրիստոսի Յովսէփ պատանի, որ յԱյրարատայ նահանգէն, ներբողեան գովեստի, 6) Լուծմունք և պատճառք Գրիգոր Աստուածաբանի ճառից, 7) Գրիգոր Նիւսացւոյ ճառից պատճառները, 8) Բարսղի կեսարացւոյ գրութեանց պատճառք, 9) Փիլոնի գրութեանց պատճառք, 10) Պատճառք Սահմանաց գրոց, 11) Պատճառք աւագ բարեկենդանին, 12) Պատճառք նաւակատեաց եկեղեցւոյ, 13) Ներբողեան ի սուրբ խաչն Քրիստոսի, 14) Որքանութիւն թուոյն նահապետաց և առաջնորդացն Իսրայելի յԱբրահամէ մինչև ի վերջին գերութիւնն Երուսաղէմի*[21]*:*

Այդ աշխատանքներից մի քանիսը, թեկուզ 10-րդը, հիշեցնում են անունով հայտնի երկերը, ուստի, բնականաբար, կասկած է ծագում՝ դրանք Դավիթ Անհաղթի՞ն են պատկանում, ոմն Դավիթ վարդապետի՞, թե՞ մեկ ուրիշ Դավիթ քահանայի: Ահա ինչու, Ն. Ակինյանի ներկայացրած ցուցակին մեծ զգուշությամբ պիտի վերաբերվենք:

Անշամբ մենք Դավիթ Քոբայրեցուն ենք վերագրում այն երկերը, որոնք ճշտիվ Դավիթ Քոբայրեցու *անունն են կրում:*

1) «Մեկնութիւն Յոբայ Գրոց». այս թեմայով հայ գրականութեան մեջ եղել է մի քանի երկ, դրանց թվում՝ Իսիքիոսին[22] *և Դավ-*

[19] **Մինաս Բժշկեանց**, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 80 (§ 126) = **Յովհ. Դրիմեցի**, 40 = **Երզնկեան**, 54 = **Լալայեան**, 409 = **Ակինեան**, 48:
[20] **Ակինյան**, նշ. աշխ. 48:
[21] Նույն տեղում, 48-68, 82-83:
[22] **Քերովբէ Չրաքեան**, Իսիքիոսի երիցու Երուսաղէմացւոյն Մեկնութիւն Յոբայ, Վնտ., 1912:

թին (Քոբայրեցո՞ւն) պատկանող, որոնցից ԺԳ. դարում օգտվել է Յովհաննես Վանականը*: Վենետիկի Մխիթարյան միաբանությանը պատկանող մեկ ձեռագրում կա հետևյալ հիշատակարանը՝*

*«Կատարեցաւ Եւսիւքին, և այժմ Դաւիթ վարդապետին, որ Քո-*բայրեցի *կոչիւր»*[3]*:*

2) «Փիլոնի գրութեանց պատճառք» վերնագրի տակ նշված է, որ այն պատկանում է «Դաւթի վարդապետի Քոբերեցո*»*[23]*:*

3) «Որքանութիւն թուոցն նահապետացն և առաջնորդացն Իսրայէլի յԱբրահամէ մինչև ի վերջին գերութիւնն Երուսաղէմի. ժամանակ ունողութեան նոցա. հաւաքմունք ի Դաւթայ վարդապետէ Քոբայրեցի *կոչեցելոյ»*[24]*:*

Ի միջի այլոց, անորոշ է հեղինակը Եսայու «Մարգարեութիւն» ծաղկաքաղ-մեկնության, որի նախաբանում ասված է. «Դաւիթ ոմն վարդապետ յերկոտասաներորդ դարու... ի յորդորանաց Պետրոսի՝ վարդապետի իւրոյ՝ գրեաց զծաղկաքաղ մեկնութիւն իւր Եսայեայ»[25]*:*

Գ. Զարբհանալյանին *թվացել է, թե այս առաջաբանում հիշատակված «ոմն Դաւիթ վարդապետը» «Դավիթ վարդապետն է»*[26] *կամ «Դավիթ քահանան»*[27]*, իսկ* Ն. Ակինյանին՝ *Դավիթ Քոբայրեցին*[28]*:*

Վերջում պետք է նշել, որ Դավիթ Քոբայրեցին, Գրիգոր Տուտեորդու հետ միասին, կարող է համարվել այսպես կոչված «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» ղեկավարներից մեկը, ով պայքարեց Կիլիկիայի հայ կառավարող շրջանների և հոգևոր խմբերի՝ օտարասեր ուղղության դեմ: Հենց այդ պատճառով Դավիթը և Գրիգորը Ներսես Լամբրոնացու կողմից ենթարկվեցին այնպիսի ծաղրի, ինչպիսին է՝ «Ովքե՞ր են Զորոգետում՝ Տուտէորդի՞ն և Քոբայրեցի՞ն»[29]*, կամ թե՝ «եւ ի Զորոյգետ զերկուց արանց, որք իբրև զշունս լիրբս հաջեն»*[30]*:*

[23] **Ակինյան**, նշ. աշխ., 65, **Տաշեան**, Ցուցակ, 224:

[24] Համաձայն Սեբաստիայի հայերեն ձեռագրերի հավաքածուի Հմր 221-ի, որը նկարագրված է **Թորգոմ Գուշակյանի** կողմից, և դեռ անտիպ է, օգտվում ենք **Ն. Ակինյանի** տեղեկություններից (**Ակինեան**, նշ. աշխ., 83):

[25] Երանելւոյն **Յովհաննու Ոսկեբերանի** Մեկնութիւն Եսայեայ մարգարէի, Վնտ., 1880, էջ ԺԵ, **Ա. Ղազիկյան**, նշ. աշխ., Բ., 104, **Ակինյան**, նշ. աշխ., 50:

[26] **Գ. Զ[արբհանալյան]**, նշ. աշխ., 703:

[27] **Նույն տեղում**, 704.

[28] **Ակինյան**, նշ. աշխ., 50, սրան հակադրված է **Ք. Չրաքյան**, նշ. աշխ., ԼԸ-Խ., առհասարակ Դավթի մասին տե՛ս **Ակինյան**, նշ. աշխ., 44-68:

[29] **Ներսիսի Լամբրոնացւոյ** Ատենաբանութիւն. ևլն., 223:

[30] **Նույն տեղում**, 232.

ԳԼՈՒԽ Դ.

ԳՐԻԳՈՐ ՈՐԴԻ ԱԲԱՍԱՅ

Գրիգոր Աբասաորդին թեև վերոբերյալ ցուցակներից և ոչ մեկի մեջ չի հիշատակվում, բայց և այնպես անդրադառնում ենք նրան՝ իբրև ԺՌ-ԺԳ. դարերի աչքի ընկնող գործիչներից մեկի, որով, ցավոք, ընդհատվում են պատմագրական տեղեկությունները Հաղբատ-Սանահնի խմբակի մասին առհասարակ:

Եվ, իսկապես, 1184-1185 թվականներին կազմված ցուցակի երկրորդ տեղում հիշվում է Գրիգոր Սանահնեցին, բայց այս Գրիգորը, մեր համոզմամբ, Գրիգոր Տուտեորդին է, ոչ թե Գրիգոր Աբասաորդին, հետևյալ նկատառումներով. 1) Գրիգոր Տուտեորդին և Գրիգոր Աբասաորդին տարբեր ժամանակների գործիչներ են, թեև նրանք երկար ժամանակով չեն հեռու իրարից, 2) Գրիգոր Աբասաորդին հիշատակված չէ ո՛չ 1195, ո՛չ էլ 1205 թվականների ցուցակներում, մինչդեռ Գրիգոր Տուտեորդին, թեև վաճանված, այդուհանդերձ հիշվում է 1205 թ. ցուցակում, 3) Կիլիկիայի խմբակների դեմ սկիզբ առած վեճերում ընդհանրապես հիշատակվում է Գրիգոր Տուտեորդին, ոչ թե Գրիգոր Աբասաորդին, որոնցից առաջինը, ի դեպ, հայտնի է իբրև 1184-1185 թթ. թղթի գրելուն մասնակից, նմանապես անհատական ելույթով կիլիկեցիների դեմ, 4) Գրիգոր Աբասաորդու անունն առհասարակ կապված չէ այն բանավեճին, որ ԺԲ. դարում գոյություն ուներ Հաղբատ-սանահինցիների և կիլիկեցիների միջև: Բոլոր նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ համարեցինք նշել, որ 1184-1185 թթ. ցուցակում հիշատակվածը Գրիգոր «Տուտեորդին» է, ոչ թե Գրիգոր Աբասաորդին:

Գրիգոր Աբասաորդու անունը սերտորեն առնչվում է այն կապիտալ աշխատությանը, որը կոչվում է «Գիրք պատճառաց» - Liber causarum: Մինչև Ներսես Ակինյանի *հատուկ ուսումնասիրությունն հրատարակելը*[1]*, նրա ինքնությունը ամբողջովին մշուշապատ էր: Հովսեփ Գաթրճյանը կարծում է, որ այդ աշխատությունն, այն-*

[1] **Ն. Ակինեան**, Մատ. հետազ., էջ 1-43: Գրիգոր որդի Աբասայ, էջ 1-11, Պատճառաց Գիրք, էջ 11-43:

պես, ինչպես հասել է մեզ, անպայման պետք է գրված լինի 880 թվականից հետո[2]*: Հակոբոս Տաշյանը, նկատի ունենալով, որ «Գիրք պատճառացի» հեղինակը քաջածանոթ է Դիոնիսիոս Արիոպագացու կյանքի հայերեն տարբերակին, որը բժիշկ Հովհաննեսը Հունարենից թարգմանել է հայերեն 869//880 թ.,*[3] *եզրակացնում է, որ հիշյալ գիրք-ժողովածուն «իրականացվել է 869 կամ 880 թվականից հետո»*[4]*, թեև Տաշյանը միաժամանակ իրավացիորեն նշում է, որ Գրիգորի աշխատության մեջ «կան նաև կէտեր՝ որ աւելի ուշ ժամանակի մը կը վերաբերին»*[5]*: Մեսրոպ Տեր-Մովսեսյանը հնարավոր է համարում «Գրիգոր որդի Աբասայ» և եղբեստրոսի վարքի» հայերեն 678 թ. թարգմանության «Աբասուն*[6] *Գրիգորի Ջորափորեցւոյ»*[7] *նույնականացում: Նա այդ աշխատությունը գրելու terminus ad guem հայտարարում է թ. դարը.* «A IX век считаем последним сроком книги Григория по той причине, что, если бы жил позже, то пользовался бы сочинениями, написанными или переведенными позже IX века»[8]*,- այսպես էր գրում 1902 թ.: Իսկ 1904 թ. նա ասել է. «Գրիգոր Աբասաորդի* եպիսկոպոսի *<sic> ժամանակաշրջանը մեզ համար տարօրինակ է. եթե նա Հռոմի Սեղբեստրոս եպիսկոպոսի վարքի թարգմանիչն է, որին անվանում են նաև «Աբաս որդի Գրիգորի <sic> և եպիսկոպոս Ջորափորեցի», ուրեմն նա յոթերորդ-ութերորդ դարերի հեղինակ է, բնականաբար նույն ժամանակի է նաև իր իսկ կազմած «Գիրք պատճառացը»,- որտեղ գտնում ենք Հովհան Ոսկեբերանի Մեկնութեան առաջին բնագրից մի կտոր, իսկ եթե*

[2] **Յ. Գաթրճեան**, Սրբազան պատարագամատոյցք Հայոց, հանդերձ յաւելուածովք ի **Յ. Տաշեան**, Վն., 1897, էջ 178:

[3] Հմմտ. **Գ.** [**Զարբհանալեան**], Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեանց, 382:

[4] **Տաշեան**, Ցուցակ, 224:

[5] **Յ. Գաթրճեան**, նշ. աշխ., էջ 178, ծնթ. 1:

[6] Այս բառը **Հ. Օրբէլին** (**И. Орбели**, Две строительные надписи князей Камсараканов.- ХВ, III, 1914, стр. 305-306, прим. 4) ոչ թե որպես հատուկ անուն է ընդունում, այլ հասարակ՝ **աբբա, աբաս** նշանակությամբ: Հմմտ. **Մխիթարայ Գոշի** Դատաստանագրիք Հատանագրքի Ա. մասի 113-րդ հոդվածը (Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, էջ 269 և ծնթ. 588): Վրացական աղբյուրներում Աբբա-Ամբադ Ալավերդելի էր կոչվում:

[7] **Սոկրատայ Սքոլաստիկոսի** Եկեղեցական Պատմութիւն թարգմանեաց Փիլոն Տիրակացի և Պատմութիւն վարուց սրբոյն Սեղբեստրոսի եպիսկոպոսին Հռովմայ, թարգմանեալ Աբասուն Գրիգորի Ջորափորեցւոյ, հատոր Ա. և Բ., աշխատասիրութեամբ **Մեսրոպ Տէր-Մովսէսեանի**, Վաղ., 1897, էջ ԺԷ., ինչպես նաև վերնագիրը 690-691 էջերի միջև:

[8] **Месроп Тер-Мовсесян**, История перевода Библии на армянский язык, СПб., стр. 232.

նման մտայնությունը ճիշտ չէ, այդ դեպքում «Գիրք պատճառացի» գրության ժամանակը իններորդ դարից չի անցնում»[9]*:*

Մի խոսքով՝ ըստ Գաթրճյանի և Տաշյանի՝ Գրիգոր Աբասաորդին պետք է ապրած լինի Թ. դարի երկրորդ կեսից ոչ շուտ, գուցեև Ժ. դարում, իսկ Տեր-Մովսիսյանի ենթադրությամբ՝ Թ. դարից ոչ ուշ:

Միանգամայն իրավացի է Ներսես Ակինյանը, ով Գրիգոր Աբասաորդու ինքնությունը ճշտելու նպատակով դիմում է վիմագրական նյութերին, մասնավորապես՝ Սանահնի արձանագրություններին:

Ն. Ակինյանը նախ և առաջ ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ անցյալում (Ե-Ը. դդ.) հայտնի հայրերից և մատենագիրներից բացի «Գիրք պատճառաց»-ում օգտագործված են «Դավիթ վարդապետի» կամ «Դավիթ վարդապետ Քոբայրեցու» անունով մեզ հասած հորդորները և նրանից ավելի ուշ՝ Մխիթար Գոշի գրվածքները[10]*: Քանի որ Մխիթար Գոշը վախճանվել է 1213 թ., ապա այս հանգամանքը թույլ է տալիս ասելու, որ «Գիրք պատճառացի» հեղինակը ապրել և ստեղծագործել է այդ թվականից հետո կամ ոչ ավելի վաղ, քան հիշյալ թվականը...*[11]*:*

Այս դրույթները զարմանալիորեն համընկնում են Ժ-Գ. դարի սկզբի Սանահնի և Մակարավանքի մի քանի այն արձանագրությունների հետ, որոնցում ուղղակի հիշատակված է «Գրիգոր Վարդապետ՝ որդի Աբասայ»:

Նախ՝ այսպիսին է Սանահնի վանքի Աստվածամոր եկեղեցու մուտքի հարավային պատի արձանագրությունը, որտեղ Գրիգորն իր մասին ասում է. «Ի թուի[ն] հայոց ՈԿԶ. <1217>, / ես՝ Գրիգոր վարդապետ, որդի Աբասայ[12]*, առաջնորդ ս[ուրբ]ը ուխտիս, եւ / յԱ[ստուա]ծածինս խաչ մի մեծ, ԺԳ. (13)*[13] *գիրք: Գրեցաւ ինձ սրբոյն Բարսղի տաւնին ամէն / եկեղեցիքս՝ մինչ ի կատարած աշխարհի: Որք յաւժար կամաւք կատար/են զխնդիրս իմ՝ աւրհնին յԱ[ստուա]ծո]յ, իսկ թէ ոք խափանել ջանայ՝ նզովս / առցէ յԱ[ստուա]ծո]յ:*

[9] **Մեսրոպ** վ. [**Տէր-Մովսէսեան**], Նիւթեր ս. Գրքի ուսումնասիրութեան.- Ա, 1901, էջ 217:

[10] **Ակինեան**, Մատ. հետազ., 4.- սրան առաջին անգամ ուշադրություն է դարձրել **Մեսրոպ Տեր-Մովսեսյանը** (Նիւթեր Ս. Գրքի ուսումնասիրութեան, 217-218):

[11] **Ակինեան**, նշ. աշխ., 4. հմմտ. **Բաբգէն** եպ. [**Կիւլէսերեան**], Նախադրութիւն ս. Գրոց և Գէորգ Լամբրոնեցի կամ Սկևռացի.- ՀԱ, 1915, էջ 72:

[12] **Ս. Ջալալյանցը** (Ա., 20) այս անվանումը սխալմամբ կարդում է՝ Սմբատայ, սրանով է բացատրվում նաև **Կոստանյանցի** սխալը (**Կոստանեանց**, 60), հմմտ. **Յովհ. Ղրիմեցի**, էջ 57, ծնթ. 1:

[13] **Ս. Ջալալյանցը** նշ. աշխ., նույն տեղում սխալմամբ կարդում է՝ ՃԴ. = 54 (sic):

ծո]յ եւ յամենայն սրբոց: Եւտու եւ այլ արդիւնք»[14]*:*

Սանահնի վանքի Ամենափրկիչ տաճարի գմբեթի ներսի արևելյան կողմում երկու տողով կարդացվում է՝

ՋԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՍ ՈՐԴԻ ⌊ԱԲԱՍ⌋ԱՅ ՅԻՇԵՍՋԻՔ Ի ՔՒ Ս Յ՚ Ս

«Ջ Գրիգոր վարդապետս՝ որդի [Աբաս]այ՝ յիշեսջիք ի Ք[րիստո]ս Յ[իսու]ս»[15]*:*

Աբասաորդի Գրիգորը թաղված է վերոհիշյալ ս. Աստվածածին եկեղեցու դրսի պատին մոտ և նրա գերեզմանաքարին գրված է (մեկ տող)՝

ԳՐԻԳՈՐ Մ՚ Բ Վ՚ԴՏ ՈՐԴԻ ԱԲԱՍԱՅ

«Գրիգոր ս[ուր]բ վ[ար]դ[ապե]տ՝ որդի Աբասայ»[16]*:*

Մակարավանքի արձանագրության մեջ նույն Գրիգորը ասում է. «Ես՝ «Գրիգոր վարդապետ որդի Աբասա իշխանի» ավեցի [Ս. Աստվածածնին] գրքեր և խաչ... [թվին] 666 <=1217> (տրբրկ.՝ 686 <=1237)»[17]*:*

Սա մեզ լիովին իրավունք է վերապահում ասելու, որ Սանահնի 1214, 1215 և 1217 թվականների արձանագրություններում հիշատակված «Գրիգոր վարդապետ»-ը[18] *Գրիգոր Աբասաորդի վարդապետն է:*

Զափազանց ուշագրավ է, թե Աբասաորդի Գրիգորը ինչպես է հիշատակված «Գիրք պատճառաց»-ում: Սրան պատասխանել կլինենք, եթե ներկայացնենք այս գրքի վերնագիրն ամբողջությամբ.

14 **Ջալալեանց**, Ա., 20 = **Յովհ. Ղրիմեցի**, 57 = **Կոստանեանց**, 60:

15 Այս արձանագրությունը բոլորովին անհայտ է գրականությանը: Այն 1902-1903 թթ. հայտնաբերել է **Սմբատ Տեր-Ավետիսյանը**, ով անձամբ ցույց տվեց, և մենք արձանագրեցինք, բայց **Ս. Տեր-Ավետիսյանը** այս արձանագրությունը վերագրում է Գրիգոր Տուտեորդուն, քանի որ խաթարված խոսքերը վերականգնում է «որդի [Տուտ]այ» տեսքով. իսկ մենք կարծում ենք, որ արձանագրությունը Գրիգոր Աբբասաորդունն է և նույն տեղում կարդում ենք՝ «որդի [Աբաս]այ»: Մասնակիորեն մեր ենթադրության օգտին է խոսում նույն դռան վերոբերյալ գրությունը, որտեղ հիշատակված է Գրիգոր Աբասաորդին, ոչ թե Գրիգոր Տուտեորդին:

16 Հմմտ. **Յովհ. Ղրիմեցի**, 57:

17 **Ջալալեանց**, Ա., 149, **Քաջիկեան**, Ճանապարհորդական յիշատակարան.-«Արձ.», 1888 թ., № 9, էջ 132.- թիվ ՈՋՉ. 686 = 1237 (**Ակինեան**. Մատ. հետազ., 78):

18 **Ջալալեանց**, Ա., 21, 23, 25 = **Յովհ. Ղրիմեցի**, 55-57 = **Կոստանեանց**, 55, 55--56, 58:

«Պատճառ լայն և նուրբ[19] *գրեանց՝ առեալ ի հարցն սրբոց և ի վարդապետաց, և ի մի հաւաքեալ և հոգացեալ մեծ րաբունապետին Գրիգորի որդ[ւ]օյ Աբասայ»*[20]*:*

Այս վերնագրում գործածված «մեծ րաբունապետ» տերմինը տարբեր հետազոտողներ ընկալել են տարբեր կերպ. ոմանք՝ եպիսկոպոս, այդ իսկ պատճառով Մեսրոպ Տեր-Մովսեսյանը՝ *«մեծ րաբունապետին Գրիգորի որդ[ւ]օյ Աբասայ»-ն թարգմանել է «великого* епископа <*sic*> Григория, сына Абаса»[21]*, ոմանք էլ՝ կաթողիկոս, ինչից ելնելով՝* Գարեգին Զարբհանալյանը *աշխատությունը վերագրել է Գրիգոր Անավարզեցուն*[22]*:*

Ն. Ակինյանի *կարծիքով՝ Աբասաորդի Գրիգորը ո՛չ եպիսկոպոս է եղել, ո՛չ էլ կաթողիկոս, նա պարզապես եղել է «վարդապետ» և «առաջնորդ», Սանահնի վանահայրը, ինչը լիովին համապատասխանում է «Գիրք պատճառացի» վերնագրում նշված նրա տիտղոսին՝ «Մեծ րաբունապետ»*[23]*:*

Բայց Գրիգորը երբ է դարձել Սանահնի վանահայր, պատասխանը մեզ տալիս են Սանահնի արձանագրությունները:

1211 թ. արձանագրության մեջ հիշատակված է. «առաջնորդ սուրբ ուխտիս հայր Վարդան եւ վարդապետս Գրիգոր»[24]*: 1214 թվի արձանագրություններում՝ «առաջնորդ սուրբ ուխտիս Փիլիպոս հայր և Գրիգոր վարդապետ և միաբանք»*[25]*: Երկրորդում՝ «Գրիգոր վարդապետ՝ առաջնորդ Սանահնիս, միաբանաւք»*[26]*: 1215-ի արձանագրությունում՝ «Հայր վարդապետ Գրիգոր և Վարդան և ամենայն միաբանքս»*[27]*: Համաձայն 1217 թ. արձանագրության՝ մեկում՝*

19 «Լայն»-ը և «նուրբ»-ը օգտագործված են փոխաբերական իմաստով. տե՛ս **Մ. Տեր-Մովսեսյան**, История перевода Библии, 229, **Ակինեան**, նշ. աշխ., 30-31, 33-36:

20 **Տաշեան**, Ցուցակ, 213, **Գ. Զ[արբհանալեան]**, Հայկական հին դպրութեան պատմութիւն, 779, **Կ[արապետ] Վ. [Տէր-Մկրտչեան]**, Մի հատուած Որոգենէսի գրուածքներից և Պատճառ լայն և նուրբ գրոց ձեռագիրը.- Ա, 1895, էջ 148, **Մ. Տեր-Մովսեսյան**, История перевода Библии, стр. 226, 229, **Ակինեան**, Մատ. հետազ., 1:

21 **Մ. Տեր-Մովսեսյան**, նշ. աշխ., 226:

22 **Գ. Զ[արբհանալեան]**, նշ. աշխ., 778-779, հմմտ. **Ակինեան**. նշ. աշխ., 9-10:

23 **Ակինեան**, նշ. աշխ., 7:

24 **Ջալալեանց**, Ա., 24-25 = **Յովհ. Ղրիմեցի**, 54-55 = **Կոստանեանց** 52:

25 **Ջալալեանց**, Ա., 21 = **Յովհ. Ղրիմեցի**, 55 = **Կոստանեանց**, 55:

26 **Ջալալեանց**, Ա., 33 = **Յովհ. Ղրիմեցի**, 55-56 = **Կոստանեանց**, 55-56 (վերջին բառերը բոլորը սխալ են կարդացել՝ և միաբանքս, sic):

27 **Ջալալեանց**, Ա., 25 = **Յովհ. Ղրիմեցի**, 56 = **Կոստանեանց**, 58:

«Գրիգոր վարդապետ՝ որդի Աբասայ, առաջնորդ սուրբ ուխտիս»[28], երկրորդում՝ «առաջնորդ սուրբ ուխտիս վարդապետս Գրիգոր և միաբանք»[29]: 1221 թ. արձանագրությունում՝ «տէր Յովանէս և միաբանքս»[30] և 1222 թ-ին՝ «առաջնորդ սուրբ ուխտիս տէր Յովանէս և միաբանքս»[31]:

Այս բոլոր արձանագրությունները պարզորոշ ցույց են տալիս, որ 1211 թ. Սանահնի վանահայրը եղել է Վարդանը, 1214 թ.՝ Փիլիպոսը և Գրիգորը, 1215-1217 թթ.՝ Գրիգորը, իսկ 1221-1222 թթ.՝ Հովհաննեսը: Ուրեմն՝ Աբասաորդի Գրիգորը կարող էր վանահայր դառնալ Փիլիպոսից հետո՝ 1214 թվականին, և նա որպես վանահայր կարող էր պաշտոնավարել 1214-1217 թվականներին: 1217-1221-ի միջև ոչ ոք չի հիշատակվում, իսկ 1221 թվականից հանդիպում ենք Հովհաննես անվանը:

Ն. Ակինյանը, ահա թե ինչու, ենթադրում է, թե «հարկ է ընդունիլ թէ 1214 տարւոյն ընթացքին մէջ վախճանելով Փիլիպպոս՝ յաջորդ կարգուած է Գրիգոր որդի Աբասայ»[32]: Ճիշտ է, նրա իսկ խոսքերով, «թէեւ մահուան թուականի նկատմամբ յայտնի յիշատակարան մը չունինք, սակայն 1221էն ետքը տակաւին կենդանի անհնար է ենթադրել, երբ Մենաստանիս առաջնորդ կը յիշատակուի Յովհաննէս»[33]: Այսպիսով՝ Ն. Ակինյանը միանում է ակադ. Մ. Բրոսեին[34], որը «լաւ նկատած է, թէ հետեւելով արձանագրութեանցս Գրիգոր վախճանած պիտի ըլլայ 1217ի եւ 1221ի մէջէրը»[35]: Ամեն դեպքում՝ կասկածելի պետք է համարել, թե Գրիգորը կենդանի կարող էր լինել 1237 թվականին, ինչպես Քաջիկյանն է թվագրում Մակարավանքի արձանագրությունը:

Ինչ վերաբերում է «Գիրք պատճառացը» գրելու ժամանակին, Ն. Ակինյանը դա որոշում է՝ ելնելով Սանահնի արձանագրության տվյալից, որտեղ նշված է Գրիգոր Աբասաորդու՝ Սանահնին ընծայած մեկ մեծ խաչի և 13 գրքերի մասին: Ն. Ակինյանը ենթադրում է, որ «Գիրք պատճառացի» հեղինակը այն պետք է ավարտած լինի

[28] **Ջալալեանց**, Ա., 20 = **Յովհ. Ղրիմեցի**, 56-57 = **Կոստանեանց**, 60:

[29] **Յովհ. Ղրիմեցի**, 57.

[30] **Ջալալեանց**, Ա., 31 = **Յովհ. Ղրիմեցի**, 57-58 = **Կոստանեանց**, 64:

[31] **Ջալալեանց**, Ա., 19 = **Յովհ. Ղրիմեցի**, 58 = **Կոստանեանց**, 65:

[32] **Ակինեան**, Մատ. հետազ., 8:

[33] **Նույն տեղում**

[34] **Յովհ. Ղրիմեցի**, էջ 57, ծնթ. 1:

[35] **Ակինեան**, Նշ. աշխ., 8:

մինչև 1217 թվականը, որովհետև նա վանքի գրապահոցին ընծայել է 13 գիրք[36]: Ինչպես վերը տեսանք, Գրիգորը 1217-ին գրքեր է նվիրաբերել նաև Մակարավանքին: Բայց մի՞թե այս կամ այն վանքին գրքեր նվիրելու փաստով կարելի է այնպիսի հարց վճռել, ինչպիսին «Գիրք պատճառացը» գրելու ժամանակի հարցն է: Իհարկե՛, ոչ: Ուստի միանգամայն արդարացի է Ն. Ակինյանի երկրորդ ենթադրությունը, այն է՝ Գրիգորը այդ աշխատության վերնագրում «Մեծ Րաբունապետ» է կոչված, իսկ Սանահնի արձանագրությունում՝ «Առաջնորդ և «Վարդապետ», ուրեմն՝ հիշյալ երկը նա պետք է գրած լինի իր «առաջնորդութեան միջոցին», հնարավոր է մինչև 1217 թ., այսինքն՝ նախքան վանքի մատենադարանին գրքեր ընծայելը[37]:

Հովսեփ Գաթրճյանը, անշուշտ, լիովին իրավացի է, երբ Գրիգոր Աբասաորդու «Գիրք պատճառացը» համարում է եզակի երևույթ ամբողջ հայ մատենագրության մեջ՝ «Գիրք պատճառաց գործը բոլոր վանդակ հայ մատենագրության մէջ եզական երեւոյթ մըն է»[38]: Մենք՝ հայերս, «Ունեցած ենք «պատմագրութիւններու, Ս. Գրոց եւ Ս. Հարց գրուածոց բազմաթիւ մեկնութիւններու, հոգեւոր ճառերու ճոխ մատենագրութիւն, բայց ի զուր պիտի որոնենք Գրիգորի Աբասայ որդւոյ ձեռնարկութեան համապատասխան երկրորդ երկասիրութիւն մը»[39]: «Մեր նախնիք առ հասարակ սիրած են «Գրոց գիտութեան անեզր եւ անհաս ծովու (Գիրք պատճառաց, Յովք.), վրայ նաւել, կարդալ գրքեր, պատմագրել ժամանակակից կամ անցեալ դէպքեր, ուսումնասիրել Ս. Գրոց մթին տեղեր եւն, բայց Գրիգորէն զատ, ոչ ոք, եւ այս կարելի է ըսել բացարձակապէս, խորհած է ուսումնասիրել գրքի պատմութիւնը, ի մի ամփոփել հեղինակի մ՝ անձին, գրութեանց թուոյն, չարժառիթին (պատճառին) եւն մասին ցրիւ ըսուածները՝ աւանդութիւնն, պատրաստել քննական-համեմատական տեսութիւններ անոնց վաւերականութեան կամ անվաւերականութեան վրայ, կատարել վերջապէս գործ մը, որ այսօր «Մատենագրութեան պատմութիւն» յօրինողի մը պաշտօնն կը համարուի»[40]: Այսպիսով՝ Գրիգոր Աբասաորդին առաջինն է, որ

[36] **Ն. Ա[կինեան]**, Նոնոսի մեկնութիւնք Գրիգոր Աստուածաբանի հինգ ճառից.- ՀԱ, 1904, էջ 144, ծնթ. 4, հմմտ. նույնի Մատ, հետազ., 9:

[37] **Ակինեան**, Մատ. հետազ. 9:

[38] **Գաթրճեան**, Սրբազան պատարագամատոյցք Հայոց, 178:

[39] **Ակինեան**, Մատ. հետազ., 11:

[40] **Նույն տեղում**, 11-12.

Թեև բավականին ուշացումով, ԺԹ. դարում մտել է այս ասպարեզ, «եւ յայսմ կը կայնայ Պատճառաց գրոց եզականութիւնն»[41]*: Մի խոսքով՝ ըստ* Ն. Ակինյանի՝ *«Գործս իսկապես* Մատենագրութեան Պատմութեան *փորձ ‘մ է, թէպէտ մասնական ծրագրով»*[42]*: Ըստ* Հակոբ Տաշյանի՝ *«Գիրք պատճառացի» հեղինակը «դիտած է այսու տալ մատենախոսութիւն մ’ իւր ժամանակի տեսութեանց համաձայն Ս. Գրոց եւ եկեղեցւոյ գլխաւոր վարդապետաց գրութեանց վրայ, մեծաւ մասամբ որչափ ծանօթ էին հեղինակին հայերեն թարգմանութեամբ*[43]*»:*

«Գիրք պատճառացը» առայժմ հրատարակված չէ, եթե չհաշվենք տպագրված մի քանի հատվածները[44]*, չնայած գրականության մեջ գտնում ենք նրա մանրամասն նկարագրություններն*[45] *ու ուսումնասիրությունները*[46]*:*

«Գիրք պատճառացից» մեզ է հասել ընդամենը երեք օրինակ, որոնցից մեկը՝ հնագույնը, ԺԶ-ԺԴ. դդ. պահպանվում է էջմիածնի թանգարանում (նկարագրված է Կարինյանի, Կ. Տեր-Մկրտչյանի *և* Մ. Տեր-Մովսեսյանի *կողմից), իսկ երկուսը՝ ավելի ուշ ժամանակների՝ պահպանվում են Վիեննայի Մխիթարյան միաբանության գրապահոցում (նկարագրված է* Հ. Տաշյանի *և* Ն. Ակինյանի *կողմից): Տեղեկություններ կան նաև չորրորդ օրինակի մասին, 1725 թ., բայց հայտնի չէ, թե որտեղ է*[47]*:*

Այս նկարագրությունները հուշում են, որ Գրիգոր Աբասատրդու երկը բաղկացած է 12 գրքից[48]*.*

Գիրք առաջին՝ Հնոց Կտակարանաց.

Գիրք երկրորդ՝ Նոր Կտակարանաց.

Գիրք երրորդ՝ Սկիզբն և Պատճառ աքանչել[ւ]ոյն Փիլոնի գրոցն.

Գիրք չորրորդ՝ Պատճառ Դիոնէսիոսի.

Գիրք հինգերորդ՝ Ա. Պատճառ Գրիգորի Աստուածաբանի.

[41] **Նույն տեղում**, 12.

[42] **Նույն տեղում**

[43] **Յ. Գաթրճեան**, Նշ. աշխ., նույն տեղում:

[44] **Մ. Тер-Мовсесян**, История перевода Библии, 223-237, **Յ. Շահխաթունեանց**, Բ., 217-220, 221-223. ծնթ. :

[45] **Տաշեան**, Ցուցակ, 213-233, **Կարինեանց**, Մայր Ցուցակ, 178, **Կ[արապետ] Վ. [Տէր-Մկրտչեան]**, Մի հատուած Որոգենէսի գրուածքներից և Պատճառ լայն և նուրբ գրոց ձեռագիրը.- Ա, 1895, էջ 146-148:

[46] **Ակինեան**, Մատ. հետազ. 11-43 և այլն:

[47] **Ակինեան**, Նշ. աշխ., 15:

[48] **Տաշեան**, Ցուցակ, 213-233:

Գիրք վեցերորդ՝ Պատճառք ճառից սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ գրոցն.

Գիրք եօթներորդ՝ Առաջին Գիրք Տեառն Բարսղի Պահոց գրոցն.

Գիրք ութերորդ՝ Երկրորդ Գիրք Տեառն Բարսղի.

Գիրք իններորդ՝ Երրորդ Գիրք Տեառն Բարսղի.

Գիրք Ժ.երորդ՝ Պատճառ Եւագրի գրոց.

Գիրք մեռաւաներորդ՝ Դաւթի Անյաղթ փիլիսոփայի.

Գիրք ԲԺ.աներորդ՝ [Սրբոյն Յակոբայ]:

Գրականության մեջ «Գիրք պատճառացի» մասին կա երկու իրարամերժ կարծիք. մեկն արտահայտել է Սեսրոպ Տեր–Մովսեսյանը, *իսկ մյուսը՝* Ներսես Ակինյանը*:*

Մ. Տեր–Մովսեսյանը *գրում է՝*

Книга епископа <*sic*> Григория, которая, по отзыву Гатрчяна, «во всей армянской литературе исключительное явление», составлена по плану и образцу той литературы, которая возникла в Византии со второй половины *V* столетия известна под названием литературы Катенов, т. е. она представляет выбор отрывков из толкований великих писателей предыдущих столетий. Была-ли раньше Григория у армян доступна и применяема такая литература и насколько потом она вкоренилась и расцвела, очень итересный и заслуживающий внимания вопрос, но пока мы должны его оставить в стороне, и довольствуемся замечанием, что у Григория мы уже находим сознательно обработанный и оброзцово-выполненный труд. Цель этого труда состояла в следующем: дать очерк церковной литературы в дословном приведении мнений и рассуждений великих отцов церкви и почитаемых писателей древних времен.

Распределение св. Писания и церковних книг по группам имело свое практическое применение и дальнейшее развитие у армян средних веков, как выясняется из работ Григория и других писателей. Григорий употребляет для таких групп два термина: *լայն եւ նուրբ* в дословном переводе – *широкие и тонкие* книги, что я по смыслу, по примеру Патканова, перевожу *священные и философские* книги. Эти термины с таким же подразделением книг находим в «Распределении св. Книг» монаха Саркавага...»[49]*:*

Այնուհետև Մ. Տեր–Մովսեսյանը *հատկապես կանգ է առնում «նուրբ»*[50] *եզրի պարզաբանման վրա:*

[49] **Тер-Мовсесян**, Նշ. աշխ., 229-230:

[50] **Тер-Мовсесян**, Նշ. աշխ., 229.

Ներսես Ակինյանի *կարծիքով՝ «Գիրք պատճառացի» նյութերը կարելի է բաժանել երկու մասի, որոնցից մեկը ներկայացնում է «Ներածութիւն ի Ս. Գիրս», («Introductio in Scripturam sacram»), իսկ երկրորդը՝ «Հայրախօսութիւն՝ Պատրոլոգիա-պատրիստիկա» («Patrologie-Patristik»)*[51]*: Առաջին մասը սահմանափակվում է Ա. և Բ. գրքերով, իսկ երկրորդը՝ մնացածով (Գ-ԺԲ.)*[52]*: Ն. Ակինյանը նպատակահարմար չի գտել այդպիսի կազմութիւն ունեցող գիրքը անվանել Catenae «այս յորջորջումս այնչափ յարմար չի թուիր մեզ ընդհանուր բովանդակութեան»*[53]*, քանզի սովորական Catenae-ում՝* «Շղթայք կամ Հատուածընտիր» *միշտ «ս. Հարց խօսիլ կու տայ, մինչ հոս նշանաւոր տեղ կը գրաւեն նաև Գրիգորի խոսքերը»*[54]*:*

Մ. Տեր-Մովսիսյանը *Գրիգոր Աբասաորդու «Գիրք պատճառացը» որոշ չափով կապում է Սարկավագի «Սուրբ գրքերի կարգացուցակ»-ի հետ, որ ինքը ռուսերեն անվանում է* «Распределение св. Книг», *(հայերեն՝ «կարգադրութիւնք գրոց սրբոց»)*[55]*: Այս դրույթը* Ն. Ակինյանն *իրավացի է համարում: Նա միայն նշում է, որ «Հաբևանցի ակնարկն իսկ պիտի պարզէ մեր աչաց, թէ Գրիգորի ցանկին մէջ կը պակսին շատ մը գրքեր, որոնք Սարկաւագի ցանկին մէջ կը տեսնուին: Սակայն այս չարգելուր զմեզ բնաւ պնդելու թէ Գրիգոր հետեւած է Սարկաւագի»*[56]*: Որ Գրիգորն է օգտվել Սարկավագի երկերից, ոչ թե Սարկավագը՝ Գրիգորից, սա ինքնին պարզ է, որովհետև ժամանակագրորեն Գրիգորն է հաջորդում Սարկավագին, և այն էլ համարյա մեկ դարի հեռավորությամբ:*

Գրիգոր Աբասաորդու ինքնությունը վերջնականապես ճշգրտելու համար վճռորոշ կարող է լինել այն փաստը, որ Գրիգորն օգտվել է նաև Դավիթ Քոբայրեցու, կամ, ինչպես ինքն է ասում՝ «Դաւթի վարդապետի Քոբերեցո»[57] *և [Մխիթար] Գոշի (Գոշին)»*[58] *երկերից: Դավիթ Քոբերեցին կամ Քոբայրեցին մոտավորապես 1205 թվին դեռևս կենդանի էր, իսկ Մխիթար Գոշը վախճանվել է 1213 թվա-*

[51] **Ակինեան**, Մատ. հետազ., 19:

[52] **Նույն տեղում**, 19-20, 33-41:

[53] **Նույն տեղում**, 22:

[54] **Նույն տեղում**, 22:

[55] **Тер-Мовсесян**, Նշ. աշխ., 229-230:

[56] **Ակինեան**, Մատ. հետազ., 42, հմմտ. 30, **Ոսկեան**, Մատ. քննութ., 36-37:

[57] **Տաշեան**, Ցուցակ, 224, **Կարինեանց**, 178:

[58] **Տաշյան**, Նշ. աշխ., նույն տեղում:

կանին: Ուրեմն՝ ապացուցված պետք է համարել, որ «Գիրք պատճառացի» հեղինակը՝ Գրիգոր Աբասաորդին, չէր կարող ապրել Թ. դարում: Նա ԺԳ. դարի առաջին քառորդի հեղինակ է:

Ինչ վերաբերում է Գրիգոր Աբասաորդու «Գիրք պատճառացը» կազմելու համար օգտագործած սկզբնաղբյուրներին, ապա որպես դրանց բանալի, առաջին հերթին, կարող է ծառայել ձեռագրերից մեկի առաջաբանը, որտեղ տրված է տվյալ գրքի համառոտ գլխացանկը.

«Գիրք Պատճառաց, նորում [այսպէս] ընձեռին Պատճառք և Նախադրութիւնք Հնոց և Նորոց Կտակարանաց. այլ և գրոց ոմանց Հայրապետաց սրբոց և վարդապետաց եկեղեցւոյ, այսինքն է գրոցն սքանչելի[ւ]ոյն Փիլոնի, սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ, Եւագրի, Դաւթի Անյաղթ փիլիփոսայի՝ Բարձրացուցչէքն և Սահմանացն, ընթերցուածին սրբոյն Յակոբայ. հաւաքեցեալ և շարադրեցեալ մեծ բարեւնեայն Գրիգորի որդւոյն Աբասայ»[59]*:*

Իրականում Գրիգոր Աբասաորդին, բացի Հին և Նոր կտակարաններից, օգտվել է նաև հայ և համաչխարհային հայրերի երկերից: Համաչխարհային հայրերի՝ Եփրեմ [Ասոր]ու, Աթանաս Մեծի, Եպիփանոս Կիպրացու, Գրիգոր Նյուսացու, Հովհան Ոսկեբերանի, Որոգինեսի, Եվթաղի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Փիլոնի, Գրիգոր Աստվածաբանի, Բարսեղ Կեսարացու, Դիոնիսիոս Արիոպագացու, Հիւսքիոսի և ուրիշների. բ) հայ հայրերից՝ Եղիշեի, Դավիթ Փիլիսոփայի, Ստեփանոս [Սյունեց]ու, Գևորգ «Կաղի» (Գէորգ կաղ), Դավիթ Քոբերեցու կամ Քոբայրեցու, [Մխիթար] Գոշի և ուրիշների[60]*:*

[59] **Նույն տեղում**, 213:

[60] Հմմտ. **Ակինեան**, Մատ. հետազ., 26-27, **Կ[արապետ] Վ. [Տէր-Մկրտչեան]**, Մի հատուած Որոգենէսի գրուածքներից. կլն., 148:

ԳԼՈՒԽ Ե.

ԽԱՉԱՏՈՒՐ ՏԱՐՈՆԱՑԻ

Այսպես կոչված «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների»՝ Գրիգոր Տղային գրված թղթում բացի Հաղբատ-Սանահին խմբակի անդամներից, հիշատակված են Խաչատուր վարդապետը՝ Հաղարծնից, Մխիթար վարդապետը՝ Խորակերտից և երկրորդ Մխիթար վարդապետը՝ Գետիկից: Մոտավորապես 1205 թվականին Լոռու ժողովի մասնակիցների ցուցակում սրանցից հիշատակված է միայն «Գօշն կոչիւր, չինող վանացն Գետկայ, այր իմաստուն և հեզ»: Խաչատուր Հաղարծնեցին և Մխիթար Խորակերացին այլևս չեն երևում:

Մխիթար Խորակերացու ինքնությունը, ինչպես նշեցինք, մշուշապատ է, մինչդեռ Խաչատուր Հաղարծնեցու մասին այնուամենայնիվ երկու խոսք կարելի է ասել:

* * *

Խաչատուր վարդապետ Հաղարծնին, անշուշտ, պետք է լինի հայ գրականության պատմության մեջ հայտնի Խաչատուր Տարոնացին, որի մասին կան բավականին տեղեկություններ, մի կողմից՝ Կիրակոսի Պատմության մեջ, մյուս կողմից՝ Հաղարծնի արձանագրություններում: Բոլոր տվյալներով հաստատվում է, որ Խաչատուր Տարոնացին Հաղարծնի վանքի վանահայրն է եղել:

Նոր Գետիկի հիմնադրման և օծման ժամանակ Կիրակոս Գանձակեցին, *մոտավորապես 1191 թ. գրությամբ մեզ պատմում է՝ եկեղեցու տոնախմբության ժամանակ ներկա էր նաև մարդ՝ սուրբ և առաքինի և գիտությամբ հռչակված, մանավանդ երաժշտական արվեստում: «Սա պայծառացոյց զսուրբ ուխտն, յորում առաջնորդ էր ինքն, որ յառաջ քան զգալն նորա՝ ամայի էր և խամրացեալ: Զսա պատուէր մեծապէս թագաւորն Վրաց Գիորգի, հայր Թամարին: Եւ ետ եկեղեցւոյն ձեռնագրովն իւրով զերկուս գիւղսն՝ զԱբասաձոր և զՏանձուտն, և այգի մի ի Միջնաշէնին: Սա եբեր զխաչն ի կողմանս Արեւելից, զանմարմին եղանակն ի մարմին ածել, զարարեալն*

իմաստնոց, որ զայն ժամանակ չեւ էր սփռեալ ընդ աշխարհս»[1]*:*

Հաղարծնի արձանագրություններում Խաչատուրը հիշատակվում է երեք անգամ. առաջին անգամ՝ 1181 թ., երկրորդ անգամ՝ 1184 թ., և երրորդ անգամ՝ 1194-ին:

1181 թ. արձանագրությունում, ի դեպ, հիշատակվում է Գիորգիի թագավորությունը և «յառաջնորդութեան սուրբ վարդապետին Խաչատրոս»[2]*:*

1184 թվականի արձանագրությունում կարդում ենք՝ «Ի ՈԼԴ.<=1184>[3] *թուիս Հայոց, ի թագաւորութեան Ափխազաց Գէրգեա, ի հայրապետութեան Հայոց տեառն Գրիգորիսի ես՝ Խաչատուր վարդապետ եւ Սուքիաս նորոգեցաք զՍուրբ Գրիգորս Հրամանաւ թագաւորին եւ իւր մեծամեծ իշխանացն Սարգսի ամիր[սպասալարի], Անտոն Ճղոնդիդելի*[4]*, Ելբեկին եւ և [ուրիշների] կարգադրութեամբ»*[5]*:*

1194 թվականի[6] *արձանագրությունում հիշատակվում են Իվանեի կառավարությունը և Խաչատուր վարդապետի հայրապետությունը. «յառաջնորդութեան Խաչատուր վարդապետին»*[7]*:*

Եթե վստահենք Ի. Սպենդիարյանին՝ *Խաչատուր վարդապետը և ոմն Բարսեղ հիշատակվում են Գոշավանք գյուղի Ս. Հռիփսիմեի անվան աղօթատան գմբեթի արձանագրությունում՝ որպես «չինողք եկեղեցւոյ»*[8]*:*

Բոլոր այս փաստարկները բավարար են եզրակացնելու, որ

---

1 **Կիրակոս**, 199-200:

2 **Մեսրոպ Տէր-Մովսեսեան**, Հայկական արձանագրութիւններ.- ԱՀ, ԺԴ., 1914, էջ 69-79, հմմտ. **Զալալեանց**, Ա., 133 = **Կոստանեանց**, 33:

3 Ըստ **Ս. Զալալեանցի**, **Մ. Բարխուդարեանի** և **Կոստանեանցի՝** ՈԴ. 604 = 1155 (sic), **Տէր-Մովսեսյանի**, ՈԼԴ. 634 = 1185, բայց սրանցից ոչ մեկը չի համապատասխանում իրականությանը. պետք է լինի՝ ՈԼԳ. 633 = 1184 (այս մասին մանրամասն տե՛ս **Л. Меликсет-Беков**, Одна из надписей hAr'арцинского монастыря.- ХВ, т. III, стр. 197-198):

4 Այս բառը **Ս. Զալալյանցի**, **Մ. Բարխուդարյանի** և **Կոստանյանցի** հրատարակություններում բաց է թողնված, **Մ. Տէր-Մովսեսյանը** կարդում է՝ «ճպուռնտելի» և հավելում, որ իր կողմից ընթերցված «պ»ն կարող է ընկալվել նաև Ղ կամ Դ:

5 **Զալալեանց**, Ա., 135 = **Բարխուդարեան**, 367 = **Քաջիկեան**.- «Արձ»., 1888 թ., Հ՝ր 8, էջ 103 = **Կոստանեանց**, 31, **Մեսրոպ Տէր-Մովսէսեան**, Հայկական արձանագրութիւններ, էջ 71, հմմտ. **Л. Меликсет-Беков**, Одна из надписей hAr'арцинского монастыря, loc. cit:

6 Ըստ **Մ. Բարխուդարեան** ի՝ ՈՂԳ. 693 = 1244, (sic), պետք է լինի՝ ՈԽԳ.:

7 **Մեսրոպ Տէր-Մովսէսեան**, Նշ. աշխ., 67, հմմտ. **Զալալեանց**, 134 = **Բարխուդարեան**, 368 = **Կոստանեանց**, 38:

8 **Յ. Սպենդիարեան**, Մխիթար Գօշի վանքը.- «Մշակ», 1911 թ., Հ՝ր 17:

«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» թղթերում, Կիրակոսի Պատմության մեջ և Հաղարծնի արձանագրություններում հիշատակված Խաչատուրը միևնույն անձնավորությունն է, այսինքն՝ Խաչատուր Հաղարծնեցին, նույն ինքը Խաչատուր Տարոնացին: Մասնավորապես պարզվում է, որ Խաչատուրը՝ 1) ծագումով տարոնացի է եղել, հենց դրա համար նրան կոչել են՝ Տարոնեցի, Տարոնացի. 2) 1184-1194 թթ., ամենայն հավանականությամբ, եղել է Հաղարծնի վարդապետը, այդ պատճառով կոչվել է նաև Հաղարծնեցի (Հաղարծնին). 3) հավանական է, որ մոտավորապես 1205 թվին նա կենդանի չի եղել, քանի որ Լոռում հրավիրված ժողովի մասնակիցների ցուցակում չի հիշատակվում. 4) որպես Հաղարծնի առաջնորդ՝ մոտ հարաբերությունների մեջ է եղել Վրաց արքա Գիորգի Գ.-ի հետ, 5) նախաձեռնել և կանոնակարգել է հայոց հոգևոր երգը «Հյուսիսային կողմերում»:

***

Խաչատուր Տարոնացին հայ գրականության պատմության մեջ հայտնի է միայն և միայն իր բանաստեղծական երկերով, և այս առումով նրան կարելի է համարել Հովհաննես Սարկավագի հետևորդը[9]: Հատկապես մեծ է նրա ավանդը հայոց շարականագրության մեջ, որի մասին, ի դեպ, հպանցիկ նշված է նաև Կիրակոսի Պատմության մեջ:

Հայոց հոգևոր պոեզիայի ամենահայտնի ստեղծագործություններից մեկը՝ «Խորհուրդ խորին անհաս անսկիզբն, որ զարդարեցեր զվերին պետութիւնդ» շարականը, պատկանում է Խաչատուր Տարոնացուն և ստեղծման օրից ցայժմ կատարվում է պատարագից առաջ[10]:

Ըստ էության՝ ութ տողից բաղկացած այդ շարականը ակրոստիքոս է, և սկսվում է հետևյալ տառերով՝ Խ-ա-չ-ա-տ-ո-ւ-ր

«Խորհուրդ խորին անհաս անըսկիզբն...
Անճառահրաշ զաւրութեամբ...
Զարչարանաւք քո սուրբ միածնիդ...
Անճրևածին բաժակ հրահոսան...
Տան քում վայել է սրբութիւն...

[9] **Դ. Խաչկոնց**, Հայոց կրօնական բանաստեղծութիւն, Տփղ., 1904, էջ 79-80 (§ 121):

[10] **Յ. Գաթրճեան**, Սրբազան պատարագամտոյցք Հայոց, էջ 621-622, Շարական, 557-558, հմմտ. գ., Шаракан, пер. Н. Эмина, 2-ое изд., 334-335 և ծնթ. 20, **Խաչկոնց**, նշ. աշխ., նույն տեղում, հմմտ. **Տաշեան**, Ցուցակ, 311, 684:

Որ զարարչագործ բազուկըս քո...
Ի լուսամբ թագ ի գլուխ պատեսցես...
Համից բոլորից տիրապէս աստուածպետական...»[11]:

Հետազոտողները ենթադրում են՝ Խաչատուրը, իբր, այդ շարականը առաջին անգամ Հանպատրաստից ասել է Հաղարծնում, Զաքարիա ամիրսպասալարի[12] ներկայությամբ:

Խաչատուրին է պատկանում նաև հանրահայտ շարականը, որ կատարում են Հարսանեկան հանդեսների ժամանակ՝ «Շարական կատարում են Հարսանեաց հանդերձ օրհնելոյ Հարսանեաց»[13]: Սա ևս ակրոստիքոս է, թեև բաղկացած է վեց տողից՝ Խ-ա-չ-ա-տ-ո[ւ]-ր.

«Խաչանիշ զրոշմամբ նշանի պարագրական փառաւք պսակեալ...
Արեամբ ծաղկեալքս պատմուճանի գերարգախոց բըղխմամբ վտակաց...
Զարչարանաւք սուրբ կենարարին չորեքնիւթեայ փառաւք պանծացեալ...
Այսաւր նոր խորհուրդ սաւառնեալ եկեղեցւոյ մաւր մեր Սիոնի...
Տո՛ւր, Տէ՛ր, զչնորհս քո զաստուածային զԱբգարու...
Որ ի Կանայ Գալիլիացւոց ի կդէոպանց խնջոյն ընթացեալ...»[14]:

Մնացյալ շարականները, որոնք վերագրվում են Խաչատուրին, հետևյալներն են՝ 1) Ծննդեան[15], 2) Աւետեաց[16], 3) Ոսկեանց[17], 4) Ղևոնդեանց[18], 5) Աւագ ուրբաթուն[19], 6) Թաղման Ճրագալուցին[20], 7) Մանկանց Բերթղեհեմի[21], 8) Գէորգայ զօրավարի[22], 9) Խոյին[20], 7) Մանկանց Բերթղեհեմի[21], 8) Գէորգայ զօրավարի[22], 9) Խա-

[11] Շարական, 557-558:

[12] **Մ. Չամչեան**, Պատմութիւն Հայոց, Բ., 182, **Գ. Շ[արբհանալեան]**, Հայկական հին դպրութեան պատմութիւն, 699, **Խաչկոնց**, նշ. աշխ., 80:

[13] «Բազմավէպ» 1882, էջ 319, հմմտ., **Սահակ Ամատունի**, Հին և նոր պարականոն կամ անվաւեր շարականներ, Վաղ., 1911, էջ 171-172:

[14] **Սահակ Ամատունի**, նշ. աշխ., նույն տեղում:

[15] **Տաշեան**, Ցուցակ, 421, 424:

[16] **Նույն տեղում**, 424, **Ս. Կանայեանց**, Ցուցակ հայերէն ձեռագրերի Թիֆլիզի Ներսիսեան հոգևոր դպրանոցի, Տփղ., 1893, էջ 12:

[17] **Տաշեան**, Ցուցակ, 421:

[18] **Նույն տեղում**, 422:

[19] **Նույն տեղում**, 422, 425:

[20] **Նույն տեղում**, 422, 428, **Ս. Կանայեանց**, Ցուցակ, նշ. աշխ.:

[21] **Տաշեան**, Ցուցակ, 424, հմմտ., «Բազմավէպ» 1894, էջ 249-250:

[22] **Տաշեան**, Ցուցակ, 423, 436, **Ս. Կանայեանց**, Ցուցակ, 15:

չին[23], 10) Բարսղի հայրապետին[24], 11) Մարտիրոսաց[25], 12) Առաքելոց[26], 13) Դաւթի մարգարէին[27], 14) Դաւթի Մարգարէին և Յակոբոս առաքելոյն[28], 15) Տեառընդառաջի[29], 16) Բարսղի Կեսարացւոյ[30], 17) Յարութեան[31] և ուրիշներ[32]:

Խաչատուրին է վերագրվում *նաև տարբեր բովանդակության մի քանի «Բանք»[33]:*

[23] **Տաշեան**, Ցուցակ, 425, 436:

[24] **Նույն տեղում**, 423.

[25] **Նույն տեղում**, 425:

[26] **Նույն տեղում**, 425, 436, 758:

[27] **Նույն տեղում**, 423, 758:

[28] **Նույն տեղում**, 758:

[29] **Նույն տեղում**, «Բազմավէպ». 1894, էջ 77-78:

[30] **Ս. Կանայեանց**, Ցուցակ, նույն տեղում:

[31] **Նույն տեղում**, 14:

[32] **Տաշեան**, Ցուցակ, 1097, **Ա. Ղազիկեան**, Հայկական նոր մատենագիտութիւն, Ա., 1128:

[33] **Ա. Ղազիկեան**, նշ. աշխ., նույն տեղում:

ԳԼՈՒԽ Ջ.

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԸ ԵՎ ՆՐԱ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայ գրականության պատմության մեջ հայտնի են երկու Հովհաննես Տավուշեցի. մեկը՝ ԺԲ. դարում, մյուսը՝ ԺԳ. դարում:

Մեկին միայն անունով գիտենք, իսկ մյուսին՝ և՛ անունով, և՛ գործունեությամբ: Երկուսն էլ կապված են Մխիթար Գոշի անվան հետ. առաջինը՝ որպես Գոշի ուսուցիչ և Գետիկի վանքի վարդապետ, երկրորդը՝ որպես նրա աշակերտ և Խորանաշատի վանքի և հենց Խորանաշատի գիտագրական դպրոցի հիմնադիր: Առաջինին «Յովհաննէս Տաւուշեցի» են անվանում, երկրորդին՝ «Յովհաննէս Վանական Տաւուշեցի» կամ, պարզապես, «Վանական»[34]:*

Հովհաննես Տավուշեցի - Մխիթար Գոշ - Վանական և այլոց մենք ներկայացնում ենք որպես մեր կողմից անվանակոչված «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետներ» խմբակի ճյուղերից մեկը, որոնց կազմում հիմնական ճյուղը պետք է համարել Հաղբատ-Սանահնի դպրոցը:

Մխիթար Գոշը ԺԲ-ԺԳ. դարերի սահմանագծում այն հեղինակավոր անձն էր, ով արտահայտիչն էր վերոհիշյալ դպրոցի գաղափարական ամբողջականության և տարաբնույթ օջախների միջև ընդհանուր կապերի: Հենց դրա համար նա արժանի է հատուկ ուշադրության:

* * *

Մխիթար Գոշի կենսագրությունը բավական ընդարձակ տրված է Կիրակոս Գանձակեցու *Պատմության մի քանի գլուխներում, որոնք ունեն հետևյալ վերնագրերը.*

1) «Վասն վարդապետին Մխիթարայ՝ թէ ուստի էր և կամ որպիսի ոք»[35]:

2) «Վասն չինուածեան վանացն Նորն Գետկայ»[36]:

[34]* Իրականում այս վարդապետի անունը եղել է սոսկ «Վանական», որի վրայ Տաւուշեցի միւս վարդապետի «Յովհաննէս» անուան յաւելումը միջնադարում առաջացած շփոթի հետեւանք է - Գ. Տ-Վ.:

[35] **Կիրակոս**, 195-199:

[36] **Նույն տեղում**, 199-205:

3) «Թե ո՞յք էին որք երեւելիք էին յաշակերտսն նորա»[1]:

4) «Վասն վարդապետին վախճանի մեծին Մխիթարայ՝ որ Գոշն կոչի»[2]:

Անշուշտ, Կիրակոսի *տվյալների վրա է հիմնված «Վարք և պատմուԹիւն Գօշին Մխիթարայ» երկը[3]:*

Առաջին գլխում Կիրակոսը *պատմում է. «Հռչակաւորն այն եւ մեծիմաստն գիտուԹեամբ՝ էր ի քաղաքէն Գանձակայ, քրիստոնեայ ծնողաց զաւակ, որք եռուն զնա յուսումն Գրոց Սրբոց. եւ իբրեւ եհաս նա յարբունս հասակի, ձեռնադրեցին զնա քահանայ կուսակրօն: Եւ պաշտեալ զքահանայուԹիւնն յոլով ամս՝ ցանկացաւ նա հմուտ լինել մտաց Գրոց Սրբոց եւ առակաց խորնոց, որ կան ի նոսա: Եւ հանդիպեցաւ նմա Յովհաննէս վարդապետն՝ Տաւուշեցի անուանեալ, որ ի ժամանակին յայնմիկ երեւելի էր նա գիտուԹեամբ...»: Մխիթարը, երկար տարիներ մնալով նրա մոտ, աստվածաբանական գրքերի ուսումնասիրությամբ էր զբաղվում: Նրա և ուրիշ ոմանց մոտ հետագայում Մխիթարը վարդապետ է ձեռնադրվում.*

«Կացեալ առ սմա Մխիթարայ, և առ այլ ոմանս՝ էառ նա զանուն վարդապետական: Եւ այնու ո՛չ չատացաւ, այլ չոգաւ նա յարևմուտս կոյս յաշխարհն, որ կոչի Սեաւ լեառն, առ վարդապետսն որք էին անդ ուսուցիչք, և զայն ինչ ի վեր ոչ հանեալ՝ Թէ իցէ նորա առեալ զայն պատիւ, այլ բազում ինչ օգտեալ ի նոցանէ, եկն նա ի Կարնոյ քաղաք: Եկ անդ գտանէ նա զբարեպաշտ իշխանն զանուանեալն Քուրդ, եւ հաւատովն քրիստոնեայ, որ ընդ այն ժամանակս անդ լիներ, սարտուցեալ ի Թագաւորէն Վրաց. և եղեալ նորա ծանօԹ, սիրեցաւ ի նմանէ իբրև զհայր: Եւ յետ այսորիկ դարձաւ նա յաշխարհս իւր:

Եւ ել համբաւ իմաստուԹեան նորա ընդ համայն աշխարհս, և բազումք աշակերտէին նմա յուսումն վարդապետուԹեան: Եւ ապա նեղեալ ի Տաճկաց, ի սադրելոյ կաթողիկոսին Աղուանից Ստեփանոսի, եւ եկեալ նորա յաշխարհն Խաչենոյ՝ առ Վախթանկ իշխանն Հաթերքոյ, և առ եղբարս նորա, որք բազում պատուով պատուեցին զնա, և անդ դադարեալ ամս ինչ»:

Եվ երբ Մխիթարը լսում է, որ Թամար Թագուհին մեծարանքների է արժանացրել նրան և վերադարձրել հայրենի վայրերը՝ կայանը և

[1] **Նույն տեղում**, 205-206:

[2] **Նույն տեղում**, 207-209:

[3] **Տաշեան**, Յուցակ, 181-182, **Մեսրոպ Սմբատեան**, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, Վաղ., 1895, էջ 380-386:

Մահկանաբերդը, «...եկն նա առ նա վասն առաջին սիրոյն և միաբանուԹեանն, որ առ միմեանս. և բնակեցաւ նա ի վանքն որ կոչիւր Գետիկ, ի գաւառին Կայենոյ, ի վերայ գետոյն մեծագունի զոր անուանեն Ազատևոյ գետ, յայլմէ կողմանէ գետոյն: Եւ էր առաջնորդ վանիցն վարդապետն, որ Սարկաւագ անուանիւր, աշակերտ նորին, որ բազում ուրախուԹեամբ ընկալաւ զնա, և ինքն սպասաւորեր նմա. և անդ դադարեալ յոլով ժամանակս»:

Այնուհետև Կիրակոսը *նկարագրում է այն սարսափելի երկրաշարժը, ինչի հետևանքով ավերվեց Գետիկ վանքը, որն այնուհետև վերականգնել հնարավոր չեղավ. «Ապա եղեւ շարժ սաստիկ, որ զբազում տեղիս կործանեաց և տապալեաց զբարձրաբերձ շինուածս, ընդ որս խախտեցաւ և եկեղեցին Գետակայ սաստիկ յոյժ. մինչ զի ոչ լիներ հնար վերստին նորոգել»:*

Երկրորդ գլխում Կիրակոսը *գրում է. «Սկսաւ այնուհետեւ վարդապետն աքանչելի հանդերձ միաբանօք իւրովք ձեռն ի գործ արկանել չինուԹեան վանիցն եւ եկեղեցւոյ ի վերասացեալ ձորն Տանձուտաց՝ հրամանաւ մեծ իշխանին Իւանէի... Յաստ ամի եղեւ աւարտ հոչակաւոր եւ խնդատես եկեղեցւոյն Գետակայ, զոր չինեաց վարդապետն Մխիթար իւր միաբանօքն՝ ձեռնտուուԹեամբ Վախթանկայ Խաչենեցւոյ՝ տեառն Հաթերքոյ, եւ եղբարց իւրոց...*

Յոլով ձեռնտու եղեն մեծ զօրավարքն Զաքարէ և եղբայրն իւր Իւանէ. քանզի նոքա ունէին զիշխանուԹիւն գաւառին, և զսուրբ վարդապետն յոյժ սիրէին. քանզի Զաքարէ խոստովանուԹեամբ որդի էր նորա հոգևոր... Եւ ինքն (Գոշ) քանզի սիրեր զանապատ եւ զամայուԹիւն, արար իւր տուն բնակուԹեան բացագոյն ի վանիցն. չինեաց և անդ փոքրագոյն եկեղեցի մի փայտակերտ յանուն Սուրբ Հոգւոյն: Եւ ի ժամանակի ծերուԹեան, ի գլուխ վանիցն յաջմէ կողմանէ չինեաց եկեղեցի մի՝ չիրիմ գերեզմանի իւրոյ, կրով և վիմօք մածուցեալ սրբագործ՝ յանուն Համբարձման Քրիստոսի»:

Երրորդ գլխում Կիրակոսը *հաղորդում է. «Բազումք էին որք աշակերտեցան ի նմանէ վարդապետական բանին. քանզի համբաւ իմաստուԹեան նորա հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս, և գային առ նա յամենայն կողմանց»: Դրանից հետո Կիրակոսը նշում է, որ Մխիթարը շատերին էր մխիթարում, «Քանզի ըստ անուանն իւրոյ մխիթարէր զամենեսեան, քանզի էր նա մխիթարական որպէս զԱնտոն. եւ զԲառնաբաս, և նշանաւոր ի մէջ ժողովրդոց, որպէս զԱնտոն. եւ բանք նորա արդիւնականք, լի շնորհօք և ամենայն ոք փափագէր տեսանել զնա եւ լսել ի նմանէ, վասն այսպիսի համբաւոյ բազումք,*

որ էին ի կարգի վարդապետաց ծածկէին զինքեանս և գային, ի կարգի աշակերտաց կալով՝ ուսանէին ի նմանէ»:

Զորրորդ գլխում Կիրակոսը *հավելում է. թե՝ երբ Մխիթարը «եհաս ի խորին ծերութիւն... և տկարացաւ ի զօրութենէ մարմնոյն... կոչեաց նա զբնակիչս ուխտի վանիցն Նորն Գետակայ... եւ զմի ոմն ի նոցանէ ընտրեալ՝ Մարտիրոս անուն նորա, որ աշակերտեալ էր նմա և ընտանի էր նմա, կացոյց զնա առաջնորդ նոցա... գրեաց կտակ առ մեծ հազարապետն Իւանէ, եղբայրն Զաքարէի, և յանձնեաց ի նա զվանսն և զառաջնորդն. և ինքն փոխեցաւ յաստեացս առ Քրիստոս՝ ալեւորեալ և լի աւուրբք... եւ տարեալ հանդուցին զնա առաջին դրան եկեղեցւոյն փոքրագունի, որ կայ ի գլուխ վանիցն՝ յարևմտից կողմանէ»:*

Վերջում Կիրակոսը *բերում է մի դրվագ և տեղեկացնում, թե ինչու է Մխիթարի մականունը Գոշ, և ինչ է դա նշանակում: «Դէպ եղեւ երբեմն,- գրում է Կիրակոսը,- զի պաշտօնեայք նորա գային գրաստուք՝ բարձեալ գինի ի պէտս վանիցն: Վրացի ոմն, Բասիլա անուն, եկեալ՝ բռնութեամբ կամէր առնուլ ի նոցանէ ի գինւոյ անտի, զի գործակալ էր նա Իւանէի ի վերայ մայրոյն, որ պահէր զտեղի իջաւանի նորա: Եւ պաշտօնեայքն ասեն ցնա. «Մի՛ նեղեր զմեզ, քանզի Գոշին եմք»: Զի այսպէս կոչէին զնա մականուամբ, քանզի հեղգագոյն եկին ալիք նորա»:*

Մի այլ տեղ Կիրակոսը *Զաքարիա և Իվանե երկայնաբազուկների՝ Հայաստանում տիրակալության և վանքերի ու եկեղեցիների նկատմամբ ցուցաբերած հոգատարության մասին խոսելիս, ի միջի այլոց, ասում է, որ «Յայսմ ամի եղեւ աւարտ հռչակաւոր և խնդատես եկեղեցւոյն Գետակայ, զոր չինեաց վարդապետն Մխիթար»[4], և որին կոչում էին Գոշ:*

Մխիթարի մահվան տարին Կիրակոսը *ցույց է տալիս 662=1213 թ.: Սրան լիովին համընկնում է* Վարդանի *տեղեկությունը, որ Մխիթարը վախճանվել է Զաքարե ամիրսպասալարի մահից մեկ տարի հետո: Եվ, իսկապես,* Վարդանը, *Զաքարեի մահը նշելով «ի վեցհարիւր վաթսուն և մի թուին»[5], հավելում է. «Եւ զկնի միոյ ամի կատարեցաւ սուրբ եւ սքանչելի վարդապետն Մխիթար, մականուն Գոշ, Գանձակեցին, եւ թաղեցաւ յիւրում ձեռակերտին ի Գետիկ, զոր չինեաց հրամանաւ Իւանէի՝ քեռորդւոյն մեծի իշխանին Քրդին»[6]:*

[4] **Կիրակոս**, 155:

[5] **Վարդան**, 140:

[6] Մխիթարի մահվան տարի՝ 1213 թ., ցույց են տալիս հետագա տարիների պատմագիրները, օրինակ, Առաքել Դաւրիժեցին (Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ

Կիրակոսի *տվյալների համաձայն, ինչպես արդեն նշել ենք վերը և կտեսնենք հետո, Մխիթարը մահացել է խոր ծերության հասակում («ի խորին ծերութեան, այլևորեալ եւ լի աւուրբք»): Այստեղից,* ergo, *եզրակացությունն. նա ծնված պետք է լինի ԺԲ. դարի առաջին կեսին, կամ, ինչպես կարծում է* **Ղ. Ոսկեանը**, *1130-1140 թվականներին[7]: Ըստ* Բաստամեանցի՝ *Մխիթարը վախճանվելիս 70-80-ից ավելի մեծ տարիքում պիտի լիներ[8]:*

Մխիթարին կոչում էին Գոշ, Գետիկցի, կամ էլ Գանձակեցի: «Քօշ, գուցէ քօշի նմանութենէն առնուած... Գետիկցի, վասն զի Հին Գետիկ վանքի միաբան և Նոր Գետիկ մենաստանին հիմնադիր ու անդամ եղած է: Իր ծննդավայրէն կոչուած է նմանապէս Գանձակեցի»[9]:

Բոլոր այս տվյալների համաձայն կարելի է հանգել հետևյալին՝

1) Մխիթարը գանձակեցի «քրիստոնյա ընտանքի» զավակ էր.

2) Տարրական կրթությունն ստացել է ծննդավայրում՝ Գանձակ քաղաքում, որտեղ, հասունանալով, ձեռնադրվել է քահանա.

3) Ուսումը շարունակելու և խորացնելու նպատակով գնացել է ժամանակի (ԺԲ. դ.) նշանավոր գիտնական Հովհաննես Տավուշեցու և ուրիշ վարդապետների մոտ, նրանց հետ անցկացրել բազում տարիներ և վերջում ստացել «վարդապետի» կոչում.

4) Վարդապետ դառնալուց հետո մեկնել է Սև լեռ՝ Հայոնի գիտնականների մոտ, հետո՝ Կարին, որտեղ հանդիպել է Վրաստանից վտարված Քուրդ կառավարչին.

5) Հայրենիք վերադառնալուց հետո նա Ստեփանոս Աղվանից կաթողիկոսի պահանջով մեկնել է Խաչենի կողմերը՝ Հաթերքի տիրակալ Վախթանգի մոտ, այնտեղ մնացել որոշ ժամանակ.

6) Քուրդ առաջնորդի՝ իր հայրենիք կայեն վերադառնալուց հետո, ում թամար թագուհին հանձնել էր նրան պատկանող կալվածքները, Մխիթարը մեկնել է կայենի կողմերում՝ Աղստևի (Աղստաֆա) հովտում գտնվող Գետիկ անվանյալ վանք, որի վանահայրը իր աշակերտ Սարկավագն էր. վերջինս իր ուսուցչին՝ Մխիթարին է ղիջել վանահայրությունը.

Պատմութիւն Հայոց, Բ. տպ., 623) և Հարություն Խալփաեանը (Գիւտ Աղանեանց, Դիւան հայոց պատմութեան, ժ., 123): Տարօրինակ է **Դավիթ Բաղիշեցու** (**նույն տեղում**., 42) տվյալը՝ 1219 թ. S. Somal-ին (Qnadro della storia letteraria di Armenia, 100) և Neuman-ի (Versuch einer Geschichte der armenishen Litteratur, Leipzig, 1836, S. 176) այսպիսի տվյալ ունի՝ 1207 թ., բայց սրանցից և ոչ մեկը ճիշտ չէ:

[7] **Ոսկեան**, Մատ. քննութ., 123:

[8] **Մխիթարայ Գոշի** Դատաստանագիրք Հայոց, Յառաջաբան, 91:

[9] Հմմտ. **Ոսկեան**, Մատ. քննութ., 124.:

7) Երկրաշարժից Գետիկ վանքի հիմնահատակ ավերվելուց հետո տեղափոխվել է Տանձուտի կիրճ, Զաքարե և Իվանե Երկայնաբազուկների աջակցությամբ կառուցել Նոր Գետիկը, վերջնականապես հիմնավորվել այնտեղ և հենց տեղում էլ սկսել է գիտագրական գործունեությունը.

8) Վախճանվել է Նոր Գետիկում և հուղարկավորվել տեղում.

9) Նա թողել է բազմաթիվ աշակերտներ:

Կիրակոսն ընդգծում է, որ Մխիթարը մտերիմ է եղել Զաքարե և Իվանե Երկայնաբազուկների հետ, հատկապես առաջինի, որի «խոստովանահայրն» էր համարվում:

Լոռու ժողովի մասին խոսելիս Կիրակոսն *ուղղակի մատնանշում է Զաքարեի մոտ Մխիթարի ունեցած մեծ հեղինակության մասին: Երբ Զաքարեն վտարում է Հաղբատի եպիսկոպոս Գրիգորին կամ Գրիգորեսին, սա ստիպված թողնում է վանքը և փախչում «յաշխարհն Կայենոյ <ձեռագրում՝ կարին, sic>, ի վանքն Գետիկ առ մեծն վարդապետն Մխիթար, ապաւինութեան աղագաւ, զի գիտէր, թէ մեծ հանարձակութիւն ունի նա առ Զաքարէ»[10]:*

Ահա ինչու պարզ է դառնում, որ երբ հայոց բանակում հարց է ծագում վրացիների (կամ քաղկեդոնականների) նման ազոթք անել երկնքի տակ՝ չարժական վրանում, այդ կերպ ծիսակատարություն անելու համար, Զաքարեն, Կիրակոսի ասելով, *հարցում է անում Գոշ անվանյալ մեծ վարդապետ Մխիթարին, որ Գետիկ վանքի կառուցողն էր և իր խոստովանահայրը[11]»:*

Զաքարե ամիրսպասալարի կողմից մոտավորապես 1205 թ. Լոռիում, իսկ 1207 թ. Անիում հրավիրված եկեղեցական ժողովների մասնակիցների մեջ առաջին շարքում, որպես աչքի ընկնող վարդապետներից մեկի, նշվում է «Գօշն կոչիւր, շինող վանացն Գետակայ, այր իմաստուն եւ հեզ»[12]:

Որ Մխիթար Գոշը մեծ հեղինակություն էր վայելում մի կողմից՝ ժամանակի հայ հոգևորականության մեջ, մյուս կողմից՝ Զաքարե ամիրսպասալարի աչքում, երևում է այն բանից, որ 1207 թվին Անիում հրավիրված ժողովը նրա բացակայության պատճառով համարյա տապալվում էր: Կիրակոսն *ուղղակի ասում է, որ Զաքարեն Մխիթար վարդապետին հրավիրեց ներկայանալ ժողովին»[13], վերջին մերժեց, պատճառաբանելով «զհիւանդութիւնն եւ զանկարութիւնն »[14]: Այս հանգամանքը մեծ հուզմունք առաջացրեց ժողովի մասնակիցների մեջ, որոնք Զաքարեի առաջադրած ծիսական հարցերը չէին կարող քննարկել «առանց մեծ վարդապետին» Մխիթարի[15]: Եվ նրանք երկրորդ անգամ աղաչանքով դիմեցին նրան՝ Մխիթարին, որ անպայման՝ «գալ ի ժողովն, զի միաբան պատասխանի արասցեն զօրավարին»[16]:*

Զաքարեն ամեն միջոցի դիմում էր, որ Մխիթարը ժողովի գնալուց առաջ նախ իրեն ներկայանար: Այս իրողությունը այնպիսի չփոթմունք է առաջացնում հայ հոգևորականության մեջ, որ նրանք զայրանում են, թե այն ամենը, ինչ զորավարն անում է իրենց նկատմամբ, նրա խորհրդով է անում. «Զայս ամենայն, զոր գործէ զօրավարն ընդ մեզ, խրատու նրա գործէ»[17]:

Կիրակոսի և Վարդանի պատմություններից բացի, Մխիթարը հիշատակվում է *1184-1185 թթ. «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» թղթերի վերջում միայն՝ «Մխիթար վարդապետ Գետակայ»[18]: Դա բացատրվում է նրանով, որ այդ ժամանակ Մխիթարը համեմատաբար երիտասարդ էր, վաստակը՝ քիչ:*

Մխիթարը հիշատակվում է նաև Նոր Գետիկի մի արձանագրության մեջ, որտեղ, ի միջի այլոց, կարդում ենք՝ «640 <=1191> թվին Սալաադինի կողմից Երուսաղեմը գրավելուց չորս տարի անց Նոր Գետիկում սկսեցին սուրբ վանքի կառուցումը, որը կառուցվում էր 7 տարի՝ Մխիթար վարդապետի աջակցությամբ՝ «ձեռամբ վարդապետին Մխիթարայ», Վարդանի հայր[ապետ]ության ժամանակ»[19]:

Այս արձանագրությամբ, ի դեպ, հաստատվում են Կիրակոսի խոսքերը Մխիթարի ծավալած շինարարական գործունեության մասին Նոր Գետիկում, որտեղ նա թաղված է:

Մխիթարի չիրմաքարը այժմ էլ ցույց են տալիս, այսպես կոչված, Ս. Համբարձման եկեղեցու ավագ մուտքի մոտ[20]: Տապանաքարը արձանագրություն չունի, չնայած Յ. Սպենդիարյանը համոզում է, թե «նրա վրա այժմ հազիվ կարելի է կարդալ «Մխիթար» անունը[21]:

---

[10] **Կիրակոս**, 163:

[11] **Նույն տեղում**, 158:

[12] **Նույն տեղում**, 161-162:

[13] **Նույն տեղում**, 164:

[14] **Նույն տեղում:**

[15] **Նույն տեղում**, 165:

[16] **Նույն տեղում:**

[17] **Նույն տեղում**, 166:

[18] Թուղթ, ընդհ., 427:

[19] **Շահխաթունեանց**, Բ., էջ 367 (§ 803), **Մեսրոպ Սմբատեանց**, Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, 173, **Բարխուդարեան**, Արցախ, 350, **Կոստանեանց**, 37-38, հմմտ. **Յ. Սպենդիարյան**, նշ. աշխ., «Մշակ», 1911, Ֆ՝ր 16:

[20] **Ի. Յարութիւնեան**, Գոշայ վանք կամ Նոր Գետիկ, ԱՀ, ժ., 1903, էջ 37-38:

[21] **Յ. Սպենդիարեան**, Մխիթար Գօշի վանքը, «Մշակ», 1911 թ., Ֆ՝ր 16, 17, 18, հմմտ.,

Ավարտին լրացուցիչ դիտողություն Մխիթար Գոշի մասին:

Մխիթար Գոշ անհատի վերաբերյալ, մեր կարծիքով, կարելի է վկայել Թամար թագուհու առաջին պատմիչի այն տեղեկությունը, որը վերաբերում է Թամարի և Դավիթ Սոսլանի ներկայությամբ Տփղիսում կայացած հայ-վրացական բանակովին, որտեղ հիշատակված են հայ վարդապետներ և գիտնականներ: «Զաքարիա [ամիրսպասալարը] կաթողիկոսին ներկայացրեց մարդկանց, հանձինս նրանց՝ <այսինքն՝ հայերի>, և եպիսկոպոսներին բոլոր, վարդապետներին և գիտնականներին», կամ՝ «Եկան Վանի կաթողիկոսը և բոլոր եպիսկոպոսները, և վարդապետները»: Կամ՝ «արքայի գալուն պես «նստեցրին... վանահայրերին և վարդապետներին հայոց»[22]: Հայկական աղբյուրներից հայտնի է, որ մոտավորապես 1205-1207 թվականներին տեղի ունեցած եկեղեցական անջատողական ժողովների ղեկավարությունը հրավիրել է Մխիթար Գոշին: Մխիթարը, Զաքարե և Իվանե ամիրսպասալարների հանձնարարությամբ, ինչպես կտեսնենք ստորև՝ Թ. գլխում, առնվազն երկու անգամ ընդարձակ շրջաբերականով դիմել է նաև Վրաց կաթողիկոսին: Ահա ինչու, կարելի է ենթադրել, որ 1197-1205 թվականներին Տփղիսում կայացած հայ-վրացական բանակովիվը պետք է տեղի ունեցած լիներ Մխիթար Գոշի անմիջական մասնակցությամբ:

Ուրեմն՝ երբ Թամար թագուհու առաջին պատմիչն ասում է, որ հայերի և վրացիների միջև բանավեճը կազմակերպելու համար Զաքարեն, Վանի կաթողիկոսից և եպիսկոպոսներից բացի, հրավիրել է նաև գիտնական վարդապետների, այդ միտքը մենք, անշուշտ, այնպես պիտի հասկանանք, որ նա՝ Զաքարեն, հայերի կողմից բանավեճին հրավիրել է այն ժամանակի հայտնի վարդապետ-գիտնականներին, որոնց պարագլուխը համարվում էր Մխիթար Գոշը, և, ասպիսով, ինչպես 1205-1207 թթ. Լոռու և Անիի ժողովներում, այնպես էլ 1197-1205 թթ. Տփղիսի հայ-վրացական բանավեճում գլխավոր դերը կատարել էր Մխիթար Գոշը:

Х. Кучук-Иоаннесов, Сведения и заметки о старинных армянских рукописях и армянских надписях, находящихся в пределах России. V. Надписи в армянском монастыре Гошаванк, «Древности Восточные», т. VI, стр. 23:

22 Տե՛ս վերը՝ այս գրքի առաջին մասի Գլ. Ձ., ծնթ. 19-26 ծնթ-ներին վերաբերող հատուածը:

ԳԼՈՒԽ Է.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԳԻՏԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մխիթար Գոշի՝ հայ գրականության հարուստ գանձարանում ներդրած երկերը գնահատելու համար, անշուշտ, պետք է հիմք ընդունենք Կիրակոս Գանձակեցու այն խոսքերը, որ նա ասել է Գոշի մահից հետո. «Եւ եթող նա (Մխիթարը) յիշատակ եւ արձան գերեզմանի գիրս իմաստախոհս յօգուտ ուսումնասիրաց՝ Համառօտ մարգարեութիւնն <sic> երեմիայի՝ գեղեցկագիր կարգօք, եւ սուղ ինչ կանոնս վասն սպասաւորելոյ մարմնոյ եւ արեան Տեառն, թէ որպէս պատշաճ իցէ, կամ որպիսի կարգօք. եւ գիրք մի՝ Ողբք ի վերայ բնութեանն՝ ի դիմաց Ադամայ, առ որդիս նորա, եւ ի դիմաց Եւայ, առ դստերս նորա. եւ գիրք մի՝ Յայտարարութիւն Ուղղափառութեան (այսինքն՝ հակաքաղկեդոնեականների) հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց, ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի եւ եղբօր իւրոյ [Իվանեի], եւ այլ թուղթս խրատականս»[1]:

Այսպիսով, Մխիթար Գոշին են պատկանում հետևյալ երկերը.

1) «Համառոտ[ութիւն] մարգարէութեանն Երեմիայի».

2) «Կանոնք վասն սպասաւորելոյ, մարմնոյ և Տեառն՝ թէ որպէս պատշաճ իցէ, կամ ո՞րպիսի կարգօք».

3) «Ողբք ի վերայ բնութեանն՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա և ի դիմաց Եւայի առ դստերս նորա».

4) «Գիրք մի յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդեմ ամենայն հերձուածողաց՝ ի խնդրոյ զօրավարին Զաքարէի և եղբօր իւրոյ [Իւանեի]».

5) «Թուղթք խրատականք այլ և այլ»:

Այս ցուցակում, ինչպես ժամանակին իրավացիորեն նշել է Ի. Հա-

Որությունյանը, *հիշատակված չեն նրա «Դատաստանագիրք» [Հայոց], և «Առակքը»*[2], *հիշատակված չեն նաև «Ադոթքները»:*

1 **Կիրակոս**, 208-209:

2 **Ի. Յարութիւնեան**, Գոշայ վանք կամ Նոր Գետիկ.- ԱՀ, ժ., 15:

Թե ինչու չեն հիշատակված Մխիթարի «Առակքը» և «Ադոթքները», այդ մասին առայժմ մենք ոչինչ ասել չենք կարող: Մինչդեռ «Դատաստանագիրք Հայոց»-ի չնչելը կարելի է բացատրել նրանով, որ այս գիրքը, որպես հատուկ Աղվանքի կաթողիկոսարանի համար կազմված[3], պաշտոնական բնույթ էր կրում, և, հավանաբար, հենց այդ պատճառով Կիրակոս Գանձակեցին *այն Գոշի սեփական աշխատություն չի համարել կամ գուցե համարել է Մխիթարի այն երկերից մեկը, որը* Կիրակոսի *կողմից հիշատակված է «Կանոնք վասն սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեառն՝ թէ որպէս պատշաճ իցէ, կամ ո՞րպիսի կարգոք» վերնագրով:*

Ըստ Գ. Զարբհանալյանի *և* Ղ. Ալիշանի՝ *Մխիթար Գոշի երկերն են՝ 1) «Դատաստանագիրք» [Հայոցը], 2) «Առակքը», 3) «Համառոտ[ութիւն] մարգարէութեանն երեմիայի», 4) «Ադոթքները»[4]: Բացի այդ, նրանք հիշատակում են* Կիրակոսի *նշած «Գիրք մի յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ...», իսկ Գ. Զարբհանալյանը մասնավորապես նշում է, որ էջմիածնում գտնվում է Մ. Գոշի անունը կրող մի ճառ՝ «Ղազարոսի յարութեան վրայ»[5]:*

Հ. Ոսկյանը *Մխիթար Գոշի երկերը մեկնաբանում է հետևյալ շարքով.*

1) Դատաստանագիրք, 2) Պատմութիւն, 3) Մեկնութիւն երեմիայի, 4) Առակներ և 5) Մանր երկեր[6]:

Անձամբ մենք նպատակահարմար ենք գտնում Մխիթար Գոշի երկերը ցուցակագրել հետևյալ հերթականությամբ.

1) «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց»[7], որը բաղ-

---

[3] **Բաստամեանցը (Մխիթարայ Գոշի** Դատաստանագիրք Հայոց, Յառաջաբան, 178-179) հնարավոր է համարում, որ Մխիթարի «Դատաստանագիրք Հայոց»-ը Խաչեն-Աղվանքից բացի, ընդունված է եղել նաև Լոռում, թեկուզ սույնը հաստատելու համար փաստեր չի բերում:

[4] **Գ. Զ[արբհանալեան]**, Հայկական հին դպրութեան պատմութիւն, 691-696, **Ալիշան**, Հայապատում, Ա., 101:

[5] **Զ[արբհանալեան]**, նշ. աշխ., 697-698:

[6] **Ոսկեան**, Մատ. քննութ., 145 և հջրդ.:

[7] Տարբեր հավաքածուներում պահպանված բազմաթիվ ձեռագրերի նկարագրությունը տե՛ս **Ոսկեան**, նշ. աշխ., 151-175, նույն տեղում՝ **Բաբգէն եպ. [Կիւլեսէրեան]**, Մխիթար Գոշի վերաբերյալ ձեռագիրք Երուսաղէմի սրբոյ Յակոբեանց ձեռագրաց մատենադարանի մէջ, 158-175, Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց. Իրաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթութեամբք **Վահան Բաստամեանց**, Վաղ., 1880, էջ 180+442+ժԲ. գրականություն՝ **M. Brosset**, Rapport sur un Manuscrit armenien Mkhitar-Gosh.- "Bulletin de l'Academie des Sciences", t. VI, 380-382, "Melanges Asiatiques", t. I, 1848-1852, pp. 150-152: **Я. Тер-Иоаннисян**, Древне-армянское законадательство по Мхитару Гошу.- "Юридическое Обозрение", 1884 г., № 191, **С. Арцруни**, Кодекс Мхитара Гоша.- "Юрид. Обозрение", 1885 -1886 гг., № 226, 230, 251, 254, 255, 260, 264, 290, его-же, Историко-догматическое значение "Судебника" Мхитара Гоша, Тфл., 1890, стр. 1-16, **J. Karst**, Armenisches Rechtsbuch. Zweiter Band. Sempadscher Kodex aus dem 13. Jahrhundert in Verbindung mit dem Grossarmenishen Rechtsbuch des Mechithar Gosch (aus dem 12. Jahrhundet) etc., Strassburg, 1905, S.S. 1-424, **Խաչիկ Սամուէլեան**, Մխիթար Գօշի Դատաստանագիրքն ու հին հայոց քաղաքացիական իրաւունքը [ԱՄ ԿԳ.], Վն., 1911, էջ 1-344:

[8] **Մխիթարայ Գօշի** Դատաստանագիրք Հայոց, 5-75:

[9] **Նույն տեղում**, 81-294:

[10] **Նույն տեղում**, 299-442:

[11] **Նույն տեղում**, 442:

[12] Վիեննայի,Վենետիկի, էջմիածնի և Երուսաղեմի բազմաթիվ ձեռագրերում (տե՛ս **Ոսկյան**, 189, հմմտ., **Տաշյան**, Ցուցակ, 165, 831, հրատարակված է երկու անգամ, առաջինը՝ Առակք և ոտանաւորք խրատականք, առացեալ ի նախնեաց մերոց ի հրահանգ ուսումնասէր համբակաց, Վնտ., 1790, էջ 1-154, երկրորդ անգամ՝ Առակք Մխիթարայ Գօշի և Ողոմպիանու, Վնտ., 1842, էջ 1-172, երրորդ անգամ, բայց նույն վերնագրով՝ Վնտ., 1854, էջ 1-164, թարգմանությունը՝ արդի հայերենով՝ **Խորէն քահ. Միրզաբէկեանց**, Բագու, 1878, ֆրանսերենով՝ **Fr. Macler**, Choix des fables arméniennes attribuées à Mechitar Gosh.- «Journal Asiatique», ser. IX, t, XIX, 1902. pp. 457-487, և առանձին՝ Paris 1902, թերի թարգմանությամբ՝ **Le Vailiant le Florivat**, Coup d'œuil sur l'Arménie, Paris, 1846, pp. 42-45:

[13] Նկարագրած է **Գ. Սրուանձտեանց**, Թորոս Աղբար, Բ., Կ. Պոլիս, 1885, էջ 396, **Տաշեան**, Ցուցակ, 686, նույնի՝ Ցուցակ հայերէն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Միւնխէն, Վն., 1892, էջ 17, 10 և այլն: Հրատարակված է՝ Գիրք աղօթից, Կ. Պոլիս, 1847, էջ 353-360 (Համառօտութիւն աղօթից եռամեծի և քաջ վարդապետի Մխիթարայ Գօշի խստակրօն ճգնաւորի և բանիբուն հռետորի՝ ասացեալ ի սուրբ պատարագին):

[14] Նկատի ունի 1167 թ. հունվարի 10-ին մահկանացուն կնքած Խոսրով Գանձակեցուն: Ճառընտիրից վերցրածը հրատարակել են՝ առաջին անգամ՝ **Գալուստ Տեր-Մկրտչյանը** նույն վերնագրով.- Ա, 1897, էջ 37-41, երկրորդ անգամ՝ **Հ. Մանանդյանը** և պրոֆ. **Հր. Աճառյանը** «Հայոց նոր վկաները», գիտ. հրատ., Վաղ., 1903, էջ 32-39:

կացած է Նախադրութիւնից[8] և երկու մասից, նրանցից առաջինն է «եկեղեցական կանոնք»[9], իսկ երկրորդը՝ «աշխարհական օրէնք»[10], վերջում գրված է՝ «կատարեցաւ գպրութիւն դատաստանաց թագաւորաց և իշխանաց և ամենայն դատաւորաց»[11]:

2) «Առակք առաւսպելականք և բարոյականք, որ կերպարանէ զճշմարտութիւն, ասացեալ սուրբ վարդապետին Մխիթարայ, որ մականուն Գոշ ասեն սրբոյն»[12]:

3) «Եռամեծի և քաջ վարդապետի Մխիթարայ Գոշի խրատակրօն ճգնաւորի և բանիբուն հռետորի ասացեալ զԱղաւթս»[13]:

4) «Մխիթարայ վարդապետի մականուն կոչեցեալ Գոշ՝ Ներբողեան ասացեալ ի նոր վկայն կոչեցեալն Խոսրով»[14]:

5) «Մխիթարայ Գոշի՝ Մեկնութիւն Մարգարէութեանն Երե-

միայի մարգարէի»[15]*: Այս՝ անշուշտ, Կ. Գանձակեցու կողմից հիշատակածն է՝ «Համառօտութիւն մարգարէութեանն Երեմիայի» (Ձ^ռ 1):*

6) «Ճառ վասն յարութեան Ղազարու, ի Մխիթար Գոշէ»[16]*:*

7) «Փիլոնի յաղագս նախախնամութեան. բան առաջին, առ Աղէքսանդրոս, Գոշին ասացեալ պատճառ»[17]*, գետեղված է Արասաորդի Գրիգորի «Գիրք պատճառաց»-ում: Հնարավոր է, որ այս նամակը Կիրակոս Գանձակեցու հիշատակած «Ողբք ի վերայ բնութեանս»-ի ներքո լինի (Ձ^ռ 3):*

8) Պատմական ակնարկ, որը կցված է «Դատաստանագրքին», և որտեղ պահպանված է ԺԲ. դարի Աղվանից կաթողիկոսների ցուցակն ու դեպքերի նկարագրությունը[18]*:*

9) Գծագրութիւն... յաղագս Վրաց[19]*:*

Անհասկանալի է Կիրակոսի հիշատակած «Կանոնք վասն սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեառն» (Ձ^ռ 2), «Գիրք մի յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ» (Ձ^ռ 4)[20] *և «Թուղթ խրատանքը» (Ձ^ռ 5):*

Մխիթար Գոշը վրաց գրականության մեջ լավ հայտնի է իր «Դատաստանագիրք Հայոց»-ով, որը ԺԸ. դարի սկզբին որոշ կրճատումներով ու փոփոխություններով վախտանգ Զ.-ի հրամանով փոխադրվեց վրացերենի՝ համաձայն այն ձեռագիր օրինակի, որը հատուկ Թիֆլիսի համար դուրս էր գրվել էջմիածնից: «Դատաստանագիրք Հայոց»-ի վրացերեն տարբերակը ներառված էր «Վախթանգի օրենքներ» ժողովածուի մեջ՝ «Կանոնագիրք Հայոց»[21] *պարզունակ վերնագրով:*

Գոշը վրաց գրականության մեջ հայտնի է նաև այլ առումով. Անտոն կաթողիկոսը նրան հիշատակում է իր «Էրիստիկա»-ի 4-րդ գլխում, որտեղ բնութագրում է «կաթոլիկ եկեղեցու թշնամիներին, անարժան քահանաներին, չարամիտ վարդապետներին, այն հայերին, որոնք ամբողջովին գործում են ընդդեմ ճշմարիտ դավանքի» և ի միջի այլոց ասում է. «Գոշիկ Վանական. սա ասում էր անարդար և արդար հոգիների մասին, որոնք երկրի վրա և մարդկանց միջև բնակվում են համատեղ»[22]*: Իսկ իր երկի նախաբանում բացատրում է. «Տեսա ես գրքերը հայ վարդապետների՝ և՛ Հովհան Օձնեցու, և՛ Պողոս Տարոնացու, և՛ Ստեփանոս Սյունեցու, և՛ Գոշիկ Վանականեցու*[23]*, և՛ Վարդանի, և՛ Սարգսի, և՛ Մաշտոցի, և՛ Հովհան Որոտնեցու, և՛ Գրիգոր Տաթևացու, և՛ Գրիգոր Կեչառեցու, և՛ Ղազար Ջահկեցու և՛ Հակոբ Ակնեցու: Դրանց մի մասը պակաս եմ ուսումնասիրել, մյուս մասը՝ ամբողջովին, բայց բոլորն էլ մեզ էին ուղղված հայհոյանքներով, ուստի վիրավորվեցի և ես էլ սկսեցի վերը նշված այդ հերետիկոսների դեմ հանդես գալ»*[24]*:*

Թե Մխիթար Գոշի որ գրվածքը կամ գրվածքները նկատի ուներ Անտոն կաթողիկոսը, դժվար է ասել. պարզ է միայն, որ նրան կոչում է «Գոշիկ Վանական», resp. «Գոշիկ վանականեցի», այսինքն՝ Գոշիկ[25] *կրոնավոր: Նա նրան համարում է հերձվածող և հիշատակում է՝ հայ «հերետիկոս» (այսինքն՝ հակաքաղկեդոնիկ) վարդապետների չարքում:*

[15] Բազմաթիվ ձեռագրերի տեսքով գտնվում են հետևյալ գրապահոցներում՝ էջմիածնի (**Յ. Կարինեանց**, Մայր Ցուցակ, 152, 153, **Մեսրոպ** վ. [**Տէր-Մովսէսեան**], Նիւթեր Ս. Գրքի ուսումնասիրութեան.- Ա, 1904, էջ 215), ինչպես նաև Բարձրահայացի (**Գ. Սրուանձտեան**, Ձշ. աշխ., Բ., 394), Վիեննայի Մխիթարեան Միաբանության (**Տաշեան**, Ցուցակ, 19), Ջմյուռնիայի (**Ոսկեան**, Մատ., քննութ., 188) և այլն: Հրատարակված չէ:

[16] Էջմիածնի թանգարանի ձեռագրում (**Յ. Կարինեանց**, Մայր Ցուցակ, 153), հմմտ. **Գ. Զ[արբհանալեան]**, Ձշ. աշխ., 697-698: Հրատարակված չէ:

[17] **Տաշեան**, Ցուցակ, 224: Հրատարակված չէ:

[18] Հրատարակված է Ղ. Ալիշանի կողմից (Հայապատում, Բ., 384-391, հմմտ. Ոսկյան, Ձշ. աշխ., 180-184:

[19] Էջմիածնի թանգարանի երկու չնկարագրված ձեռագրերի համաձայն հրատարակվել է անանուն հեղինակի (Կարապետ Տեր-Մկրտչյանի՞) կողմից, «Արարատ» ամսագրում, չակերտների մեջ առնված հետևյալ վերնագրով՝ («Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գոշն կոչիւր».- Ա, 1900 թ., էջ 497-504, 562-568, 1901 թ., էջ 55-61,121-127): (Մենք ստուգել, զուգադրել ենք հին հավաքածուի Ձ^ռ 631 ձեռագրի հետ, էջ 17ա-45բ):

[20] Այս «հայտարարության» մասին տեղեկություն կա ქართველთათვის («Վրացիների համար») գրվածքում (Ա, 1900, էջ 497):

[21] Հրատարակված է հետևյալ վերնագրով. «Սամարթալի սոմխուրի» (Կանոնագիրք Հայոց): Վրացերեն տարբերակ, իրականացվել է Վախտանգ Զ.-ի հրամանով: Հրատ. **Լևոն Մելիքսեթ-Բեկը** /Monumenta Georgica. IV. Leges, № 2], Տփղ., 1927, էջ 42-156, სამართალი სომხური. ქართული ვერსია, შესრულებული ვახტანგ VI-ის ბრძანებით, გამოსცა ლეონ მელიქსეთ-ბეგმა [Monumenta Georgica. IV. Leges, № 2], ტფ. 1927, გვ. 42-156, հատկապես տե՛ս Առաջաբանը, էջ IX-X: Հենց այնտեղ՝ 240-245 էջերում, բերված է հայերեն և վրացերեն բնագրերի ամփոփիչ աղյուսակը, իսկ 249-250 էջերում՝ գրականությունը:

[22] Էրիստիկա, 111:

[23] Պետք է լինի «վանականի», քանզի «վանականեցին» ցույց է տալիս որտեղացի լինելը: Թվում է՝ -կան-ը -կանին տեղանուն պետք է լինի, մինչդեռ այն կրոնավոր է նշանակում:

[24] Էրիստիկա, 4:

[25] Սովորական վերջավորություն է -իկ-ը, ինչպես, օրինակ, Յուսիկ, Խաչիկ, Գագիկ, Գառնիկ, Թոռնիկ, Մեղրիկ եւն:

ԳԼՈՒԽ Ը.

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ը ԵՎ ՎՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՐԱՆՈՒՄ

«Դատաստանագիրք Հայոց»-ը, որը կարելի է Մխիթար Գոշի լավագույն երկը համարել, քննության արժանի է բազմաթիվ կողմերով, գլխավորապես այն առումով, որը պետք է փնտրենք Վրաստանի պետականության պայմաններում:

«Դատաստանագիրք Հայոց»-ը հայ հին գրականության առավել բարձրարժեք հուշարձաններից է: Ջնայած այն չնչին չափով կրում է Դավիթ Ալավկա որդու «Կանոնագրքի» ազդեցությունը[1], այնուամենայնիվ, շատ մեծ նշանակություն ունի՝ որպես միանգամայն ինքնուրույն երկ, և ներկայացնում է հայ հին իրավաբանական գրականության հիմնասյունը, և որի հիման վրա ԺԳ. դարում ստեղծվեց Կիլիկիայի Սմբատ Սպարապետի «Յաղագս դատաստանաց թագաւորացն» և այլ Դատաստանագրքեր՝ Մոլդովա-Վալախիա-Գալիցիա-ում, Լեհաստանում, Ղրիմում, Վրաստանում և Հարավային Ռուսաստանում[2]: Նրա մասին շատ է գրվել և դեռ էլի կգրվի:

Այս երկը մեզ համար նշանակալից է և այն աղբյուրների առումով, որոնց վրա նա հիմնվել է, և որոնք թվարկված են նրա Նախադրության Ժ. գլխում:

«Առաջին՝ հաւատարիմ համարիմք ի բնաւորական օրինացն առնուլ, զոր ունէին նահապետքն Աբրահամ և այլքն առանց գրոց...

Երկրորդ՝ առնումք յամենայն ազգաց Քրիստոնէից իբրևի հարազատ եղբարց, *զոր լուաք և տեսաք ի նոսա բարւոք դատաստանս՝ հաւանքեմք ի գիրս:*

Երրորդ՝ առնումք և ի մահմետականաց, ո՛չ զոր նոքա ուսան ի Մահմետայ զախտաւոր բանս կամ զդատաստանս, այլ զոր առին ի Մովսիսի օրինացն՝ մեք զայնս ընտրեմք և առնումք...

Այս են ազգքն, յորոց ընտրեմք և հաւաքեմք զդատաստանս:

[1] Տե՛ս վերը՝ այս գրքի երկրորդ մասի Թ. գլխի 20-25-րդ ծնթ. վերաբերող մասը:

[2] **Մխիթարայ Գօշի** Դատաստանագիրք Հայոց, 21-63, 104-108:

Իսկ ի գրոց - առաջինն՝ յելից և յերկրորդ Օրինացն, և յայլ ևս գրոցն, որ է ստոյգ Աստուածոյ օրէնք և դատաստանք...

Երկրորդ՝ ի կանոնական գրոց, զի և անդ ոչ միայն զօրութեամբ գտանի դատաստան...

Երրորդ՝ առնումք յամենայն Գրոց ի Հին և ի Նոր Կտակարանաց, ...յառաջ յառաքելոցն եղաւ և ապա ի Նիկիա, և յառաջ քան զնա այլք, և ապա յայլ և յայլ ժամանակս ի ժողովոց և ի հարց, որք զհետ եկին...»[3]:

Այսպիսով, Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»-ի հիմքում ընկած աղբյուրները բաժանվում են հինգ կարգի՝ 1) Բնաւորական օրենքներ, 2) Քրիստոնեական ազգերի իրավունք, 3) Մահմեդական իրաւունք (ի Մովսիսի օրինացն), 4) Հին և Նոր Կտակարաններ և 5) Հայոց [եկեղեցական] կանոնական գրքեր[4]:

Ճիշտ է, Մխիթար Գոշը տեղ-տեղ ցույց է տալիս իր աշխատության այս կամ այն հոդվածի մեջ օգտագործած սկզբնաղբյուրը, բայց այդ սկզբունքին նա միշտ չէ, որ հետևում է: Ահա թե ինչու, խնդիր է ծագում, որ մեկ առ մեկ փնտրենք Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»-ի սկզբնաղբյուրները: Այս աշխատանքը հնարավորինս կատարել է «Դատաստանագիրք Հայոց»-ի գիտական հրատարակության հեղինակ Վահան Բաստամյանցը: Վահան Բաստամյանցը որքան մանրամասն է քննել Հին ու Նոր Կտակարանների և եկեղեցական կանոնական գրքերից գրանցումները երկում, նույնքան թույլ է ներկայացրել, այսպես կոչված, բնավորական օրենքները նույն երկում: Համեմատաբար լավ է պարզաբանված «Դատաստանագիրք Հայոց»-ի և, այսպես կոչված, «Կանոնական գրքերի ժողովածուի» փոխհարաբերության հարցը, որը քննարկված է Սիրական Տիգրանյանի հոդվածում[5]:

Բայց մենք ցանկանում ենք ուշադրություն հրավիրել հատկապես Մխիթարի վերաբերյալ հայտարարության այն մասի վրա, որտեղ ասված է, թե նա՝ Մխիթարը, ինչ լավ բան որ լսել և տեսել է քրիստոնեական ազգերի օրենքներում, բոլորը վերցրել է ինչպես հարազատ եղբայրներից՝ «իբրև ի հարազատ եղբարց»:

Նախ և առաջ, այստեղ, իհարկե, նկատի են առնված հույներն ու վրացիները: Որ Մխիթար Գոշը հույներին, ավելի ճիշտ, բյուզանդական օրենքները լավ գիտեր, դրա մասին ինքն է վկայում:

[3] **Նույն տեղում**, 65-66.

[4] Հմմտ. **Խ. Սամուելյան**, նշ. աշխ., 43-45:

[5] **Сиракан Тигранян**, "Судебная Книга" Мхитара и "Книга Канонов".- Изв. КИАЙ, т. III, стр. 61-72.

դացիներին նկատի ունի, սա միանգամայն բնական է և սպասելի: Բայց որ վրացիներն էլ որոշակի տեղ են զբաղեցրել նրա գրքում, ճիշտ է, զարմանալի չէ, սակայն որոշ բացատրություն-մեկնաբանություն է պահանջում: Մենք չենք կարծում, թե այս իրողությունը պայմանավորված է միայն և միայն հայերի ու վրացիների հարևանության փաստով, որովհետև հարևանությունից բացի, մենք գործ ունենք նաև այնպիսի գործոնի հետ, ինչպիսին է այն ժամանակվա Վրաստանի պետականությունը:

Մենք գիտենք, որ Մխիթար Գոշը վախճանվել է 1213 թվականին, իսկ «Դատաստանագիրք Հայոց»-ը, ինչպես ինքն է վկայում «Նախադրության» վերջում, կազմել է 1184 թվականին:

«Բայց ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութիւն եղև ի թուականութեանս Հայոց ՈԼԳ. ... յամս անիշխանութեան թագաւորութեան մերոյ ի վաղնջուց, ի ժամանակի մնացելոց սակաւ իշխանաց ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս... Հասանայ կրօնաւորեցելոյ և որդւոյ նորա Վախտանգայ, ի դղեկին որ անուանի Հայթերք, գլխաւորի այլոց իշխանաց, և կողմանցն Կիւղիկիայ մեծի իշխանին Ռուբէնին, յամի որում մեռաւ յաղթող թագաւորն Վրաց Գէորգի, *ի հայրապետութեան տեառն Գրիգորի Հայոց Մեծաց և ի դիտապետութեան տեառն Ստեփաննոսի տանս Աղուանից, յաշխարհիս Առանայ, ի նահանգիս որ կոչի մայրաքաղաքին Գանձակ, յանապատս և յեղբարանոցս անուանեալ Դասնոյ, սկզբնաւորեալ ի լեռնակողմն մենաստանին կոչեցելոյ Հոռոմաշէն, ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեաց կուսաստանացն յիշեցելոց, ձեռնտուութեամբ հօր Յովսէփայ, և եղբօր Պաւղոսի յորդորմամբ յառաջարկութիւնս...*[6]:

Այսպիսով, «Դատաստանագիրք Հայոց»-ը սկսել է 633 = 1184 թվականին, Գիորգի Գ.-ի մահվան տարին, Կիլիկիայում Ռուբեն Մեծի թագավորության, Գրիգոր Տղայի Հայոց Հայրապետության և Ստեփանոսի Աղվանից կաթողիկոսության ժամանակ, Առանց երկրի Դասինի վանքում, Հայր[ապետ] Հովսեփի և մերձավոր եղբայր Պողոսի աջակցությամբ՝ «եղբօր Պաւղոսի ձեռնտուութեամբ»: Սա նշանակում է, որ, նախ՝ հիշյալ «դիրքը» կազմվել է 1184-1213 թվականների միջև կամ Թամարի թագավորության ժամանակ, երբ, այսպես կոչված, «Հայուսիսային կողմերը» ամբողջովին Վրաստանի սահմանների մեջ էին մտցված, և, երկրորդ, որ Մխիթարը մինչև 1184 թվականը դեռևս Հին Գետիկում չէր հիմնավորվել, ուստի

[6] **Մխիթարայ Գօշի** Դատաստանագիրք Հայոց, 69-74:

նրան գետիկցի չէին կարող կոչել, ինչպես հիշատակված է «Հայուսիսային կողմանց Հայոց վարդապետների»՝ Գրիգոր Կաթողիկոսին հղված թղթում:

***

Ձորտատիրական ինստիտուտի մասին «Հյուսիսային կողմեր»-ում ընդհանրապես շատ քիչ տեղեկության ենք հանդիպում, այն էլ հիմնականում այս կամ այն վանքի արձանագրության ցրիվ տրված մեկ-երկու տերմինի տեսքով[7]*: Այս առումով Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»-ը պահպանել է ուշագրության արժանի որոշ տեղեկություններ, որոնք հասկանալու բանալին, ըստ Գալուստ Տեր-Մկրտչյանի՝ պետք է փնտրենք Վրաստանի պետականության մեջ*[8]*: Դրանք են՝ Բ., 1, մանակիորեն (ըստ Բաստամյանցի հրատարակության՝ էջ 317*$_{13\text{-}15}$*) = վրց. տարբերակով՝ 152 (մեր հրատարակությամբ՝ էջ 49*$_{24\text{-}26}$*) կամ 430 (մեր հրատարակությամբ՝ էջ 156*$_{11\text{-}13}$*), Բ., 20 =վրց. 204, Բ., 21 = վրց, 205, Բ., 22 =վրց. 206*[9]*: Կասկածից դուրս է, որ այս հարցը հատուկ քննարկում է պահանջում. այդ պատճառով բավարարվում ենք միայն գոյություն ունեցող կարծիքի արձանագրմամբ*[10]*:*

Մի հոդված (Բ., 71) կարծես հիշեցնում է մայրիչխանության այն ինստիտուտը, որի մասին մեզ պատմում է մ. թ. ա. Գ. դարի հույն նշանավոր գրող Ապոլլոնիոս Հռոդոսցին իր Ἀργοναυτικά-ում (Գ., 200-209), երբ խոսում է կոլխիդացիների մասին. «Կոլխիդացիների մեջ,- նշում է Ապոլլոնիոսը,- մեծ սրբապղծություն է համարվում տղամարդկանց դիակներն այրելը. նրանց դիակները ո՛չ հողում թաղել կարելի է, ո՛չ վրան հող լցնել կարելի է. նրանց դիերը փաթաթում են եզի անմշակ կաշվով և քաղաքից դուրս՝ հեռու մի տեղ, կախում ծառից, և հողն էլ իրենը վերցնում է այնպես, ինչպես՝ օդը,

[7] Հմմտ. **Կոստանեանց**, Վիմական տարեգիր:

[8] **Գալուստ Տէր-Մկրտչեան**, Հայկականք Ա-ԺԲ. (Armeniaca I-XII), Վաղ. 1894, էջ 683): Իզուր է նա ձգտում այս երևույթը բացատրել Մխիթարի *անհատական վերաբերմունքով* հանդեպ Զաքարե և Իվանե Երկայնաբազուկների կամ Վրաստանի այլ պաշտոնյաների:

[9] **Մխիթարայ Գօշի** Դատաստանագիրք Հայոց, 320-321, 317, 335-336, 336, 337 Կանոնագիրք Հայոց, 59, 70, 70, 70-71 (სამართალი სომხური, 59, 70, 70, 70-71):

[10] Պրոֆ. Ս. Եղիազարովի (**С. Егиазаров**, Исследование по истории армянского права публичного и частного, в. I, Киев 1919, стр. 8-9) կարծիքով՝ Հայաստանում ճորտատիրությունը Բյուզանդիայից և Վրաստանից պետք է անցած լիներ, հակառակ կարծիքը տե՛ս Записки Коллегии Востоковедов, т. I, Лнгр., 1925, стр. 488:

քանի որ հողին հանձնում են կանանց դիերը: Այսպիսին է նրանց <այսինքն՝ կոլխիդացիների> մեջ արմատավորված սովորույթը»[11]*.*

Այս դրույթը ԺԲ-ԺԳ. դարերում ընդունել է հետևյալ տեսքը (մահապարտների համար):

Ըստ Մխիթար Գոշի «Հայոց Դատաստանագրքի»՝ Բ. 71 (Յաղագս դատաստանաց մահապարտաց մեռելոց):	*Նույնը վրացերեն տարբերակով՝ 263*
Եւ եթէ հասանիցեն ումեք մեղք մահապարտութեան, և մեռանիցի, կախեսջիք զնա զփայտէ, և մի՛ ագանիցէ մարմին նորա ի փայտին, այլ թաղելով թաղեսջիք զնա ի նմին աւուր, զի անիծեալ յԱստուծոյ է ամենայն որ կախիցէ զփայտէ: *Զի թէպէտ ամենայն օրինադրութիւնս ոչ միայն առ ճառն, այլ և առ ի միտսն բազում ունի պատճառս, այլ մեզ որքան հարկաւորն է իրաւանց դատաստանի առնլի է: Եւ զի անդ Իսրայէլի զազգայինոցն ասացաւ թաղել զմարմինս, և զի մերոց թագաւորաց ոչ հրամայեցաւ զհաւատացեալ սպանանել, բայց միայն խրատել: Իսկ եթէ այլազգի պատահի ի մահ դատապարտելն, ոչ է արտաքոյ իրաւանց, զբնութիւնս պատուելոյ աղագաւ թաղել տալ հրաման՝ յորում աւուր և իցէ»*[12]*:*	*Եթե մեռնի որևէ մեկը մահվան արժանի մահով, նրան չպիտի կախեն ծառից և ոչ էլ նետեն մի կողմ, նույն օրը պետք է հողին հանձնեն: Անիծված է կախողը: Եվ եթե այլ ազգից լինի մեռնողը, նրան չպիտի պահեն: Արդար կլինի, որ հողին հանձնեն նույն օրը*[13]*:*

Ինչպես այս հոդվածը, այնպես էլ Ապոլլոնիոս Հռոդոսցու *աշխատության հիշատակված դրույթը, իհարկե, արժանի են առանձնակի*

[11] **В. Латышев**, Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, т. I, стр. 418. Չպետք է մոռանանք, որ Մխիթարի «Դատաստանագիրք Հայոց»-ի հնագույն ձեռագրում, էջմ. հին հավաք. № 488 (=492) 1295 թ., այս պարագրաֆը, ինչպես ժամանակին իրավացիորեն նշել է Վ. Բաստամեանցը (Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, էջ 386, ծնթ. 827) ամբողջությամբ չի պահպանվել, բայց մնացած ձեռագրերում կա:

[12] **Մխիթարայ Գօշի** Դատաստանագիրք Հայոց, 386-387:

[13] Կանոնագիրք Հայոց, 91 („სამართალი სომხური“, 91):

քննության երկրորդ կանոնագրքի ԻԱ. գլխի 22-րդ և 23-րդ հոդվածների համեմատությամբ: Այդ պատճառով այստեղ մենք դրա վրա կանգ չենք առնում:

* * *

Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»-ում կա մի քանի հոդված («Նախադրության» 6-րդ գլուխը մասնակիորեն, Ա. 65, Ա. 06, Բ. 1 մասնակիորեն), որտեղ այս կամ այն հարցը պարզաբանելիս նկատի է ունեցել վրացիների որոշ սովորույթներ:

Դրանց թվում մեկը՝ (Ա. 65) ատելությամբ է ներարկված քաղկեդոնականության դեմ և շատ լավ է բնորոշում հեղինակի գաղափարական դիրքորոշումը:

Մխիթարն ասում է.

«Եթէ ոք զքառասունսն պահեսցէ սուրբս և Զատկի հինգշաբթի օրն քան զհաղորդել օրինացն և բաժակին սրբոյ աւելի ինչ համարձակեսցի ուտել, զպահսն զոր պահեաց՝ ընդունայն է և ի մեծ ժողովոյն նգովեալ:

Զայս և ի Նիկիայ ժողովն եղին - յայնմ աւուր սակաւ չորակեր լինել:

Լուիցեն Յոյնք և Վիրք *զդատաստան կերոզաց զօրն մեծ, զի ոչ Գանգրայն ժողովեալք և ոչ Նիկիայն Հայք էին, այլ յամենայն ազգաց, մանաւանդ Յունաց: Եւ այս դատաստան անլուծանելի է ի վերայ նոցա, զի ոչ յարժանաւոր ժողովոյ լուծանել, այլ ի խոտորեալ և* յանարգեալ ժողովոյն Քաղկեդոնի»[14]*:*

Մենք չենք անդրադառնա այն հանգամանքին, թե այս հոդվածում առաջադրված մեղադրանքը որքանով է համապատասխանում իրականությանը, նաև այն, թե ինչով է հարուցված այս մեղադրանքը[15]*: Մեզ համար էական նշանակություն ունի միայն այն փաստը, որ Մխիթարը՝ որպես ուղղափառ հակաքաղկեդոնական, նույնիսկ «Դատաստանագիրք Հայոց»-ում չի խուսափում Քաղկեդոնի ժողովի քննադատությունից, որին հետևողները հույներն ու վրացիներն են եղել: Եվ հենց դրանով է բացատրվում այն, որ, Մխիթարի երկի վրացերեն թարգմանության մեջ այդպիսի հոդվածի ներառումը աններելի կլիներ: Այդ պատճառով, այս հոդվածի բովանդակությունը փոխեցին, և հույների, վրացիների ու Քաղկեդոնի ժողովի*

[14] **Մխիթարայ Գօշի**. կլն., 164-167:

[15] **Վ. Բաստամեանց (նույն տեղում.**, էջ 165-167, հմմտ. 322, 323): Այս մասը թյուրիմացության արդյունք է համարվում:

հիշատակումի մասը հանելով՝ նրան տվեցին հետևյալ տեսքը (Հայ. Ա. 65 = վրց. 306):

«Եթե որևէ մեկը 40 օր պահպանի և Հարության Մեծ հինգշաբթի սուրբ հաղորդությամբ ընդունվածից ավելի պաս ուտի, քան մինչ այդ պասը պահել է, նա բոլորովին վատն է և մեծ ժողովից անիծված և նմանապես՝ Նիկիայի ժողովից: Քանզի եթե մինչ այդ օրը պահել է, այդ օրն առավել ևս պետք է պահի և վարվի այսպես. չոր հաց ուտի. ամեն քրիստոնյա պետք է իմանա ուտելու կանոնը Մեծ Հարության օրը»[16]*:*

«Նախադրության» 6-րդ գլխում, որը վրացերեն տարբերակում չենք գտնում[17]*, Մխիթարը խոսում է այն մասին, «Թէ ո՞րպէս պարտ է լինել դատաւորաց, և չարախօսաց և դատախազաց» և մանրակիրճ անդրադառնում է գործի քննարկմանը մասնակցած դատավորների կազմին:*

Նա ասում է. «...այժմ երկոտասան կարգեցին դատաւորս՝ ըստ երկոտասան առաքելոցն, ոչ միայն զի ի բազմացն քննութենէն ճշմարիտ և իրաւ լիցի դատաստանն, այլ զի ի բազմացն վկայութենէ ճշմարիտ, անկասկած և ահաւոր լիցի ատեան դատաստանին: Իսկ Յոյնք *երեք կացուցին զդատաւորսն,* նոյնպես և Վիրք՝ *ի նոցունց ուսեալք, ըստ թուոյ Երրորդութեանն կամ ըստ համարոյ վկայիցն: Եւ մեզ նոյնս է հաճելի երեքն, զի այլ բազում քան զայս զդժուարաւ գտանի յամենայն տեղի»*[18]*:*

Մեկ հոդված (Ա. 106), հատուկ նվիրված է Վրաստանի «ազատներին»[19]*: Այն մոտավորապես ճիշտ է վրացականացված, տարբերությունը սոսկ այն է, որ թարգմանության մեջ անտեսվել է վերջում գետեղված հետևյալ նախադասությունը. «լուիցեն ազատք որ ի Վիրս, զի այսպիսի լուծին զուղիղ և զնախագոյն կանոնական հրաման»:*

Ի վերջո, Մխիթարի գրքում հանդիպում ենք նաև այսպիսի հոդվածի (Բ. 1 մասնակիորեն՝ <Վ. Բաստամյանցի *հրատարակմամբ էջ 317*$_{4\text{-}6}$*>), որը բաց է թողնված վրացական տարբերակում և որը եթե այնտեղ լիներ, կզետեղվեր հետևյալ հոդվածի տակ՝ 152 (մեր հրատարակությամբ՝ էջ 49*$_{20}$*, նախադասությունների միջև) = 429 (մեր հրատարակությամբ՝ էջ 156*$_{5}$*-ից հետո, մինչև 157*$_{6}$*-ը): Նրանում նշված է, թե «որքան անարդար են այն տերերը, ովքեր հատացյալներին ստիպում են տուրք վճարել, ինչպես այլազգիները՝* <մահմեդականներն> *են պարտադրում, քանզի տուրք այլազգիներից պետք է վերցնել և ոչ թե նրանցից՝ հավատացյալներից» և ավելացնում է, թե այդպես վճարել են տալիս (վերցնում են)* վրացիները *«որպէս և առնեն Վիրք»*[20]*:*

[16] Կանոնագիրք Հայոց, 105 (სამართალი სომხური, 105):

[17] Հմմտ. Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, Յառաջաբան, էջ 100, 118-119:

[18] Նույն տեղում, 30-31:

[19] «Ազատ» տերմինի մասին տե՛ս **И. Джавахов**, Государственный строй древней Грузии и древней Армении, т. I, [ТР VIII], Спб., 1905, стр. 59-60, 132-133, **Հակոբ Մանանդյան**, Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում.- «Bulletin de l'Université d'État de la R.S. S. d'Arménie», № I, Երևան, 1925, էջ 27-45:

[20] **Մխիթարայ Գօշի** Դատաստանագիրք Հայոց, 317, այս հոդվածի պարզաբանման մասին տե՛ս **Հակոբ Մանանդյան**, Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում.- "Bulletin de l'Institut des Sciences et des Arts de le Republique S. S. d'Arménie", № 1, Երևան, 1926, էջ 9:

ԳԼՈՒԽ Թ.

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԸ ԵՎ ՆՐԱ «ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ... ՅԱՂԱԳՍ ՎՐԱՑ»-Ը

Մխիթար Գոշը ակներև ներկայացուցիչն է այն «Հայոց վարդապետների», ովքեր գործունեության նպատակ են համարել հակաքաղկեդոնականության հաղթանակը և քաղկեդոնականության պարտությունը: Նա այն չորս գլխավոր հենասյուներից մեկն է (1. Անանիա Սանահնեցի, 2. Հովհաննես Սարկավագ, 3. Գրիգոր Տուտեորդի, 4. Մխիթար Գոշ), որոնք արտահայտում են, այսպես կոչված, «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» գաղափարախոսությունը: Դրա հետ մեկտեղ, նա իր էրուդիցիայով անհամեմատ ավելի ուժեղ է վրաց քաղկեդոնականության դեմ պայքարում կամ հայ հակաքաղկեդոնականությունը վրացիներից պաշտպանելիս, քան Անանիա Սանահնեցին և վերջինիս նախորդները՝ Մովսես Ուտիեցին և Ուխտանեսը:

Հայոց հակաքաղկեդոնականությունը վրացիներից պաշտպանելու նպատակով Մխիթարը կազմել է մի ընդարձակ երկ, որը մեզ է հասել անվերնագիր, Նախադրությունում հեղինակը այն կոչում է «Գծագրութիւն... յաղագս Վրաց»[1]: Առաջին հայացքից այն ասես ստվերում է Կիրակոսի հիշատակած «Գիրք մի յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց» երկը: Մեր կարծիքի օգտին խոսում է այն, որ թե՛ առաջինը և թե՛ երկրորդը գրվել են Զաքարե և Իվանե Երկայնաբազուկների հորդորով. «Ի խնդրոյ զաւրավարին Զաքարէի և եղբաւր իւրոյ»[2], իսկ երկրորդի առաջաբանում Մխիթար Գոշը դիմում է. «Աստուածասէր և բարեպաշտ իշխանք իշխանաց Զաքարէ և Իւանէ»[3], որոնց վերջաբանում ասում է՝ «դուք իշխանք էք Հայոց և Վրաց կամաւքն Աստուծոյ»[4]: Բայց նման եզրահանգման դեմ վկայում է այն փաստը, որ «Գծագրութիւն... յաղագս Վրաց»-ում Մխիթարը հիշատակում է «թուղթ հաւատոյ խոստովանութեան», որպես ավելի վաղ գրված փաստաթղթի. Մխիթարը Վրաց կաթողիկոսին է դիմում հետևյալ խոսքերով. «զոր գրեալ եմք ի թղթիդ՝ վասն հաւատոյ խոստովանութեան»՝ սա է ճշմարտությունը, և թող Տերը դատի ինձ, եթե հայերի մասին որևէ բան սուտ եմ գրել»[5]:

Յավոք, Մխիթարի հիշատակած «թուղթ հաւատոյ խոստովանութեանը», որ մեր կարծիքով Կիրակոսի աշխատությունում անվանված «Գիրք մի յայտարարութիւն ուղղափառութեանը» <այսինքն՝ հակաքաղկեդոնականությանը> պետք է լինի, մեզ չի հասել, ուստի նրա մասին ոչինչ ասել չենք կարող: Ուրեմն՝ մնում է միայն «Գծագրութիւն... յաղագս Վրաց»-ը, որը հայ-վրացական հարաբերությունների, մասնավորապես՝ հայ-վրացական եկեղեցիների բարեկարգման հարցը ուսումնասիրելու համար չափազանց նշանակալից և յուրօրինակ աղբյուր է, նաև հարուստ նյութ է պարունակում:

Մեր մենագրության առանձնահատկությունը պարտավորեցնում է այս հարցը ներկայացնել այնպես, ինչպես մենք վարվեցինք Անանիա Սանահնեցու երկի դեպքում, թեև Անանիայի և Մխիթարի միջև տարբերությունն այն է, որ առաջինն առանձին աշխատություն չի նվիրել հայ-վրացական բանավեճին, այլ ընդհանուր՝ «...Ընդդէմ երկաբնակացը», մինչդեռ երկրորդը այս հարցին անդրադառնում է հատուկ հանձնարարությամբ՝ 1197-1205 թթ. Թիֆլիսում և 1205-1207 թթ. Լոռում և Անիում հրավիրված եկեղեցական ժողովների հետ կապված:

Երկն սկսվում է հետևյալ «Նախադրութիւնով». «Զայս գծագրութիւն սակաւուք հարկաւոր կարծեաք եղաք յաղագս Վրաց, որ ոչ սակաւ թշնամութեամբ ընդ մեզ վարին քան զՅոյնս, աշակերտելով նոցա: Եւ արդ, զի նախ առ ձեզ է նախադրութիւն բանիս, ով աստուածասէր և բարեպաշտ իշխանք իշխանաց Զաքարէ՛ և Իւանէ՛, ծնունդք սիրոյ Աստուծոյ ի բարեզարդ ծնողաց. զի ես յամենայնի նուաստս Մխիթար, ի բանս և ի գործս սպասաւորաց բանին, որ յաւուրս մեր՝ տեսանելով և լսելով զբամբասանս Վրաց

[1] Մեզ է հասել երկու ձեռագրի տեսքով, որոնք պահպանվել են էջմիածնի հին հավաքածուում, և որի համաձայն՝ այն հրատարակել է անանուն հրատարակիչը (Կարապետ Տեր-Մկրտչյանը՞) հենց էջմիածնում չակերտներում առնված հայերեն վերնագրով՝ Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գո(օ՞)շն կոչիւր (Ա, 1900, էջ 497-504, 562-568, 1901, էջ 55-61, 121-127), թեև, ցավոք, ձեռագրերը չեն համարակալվել: Ձեռագրերից մեկը մենք վերականգնեցինք Գարեգին Հովսեփյանի օգնությամբ. դա Ժէ. դարի Ձեռ 631 ձեռագիրն է, որտեղ Մխիթարի երկասիրությունը զետեղված է 17ա-45բ էջերում: Ստորև ամենուր նշել ենք ձեռագրի էջերը՝ հրատարակության հետ համեմատելով:

[2] **Կիրակոս**, 209:

[3] Ա, 1900, էջ 497:

[4] **Նույն տեղում**, 1901, էջ 127:

[5] **Նույն տեղում**, 1900, էջ 497:

ի գաւանութիւնս մեր հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ, յոյժ խոցեալ լինէի հոգի, մանաւանդ զի հաւանելի թուելով ձեզ ասացեալքն առ ի նոցանէ, յայսոսիկ եկի միտս՝ գրել սակաւուք զճշմարիտ հաւատոյս մերոյ զաւրինակ, և զոր ամբաստանիմք, թէ ոչ միաբանին ընդ Յոյնս և ընդ Վիրս ցուցանել փութացաք զանհնարութիւնն...»[6]:

Այս «Նախադրութեանը» զուգահեռ բերված է նաև «Հիշատակարանը», որտեղ, ի միջի այլոց, ասված է. «...Եւ արդ, թէպէտ բազում պաշտ թագաւորք[ն] մեր չեն բաւական՝ Թամար և Դաւիթ, տիեզերական ժողով առնել ամենայն ազգաց, վասն հեռաւորութեան Յունաց և Հռոմայեցւոց և այլոց ազգաց, այլ Աստուծոյ շնորհաւքն կարող են զՀայոց և զՎրաց թշնամութիւնն բառնալ, որ զԿրիստոս չհայհոյեն. զի այն Քրիստոսի է աւելութիւն, [և թշնամութիւն], որ զխաչ և զխաա[7] *և զեկեղեցի միմեանց հայհոյեն և նախատեն: Եւ որպէս ցուցաք յառաջագոյն՝ այն էր Աստուծոյ հաճոյ և Քրիստոսի կամք, զի ամենայն ազգ քրիստոնէից միակրաւն էին լեալ, բայց չէ հնար <տրբրկ.՝ արժան է>, որպէս գրեցաք, այլ զկարելին չէ հնար խափանել: Զի դուք իշխանք էք Հայոց և Վրաց կամաւքն Աստուծոյ, և թէ կամիք՝ ծանուցանէք աստուածասէր թագաւորացդ, որ արքայական իշխանութեամբ սաստ դնեն, որ ոչ զեկեղեցի Աստուծոյ <տրբրկ.՝ Հայոց> չքակեն և զխաչ այրեն, և այսմ ժամանակեայ իշխանութեամբս և յաւիտենական թագաւորութիւնն առնուն ընդ բարեպաշտ թագաւորացն՝ ընդ Կոստանդիանոսին, ընդ Թէոդոսի և ընդ Տրդատայ և ընդ նախնի թագաւորացն ինքեանց, աստուածասիրացն Բագրատունեաց...»*[8]:

«Նախադրութեանը» հաջորդում է բավականին ընդարձակ շարադրանք, որն ասես վերնագիր էլ ունի՝ «Փոքր ինչ և թղթոյ աւրինակս»[9]:

«Գծագրութիւն... յաղագս Վրաց»-ը հասցեագրված է վրաց կաթողիկոսին և սկսվում է բավականին ընդարձակ «Մուտքով», որտեղ, ի միջի այլոց, ասված է. «Աստուածարեալ և հոգևոր Տեառնդ, քրիստոսապսակ կաթողիկոսիդ հաւատացելոցդ ի Քրիստոս Վրաց

6 Էջմ. թանգ. հին հավաք. ձեռ. Ձ՟ր 631, էջ 17ա = Ա, 1900, էջ 497:

7 Խատ, վրացերեն նույն "ხატი"-ն («խատի») է: Այս մասին տե՛ս **H. Марр**, Арк'аун, мангольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах.- "Византийский Временник", т. XII, 1905, стр. 40 и прим. 1 там-же, նույնի՝ Религиозные верования абхазов.-ХВ, т. IV, 1915, стр. 126, прим. 2, նույնի՝ Еще о термине xati q'at-i *образ, подобие*.- ХВ, IV, 313-314 և այլն, **Օրբէլեան**, 380:

8 Ձեռ. Ձ՟ր 631, 45ա-45բ = Ա, 1901, էջ 126-127:

9 Ձեռ. Ձ՟ր 631, 17բ = Ա, 1900, էջ 497:

և աստուածապատիւ եպիսկոպոսաց և հարց հոգևորաց, եղբայրաց և կուսաստանաց, և խաչակրաւն միանձանց, և հասարակ եկեղեցական կարգաց, - նուաստս ի Քրիստոս և սպասաւոր Բանին Աստուծոյ, գծողս այսմ մատենի՝ աղաչանաւք ծանուցանեմ»[10]:

Այնուհետև Մխիթարը հիշատակում է վրաց կաթողիկոսի հետ ունեցած իր անձնական թղթակցությունը և, ի միջի այլոց, ասում է. «Եւ զոր գրեալ եմք ի թղթիդ՝ վասն հաւատոյ խոստովանութեանն՝ ճշմարտութեամբ այսպէս է, և գաւիմ ի Տեառնէ, թէ վասն Հայոց երեսաց ես սուտ ինչ գրել եմ»[11]:

Մխիթարը կաթողիկոսին հանդիմանում է այն բանի համար, որ ինչ նա գրել է հայերի մասին, իրականությանը չի համապատասխանում, և դիտողություն է անում նրան, որ դրանք նա հույներից, այսինքն՝ հռոմներից է լսել՝ «զայդ ի Հռոմէն էք լսել»[12], *և միմյանց չհասկանալու հետևանք է, որ վրացիները հայերին են մկրտում, հայերը՝ վրացիներին՝ «վրաց զհայ մկրտեն և թէ հայ զվրացի»*[13]:

Նախադրությունը Մխիթարը վերջացնում է հետևյալ բառերով. «Թէ հաճոյ ձեզ առնէ Աստուած զսակաւ պատճառ ի բանս թղթիդ, դուք աննախանձ կամաւք աստուածասէր թագաւորացդ յայտնեցէ՛ք, զի և դոքա նախանձաւորին խաղաղութեան և սիրոյ առ իմիմեանս հաւատացելոց: Գիտեմք և զձեզ վշտակից կամաւք հոգալ. թէև ոչ է միաբանելոյ հնար, այլ հնար է զհայհոյութիւնն բառնալ և խափանել զմկրտութիւնդ, որ յոյժ անհաճոյ է Քրիստոսի և ամենայն սրբոց նորա: Ապա թէ ոչ՝ թողութիւն առնէք մեզ, զի ոչ յանդգնութեամբ, այլ վշտանալով գրեցաք»[14]:

Այսպիսով, այժմ քննարկված նախա- և վերջա- բաններից և ներածությունից պարզվում է, որ՝ 1) հայ-վրացական հարաբերությունների հարցի շուրջ Մխիթարը գրել է առնվազն երկու թուղթ, որոնցից մեկը՝ «Թուղթ վասն հաւատոյ խոստովանութեան» կամ «Ընդդեմ հերձվածողաց» <այսինքն՝ հակաքաղկեդոնականների>, իսկ երկրորդը՝ «Գծագրութիւն... յաղագս Վրաց», 2) վերջինս հիմնված է առաջինի վրա, որը, սակայն, մեզ չի հասել, և որի գոյության մասին տեղյակ է եղել Կիրակոս Գանձակեցին, 3) «Գծագրութիւն ...յաղագս Վրաց»-ը հեղինակը գրել է Զաքարե և Իվանե Երկայնաբազուկ-

10 Ձեռ. Ձ՟ր 631, 17բ = Ա, 1900, էջ 497:

11 Ձեռ. Ձ՟ր 631, 17բ = 18ա = Ա, 1900, էջ 497:

12 Ձեռ. Ձ՟ր 631, 18ա = Ա, 1900, էջ 498:

13 Ձեռ. Ձ՟ր 631, 18ա = Ա, 1900, էջ 498:

14 Ձեռ. Ձ՟ր 631, 18ա-18բ = Ա, 1900, էջ 498:

ների հանճնարարությամբ՝ ի պատասխան վրաց հոգևորականների, 4) այս թուղթը ուղղված է վրաց կաթողիկոսի (որոշակի ում՝ նշված չէ), նրանց եպիսկոպոսների, հոգևոր հայրերի, վանականների, ճգնավորների և եկեղեցու բոլոր ծեսերը կատարողների դեմ, 5) դրանով նա ոչ թե նպատակ ունի հարձակվել վրացիների վրա, այլ հայերին պաշտպանել վրացիների պարսավանքներից, 6) հեղինակը խնդրում է Զաքարե և Իվանե Երկայնաբազուկներին ու վրաց կաթողիկոսին, որպեսզի նրանք իրենց հեղինակավոր ձայնը բարձրացնեն «աստվածասեր» Թամար թագուհու և Դավիթ [-Սոսլան]-ի առաջ, որ վերջիններս էլ «արքայական իրավունքով» վրացիներին արգելեն հայերին զրպարտելն ու դադարեցնեն հալածանքները:

Միաժամանակ պարզվում է, որ այդ թուղթը հետևանք էր այն իրադարձությունների, որ տեղի ունեցան Թամարի թագավորության ժամանակ, օրինակ՝ 1197 թվականի հայ-վրացական բախումների[15], կամ, այսպես կոչված, «Առաջավորաց պահքի» մասին շարադրված պամֆլետների[16]:

* * *

«Գծագրութիւն... յաղագս Վրաց»-ում հայոց եկեղեցական կյանքի տեսական ու գործնական բազմաթիվ հարցեր են շոշափվում, և այս առումով շատ է հիշեցնում Արսեն կաթողիկոսի «Վասն բաժանման Վրաց ի Հայոց» տրակտատը:

Սկզբում հեղինակը պատմում է եկեղեցական տիեզերական ժողովների մասին, մասնավորապես՝ Քաղկեդոնի ժողովի, կապված հերետիկոսության հարցերին: Այնուհետև նա անդրադառնում է հայոց եկեղեցու տեղական ժողովներին ու այն փաստին, թե ինչու հայերը «վատաբանվեցին հույներից և վրացիներից»[17]:

Մասնավորապես Դվինի առաջին (Հայոց տեղական եկեղեցու հինգերո՞րդ) ժողովի մասին[18] Մխիթարը պատմում է համաձայն

[15] **Л. Меликсет-Беков**, О междоусобице в Тифлисе в 1197 году по поводу Кривой пасхи.- Изв. КИАЙ, т. III, стр. 49-60:

[16] ՔՑ., Թաղ., 481-482 = Բրոս., 313-314, հմմտ. **Л. Меликсет-Беков,** Грузинский извод сказания о посте "араджавор".-ХВ, V, 73-111, նույն տեղում՝ նյութի գրականությունը, տե՛ս նաև **Մեսրոպ Մաքսուդեանցի** գրախոսությունը այս գրքի մասին.- Ա, 1918, էջ 148-150, **Ա. Մատիկեան**, Դիցաբանական շունը յարաբերութեամբ Միքայէլ-Գաբրիէլ հրեշտակներու և ս. Սարգսի.- ՀԱ, 1927, էջ 43-55, **Կոռն. Կեկելիձե**, Провокация՞, թե՞ կարճատեսություն = "პროვოკაცია თუ სიბეცე"? (Ալ. Ռեմիզովը և հայերի «սուրբ Սարգիսը».- «Սաքարթվելո» (լրագիր), 1916 թ., № 124, **նույնի** Վրաց գրականության պատմություն, I, 539:

[17] Չեռ. Ֆ՝ր 631, 22ա = Ա, 1900, էջ 501:

[18] Տե՛ս վերը՝ այս գրքի առաջին մասի Գլ. Է., ծնթ. 2. հմմտ. **Л. Меликсет-Беков**, Об

«Գիրք թղթոց»-ում զետեղված Հովհան Օձնեցու երկի՝ «Սակս ժողովոյ՝ որ եղեն ի Հայս», միայն թե կրճատումներով:

Ըստ Մխիթար Գոշի՝

Հինգերորդ ժողով արար Բաբգէն ի Քաղաքի դաշտի, ի ԺԸ. ամի Կաւատայ արքայի, յաղագս չար հերձուածոյն Ակակայ և Բարդուծանայ, որք Նեստորին ունէին. վասն որոյ գիր արարեալ, սահմանս կարգելով՝ ասեն. Մեք՝ Հայք և Հոռոմք և Վիրք մի խոստովանութեամբ հաստատեալ եմք, զոր աւանդեցին Գ. ժողովն»[19]:

Ըստ Հովհան Օձնեցու՝

Հինգերորդ ժողով արար Բաբգէն ի Քաղաքուղաշտի, ի յԺԸ.երորդ ամի թագաւորութեանն Կաւատայ արքայի, յաղագս չար հերձուածոյն Ակակայ և Բարսումայի, որք պիղծ աղանդաւն վարժեալ՝ անիծեալ ախտիւն Նեստորի, ջանային չիջուցանել գուղջափառ հաւատս կողմանց արևելից և տնկել զժանդացեալ որոմն գաղձին վնասակարի Նեստորի անիծելոյ: Վասն որոյ գիր արարեալ տէր Բաբգէն, սահման կապելով, թէ ի՛ւ պատրեալ խաբեացեն զձեզ բանք դոցա, քանզի մեք Հայք և Հոռոմք, Վիրք և Աղուանք մի խոստովանութեամբ եմք հաստատեալ ճշմարիտ հաւատով ի լաւ անդր, զոր աւանդեցին մեզ սուրբ հարքն յերիս ժողովսն...[20]:

Իսկ հայ կաթողիկոսների անունները թվարկելիս Մխիթարը, ի միջի այլոց, նշում է, որ «Տէր Աբրահամ ամս ԻԳ., առ որով վիրք ի բաց կացին ի միաբանէ հայոց»[21]:

Հայոց և վրաց եկեղեցիների բաժանման պատմությունը Մխիթարը շարադրում է համաձայն Անանիա Սանահնեցու «Վասն բաժանման վրաց»[22] երկի՝ գրեթե բառ առ բառ կրկնությամբ.

Եւ այլ վասն Վրաց բաժանելոյն զի՛նչ ասացից. զի ի Քրիստոսէ մինչ ի չար ժողովն Քաղկեդոնի ՅՀԴ. (374) ամք են, և ընկալաւ ամենայն եկեղեցի յառաքելոցն զմի դաւանութիւն հաւատոյ անբա-

источниках древнеармянского права.- Изв. КИАИ, т. II, Лнгр., 1927, стр. 154, 155, прим. 2:

[19] Չեռ. Ֆ՝ր 631, 22բ = Ա, 1900, էջ 502:

[20] Գիրք թղթոց, 220-221:

[21] Չեռ. Ֆ՝ր 631, 23ա = Ա, 1900, էջ 502:

[22] Հրատարակված են այս գրքի երկրորդ մասի Դ. գլխի 10-րդ ծնթ.-ն հաջորդող շարադրանքի մեջ:

ժանելի. և յետ ՅԵ. (305) ամի ընկալան Հայաստանեայք զքարոզութիւնն ի սրբոյն Գրիգորէ, և Վրաց ազգն ընդ մեզ նզովեցին զժողովն Քաղկեդոնի զամս հարիւր, մինչև ի ժողովն Հայոց ի Դուին և ի Մանազկերտ, ուր որոշեցին զեղեալ հաւատն ի Ք[աղկեդոն] և հաստատեցին զերից սուրբ ժողովոյն, և Գաբրիէլ Մցխիթայի եպիսկոպոսն ընդ մեզ, որ էր Խախւացի, և յետոյ բաժանեցան ի մէնջ: Մեռաւ Գաբրիէլ և եկաց ի տեղի նորա Կիւրիոն, որ ունէր ի ծածուկ զաղանդն Քաղկեդոնի, և նախանձեալ ընդ պատուոյ աթոռոյն Սիւնեաց և Աղուանից քան զիւրն՝ որոշեցաւ ի մէնջ յաւուրս Աբրահամու Հայոց կաթուղիկոսի, և այլ և այլ կոչեցաւ և ոչ հնազանդեցաւ: Ապա առաքէ զՊետրոս զդրան եպիսկոպոսն իւր, զի թէ ոչ հնազանդեսցի՝ լուծցէ զնա. իսկ նա կամաւք զսգեստն մերկացել տա[յ] ցնա. ապա ի գաղտնի զկնի առաքել, զի մախայր <տրբրկ՝ մախէր> սպանանել զնա քարամբ, և ինքն երթայ ի հաղորդութիւն առ աղանդն Քաղկեդոնի՝ չար մտաց հաղորդեալ ի կամս չարին, և քարկոծի Պետրոս ի լեառն Կանկուար, համդերձ երկու կրաւնաւորաւք: Եւ զայս կարճաբանելով ասացաք և առաւել վասն Յունաց և Վրաց, որ ամբաստանեն զմէնջ՝ թէ Հայաստանեայք միայն ոչ ընդունին զժողովն Քաղկեդոնի: Ահա ցուցաք, զի բազում ազգ ոչ ընդունին զժողովն Քաղկեդոնի: Զի աւելորդ էր զկնի Գ.ից սուրբ ժողովոյն և այն ժողով»[23]:

Մխիթարը բավականին ընդարձակ է ներկայացնում հայոց եկեղեցու դավանաբանութիւնը: Բայց մինչ այդ հարցին անդրադառնալը, նա քննարկում է տարբեր ժողովուրդների՝ մասնավորապես հույների, վրացիների և հայերի որոշ սովորութիւններ՝ ժամասացութիւնը, պատարագը, պասերը (այդ թվում՝ «Առաջավորաց պահքը»), փրկութեան, խաչերի, սրբապատկերների պաշտամունքի հարցերը[24]:

Հայ քրիստոսաբանութեան մասին խոսելով՝ Մխիթարը հաճախ վկայում է տիեզերական հայրերին՝ Աթանասին, Կյուրեղ Ալեքսանդրացուն, Գրիգոր Նյուսացուն, Հուլիոսին, Հովհան Ոսկեբերանին, Հոնորիոս Հռոմայեցուն, Բարսեղ Կեսարացուն, Գրիգոր Աստվածաբանին, Եփրեմին և այլոց, իսկ հայոց հայրերին՝ պակաս չափով: Ի դեպ, հիշատակում է նաև Սոկրատ-[Սքոլաստիկոս]-ին:

Քրիստոսաբանութիւնը լուսաբանելիս Մխիթարը անդրադառնում է նաև հայերի տոնագիտութեանը (էորտոլոգիա), մասնավորապես՝ Քրիստոսի ծննդյան և մկրտութեան տոներին (6-ը հունվարի)

[23] Չեռ. Ձ՝ 631, 23բ-24ա = Ա, 1900, էջ 503:
[24] Չեռ. Ձ՝ 631, 24բ-25ջ = Ա, 1900, էջ 504, 562:

և վերջինիս առնչվող մնացած հանդիսութիւններին, որոնցում հայերը «տարբերվում են» հույն-վրացիներից[25]: Նմանապես վերստին խոսում է հույն-վրացիների և հայերի միջև եղած «տարբերութիւններից»՝ պասի և փրկութեան հարցերում[26]:

Առանձնապես խստորեն քննադատում է քաղկեդոնական եկեղեցու պրակտիկայում ամրապնդված երկու երևույթ. այսպես կոչված զոհերի համար պատարագը շարժական վրանում (օդայում), որոնցից վերջինը, ինչպես արդեն գիտենք, քննութեան հատուկ առարկա էր դարձել 1205-1207 թթ. Լոռու և Անիի ժողովներում: Նման նորարարութեան Մխիթարին հնարավոր է թվում միայն որոշակի դեպքերում, այսինքն՝ ռազմական արշավանքների ժամանակ. «զվրանս վասն զաւրաց թոյլ ետ կանոնքն»[27]:

Այնուհետև Մխիթարն անդրադառնում է եկեղեցիների և սրբութիւնների օծման[28] ժամանակ հույների, վրացիների և հայերի միջև եղած «տարբերութեանը», կրկին՝ պասերի, միս ուտելու կամ չուտելու հարցերին[29] և մասնավորապես կանգ է առնում, այսպես կոչված, «Առաջավորաց պահքի» վրա:

«Եւ վասն առաջաւորացն պահոցն առաւել գայթակղին Յոյնք և Վիրք ի մեզ, զի յիշատակ տաւնի սրբոյն Սարգսի անդ պատահեաց, և կարծի այն պահք նմա լինել, և անգիտանան զի պատմութիւն նորա յԱսոր[ւ]ոց է. զի ի Պասս նա վկայեաց, և անտեղեակ են պատմութեանն»[30]:

Կամ՝ «Յոյնք և Վիրք բամբասեն զՀայս վասն տաւնի սրբոյն Սարգսի և առաջաւորացն պահոց, զոր և Ասորիք տաւնեն»[31]:

Քաղկեդոնականների և մասնավորապես վրացիների «սովորութիւնները» քննադատելուց հետո Մխիթարը ջանում է բնութագրել «բոլոր ազգերի» գովելի կողմերը: Բայց այստեղ, մինչ նման բնութագիր տալը, ցանկանում է այս ազգերին միացնող մի ընդհանուր միջոց գտնել: Եկեղեցու տիեզերական ժողով հրավիրելը, նրա կարծիքով, անիրագործելի է[32], առավել ևս, որ վրաց արքաները՝ Թամարը և Դա-

[25] Չեռ. Ձ՝ 631, 31ա-31բ = Ա, 1900, էջ 567-568:
[26] Չեռ. Ձ՝ 631, 33բ = Ա, 1901, էջ 57:
[27] Չեռ. Ձ՝ 631, 34բ = Ա, 1901, էջ 58:
[28] Չեռ. Ձ՝ 631, 35ա, 37ա, 38բ = Ա, 1901, էջ 58, 60, 61:
[29] Չեռ. Ձ՝ 631, 36բ = Ա, 1901, էջ 59-60:
[30] Չեռ. Ձ՝ 631, 37ա = Ա, 1901, էջ 60:
[31] Չեռ. Ձ՝ 631, 25ա = Ա, 1900, էջ 562:
[32] Չեռ. Ձ՝ 631, 39բ-40ա = Ա, 1901, էջ 122:

վիթ [Սոսյան]ը, դրան կողմնակից չեն[33]*: Այդ պատճառով Մխիթար Գոշը առաջարկում է, որ քաղկեդոնականները և ոչ թե հայերը փոխզիջման ուղին ընտրեն եթե ոչ մանրուքներում, գոնե գլխավոր հարցերում*[34]*: Ի դեպ, Մխիթարը համոզված է, որ տիեզերական ժողովի հիմքը դրել է հիմնականում չորս ժողովուրդ՝ հույները, հռոմեացիները, հայերը և ասորիները, չորս ավետարանիչի նմանողությամբ. ահա ինչու, աշխարհում ընդամենը չորս պատրիարքություն կա, որոնց շարքում են նաև հայերը, մինչդեռ վրացիները հատուկ տեղ չունեն, քանզի նրանք գնում են հույների հետևից*[35]*:*

Այնուհետև սկսվում է Գոշի գրվածքի, եթե կարելի է այսպես ասել, դրական մասը՝ հետևյալ բառերով. «Այլ զի թերին ասացաք զամենայն ազգաց, և այժմ զզովելին ասացից»[36]*, և շարունակում է հակառակորդներին «հաճոյախոսություններ» անել. «Յոյնք իմաստունք են և ողորմածք, ուսեալք ի Յովհաննէ Ոսկեբերանէ. Հռոմք՝ զգաստք են աղաւթից և հնազանդ առաջնորդաց, ասորիք խոնարհք են և ճգնողք, հայք պահողք են և ողորմածք գերելոց և եկեղեցեաց, սրբութեան սիրողք. վիրք սրբոց և վանօրեից մեծարողք և անբամբասս առաջնորդաց»*[37]*:*

Յավոք, Մխիթարը շատ շուտ մոռանում է ընտրած ուղին և նորից անցնում քննադատության:

Նախ և առաջ նա վրացիներին մեղադրում է «Առաջավորաց պահքին» վերաբերող հարցում. «Յոյնք և Վիրք այնքան բամբասողք են Հայոց, զի զեկեղեցի զաւրհնեալ քակեն և զսեղան, յորոյ վերայ պատարագեալ է Քրիստոս, արտաքս ձգեն, և ասեն չուն զենուլ յեկեղեցի Հայոց, և այնպէս զաւրհնութիւն հանել զՀայոց. զայդ միայն Յուլիանոս արար ուրացողն Քրիստոսի՝ զմկրտութիւն իւր չան արեամբ կամեցաւ լուծանել...»[38]*:*

Դրանից հետո Մխիթարը մեկ առ մեկ թվարկում է տարբեր հավատքներ և դավանանքներ և բոլոր այն ծեսերը, այս կամ այն տարբերությամբ, որ ըստ հարմարության պետք է կատարվեն եկեղեցիներում՝ «մոնողների», այսինքն՝ տարբեր կարգի հերձվածողների ու «հերետիկոսների» համար, իսկ հրեաների ու հեթանոսների համար՝ այլ կերպ: Այդ ծեսերը, ըստ Մխիթարի՝ չպետք է վերաբերեն հույներին, վրացիներին ու հայերին: Ահա թե ինչու, նա սրտի ցավով է նշում հույների ու վրացիների հանցանքը հայերի հանդեպ, և հայերի հանցանքը՝ հույների ու վրացիների հանդեպ, երբ նրանք «մկրտում են» մեկմեկու[39]*: Իսկ նման երևույթի պատճառը իրար անարդացի վատաբանելն է.*

«Հայք ամբաստանեն զՅոյնս և զՎիրս վասն երկու բնութիւն ասելոյն անմիաւոր՝ զՆեստորին ունել, և նոքա զՀայս բամբասեն զԵւտիքէին ունել վասն մի բնութիւն ասելոյն. և ահա յայտ է և գիտելի է, զի մի բնութիւն ասեմք՝ ոչ զմարդկութիւնն ուրանամք, որպէս Եւտիքէս, այլ վասն անճառելի միութեան մի ասեմք, և նոքա անդիտաբար գայթակղին»[40]*:*

Մխիթարը վրացիներին մեղադրում է Քաղկեդոնի ժողովի դավանությունն ընդունելու համար, իսկ քաղկեդոնականությունը քողարկված նեստորականություն է. «թէ ծածկութիւն Նեստորի է ժողովոյն Քաղկեդոնի խոստովանութիւնն, զոր ընդունին յոյնք, և վիրք նոցայ աշակերտեալք»[41]*:*

Հույների, վրացիների ու հայերի միասնությունը, ըստ Մխիթար Գոշի, խաթարվեց անգիտության, ամբարտավանության և չարասիրության պատճառով[42]*: Ուստի՝ նա եզրակացնում է (հավանաբար նկատի է ունեցել իվանե երկայնաբազուկի «վրացացումը»), թե՝ «Արդ, յայտնի է զի որք ի հայոց ի յոյնս կամ ի վիրս դառնան՝ վասն փառաց աշխարհի է և վասն հեշտութեան մարմնոյն՝ թողեալ զփառս Աստուծոյ, զաշխարհի և զմանդկան առնուն»*[43]*:*

Վերջում Մխիթար Գոշը խոսում է քրիստոնյա ազգերի՝ հայերի, հույների, վրացիների, ասորիների և հռոմեացիների միասնության մասին՝ հակադրելով տաճիկներին ու հրեաներին[44]*: Նա տհաճություն է զգում, երբ որևէ քրիստոնյա «զտաճիկն և զՔահուտուտն լաւ ասէ քան զՀայն. այնպիսի ասացողքն չունին թողութիւն ոչ աստ և ոչ ի հանդերձեալքն, թէ չապաշխարին»*[45]*:*

---

[33] Չեռ. Հմր 631, 45ա = Ա, 1901, էջ 126:

[34] Չեռ. Հմր 631, 39բ-40ա = Ա, 1901, էջ 122:

[35] **Նույն տեղում**

[36] Չեռ. Հմր 631, 40ա = Ա, 1901, էջ 122:

[37] Չեռ. Հմր 631, 40ա = Ա, 1901, էջ 122:

[38] Չեռ. Հմր 631, 41բ-41ա = Ա, 1901, էջ 122-123, հմմտ. վերը՝ այս գլխի ծ. 16:

[39] Չեռ. Հմր 631, 43ա = Ա, 1901, էջ 124-125:

[40] **Նույն տեղում:**

[41] Չեռ. Հմր 631, 43ա = Ա, 1901, էջ 125, հմմտ. նաև այստեղ՝ նախորդ Ը. գլխի ծ. 14-17 ծնթ-ներին վերաբերող մասը:

[42] Չեռ. Հմր 631, 43բ = Ա, 1901, էջ 125:

[43] Չեռ. Հմր 631, 43բ = Ա, 1901, էջ 125:

[44] Չեռ. Հմր 631, 44ա = Ա, 1901, էջ 125:

[45] Չեռ. Հմր 631, 45ա = Ա, 1901, էջ 126:

ԳԼՈՒԽ Ժ.

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՄՏԵՐԻՄՆԵՐԸ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՆԱԿԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԴՊՐՈՑԸ

«Դատաստանագիրք Հայոց»-ի «Նախադրութեան» վերջում, ինչպես տեսանք, Մխիթարը նշում է, որ գիրքը կազմելուն ձեռնամուխ է եղել 1184 թվականին, Դասինի վանքում, «ձեռնտուութեամբ հօր Յովսէփայ և եղբօր Պաւղոսի»[1]:

Ուրեմն, Հովսեփը և Պողոսը եղել են Դասինի միաբանության անդամներ, գրական հարցերով հետաքրքրվողներ, որոնք համարվում են Գոշի մտերիմները:

***

Մխիթարի բազմաթիվ աշակերտներից՝ մեզ հասած սկզբնաղբյուրների համաձայն, հայտնի են ընդամենը մի քանիսը, դրանց թվում՝ Սարկավագը, Թորոսը, Վանականը և Մարտիրոսը[2]:

Սարկավագը հիշվում է որպես Հին Գետիկի վանահայր, որի մոտ Գոշը գնացել է երկար դեգերումներից հետո: Նրա մասին Կիրակոս Գանձակեցին գրում է. «Եւ էր առաջնորդ վանիցն [Գետիկի] վարդապետն՝ որ Սարկաւագ անուանիւր, աշակերտ նորին <այսինքն՝ Մխիթարի>, որ բազում ուրախութեամբ ընկալաւ զնա <Մխիթարին>, և ինքն սպասաւորեր նմա»[3]:

Թորոսի և Վանականի *մասին* Գանձակեցին *ասում է.*

«Վասն այսպիսի համբաւոյ բազումք, որ էին ի կարգի վարդապետաց, ծածկէին զինքեանս եւ գային, ի կարգի աշակերտաց կալով՝ ուսանէին ի նմանէ եւ առնուին վերստին հրաման: Եւ բազումք յաշակերտաց նորա հասին ի պատիւ վարդապետական: Բայց երկուք ոմանք ի նոցանէ իմաստնագոյնք էին քան զայլսն, որք կարող էին եւ զայլս օգտեցուցանել. առաջնոյն՝ Թորոս անուն, ի սահմանացն Մելիտինոյ Հայոց, հայր նորա հայկազն եւ մայր նորա ասորի, այր հեզ եւ խոնարհ, առաքինի եւ աղքատասէր յոյժ, ասպնջական օտարաց եւ առատ ի տուրս, որ զժամանակս կենաց իւրոց բարւոքապէս վարեալ՝ ի ծերութիւն պարարտութեան յաւելաւ առ հարս իւր եւ կայ թաղեալ ի հռչականուն վանքն Հաղբատ, ի գլուխ վանից, ի գերեզմանս եպիսկոպոսացն եւ վարդապետացն, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, եւ աղօթք սորա պարիսպ հաւատացելոց: Եւ երկրորդին՝ Վանական անուն, այր սուրբ եւ պարկեշտ եւ յամենայնի նայն գործս բարիս յառաջադէմ, ողջախոհ եւ զգաստ յամենայնի եւ վարդապետական բանիւ քան զամենեսին, որ ի ժամանակին էին, գերազանցեալ, ծննդական մտօք եւ յարմար բանիւք: Վասն որոյ բազումք զեգերէին առ նա ուսման աղագաւ ո՛չ միայն վարդապետական բանի, այլ ամենայն կեանք նորա եւ շարժուման անգիր օրէնք էին տեսողացն: Եւ զայս ո՛չ թէ ականջալուր միայն ասեմ, այլ եւ ականատես, զի բազում ժամանակս կացաք մեք առ նմա ի վարժս կրթութեան ի սահմանս Տաւուշ բերդոյ, յանապատի անդ, զոր ստացաւ իւր բնակութիւն եւ աղբիւրաբար արբուցանէր ամենեցուն զբանն վարդապետական»[4]:

Մարտիրոսի *մասին* գրում է, որ նա ամենից արժանավորն էր, որպեսզի լիներ Գոշի հետևորդը Նոր Գետիկում «եւ զմի ոմն ի նոցանէ ընտրեալ՝ Մարտիրոս անուն նորա, որ աշակերտեալ էր նմա եւ ընտանի էր նմա, կացոյց զնա առաջնորդ նոցա. մանուկ տիօք, բայց կատարեալ իմաստութեամբ, այր քաղցրաճաշակ յերգս պաշտամանն, եւ առատամիտ ընթերցող, եւ երագ ի գրչութիւն»[5]:

Բոլոր այս անձանցից գիտագրական բնագավառում հայտնի է միայն մեկը՝ Վանականը, որին համարում են Խորանաշատի դպրոցի հիմնադիրը և որի ժառանգորդներն են ԺԳ. դարի հանրահայտ պատմիչներ Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին և Մաղաքիա Աբեղան:

Գետիկ-Խորանաշատի դպրոցը, ինչպես նշեցինք վերը, մի ճյուղն է այն խմբի, որը պայմանականորեն անվանեցինք «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետներ», և որի հիմնական ճյուղը սկզբնավորվել է Հաղբատ-Սանահնի դպրոցում: Այս փաստը, ի դեպ, հիմնավորվում է կապով, որը աղոտ նկարագրված է Գետիկ-Խորանաշատի և Հաղբատ-Սանահինցիների ընդհանուր տրամադրվածության մեջ:

---

1 Տե՛ս վերը, այս՝ երրորդ մասի Ը. գլխի 5-9 ծնթ-ներին վերաբերող մասը:

2 **Հ. Ոսկյանը** (Յովհաննէս Վանական և իւր դպրոցը, 112-113), հիշատակում է նաև ուրիշ Պողոսի և Կիրակոսի, թեև առանց հիմնավորելու:

3 **Կիրակոս**, 197-198:

4 **Նույն տեղում**, 205-206.

5 **Նույն տեղում**., 207:

Այս առումով բավական է հիշենք Թորոսին, որը, ըստ Կիրակոսի, թաղված է Հաղբատում, Հաղբատցի նշանավոր գործիչների կողքին[6], նաև Վանականը, որի մատերմությունը Սանահնի խմբակի հետ երևում է Տավուշի Ավետարան համարվող 1236 թ. ձեռագրի հիշատակարանից, որտեղ, ի դեպ, գրված է. «Ես՝ Վանականս, գրեցի իմով ձեռամբս ի Տփղիս քաղաքի, ի դրան Սուրբ Քառասնից, զի գերեալ էր Աւետարանս ի Տաւրշոյ ի Մուղան, ի թաթարէն, եւ յետ երից ամաց աստ բերեալ անվնաս վաճառեցին ի ՈՁԵ. թուիս»[7]:

Այս հիշատակարանը հետաքրքիր է այն առումով, որ վկայում է Հովհաննես Վանականի Թիֆլիսում «Սուրբ Քառասնից» եկեղեցում 1236 թ. լինելը, քանզի «Սուրբ Քառասնից» եկեղեցին, արդեն պարզել ենք, այսպես կոչված «բերդի փոքր» կամ «Հրեչտակապետաց» եկեղեցին է՝ բաղնիքների մոտ, որը հնագույն ժամանակից Սանահնի վանքի հակառակորդն էր Վրաստանի մայրաքաղաքում[8]: Ահա ինչու, համոզիչ պետք է համարել Վանականի մերձավորությունը Հաղբատ-Սանահնի, մասնավորապես, Սանահնի խմբակին[9]:

Խորանաշատի դպրոցը մեծ ծառայություն է մատուցել հայ գրականության պատմությանը: Բայց այդ դպրոցի ներկայացուցիչներից, միակ ղեկավարից՝ Վանականից բացի, այսպես կոչված, «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» խմբակին ոչ ոք չի պատկանել: Այդ պատճառով դրանց վրա կանգ չենք առնում, առավել ևս, որ նրանց ու ղեկավարի գիտագրական գործունեությունը մանրամասն քննարկել է Համազասպ Ոսկյանը իր «Յովհաննէս Վա-

6 Հմմտ., **Մ. Բժշկեան**, նշ. աշխ., էջ 417, (§ 624), **Երզնկեան**, 52:

7 **С. Тер-Аветисьян,** Автограф Иоанна (Ованеса) Ванакана Тавушского, армянского писателя монгольской эпохи.- Изв. КИАИ, т. IV, стр. 52 и табл. I, հմմտ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ., 275, Ալիշան, Հայապատում, Բ., 463, Ոսկեան, Յովհաննէս Վանական. կև., 15, **Л. Меликсет-Беков,** О междоусобице в Тифлисе в 1197 г. по поводу Кривой пасхи.- Изв. КИАИ, т. III, стр. 52: * *Այս ձեռագիրն այժմ Մաշտոցեան Մատենադարանի Ֆմր 4823ն է, 1224 թ. գրուած երեւի Խորանաշատում, մոմղոլներն այն գերեվարել են 1236 թ., Վանականը Թիֆլիսում փրկագնել է 1238 թ. - Գ. Տ-Վ.:*

8 Այս մասին տե՛ս **Л. Меликсет-Беков**, նշ. աշխ., 49-60:

9 Հաղբատի վանքի նման հակառակորդ Տփղիսում համարվում էր նաև, այսպես կոչված, «պարոն Ումեկի»-ն, հետագայում՝ «բերդի մեծ»-ը, «Կաթողիկէ Աստուածածին»-ի կամ «Սուրբ Գէորգ» եկեղեցին՝ Թաթարի հրապարակում, որտեղ Յովհաննես Երզնկացին 1284 թ. խոսում է իր հայտնի ճառը՝ «Յաղագս երկնային շարժմանն...», և որտեղ, ըստ ավանդության, 1795 թ. սպանվել է Հաղբատի վանական Սայաթ-Նովան, տե՛ս **Л. Меликсет-Беков,** նշ. աշխ., հմմտ. **И. Орбели**, Фрагмент крестного камня с арабскою надписью в Тифлисе.- ХВ, т. VI, стр. 198-199:

նական և իւր դպրոցը»[10] հրաշալի մենագրության մեջ:

Հովհաննես Վանականի բազմաթիվ գրվածքներում, որոնց մենք այստեղ չենք անդրադառնում, իրենց մեջ հայ-վրացական հարաբերությունների մասին շատ քիչ նյութ են պարունակում:

Հատկանշական է.

1) «Պատճառք վասն առաջաւորաց պահոցն, արարեալ Վանական վարդապետի՝ վասն հակառակացն և այպանողացն զսուրբ պահս»[11]:

2) «Վանական վարդապետին ասացեալ բան հաւատալի ազգիս մերում»[12]:

Վերջինիս մեջ, ինչպես արդարացիորեն նշել է նաև J. Muyldermans-ը, ուշադրություն է գրավում այն տեղը, որտեղ հեղինակը մատնացույց է անում վրացիների երախտամոռությունը հայերի հանդեպ, չնայած հայ Մեսրոպը վրացիներին պարգևել է այբուբեն և այնպիսի մասունք, ինչպիսին է Վարձիայի խաչը[13]:

Վանականը գրում է. «...Վիրք այլ նախատեն զմեզ և ուրանան: Մեսրոպ ետ նոցա գիր, և զՎարձիոյ խաչն Մեսրոպ է աւրհնել, և յայլ թևին կայ հայ գիր, և զայն ոսկով ծածկեալ են...»[14]:

Այս տեղեկությունից հետագայում օգտվել է Վարդանը, որը Վարձիայի խաչի մասին գրում է. «Ի Դպրավանից տարան զխաչն, որ յանուն սուրբ Աստուածածնին, որ արդ Վարձիոյ կոչի, յանժամ Ճոնեանց կոչիւր... վասն որոյ և առին, ի Հայոց. և է սրբոյն Մեսրոբայ օրհնեալ... և ունի գիր հայերէն յայլ թևն»[15]:

***

Այսպիսով, տեսնում ենք, որ Հաղբատ-Սանահնից բացի, գիտական-գրական աշխատանք է ծավալվել նաև ԺԲ. դարի երկրորդ կեսին:

10 **Համազասպ Ոսկեան**, Յովհաննէս Վանական և իւր դպրոցը, [ԱՄ ՂԳ.], Վն., 1922, էջ 1-122, Յովհաննէս Վանական (4-36), Վարդան Արևելցի (114-122), Կիրակոս Գանձակեցի (92-113) և Մաղաքիա աբեղա (114-122):

11 Սովորական, այսպես կոչված, ճառընտիր-ում, որը վրաց. «Մրավալթավի» է նշանակում, ռուսերեն՝ изборник; **Կարինեանց**, Մայր Ցուցակ, 65, 129, **Ոսկեան**, Յովհաննէս Վանական. կև., 31, տե՛ս էջմ. թանգարանի նոր հավաքածուի ձեռ. Ֆմր № 223/300 [4950]: Պասի և «առաջավոր» տերմինի մասին տե՛ս **Л. Меликсет-Беков**, Грузинский извод сказания о посте “араджавор”.- ХВ, т. VI, 1917, стр. 73-111:

12 Գիրք թղթոց, 533-535:

13 **J. Muylderans**, Note sure Վանական վարդապետին ասացեալ բան հաւատալի ազգիս մերում.- ՀԱ, 1925, էջ 462-463:

14 Գիրք թղթոց, 534:

15 **Վարդան**, 69-70, **Ե. Լալայեան**, Վարձիա կամ Վարձունիք.- ՀԱ, 1895, էջ 23 = Ջաւախք.- ԱՀ, Ա., Շուշի 1895, էջ 160-164:

սին և ԺԳ. դարի առաջին կեսին՝ Հաղբատ-Սանահնի արևելքում գտնվող Հաղարծնի, Նոր և Հին Գետիկների, Դասինի, Խորանաշատի և այլ վանքերում, որոնցից Նոր Գետիկը և Խորանաշատը ԺԳ. դարի երկրորդ կեսին հայ գիտական մտքի գլխավոր կենտրոններ դարձան՝ Հաղբատ-Սանահնի փոխարեն: Եվ զարմանալին այն չէ, որ Նոր Գետիկի և Խորանաշատի վերելքով Հաղբատ-Սանահինը ընկավ և անկում ապրեց, այլ այն, որ հիշյալ օջախները ծաղկեցին մոնղոլների ներխուժման ժամանակ, կամ այլ կերպ եթե ասենք, հայ եկեղեցական ու հոգևոր ուսումնա-լուսավորական մեծագույն առաջընթացը և վերելքը խորտակվեց մահմեդականների տիրապետության ժամանակ՝ Գանձակի (Գյանջա) ամիրայության շրջանակներում[16]:

Հետագայում այս աշխատանքը անցնում է հարավ-արևելքից Սյունիք, որոշակի՝ Նորավանք-Որոտան-Տաթև, որտեղ ԺԳ-ԺԴ. դարերում աչքի է ընկնում անզուգական պատմագիր Ստեփանոս Օրբելյանը *(մահ. 1305 թ.)*, իսկ ԺԴ-ԺԵ. դարերում՝ հայ հակաքաղկեդոնականության մեծագույն ջատագովներ Հովհան[17]· Որոտնեցին *(մահ. 1384 թ.)* և Գրիգոր Տաթևացին *(մահ. 1411 թ.)*:

[16] Հայերի հոգևոր օջախների ծաղկման մասին մահմեդականների տիրապետության ժամանակ, տե՛ս **Կ[արապետ] Եպիս[կոպոս]**, Մահմեդական լուծը և նրա բռնութեան ներքոյ ծաղկող հայ վարդապետարանները.- Ա, 1913, էջ 586-604:

[17] • Յաջորդող անուան ազդեցութեամբ, վրիպմամբ, հեղինակն այստեղ եւս գրել է՝ «գրոգոլ - Գրիգոլ» - Գ. Տ-Վ.:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մենք փորձեցինք հնարավորինս ամբողջությամբ ներկայացնել, այսպես կոչված, «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» հարցը և նրանց ինքնությունը՝ կապված հայ-վրացական հարաբերությունների խնդիրներին: Մեր աչքի առջև սփռվեց համարյա մեկուկես-երկուհարյուրամյա պատմությունը հայ գործիչների այն խմբակների, որոնց երկերն առնչվում են Վրաստանի քաղաքական հզորացման ժամանակաշրջանին, նաև այն դարաշրջանին, երբ, այսպես կոչված, «Հյուսիսային Հայաստանը» կամ «Հարավային Վրաստանը» (Ներքին Քարթլի) գտնվում էր Վրաստանի պետականության ոլորտում:

Այս մեկուկես-երկու դարի ընթացքում հայ գրականության համարյա բոլոր ճյուղերը չափազանց զարգացան, թեև սկզբից մինչև վերջ ներարկված էին սքոլաստիկական ոգով. բավական է հիշատակել, որ միայն մեկնաբանական գրականությունը ձեռք բերեց այնպիսի ինքնատիպ երկեր, ինչպիսիք են՝ Հովհաննես Սարկավագի «Ցուցակ Սուրբ գրոց»-ը և Գրիգոր Աբասաորդու «Գիրք պատճառաց»-ը, որոնց նշանակությունը համաշխարհային գրականության մասշտաբներով է որոշվում, եկեղեցական չարականե/ր/գությունն (հիմնոլոգիա) այնպիսի գանձերով, ինչպիսիք են Հովհաննես Սարկավագի և Խաչատուր Տարոնացու չարականները, իրավագիտությունը՝ այնպիսի հուշարձաններով, ինչպիսիք են Դավիթ Ալավկա որդու «Կանոնագիրք»-ը և Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»-ը, որոնցից վերջինս հիմք է ծառայել ԺԳ-ԺԸ. դարերի ընթացքում հայերեն և օտար լեզուներով ստեղծված կանոնական գրքերի համար, օրինակ՝ Կիլիկիայում, Մոլդովա-Վալախիա-Գալիցիայում, Լեհաստանում, Ղրիմում, Վրաստանում և նույնիսկ Հարավային Ռուսաստանում: Ջատագովական-դավանաբանական-վիճաբանական գրականությունը այնպիսի երկերով, ինչպիսիք են՝ Անանիա Սանահնեցու «Բան հակաճառութեան ընդդեմ երկաբնակաց»-ը, Հովհաննես Սարկավագի «Ընդդեմ քաղկեդոնաց»-ը և Մխիթար

Գոչի «Գծագրութիւն... յաղագս Վրաց»-ը, տոմարական-տիեզերաբանական գրականութիւնը՝ Հովհաննես Սարկավագի բազմաթիվ աշխատութիւններով, և այլն: Այս և մնացած բոլոր երկերը մեծ ազդեցութիւն են թողել հետագա շրջանի գրականության վրա:

Առանձնապես հատկանշական է Հովհաննես Սարկավագի «Սարեկը» («Բան իմաստութեան...»)՝ որպես հայոց լեզվով գրված աշխարհիկ առաջին բանաստեղծական երկ, որը կարելի է համարել հետագա շրջանի հայկական աշխարհիկ քնարերգության ելակետը:

Ուշադրության արժանի է և այն հանգամանքը, որ «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» գործունեությունը սահմանափակվում էր ԺԱ-ԺԲ. դարերի Զորագետ-Զորագետով (Հաղբատ-Սանահնով), ԺԲ-ԺԳ. դարերում այն աստիճանաբար ուղղվում է դեպի արևելք՝ Աղստևի կամ Աղստաֆայի հովիտ (Հաղարծին-Գետիկ), իսկ ԺԳ. դարի առաջին կեսին գիտական-գրական կենտրոն են դառնում Նոր Գետիկը և Խորանաշատը, որից հետո գիտական-գրական գործունեության ալիքը անցնում է դեպի հարավ-արևելք՝ Սյունիք, որ պայմանավորված էր քաղաքական-տնտեսական հանգամանքներով:

Բայց «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» բոլոր աշխատութիւններից գաղափարական առումով քաղկեդոնականների կամ երկաբնակների դեմ ուղղված է երեք հիմնական երկ. առաջինը՝ Անանիա Սանահնեցունը՝ ԺԱ. դարի կես, երկրորդը՝ Հովհաննես Սարկավագինը՝ ԺԲ. դարի առաջին քառորդ, և երրորդը՝ Մխիթար Գոչինը՝ ԺԳ. դարի սկիզբ: Եվ ուղղակի զարմանալի է, որ նշված տարեթվերը ճշտորեն համընկնում են վրաց աղբյուրներից լավ հայտնի՝ ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական բոլոր երեք բանակռիվներին. առաջինը՝ Ղրթիլայի (Ջավախք), 1046 թվականին, Բագրատ Դ.-ի ժամանակ, վրացիներից էքվթիմե Գրձելու կամ Երուսաղեմացու և հայերից՝ Սոսթենես Մարմաշենցու մասնակցությամբ: Երկրորդը՝ Տփղիսում, 1123-1125 թթ., Դավիթ Շինարարի ժամանակ, վրացիներից՝ հենց իր՝ Դավիթ Շինարարի, Իոանե կաթողիկոսի և Արսեն Իղալթոյեցու (ըստ պրոֆ. Կոռնելի Կեկելիձեի՝ Արսեն որդի Վաչեի [Մաղաչվիլո՞ւ]), իսկ հայերից՝ «բազմաթիվ եպիսկոպոսների և վանահայրերի» մասնակցությամբ, իսկ երրորդը՝ դարձյալ Տփղիսում՝ 1197-1205 թթ., Թամար Թագուհու ժամանակ, վրացիներից՝ Թամարի, Դավիթ Սոսլանի, նաև Իոանե կաթողիկոսի մասնակցությամբ, իսկ հայերից՝ Վանի կաթողիկոսի (անվանապես ում՝ հնարավոր չէ որոշել) և «ամենայն եպիսկոպոսների ու վարդապետների

մասնակցությամբ»: Բայց սա դեռ բոլորը չէ. մենք պարզել ենք, որ 1123-1125 թթ. բանակռիվներին հայերից մասնակցել են Հովհաննես Սարկավագը, իսկ 1197-1205 թթ.՝ Մխիթար Գոչը: Ուրեմն՝ պետք է եզրահանգել, որ ԺԱ-ԺԳ. դարերի ընթացքում հայ գրականության մեջ ինչ երևան էր գալիս քաղկեդոնականների կամ դիոֆիզիտների («երկաբնակների»), մասնավորապես վրացիների դեմ, բոլոր նման երևույթները հետևանք էին այն մթնոլորտի, որ ստեղծել էր ժամանակի հասարակարգը, կառավարող դասակարգի և հոգևորականության դաշնակցությամբ, և կարող ենք որոշել նաև հիշատակված երեք երկերի գրվելու ժամանակը. Անանիա Սանահնեցունը՝ 1046 թվականից հետո, Հովհաննես Սարկավագինը՝ 1123-1125 թվականներին, իսկ Մխիթար Գոչինը՝ 1197-1205 թվականներին:

ԺԲ-ԺԳ. դարերում, այսպես կոչված, «Հյուսիսային կողմանքը» մտցված էր վրաստանի սահմանների մեջ, որտեղ դիոֆիզիտների («երկաբնակների») դավանանքը տիրապետող էր՝ համապատասխան արտոնություններով: Նման պայմաններում հայերը չէին կարող հանդես գալ թնդանոթաձիգների դերում և պայքար մղել դավանական (կոնֆեսիոնալ) այն ուղղության դեմ, որին պաշտպանում էին տվյալ ժամանակաշրջանի «Հովանավոր», «աստվածասեր» և «քաջառատ» արքաները: Եվ, չնայած դրան, այնուամենայնիվ, նրանք հրապարակայնորեն ոգորում էին քաղկեդոնականների կամ դիոֆիզիտների, և մասնավորապես վրացիների դեմ, նրանց պայքարը միայն և միայն ինքնապաշտպանական էր և ոչ թե հարձակողական: Նրանք հետապնդում էին արդարացման նպատակներ: Այդ պատճառով հայ-վրացական փաստական թե գրական պայքարում հայերի ու վրացիների դերը կարող ենք այսպես գնահատել. հարձակվողներ՝ հույների հետ միասին, վրացիներին համարենք, իսկ հայերին՝ պաշտպանվողներ, ինչը հաստատում են հիշատակված «Հայոց վարդապետների» աշխատությունների բովանդակությունն ու եղանակը: Այսպիսով, սկզբնական շրջանում՝ սկսած Զ-Է. դարերից մինչև ԺԱ. դարերը, հարձակվողների դերում հայերն էին, պաշտպանվողների դերում՝ վրացիները: ԺԲ-ԺԳ. դարերում, սակայն, քաղաքական-տնտեսական պատճառներով, նրանց դերերը փոխվում են, վրացիները հարձակվողներ են, իսկ հայերը՝ պաշտպանվողներ:

Այլասեր (քսենոֆիլ) դաղափարներից և ճգտումներից այլատյաց վարմունքներից Դավիթ Քոբայրեցու հետ միասին համառորեն պաշտպանվում է Գրիգոր Տաւտեորդին (ԺԲ-ԺԳ. դդ.): Դա միան-

գամայն հասկանալի է. Վրաստանի սահմաններում հայտնված հայությանն առանց այդ էլ ահաբեկում էին առհասարակ քաղկեդոնականները կամ դիոֆիզիտները, և մասնավորապես վրացիներն ու հայ քաղկեդոնականները: Նման պայմաններում հակաքաղկեդոն հայերը, վախեցած, փակված ու կտրված Վրաստանի խուլ ու անմատչելի ձորերում, ամեն մի նորամուծություն ու նախնիների սովորություններից շեղում համարում էին ձուլման ախտանիշ: Այդ էր պատճառը, որ այնպիսի լուսավորյալ և զարգացած անձնավորություն, ինչպիսին է Ներսես Լամբրոնացին (Կիլիկիայում), ձորոգեցիներին կամ ձորագեցիներին (Հաղպատ-Սանահինցիներին) բնութագրում է որպես անխելքների, անգետների, թշվառների, ողորմելիների, իսկ Գրիգոր Տուտեորդուն և Դավիթ Քոբայրեցուն՝ լիրբ ու կատաղի, հաչող շների:

Սկզբնաղբյուրներից օգտվելու առումով «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» միջոցով հետագա սերունդներին կտակված գրականությունը հարուստ գանձարան է, հին հեղինակների գրվածքները՝ գաղափարական անջնջելի ակոս. մի կողմից՝ Կյուրեղ Ալեքսանդրացու, մյուս կողմից՝ Տիմոթեոս Կուզի:

Վրաց պատմագրության տեսանկյունից «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» ինքնության բացահայտումը նրանով է հատկանշական, որ հնարավորություն է տալիս գտնելու այն բանալին, որով լիովին ի զորու կլինենք պարզելու Դավիթ Շինարարի և Թամար Թագուհու առաջին պատմիչների մշուշապատ տեղեկությունները հիշյալ արքաների՝ հայ-վրացական բանավեճերի առիթով հրավիրած ժողովների մասին, մասնավորապես, թե որքանով են համապատասխանում իրականությանը Դավիթ արքայի պատմագրի երկում հայ վարդապետներին տված բնութագիրը, որպես թե նրանք «պարծենում էին, թե ինչպես են հասել ուսման և գիտության բարձունքներին»*:*

Արտաքուստ հատկանշական է մի ամբողջ շարք հայ վարդապետների հարաբերությունը Վրաստանի արքունիքի, մասնավորապես կառավարող շրջանակների հետ. օրինակ՝ Հովհաննես Սարկավագ Հաղբատեցու և Դավիթ Շինարարի, Խաչատուր Հաղարծնեցու և Գիորգի Գ.-ի, Վարդան Հաղբատեցու և Թամար Թագուհու հարաբերությունները, Մխիթար Գոշ Գետիկցու առնչությունները Թամարի ու Դավիթ Սոսլանի արքունիքի հետ. մասնավորապես՝ Զաքարե և Իվանե Երկայնաբազուկների և Վրաց [Իոանե՞] կաթողիկոսի հետ: Նրանցից մասնավորապես Անանիա Սանահնեցին ժամանակակիցն էր Էքվթիմե Գրձելու կամ Երուսաղեմացու, իսկ Հովհաննես Սարկավագը ժամանակակիցն էր Արսեն Իղալթոյեցու (ըստ պրոֆ. Կ. Կեկելիձեի՝ Վաչեի որդի Արսենի [Մաղաշվիլո՞ւ], նա, անշուշտ, տեղյակ պիտի լիներ 1123-1125 թթ. բանավեճերի մասին:

Հետաքրքիր է նաև, որ իրենք ևս՝ «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետները», համաձայն քաղաքական այս կամ այն կոնյուկտուրայի, բաժանվում են տարբեր սերունդների. օրինակ՝ գանձակեցիների սերունդը նախորդում է անեցիների սերնդին, իսկ անեցիների սերունդը՝ խաչենցիների, և դարձյալ գանձակեցիների սերնդին:


Այսպես կոչված «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների»-ի կողմից հայ-վրացական եկեղեցիների բաժանման վերաբերյալ շարադրված թղթակցությունների և նրանց գործունեության վայրերը որոշելու գործը հեշտացնելու համար կցել ենք հետևյալ երեք «հավելվածները».

1) Այսպես կոչված «Հյուսիսային կողմանց» պատմական քարտեզը.


2) «Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» գաղափարական-ժամանակագրական ճյուղավորումը (աղյուսակ Ա.).

3) Հայ-վրացական բաժանման հարցը հայ հին մատենագրության մեջ (աղյուսակ Բ.):

Այսպես կոչված Հյուսիսային կողմանց պատմական քարտեզը.



«Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետների» գաղափարական-ժամանակագրական ճյուղավորումը




Լ. Մելիքսեթ-Բեկ, Հյուսիսային Կողմանց հայոց վարդապետները

Հայ-վրացական բաժանման հարցը հայ հին մատենագրության մեջ (**Աղյուսակ Բ.**)

Հյուսիսային կողմանց Հայոց վարդապետները

(սկզբնաղբյուրների փոխկապակցության սխեմա)



Աղյուսակ Բ

1. Աճառեան Հ., Յուցակ Հայկական ձեռագրաց Սանասարեան վարժարանի, Վն., 1900:
2. Անանիայի Շիրակունւոյ Մնացորդք բանից, ի լոյս էած Ք. Պալասկանեան, Մոլք., 1877:
3. Գալէնքեարեան Գ., Ցուցակ հայերէն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Մունխէն, Վն., 1892:
4. Գիրք թղթոց, Տփղ., 1901:
5. Թովմայի վկայասիրեցւոյ ի խնդրոյ Սահակայ և Սալոմի՝ Բան չափեալ ի սրբազան տեղիս աշխարհին Հայոց.- «Ճռաքաղ» 1860թ., տեղւոյ Ը. և Թ.:
6. Թոմայ ընդհանրական արարեալ երիցս երանելոյ սուրբ հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ, Էջմ. 1865: Ընդհանրական թուղթ սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ, Երուսաղէմ, 1871:
7. Թոմայ ընդհանրական Կաթողիկոսի Տոմայ կոչեցեալ Նահապետի, Վնտ., 1865:
8. Թոմայ Մաթեւոսեանի Սիւնեաց եպիսկոպոսի գոյ գիեաց առ Հերսիկ կաթող (Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբժշկաց երկն., Նոր-Ջուղա 1688):
9. Թոփճեան Յակոբ, Ցուցակ ձեռագրաց հայկիկ վարժապետի Դպրեան, Վաղ.,. 1898:
10. Կարկնեանց Յակոբ, Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրատարանի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, Տփղ., 1863:
11. Կորիւն. Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի
12. Հաւաքումն պատմութեան Վարդանեայ վարդապետի լուսաբանեալ, Վնտ., 1862:
13. Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատ. Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, ՊՀ, հտ Ա., գ. Դ., Տփղ., 1904:
14. Մատենադարան Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Բ. տպ. [հրատ. Մամիկոնեան Մելիք-Ադամեան և Ներսէս Տէր-Միքելեան], Վաղ., 1898:
15. Մատոսեան Ուռհայեցի, Պատմութիւն, Երուսաղէմ, 1869,
16. Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ «Պատմութիւն Տիեզերական», ի լոյս ընծայեցաւ Մկրտիչեանց, Մոսկուա, 1861:
17. Մխիթարայ Սրիվկանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծայեցաւ Ք. Պատկանեան, Սպբ., 1867:

18. Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1860:
19. Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, հրատ. Վահան Բաստամեանց, Վաղ., 1880,
20. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատ. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան [ՊՀ, հ. Ա.], գիրք Ա.], Էջմ.-Տփ., 1913:
21. Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից [ՂՄ 8], Տփղ., 1913:
22. Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860:
23. Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթուղիկոսի խոստովանութիւն անշարժ յուսոյ մարմնալոյ Բանին եւն., հրատ. Կարապետ վ. Վաղ., 1896:
24. Յովհաննու կաթուղիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց [ՂՄ 5], Տփղ., 1912:
25. Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղ., 1871:
26. Պատմութիւն Աղուանից, արարեալ Մովսիսի Կաղանկայտուացւոյ, ի լոյս ընծայեաց Կ. Շահնազարեան [«Շար հայ պատմագրաց»], Փարիզ, 1860:
27. Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժցւոյ, Բ. տպ., Վաղ., 1896:
28. Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, ի լոյս ընծայեաց Ոսկան Տէր-Գէորգեան Յովհաննիսեանց Երևանցի, Մոսկվա, 1858:
29. Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արք-եպիսկոպոսի Սիւնեաց, Տփղ., 1911:
30. Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, ի լոյս ածին †Գ. Տէր-Մկրտչեան և Մես-րոպ եպիսկոպոս [«Բնագիրներ և Հետազօտութիւններ», գ. Ա.], Էջմ., 1921:
31. Սամուէլ քահանայի Անեցւոյ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», հրատ. Ար-շակ Տէր-Միքելեանի, Վաղ., 1893:
32. Սարգիսեան Բարսեղ, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Ա., Վնտ., 1914:
33. Սոփերք հայկականք, Գ., Վնտ., 1853:
34. Սոփերք հայկականք, Ե., Վնտ., 1853:
35. Սոփերք հայկականք, ԺԶ., Վնտ., 1854:
36. Սոփերք հայկականք, ԺԷ., Վնտ., 1854:
37. Վիմական տարեգիր. Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազ-մեաց Կ. Կոստանեանց [BAG II], Cոճ., 1913:
38. Տաշեան Յակովբոս, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխի-թարեանց ի Վիեննա, Վն., 1895:
39. Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի Ճառք, Բ. տպ. Վնտ., 1860:
40. Տետրակ համառօտ և իմաստախոհ բանիւք, արարեալ հոգելից և իմաստուն վարդապետին Յօհաննիսի Երզնկացւոյ, որ և ասի Ծործորեցի, եւլն., Ն. Նախ-իջևան, 1792:

41. Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս էած Ք. Պատկանեան, ՍՊբ., 1893:
42. Քարոզգիրք. Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմռան հատոր, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն, Կ. Պոլիս, 1740:

Ռուսերեն՝

1. Вахушти Царевич, География Грузии, пер. М. Джанашвили [Зап. Кавк. Отд. Рус. Геогр. О-ва, т. XXIV], Тфл., 1904.
2. Всеобщая история Вардана Великого, пер. Н. Эмина, Москва, *1861*.
3. Космографический трактат Иоанна Тцорзореци (XIII в.).- «Переводы и статьи Эмина по духовной армянской литературе» etc., Москва, 1897.

Ուսումնասիրություններ.

1. Աբեղյան Մ., Համառոտություն հայ ժողովրդական վեպի յեվ պատմության, Յերեվան, 1923:
2. Ալիշան Ղ., Այրարատ, Վնտ., 1890:
3. Ալիշան Ղ., Հայապատում, Վնտ., 1901:
4. Ալիշան Ղ., Շիրակ, Վնտ., 1881:
5. Ակինեան Ներսէս, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ. Պատմական ուսումնասիրութիւն [ԱՄ ՁՋ.], Վն., 1920):
6. Ակինեան Ներսէս, Կիւրիոն կաթողիկոս Վրաց. Պատմութիւն հայ-վրացական յարաբերութեանց եօթներորդ դարու մէջ [ԱՄ Կ.], Վն., 1910:
7. Ակինեան Ներսէս, Մատենագրական հետազոտութիւններ, քննութիւն և բնա-գիր. հատոր Ա., Վն., 1922:
8. Ակինեան Ներսէս, Յովհաննէս կաթուղիկոս Օձնեցւոյ նորագիւտ գրուածք մը բանին մարմնաւորութեան վրայ.- «Յուշարձան», Վն., 1911:
9. Ակինեան Ներսէս, Տիմոթէոս Կուզ հայ մատենագրութեան մեջ [ԱՄ ԾԲ.], Վն., 1909:
10. Աղանեանց Գիւտ, Դիւան հայոց պատմութեան, Դ., 1898:
11. Աղանեանց Գիւտ, Դիւան հայոց պատմութեան, Թ., Տփղ., 1911:
12. Աղանեանց Գիւտ, Դիւան հայոց պատմութեան, Ժ., Տփղ., 1910:
13. Աղանեանց Գիւտ, Հնից-նորից, Հնախուզական ուղևորութիւն. Տփղ., 1900:
14. Աղանեանց Գիւտ, Տոմար և տօնացոյց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, Բ. տպ., Տփղ., 1894:
15. ԲժշկեանցՄինաս, ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վնտ., 1883:
16. Բիւզանդացի Նորայր, Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տփղ., 1900:
17. Դաւթեան Արիստակէս, Կանոնք ս. ժողովոց և հարց եկեղեցւոյ, Տփղ., 1904:

18. Զամ[ինեան] Աբրահամ, Պատմութիւն հայ գրականութեան, Ա., Նոր-Նախիջևան, 1915:
19. Զ[արբհանալեան] Գարեգին, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վնտ., 1889:
20. Զարբհանալեան Գարեգին, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Գ. տպ., Վնտ., 1897:
21. Զարբհանալեան Գարեգին, Հայկական մատենագիտութիւն, Վնտ., 1883:
22. Զարբհանալեան Գարեգին, Յաղագս բարեխօսութեան սրբոց, Վն., 1852:
23. Ինճիճեան Ղուկաս, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վնտ., 1822:
24. ԻնճիճեանՂուկաս, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մ. Ա., հտր. Ա. Վնտ., 1805:
25. Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի. 1838-1913, Տփղ., 1915:
26. Լէօ, Սահմանավէճեր. Լօռի-Ախալքալաք-Ղարաբաղ, Տփղ., 1919:
27. Խալաթեան Գ., Ղազար Փարպեցի և գործք նորին. Պատմական և գրական քննութիւն, Մոսկվա, 1883:
28. Կոստանեանց Կ., Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղէքսանդրապօլ, 1910:
29. Կոստանեանց Կ., Տէր Պետրոս Գետադարձ, Վաղ., 1897:
30. ՂազիկեանԱ., Հայկական նոր մատենագիտութիւն, Ա., Վնտ., 1912:
31. ՂլտճեանԱրսեն, Հայոց հին իրաւունքը, Ալէքսանդրապոլ, 1913:
32. Մաքսուդեանց Մեսրոպ, Հաւաքարան անուանց կաթուղիկոսաց [Աղթամարայ], Էջմ., 1916:
33. Մելիք-Թանգեան Ներսէս, Հայոց եկեղեցական իրաւունքը, Ա. գիրք. Ներածութիւն և աղբիւրներ, Շուշի, 1903:
34. Մխիթարեանց Ստեփաննոս, Ստորագրութիւն հռչակավոր մեծի ուխտին Այրիվանայ սրբոյն Գեղարդայ, Վաղ., 1873:
35. Մովսէսեան Ղևոնդ, Լօռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վն., 1923:
36. Յակովբոս Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, հետզօտութիւնք և բնագիրք, մ. ա. [ԱՄ ԺԶ.], Վն., 1895:
37. Յովսէփեան Գարեգին, Գրչութեան արուեստը հին Հայոց մէջ, մ. գ. Քարտէզ հայ հնագրութեան, Վաղ., 1913:
38. Յովսէփեան Գարեգին, Խոսրովիկ թարգմանիչ երկասիրութիւնք նորին, Վաղ., 1903:
39. Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի: Ի Վենետիկ, 1836:
40. Ոսկեան Համազասպ, Յովհաննէս Վանական և իւր դպրոցը [ԱՄ ՂԳ.], Վն., 1922:
41. Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, հտ. Գ., Վնտ., 1786:
42. Պալճեան Աղէքսանդր, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս և միութեան նոցա ընդ Հռոմէական եկեղեցւոյ ելլն., Վն., 1878:
43. Սամուէլեան Խաչիկ, Մխիթար Գօշի Դատաստանագիրքը և հայոց հին քաղաքացիական իրաւունքը [ԱՄ ԿԳ.], Վն., 1911:
44. Սարգիսեան Բարսեղ, Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն, Վն., 1890:
45. Սարգիսեան Բարսեղ, Քննադատութիւն Յովհան Մանդակունւոյ և իւր երկասիրութեանց վրայ, Վնտ., 1895:
46. Սարգիսեան Ներսէս, Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայս, Վնտ.,1864:
47. Սեդրակեան Արիստակէս, Հայաստանեայց եկեղեցւոյ պատկերագրութիւնը, ՍՊբ, 1904:
48. Տ[իրոյան Ա., Համառօտ Պատմութիւն Վրաց, Վնտ., 1884:
49. Տէր-Միքելեան Արշակ, Հայաստանեայց եկեղեցին և Բիւզանդական ժողովոց պարագայք, Մոսկվա, 1892:
50. Տէր-Միքելեան Արշակ, Հայաստանեայց, առաքելական ուղղափառ սուրբ եկեղեցին և իւր սուրբ կարգը, Վաղ., 1897 :
51. Տէր-Միքելեան Արշակ, Միջին դարերի կաթուղիկոսների ձգտումներն եկեղեցական խաղաղութեան համար, Վաղ., 1893:
52. Տէր-Մկրտչեան Կարապետ եպիսկոպոս, Դռփեանք և Մելիք-Շահնազարեան, Հայոց Ազգագրական Ընկ. հրատ., Էջմ., 1914:
53. Տիգրանեան Սիրական, Հայոց իրավունքի պատմության ներածություն, Երեվան 1924:
54. Օրմանեան Մաղաքիա, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912-1913:
55. Օրմանեան Մաղաքիա, Աթոռ Հայաստանեայց, Վաղ., 1886:

Ռուսերեն՝

1. Адонц Н., Армянская литература,- “Нов. Энцикл. словарь“ Брокгауз-Ефрона, т. III.
2. Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи [BAG IV], Пгр., 1915.
3. Джавахов И., Государственный строй древней Грузии и древней Армении, т. I, [TPVIII], Спб., 1905.
4. Джавахов И., Государственный строй древней Грузии и древней Армении, т. I, [TPXI], Спб., 1905.
5. Иоселиани П., Путевые заметки от Тифлиса до Ахталы, Тфл., 1850.
6. Какабадзе С., Сигель груз. царя Георгия III по поводу восстания князей Орбел-и в 1177 г., -Изв. КИАИ, т. IV, Тфл., 1926.
7. Караулов Н., Сведения арабских географов IX–X веков по Р. Хр. о Кавказе, Арране и Адербейджане.- СМК XXXVIII, 1908.
8. Кекелидзе Корнели, Иерусалимский Канонарь. Грузинская версия, Тфл., 1912.
9. Мажников С., Памятники древности города Самшвильде.- СМК XIII, 1892.
10. Марр Н., О раскопках и работах в Ани летом 1906 года [ТПХ.], Спб., 1907.
11. Меликсет-Беков Л., Тифлис, его основание и краткий исторический очерк, Тфл., 1925.

12. Муравьев А., Грузия и Армения, ч. II, Спб., 1848.
13. Овсепян Гарегин, Потомство Тарсаич'а Орбеляна и Мина хат'уны, ХВ, II, 1913.
14. Скабаланович Н., Византийское государство и церковь в XI веке, Спб., 1884,
15. Такайшвили Е., Археологические экскурсии, разыскания и заметики, в, II, Тфл., 1904.
16. Тер-Мовсесян Месроп, История перевода Библии на армянский язык, Спб., 1903.
17. Цагарели А., Сведения о памятниках грузинской писменности, т. 1, Спб., 1894.
18. Эмин Н., Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, Москва, 1881.

Հոդվածներ

1. Ակինեան Ներսէս, Խոսրովիկ թարգմանիչ և իւր երկասիրութիւնք, - ՀԱ, 1904:
2. Ակինեան Ներսէս, Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց.- ՀԱ, 1904:
3. Ակինեան Ներսէս, Վրթանէս վարդապետ Քերդող և իւր երկասիրութիւնք.- ՀԱ, 1910:
4. Աւդալբէկեան Թադէոս, Բանասէրի օրագրից,- ՀԱ, 1926:
5. Բանբեր Էջմիածնի Գիտական Ինստիտուտի, Ա-Բ.:
6. Եկեղեցական նախկին թանգարանի ձեռ. N 864 (ԺԸ. դ.):
7. Երզնկեան Ռոստոմբէգ, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից, Վաղ., 1886:
8. Ինգորոզվա Պ., ջუსტაწელიანა, I, Տփղ., 1926:
9. Կանայեան Ս., Պատմութիւն աստուածընկալ Ս. Նշանին Ս. Աղբերկու և Շապուհ Բագրատունի,- «Բանբեր Էջմիածնի Գիտական Ինստիտուտի», գ. Ա-Բ., Էջմ., 1921-1922:
10. Կոստանյանց Կ., Դաւիթ վարդապետ Ալաւկայ որդի,- ԱՀ,ԺԴ., 1906:
11. Համառօտ պատմութիւն վրաց, Վնտ., 1884:
12. Հայ մատենագրութեան հնագոյն թուականները,- «Շողակաթ», Ա., Վաղ., 1913:
13. Հանդես Ամսօրյա, 1906:
14. Մելիքսեթ-Բէկ Լ., Հայերը վրաց հին գրականութեան մէջ, «Գեղարուեստ», Թիֆլիս, VII, 1921):
15. Միսքճեան Յով., Ցուցակ հայերէն ձեռագրաց քահանայապետական մատենադարանին Վատիկանին ի Հռովմ,- ՀԱ 1892:
16. Յարութիւնեան Ի., Սանահին, - ԱՀ, Գ., 1898:
17. Սպենդիարեան Յ., Մխիթար Գոշի վանքը. ամառնային յիշողութիւններից: Մշակ, 1911, NN 16, 17, 18 :
18. Տեղեկագիր Թիֆլիզու Վանաց աւագ եկեղեցու կրօնա-պատմական թանգարանի մնայուն յանձնաժողովի 1908, ապրիլ 5, Տփղ., 1910:
19. [Տէր-Մինասեանց] Եր[ուանդ] ս., Հաղբատ և Սանահին վանքերը.- Ա 1901, էջ 217-277, 338-344:

20. Տէր-Մկրտչյան Գալուստ, Խոսրովիկ թարգմանիչ,- Ա 1892:
21. Տէր-Մկրտչյան Գալուստ, Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց,- Ա 1902:
22. Տէր-Մկրտչյան Գալուստ, Ստեփաննոս Իմաստասէր,- Ա 1902:
23. Տէր-Մկրտչյան Գալուստ, Տիմոթէոս Կուզի հակաճառութեան հայ թարգմ. ժամանակը և Սուրբ Գրքի երրորդ կամ «նորաբեր» հայ թարգմանութիւնը,- Ա 1908:
24. Տէր-Մովսիսեան Մեսրոպ, Հայկական արձանագրութիւններ,- ԱՀ, XXV, 1917:
25. Տիգրանեան Սիրական, Կանոնագիրքը և մեր կանոնական իրաւունքը,- Ա 1902:
26. Քաջիկեան, Ճանապարհորդական յիշատակարան,- «Արձագանք» 1888, N 8:

Ռուսերեն՝

1. Аннинский, История армянской церкви ·сщЗ,- ЗВО, т. XV, в. 4, 1904.
2. Беляев Д., Ежедневные и воскресные приемы византийских царей и праздничные выходы их в храм св. Софий в IX-X в. [Byzantina II], Спб., 1893.
3. "Витязь в барсовой шкуре" Шоты из Рустава etc.,– Изв. АН, 1917.
4. Джанашвили М., "Ахпатский монастырь и его документы на грузинском языке", Изв. Кавк. Отд. и Моск. Арх. О-ва, т.1, Тфл., 1915.
5. Ерицов А., Ахпатский монастрь,- "Кав. Старина", N 2 (1872), N 3 (1873).
6. Изв. Кавк. Отд. И. Моск. Арх. О-ва, в т.III, 1913.
7. Какабадзе С., Грамота груз. царя Георгия III по поводу восстания князей Орбел-и в 1177 г., - Изв.КИАИ, т. IV, 1926, стр.124:
8. Кучук-Иоаннесов Х., Сведения и заметки о старинных армянских рукописях и армянских надписях, находящихся в пределах России,- "Древности Восточные", т. IV, Москва, 1913.
9. Марр Н., М. Тер-Мовсесян, История перевода Библии на армянский язык *գրքի գրախոսականը*.- ТР, V, 1903.
10. Марр Н., Яфетические элементы в языках Армении, X, -Изв. АН, 1918.
11. Марр Н., Термин "скиф",- "Яфетический Сборник" I, Пгр., 1922, стр. 94-97.
12. Марр Н., Историятермина ''абхаз",- Изв. АН, 1912.-ХВ, II, 1913.
13. Марр Н., Талыши [Труды КИПС4], Пгр., 1922.
14. Марр Н. Камень с армянскою надписью из Ани в Азиатском Музее, - Изв. АН, 1910.
15. Марр Н., К палеонтологии речи по грузинской лексике,- "Доклады АН ССР".– В, 1927.
16. Меликсет-Беков Л., О междоусобице в Тифлисе в1197 году по поводу Кривой пасхи, - Изв. КИАЛ, т. III.
17. Меликсет-Беков, Из материалов поездки на Цалку в 1924 г., -Изв. КИАИ, т. IV.
18. Меликсет-Беков, Об источниках древнеармянского права,- Изв. КИАН, т. II, Лнгр., 1927.

19. Меликсет-Беков Об экспедиции в Лори-Ташир и по ущелью Машавери-и летом 1926 г.- Изв. КИАН, т., IV. Тфл., 1926.
20. Меликсет-Беков, К вопросу о местоположении Цуртава, - Изв. Кавк. Отд. Рус. Геогр. О-ва, т. XXIV.
21. Меликсет-Беков, Несколько слов о термине «сомех»,-ХВ, VI 1917.
22. Муравьев А., Грузия и Армения, II, (Лори, Санагин, Ахпат).
23. Орбели И., Надпись Санаинского моста, - ХВ, IV.
24. Орбели И., Фрагмент крестного камня с арабской надписью в Тифлисе,- ХВ, т. VI, 1917.
25. Пахомов Е., О монете Корикэ Куропалата, - Изв. КИАИ. т. III, Тфл., 1925.
26. Тигранян С., Древне-армянская "Книга канонов". Очерки описания и исследования памятника. I, Описательная часть [Зап. АН, VIII сер. по ИФО, т. XIII, N 3], Пгр., 1918.
27. Тигранян С., "Судебная книга" Мхитара и "Книга канонов",– Изв. КИАИ, т. III.
28. Шагинян Мариэтта, Что такое "вардапет",- газ. "Кавк. Слово" 1915 г., N 196.

Օտար լեզուներով

Ֆրանսերեն

1. Վախուշտի Description geographique de la Géorgie, publie par M. Brosset, S. P. B. 1842.
2. Brosset M., "Mélanges Asiatigues", t. II,1856.
3. Brosset M., "Mélanges Asiatgues", III, 1852.
4. Brosset M., Additions et eclaircissements a l'Histore de la Georgie, Add. XVII.
5. Brosset M., Historie de la Georgie, Introduction, SPB. 1858.
6. Brosset M., Monographie des monnaie arméniennes, SPB. 1839.
7. Bulletin de L'Université d'Etat de la R. S .S. d'Arménie", N 1.
8. Georgica, IV. Leges, N·2] Տփ., 1927.
9. Georgraphica, lib. XI, cap. 14, § 5.
10. I'Arménie, t. II, Paris, 1819.
11. Macler F., Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliotheque nationale, Paris, 1908.
12. V. Langlois, Collection des historiens anciens et modernes de l' Armenie, t. I, Paris, 1867.
13. Saint-Martin M., Mémoires historigues et géograhigues de I'Arménie, II.

Գերմաներեն

1. Domini Johannis Philosophi Oznienzis Armeniorum Catholici Opera, Venetiis, 1834.
2. Ginzel F. K., Handbuch der mathematishen und technishen Chronologie. Das Zeitrechnungeswesen der Volker, III Band, Leipzig, 1914.

3. Glossarium ad scriptores mediae et infimae graecitatis, auctore Carolo du Fresne, Domino du Cange, t. I, Vratislaviae, 1891.
4. Hubschmann H., Die altarmenischen Ortsnamen, Strassburg, 1904.
5. Marguart, Eransahr, Berlin, 1901.
6. Schmid J. M., HI. Reden der Johan Mandakuni, Regenburg, 1871.
7. Somal S., Quadro della storia litteraria di Armenia, Venezia, 1829.
8. Soukry A., Géographie de Moise de Gorene, Venise, 1880.
9. Timotheus Alurus' des Patriarchen von Alexandrian Widerlegung der auf der Synode zu Chalcedon Festgesetzten Lehre. Armenischer Text mit deutschen und armenischen Vorwort... herausgegeben von Karapet Ter-Mekerttchian und Ervand Ter-Minassiantz, Leipsig, 1908.

Վրացերեն

1. ანტონ კათალიკოზი, წყობილ-სიტყვაობა, ტფ., 1853 წ. (Անտոն կաթողիկոս, «Չափաբերական», Տփղ., 1853 թ.):
2. ანტონ კათალიკოზი, "თქმული წმიდისა მამისა ჩუენისა არსენისი მოძღურის ა, მცხეთელ კათოლიკოზისა, რომელი იყო სანახებთა-გან სამცხისათა საფარით, განყოფისა-თჳს ქართლისა და სომხითისა" (Անտոն կաթողիկոս, «Չափաբերական», Տփղ.,1853 թ.):
3. ანტონ კათალიკოზი, მზა-მეტყველება, ბ. კარბელოვის გამოც., ტფ., 1892. (Անտոն կաթողիկոս, «Էրիստիկա», Պ. Կարբելովի հրատ, Տփղ.,1892):
4. ბატონიშვილი ვახუშტი, საქართველოს ისტორია, I, ტფ., 1885. (Բատոնիշվիլի Վախուշտի, Վրաստանի պատմություն, Ա., Տփղ.,1885):
5. ბატონიშვილი ვახუშტი, საქართველოს გეოგრაფია, ტფ., 1904. (Բատոնիշվիլի Վախուշտի, Վրաստանի աշխարհագրություն, Տփղ.,1904):
6. ბატონიშვილი ვახუშტი, საქართველოს გეოგრაფია, ტფ., 1885. (Բատոնիշվիլի Վախուշտի, Վրաստանի աշխարհագրություն, հրատ. Ս. Ջանաշվիլու, Ա., Տփղ.,1885):
7. „ვეფხის-ტყაოსანი", სარგის კაკაბაძის რედაქტორობით, მეორე გამოცემა, ტფ., 1927 («Ընձենավորը», Սարգիս Կակաբաձեի խմբագրությամբ, երկրորդ հրատ., Տփղ.,1927):
8. თაყაიშვილი ე., საქართველოს სიძველენი, I, ტფ., 1889. (Թաղաիշվիլի Է., Վրաստանի հնությունները, I,Տփղ.,1889):
9. თაყაიშვილი ე., Monumenta Georgica, IV. Leges, N 1, ტფ., 1920. (Թաղաիաշվիլի Է., Monumenta Georgica, IV. Leges, N 1, Տփղ.,1920):
10. ქ. ც., II, დ. ჩუბინოვის გამოც., ს.პ.ბ., 1854. (Ք.Ց., II, Դ. Չուբինովի հրատ. ՍՊբ., 1854)::
11. იაკობ ხუცესი, წამებაჲ წმიდისა შუშანიკისი დედოფლისაჲ, ს. გორგაძის გამოც., ქუთაისი, 1917. (Իակոբ Խուցեսի, «Նահատակութիւն սրբոյն Շուշանկայ», Ս. Գորգաձեի հրատ. Քութայիս, 1917):

12. კაკაბაძე სარგის, საქართველოს მოკლე ისტორია: ახალი საუკუნეების ეპოქა, ტფ., 1920. (Կակաբաձե Սարգիս, Վրաստանի համառոտ պատմություն: Նոր դարերի էպոխա, Տփղ.,1920):
13. კაკაბაძე სარგის, ვინ იყო და როდის ცხოვრობდა სარგის თმოგველი, ტფ., 1913 (Կակաբաձե Սարգիս, Ով էր և երբ է ապրել Սարգիս Թմոգվելին, Տփղ.,1913):
14. კაკაბაძე სარგის, წერილები და მასალები საქართველოს ისტორიისათვის, წიგნი I, 1914 (Կակաբաձե Սարգիս, Հոդվածներ և նյութեր Վրաստանի պատմության համար, գիրք I,Տփղ.,1914):
15. კეკელიძე კორნ., ქართული ლიტერატურის ისტორია, ტ. I, ტფ., 1923. (Կեկելիձե Կոռն., Վրաց գրականության պատմություն, հ. I, Տփղ.,1923):
16. კეკელიძე კორნ., ქართული ლიტერატურის ისტორია, ტ. II, ტფ., 1924. (Կեկելիձե Կոռնելի, Վրաց գրականության պատմություն, հ. II, Տփղ.,1924):
17. მატიანე ქართლისა, მარიამ დედოფლის ვარიანტი, ე. თაყაიშვილის გამოც., ტფ., 1906 (Մատիանե Քարթլիսա, Մարիամ թագուհու տարբերակը, Է. Թաղաիշվիլու հրատ., Տփղ.,1906):
18. სამართალი სომხური. ქართული ვერსია, შესრულებული ვახტანგ V-ის ბრძანებით, გამოსცა ლეონმელიქ ს ეთ – ბეგმა [Monumenta Georgica IV. Leges, № 2], ტფ. 1927) (Կանոնագիրք Հայոց. վրացական տարբերակ՝ իրականացված Վախթանգ V-ի հրամանով, հրատարակեց Լ. Մելիքսեթ - Բեկը [Monumenta Georgica. IV. Leges, № 2], Տփղ.,1927:
19. სულხან - საბა ორბელიანი, ქართული ლექსიკონი, ტფ.,1884. (Սուլխան-Սաբա Օրբելիանի, Վրացերեն բառարան, Տփղ.,1884):
20. საბინინი მ., საქართველოს სამოთხე, Спб., 1882. (Մ. Սաբինին, Վրաստանի դրախտը, ՍՊբ, 1882):
21. ქართლის ცხოვრება, მ. ბროსეს გამოც., ს.პ.ბ., 1849 (Քարթլիս ցխովրեբա, Մ. Բրոսեի հրատ., ՍՊբ., 1849).
22. ჟორდანია თ., ქრონიკები, I, ტფ., 1893. (Ժորդանիա Թ., Ժամանակագրություններ, I, Տփղ.,1893):
23. ჟორდანია თ., ქრონიკები, II, ტფ., 1897 (Ժորդանիա Թ., Ժամանակագրություններ, II, Տփղ.,1897):
24. ძველი საქართველო, წ. I, ტფ., 1907 (Հին Վրաստան, գիրք I, Տփղ.,1907)
25. ჭიჭინაძე ზ., სამხრეთ საქართველო (სომხეთი), ტფ., 1901. (Զ. Ճիճինաձե, Հարավային Վրաստան [Հայաստան], Տփղ.,1901):
26. ჯავახიშვილი ივ., ძველი ქართული ისტორიული ლიტერატურა, ტფ., 1921. (Իվ. Ջավախիշվիլի, Վրաց հին պատմական գրականություն, երկրոդ հրատ., Տփղ.,1921):
27. ჯავახიშვილი ივ., ქართველი ერის ისტორია, ტფ., 1913-1914 (Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմություն, գ. I-II, Տփղ., 1913-1914):
28. ჯავახიშვილი ივ., ქართული სამართლის ისტორია, ქუთაისი, 1919. (Իվ. Ջավախիշվիլի, Վրաց իրավունքի պատմություն, Քութայիս, 1919):
29. ჯავახიშვილი ივ., საქართველოს საზღვრები ისტორიულად და თანამედროვე თვალსაზრისით განხილული, ტფ., 1919 (Իվ. Ջավախիշվիլի, Վրաստանի սահ-

մանները պատմականորեն և ժամանակակից տեսանկյունով քննարկված, Տփղ.,1919):
30. („ველმწიფის კარის გარიგება"(«Թագավորի արքունական դաշնագիրը»), Է. Թաղաիշվիլու հրատ., [Monumenta Georgica. IV. Leges, № 1], Տփղ., 1920:

Հոդվածներ

1. Կոռն.Կեկելիձե, "Պրովոկացիա თუ სიბეცე"? (Պրովոկացիա՞, թե՞ կարճատեսության := (Ալ. Ռեմիզովը և հայերի «Սուրբ Սարգիսը).- «Սաքարթվելո» (լրագիր), 1916 թ., № 124 :
2. კეკელიძე კორნ., ორი ექვთიმე ძველს ქართულ მწერლობაში,- „ჩვენი მეცნიერება", №2-3, ტფ.,1923 (Կոռն. Կեկելիձե, Երկու Էքվթիմե վրաց հին մատենագրության մեջ, «Չվենի մեցնիերեբա», N 2-3, Տփղ.,1923):
3. კეკელიძე კორნ., ქართველთა მოქცევის მთავარი ისტორიულ-ქრონოლოგიური საკითხები,- „მიმომხილველი. საქართველოს საისტორიო და საეთნოგრაფიო საზოგადოების ორგანო, წ. I, ტფ.,1926 (Կեկելիձե Կոռն., Վրաց դարձի հիմնական պատմաժամանակագրական հարցերը.- «Միմոմխիլվելի», Վրաստանի պատմական և ազգագրական ընկերության օրգան, գ. I., Տփղ., 1926):
4. მელიქსეთ-ბეგი ლ., ქართული ვერსია სპარაკ პართელის წინასწარმეტყველებისა, „ტფ. უნ. მოამბე", II, ტფ., 1923 (Լ. Մելիքսեթ-Բեկ, Սահակ Պարթևի կանխագուշակության վրացական վարկածը, «Թիֆ. համալս. բանբեր», II, Տփղ.,1923):
5. მელიქსეთ-ბეგი ლ., მასალები ტფილისისა და «სომხითის» სძველეთა ისტორიისათვის, „ჩვენი მეცნიერება", № 1, ტფ., 1924 (Լ. Մելիքսեթ-Բեկ, «Նյութեր Թիֆլիսի և «Սոմխիթիի» հնությունների պատմության համար», «Չվենի մեցնիերեբա», N 1, Տփղ.,1924):
6. მელიქსეთ-ბეგი ლ., ტფილისის ვანქის დაარსების საკითხისათვის, „ტფ. უნ. მოამბე", IV, 1924 (Լևոն Մելիքսեթ-Բեկ, Թիֆլիսի վանքի հիմնադրման հարցի շուրջ,- «Թիֆ. համալս. բանբեր», IV, 1924):
7. მელიქსეთ-ბეგი ლ., ვახუშტისეული „ოშიტუტრუქისა"– თვის (ძველი ტფილისის გარშემო) „საისტორიო მოამბე", № 2, ტფ., 1924 (Լ. Մելիքսեթ-Բեկ, վախուշտիական «իշխուտուրուկի» մասին (հին Թիֆլիսի շուրջ), «Սաիստորիո մոամբե»,№ 2, Տփղ.,1924):
8. მელიქსეთ-ბეგი ლ., ქობერი და მისი სომხური და ქართული წარწერები, „ტფ. უნ. მოამბე", VII, 1927 (Լ. Մելիքսեթ-Բեկ, «Քոբերը և նրա հայերեն ու վրացերեն արձանագրությունները», «Թիֆ.համալս. բանբեր», VII, Տփղ.,1927):
9. მელიქსეთ-ბეგი ლ.,კაწარეთი„საისტორიო მოამბე",N 2, ტფ.,1924 (Լ. Մելիքսեթ-Բեկ, Կածարեթի, «Սաիստորիո մոամբե», N 2, Տփղ.,1924 թ.):

10. კაკაბაძე სარგის,ქართული სახელმწიფოებრიობის გენეზის საკითხები, № 1, ტფ.,1924 (Կակաբաձե Սարգիս, Վրաց պետականության սկզբնավորման հարցերը, «Սահստորիո մոամբե», № 1, Տփղ.,1924):
11. შანიძე აკ., ჰაემეტი ტექსტები და მათი მნიშვნელობა ქართული ენის ისტორიისათვის, „ტფ. უნ. მოამბე“, III, ტფ., 1923 (Ակ. Շանիձե, Հաեմետի բնագրերը և նրանց նշանակությունը վրաց լեզվի պատմության համար, «Թիֆ.համալս. բանբեր», III, Տփղ.,1923):
12. ჩიქობავა არნოლდ, ნანმეტი და ჰაემეტი ტექსტების აღმოჩენისათვის, “ჩვენი მეცნიერება”,№15-16, ტფ.,1925 (Առնոլդ Չիքոբավա, Խանմետի և Հաեմետի բնագրերի հայտնաբերման առիթով.- «Չվենի մեցնիերեբա»,№ 15-16, Տփղ.,1925):
13. ჯავახიშვილი ივ., ახლად აღმოჩენილი უძველესი ქართული ნელთაწერები,- “ტფ. უნ. მოამბე”, II, ტფ.,1922-1923 (Իվ. Ջավախիշվիլի, Նորահայտ հնագույն վրացական ձեռագրեր, «Թիֆ. համալս. բանբեր», II, Տփղ.,1922-1923):
14. ჯანაშვილი მ.,კახეთში,- გაზ. “საქართველო”, 1917, № 190 (Ջանաշվիլի Մ., Կախեթում, «Սաքարթվելո» (լրագիր), 1917, № 190):

ՑԱՆԿ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբաս (Կյուրիկյան թագավոր) - 57, 58, 59, 65
Աբաս որդի Գրիգորի - 200
Աբբա-Ամբադ Ալավերդելի (Ալավերդցի) - 200
Աբեղյան Մ. - 42, 50, 148, 155, 259-261
Աբուլեթ Օրբելի - 59
Աբրահամ (Աղբաթանացի, Հայոց կաթողիկոս) - 94, 100, 123, 125, 126, 158, 174, 241, 242
Աբրահամ (նահապետ) - 228
Աբրահամ (պատրիարք) - 129
Աբրահամ (քերական) - 96
Ագաթանգեղոս - 157, 262
Ադոնց Ն. - 7, 35, 91, 135
Աթանաս Մեծ - 119, 163, 191, 209, 242
Ալ(ղ)եքսանդր - 127, 128, 163
Ալան (հատուկ անուն - 87)
Ալեքսիոս Կոմնենոս - 150
Ալիշան Ղ. - 52, 62 - 64, 80, 86, 133, 135, 136, 141, 148, 151,153, 155-158, 170, 176, 184, 224, 226,248, 261
Ալմազով Ա. - 7
Ալփասլան (Մելիքշահի հայր) - 158
Ակինյան Ն. - 7, 23,81, 85, 89-91, 93, 100, 151, 164, 185, 193-199, 201, 203-209, 224, 226, 261
Աղանյանց Գյուտ - 43, 70, 74, 76, 78, 118, 141, 157, 160, 195,219, 261
Աղեքսանդրոս - 226
Աճառյան Հր. - 17, 90, 135,136, 150, 225, 25
Ամատունի Սահակ - 213
Անանէ Հաղպատացի (Խաբատացի) - 82
Անանիա Զորագետցի - 38, 118
Անանիա Մոկացի - 95
Անանիա Նարեկացի - 117, 160
Անանիա Շիրակացի - 93, 155, 156, 158, 259
Անանիա Սանահնեցի (Անանէ Հաղպատացի, Անանիա «մերազգին») - 11, 38, 68, 82, 83, 98, 111, 115, 117, 119-125, 132, 148, 160,164-167, 169, 177, 236, 237, 241, 251-254
Անանուն հեղինակ - 69, 79
Անաստաս - 126
Աննա (թագուհի) - 146
Անտոն Ա. (Վրաց կաթողիկոս) - 41, 85, 92, 168, 227
Անտոն Ճղոնդիդելի - 211
Անտոնյան - 109
Անփիլա (եպիսկոպոս) - 119
Աշոտ Բագրատունի տես Աշոտ Ողորմած
Աշոտ Շահնշահ - 68
Աշոտ Ողորմած - 52, 55, 68, 69, 71, 73, 74
Աշուշա (բդեշխ) - 51
Ապոլլիոնիոս Հոռոդոսցի - 231, 232
Առան (անձնանուն) - 184
Առաքել Դավրիժեցի - 106, 218, 260
Ասլան - 87
Ասողիկ(Ստեփանոս Տարոնացի) - 44, 46, 47, 52, 55, 68, 72, 91,95, 164
Ավդալբեկյան Թ. - 51, 264
Արղության - Երկայնաբազուկ Հ. - 43, 86
Արշակ (Հայոց արքա) - 50
Արշակունիներ - 50
Արսեն (վարդապետ) - 41
Արսեն Իղալթոեցի (Արսեն որդի Վաչեի) - 140, 146, 168, 252, 255
Արսեն(Վրաց կաթողիկոս) - 41, 51, 94, 100, 145,164, 167, 240
Արսենիոս Քարթլեցի - 143
Արտեմոն (նահատակ) - 159, 162

Արքայություն, Գալուստ, Համբարձում, Հարություն (մականուններ) - 136, 172
Ափցիաուրի Ն. - 18
ալ-Մասուդի - 47,53
ալ-Սթահր - 47

Բաբգ(կ)են (Հայոց կաթողիկոս) - 88, 126, 168,
Բագրատ Դ. - 57, 74, 124, 252
Բագրատունիներ - 33, 34, 52-54, 57, 64, 65, 70, 238
Բառնաբաս - 217
Բասիլ (վրացի) - 218
Բասիլ-Բարսեղներ - 183
Բասիլ կամ Բասիլիոս (արքեպիսկոպոս) - 81
Բասիլ կամ Բարսեղ Խաչենցի (եպիսկոպոս) - 81, 98, 181-185
Բաստամյանց Վ. - 17, 40, 219, 224, 229, 231-234, 260
Բարխուդարյան Մ. - 64, 77, 78, 211, 221
Բարսեղ Կեսարացի - 197, 209, 214, 242
Բարսեղ կամ Բասիլ Անեցի - 54, 68, 151, 183
Բաքրաձե - 53
Բժշկյանց Մ. - 76, 87, 140, 197,248, 261
Բյուզանդիա - 231
Բրոսե Մ. - 41, 42, 48, 49, 52, 55, 65, 72, 75, 84, 85, 143, 171, 240

Գևորգ (զորավար) - 213
Գևորգ «Կաղ» (Գևորգ կաղ) - 209
Գևորգ Լամբրոնեցի (Սկևռացի) - 201
Գևորգ Հաղբատեցի (կաթողիկոս) - 38, 95, 123, 176,181, 185, 186
Գևորգ Մեղրիկ - 192
Գևորգ Նահատակ - 192
Գևորգ Պիսիդես - 152,
Գաբրիել (եպիսկոպոս) - 168, 242
Գաբրիել Խաղաղացի - 125
Գագան - 108
Գագիկ - 160
Գագիկ Ա. - 55
Գագիկ Բ. (Անիի թագավոր) - 82
Գագիկ Կյուրիկե - 53, 57, 227
Գագիկ, Գուրգեն, Սմբատ (Աշոտ Ողորմածի որդիներ) - 69,73
Գաթրճյան Հ. - 199-201, 205, 212
Գալեմքեարյան Գ. - 151, 152, 259
Գալուստ - 136
Գալստյան Գ. - 50
Գամրեկել Թորելի - 62
Գառնիկ - 227
Գեորգի Արևելյան (եպիսկոպոս) - 38
Գիորգի (Ափխազաց թագավոր) - 211,
Գիորգի (Հերակլ Բատոնիշվիլու որդի) - 78
Գիորգի Գ. - 41, 60, 61, 70, 144, 183, 188, 210-212, 230, 254
Գյուլխանդանյան Հ. - 90, 95
Գորգաձե Ս. - 51
Գուշակյան Թ. - 198
Գուրգեն (Աշոտ Ողորմածի որդի) - 53, 55, 73
Գրիգոր (Գրիգորես,Հաղպատի եպիսկոպոս) - 220
Գրիգոր (եպիսկոպոսապետ) - 128, 163
Գրիգոր (Հայոց կաթողիկոս) - 86, 190, 230, 231
Գրիգոր - 129
Գրիգոր [Գևորգ] Մեղրիկ - 176, 192
Գրիգոր Աբասաորդի(Սանահնեցի) - 23, 76, 99, 151, 183, 196, 199-205, 208, 209, 226, 251
Գրիգոր Անավարզեցի - 203
Գրիգոր Անեցի - 176, 177
Գրիգոր Աստվածաբան - 119, 149, 151,163, 177, 192, 197, 205, 206, 209, 242
Գրիգոր Թոքակեր - 75
Գրիգոր Թոքակերի որդի - 75, 83, 137, 146, 147, 169-171, 177
Գրիգոր Լուսավորիչ - 109, 119, 122, 152, 183
Գրիգոր Կեչառեցի - 227
Գրիգոր Ձորափորեցի - 200

Գրիգոր Մագիստրոս - 11, 67, 107-111, 119, 262
Գրիգոր Նահատակ - 192
Գրիգոր Նարեկացի - 154, 177
Գրիգոր Նյուսացի - 119, 151, 197, 207, 209, 242
Գրիգոր Պահլավունի - 140
Գրիգոր Պարթև - 14
Գրիգոր Սանահնեցի - 81, 182, 199, 203, 211
Գրիգոր Սքանչելագործ - 119 - 121, 191
Գրիգոր Վահրամյանց - 108
Գրիգոր Վկայասեր - 91
Գրիգոր Տաթևացի - 40, 227, 250, 260
Գրիգոր Տղա - 36-38, 43, 44, 67, 68, 70, 71, 83, 96, 176, 181, 183, 185, 187, 189-191, 230, 259
Գրիգոր Տուտեորդի - 11, 24, 38, 44, 66, 68, 76, 81, 83, 98, 116, 181, 182, 185, 187-192,198, 199, 202, 236, 253, 254
Գրիգորիոս (կաթողիկոս) - 36, 38,71, 186
Գրիգորիս (եպիսկոպոս) - 189

Դավթյան Ա. - 121, 261
Դավիթ (Առանի որդի) - 184,
Դավիթ (պատմիչ) - 146
Դավիթ Ա. - 55,
Դավիթ Ալավկա որդի - 11, 75, 83, 84, 137, 146,147, 169-174, 177, 228,251, 264
Դավիթ Անհաղթ - 96, 136, 197, 207, 209,
Դավիթ Անհողին - 55, 74,
Դավիթ Բաղիշեցի - 195, 219,
Դավիթ Դ. - 74
Դավիթ Կյուրիկե - 53,57, 58, 69
Դավիթ Հաղբատեցի (Քոբայրեցի) - 81, 85, 86, 181-183, 187, 195, 196,
Դավիթ (մարգարե) - 214
Դավիթ Շինարար (Շինող) - 5, 58, 59, 60, 61, 69, 70, 84, 138, 140, 142-146, 168, 252, 254,
Դավիթ Սոսլան - 85, 137, 222, 238, 240, 243, 252, 254
Դավիթ Քոբայրեցի(Քոբերեցի) - 23, 76, 83, 181, 185, 192, 193, 195-198, 201, 208, 209, 253, 254
Դեմետրե Ա. - 60, 61, 144, 170
Դեոսկորոս (Դիոսկորոս Սանահնեցի) - 76, 82, 105-107, 111-113, 115, 122, 124, 132, 187, 192
Դերենիկ Կյուրիկե - 69
Դիոնիսե(ի)ոս Ասորի - 151
Դիոնիսիոս - 151, 163, 206
Դիոնիսիոս Արիոպագացի - 119, 192, 200, 209
Դուկ - 113
Դուփյաններ - 34, 65, 263

Եզնիկ - 96
Ելբեկ - 211
Եղիազարյանց Լ. - 24
Եղիազարով Ս. - 231
Եղիշա (անձնանուն) - 130
Եղիշե - 172, 209
Եպիփան - 119
Եպիփան(ոս)Կիպրացի - 177, 209
Եսայ մարգարե - 185, 195, 197, 198
Եվագիր(անձնանուն) - 209
Եվթաղ (անձնանուն) - 209
Եվսեբիոս Կեսարացի - 159, 162
Երեմիա Անեցի - 177
Երեմիա Անձրևիկ - 175
Երեմիա մարգարե - 223 - 225
Երզնկյան - 58, 60, 63, 73, 74, 76, 81, 87, 135, 141, 145, 157, 184, 185, 193, 197, 248, 264
Երիանոս - 119
Երինոս - 191
Երիցակ, Հայրապետ, Տերտեր, Տիրացու, Վանական, Վարդապետ (հատուկ անուններ) - 136
Երկայնաբազուկներ - 54, 63, 64, 79,
Երվանդ վ. - 88
Եփեսոս - 127, 128
Եփրեմ (կաթողիկոս) - 76, 115, 116

Եփրեմ Ասորի - 86, 119, 177, 181, 191, 209, 242

Զամինյան Ա. - 115, 124, 147, 148, 185, 189, 261
Զարբհանալյան Գ. - 43, 67, 86, 117, 124, 135, 149, 150, 152, 155, 158, 161, 172, 176, 185, 198, 200, 203, 213, 224, 226, 261
Զաքարե Սպասալար (Զաքարիա Երկայնաբազուկ) - 34, 61-63, 65, 71, 84, 187, 189, 213, 217, 218, 220-223, 231, 236, 237, 239, 240, 254
Զաքարիա (հայրապետ, Աղվանից) - 129
Զաքարիա (քահանա) - 153
Զեբեդա - 187
Զենոն - 126

Էմին Մ. - 36, 82, 83, 127, 131, 259, 260
Էքվթիմե Գրձելի (Երուսաղեմացի) - 124, 252, 254, 255

Թադևոս (առաքյալ) - 130
Թաղաիշվիլի Է. - 41, 42, 52, 53, 70, 84, 146, 240
Թամար թագուհի - 41, 61, 62, 64, 70, 81, 84, 85, 183, 210, 216, 219, 222, 230, 238, 240, 243, 252, 254
Թեոդոս - 238
Թեոդորիտես Անկյուրացի - 191
Թեոդորոս Հերձվածող - 163
Թեոփանես - 177
Թեոփիստա (հոոմեացիփիլիսոփա) - 166, 168
Թիրոյան Ա. - 261
ԹոմսոնԱ. - 7
Թոռնիկ (անձնանուն) - 227
Թովմա Մեծոփեցի - 14
Թովմաս Նուրիջանյան Վանանդեցի - 87, 141, 195, 259
Թորոս - 246, 248
Թորոս Աղբար - 76, 225, 248
Թոփճյան Հակոբ - 96, 259

Թոփուրիա Վ. - 25

Ժորդանիա Թ. - 41, 51, 94, 164

Իակոբ Խուցեսի - 51
Իբն - ալ Ֆակիհ - 47
Իգնատիոս Հաղբատեցի - 81, 83, 85, 86, 177, 181 - 183, 185
Ինասարիձե Տ. - 77
Ինգորոզվա Պ. - 53, 56, 264
Ինճիճյան Ղ. - 37, 75, 77, 78, 133, 262
Իոանե (Հովհան, Վրացկաթողիկոս) - 146, 252, 254
Իսահակ Գեղամեցի (վարդապետ) - 118
Իսահակյան Ավ. - 15
Իսիքիոս - 197
Իվանե Աթաբեկ (Աթաբագ, Երկայնաբազուկ, Ամիրսպասալար) - 34, 61, 63, 65, 71, 84, 211, 217, 218, 220, 222, 223, 231, 236-237, 239, 240, 245, 254,
Իվանե Օրբելի - 59, 61
Իվանե Օրբելյան (սպասալար) - 61
Իրինեոս - 120

Լևոն (թագավոր) - 64, 101, 126, 187, 192
Լալայան Ե. - 49, 54, 55, 62, 75, 77, 80, 87, 108, 135, 141, 157, 188, 193, 197, 249
Լանկ Թեմուր - 14
ԼաշաԳիորգի - 70
Լեո (Առաքել Բաբախանյան) - 35, 48, 49, 65, 262,
Լիսիցյան Ստ. - 62

Խալաթյան Գ. - 51, 262
Խալփայան Հ. - 219
Խախանով (Խախանաշվիլի) Ալ. - 7
Խաչատուր - 210
Խաչատուր Անեցի - 176, 177
Խաչատուր Հաղարծնեցի (Տարոնացի, Տարոնեցի)-77, 81, 176, 182, 183, 210-214, 251, 254

Խաչիկ - 227
Խաչիկ Դադյան (վարդապետ) - 96, 116
Խաչիկ(կաթողիկոս) - 119
Խաչկոնց Դ. - 212, 213
Խզըլ - 68
Խոշակ (Իվանե Աթաբագի կին) - 63
Խոսրովանուշ - 68, 69, 71
Խոսրովիկ (հռետոր - թարգմանիչ) - 93, 117, 118, 154, 160-163
Խորասու(կյուրիկյան արքայադուստր) - 138,153

Ծաղկաձոր - 80
Ծերեթելի Գր. - 88
Ծործորեցի - 260

Կ[արապետ] եպիս[կոպոս] - 34, 65, 91, 250
Կ[արապետ] վ. - 88
Կակաբաձե Ս. - 46, 49, 51, 53, 62, 65
Կայեն (Կարին) - 220
Կանայան(ց) Ս. - 47, 213, 214, 264
Կարբելով Պ. - 40, 41, 168
Կարինյան Ա. - 86
Կարինյանց Հ. - 51, 153, 161, 165, 206, 249, 259
Կեկելիձե Կ. - 16, 41, 43, 46, 50, 62, 99, 100, 119, 140, 146, 168, 169, 240, 252, 255
Կիրակոս Գանձակեցի - 53, 55, 64, 69, 71, 72, 75, 78, 81, 82, 83, 86, 105, 106, 115, 117, 120, 121, 135, 137, 138-140, 144, 148, 150, 152, 154, 155, 157, 158, 169-171, 175, 181, 183-185, 187, 189, 210-212, 215-221, 223-226, 236, 237, 239, 246-249, 260
Կիրակոս Դրազարկեցի - 192
Կյուլեսերյան Բ. - 201, 224
Կյուրեղ - 115
Կյուրեղ Ալեքսանդրացի - 88, 89, 119, 177, 242, 254
Կյուրեղ Երուսաղեմցի - 192
Կյուրիկե (անձնանուն) - 53
Կյուրիկե Ա. - 74
Կյուրիկե Բ. - 54, 74
Կյուրիկե Բագրատունի (թագավոր) - 58, 69
Կյուրիկյաններ - 37, 52, 54 - 58, 66, 73, 74
Կյուրիոն (Վրաց կաթողիկոս) - 91, 94, 100, 125, 126, 164, 242
Կոմիտաս (կաթողիկոս) - 91
Կոնստանդին (Հայոց կաթողիկոս) - 113
Կոնստանդին Դուկաս - 113
Կոնստանդին Ծիրանածին - 47
Կոնստանդին Մոնոմախ - 112
Կոստանդիանոս - 238
Կոստանյանց Կ. - 27,52, 58, 60, 62-64, 67, 73, 74, 81, 86, 107, 109-111, 114, 119, 133, 135, 141, 145, 171-174, 184, 188, 190, 193, 194, 201, 202, 204, 210, 221, 260, 262, 264
Կորիկե Կյուրողապատ - 56
Կորյուն - 51, 259, 261

Հակոբ (Քարհատի որդի) - 82
Հակոբ - 132
Հակոբ - Կեղծ վարդապետ - 92
Հակոբ Ակնեցի - 227
Հակոբ առաքյալ - 214
Հակոբ Քարաբնեցի - Սանահնեցի - 112-114, 119
Հակոբոս (վարդապետ) - 113
Հակովբ - 187
Համազասպ - 17
Համազասպ Մեծ - 108
Համբարձում - 136
Հայրապետ - 136
Հասան (Գրիգոր Մագիստրոսի հայր) - 108
Հարություն - 136
Հարությունյան Ի. - 62, 74, 77, 107, 109
Հարությունյան Ի. - 62, 74, 77, 107, 109, 184, 221, 223, 264
Հարությունյան Ս. - 42, 50
Հերակլ Բատոնիշվիլի - 78
Հերակլ կայսր - 93
Հյուսքիոս - 209

Հոնորիոս Հռոմայեցի - 242
Հովհան (Բագարանցի) - 158
Հովհան - 127
Հովհան Ոսկեբերան - 115, 116, 119, 163, 177, 185, 192, 195, 198, 200, 209, 242, 244
Հովհան Որոտնեցի - 227, 250
Հովհաննես (Անիի թագավոր) - 106
Հովհաննես (եպիսկոպոս) - 182
Հովհաննես (Հունաց թագավոր) - 113
Հովհաննես [Սմբատ] - 106
Հովհաննես Անեցի - 176, 177
Հովհաննես Գառնեցի - 141
Հովհաննես Դրասխանակերտցի - 95, 123, 260
Հովհաննես Եզնկայեցի - 118
Հովհաննես Երզնկացի(Ծործորեցի, Պլուզ) - 37, 38, 76, 116-118, 155, 156, 160, 164, 248, 260
Հովհաննես Իմաստասեր Օձնեցի(Հայոց կաթողիկոս) - 51, 91, 136, 191, 227, 241,260, 261
Հովհաննես Խաչենցի(Խաչինեցի) - 66, 185
Հովհաննես Ծարեցի -
Հովհաննես Կոզեռն - 192
Հովհաննես Ղրիմեցի (Крымский) - 55, 60, 67, 72-76, 81, 107, 135, 141, 145, 157, 184, 185, 188, 190, 193, 197, 201-204
Հովհաննես Սանահնեցի (Սանահնի) - 81, 83, 87, 182 - 184
Հովհաննես Սարկավագ (Իմաստասեր, Հաղբատեցի) - 11, 23, 24, 38, 67, 75, 76, 83, 98, 116, 118, 132-138, 140-166, 168-171, 174-177, 182, 183, 185, 208, 212, 227, 236, 246, 251-253, 254, 255
Հովհաննես Վանական Տավուշեցի - 23, 78, 96, 98, 183, 198, 216, 219, 246, 248, 249, 262
Հովհաննես Օրբելի - 79
Հովհաննես(Հովհան) Մայրագոմեցի - 91, 93, 127
Հովհաննես(Հովհան) Մանդակունի - 93, 260, 262
Հովհաննիսյան Լ. - 109
Հովհաննիսյանց - Քաջբերունի Գաբրիել - 74
Հովսեփ (Աղվանքի կաթողիկոս) - 106, 230, 246
Հովսեփյան Գ. - 54, 63, 85, 86, 117, 118, 145, 160-165, 193, 236, 262
Հուլիանոս (Հալիկառնասցի) - 89, 244
Հուլիոս (Հռոմայեցի) - 119, 242
Հուսիկ - 227
Հրաչյա - 17

Ղևոնդյաններ - 149, 155, 213
Ղազար Ջահկեցի (կաթողիկոս) - 227
Ղազար Փարպեցի - 51, 96, 226, 259, 262
Ղազիկյան Ա. - 122, 185, 195, 198, 262, 214
ՂլտճյանԱրսեն - 92, 262
Ղուկաս (կաթողիկոս) - 118
Ղուկաս - 87, 127, 128

Ճիճինաձե Զ. - 49, 70
Ճպունտելի - 211

Մաթուսաղա - 93, 259
Մալխասյան Ստ. - 51, 259
Մաղաքիա (աբեղա) - 247, 249
Մաճավարիանի Զ. - 23, 25
Մամբրե Վերծանող - 96, 177
Մամիկոնյան Վահան - 51
Մանանդյան Հ. - 17, 58, 225, 234, 235
Մառ Ն. - 7, 14, 41, 50, 62, 90, 172
Մատթեոս - 127, 128
Մատթեոս Հաղբատեցի - 112, 132
Մատթեոս Ուռհայեցի - 54, 56, 60, 82, 105-107, 112, 116, 138, 142, 166, 183, 259
Մատիկյան Ա. - 240
Մարաբաս (Մար Աբաս) - 41
Մարդապետական (եպիսկոպոս) - 130

Մարիամ (Կյուրիկեի դուստր) - 53, 138, 153, 184
Մարիամ Աստվածածին - 153
Մարկոս - 127, 128
Մարտիրոս - 218, 246, 247
Մարտիրոսյանց Ռ. - 24
Մաքսուդյանց Մ. - 85, 164, 240, 262
Մելիք - Ադամյան Մ. - 82, 259
Մելիք - Թանգյան Ն. - 92, 262
Մելիք - Շահնազարյաններ - 34, 65, 263
Մելիքշահ (Ալփասլանի որդի) - 149, 150, 158
Մելիքսեթ - Բեկ Լ. - 7-18, 25, 41, 42, 54, 58, 65, 69, 70, 75, 78, 80, 138, 177, 196, 227, 264
Մեղրիկ(անձնանուն) - 227
Մեսրոպ Եպիսկոպոս - 47
Մեսրոպ Մաշտոց (Մաշդոց, Մաշթոց, Մասթոց, Քերթող) - 51, 95,96, 124, 149, 152, 191, 227, 249
Միխայիլ (պատրիարք) - 183
Միսքճյան Հ. - 86, 123, 160, 167, 264
Միրզաբեկյան - 225
Միրիան (Իբերիայի թագավոր) - 50
Միքայել - Գաբրիել - 240
Մխիթար (երկրորդ վարդապետ,Գետիկից) - 81, 182, 210
Մխիթար (վարդապետ) - 15, 151
Մխիթար Այրիվանեցի - 54, 55, 58, 82, 83, 135, 138, 139, 151, 259
Մխիթար Գոշ (Գոշիկ Վանական, Գոշիկ կրոնավոր) - 11, 14, 23, 34, 40, 41, 81, 83, 85, 96, 98, 99, 170, 172, 173, 181-183, 189, 200, 201, 208, 209, 215, 216, 218-237, 239-247, 251-254,259, 262, 264
Մխիթար Խորակերտցի - 77, 81, 182, 183, 185, 210
Մխիթարեան Ստ. - 63, 262
Մխիթարյան Ա. - 107, 188
Մովսես Խորենացի - 42, 50, 260
Մովսես Կաղանկատվացի - 93, 94, 123-125, 127, 131, 174, 259, 260
Մովսես Ուտիեցի(Ուտեցի) - 95, 123, 124, 167, 236
Մովսես Ցուրտավեցի - 91
Մովսես Քերթող - 96, 177
Մովսեսյան Ղ. - 23, 37, 49, 54, 74, 262
Մուրավյով Ալ. - 36, 108, 109
Ներսես (Գրիգոր Տղայի եղբայր) - 38
Ներսես Լամբրոնացի - 38, 66, 101, 187, 192, 198
Ներսես Կլայեցի - 96
Ներսես կաթողիկոս - 149, 186
Ներսես Մեծոփեցի - 96
Ներսես Շնորհալի - 36, 259
Ներսիսյան(դպրոց) - 213
Նոննոս - 205
Նորայր Բյուզանդացի - 51, 261

Շահխաթունյանց Բ. - 52, 63, 64, 77, 80, 107, 188, 221
Շահնազայան Կ. - 127, 131, 260
Շահնազարյան Աս. - 62, 64
Շամչի Մելքո - 10
Շանիձե Ակ. - 47, 49, 80
Շանշե կամ Շահնշահ (Զաքարեի որդի) - 72
Շապուհ Բագրատունի - 46, 260, 264
Շոթա Ռուսթավելի - 109
Շուշանիկ - 51
Շպակով Ա. - 7
Շտերն Է, ֆոն - 7

Ոսկերչյանց Տեր Հովհ. - 141
Ոսկյան Հ. - 23, 75, 92, 98, 99, 133-135, 137, 139-141, 148, 150-155 157, 158, 160-162, 165, 175-177, 219, 224-226, 246, 248, 262
Ոսկյաններ - 213
Որոգենես - 203, 206, 209
Ուխտանես - 42, 43, 46, 50, 94, 123, 145, 164, 236, 260
Ումեկ Ասիլ - 156

Չամչյան Մ. - 53, 106, 108, 123, 140, 172, 262, 213

Չիքոբավա Առ. - 49
Չուբինաշվիլի Գ. - 22, 24
Չուբինով Դ. - 53
Չրաքյան Ք. - 17, 197, 198

Պալճյան Ալ. - 44, 262
Պախոմով Է. - 54, 56
Պահլավունիներ - 107-109
Պատկանյան Ք. - 50, 83, 84, 93, 151, 259, 260
Պետերս Պ. - 186
Պետրոս (եպիսկոպոս, Սյունյաց) - 93, 123, 125, 126, 263-264
Պետրոս - 129
Պետրոս Գետադարձ - 106, 107, 112, 114, 119, 262, 262
Պետրոս Հաղբատեցի - 81, 85, 86, 181-183, 195,
Պետրոս Ուրացող (Մկածրվեցի) - 192,
Պիսիդես Գևորգ - 148, 152
Պողոս - 96, 230, 246
Պողոս Տարոնացի (Տարոնեցի) - 123, 166-168, 227, 246
Պորփյուր - 151
Պռոշյաններ - 34
Պրոկղ - 119, 191

Ջալալյանց Ս. - 55, 62 - 64, 67, 73, 77, 78, 107, 108, 184, 188, 190, 193, 194, 201-204, 211
Ջանաշվիլի Մ. - 37, 60, 69, 70, 73, 80, 109
Ջավախիշվիլի Իվ. - 8, 46, 48, 49, 52, 53, 57, 59, 61, 62, 84, 88, 90, 94

Ռեմիզով Ալ. - 240
Ռուբեն (մեծ իշխան) - 230
Ռուբինյաններ - 35, 150
ՌուսթավելիՇոթա - 14, 109
Ռուսինոս - 87
Ռուսուդան Կյուրիկյան - 58
Սաբինին Մ. - 41, 51, 119

Սալաադին - 221
Սահակ - 40, 87
Սահակ Գողթնեցի - 160
Սահակ Զորափորեցի - 93
Սահակ Պարթև - 41, 93, 149, 151
Սահակդուխտ - 63
Սամուել Անեցի - 11, 44, 47, 55, 57, 68, 69, 72, 82, 83, 106, 116, 133, 134, 136, 138, 139, 140, 149, 150, 158, 164, 165, 170, 171, 175-177, 260
Սամուելյան Խ. - 92, 225, 262
Սայաթ - Նովա - 10
Սարգիս (երեց) - 184
Սարգիս (վարդապետ) - 133, 227
Սարգիս Աղեկեցի - 108
Սարգիս Երկայնաբազուկ(Սարգիս Զաքարյան, Ամիրսպասալար) - 61-63, 65, 211
Սարգիս եպիսկոպոս - 185
Սարգիս Թմոգվեցի - 65
Սարգիս Թմոգվեցի - 65
Սարգիս Կունտ - 169, 176, 177
Սարգիս Փառիսոսեցի - 133, 139
Սարգիսյան Բ. - 93, 151, 157, 260, 262
Սարգիսյան Ն. - 63, 262
Սարկավագ (անձնանուն) - 246
Սարկավագ Փառիսոսեցի - 139
Սեբերիանոս - 119
Սեդրակյան Ա. - 117, 120, 161, 262
Սեղբեստրոս (եպիսկոպոս) - 200, 201
Սենեքերիմ - 113
Սերով Ն. - 22, 23
Սիմեոն - 73
Սիմոն - 187
Սիոն (կաթողիկոս) - 40
Սմբատ (Աշոտ Ողորմածի տղա) - 55, 73
Սմբատ (ամիրսպասալար, Հովհաննես Օրբելու որդի) - 79
Սմբատ (Գրիգոր Մագիստրոսի հորեղբոր որդի) - 108
Սմբատ (Իվանե Օրբելու որդի) - 60, 61
Սմբատ (սպասալար, Իվանե սպասալարի որդի) - 61, 79

Սմբատ Գունդստաբլ (սպարապետ) - 228
Սմբատ Կյուրիկե - 57
Սմբատ Վրկան (մարզպան) - 64, 94
Սմբատ Տիեզերակալ - 52
Սմբատյանց Մ. - 216, 221
Սոկրատ Սքոլաստիկոս - 200, 242
Սողոմոն Մաքենացի - 94, 95, 123, 124, 127
Սողոմոն Միայնակյաց - 127
Սոմալ - 140
Սոսթենես Մարմաշենցի - 119, 124, 252
Սուլխան - Սաբա Օրբելիանի - 53
Սուրբ Սարգիս - 240
Սուքիաս - 211
Սոֆյա (թագուհի) - 52
ՍպենդիարյանՀովհ. - 77, 221, 264
Ստեփան (Ստեփանոս «սոփեստոս») - 76, 136, 141
Ստեփանոս (Աղվանից կաթողիկոս) - 191, 216, 219, 230
Ստեփանոս Զոմզոմա - 135, 137, 141, 175,
Ստեփանոս Սյունեցի - 93, 177, 227
Ստեփանոս Օրբելյան - 14, 38, 39, 53-55, 59, 60, 61, 75, 95, 123, 124, 238, 250, 260
Ստրաբոն - 49, 50
Սրապյան Ի. - 109, 211
Սրվանձտյան Գ. - 76, 225, 226, 248

Վախթանգ(կ) Խաչենցի (Հաթերքի իշխան) - 216, 217
Վախուշտի Բագրատիոնի - 37, 53, 55, 60, 69, 70, 73, 77, 79
Վախտանգ - 230
Վախտանգ Գորգասալ - 70
Վախտանգ Զ. - 14, 226, 227
Վահան Մամիկոնյան - 51, 259
Վահրամ Գագանի - 108
Վահրամյանց Գրիգոր - 108
Վաղարշակ Արշակունի - 42
Վանական (հատուկ անուն) - 136
Վանական վարդապետ Տավուշեցի - 11, 83, 136, 151, 215, 246, 247, 249, 259
Վանե (Սարգիս Երկայնաբազուկի դուստր) - 65
Վաչե Ալճեցի - 108
Վաչուտյաններ - 34, 54
Վարդան (մեկնիչ) - 87
Վարդան Այգեկցի - 194
Վարդան Արևելցի - 44, 47, 53, 55, 57, 59, 60, 68, 69, 71, 72, 78, 82, 85, 105, 106, 121, 132, 133, 138, 139, 153, 170, 171, 173, 175, 183, 194, 195, 218, 221, 227, 247-249
Վարդան Հաղբատեցի - 23, 76, 81, 181, 182, 193 - 195, 254
Վարդան Մեծ (Բարձրաբերդցի) - 94, 96, 259
Վարդան Սանահնեցի - 112, 194, 203, 204
Վարդան, *տես* Վարդան Արևելցի
Վարդապետ (հատուկ անուն) - 136
Վռամ - 96
Վրթանես - 129
Վրթանես Քերդող (վարդապետ) - 93, 94, 263

Տաշյան Հ. - 17, 36, 37, 44, 67, 81, 86, 93, 96, 117, 121, 123, 135, 136 150, 152, 158, 160, 161, 167, 172, 173, 184, 200, 203, 206, 212-214, 225, 226, 260, 262
Տեր-Ավետիսյան Ս. - 68, 74, 80, 202
Տեր-Գևորգյան Հովհաննիսյանց Երևանցի Ո. - 83, 260
Տեր-Մինասյանց Ե. - 74, 89, 90, 91, 110, 112, 115, 117-122, 124, 132, 135, 145, 152-155, 158, 162, 169, 177, 264
Տեր-Միքայելյան Ն. - 82, 259
Տեր-Միքելյան Ա. - 40, 44, 68, 71, 82, 121, 165, 175, 189 - 191, 260 - 263
Տեր-Մկրտչյան Գ. (Միաբան) - 47, 51, 90, 91, 93,95, 117, 118, 160, 225, 231, 259, 260, 264

Տեր-Մկրտչյան Կ. - 33, 65, 89, 91, 120, 194, 203, 206, 226, 263, 209
Տեր-Մովսիսյան Մ. - 64, 77, 151, 172, 200, 201, 206-208, 211, 226, 264
Տեր-Վարդանյան Գ. (Գ.Տ-Վ.) - 18, 70, 116, 145, 162, 163, 215, 248, 250
Տերտեր (հատուկ անուն) - 136
Տիգրանյան Սիրական - 92, 172, 229, 263, 264
Տիմոթեոս Կուզ կամ Էլուրոս - 89, 90, 92, 119-121, 163, 192, 254, 261, 264
Տիրանուն (հատուկ անուն) - 73
Տիրացու (հատուկ անուն) - 136
Տիրոյան Ա. - 143, 145
Տուկիծ - 113
Տրդատ (արքա) - 149, 151

Փավստոս Բուզանդ - 260
Փիլիպոս (վանահայր) - 204
Փիլիքսիմա Բաքա (եպիսկոպոս) - 119
Փիլոն - 151, 197, 198, 206, 209
Փիլոն Տիրակացի - 200

Քաջիկյան - 77, 78, 202, 204, 211, 264
Քորիկոզ (հատուկ անուն) - 53
Քուրդ (իշխան) - 216, 218

Օրբելի Հ. - 7, 119, 200
Օրբելիներ - 60, 61
Օրբելյաններ - 34, 64, 65,
Օրմանյան Մաղաքիա - 34, 40, 64, 65, 76, 81, 90-92, 107, 135, 157, 189, 263

Адонц Н. - 35, 91, 92, 135, 164, 169, 263
Алавик - 170, 172
Ампелий - 91
Арк'аун - 238

Георгий III- 41, 63
Григорий- 200, 207
Григорий III - 264
Григорий Отрок (сын Тытея-Тутеорди) - 35
Григорий сын Абаса - 203
Грима Г. - 24

Давид Гандзакский - 170, 172
Давид Кобайрский - 35
Джавахов И. - 42, 89, 234, 263
Джанашвили М. - 70, 264
Дионисий Фракийский - 164, 263

Егиазаров С. - 231
Ерицов А. - 59, 74, 80, 145, 184, 264

Иоанн Дамаскин - 169
Иоанн (Ованес) Ванакан Тавушцский - 248
Иоанн Тцортцореци - 156
Иоселиани П. - 50, 60, 80, 263

Какабадзе С - 41, 63, 264
Камсараканы - 200
Караулов - 53
Кекелидзе К. - 41, 169, 263
Киракос - 56
Корике II - 56
Корикэ Куропалат - 54, 56, 265
Костанянц К. - 170,172
Крымский И. - 87
Кучук-Иоаннесов Х. - 77, 22, 222, 265

Латышев В. -232
Леон -265

Мажников С. - 57, 263
Марр Н. - 14, 40, 47, 49, 50, 63, 73, 74, 76, 90,100, 165, 193, 238
Меликсет-Беков Л. - 49, 51, 54, 71, 77, 78, 84, 89, 156, 169, 186, 211, 240, 248, 249, 263, 265
Мина-хат'ун - 44, 263
Муравьев А. - 36, 74, 80, 108, 265
Мхитар Гош - 56, 92, 224, 225, 229, 265

Нерсес Ламбронский - 35
Никита Стифат - 169

Овсепян Г. -44, 263
Орбели И. - 41, 58, 63, 65, 108, 200, 248, 265

Орбели (князь) - 41

Патканов К. - 207
Пахомов Е. - 54, 55, 56

Руставели Шота - 264
Рубениды - 35

Саркаваг - 207
Скабаланович Н. - 109, 263

Такайшвили Е. - 57, 80, 263
Тарсаич Орбелян - 44, 263
Тер-Аветисян С. - 76, 248
Тер-Иоаннисян Я. - 224
Тер-Мовсесян М. - 40, 151, 200, 203, 206, 207, 263, 264,
Тигранян С. - 92, 121, 229, 265
Тимофей Элур - 90

Феодор Абукур - 169

Херсонский (епископ) -91
Хутлу-буга - 74

Шагинян М. - 41, 265
Шота из Рустава -49, 50

Цагарели А - 40, 263

Эмин Н. - 36, 52, 114, 156, 212, 263

ანტონ (კათალიკოზი) - 266
არსენ (მოძღური) - 41, 266
ბროსე მ. - 267

გრიგოლ პართელი - 14
ექვთიმე - 119, 268
ვახტანგ V - 267
ვახტანგ VI - 227
ვახუშტი ბატონიშვილი (ბაგრატიონი) - 37, 266
თაყაიშვილი ე. - 267
თომა მეწოფელი - 14
იაკობ ხუცესი -
კაკაბაძე ს. - 46, 267, 268
კარბელოვი ბ. - 266
კეკელიძე კ. - 43, 267, 268,
მარიამ (დედოფალი) - 267
მელიქსეთ-ბეგი ლ. - 77, 177, 227, 267, 268
ყორდანია თ. - 267
რუსთაველი შოთა - 14
საბინინი მ. -41, 267
საიათ-ნოვა -10
სარგის თმოგველი - 267
საჰაკ პართელი - 268
სტეფანე სიუნიელი - 14
სულხან-საბა ორბელიანი - 267
შანიძე ა. - 269
შუშანიკი - 267
ჭიჭინაძე ზ. - 267
ჩიქობავა ა. - 49, 269
ჩუბინოვი დ. - 267
ჯავახიშვილი ივ. - 46, 268, 269
ჯანაშვილი მ. - 37

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբասաձոր - 210
Աբխազիա (Ափխազիա) - 57, 211
Աբո Շահնազար (տեղանուն) - 22
Ագարակ -59, 60
Ալ/ղեքսանդրապոլ - 67, 92, 109, 262
Ալ/ղեքսանդրիա - 89
Ալավերդի - 68
Ախալքալաք - 48, 262
Ախթալա - 22, 60, 101
Ակերման (քաղաք) - 9
Աղթամար - 85
Աղստև (Աղստափա, Աղստաֆա) - 17, 65, 66, 80, 217, 219, 252
Աղվանք (Աղվանից աշխարհ) - 51, 71, 78, 94, 95, 106,120, 123-126,129-131, 135, 167, 171, 174, 183, 191, 224, 226,227, 230, 241, 242
Աղքյորփի - 77
Ամբերդ - 62, 63
Ամենափրկիչ (եկեղեցի) - 73, 108
Այգեհատ - 196
Այորի - 58
Այրարատ - 33, 176
Այրի վանք(Այրավանք) - 34, 75
Անի - 34, 38, 44, 52-55, 59, 62, 63, 66, 73, 81, 82, 106, 135, 183, 184, 220, 222, 237, 243
Անիի Մայր տաճար - 52
Անտիոք - 128
Առան (Առանց աշխարհ, Առան-Հերեթ) - 57, 58, 230
Ասորիք - 88, 120, 243
Արագած - 22, 65
Արայի լեռ - 65
Արարատյան նահանգ - 66, 87
Արդվի (գյուղ) - 51, 78
Արշակունյաց Հայաստան - 42
Արցախ - 65, 77, 133, 221

Բագնայր - 64, 135
Բալաձոր - 47
Բարձրաքաշ - 22
Բաքու - 9, 223
Բեթանիա - 58
Բեթղեհեմ - 213
Բեսարաբիա - 9
Բերդուջ - Սագիմ - Դեբեդ - 37, 80
Բյուզանդական Հայաստան - 158
Բյուզանդիա - 54, 109, 121, 231, 158
Բոլնիս (Փոլադաուրի) - 23, 48
Բոլնիս-Դմանիս - 48
Բորչալու (Սոմխիթի=Լոռի-Տաշիր) - 45
Բջնի - 63, 64, 80, 101, 109

Գագ - 59
Գալիլիա - 213
Գալիցիա - 228, 251
Գանձակ (Գանձակ աշխարհ,Գյանջա) - 44, 78, 137, 170, 196, 215, 216, 219, 230, 246, 250
Գանձասար - 34
Գառնի - 109
Գեղարդ - 63, 262
Գեղարքունի - 65, 216, 221
Գետիկ - 44, 67, 77, 81, 98, 135, 189, 210, 216-221, 223, 246, 247, 252
Գիս (եկեղեցի) - 130
Գյուրջիքիլիսա - 80, 101
Գողթն - 87
Գոշավանք (Գոշայ վանք) - 77, 211, 221, 223
Գորի (Գոռա) - 9,142
Գուգարաց Ծորբոփոր - 34
Գուգարք (Գուգարաց աշխարհ, Գոգարենե, Գուգարեթ) - 10, 34, 42, 43, 45, 46, 49, 50, 65

Դադիվանք(Դադի վանք) - 34, 67
Դասինի վանք - 78, 230, 246, 250
Դավիթ Գարեջի (Դավիթգարեջա) - 67, 68
Դարաչիչակ *տես* Ծաղկաձոր
Դեբեդ (Դեբեդչայ) - 37, 43, 79
Դիլիջան - 65, 77

Դմանիս - Դումանիս - 22, 48
Դպրավան - 249
Դպրեվանք - 132
Դսեղ - 22
Դվին - 38, 40, 88, 125, 129, 158, 240, 242

Երևան - 9, 10, 12, 32, 58, 109, 148, 155, 234, 235, 261, 263
Երզնկա - 76
Երուսաղեմ - 11, 23, 34, 36, 38, 41, 81, 82, 85, 128, 145,152, 161, 197, 198, 221, 224, 225,259, 260

Զմյուռնիա - 226

Էջմիածին - 9-11, 17, 22, 23, 34, 36, 38, 43, 47, 62, 81, 85, 88, 90, 117, 120, 134, 136, 142, 143, 153, 159,160-162, 164, 172, 224-226, 238, 263, 264

Թաթարի հրապարակ - 156, 248
Թալին - 107
Թայչարուխ - 80

Իբերիա-Հերեթ - 43, 50
Իղալթո-Ալավերդի - 68
Ինաքլու (եկեղեցի) - 63
Իսրայել - 197, 232
Իտալիա - 126

Լեհաստան - 12, 76, 87, 141, 197, 228, 261
Լենինգրադ - 22,85, 88
Լոռի (Լոռե) - 23, 37, 47, 48, 53-55, 59, 60-62, 65, 66, 70, 79, 101, 184, 187, 193, 194, 212, 220, 222, 224, 237, 243
Լոռի-Տաշիր - 48, 53, 54, 59, 60
Լոռի-Տաշիրի Կյուրիկյաններ - 53, 70
Լոռու դաշտ - 48
Լոռու Կյուրիկյան թագավորներ - 37

Խաթրավանք - 34
Խամշին - 78
Խաչեն - 24, 34, 65, 66, 177, 184, 188, 216, 217, 219, 224, 230
Խծկոնք - 135
Խորակերտ - 44, 67, 77, 98, 210
Խորանաշատ - 98, 215, 246, 247, 250, 252
Խորհրդային Հայաստան - 22, 37

Ծաղկաձոր - 80, 109
Ծործոր - 37, 76

Կախեթ - 37, 53, 56, 70, 109
Կախեթի և Հերեթի Բագրատունիներ - 56
Կածարեթ - 78
Կայան-Ձորոփոր-Հաթերք - 44
Կայծոն - 135
Կանգուար - 125
Կարին - 216, 219, 220
Կենտրոնական Քարթլի - 46
Կեչառիս - 109
Կեսարիա - 128
Կիլիկիա - 12, 33,34-36, 38, 64, 66, 101, 122, 190-192, 198, 228, 230, 251, 254
Կոլխիդա - 231
Կոստանդնուպոլիս (Կ. Պոլիս) - 35, 40, 41, 112, 113, 119, 122, 128, 166, 168, 225, 260, 263
Կովկասյան լեռնաշղթա - 42, 43

Հաթերք - 34, 219
Հաթերք - 44, 217
Հաղարծին - 44, 64, 67, 77-78, 98, 210-213, 250, 252
Հաղբատ կամ Հաղպատ - 22-25, 34, 36-38, 43, 44, 54, 55, 60, 63, 64, 66-75, 79, 81, 82, 87,98, 99, 101, 105, 110-115, 118, 120-122, 132, 134, 135, 136, 138, 140, 141, 144, 145, 147, 149, 150, 152, 155, 157, 161, 162, 166, 169, 177, 183-185, 189, 190, 192-196, 199, 215, 220, 247, 248, 250, 252, 254, 264

Հաղբատ-Սանահին - 36, 43, 44, 47, 58, 67, 68, 70, 72, 74, 75, 77, 97-99, 105, 113, 132, 134, 210, 112, 215, 247, 249, 250
Հայաստան (Հայոց աշխարհ) - 10, 12, 21, 33, 35, 42, 43, 46, 49, 50, 54, 58, 62, 64, 77, 87, 99, 105, 113, 120, 121, 129, 134, 150, 158, 161, 191, 231, 235
Հայաստան - 21, 62, 161, 234
Հայք - 113, 120, 125, 126, 128, 167, 233, 241, 243
Հանբարձման եկեղեցի - 185
Հառիճ (Ղփչաղ) - 188
Հավուց Թառ - 109
Հարավային Հայաստան - 37
Հարավային Ռուսաստան - 12, 228
Հարավային Վրաստան - 21, 22, 45, 49, 70, 251
Հերեթ (Ռան) - 45, 53, 54, 55, 58, 63, 70
Հերեթ-Կախեթ-Տաշիր - 53
Հերեթ-Կախեթի Կյուրիկյան - 53
Հերեթ-Կախեթի Քորիկոզներ - 70
Հին Գետիկ - 219, 220, 230, 246, 250
Հին Վրաստան - 42
Հյուսիսային Հայաստան - 21, 33, 45, 54, 55, 65, 251
Հնեվանք - 22, 60, 78, 79, 101
Հոռոմայր - 75, 77
Հոռոմաշեն - 230
Հովհան Օձնեցու վանք - 51
Հովհաննավանք - 34
Հունաստան - 129
Հռո/վ/մ - 86, 92, 123, 167, 200, 239, 264

Ձագավան - 193
Ձորագետ (Ձորոգետ, Կամենկա) - 34, 35, 37-39, 43, 44, 57, 58, 62, 64, 69, 77, 79, 80, 118, 192, 196, 198, 252
Ձորափոր (Ձորոփոր) - 44, 65
Ձորոհէկ - 79

Ղազախ-Շամշադին - 44, 45, 78
Ղարաբաղ - 36, 48, 65, 66, 262
Ղզլար - 62, 63
Ղրիմ - 12, 228
Ղրտիլա - 17, 119, 124, 252

Մածնաբերդ - 55, 57, 58
Մակարավանք - 78, 201, 204, 205
Մահկանաբերդ - 59, 217
Մանազկերտ - 51, 89, 125, 242
Մանգլիս - 100
Մանճար (գյուղ) -134
Մարմաշեն - 109, 119
Մելիտինո Հայոց - 247
Մեծ Հայք - 262
Մեսխեթ - 77
Մերձավոր Ասիա - 42
Միջագետ - 110
Միջին Քարթլի - 46
Միջնաշին - 210
Մյունխեն - 152, 225, 259
Մոլդովա - 12, 228, 251
Մոսկվա - 51, 82, 83, 121, 127, 259, 260, 262
Մուղան - 248
Մրեն - 52
Մցխեթա - 41, 100, 125, 242

Ներքին Քարթլի - 45-47, 50, 251
Նիկիա - 229, 233, 234
Նոր Բայազետ - 80
Նոր Գետիկ - 77, 215, 218-221, 223, 247, 250, 252
Նոր Նախիջևան -115, 156, 260, 261
Նոր Ջուղա -93
Նորավանք-34, 135
Նորավանք-Որոտան-Տաթև - 34, 135, 250

Շահապիվան - 40
Շամախի - 87
Շամխոր - 133
Շամշադին - 45
Շիոմղվիմե - 67
Շիրակ - 52-55, 62, 63, 81, 135, 188

Շիրակավան - 61, 62
Շիրակի Անիի Բագրատունիներ - 53, 54
Շուլավեր (գետ) - 77
Շուշի - 262

Ոսկեպար - 78, 80, 101
Ուզունլար - 22, 51
Ուկրաինա - 8
Ուռհա (Եդեսիա) - 113, 114
Ուտիք - 78

Պարսկաստան - 58, 129
Պարտավ - 40, 92
Պետերբուրգ - 10, 18
Պղնձահանք - 48, 78, 80, 101

Ջավախք - 119, 249, 252
Ջուջիքենդ - 22
Ջվարի - 100

Ռան (Առան) - 44, 230
Ռուի-Ուրբնիս - 41
Ռուսաստան (Ռուսաց երկիր) - 8, 12, 18, 43

Ս. Աղբերկու - 47
Ս. Արդվի -78
Ս. Պետերբուրգ - 41, 50, 51, 93, 117, 151, 161, 259, 260
Սև լեռ (վանք) - 185, 216, 219
Սևորդյաց աշխարհ - 44, 47, 68
Սաղմոսավանք - 34
Սամեբի վանք - 47
Սամշվիլդե (Շամշվիլդե) - 23, 55, 57, 59, 60, 177
Սամցխե - 46
Սանահին - 23, 24, 34, 36-38, 43, 44, 51, 55, 58, 60, 62, 66-72, 74, 75, 79, 99, 105-115, 117, 118, 120-122, 132, 134, 144, 152, 161,162, 166, 169,177, 183, 185, 187-190, 194-196, 199, 201-205, 215, 247, 248, 250, 252, 254, 264
Սասուն - 166
Սափարա-Զարմի - 68
Սաֆար (տեղանուն) - 67, 77
Սեբաստիա - 198
Սիոն(եկեղեցի) - 213
Սիսական - 39, 133, 135
Սյունիք - 36, 39, 65, 75, 88, 98, 99, 125, 129, 130, 130, 242, 250
Սոմխեթ (Սոմխիթի) - 47-49, 59, 65, 80
Սուրբ Գևորգ (եկեղեցի, Ումեկի) - 156
Սուրբ Ղազար (վանք) - 166, 167
Սուրբ Նշան (եկեղեցի) - 73, 76
Սուրբ Սոֆիա (տաճար) - 114

Վալախիա - 228, 251
Վաղարշապատ (Վաղ.) - 38, 40, 43, 44, 63, 82, 90, 93, 96, 106, 107, 116, 122, 137, 164, 175, 200, 213, 216, 224, 231, 259, 260, 262-264
Վայոց Ձոր - 135
Վան - 85, 222
Վասպուրական - 33
Վատիկան - 86, 123, 167, 264
Վարձիա - Վարձունիք - 249
Վենետիկ - 10, 23, 37, 38, 53, 55, 57, 63, 67, 74-77, 83, 86, 93, 101, 117, 122,135, 136, 140, 143, 151, 152, 155,161, 185, 186, 193, 195, 197, 198, 225, 259-262
Վերին Քարթլի - 46
Վիեննա - 10, 23, 36, 44, 86, 89, 90, 92, 93, 99, 117, 136, 140, 142, 150, 155, 157, 162, 167, 172, 200, 206, 225, 226, 249, 259-262
Վիրք (Վրաստան) - 12, 13, 15, 16, 21, 33, 37, 43, 46-49, 51- 53, 57-59, 61, 67, 70, 71, 78, 99, 101, 106, 126, 129, 130, 142, 177, 183, 219, 228-231, 233-235, 238, 241, 243-245, 249, 251, 253, 254
Վրացդաշտ - 47-50, 55
Վրկան - 94

Տաթև - 34, 36
Տանձուտ - 210, 217, 220
Տաշիր - 22, 47, 48, 53-55, 65, 69, 70
Տավուշ - 58, 59, 215, 247-248

Տարոն - 212
Տարսոն - 38,101
Տերունական - 59
Տփղիս (Տփխիս, Թիֆլիզ, Թիֆլիս, Թբիլիսի) - 7-9, 13, 15, 16, 25, 36, 37, 39, 41-43, 46, 48-54, 58, 59, 62, 65, 69, 70, 74, 78, 80, 83, 84, 88-90, 92, 94, 95, 121, 123, 127, 146, 156, 157, 167, 177, 183, 184, 188, 212, 213, 222, 226, 227, 237, 248, 259-262, 264

Ցխինվալի - 9
Ցուրտավ - 50, 51

Փամբակ (Բամբակ) - 37, 47
Փառիսոս (գավառ) - 133, 134
Փարիզ - 127, 165
Փոլադաուրի - 23
Փոքր Ասիա - 42
Փոքր Հայք - 262

Քաղկեդոն - 95, 120, 125, 126, 163, 167, 168, 233, 240, 242, 245,
Քարթլի - 50, 51, 54, 70, 99, 100, 140, 146
Քարթլի-Հերեթ-Կախեթիի Բագրատունիներ - 54
Քոբեր (Քոբար, Քոբայր, Քվաբայր) - 22, 54,55, 58, 75, 78, 79, 101, 138, 153, 187, 196
Քոլագե/ի/րան - 37, 79
Քութայիս - 9,51, 61
Քվեշ - 22
Քցի - 47

Օդեսա (Նովոռոսիյսկ) - 7
Օձուն - 22, 51

Аг'арцинский монастырь - 77, 211
Адербейджан - 53, 263
Азиатский музей - 265
Ани - 52, 56, 63, 73, 76, 263
Армения - 35, 36, 41, 42, 53, 56, 74, 80, 89, 108, 234, 263, 265
Арран - 53, 263
Ахпат (Арбат) - 36, 70, 72, 74, 76, 145, 264-265
Ахтала - 59, 60, 80, 263

Византия - 35, 109, 207, 238

Гадженк-Гачиан - 51
Гошаванк - 77, 222
Грузия - 32, 36, 70, 74, 80, 89, 108, 234, 263, 265

Иерусалим - 41, 165, 263

Кавказ - 53, 232, 263, 264
Карабах - 36
Карс - 52, 263
Киев - 231
Киликия - 35, 36

Ленинград - 89, 231, 241, 265
Лори-Ташир - 74, 78, 265

Мармашен - 108
Машавери - 78, 265
Москва - 14, 36, 52, 70, 77, 114, 156, 263-265

Петроград - 47, 50, 92, 108, 164

Рим - 35

Россия - 77, 222, 265

Самшвильде - 57, 263
Санагин - 58, 68, 72-74,76, 265
Санкт-Петербург – 24,36, 40, 42, 62, 73, 109, 151, 193, 200, 234
Свания - 49
Скифия - 232
Сина - 165
Татев - 36,

Тифлис - 41, 54, 57, 60, 70, 71, 80, 84, 156, 225, 240, 248, 263, 265

Хах'бат - 36
Херсон - 91
Хутлу – буг -74

Цалка - 51
Цуртав - 51, 265

ამაერკავკასია -14
კაწარეთი - 268
სამცხე - 41
საქართველო - 13, 41, 266-269
სომხეთი-სომხითი - 41, 266, 268
ტფილისი (თბილისი)- 14,37,43,46,47,49, 78, 177, 266, 267, 268, 269
ქართლი - 41, 266, 267
ქობერი - 78
ქუთაისი - 61, 267, 268

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ - ԲԵԿ

«ՎԱՐԴԱՊԵՏՔ ՀԱՅՈՑ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՑ» ԵՎ ՆՐԱՆՑ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Պատմագրական հետազոտության փորձ)

Վրացերենից թարգմանեց
ՀՐԱՉ ԲԱՅՐԱՄՅԱՆԸ

Բաժնի տնօրեն՝ Շահե Ծ. վրդ. Անանյան

Հրատարակչական խորհրդի անդամներ՝ Գևորգ եպս. Սարոյան, Գարեգին վրդ. Համբարձումյան, Զաքարիա վրդ. Բաղումյան, Ա. Մադոյան, Գ. Տեր-Վարդանյան

Էջադրումը՝ Ղևոնդ ավ. քահանա Մայիլյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2016

Թուղթը՝ օֆսէթ 80 գր., չափը՝ 70x100 1/16,
ծավալը՝ 18.0 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300 օրինակ:

Տպագրված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանում